Որ մեր փրկութեանը համար չարչարուեցաւ .

դժոխքը իջաւ, երբորդ օրը մեռելններէն յարութիւն  
առաւ :

Երկինքը համբարձաւ . Ամենակարող Հօր Աս-  
տուծոյ աջ կողմը կը նստի, և անկէ պիտի գայ կեն-  
դանիները ու մեռելները դատելու :

Անոր եկած ժամանակը ամէն մարդ յարութիւն  
պիտի առնէ իր մարմինովը . և ըրած գործքերուն  
համարը պիտի տայ :

Անոնք որ բարի գործքերու տէր են, յաւիտե-  
նական կեանքը պիտի երթան, և անոնք որ չար  
գործքերու տէր են, յաւիտենական կրակին :

Այս է Արժուղիկէ Հաւատքը . որուն՝ ով որ  
հաւատարմութեամբ չի հաւատայ, չի փրկուիր :

Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Արբոյ .

Պա . Արպէս էր՝ ի սկզբանէ, այժմ, և միշտ, և  
յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Ասկէ ետեւ կ'ուզան Լիզանի Մողթանքները, կամ Ընդ-  
հանուր Ազգասարկութիւնները, որ Առաուան Ազգութիւն վեր-  
ջը պիտի ըսուին կամ երգեցուին, Արակի, Չորեքշաբթի  
և Ռեբբաթ օրերը . և ուրիշ ժամանակ ալ, երբոր Եպիս-  
կոսոսը հրամայելու ըլլայ :

Ով Հայր՝ երկնաւոր Աստուած . ողորմէ մեզի  
ողորմելի մեղաւորներուս :

Ով Հայր՝ երկնաւոր Աստուած . ողորմէ մեզի  
ողորմելի մեղաւորներուս :

Որդին Աստուած, Փրկիչ աշխարհի . ողորմէ  
մեզի ողորմելի մեղաւորներուս :

Որդին Մատուած , Վրկիչ աշխարհի . ողորմէ մեզի ողորմելի մեղաւորներուս :

Հոգին Սուրբ Մատուած , որ 'ի Հօրէ և յԱրդւոյ կը բղխիս . ողորմէ մեզի ողորմելի մեղաւորներուս :

Հոգին Սուրբ Մատուած , որ 'ի Հօրէ և յԱրդւոյ կը բղխիս . ողորմէ մեզի ողորմելի մեղաւորներուս :

( ) րհնեալ և փառաւորեալ ամենասուրբ Արարողութիւն , երեք Մնձինք , և մէկ Մատուած . ողորմէ մեզի ողորմելի մեղաւորներուս :

( ) րհնեալ և փառաւորեալ ամենասուրբ Արարողութիւն , երեք Մնձինք , և մէկ Մատուած . ողորմէ մեզի ողորմելի մեղաւորներուս :

Մեր մեղքերը ո՛վ Տէր , մի յիշեր . ոչ ալ մեր հայրերուն մեղքերը . մեր մեղքերուն վրէժխնդիր մի ըլլար . ներէ մեզի , Տէր բարութեան , ներէ քու ժողովուրդիդ , որ դուն քու անգին արինովդ փրկեցիր , և մի բարկանար մեզի յաւիտեան .

Ներէ մեզի , Տէր բարութեան :

Մէն գեշութենէ ու մնասէ , մեղքէ . սատանային խաբէութիւններէն ու բռնութենէն , քու բարկութենէդ , և յաւիտենական դատապարտութենէն ,

Ազատէ մեզ , Տէր բարութեան :

Բողոր սրտի կուրութենէ . հպարտութենէ , սնապարծութենէ , ու կեղծաւորութենէ . նախանձութենէ , ատելութենէ , չարութենէ , և սիրոյ դէմ պակասութիւններէ ,

Ազատէ մեզ , Տէր բարութեան :

Ընութենէ, և ուրիշ ամէն մահացու մեղքերէ և  
աշխարհի, մարմնոց, ու սասանայի խաբէութիւն-  
ներէն,

Ազատէ մեզ, Տէր բարութեան :

Այսծակէ, ու ալեկոծութենէ, ժանտախտէ,  
ամէն տարափոխիկ հիւանդութիւններէ, ու սովէ,  
պատերազմէ, մարդասպանութենէ, և յանկարծա-  
կի մահէ,

Ազատէ մեզ, Տէր բարութեան :

Ամէն տեսակ դաւաճանութենէ, գաղտնի միա-  
բանութենէ, ու ապստամբութենէ, մոլար վարդա-  
պետութենէ, հերետիկոսութենէ, ու հերձուածու-  
ղութենէ, սրտի յամառութենէ և բու խօսքերուդ  
ու Պատուիրանքներուդ արհամարհութենէն,

Ազատէ մեզ, Տէր բարութեան :

Քու ամենասուրբ Մարդեղութեանդ խոր-  
հորդին, սուրբ Օննդեանդ ու թալիատութեանդ,  
Սկրտութեանդ, Պահեցողութեանդ ու վորձու-  
թեանդ համար,

Ազատէ մեզ, Տէր բարութեան :

Քու մահուանդ Տագնապին ու արիւնաշաղախ  
Քրտանցդ, Խաչիդ ու Չարչարանքներուդ, պա-  
տուական Մահուանդ ու թաղմանդ, փառաւոր  
Տարութեանդ ու Համբարձմանդ, և Սուրբ Հոգ-  
ւոյդ գալստեանը համար,

Ազատէ մեզ, Տէր բարութեան :

Ամէն նեղութեան, յաջողութեան ու մահուան  
ժամանակնիս, և դատաստանի օրը,

Ազատէ մեզ, Տէր բարութեան :

Սենք մեղաւորներս կը խնդրենք, լսէ՛ մեզի ո՛վ Տէր Աստուած. և քու ընդհանրական սուրբ Այլեղեյիդ շիտակ ճամբուն մէջ ուղղէ՛ ու առաջնորդէ՛.

Մաղաչենք լսէ՛ մեզի, Տէր բարութեան:

Ընորհ՛: որ քու ծառայ մեր բարեշնորհ Աբբան և Խնամակալը ճշմարիտ աստուածաշատութեամբ, արդարութեամբ, ու սրբութեան կեանքով պահպանես ու զօրացունես.

Մաղաչենք լսէ՛ մեզի, Տէր բարութեան:

Ընորհէ՛ որ անոր սիրտը քու հաւատքովդ, երկիւղովդ ու սիրովդ կարավարուի, որ միշտ քեզի ապաւինի, և քու փառքդ ու պատիւդ խնդրէ.

Մաղաչենք լսէ՛ մեզի, Տէր բարութեան:

Ընորհէ՛ որ անոր պաշտպան ու պահապան ըլլաս, և անոր առջին բոլոր իր թշնամիները հնազանդեցունես.

Մաղաչենք լսէ՛ մեզի, Տէր բարութեան:

Ընորհէ՛ որ օրհնես ու պահպանես Աբբայուհայն Սայրը և բոլոր Աբբայազուն Ընտանիքը.

Մաղաչենք լսէ՛ մեզի, Տէր բարութեան:

Ընորհէ՛ բոլոր Ապիստոպոսները, Վահանաները և Սարկաւագները լուսաւորելու, որ ճշմարտապէս քու Պատգամներդ ճանչնան ու իմանան. ու նաև քարոզութիւնով ու վարքով կարող ըլլան անոնք յայտնելու և աւետարանելու.

Մաղաչենք լսէ՛ մեզի, Տէր բարութեան:

Ընորհէ՛ որ ժողովքի մէջ գտնուող Եղիանները

և բոլոր Աղնուախանները շնորհքով, խմատու թիւնով ու հանճարով զարգարես :

Մաղաչենք լսէ մեզի, Տէր բարութեան :

Ե շորհէ օրհնել և պահպանել բոլոր Ատենա-կալները, շնորհք տալով անոնց որ միշտ արգարու-թիւն ընեն ու ճշմարտութիւնը պահեն :

Մաղաչենք լսէ մեզի, Տէր բարութեան :

Ե շորհէ օրհնել ու պահպանել բոլոր քու ժողովուրդդ :

Մաղաչենք լսէ մեզի, Տէր բարութեան :

Ե շորհէ որ ամէն ազգաց միաբանութիւն, խաղաղութիւն ու համակամութիւն տաս :

Մաղաչենք լսէ մեզի, Տէր բարութեան :

Ե շորհէ որ մեզի սուրբ սիրտ տաս քեզ սիրելու, ու քենէ վտննալու, և քու պատուիրանքներուդ փութաջան պահպանութիւնովը ապրելու :

Մաղաչենք լսէ մեզի, Տէր բարութեան :

Ե շորհէ որ բոլոր քու ժողովուրդիդ շնորհքի աճում տաս, որ խոնարհութեամբ քու Աօսքերուդ լեն, ու յօժար կամքով ընդունին անոնք, և Սորբ Հողոյն պաղաբերութեամբը ծաղկին :

Մաղաչենք լսէ մեզի, Տէր բարութեան :

Ե շորհէ ուղիղ ճամբուն մէջ բերել ան ամէնքը՝ որ սխալած ու խարուած են :

Մաղաչենք լսէ մեզի, Տէր բարութեան :

Ե շորհէ որ հաստատուն եղողները զօրացունես, սրտաբեկ եղողներուն օգնութիւն ու քաջալե-

բութիւն տաս, ինկածները կանգնեցունես, և վերջապէս սատանան մեր ոտքին ներքեւը կործանես.

Աղաչենք լէ մեզի, Տէր բարութեան :

Շնորհէ ձեռնտու ըլլալ, օգնել ու զօրացունել ան ամէնքը՝ որ վտանգի, կարօտութեան ու նեղութեան մէջ են.

Աղաչենք լէ մեզի, Տէր բարութեան :

Շնորհէ պահել ու խնամել ան ամէնքը՝ որ ծովուն վրայ ու ցամաքը ճամբորդութիւն կ'ընեն. որդեծնութեան ցաւ ունեցողները, ամէն հիւանդները, մասնաւորապէս մեր աղօթքին յաճնուածները (սիկայ ի'լսոտի, էրբոր Սիաբանո-Ռեան Եղօխը խնդրո-ելու ըլլայ). նաև ողորմիլ տղոյր, բանտարկեալներուն ու գերիներուն.

Աղաչենք լէ մեզի, Տէր բարութեան :

Շնորհէ խնամել ու հոգ տանիլ որբերուն, սյրիներուն և ան ամէնուն՝ որ նեղեալ ու տառապեալ են.

Աղաչենք լէ մեզի, Տէր բարութեան :

Շնորհէ ողորմիլ բոլոր մարդկային ազգին.

Աղաչենք լէ մեզի, Տէր բարութեան :

Շնորհէ որ մեր թշնամիներուն, մեզ հալածողներուն և մեզ բամբասողներուն թողութիւն տաս, և անոնց սիրտերը դարձունես.

Աղաչենք լէ մեզի, Տէր բարութեան :

Շնորհէ որ մեր պիտոյքին համար երկրին ընտանորեալ բերքերը պարգեւես ու պահես մեզի, որ ժամանակին վայելենք անոնք.

Աղաչենք լէ մեզի, Տէր բարութեան :

Շ Նորհէ որ մեզի ճշմարիտ զղջում պարգեւես .  
և ամէն մեր մեղքերուն , զանցառութիւններուն ու  
տգիտութիւններուն ալ թողութիւն շնորհես . և  
քու Սուրբ Հոգւոյդ շնորհքովը մեզ զարդարես ,  
որ քու սուրբ պատուիրանքներուդ նայելով մեր  
վարքերը նորոգենք .

Մաղաչենք լսէ մեզի , Տէր բարութեան :

Որդի Աստուծոյ , կ'աղաչենք լսէ մեզի .

Որդի Աստուծոյ , կ'աղաչենք լսէ մեզի :

Գանն Աստուծոյ , որ աշխարհի մեղքերը մեկ  
դի կը վերցունես .

Շ Նորհէ մեզի քու խաղաղութիւնդ :

Գանն Աստուծոյ , որ աշխարհի մեղքերը մեկ  
դի կը վերցունես .

Ողորմէ մեզի :

Քրիստոս , լսէ մեզի .

Քրիստոս , լսէ մեզի :

Տէր , ողորմէ մեզի .

Տէր , ողորմէ մեզի :

Քրիստոս , ողորմէ մեզի .

Քրիստոս , ողորմէ մեզի :

Տէր , ողորմէ մեզի .

Տէր , ողորմէ մեզի :

Յետոյ Քահանային հետ մէկ տեղ ժողովուրդն ալ Տէրու  
նական Ս զօթքը կ'ըսեն :

Ով մեր Հայրը՝ որ երկինքն ես , քու Անունդ  
սուրբ ըլլայ , Քու թագաւորութիւնդ գայ , Քու

կամքդ ըլլայ, ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ . Սեր ամէն աւուր հասցը այսօր տուր մեզի . Ալ ներէ մեզի մեր պարտքերը, ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն . Ալ մեզ փորձութեան մի տանիր, հապա չարէն ազատէ մեզ . ինչու որ քուկդ է թագաւորութիւնը ու զօրութիւնը ու փառքը, յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Վ.Կ. Տէր, մեր մեղքերուն նայելով մեզի հետ մի վարուիր .

Պ.Կ. Ու ոչ ալ մեր անօրէնութիւններուն նախելով մեզի հատուցում ըրէ :

### Աղօթենք

Ո՛վ Տէր Աստուած՝ բարեգութ շայր, որ զըզջացեալ սրտին հառաչանքը չես անարգեր, ու ոչ ալ վշտացեալին փափաքը . ( )գնէ մարդասիրաբար մեր աղաչանքներուն, որ քու ներկայութեանդ կը մատուցանենք բոլոր մեր նեղութիւններուն ու ձախորդութիւններուն մէջ, երբոր անոնք մեզ կը կոխեն . Ե դժբար լա՛նք մեզի, որ սատանային կամ չար մարդոց նենգութեամբը ու խորամանկութեամբը մեզի դէմ գործուած չարիքները ոչնչանան, և քու բարեգթութեանդ նախախնամութեամբը ցրուին . որ մենք քու ծառաներդ հալածումներով չի վնասած, կարող ըլլանք միշտ քու սուրբ Ակեղեցւոյդ մէջ քեզի գոհութիւն մատուցանելու, մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը :

Այլեր ո՛վ Տէր , օգնէ մեզի , և փրկէ մեզ քու  
Անուանդ համար :

Ո՛վ Տէր Աստուած , մենք մեր ականջներովը լսե-  
ցինք , և մեր հոյրերը մեզի պատմեցին քու մեծամեծ  
գործքերդ , որ դուն իրենց օրերը և իրենցմէ առաջ  
հին ժամանակը ըրիր :

Այլեր ո՛վ Տէր , օգնէ մեզի , և փրկէ մեզ քու  
Անուանդ համար :

Փառք շօր , և Որդւոյ , և շողոյն Արրոյ .

Որպէս էր 'ի սկզբանէ , այժմ , և միշտ , և յա-  
ւիտեանս յաւիտենից . Ամէն :

Վրիստոս Աստուած , պաշտպանէ մեզ մեր թըշ-  
նամիներէն .

Անարգասիրաբար նայէ մեր նեղութիւններուն .

Վթութեամբ տես մեր սրտին տրտմութիւն-  
ները .

Ողորմութեամբ ներէ քու ժողովուրդիդ մեզ-  
քերը .

Սիրով ու քաղցրութեամբ ընդունէ մեր աղա-  
չանքները .

Որդի Վաւթի , ողորմէ մեզի .

Վրիստոս Աստուած , հիմայ ու միշտ ընդունէ  
մեր պաղատանքները հաճութեամբ .

Նարեգթութեամբ լսէ մեզի Վրիստոս Աս-  
տուած .

Նարեգթութեամբ լսէ մեզի ո՛վ Տէր Վրիստոս .

Վհ . Ո՛վ Տէր , ցըցուր մեզի քու ողորմութիւնդ .

Պր . Ինչու որ մենք ամէնքս քեզի կը յուսանք :

## Աղօթենք

Խնարհեալ կ'աղաչենք քեզի ո՛վ Հայր, ողորմութեամբ նայէ մե՛ր, տկարութիւններուն վրայ, և քու Անուանդ փառքին համար հեռայնօր մենէ անամէն չարժքները, որոնց որ արդարապէս արժանի եղած ենք. Այլ շնորհէ որ մեր ամէն կերպ նեղութիւններուն մէջ յոյսերնիս ու ապաւինութիւններնիս քու ողորմութեանդ վրայ դնենք, և միշտ քեզի ծառայենք սրբութեամբ ու մաքրութեամբ ապրելով քու փառքիդ ու պատուոյդ համար, մի միայն Սի՛նորդ և Պաշտպան մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքովը. Ամէն :

## Աղօթք Սուրբ Ռսկեբերանի .

Ամենակարող Աստուած, որ հիմայ մենք ամէնքս մէկ տեղ մեր հաւասար աղաչանքները քեզի մատուցանելու համար մեզի շնորհք պարգեւեցիր, ու նաև խօսք տուիր, որ ուր որ երկու կամ իրեք քու անունովդ մէկ տեղ կը ժողվուին, անոնց խնդրուածքները գուն կը լսես. Ուստի՛ ո՛վ Տէր Աստուած, կ'աղաչենք որ հիմայ մեր՝ քու ծառաներուդ բաղձանքները ու խնդրուածքները անանկ մէկ կերպով մը կատարես, որ առաւել օգտակար ըլլայ անոնց. շնորհելով ևս մեզի այս աշխարհիս մէջ քու ճշմարտութեանդ գիտութիւնը, և հանդերձեալին մէջ յաւիտենական կեանքը. Ամէն :

Մեր Տէր Աստուծոյ Վարդապետի շնորհքը, և Աստուծոյ սէրը, և Սուրբ Հոգւոյն հաղորդութիւնը միշտ ամենուս հետ ըլլայ. Ամէն: (Ր. Արք. ժգ. 15):

Հոս կը վերջանայ Լեթանի Մաղթանքները:

ԱՊՕԲԻ

ԵՒ

ԳՆ ՀՈՒԹԻՒՒՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ

ՊԵՏԵՀՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՄԵՐ

ՈՐ ԻԹՎԵՆԻ ՄԵՂԹՎԵՆԻՒՆ ԿԵՄ ԵՌՏՈՒՆ

ԵՒ ԻՐԻՊՈՒՆ ՊԵՇՏԵՄՈՒՆԻՒՆ ԿԵՐՁԻ ԵՐԿՈՒ

ԵՂՕԹՎԵՆԻՒՆ ԵՌՆՁ ՊԻՏԻ ԲՍՈՒՆ:

ԵՂՕԹՎ

Անձրեւի համար.

Ո՛վ Հայր երկնաւոր Աստուած, որ քու թագաւորութիւնդ ու անոր արդարութիւնը խնդրողներուն մարմնաւոր պիտոյքները շնորհելու համար խօսք տուած ես քու Արդարող Աստուծոյ Վարդապետի ձեռքովը. կ'աղաչենք այս մեր յետին կարօտութեան ժամանակը անանկ չափաւոր անձրեւ շնորհէ մեզի, որ կարող ըլլանք երկրիս բերքերը առնելու, մեր մխիթարութեանը ու քու փառքիդ համար, մեր Տէր Աստուծոյ Վարդապետի շնորհքովը. Ամէն:

Պարզ Օգի համար .

Ո՛վ Ամենակարող Տէր Աստուած, դուն որ մարդուս մեղքին համար անգամ մը բոլոր աշխարհը ընկղմեցիր, միայն ութը հոգի ազատելով. և անկէ ետեւ քո ամենամեծ գթութեամբը խօսք տուիր անիկայ մէյմ'ալ չի կործանելու. Խոնարհեալ կ'ազաչենք, որ թէպէտ մենք մեր անօրէնութիւններովը անձրեւի ու ջուրերու սաստիկ հարուածներուն արժանի եղանք. սակայն մեր ճշմարիտ զղջմամբը անանկ օգի պարգուծիւն շնորհէ մեզի, որ կարող ըլլանք երկրիս բերքերը ժամանակին քաղելու. և այս քու պատիժովդ ալ խրատուինք մեր վարքերը ուղղելու, և քու մարդասիրութեանդ համար քեզի գովութիւն ու փառք մատուցանելու, մեր Տէր Հիսուս Քրիստոսի շնորհքովը. Ամէն :

Կարօտութեան ու Սովու ժամանակ .

Ո՛վ Հայր՝ երկնաւոր Աստուած, որ քու պարգեւդ է երկրիս անձրեւը, անոր բարեբեր ըլլալը, կենդանեաց աճիլը և ձուկերուն բազմանալը. Աշակերտենք, նայէ քու ժողովուրդիդ տառապանքներուն. և շնորհէ որ այս մեր կարօտութիւնը ու սովը՝ որոնցմով որ հիմայ մեր անօրէնութեանը համար կը պատժուինք, քու բարութեամբդ առատութեան ու լիութեան փոխուի, մեր Տէր Հիսուս Քրիստոսի տիրուն համար. Արուն, միանգամայն քեզի Հօր, և Սուրբ Հոգւոյն փառք և պատիւ, սցծմ և յաւիտեանս. Ամէն :

Կամ այս .

Ո՛վ Հայր՝ բարեգութ Մատուած , որ Աշխէ  
Սարգսրէին ժամանակը , Սամարիայի սաստիկ  
նուազութիւնը ու սովը շուտ մը առատութեան ու  
լիութեան փոխեցիր . Ողորմէ՛ մեզի , որ մենք որ Հի-  
մայ մեր մեղքերուն համար նոյն պատիժովը պատ-  
ժուած ենք , նոյնպէս կարող ըլլանք մէկ ժամա-  
նակաւոր օգնութիւն մը գտնալու . Մճեցնօր երկ-  
րիս բերքերը քու երկնային օրհնութեամբդ . և  
Հնորհէ՛ որ մենք՝ քու բարեգթած առատածեռնու-  
թիւնդ ընդունելով , կարող ըլլանք անոնք քու  
փառքիդ , կարօտեալներուն օգնութեանը և մեր  
Մխիթարութեանը համար վայելելու , մեր Տէր  
Յիսուս Քրիստոսի Հնորհքովը . Ամէն :

Պատերազմի և խռովութեան ժամանակ .

Մենակարող Մատուած , Թագաւոր թագաւո-  
րաց , և ամէն բաները կառավարող . որ ամենեւին  
մէկ ստեղծուած մը կարող չէ քու զօրութեանդ  
դէմ դնելու , և քեզի միայն կը վերադարձնէ արդա-  
րութեամբ մեղաւորները պատժելը , և ճշմարտա-  
պէս զղջացողներուն ողորմիլը . Խոնարհեալ կ'աղա-  
չենք , իրկէ՛ ու ազատէ՛ մեզ մեր թշնամիներուն բըռ-  
նութենէն . Իջեցնօր անոնց հպարտութիւնը , հան-  
գարտեցնօր անոնց չարութիւնը , և փարատէ՛ անոնց  
մաքին չար խորհուրդները . որ մենք քու պաշտպա-  
նութեամբդ զօրանալով , և ամէն վտանգներէ

զերծ մնալով՝ անդադար քեզ փառաւորենք, որ միայն դուն ես ամէն յաղթութիւնները տուողը, քու միածին Որդւոյդ մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը. Ա՛մէն :

Ժանտամա՛հի կամ ո՛ր և իցէ Հիւանդութեան ժամանակ.

Ո՛վ Ա՛մենակարող Աստուած, որ քու բարկութեանդ ժամանակը անապատին մէջ քու ժողովուրդիդ ժանտամահ խրկեցիր Սովսէսի ու Ա՛հարոնի դէմ իրենց կամակոր ապստամբութեանը համար, ու նաև Վաւիթ թագաւորին ժամանակը նոյն հիւանդութեան հարուածովը եօթանասուն հազար հոգի մեռուցիր, և քու անբաւ ողորմութիւնդ յիշելով մնացածները ազատեցիր. Ողորմէ՛ մեզի թշուառ մեղաւորներուս, որ հիմայ նոյն մահառիթ հիւանդութիւնը մեզի եկած է. և ինչպէս որ ան ժամանակը հաշտութեան զոհը ընդունելով հրամայեցիր ան սատակիչ հրեշտակին որ նոյն հարուածը վերջացունէ, անանկ ալ հիմայ վերցնուր մենէ այս անտանելի հիւանդութիւնը, մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը. Ա՛մէն :

Չորս Եղանակներուն մէջի ամէն օրուան Աղօթքը ան մարդոցը համար, որոնք Սուրբ Աստիճանները պիտի ընդունին.

Ա՛մենակարող Աստուած՝ մեր երկնաւոր Հայրը, դուն որ քու սիրելի Որդւոյդ անդին Արիւնովը ընդհանրական Արկեղեցի մը ծախու առիր. Ողորմութեամբ նայէ անոր վրայ, և հիմայ այս ժամա-

նակ քու ծառաներուդ՝ քու հօտիդ Ապիսկոպոս-  
 ներուն ու շովիւններուն միտքերը անանկ ուղղէ ու  
 կառավարէ , որ շուտ մը ամէն մարդու վրայ ձեռք  
 չի դնեն , հապա հաւատարմութեամբ ու խոհա-  
 կանութեամբ յարմար անձինքներ ընտրեն , քու  
 Ակեղեցիիդ մէջի սուրբ Պաշտօնին ծառայելու :  
 Պարգեւէ ևս քու շնորհքդ ու աստուածային օրհ-  
 նութիւնդ անոնց , որոնք սուրբ Պաշտօնի մը պիտի  
 կանչուին . որպէս զի թէ վարդապետութեամբ և  
 թէ վարքով քու փառքդ յայտնեն , և ամէնուն  
 հոգւոյն փրկութեանը օգնեն , մեր Տէր Հիսուս  
 Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Կամ այս .

Ո՛վ ամենակարող Աստուած , պարգեւատու ա-  
 մենայն բարութեան , դուն որ քու աստուածային  
 նախախնամութեամբդ Ակեղեցիիդ մէջ զանազան  
 Աստիճաններ սահմանեցիր . Խոնարհեալ կ'աղա-  
 չենք , պարգեւէ քու շնորհքդ անոնց՝ որոնք նոյն  
 Ակեղեցիին սպասաւորութեանը ու պաշտօնին պի-  
 տի կանչուին . և անոնք քու վարդապետութեանդ  
 ճշմարտութիւնովը անանկ լեցուր ու անմեղ վար-  
 քով փայլեցուր , որ կարող ըլլան հաւատարմու-  
 թեամբ քու առջիկ ծառայելու , քու մեծ Անուանդ  
 փառքին և սուրբ Ակեղեցւոյդ շինութեանը համար ,  
 մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Աղօթք՝ որ առջիններուն ամէն մէկին վերջը կրնայ ըսուիլ .

Ո՛վ Տէր Աստուած , որ քու բնութիւնդ ու

յատկութիւնդ է միշտ ողորմութիւն ընկը , լսէ  
 մեր խոնարհ աղաչանքներուն . և թէպէտ մենք մեր  
 մեղքերուն շղթաներովը կապուած ու փաթթուած  
 ենք , բայց թող քու մեծ ողորմութեանդ բարե-  
 դութութիւնը արձըկէ մեզ , մեր Պաշտպան և Տարե-  
 խօս Յիսուս Վրիսառսի պատառոյն համար . Ամէն :

Աղօթք Բառլիսէնդի Բարձր Առեանին համար , որ բոց  
 եղած ժամանակը շարունակ կը զըցուի .

Տաղմադու Մտուած , խոնարհեալ կ'աղա-  
 չենք , ինչպէս որ սովորաբար սա թագաւորու-  
 թեանը համար , անանկ ալ մասնաւորապէս Տառ-  
 լիմէնդի Աբբունի Առեանին համար , որ հիմայ մեր  
 բարեպաշտ և շնորհազարդ Աբբային հովանաւորու-  
 թեամբը մէկ տեղ եկած են . որ բարեյաջողու-  
 թեամբ անոնց խորհրդածու որոշմունքները դուն  
 ուղղես ու կատարես , քու փառքիդ յառաջադիմու-  
 թեանը , Ակեղեցւոյդ պայծառութեանը , մեր թա-  
 գաւորին և անոր Տէրութեանը ապահովութեանը ,  
 պատառոյն և բարեբաղդութեանը համար . Աւ շը-  
 նորհէ որ ամէն բան անոնց ջանքերովը անանկ կար-  
 գադրուի ու սահմանադրուի պինտ հաստատուն և  
 ապահով կերպով , որ խաղաղութիւնը ու երջան-  
 կութիւնը , ճշմարտութիւնը ու արդարութիւնը ,  
 հաւատքը ու սաստաւածպաշտութիւնը յախտեան  
 հաստատուն մնայ մեր մէջը : Աստուք և ուրիշ ասոնց  
 նման բաները անոնց , մեզի և միանգամայն քու

բողոք Աշկեղեցիիդ հարկաւոր եղածները խոնարհ  
հումեամբ կը խնդրենք մեր ( )ըհնեալ Տէր և  
Փրկիչ Յիսուս Վրիստոսի Անուամբը ու միջնորդ  
դումեամբը. Ա՛մէն :

Մաղթանք կամ Աղաչանք ամէն վիճակ մարդու համար, որ  
Լիթանի Մաղթանքները չըսուած ժամանակը կ'ըսուին .

Ո՛վ Տէր Աստուած , Ստեղծող և Պահպանող  
ազգի մարդկան, խոնարհեալ կ'աղաչենք ամէն աս-  
տիճանի ու վիճակի մէջ դանուող մարդոցը համար ,  
որ յայանի ցրցունես անոնց քու ճամբաներդ , և  
ամէն ազգերուն քու ամենամեծ փրկութիւնդ : Մաս-  
նաւորապէս կ'աղաչենք ևս քու Անդհանրական Աշ-  
կեղեցիիդ բարեյաջողութեանը համար , որ քու բա-  
րութեան հոգիովդ շտկուած ու կառավարուած ,  
քրիստոնէութիւն խոստովանողներուն և քրիստոն-  
եայ բաւողներուն ամէնքն ալ ճշմարտութեան ճամ-  
բուն մէջ աստիճնորդուին . և հոգւոյ միութիւնով ,  
խաղաղութեան կապով ու սուրբ վարքով այս սուրբ  
հաւատքը պահեն : Այլ ըստպէս քու հայրական  
բարեգթութեանդ կը յանձնենք ան ամէնքը , որ  
զանազան կերպով թէ հոգւով , թէ մարմնով և թէ  
վիճակով նեղեալ ու տառապեալ են . ( և մասնաւոր  
ապէս մեր աղօթքին յանձնուածները , ) ( Ասիկայ  
կ'ըսուի Էրբոր Սիբանու-Սեան Աղօթք ինքրուի ) որ-  
պէս զի անոնց ամէն մէկին կարօտութեանը նայե-  
լով մխիթարես ու սիտիես անոնք , համբերութիւն  
չնորհելով անոնց իրենց նեղութիւններուն մէջ ,

և մէկ երջանիկ ազատութիւն մը բոլոր իրենց տա-  
ռապանքներէն : Ա՛աղաչենք լսէ այս մեր խնդրո-  
ւածքներուն : Յիսուս Վրիստոսի համար . Ա՛մէն :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՅՈՒԹԻՒՆ .

Ա՛մենակարող Ա՛ստուած , Հայր ամենայն զը-  
թութեան , մենք քու անարժան ծառաներդ կը գո-  
հանանք խոնարհութիւնով ու սրտով քու բարե-  
բարութենէդ ու մարդասիրութենէդ , որ մեզի ու  
միանգամայն բոլոր մարդկային ազգին կը յայտնես .  
(մասնաւորապէս անոնց , որոնք հիմայ կը փափա-  
քին իրենց գովութիւնները ու շնորհակալութիւն-  
ները քեզի մատուցանելու , քու բարերարութիւն-  
ներուդ համար , որ արդէն անոնց շնորհեցիր .)  
(Ասիկայ կ'ըստի երբոր մէկը՝ որոնք համար որ առաջոց-  
աղբիւ եղած է , կը խափափ գոհութիւն մապոցանէլ :)  
Ա՛նք քեզ կ'օրհնենք մեզ ստեղծելուդ , պահպա-  
նելուդ և բոլոր այս կեանքին բարիքներուն համար .  
սակայն էվելօք քու անբաւ սիրուդ համար , որ մեր  
Տէր Յիսուս Վրիստոսի ձեռքովը աշխարհս փր-  
կուեցաւ . Ար գոհանանք նաև քենէ շնորհքի մի-  
ջոցներուն և փառքի յոյսին համար : Ա՛աղաչենք ,  
տուր մեզի բոլոր քու շնորհքներուդ արդար ճանա-  
չումը , որ անկեղծ սրտիւ շնորհակալ ըլլանք քենէ  
ու քու գովութիւնդ յայտնենք , չէ թէ միայն խօս-  
քով հապա մեր վարքերովը , անձերնիս քու ծա-

ուայութեանդ նուիրելով և քու սուղեղ սրբութեամբ ու արդարութեամբ վարուելով բոլոր մեր կեանքին մէջ, մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովը . Որուն, միանգամայն քեզի շօր, և Սուրբ Հոգւոյն ըլլայ բոլոր փառքը ու պատիւը, միշտ և յաւիտեանս . Ամէն :

Անձրեւի համար .

Ո՛վ Աստուած՝ մեր երկնաւոր շայրը, որ քու բարեգութ նախախնամութեամբդ առաջին ու վերջին անձրեւները երկրիս կը պարգեւես, մարդոց հարկաւոր եղածները բուսցունելու համար . Խոնարհութեամբ կը գոհանանք քնէ որ հաճեցար մեր վերջին կարօտութեան ժամանակը ուրախարար անձրեւ շնորհել քու ժառանգութեանդ, և անիկայ կրկին զովացունել երբոր ցամքեր էր, մեզի քու անարժան ծառաներուդ քաջալերութեանը և քու սուրբ Անուանդ փառքին համար, մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Պարզ Օդի համար .

Ո՛վ Տէր Աստուած, որ մեզ արժանաւորապէս խոնարհեցուցիր ան վերջին սաստիկ անձրեւին ու ջուրերուն հարուածովը, և քու ողորմութիւնովդ մեզի օգնեցիր ու մեզ մխիթարեցիր ասանկ ժամանակաւոր ու օրհնեալ օգափոխութեամբ մը . Արդովնք և կը փառաւորենք քու ամենասուրբ Անունդ այս քու անբաւ մարդասիրութեանդ համար, և աս-

կէ և ան արդէ մինչեւ այգ քու բարեգթու թիւնդ կը  
հրատարակենք, մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Առատութեան համար .

Ամենագթած Հայր, որ քու առասնայարգեւ  
բարութեամբդ Ակեղեցիիդ ջերմեռանդ խնդրու  
ուածքները կատարեցիր, մեր կարօտութիւնը ու  
պակասութիւնը առատութեան ու լիութեան փոխե  
լով . Խոնարհութեամբ կը դոհանանք այս քու  
մասնաւոր առատաձեռնութենէդ, քու բարեգթու  
թիւնդ միշտ մեզի շարունակելի խնդրելով, որ մեր  
երկիրը առատապէս իր բերքերը մեզի ընծայէ,  
քու փառքիդ և մեր մխիթարութեանը համար, մեր  
Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Խաղաղութեան և մեր թշնամիներէն ազատելու համար .

Ո՛վ ամենակարող Աստուած, որ զօրաւոր աշ  
տարակ մըն ես քու ծառաներդ պաշտպանելու ի  
րենց թշնամիներուն յարձակմանը դէմ . Վա՛ռք ու  
գոհութիւն կը մատուցանենք քեզի բոլոր ան մեծ  
ու մօտակայ վտանգներէն մեզ ազատելուդ հա  
մար . Սէնք կը ճանչնանք որ ան քու մեծ մար  
դասիրութիւնդ էր որ մեզ անսնց որս չըրաւ . և  
կը խնդրենք որ ամէն ժամանակ նոյն բարեգթու  
թիւնդ մեզի շնորհես, որ բոլոր երկիրը ճանչնայ  
թէ դուն ես մեզ Վրկողը և մեր հօր Պաշտպանը,  
մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Տէրութեան մէջ Հասարակաց կրկին խաղաղութեանը  
համար .

Ո՛վ մեր երկնաւոր Հայրը՝ յաւիտենական Մտտուած , որ գուն միայն կարող ես մէկ տան մը մէջի մարդիկեցիքը խաղաղութեան մէջ պահելու , և անսանձ ու ասպտամբ ժողովուրդի մը կատաղութիւնը հանդարտեցունելու . Ա՛օրհնենք քու սուրբ Անունը , որ հաճեցար մեր մէջի եղած հիմակուան ապրտամբ խռովութիւնները խաղաղացունելու . և խոնարհեալ կ'աղաչենք քեզի որ մեր ամենուս անշորհքը պարգեւես , որ կատարեալ հնազանդութեամբ քու պատուիրանքներուդ կանոնէն բնաւ չի խտորինք , և ամենայն բարեպաշտութեամբ ու քաղաքաւարութեամբ , հանդարտ ու խաղաղ կեանքով , կարող ըլլանք ան մեզի բրած ողորմութիւններուդ համար օրհնութիւնով քեզի գոհութեան պատարագներ մատուցանել , մեր Տէր Հիսուս Վրբիստոսի շնորհքովը . Ա՛ճն :


Ծանտամահէ կամ ուրիշ Հիւանդութենէ աղատելն ետեւ .

Ո՛վ Տէր Աստուած , որ մեր չափազանց մեղքերուն պատճառաւ մեզ իրաւունքով վերաւորեցիր , և օրինազանց ըլլանուս համար մաշեցուցիր այս հիմակուան ծանր ու ահարկու այցելութեամբդ . և հիւսց մեզ դատելու ժամանակդ քու բարեգթութիւնդ յիշելով մեր հոգիները մահուան ճանկերէն աղատեցիր . Ա՛հա մենք մեզ ըտլորովին հոգւով ու

մարմնով քու հայրական գթութեանդ կը մատուցանենք, որ պահեցիր քեզի կենդանի պատարագ մը ըլլալու, և քու սուրբ Եկեղեցիիդ մէջ միշտ քու ողորմութիւններդ գովելու ու փառաւորելու, մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովը. Ամէն :

Կամ այս .

Ամենագթած Հայր, խոնարհութեամբ կը խոստովանիմք քու ներկայութեանդ առջին, որ քու արդար օրէնքներուդ մէջի եղած բոլոր պատիժները իրաւունքով մեր վրայ գալու արժանի էր մեր չափէ դուրս օրինազանց ու խտասիրտ ըլլալնու համար, Սակայն դուն քու բարեգութ մարդասիրութեամբ բըր մեր շնչին ու անարժան խոնարհութիւնը չարհամարհելով ան արժանահաս մահտարաժամը՝ ուրով արդէն անտանելի դառնութեամբ կը տանջուէինք, դադարեցուցիր, և նորէն մեր բնակարաններուն մէջ ցնծութեան ու կենդանութեան ձայնը հաստատեցիր . Ուստի՝ քու Աստուածային Սեծվայելութեանդ գոհութեան ու շնորհակալութեան պատարագներ կը մատուցանենք, քու փառաւորեալ Անունդ փառաբանելով ու գովաբանելով, մեր վրայ ունեցած այս քու նախախնամութեանդ ու պահպանութեանդ համար, մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովը. Ամէն :



# ԲՈՒՈՐ ՏԱՐԻՆ

ԿԵՐԴ-ԵՅՈՒՆԵԼՈՒ ՄԵՂԹ-ՄԵՔՆԵՐԸ,

ԵՌ-ԵՔԵԼՈՅ ԹՈՒՂԹ-ԵՐԸ,

Ե Ի

## ԵՒՆՏԱՐԵՆԵՐԸ .

Ճանօթութիւն . Կիրառի էսմ Նստաբօնա՛ն ունէցող Տօն օրերուն համար դրձծ Մաղլաննէրը նախընկաց օրուան Իրի՛սաան Աջօլի՛ի յամանալը որի՛ր ըստի՛ն :

Քրիստոսի Ճնունդէն առաջ Գալատեան ըստած չորս՝ Կիրակիներուն՝ Առաջին Կիրակին . ,

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Ա՛մենակարող Ա՛ստուած , տուր մեզի քու շնորհքդ որ մենէ մէկ դի թօթուկնք խաւարին գործքերը , ու լուսոյ զէնքովը զգեստաւորինք հիմայ այս մահկանացու կեանքիս մէջ , ուր որ Հիսուս Վրիստոս քու միածին Որդիդ մեծ խոնարհու թեամբ մեզի այցելութեան եկաւ . որ վերջին օրը երբոր իր Ա՛ստուածային փառքովը կենդանիները ու մեռելները դատելու համար նորէն գալու ըլլայ , կարող ըլլանք անմահ կեանքին յարութիւն առնելու իրմով , որ կենդանի է ու կը թագաւորէ միանգամայն քեզի շօր , և Սուրբ շոգւոյն հետ . հիմայ ու միշտ . Ա՛մն :

Այս Մաղթանքը ամէն օր Քրիստոսի Ճնունդէն առաջ Գալատեան ըստած Կիրակիներուն մէջի ամէն օրուան Մաղթանքներուն հետ պիտի ըսուի մինչև Ճննդեան Նստաբօնակի օրը :

Թ. ու. դ. Թ. Պօղոսի Առաքելայ. Հոսմ. Ժ. 8.

Մէկզմէկ սիրելէն ՚ի զատ պարտականութիւն մը չունենաք. վասն զի ո՛վ որ իր ընկերը կը սիրէ, ան օրէնքը կը կատարէ. մի շնարը, և մի սպանաները, և մի գողանարը, և մի սուտ միջակը, և մի ցանկարը, և թէ ուրիշ պատուիրան մըն ալ կայ նէ, այս բանիս մէջ կը բովանդակի, թէ քու ընկերդ քու անձիդ պէս սիրես: Աէրը իր ընկերին չարութիւն մը չընէր, օրէնքին բովանդակութիւնը սէրն է: Այս ասիկայ հիմակուան ժամանակիս հաւմար գիտցէք, որ հիմայ մեզի քունէ արթննալու ժամանակ է, ինչու որ հիմայ փրկութիւնը մեզի մօտ է, քան թէ ան ժամանակը որ հաւատացինք: Վիշերը անցաւ, ու ցորե՛լը մօտեցաւ. մէկ զի թօթուենք մենէ խաւարին գործքերը, ու լուսոյ զէնքովը հազուինք: Յորեկ ժամանակի պէս զգաստ պտըտի՛ք. չէ թէ անառակութիւններով ու արբեցութիւններով, խառնակ անկողիններով ու պրզծութիւններով, նախանձութիւնով ու հակառակութիւնով. հապա Տէր Յիսուս Վրիստոսով հագուեցէք, և մարմինին խնա՛ք մի տանիք ցանկութիւններով:

Ս. Աւետարան. Մատթ. Խա. 1.

Արբոր Արուսաղէմի մօտեցան, և բեթփագէ Եկան ձիթենեաց լեռանը մօտ. ան ժամանակը յիսուս իր աշկերաններէն երկո՛քը խրկեց: Այս ըստանոնց. Վացէք սա ձիւր գիմացը ելա՞ծ գեղը, և

Իսկոյն էշ մը կը գանաք կապուած՝ և անոր քովը  
 աւանակ մը, քակեցէք ու ինծի բերէք: Այլ թէ որ  
 ձեզի բան մը ըսող ըլլայ, ըսէք թէ իրենց տէրոջը  
 պէտք են, ու շուտով պիտի իրկէ անոնք: Իսկ  
 աս ամէնը եղաւ որ մարգարէին խօսքը լեցուի՝ որ  
 կ'ըսէ. ըսէք սիօնի աղջիկանը. ահա քու թագաւորդ  
 քեզի կուգայ. հեղ, և էջը ու իշուն աւանակին  
 վրայ հիծած: Աշխերաները գացին և ըրին  
 ինչպէս որ յիսուս իրենց հրամայեց: Այլ բերին  
 էջը ու աւանակը, ու հանդերձնին անոնց վրայ  
 ձգեցին, և անոնց վրայ նստաւ: Այլ շատ ժողովուրդ  
 իրենց հանդերձները ճամբուն վրայ փռեցին,  
 և ուրիշները ծառերէն ճիւղեր կը կտրէին,  
 ու ճամբուն վրայ կը փռէին: Այլ ժողովուրդները  
 որ առջեւէն ու ետեւէն կ'երթային, կը կանչէին ու  
 կ'ըսէին. օրհնո՛ւ թիւն Արդւոյ Պատի, օրհնալ է ան՝  
 որ տէրոջը անունովը կուգայ. օրհնու թիւն 'ի բարձունս:  
 Այլ երբոր ինքը երուսաղէմ մտաւ, բոլոր քաղաքը  
 շարժեցաւ, ու ըսաւ. ո՞վ է աս: Այլ ժողովուրդները  
 կ'ըսեն. Աս է յիսուս մարգարէն, գալիլեացոց նազարէթէն: Այլ յիսուս տաճարը  
 մտաւ՝ ու ամէնքը դուրս հանեց, որ տաճարին մէջ  
 կը ծախէին ու ծախու կ'առնէին, և դրամ փոխողներուն  
 սեղանները և աղանի ծախողներուն աթոռները  
 տակնուվրայ ըրաւ: Այլ ըսաւ անոնց. դուրս  
 է թէ, իմ տունս աղօթքի տուն պիտի ըսուի,  
 և դո՛ք անիկայ աւազակներու բուն ըրէք:

Քրիստոսի ծնունդէն առաջ Գալատեան ըսուած չորս  
Վերակենդան Երկրորդ Վերակին .

ՄԱՂԹԱՆՔ .

Ամենօրհնեալ Տէր , որ բոլորքու Սուրբ Վերքե-  
րըդ մեր ուսմանը համար գրել տուիր . Ար խնդրենք՝  
պարգեւէ մեզի քու շնորհքդ , որ կարող ըլլանք  
անանկ մէկ կերպով մը անոնք լսելու , կարգալու .  
պահելու , սորվելու և սրտի մտօք խորհելու , որ  
համբերութիւնով ու քու սուրբ պատգամներուդ  
մխիթարութիւնովը գրկենք ու հաստատ բռնենք  
յաւիտենական կեանքին ան երջանիկ յոյսը , որ  
մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը մեզի պար-  
գեւեցիր . Ամէն :

Թուղթ Պողոսի Առաքելոյ . Հոռմ , Ժե . 4 .

Ինչ որ գրուեցաւ նէ՝ մեր սորվելուն համար  
գրուեցաւ , որ համբերութիւնով ու գիրքերուն մը-  
խիթարութիւնովը յոյս ունենանք : Իայց համբե-  
րութեան ու ամէն մխիթարութեան աստուածը շը-  
նորհէ ձեզի մի և նոյն խորհուրդը ունենալ իրարու  
հետ յիսուս քրիստոսի նայելով . Ար միաբանու-  
թիւնով մէկ բերան զաստուած ու մեր տէր յիսուս  
քրիստոսի հայրը փառաւորէք : Աւստի՝ մէկզմէկ  
ընդունեցէք , ինչպէս որ քրիստոս ալ ձեզ աս-  
տուծոյ փառքին ընդունեց : Իայց ես կ'ըսեմ , թէ՝  
քրիստոսի թլփատութեան պաշտօնեայ ըլլալը աս-  
տուծոյ ճշմարտութեանը համար էր . որ հայրե-

բուն և զած խոստմունքը հաստատէ : Սակայն հե-  
թանոսները ողորմութեան համար զաստուած կը  
փառաւորեն, ինչպէս որ գրուած է . անոր համար  
քենէ կը գոհանամ հեթանոսներուն մէջ, և քու  
անուանդ սաղմոս կ'երգեմ : Եւ դարձեալ կ'ըսէ . ու-  
րախ եղիք հեթանոսներ անոր ժողովուրդին հետ :  
Եւ դարձեալ թէ, օրհնեցէք տէրը բո՛ւոր հեթա-  
նոսներ, և անիկայ գովեցէք ամէն ժողովուրդներ :  
Եւ դարձեալ Եսային կ'ըսէ, յեսսէէն արմատ մը  
պիտի ըլլայ, և ան որ հեթանոսներուն իշխան պի-  
տի կայնի, անոր հեթանոսները պիտի յուսան :  
Սակայն յուսոյ ստտուածը ձեզ ամէն խնդութիւ-  
նով ու խաղաղութիւնով լեցունէ, որ յոյսով էվել-  
նաք Սուրբ Հոգւոյն զօրութիւնովը :

Ս. Աւետարան. ՂԷ. Իա. 25.

Եւ արեգակին և լուսինին և աստղերուն մէջ  
նշաններ պիտի ըլլան . ու երկրի վրայ հեթանոս-  
ներուն անձկութեան ձայնը՝ ծովուն ալէկոծու-  
թեանը նման, մարդիկ վախերնուն հառաչելով, և  
աշխարհի վրայ գալու բաներուն կարծիքներէն .  
ինչու որ երկինքի զօրութիւնները պիտի շարժին :  
Եւ ան ժամանակը պիտի տեսնան որդին մարդոյ  
ամպերով եկած, զօրութիւնով ու մեծ փառքով :  
Ու երբոր ասիկայ կ'սկսի ըլլալ, վեր նայեցէք, ու  
գլուխնիդ բարձրըցուցէք . ինչու որ ձեր փրկու-  
թիւնը մօտ է : Եւ անոնց առակ մը ըսաւ . Այցե-

յէք թուղին ծառին, և ամէն ծառերուն. երբոր պտուղին կը ցըցունեն, կը տեսնուք և անոնցմէ կը ճանչնաք թէ ամառը մօտ է: Անանկ ալ դուք, երբոր կը տեսնուք սա ամէնը եղած, գիտցէք թէ աստուծոյ թագաւորութիւնը մօտ է: Ղշմարիտ կ'սեմ ձեզի, թէ այս ազգը չի պիտի անցնի, մինչեւ որ սա ամէնը կատարուի: Արկիւնք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս չի պիտի անցնին:

Քրիստոսի ճնունդէն առաջ Գարտեան ըստած չրս  
 Արակիներուն Երբորդ Արակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Տէր Հիսուս Քրիստոս, որ քու տօջի գալու ժամանակդ քենէ առաջ քու կարապետդ խրկեցիր քեզի համար ճամբոյ պատրաստելու . ( Ընորհէ որ քու խորհուրդներուդ պաշտօնեաները ու մատակարարները կարող ըլլան նոյնպէս քու ճամբարդ պատրաստելու ու շիտկելու տպօտամբներուն սիրտերը արդարներուն խոհականութեանը դարձունելով, որ երկրորդ անգամ աշխարհը դասելու համար գալու ժամանակդ, քու տօջիդ ընդունելի ժողովուրդ մը գտնուինք, որ կենդանի ես ու կը թագաւորես միանգամայն Հօրը և Սուրբ Հոգւոյն հետ, միշտ մէկ Աստուած մը, յաւիտեանս յաւիտենից . Ամէն:

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Ա . կորն . դ . 1 .

Ասանկ թող սեպեն մէջ մարդիկ, որպէս թէ

քրիստոսի պաշտօնեաները , և աստուծոյ խորհուրդներուն մատակարարները : Աւստի մատակարարներուն մէջ կը փնտռուի թէ մէկը հաւատարիմ գտնուի : Բայց ասիկայ ինձի նախատիւք է որ ես ձեռնէ դատուիմ , կամ բնաւ մէկ մարդէ մը , մանաւանդ որ ես ալ իմ անձն չեմ քններ : Ինչու որ իմ անձիս վրայօք մէկ բան մը չի յատեմ . բայց չէ թէ ասով կ'արգարանամ , ինչու որ իս քննողը տէրն է : Արեմն ժամանակէն առաջ մի գատէք , մինչև որ Տէրը գայ , որ խաւարին գաղանխքները լուսին բերէ , և սրտին խորհուրդները յայտնէ . և ան ասները ամէն մէկուն գովութիւն պիտի ըլլայ աստուծոյ :

Ս . Աւետարան . Մատթ . Ժա . 2 .

Բայց յօհաննէս բանտին մէջ երբոր քրիստոսի գործքերը լսեց , իր աշակերտներուն ձեռքովը խրկեց , ու ըսաւ անոր . դ՞ու՞ն ես ան՝ որ պիտի գաս , թէ ուրիշի մը նայինք : Պատասխան տուաւ յիսուս և ըսաւ անոնց . Վասցէք պատմեցէք յօհաննէսին ինչ որ տեսաք ու լսեցիք : Այլերը կը տեսնան , կաղերը կը քալեն , բորոտները կը սրբուին , և խուլերը կը լսեն , և մեռելները յարութիւն կ'առնեն , և աղքատները աւետարանի քարոզութիւնը կ'ընդունին : Այլ երանի է անոր՝ որ ինչ չի գայ թակղիւր : Այլ երբոր անոնք գացին , յիսուս սկսեց ժողովուրդին ըսել յօհաննէսին համար .

Ի՞նչ տեսնալու գացիք անապատը, եղև՞ գ մը հա-  
 վէն շարժուած : Հապա ի՞նչ տեսնալու ելաք. փա-  
 փուկ զգեսաներով զարդարուած մարդ մը. ահա  
 փափուկ հագնողները թագաւորներուն տուներն են :  
 Հապա ի՞նչ ելաք տեսնալու. մարդարէ՞ մը. իրաւ  
 կ'ըսեմ ձեզի, մարդարէէ մըն ալ մեծ : Ինչու որ  
 ան է՝ որուն համար գրուած է. ահա ես իմ հրեշ-  
 տակս քու երեսիդ առջին պիտի խրկեմ, որ քու  
 առջիդ քու ճամբադ պիտի պատրաստէ :

Քրիստոսի ճնաւեղէն աւաջ Գարսեան ըսուած չորս  
 Կիրակիներուն Չորրորդ Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Տէր Աստուած, կ'աղաչենք բարձրացուր  
 քու զօրութիւնդ, և մեզի այցելու եղիր, և քու  
 ամենազօր կարողութիւնովդ օգնէ մեզի, որ մեր մե-  
 զացը ու անօրէնութեանը պատճառաւ ան մեր առ-  
 ջևը դրուած ընթացքը մեզի բոլորովին արգիլուած  
 ու խափանուած ըլլալով, քու առատաբուղիս շնորհ-  
 քըդ ու բարեգթութիւնդ շուտով մեզի օգնէ ու  
 մեզ ազատէ, քու Արդւոյդ մեր Տէր Հիսուս Քրիս-  
 տոսի հատուցմամբք. Արուն՝ միանգամայն քեզի, և  
 Սուրբ Հոգւոյն ըլլայ փառքը ու պատիւը, յաւի-  
 տանս յաւիտենից. Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ. Փիւնդ. դ. 4 .

Ամէն ատեն տէրոջմով ուրախ եղիք. նորէն կ'ը-  
 սեմ՝ ուրախ եղիք : Չեր հեղութիւնը ամէնուն

Յայտնի թող ըլլայ . տէրը մօտ է : Բան մը մի-  
 հոգաք , հապա աղօթքով ու խնդրուածքով գոհու-  
 թիւնով ձեր ամէն խնդրուածքը աստուծոյ յայտնի  
 ըլլայ : Այլ աստուծոյ խաղաղութիւնը՝ որ ամէն  
 միտքէն վեր է , ձեր սիրտերը ու միտքերը պահէ  
 յիսուս քրիստոսով :

Ս . Աւետարան . Յով . ա . 19 .

Յօհաննէսին վկայութիւնը աս է , երբոր հը-  
 բէանները Արուսաղէմէն քահանաներ ու ղեւտացի-  
 ներ խրկեցին իրեն , որ հարցունեն անոր , թէ՛  
 դուն ո՞վ ես : Այլ ան՝ իրաւը ըսաւ , ու չուրացաւ .  
 խոստովանեցաւ թէ՛ ես քրիստոսը չեմ : Ալ հար-  
 ցուցին իրեն . հապա դուն ո՞վ ես , եղիան ես . և  
 ըսաւ չեմ : Հապա դուն մարգարէն ես , պա-  
 տասխան տուաւ թէ չէ : Աւրեմն ըսէ մեզի , դուն  
 ո՞վ ես , որ մեզ խրկողներուն պատասխան տանինք .  
 դուն ի՞նչ կ'ըսես քեզի համար : Ասաւ , Այս անա-  
 պատին մէջ կանչող ձայն մըն եմ . ( ըտկեցէք  
 տէրոջը ճամբան , ինչպէս որ եսոյի մարգարէն  
 ըսաւ : Այլ ան խրկուածները փարսեցիններէն էին :  
 Հարցուցին իրեն և ըսին . ուրեմն ինչո՞ւ մկրտու-  
 թիւն կ'ընես , թէ որ քրիստոսը չես , ոչ եղիան ,  
 և ոչ մարգարէն : Պատասխան տուաւ անոնց յօ-  
 հաննէս և ըսաւ . Այս ձեզ ջուրով կը մկրտեմ . ձեր  
 մէջը մէկը կայ , որ դուք անիկայ չէք գիտեր : Այն  
 իմ ետեւէս պիտի գայ , որ ես արժանի չեմ անոր

կօշիկներուն կտակերը քակելու : Այս բանը բե-  
թարբայի մէջ եղաւ յորդան սնու միւս կողմը, ուր  
որ յօհաննէս կը կենար ու կը մկրտէր :

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի ճննդեան Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ամենակարող Աստուած, որ քու միածին Որ-  
դիդ մեզի շնորհեցիր մեր բնութիւնը առնելու, և  
այսօր մաքուր կուսէն ծնելու, Պարգեւէ որ մենք  
որդեգրութեամբ ու շնորհքով վերստին ծնած ու  
քու որդիքներդ եղած, քու Սուրբ Հոգւոյդ զօրու-  
թիւնովը օր ըստ օրէ նորոգուինք, նոյն մեր Տէր  
Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը, որ կեն-  
դանի է ու կը թագաւորէ միանգամայն քեզի և  
Սուրբ Հոգւոյն հետ, միշտ մէկ Աստուած մը, յա-  
ւիտեանս յաւիտենից . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Եբր . ա . 1 .

Եւստ կերպերով և շատ օրինակներով աստուած  
առաջուց մեր հայրերուն հետ անրգարէներով խօ-  
սեցաւ . Այս վերջի օրերս իր որդւովը մեզի հետ  
խօսեցաւ, որ անիկայ ամէնուն ժառանգ դրաւ, որ  
անով աշխարհքները ըրաւ : Ար ինքը փառքին լոյսն  
է, և անոր էութեանը բուն պատկերը, որ ամէն  
բան իր զօրութեան խօսքովը կը բռնէ . ինքը մեր  
մեղքերը սրբած վերը մեծութեան աջ կողմը նըս-  
տաւ : Հրեշտակներէն այնքան է վելի եղաւ, որքան

որ անոնցմէ աղէկ անուն ժառանգեց : Ինչու սր  
 հրեշտակներն որին ըսաւ, դուն իմ որդիս ես, ես  
 քեզ այսօր ծնայ. ու դարձեալ թէ՛ ես անոր հայ-  
 րը պիտի ըլլամ, և ան ինծի որդի պիտի ըլլայ :  
 Եւ դարձեալ երբոր անոր առջինէկը աշխարհք կը  
 խօթէ, կ'ըսէ. աստուծոյ ամէն հրեշտակները անոր  
 երկրպագութիւն թող ընեն : Սակայն հրեշտակնե-  
 րուն կ'ըսէ. ո՞ր հրեշտակները հոգիներ ըրաւ, և  
 իր պաշտօնեաները կրակի բոց : Եւ այց որդիին կ'ը-  
 սէ, ո՞վ աստուած, քու աթոռդ յա խտեանս յա-  
 լիտենից է, քու թագաւորութեանդ գաւազանը  
 ուղղութեան գաւազան է : Եւ դարութիւնը սիրե-  
 ցիր, և անիրաւութիւնը ատեցիր. անոր համար  
 աստուած՝ քու աստուածդ ուրախութեան իւղով  
 քեզ օծեց՝ քու ընկերներէդ էվել : Եւ դուն ո՞վ  
 տէր, սկիզբէն երկիրը հաստատեցիր, ու երկինքը  
 քու ձեռքիդ գործն է : Եւնոնք կը կորսուին, և դուն  
 կաս և կը մնաս. ամէնքը հանդերձի պէս պիտի մա-  
 չին, վերարկուի պէս. հանդերձի պէս պիտի պո-  
 րես, և պիտի պլորին. բայց դուն նոյն ես, և քու  
 տարիներդ չի պիտի պակսին :

Ս. Աւետարան. Յ. Է. ա. 1.

Սկիզբէն էր բանը. ու բանը աստուծոյ քովն  
 էր, և ան բանը աստուած էր : Եւ սկիզբէն  
 աստուծոյ քովն էր : Եւ մէն բան անով եղաւ,  
 և առանց անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ :

Աեանքը անով էր, և կեանքը մարդուն լոյսն էր, և լոյսը ան խաւարին մէջ կը լուսաւորէ, և խաւարը անիկայ չի հասկըցաւ : Աստուծմէ մարդ մը իրկուեցաւ . անոր անունը յօհաննէս : Ասիկայ վեկայութեան համար եկաւ, որ ան լոյսին համար վկայէ, որ ամէնքը անով հաւատան : Ինքը ան լոյսը չէր . հապա որ ան լոյսին համար վկայութիւն տայ : Ան էր ճշմարիտ լոյսը, որ աշխարհք գալու բոլոր մարդիկները կը լուսաւորէ : Ինքը աշխարհի մէջն էր, և աշխարհը անով եղաւ . ու աշխարհը անիկայ չի ճանչցաւ : Իրեններուն եկաւ, և իրենները անիկայ չընդունեցին : Բայց զինքը ընդունողներուն իշխանութիւն տուաւ աստուծոյ որդիները ըլլալու . որոնք որ իր անուանը կը հաւատան, ասոնք ոչ արիւնէ և ոչ մարմինին կաւքէն և ոչ ալ մարդու կաւքէն, հապա աստուծմէ ծնած են : Աւ բանը մարմին եղաւ՝ և մեր մէջը բնակեցաւ . և անոր փառքը տեսանք, հօրմէն միածնի փառքին պէս, շնորհքով ու ճշմարտութիւնով լեցուն :

Նախալկայ Սուրբ Ստեփաննոսի Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Տէր Աստուած, շնորհէ մեզի որ այս աշխարհիս մէջ քու ճշմարտութեանդ վկայութեանը համար ինչ նեղութիւն որ ունենանք, մեր աչքերը անշարժ երկինքը հաստատելով՝ մեզի յայանուե-

լու փառքը հաւատոյ զօրութեամբը տեւնանք . և Սուրբ Հոգւով լեցուած կարող ըլլանք մեզ հալածողները սիրելու և օրհնելու . օրինակ առնելով քուսուրը Ստեփաննոս Ափսամկայէդ , որ զինքը մեռցունողներուն համար աղօթք ըսաւ քեզի՝ ո՞վ ամենօրհնեալ է յիսուս , որ Աստուծոյ աջ կողմը կը նստիս բոլոր քեզի համար չարչարուողներուն օգնելու , ո՞վ մեր մի միայն Սիջնորդը և Պաշտպանը .  
 Լ.Պ.ն :

Յետոյ ճննդեան Մաղթանքը կը հետեւի , որ ամէն օր մինչեւ հարւոյն վերջի օրը պիտի ըսուի .

Գործք Աւարեւոյ . է . 55 .

Ստեփաննոս հոգւով սրբով լեցուած երկինքը նայեցաւ , ու աստուծոյ փառքը տեսաւ . և յիսուս՝ որ աստուծոյ աջ կողմը կայներ էր , և ըսաւ .  
 Լ՛հա՛ կը տեսնամ երկինքը բացուած , և որդին մարդոյ աստուծոյ աջ կողմը կայնած : Լ՛նոնք բարձր ձայնով պօռացին , ահանչներնին գոցեցին , և ամէնքը անոր վրայ յարձըկեցան : Այլ քաղաքէն դուրս հանելով անիկայ կը քարկոծէին . ու վրկաները իրենց լաթերը երիտասարդի մը ոտքին քով կը դնէին , որ սաւուղ կ'ըսուէր : Այլ կը քարկոծէին ստեփաննոսը , որ աղօթք կ'ընէր՝ ու կ'ըսէր . տէր յիսուս , ընդունէ իմ հոգիս : Օ՛նկան վրայ եկաւ և բարձր ձայնով կանչեց . տէր , ասիկայ անոնց մեղք մի սեպեր . և երբոր ասիկայ ըսաւ՝ ննջեց :

Ս . Ա ւեհտարան . Մարտի . Իդ . 54 .

Մէջս իս մարգարէներ , իմաստուններ ու կարգացողներ կը խրկեմ ձեզի . և անոնցմէ պիտի ըստաննէք ու խաչը հանէք . և անոնցմէ ձեր ժողովարաններուն մէջ պիտի տանջէք , ու քաղաքէ քաղաք հալածէք : Ար երկրի վրայ թափուած բոլոր արդար արիւնը ձեր վրայ գայ . արդար արեւի արիւնէն մինչեւ բարաքեայի որդի զաքարիայի արիւնը , որ տաճարին ու սեղանին մէջ տեղը սպաննեցիք : Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , ատ ամենը ասազգիս վրայ պիտի գայ : Արուսաղէմ երուսաղէմ , որ մարգարէները կը ջարդէիր , ու քեզի խրկուածները կը քարկոծէիր , քանի՞ անգամ քու զակերներդ ժողովել ուղեցի՞ ինչպէս որ հաւը իր ձագերը թեւերուն տակը կը ժողովէ , ու չուղեցիք : Մէջս ձեր տունը ձեզի աւերակ թող մնայ : Իսպա ձեզի կ'ըսեմ , իս ասկէ ետեւ մէյմ՝ ալ չի պիտի տեսնաք , մինչեւ որ ըսէք , օրհնեալ է ան՝ որ տէրոջը անունովը կուգայ :

Սուրբ Յօհաննէս Աւետարանի Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Բ .

Մենողորմ Տէր , կ'աղաչեմք քեզի տարածէ քու լուսոյդ ճառագայթները քու սուրբ Ակեղեցւոյդ վրայ , որ Սուրբ Յօհաննէս Մարգարեայի ու Աւետարանիչիդ վարդապետութեամբը լուսաւո-

քուած անանկ քու ճշմարտութեանդ լուսովը քա-  
լենք, որ վերջը անվասճան կեանքին լոյսը վայե-  
լենք, մեր Տէր Հիսուս Քրիստոսի շնորհքովը .  
Ամէն :

Թուղթ Յովնանու Առաքելոյ . Ա . Թուղթ . ա . 1 :

Ան որ սկիզբէն էր, որուն վրայօք լսեցինք, որն  
որ աչքովնիս ալ տեսանք, որուն նայեցանք, ու  
ձեռքովնիս նոյն խակ կենաց բանը շօշափեցինք : Աւ  
կեանքը յայտնուեցաւ, ու տեսանք ու կը վկայենք,  
ու յաւիտենական կեանքին վրայ ձեզի կը պատմենք,  
որ հօրը քովն էր, ու մեզի երեւցաւ : Ան որ տե-  
սանք և լսեցինք, ձեզի ալ կը պատմենք, որ դո՛ք  
ալ մեզի հաղորդութիւն ունենաք, ու մեր հաղոր-  
դութիւնը հօրը հետ ըլլայ, և իր որդւոյն յիսուսի  
քրիստոսի հետ : Աւ ասիկայ ձեզի կը գրենք,  
որ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ : Աւ այս  
էան աւետուները՝ որ իրմէն լսեցինք, ու ձեզի կը  
պատմենք, որ աստուած լոյս է, և անոր մէջ բնաւ  
խաւար չի կայ : Ի՞նչ որ ըսենք թէ անոր հետ հա-  
ղորդութիւն ունինք, ու խաւարին մէջ կը պտըտինք,  
սուտ ենք, ու ճշմարտութիւնը չենք ընել : Հապա  
թէ որ լոյսի մէջ պտըտինք, ինչպէս որ անիկայ լոյս  
է, մենք մէկզմէկու հետ հաղորդութիւն կ'ունե-  
նանք, և անոր որդւոյն յիսուս քրիստոսի արիւ-  
նը կը սրբէ մեզ ամէն մեղքերէն : Ի՞նչ որ ըսենք՝ թէ  
մեզք մը չունինք, անձ' ընիս կը խաբենք, և մեր

մէջը ճշմարտութիւն չի կայ : Հապա թէ որ մեր մեղքերը խոստովանինք, հաւատարիմ է ան և արդար մեր մեղքերը թողելու, և ամէն անօրէնութենէ մեզ մաքրելու : Եւ որ ըսենք՝ թէ մեղք մը չի գործեցինք, սուտղրուց կ'ընենք անիկայ, և անոր խօսքը մեր մէջը չէ :

Ս. Աւետարան. Յ. 19.

Յիսուս պետրոսին ըսաւ, իմ ետեւէս եկոր : Պետրոս դարձաւ ու տեսաւ ան աշակերտը՝ որ յիսուս կը սիրէր, որ ետեւէն կ'երթար, որ նաև անոր կուրծքը ինկած կ'ըսէ. տէր ո՞վ է որ քեզ պիտի մասնէ : Պետրոս երբոր տեսաւ անիկայ, յիսուսի ըսաւ. Տէր, հապա աս ի՞նչ պիտի ընէ : Յիսուս անոր ըսաւ. թէ որ ուզեմ՝ որ ան ապրի մինչեւ որ ես գամ, քեզի ի՞նչ փոյթ է. դուն իս ետեւէս եկոր : Այս աս խօսքը եղբարներուն մէջ ելաւ, և կարծեցին թէ ան աշակերտը չի պիտի մեռնի. բայց յիսուս չըսաւ թէ չի պիտի մեռնի, հապա թէ որ ուզեմ՝ որ ան ապրի մինչեւ որ ես գամ : Աս ան աշակերտն է՝ որ աս բաներուս համար կը վկայէ, որ այս բաներն ալ գրեց, և գիտենք որ անոր վկայութիւնը ճշմարիտ է : Ասցց ուրիշ շատ բաներ ալ կայ որ յիսուս ըրաւ, որ եթէ մի ըստ միտջէ գրուած ըլլար, կարծեմ թէ աշխարհս բաւական չէր ան գիրքերը պարունակելու, թէ որ գրուած ըլլային :

Անձեղ Մանկանց Օրը .

ՄԱՂԹԱՆՔ .

Ո՛վ Ամենակարող Աստուած . որ տղոցը ու  
կաթնկերներուն բերնէն զօրութիւն հաստատեցիր ,  
և անանկ կարգի դրիր որ տղաքը իրենց մահուաւ  
բը քեզ փառաւորեն . չն՞ջէ ու արմատախիլ բը  
բոլոր մեր մէջը եղած մոլութիւնները , և մեզ քու  
չնորհրովդ անանկ զօրացուր , որ մեր կեանքին  
անմեղութիւնովը ու մինչեւ մահուան անգամ մեր  
հաւատքին հաստատութիւնովը կարող ըլլանք քու  
սուրբ Անունդ փառաւորելու , մեր Տէր Յիսուս  
Քրիստոսի շնորհքովը . Ամէն :

Յայտնութիւն Յովհաննու Առաքելոյ . Ժդ . 1 .

Աւ տեսայ՝ որ ահա գտնուելը սիօն լեռանը վը  
բայ կայներ էր . և անոր հետ հարիւր քառսուն և  
չորս հազարը , որ անոր անունը ունէին , և անոր  
հօրը անունը ձակատնուն վրայ գրուած : Աւ եր-  
կինքէն ձայն մը լսեցի՝ շատ ջուրերու ձայնի պէս ,  
և մեծ որոտումի ձայն մը . և իբր թէ քնար չալող-  
ներուն ձայնը լսեցի , որ իրենց քնարները կը չա-  
լէին : Աւ աթոռին առջին նոր երգեր կ'երգէին , ու  
չորս կենդանիներուն առջին ու երէցներուն առ-  
ջին . և մէկը չի կրնար անոնց երգերը գիտնալ  
բայց միայն ան հարիւր քառսուն և չորս հազարը ,  
որ երկրէն ալատած են : Ասոնք անոնք են՝ որ կըն-  
կան հետ չի խառնակեցան , ու կոյս են . ասոնք ան

գառնուկին ետեւէն կ'երթան՝ ուր որ ան երթայ, ասոնք մարդոցմէ ընտրուեցան աստուծոյ և գառին առջին : Այս անոնց բերանը սուտ չի գանուեցաւ, ինչու որ անարատ են :

Ս. Աւետարան. Մատթ. ք. 13.

Աստուծոյ հրեշտակը յովսէփին երազին մէջ երևցաւ, ու ըսաւ. ելիր՝ առ մանուկը և իր մայրը ու եգիպտոս փախիր, և հոն կեցիր՝ մինչև որ ես քեզի ըսեմ, ինչու որ հերովդէս կորսնցունել կուզէ մանուկը : Այս ան ելաւ գիշերանց մանուկը ու անոր մայրը առաւ՝ ու եգիպտոս գնաց, և մինչև հերովդէսի մահը հոն կեցաւ : Ար կատարուի տէրօջմէն ըսուածը մարգարէին ձեռքովը՝ որ կ'ըսէ. եգիպտոսէն պիտի կանչեմ իմ որդիս : Ան ատենը երբոր տեսաւ շերովդէս թէ մոգերէն խարուեցաւ, սաստիկ բարկացաւ. ու խրկեց ջարդեց բոլոր բեթլէհէմի և անոր սահմաններուն մէջ եղած մանր տղաքը երկու տարուէն վար, մոգերէն հասկըցած ժամանակին նայելով : Ան ժամանակը երեմիա մարգարէին ձեռքով ըսուածը կատարուեցաւ՝ որ կ'ըսէ. հռամայէն ձայն մը լսուեցաւ, ողբ, լաց ու մեծ կոծ, հռաբել իր զաւկընորը կուլար, և շէր ուզեր մխիթարուիլ, ինչու որ չի կային :

Տննդեան Հետևեալ Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Ամենակարգ Մատուած , որ քու միածին Որդիդ մեզի շնորհէ իր մեր բնութիւնը առնելու , և սյս ժամանակ մաքուր Կուսէն ծնելու . Պարգեւէ որ մենք որդեգրութեամբ ու շնորհքով վերստին ծնած ու քու որդիքներդ եղած . քու Սուրբ Հոգւոյդ զօրութիւնովը օր ըստ օրէ նորոգուինք , նոյն մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը , որ կենդանի է ու կը թագաւորէ միանգամայն քեզի և Սուրբ Հոգւոյն հետ , միշտ մէկ Մատուած մը , յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Գողա . Դ . 1 .

Ասիկայ կ'ըսեմ , որչափ ժամանակ որ ժառանգը աղայ է՝ ծառայէն մէկ էվել մը չէ , թէպէտ ինքը ամենուն տէրը ըլլայ . հապա վերակացուներու ու տընտեսներու տակ է , մինչեւ հօրը սահմանած ժամանակը : Անանկ ալ մենք երբոր աղայ էինք , աշխարհիս տարերքներուն տակը ծառայ էինք : Բայց երբոր ժամանակը լեշուեցաւ , աստուած իր որդին իրըկեց՝ որ կնիկէ մը եղաւ , ու օրէնքին տակը մտաւ . որ օրէնքին տակը եղողները ծախու առնէ . որ մենք որդեգրութիւն ընդունինք : Այլ որովհետեւ դուք որդիք էք , աստուած իր որդւոյն հոգին մեր սիրտը խրկեց , որ կ'աղաղակէ արբա՝ հայր : Ասէ ետեւ ծառայ չես , հապա որդի . թէ որ որդի՝ աստուծոյ ալ ժառանգը :

Ս. Աւետարան . Մատթ . ա . 18 .

Ալ յիսուսի քրիստոսի ծնունդը ասանկ էր :  
 Ընոր մայրը մարիամ յովսէփին նշանած էր , դեռ  
 իրարու քով չեկած հոգին սուրբէն ծոցվորյած  
 գտնուեցաւ : Ալ յովսէփ անոր էրիկը արգար  
 մարդ մը ըլլալով չէր ուզէր անիկայ խայտառակ  
 ընել , մտմտաց լռիկ կերպով անիկայ արձըկելու :  
 Ալ երբոր ան ասիկայ կը մտմտար , ահա տէրոջը  
 հրեշտակը երազին մէջ իրեն երեւցաւ ու ըսաւ .  
 յովսէփի դաւթի որդի , մի վախնար քու մարիամ  
 կինդ քեզի առնելու . ինչու որ անոր մէջը ծնածը  
 սուրբ հոգիէն է : Արդի պիտի ծնանի , և անոր անու-  
 նը յիսուս զնես . ինչու որ ան իր ժողովուրդը ի-  
 րենց մեղքերէն պիտի փրկէ : Բայց աս ամէնը ե-  
 ղաւ , որ կատարուի աստուծոյ ըսածը եսայի մար-  
 գարէին ձեռքով : Ահա կոյսը պիտի յղանայ և  
 որդի պիտի ծնանի , և անոր անունը էմմանուէլ  
 պիտի կանչեն , որ կը թարգմանուի աստուած մեր  
 հետը : Ալ յովսէփ քունէն արթննալով ինչպէս  
 որ աստուծոյ հրեշտակը իրեն հրամայեց՝ անանկ  
 ըրաւ , ու իր կինը իր քովն առաւ : Ալ անիկայ չէր  
 գիտէր մինչեւ որ իր անդրանիկ որդին ծնաւ , և  
 անոր անունը յիսուս դրաւ :

Քրիստոսի Թրիստութեան Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Աննակարող Աստուած , որ քու աննորհ-

նեալ Որդիդ թլխատել տուիր , և օրէնքին հընա-  
 զանդեցուցիր մարդկային ազգին համար . Շը-  
 նորհէ մեղի հոգւոյ ճշմարիտ թլխատութիւնը , որ  
 մեր սիրտերը և բոլոր մարմինները աշխարհային ու  
 մարմնական ցանկութիւններէն մաքրելով , կարող  
 ըլլանք քու սուրբ կամքիդ կատարեալ հնազանդ  
 ըլլալու , քու Որդւոյդ մեր Տէր Հիսուս Քրիստոսի  
 շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Հրոմ. 7 . 8 .

Երանելի է ան մարդը , որ տէրը անոր մեղ-  
 քերը չի սեպեր : Ուստի՝ այս երանութիւնը թրլ-  
 փատութեան վրայ է , թէ անթլխատութեան վրայ .  
 Ինչու որ կ'ըսենք՝ թէ հաւատքը արբահամին ար-  
 դարութիւն սեպուեցաւ : Ենանկ է նէ՝ ինտոր սե-  
 պուեցաւ . թլխատութեան մէջ եղած ժամանակը ,  
 թէ անթլխատութեան մէջ . չէ թէ թլխատութեան  
 մէջ , հապա անթլխատութեան մէջ : Եւ նշան ա-  
 ռաւ թլխատութիւնը , անթլխատութեան մէջ ու-  
 նեյած հաւատքին արդարութեանը մէկ կնիքը , որ  
 հայր ըլլայ ամէն հաւատացեալներուն՝ որ անթլխ-  
 տութենէ կ'ըլլան , որ անոնց ալ արդարութիւն  
 սեպուի . և հայր թլխատութեան , որ չէ թէ մի-  
 նակ թլխատութենէ եղողներուն , հապա անոնց  
 ալ որ մեր արբահամ հօրը անթլխատութեան հա-  
 ւատքովը կ'երթան : Ինչու որ արբահամին ու ա-  
 նոր զաւկին եղած խոստմունքը աշխարհը ժառան-

դելու՝ չէ թէ օրէնքով է, հապա հաւատքն արդաւ  
րութիւնովը: Ինչու որ թէ որ օրէնքով եղողները  
ժառանգ են, ուրեմն հաւատքը պարապ ու խոսաւ  
մունքը փուճ են:

Ս. Աւետարան. Գլ. Բ. Բ. 15.

Ու եղաւ որ երբոր հրեշտակները երկինքը վեր-  
ցան, հովիւները իրարու ըսին, եկէք մինչեւ բեթ-  
լեհէմ երթանք, և տեսնանք աս եղածը թէ ինչ  
է, որ Տէրը մեղի ցըցուց: Աւ արտորնօք եկան,  
ու գտան մարիամը, յովսէփը և մանուկը մը-  
սուրին մէջ դրած: Աւ իմացան մանուկին հա-  
մար իրենց ըսուած խօսքը: Աւ ամէնքը որ կը լը-  
սէին, կը զարմանային ան բաներուն համար, որ  
հովիւները իրենց կը զրուցէին: Ու մարիամ աս  
ամէն բաները կը պահէր, ու իր սրտին մէջ կը մը-  
տածէր: Աւ հովիւները դարձան, աստուած կը  
փառաւորէին ու կ'օրհնէին ամէն ան բաներուն  
համար, որ լսեցին ու տեսան. ինչպէս որ իրենց  
պատմուեցաւ: Ու երբոր ութը օրը լըմընցաւ անի-  
կայ թլփատելու, անոր անունը յիսուս դրուե-  
ցաւ, որ հրեշտակէն ըսուած էր, դեռ ինչը մօրը  
արդանդը չի յղացած:

Այս Մտղթանդը . Ընթերցուածը ու Աւետարանը մինչև  
Յոյանութեան օրը ամէն օր պիտի ըսուի .

Տէրոջ Յոյանութեան Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Բ .

Ո՛վ Տէր Աստուած , ու քու միածին Արդիզ մէկ  
աստղի մը առաջնորդութեամբը Հեթանոսներուն  
յայտնեցիր . Շնորհէ քու ամենառատ ողորմու-  
թիւնովդ , որ Հիմայ մենք՝ որ քեզ Հաւատքով կը  
ճանչնանք , այս կեանքէն ետեւ քու փառաւորեալ  
Աստուածութիւնդ վայելենք , մեր Տէր Յիսուս  
Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Եփես . 4 . 1 .

Աւստի ես պօղոս ձեզի Հեթանոսներուդ Համար  
յիսուս քրիստոսի կապուած : Ղուցէ լսած էք աս-  
տուծոյ շնորհքին մատակարարութիւնը , որ ինծի  
տրուած է ձեզի Համար : Ար յայտնութիւնով ե-  
րեւցաւ ինծի ան խորհուրդը . ինչպէս որ առաջուց  
ձեզի քիչ մը գրեցի , որ կարո՞ղ ըլլաք կարգալու ու  
միտք առնելու իմ գիտութիւնս քրիստոսի խոր-  
հուրդին մէջ . որ ուրիշ զարերու մէջ մարդկանց  
զակըններուն չերեցաւ . ինչպէս որ Հիմայ հոգևով  
սրբով յայտնուեցաւ իր սուրբերուն ու մարգարե-  
ներուն , որ Հեթանոսները ժառանգորդ ու մէկ մար-  
մին ըլլան , և աւետարանով ան խոստմունքին հա-  
ղորդ յիսուս քրիստոսով . որուն որ ես սպասաւոր  
եղայ՝ աստուծոյ շնորհքին պարգեւներովը , որ ինծի

տրուեցան, իր զօրութեանը յաջողութիւնովը : Ան-  
 ծի՛ որ ամէն սուրբերուն պզտիկն եմ, այս շնորհք-  
 ները տրուեցան, հեթանոսներուն մէջ քրիստոսի  
 անքննելի մեծութիւնը քարոզելու . և ամէնքը լու-  
 սաւորելու թէ ի՞նչ է ան խորհուրդին մատակարա-  
 րութիւնը, որ ՚ի յաւիտենից ծածկուած էր աստու-  
 ծոյ քով, որ ամէն բանը ստեղծեց . որ հիմայ աս-  
 տուծոյ բազմատեսակ իմաստութիւնը յայանի ըլ-  
 լայ երկինքը եղող իշխանութիւններուն ու պետու-  
 թիւններուն եկեղեցիին ձեռքովը . յաւիտենական  
 նախասահմանութեանը նայելով, որ մեր տէր յի-  
 սուս քրիստոսի ձեռքովը ըրաւ : Արով ազատութիւն  
 ու մօտենալու համարձակութիւն ունինք յուսով ի-  
 բեն հաւատալով :

Ս. Աւետարան . Մարի . բ . 1 .

Արբոր յիսուս հրէաստանի բեթլէհէմի մէջ  
 ծնաւ հերովդէս թագաւորին օրերը, ահա մոգերը  
 արեւելքէն երուսաղէմ եկան, ու ըսին . Ո՛ր է ան՝  
 որ հրէաներուն թագաւոր ծնաւ . ինչու որ անոր  
 աստղը արեւելքը տեսանք, ու եկանք երկրպագու-  
 թիւն ընելու : Աւ երբոր հերովդէս թագաւորը լսեց՝  
 խռովեցաւ, ու բոլոր երուսաղէմ իբեն հետ : Աւ-  
 ժողովելով բոլոր քահանայապետները ու ժողովուր-  
 դին կարգացողները, հարցուց անոնց՝ թէ ո՛ր պիտի  
 ծնանի քրիստոս : Աւ անոնք ըսին անոր . հրէաս-  
 տանի բեթլէհէմին մէջ . ինչու որ ասանկ գրուած

է մարգարէին ձեռքովը : Այլ դուն բեթլէհէմ՝ յու-  
գայի երկիրը , յուգայի իշխաններուն մէջ պղտիկ  
չես . քենէ ինծի իշխան մը պիտի ելլէ , որ իմ իս-  
րայէլ ժողովուրդս պիտի հովուէ : Ան ժամանակը  
հերովդէս գաղտուկ մոգերը կանչեց , ու աղէկ մը  
անոնցմէ քննեց աստղին երեւցած ատենը : Այլ բեթ-  
լէհէմ խրկեց անոնք՝ ըսելով . գացէք ան մանուկին  
համար աղէկ մը տեղեկացէք , ու երբոր գտնալու  
ըլլաք՝ ինծի իմացուցէք , որ ես ալ գամ անոր եր-  
կրպագութիւն ընեմ : Այլ երբոր անոնք թագաւո-  
րէն լսեցին՝ գացին . ու ահա ան արեւելքը տեսած  
աստղերնին անոնց առջիւէն գնաց՝ մանուկին եղած  
տեղին վրայ եկաւ կայնեցաւ : Արբոր աստղը տեսան ,  
չատ մեծ ուրախութիւնով խնդացին : Այլ երբոր  
տուն մտան՝ մանուկը իր մարիամ մօրը հետ տե-  
սան , ու ինկան անոր երկրպագութիւն ըրին . և ի-  
րենց գանձերը բանալով անոր ընծաներ տուին՝ ոս-  
կի ու կնդրուկ ու զմուռ : Այլ տեսիլքով մը հրաման  
առնելով՝ որ նորէն հերովդէսի չի դառնան , ուրիշ  
ճամբով իրենց երկիրը գացին :

Առաջին Վերակի յետ Յայտնութեան .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Տէր Աստուած , կը խնդրենք քենէ որ քու  
ամենազթած ողորմութիւնովդ ընդունիս քու ժողո-  
վուրդիդ քեզի մատուցած աղերսանքները . ու նաև

Հնորհեստ որ չէ թէ միայն իրենց պարտականութիւնը գիտնան ու ճանչնան , հապա շնորհք ու կարողութիւն ալ ունենան հաւատարմարար անոնք՝ի գործ գնելու , մեր Տէր Հիսուս Քրիստոսի շնորհքովը .  
Լճէն :

Թուղթ Պողոսի Առաքելոյ . Հոսի . Ժբ . 1 .

Մաղաչեմ ձեզի կըրայրներ աստուծոյ ողորմութիւնովը , որ պատրաստէք ձեր մարմինները կենդանի զոհ մը՝ սուրբ , աստուծոյ հաճելի , ձեր բանաւոր պաշտօնը . և ձեր կերպարանքը աս աշխարհիս կերպարանքովը չըլլայ , հապա ձեր միտքին նորոգութիւնովը նորոգուեցէք , որ դուք լաւ քննիք , և թէ ինչ է աստուծոյ կամքը՝ բարին ու հաճելին ու կատարեալը : Ըսիկայ ինծի տրուած աստուծոյ շնորհքովը բոլոր ձեր մէջը եղողներուն կ'ըսեմ , որ արժանաւոր եղածը մտմտալէն էվել բան չի խորհիք . հապա զգաստանալու մտմտաք , ինչպէս որ աստուած ամէն մէկուն բաժնեց հաւատքին չափը : Ինչպէս որ մէկ մարմինին մէջ շատ անդամներ ունինք , և ան բոլոր անդամներուն գործը մի և նոյն չէ . անանկ ալ մենք շատերնիս մէկ մարմին ենք քրիստոսով , բայց ամէն մէկերնիս մէկզմէկու անդամներ ենք :

Ս . Աւետարան . Դ՞ . Բ . 41 .

Եւ անոր ծնողքները ամէն տարի զատկի տօնին երուստղէմ կ'երթային : Աւերբբոր ան տասներկու

տարուան եղաւ, անոնք տօնին սովորութեանը պէս  
 երբոր ւրուսաղէմ ելան, և ան օրերը որ լրմընցու-  
 ցին ու նորէն ետ դարձան, յիսուս մանուկը երու-  
 սաղէմ մնաց. և իր ծնողքները չէին գիտեր: Ար-  
 կարծէին անոր համար թէ ճամբորդներուն հետն  
 է. մէկ օրուան ճամբու չափ եկան, ու անիկայ դը-  
 րայիներուն ու ճանչուորներուն մէջ կը փնտռէին:  
 Այլ երբ որ չի գտան, նորէն երուսաղէմ դարձան  
 անիկայ փնտռելու: Ալ եղաւ որ իրէք օրէն ետեւ  
 տաճարին մէջ գտան անիկայ, որ վարդապետնե-  
 րուն հետ նստեր էր, անոնց մտիկ կ'ընէր, ու անոնց  
 կը հարցունէր: Անկէ լսողներուն ամէնքը կը զար-  
 մանային անոր իմաստութեանը վրայ ու պատաս-  
 խաններուն վրայ: Այլ երբոր տեսան անիկայ՝ զար-  
 մացան. ու իր մայրը ըսաւ անոր. որդեակ, աս ի՞նչ  
 բան էր որ դուն մեզի բրիր. ահա քու հայրդ ու ես  
 կը չարչարուէինք՝ կը փնտռէինք քեզ: Այլ անոնց  
 ըսաւ. իս ինչո՞ւ համար կը փնտռէիք, չէ՛ք գիտեր  
 թէ ինծի պէտք է իմ հօրս տունը ըլլալ: Այլ անոնք  
 անոր խօսքը չի հասկըցան՝ որ իրենց զրուցեց: Այլ  
 իջաւ անոնց հետ, ու գնաց նազարէթ. և անոնց  
 հնազանդ էր. և անոր մայրը աս ամէն խօսքերը իր  
 սրտին մէջ կը պահէր: Այլ յիսուս կը զարդանար  
 իմաստութիւնով ու հասակով, և շնորհքով աս-  
 տուծմէ ու մարդոյմէ:

Երկրորդ Կիրակի յետ Յայանութեան .

Ս՝ ԱՂԹ՝ ԱՆՔ՝

Ամենակարող և յաւիտենական Աստուած , որ երկինքի ու երկրի մէջ եղած ամէն բաները կը կառավարես . Ողորմութեամբ լսէքու ժողովուրդիդ ազազանքներուն . և բոլոր մեր կեանքին օրերուն մէջ մեզի քու խաղաղութիւնդ շնորհէ , մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . 2<sup>րդ</sup> . Ժբ . 6 .

Ուստի մենք կերպ կերպ պարգեւներ ունինք՝ ան մեզի տրուած շնորհքովը . Թէ որ մարգարէութիւն՝ հաւատքին չափովը . Թէ որ պաշտօն՝ պաշտօնին չափովը . Թէ ան որ կը սորվըցունէ՝ վարդապետութեան չափովը : Թէ ան որ կը մխիթարէ՝ մխիթարութեան չափովը . ան որ առատ է՝ ուրախութիւնով . ան որ վերակացու է՝ ջանքով . ան որ ողորմութիւն կ'ընէ՝ ուրախ սրտով : Մեր՝ առանց կեղծաւորութեան . չարը ատել , բարիին ետեւէն երթալ : Աղբայրսիրութիւնով մէկզմէկու գթալ . պատուելու մէջ մէկզմէկէ անցնել : Տ՛անքի մէջ թուլ մի ըլլաք . հոգիով բորբոքեցէք , տէրօջը ծառայեցէք : Հոյսով խնդացէք . նեղութեան համբերեցէք . աղօթքի ստեպ կեցէք : Սուրբերուն պէտք եղածին հաղորդ եղէք . հիւրասիրութեան հետեւեցէք : Չեղ հալածողները օրհնեցէք . օրհնեցէք ու մի անիծէք : Խնդացողներուն հետ խնդացէք , լա-

ցողներուն հետ լացէք : Մէկը միւսին վրայ նոյնը  
խորհի . ամբարտաւանութիւն մի ընէք , հապախո-  
նարհներուն հետ խոնարհեցէք :

Ս . Աւետարան . Յ՛՛՛ . բ . 1 .

Աւերորդ օրը հարսնիք մը կար գալիլեայի կա-  
նային մէջ . ու յիսուսի մայրը հոն էր : Հիսուս ալ  
կանչուեցաւ և իր աշակերտներն ալ նոյն հարս-  
նիքը : Աւերորդ գինին պակսեցաւ , մայրը յիսուսին  
ըսաւ . գինի չունին : Հիսուս ալ անոր ըսաւ . կնիկ՝  
դուն իմ հետս ի՞նչ բան ունիս , իմ ժամանակս դեռ  
հասած չէ : Իր մայրը սպասաւորներուն ըսաւ . ինչ  
որ ձեզի զրուցէ՝ ըրէք : Հոն վեց հաս մարմարիոն  
քարէ կարասներ կային՝ հրէաներուն սրբութեանը  
համար , որոնց ամէն մէկը երկու կամ իրեք մարի  
չափ կ'առնէր : Հիսուս անոնց ըսաւ . լեցուցէք սոս  
կարասները ջուրով , և մինչեւ բերանը անոնք լե-  
ցուցին : Աւ անոնց ըսաւ . հիմայ առէք , ու տընտե-  
սին բերէք . անոնք ալ բերին : Աւ անտեսը երբոր  
գինի եղած ջուրին համը առաւ , ու չէր գիտեր ուր-  
կից ըլլալը . բայց սպասաւորները գիտէին՝ որ ջուրը  
լեցուցին . անտեսը փեսային հետ կը խօսի , և կ'ըսէ .  
ամէն մարդ անուշ գինին առաջ կը բաժնէ , ու եր-  
բոր խըմած կ'ըլլան՝ ան ժամանակը գէշը . դուն աս  
անուշ գինին մինչեւ հիմայ պահեցիր : Հիսուս հը-  
րաշքնորուն սկիզբը ասիկայ ըրաւ գալիլեայի կա-  
նային մէջ , ու իր փառքը յայտնեց , և իր աշա-  
կերտները իրեն հաւատացին :

Երկրորդ Արտակի յետ Յայտնութեան :

ՄԱՂԹԱՆ Ք .

Ամենակարող և յաւիտենական Աստուած , նայէ մեր տկարութիւններուն քու ողորմութեամբդ , և քու աջ ձեռքովդ մեզի պաշտպան ու օգնական եղիր մեր ամէն վտանգներուն ու կարօտութիւններուն մէջ , մեր Տէր : Յիսուս Քրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Հոմ. Ժբ . 16 .

Ինքբղինքնիդ իմաստուն մի սկսէք : Չարին տեղը մէկին չար մի հատուցանէք . ամէն մարդոց առջին բարի բաներ խորհեցէք : Թէ որ ձեզի հնար է նէ ամէն մարդու հետ խաղաղութիւն ունեցէք : Արեւիներ , ձեր անձերուն համար վրէժխնդրութիւն մի ընէք , հապա բարկութեան տեղի տուէք , ինչու որ գրուած է . վրէժխնդրութիւնը իմս է , ու ես պիտի հատուցանեմ կ'ըսէ տէրը : Հապա թէ որ քու թշնամիդ անօթի է՝ հաց տուր անոր , և թէ որ ծարաւ է՝ ջուր տուր անոր . ասիկայ ընելով՝ կրակին կայծերը անոր գլուխը կը դիզես : Չարէն մի յաղթուիր . հապա բարիով չարին յաղթէ :

Ս . Աւետարան . Մարթ . Ը . 1 .

Արբոր ան լեռնէն վար իջաւ , շատ ժողովուրդներ անոր ետեւէն գացին : Աւ մէյմ՝ ալ բորոտ մը եկաւ , երկրպագութիւն կ'ընէր անոր , ու կ'ըսէր . տէր , թէ որ ուղես՝ իս կրնաս մաքրել : Յիսուս իր

ձեռքը անոր երկնցուց ու դպաւ անոր և ըսաւ . կ'ուզեմ՝ սրբուէ . ու իսկոյն բորոտութիւնը անկէ մաքրուեցաւ : Այլ յիսուս ըսաւ անոր . զգո՛յշ կեցիր՝ մէկու մը չըսես . հապա գնա՛ դուն քեզ քահանային ցըցուր . և մովսէսի պատուիրած ընծան տուր անոնց վկայութեան համար : Այլ երբոր կափառնայում մտաւ , հարիւրապետ մը եկաւ իրեն , կ'աղաչէր իրեն՝ ու կ'ըսէր . տէր , իմ ծառաս տունը անդամաւորցծ պառկած է , չարաչար կը տանջուի : Հիսուս ըսաւ անոր . ես կուգամ՝ ու անիկայ կը բժշկեմ : Պատասխան տուաւ հարիւրապետը՝ և ըսաւ . տէր , ես արժանի չեմ որ դուն իմ յարկիս տակը մտնաս . միայն խօսքով ըսէ , և իմ ծառաս կը բժշկուի : Ինչու որ ես ալ հրամանի տակ մտրդ մըն եմ , իմ ներքեւ զինուորներ ունիմ . ասոր գնա՛ կ'ըսեմ , ու կ'երթայ . և միւսին եկոր կ'ըսեմ , ու կուգայ . և իմ ծառայիս աս'բանը ըրէ՛ ու կ'ընէ : Հիսուս երբոր լսեց՝ զարմացաւ , ու իր ետեւէն գացողներուն ըսաւ . ճըշմարիտ կ'ըսեմ ձեզի , որ իսրայէլի մէջ ասանկ հաւատք բնաւ չի գտայ : Բայց ձեզի կ'ըսեմ , որ արեւելքէն ու արեւմուտքէն շատերը պիտի գան ու երկինքի թագաւորութեանը մէջ արբահամին ու սահակին ու յակոբին հետ պիտի բազմին : Այլ թագաւորութեան որդիքները դուրսի խաւարը պիտի ելլեն . հոն պիտի ըլլայ լալ ու ակոսաներ կը ճոցունել : Այլ յիսուս հարիւրապետին ըսաւ . գնա՛ և ինչպէս որ հաւատացիր՝ քեզի թող ըլլայ . և ան օրը անոր ծառան որջ ընցաւ :

Չորրորդ Կիրակի յետ Յայանութեան :

ՄԱՂԹԱՆՔ .

Ո՛վ Տէր Աստուած , որ մեր անանկ մեծ վտանգ-  
ներու մէջ ըլլալնիս գիտես , որ ինքրզինքնիս միշտ  
հաստատ պահելու կարող չենք մեր տկար բնու-  
թեանը պատճառաւ . Սեզի անանկ մէկ զօրութիւն  
մը ու պաշտպանութիւն մը շնորհէ , որ մեզ ամէն  
վտանգներէ պահպանէ , ու ամէն փորձութիւններէ  
ազատէ , մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովը .  
Ա՛յն :

Թուղթ Պօղոսի առաքելոյ . հոմ. 1 . 4 . 1 .

Ա՛մէն մարդ որ իշխանութեան տակ է՝ հնազան-  
դութեան մէջ թող կենայ . ինչու որ իշխանութիւնը  
մէկ տեղէ մը չէ , միայն թէ աստուծմէ . և անոնք  
որ կան՝ աստուծմէ կարգուած են : Աւստի ան որ  
իշխանութեան դէմ կը հակառակի՝ աստուծոյ հը-  
րամանին դէմ կը հակառակի . և անոնք որ կը  
հակառակին , անձերնուն դատապարտութիւն կ'ըն-  
դունին : Ինչու որ իշխանները բարի գործքերու հա-  
մար երկիւղ չեն , հասրա չարերու : Առաջնս ան իշ-  
խանութենէն չի վախնալ , բարի գործէ , ու անկէ  
գովութիւն պիտի առնես . ինչու որ ան աստուծոյ  
սպասաւորն է քեզի աղէկութեան համար : Էսպա  
թէ որ դուն չարութիւն կը գործես , վախցիր . ինչու  
որ պարսպ տեղը մէջքը թուր չի կրեր ան . աստու-  
ծոյ սպասաւորն է՝ վրձիմնգիր բարկութիւնով ա-



նոր՝ որ չարութիւն կը գործէ : Անոր համար պէտք է հնազանդ ըլլալ , չէ թէ միայն բարկութեան համար , հապախ ճմտանքին համար ալ : Ասոր համար տուրք ալ կը վճարէք , ինչու որ աստուծոյ սպասաւորներն են միշտ նոյն գործին պարապելով : Աւստի՛ ամէնուն եղած պարտքը հատուցէք , որուն որ տուրք տուրքը , որուն որ մաքս՝ մաքսը , որուն որ երկիրը՝ երկիրը . որուն որ պատիւ՝ պատիւը :

Ս. Աւետարան . Մատթ . ք . 23 .

Ալ երբոր նաւը մտաւ , իր աշակերտները իր ետեւէն գացին : Ալ մէյ մ'ալ մեծ ալէկոծութիւն մը ելաւ ծովին մէջ . անանկ որ ալիքներէն նաւը կը ծածկուէր , ու ինքը կը քնանար : Ալ աշակերտները գացին զինքը արժնցուցին ու ըսին . տէր , ազատէ մեզ . ինչու որ կը կորսուինք կոր : Ալ անոնց ըսաւ . թերահաւատներ , ինչո՞ւ վախկոտ էք . ան ժամանակը ելաւ հովերը ու ծովը սաստեց , և մեծ խաղաղութիւն եղաւ : Ալ մարդիկը զարմացան՝ ու կ'ըսէին , ինչպէս մարդ է աս՝ որ հովերը ու ծովը ասոր կը հնազանդին : Ալ երբոր միւս կողմը գերգեսացւոց երկիրը անցաւ , հոն երկու դիւահար իրեն պատահեցան՝ գերեզմաններէն ելած , սաստիկ կստղած . որ հնար չէր մէկու մը ան ճամբէն անցնիլ : Ալ մէյ մ'ալ աղաղակեցին ու ըսին . յիսո՞ւս որդի աստուծոյ , դուն մեր հետը ի՞նչ բան ունիս , ժամանակէ դուրս եկար մեզ տանջելու : Ալ անոնցմէ

քիչ մը հեռուն խողի երամակ մը կար, որ կ'արա-  
 ծուէին : Ալ գեւերը կ'աղաչէին իրեն ու կ'ըսէին,  
 թէ որ մեզ ասկէ կը հանես, հրաման ըրէ մեզի որ  
 խողերուն երամակը երթանք : Ալ ըսաւ անոնց .  
 գացէք, և անոնք ելան խողերուն երամակը գացին,  
 և բոլոր երամակը ան բարձր տեղէն ծովը վաղցին,  
 ու ջուրերուն մէջ մեռան : Ալ խողարածները փա-  
 խան, ու քաղաքը երթալով ամէնը պատմեցին, ու  
 դիւահարներուն պատահածն ալ : Ալ մէյ մ'ալ  
 բոլոր քաղաքը յիսուսի առջին ելաւ, երբոր անկապ  
 տեսան՝ աղաչեցին անոր որ իրենց սահմաններէն  
 երթայ :



Հինգերորդ Կերակի յետ Յայտնութեան .

ՄԱՂԹ ԱՆՔ .

Միջ Տէր, կը խնդրենք որ քու եկեղեցիդ ու  
 ընտանիքդ միշտ քու ճշմարիտ հաւատքովդ պա-  
 հես, որ միայն քու երկնային շնորհացդ յուսոյն ա-  
 պաւինողները ամէն ժամանակ քու գերագոյն զօ-  
 րութեամբդ պաշտպանուին, մեր Տէր Հիսուս Վը-  
 թիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Կողոս . գ . 12 .

Ասկէ ետեւ իբրեւ աստուծոյ ընտրեալները՝  
 սուրբները ու սիրելիները, վրանիդ հագէք գութը,  
 ողորմութիւնը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը,

հեղու թիւնը , համբերու թիւնը , մէկզմէկու ներ-  
լով , իրարու թողու թիւն տալով . թէ որ մէկը մէ-  
կու մը տրտունջ մը ունենայ , ինչպէս որ աստուած  
քրիստոսով ձեզի թողու թիւն շնորհեց՝ անանկ ալ  
դուք : Այլ աս ամէն բաներուն վրայ սէրը հագէք ,  
որ կատարելութեան կապն է . ու քրիստոսի խա-  
ղաղութիւնը ձեր սիրտերուն մէջ հաստատուի , ու  
բուն որ դուք կանչուեցաք մէկ մարմինով . ու գոհա-  
ցող եղիք : Ար քրիստոսի խօսքը առատապէս ձեր  
մէջը բնակի , ամէն իմաստութիւնով սորվեցունելու  
ու խրատելու մէկզմէկ . սաղմոսներով ու օրհնու-  
թիւններով , ու հոգեւոր երգերով ու շնորհքով  
ձեր սիրտերուն մէջ զաստուած օրհնելու : Այլ ամէն  
ինչ որ կ'ընէք խօսքով ու գործքով , բոլորը տէր  
յիսուսի անունովը ըրէք . գոհացող եղիք անով աս-  
տուծմէ ու հօրմէն :

Ս. Աւետարան . Մատթ ԺԳ . 24 .

Արկիինքի թագաւորութիւնը մարդու մը նմա-  
նեցաւ , որ իր արտին մէջ աղէկ սերմ կը ցանէ : Ա-  
երբոր մարդիկ քնացան , անոր թշնամին եկաւ , ու  
վրայէն որոմ ցանեց ցորենին մէջ՝ ու գնաց : Այլ  
երբոր խոտը բուսաւ՝ ու պտուղ բերաւ , ետքը ու  
բոմն ալ երեւան ելաւ : Տանը տիրոջը ծառաները  
եկան ու իրեն ըսին . տէր դուն քու արտիդ մէջ ա-  
ղէկ ւերմ չի ցանեցիր մի . ուստի՝ որով ուրկինց կայ :  
Այլ ան անոնց ըսաւ . թշնամի մարդ ըրաւ անիկայ .

ճառաները ըսին անոր . կ'ուզե՞ս որ երթանք ու անիկայ մէկ դի քաղնք : Այլ ան ըսաւ անոնց . չէ, որ չըլլայ թէ որովը քաղս՝ ժամանակնիդ ցորենն ալ անոր հետ փրցունէք : Թող տուէք երկուքն ալ մէկ տեղ մինչեւ հունձի ժամանակը մեծնան . ու հունձի ստունը հնձողներուն պիտի ըսեմ . առաջ որովը քաղեցէք , ու անիկայ խուրձ խուրձ կապեցէք երեւոյ համար , ու ցորենը իմ ամբարս ժողվեցէք :

Վեցերորդ Վերակի յետ Յայտնութեան .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Աստուած , որ քու ամէնօրհնեալ Որդիդ յայտնուեցաւ սատանային գործքերը քակելու , և մեզ Աստուծոյ որդիքները ու անվախճան կեանքին ժառանգները ընելու . Շնորհէ որ սոս յոյսը ունենալով ինքըզինքնիս մաքրենք , ինչպէս որ ինքը մաքուր է . որ երբոր զօրութիւնով ու մեծ փառքով նորէն գալու ըլլայ , իրեն նման ըլլանք իր յաւիտենական ու փառաւորեալ արքայութեանը մէջ , ուր որ քեզի հետ ո՛վ Հայր և Սուրբ Հոգի , ինքը կենդանի է ու կը թագաւորէ միշտ մէկ Աստուած մը , յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Թուղթ Յովնանու Առաքելոյ . Ա . Թուղթ . գ . 1 .

Տեսէք՝ հայրը ինչպէս սէր շնորհեց մեզի , որ մենք աստուծոյ որդիքներ կանչուինք , ասոր համար

այլօտարհ մեղ չի ճանչնար , ինչու որ անիկայ չի ճանչցաւ : Արեւիկներ , հիմայ աստուծոյ որդիքներն ենք , և դեռ յայտնի չէ՝ թէ ինչ պիտի ըլլանք . գիտենք՝ որ երբոր անիկայ յայտնուի , անոր նման պիտի ըլլանք . ինչու որ անիկայ պիտի տեսնանք՝ ինչպէս որ է նէ : Այլ ամէն աս յոյսը իր անձին մէջը ունեցողը՝ իր անձը կը սրբէ , ինչպէս որ ան սուրբ է : Ամէն ո՛վ որ մեղք կը գործէ , ան օրինազանցութիւն ալ կ'ընէ , և բուն ինքը մեղքը օրինազանցութիւն է : Այլ գիտենք՝ որ անիկայ անոր համար յայտնուեցաւ , որ մեղքերը վերցունէ , և իր մէջը մեղք չի կայ : Ամէն ո՛վ որ անոր վրոյ հաստատուած է՝ մեղք չի գործեր . և ամէն ո՛վ որ մեղք կը գործէ , ան չի տեսաւ անիկայ՝ ու չի ճանչցաւ անիկայ : Տղաքներ՝ մէկը ձեզ չի խարէ . ան որ արգարութիւն կը գործէ՝ արգար է , ինչպէս որ ան արդար է : Այլ ան որ մեղք կը գործէ՝ սատանայէն է , ինչու որ սատանան սկիզբէն կը մեղանչէ . այս պատճառաւ աստուծոյ որդին յայտնուեցաւ , որ սատանային գործքերը քակէ :

Ս . Աւետարան . Մատթ . Եզ . 25 .

Ան ժամանակը թէ որ մէկը ձեզի ըսէ , ահա քրիստոս հոս է կամ հոն , մի հաւատար : Ինչու որ սուտ քրիստոսներ ու սուտ մարգարէներ պիտի ելլին , ու մեծամեծ նշաններ ու հրաշքներ պիտի ցըցունեն , անանկ որ՝ թէ որ հնար ըլլայ ընտրեալներն ալ մոլորցունեն : Ահա առաջուց ձեզի ըսի :

Հոգա թէ որ ձեզի ըսեն՝ թէ ահա անապատին մէջն է, չիլլաք, և թէ՛ ահա ծածուկ սեննակներուն մէջն է, մի հաւատաք : Ինչու որ ինչպէս փայլակը՝ որ արեւելքէն կ'ելլէ՝ ու մինչև արեւմուտքը կ'ընկայ, անանկ պիտի ըլլայ նաև որդւոյ մարդոյ գալուստը : Ինչու որ ուր որ մեռած մարմին կայ, հոն արծիւները կը ժողւրվին : Շուտ մը ան ներու թեան օրերէն ետև՝ արեգակը պիտի խաւարի, ու լուսինը իր լոյսը չի պիտի տայ, ու երկինքէն աստղերը պիտի իյնան, ու երկինքի զօրութիւնները պիտի շարժին : Ալ ևս քը որդւոյ մարդոյ նշանը պիտի երեւայ երկինքը, ու ան ժամանակը բոլոր ազգերը պիտի ողբան. ու որդին մարդոյ պիտի տեսնան երկինքի ամպերուն վրայ եկած՝ զօրութիւնով ու մեծ փառքով : Ալ իր հրեշտակները պիտի խրկէ մեծ փողով, ու պիտի ժողվեն իր ընտրեալները չորս հովերէն, երկինքի մէկ ծայրէն մինչև միւս ծայրը :

Եօթանասներորդ ըսուած կիրակին,

Որ է Առաջին կիրակի Առաջաւորաց Բարեկենդանէն ետև .

Մ Ա Ղ Թ Ա Ն Գ .

Ո՛վ Տէր, կը խնդրենք որ քու ժողովուրդիդ ազաչանքները բարեգթութեամբ ընդունես, որ մենք որ մեր մեղքերուն համար արդարապէս պատժուած ենք, քու ամենաուստ ողորմութեամբդ ազատինք քու անուանդ փառքին համար, մեր Քրկիչ Յիսուս

Քրիստոսի շնորհքովը , որ կենդանի է ու կը թա-  
գաւորէ միանգամայն քեզի շօր , և Սուրբ Հոգ-  
ւոյն հետ միշտ մէկ Մատուած մը , յաւիտեանս յա-  
ւիտեանս յաւիտենից . Մէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Ա . կոթ . թ . 24 .

Չէք գիտեր՝ որ տապարէզին մէջ վազողները ,  
վազելով կը վազեն ամէնքը . սակայն մէկը կ'առնէ  
յաղթութեան վարձքը . անանկ վազեցէք որ հաս-  
նիք : Մէն ո՛վ որ կը պատերազմի՝ ամէն բանի մէջ  
ժուժկալ կ'ըլլայ . անոնք եղծանելի պսակը առնե-  
լու , ու մենք անեղծանելին : Սուտի՛ ես ալ անանկ  
կը վազեմ , չէ թէ որպէս անստուգութեամբ . ա-  
նանկ կը ծեծկուիմ , չէ թէ որպէս թէ հովերը ծե-  
ծելով . հապա իմ մարմինս կը ճնշեմ ու կը հնա-  
զանգեցունեմ , որ չըլլայ թէ ես որ ուրիշներուն  
քարոզեցի , ես ինքնս անպիտան գտնուիմ :

Ս . Աւետարան . Մարտի . Ի . 1 .

Արկինքի թագաւորութիւնը տանուտէր մարդու  
մը նման է , որ առտուանց կանուխ ելաւ իր այգիին  
մշակներ բռնելու : Ալ մշակներուն հետ օրը գա-  
հեկանի մը խօսք կապեց , ու իր այգին խրկեց : Ալ  
ժամը իրեքին ելաւ՝ ուրիշները տեսաւ՝ որ շուկանե-  
րուն մէջ պարսպ կայներ էին , ու ըսաւ անոնց .  
դուք ալ իմ այգիս գացէք , և ինչ որ արժան է՝ ձեզի  
կուտամ : Ալ անոնք գացին , ու նորէն ժամը վեցին

ու ժամը իննին ելաւ՝ անանկ ըրաւ : Այլ ժամը տաս-  
 նըմէկին ելաւ ուրիշները գտաւ՝ որ պարսպ կայներ  
 էին, անոնց ալ ըսաւ . ինչո՞ւ հոս բողոք օրը դատարկ  
 կայներ էք : Մին անոր, ինչու որ մէկը մեզ վարձք-  
 ով չի բռնեց . ըսաւ անոնց . դուք ալ այգին գա-  
 ցէք, և ինչ որ արժան է պիտի առնէք : Այլ երբոր  
 իրիկուն եղաւ՝ այգիին տէրը իր տնտեսին ըսաւ .  
 կանչէ մշակները ու անոնց վարձքը տուր, ետքիննե-  
 րէն սկսելով մինչեւ առջինները : Արբոր տասնըմէ-  
 կերորդ ժամունները եկան, ամէն մէկը մէյակէ դա-  
 հեկան առին : Այլ առջինները եկան՝ կը կարծէին  
 թէ էվել պիտի առնեն, ու անոնք ալ մէյակէ դա-  
 հեկան առին : Արբոր առին, տանուտէրոջը գան-  
 գատ կ'ընէին՝ ու կ'ըսէին, ատ ետքինները ժամ մը  
 գործեցին, և անոնք մեզի հաւասար ըրիր, որ օրուան  
 բերը ու տարու թիւնը կրեցինք : Անիկայ պատաս-  
 խան տուաւ անոնցմէ մէկուն՝ ու ըսաւ . ընկեր, ես  
 քեզ չեմ զրկեր, ինձի հետ դահեկանի մը խօսք չի  
 կապեցիր մի : Ան քուկինդ՝ ու գնա՛, կ'ուղեմ որ  
 աս ետքիններուն ալ անանկ տամ՝ ինտոր որ քեզի  
 տուի : Կի՞թէ ես իշխանութիւն չունիմ իմ բանե-  
 րուս հետ ինչ որ ուղեմ նէ ընեմ, կամ թէ քու  
 աչքդ չար է՝ որ ես առատաձեռն եմ : Ասանկ յե-  
 տինները առաջին պիտի ըլլան, ու առաջինները  
 յետին . պատճառն որ կանչուածները շատ են, բայց  
 ընտրուածները քիչ :

Վաթսուներորդ Կիրակի :

Որ է Երկրորդ Կիրակի Առաջաւորաց Բարեկենդանէն ետեւ :

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք :

Ո՛վ Տէր Աստուած , դուն որ մեր դործքերուն  
ամենեւին չապաւինելնիս աղէկ կը ճանչնաս . Շը-  
նորհէ քու ողորմութեամբդ որ քու զօրութիւնդ  
մեզ պաշտպանէ ամէն ձախորդութիւններու դէմ ,  
մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Բ . Կրն . Ժա . 19 .

Յօժարութիւնով կը համբերէիք յիմարներուն  
ձեր իմաստութիւնովը : Ինչու որ կը համբերէք՝ թէ  
որ մէկը ձեզ խարէ , թէ որ մէկը ծառայեցունէ ,  
թէ որ մէկը ձեր ունեցածը ուտէ , թէ որ մէկը բան  
մը առնէ , թէ որ մէկը հպարտանայ , թէ որ մէկը  
ձեր երեսին զարնէ : Ատ քամահրանքին կերպովը  
կ'ըսեմ , որպէս թէ մենք տկար մի եղանք . ինչ բանի  
որ մէկը կը համարձակի , անխոհեմութեամբ կ'ը-  
սեմ , ես ալ կը համարձակիմ : Անոնք եբրայեցի<sup>ր</sup>  
նն , ես ալ . իսրայէլացի<sup>ր</sup> նն , ես ալ . արբահամու  
ղաւ<sup>ա</sup>կ նն , ես ալ . քրիստոսի պաշտօնեանե<sup>ր</sup>նն ,  
Վանդգնութեամբ կ'ըսեմ թէ էվելօքք ես . թէ որ  
աշխատանքով՝ էվելի , թէ որ ծեծով՝ շատ էվելօք ,  
թէ որ բանտով՝ անոնցմէ խիստ շատ , թէ որ մա-  
հուան նեղութիւններով՝ շատ անգամ . Հինգ ան-  
գամ հրէաներէն քառսունէն մէյ մը պահաս ծե-  
ծուեցայ . իրեք անգամ ձաղկով ծեծուեցայ . ան-

գամ մը քարկոծուեցայ . իրիք անգամ նաւակոծութեան հանդիպեցայ . գիշեր ու ցորեկ անդունդներուն մէջ տառապեցայ . շատ անգամ ճամբորդութեան մէջ գետերէն նեղութիւններ , աւազակներէն նեղութիւններ , ազգէ նեղութիւններ , հեթանոսներէն նեղութիւններ , քաղաքին մէջ նեղութիւններ , անապատը նեղութիւններ , ծովը նեղութիւններ , սուտ եղբայրներէն նեղութիւններ . ջանքի ու աշխատանքի մէջ . շատ անգամ քնհատութեան մէջ , անօթութեան ու ծարաւութեան մէջ . շատ անգամ պահեցողութեան մէջ . ցրտութեան ու մերկութեան մէջ : Թող ուրիշ նեղութիւնները որ ամէն օր ռամիկ ժողովուրդը վրաս կը դիզուէր , և ամէն եկեղեցիներուն հօգը : Ա՞յլ հիւանդ կ'ըլլայ՝ որ ես հիւանդ չըլլամ . ո՞վ կը գայթակղի՝ որ ես չերիմ : Թէ որ պարծիլ պէտք ըլլայ , իմ տկարութիւններուս վրայ պարծենամ : Աստուած և մեր տէր յիսուս քրիստոսի հայրը գիտէ՝ որ յաւիտեան օրհնեալ է . թէ ես սուտ չեմ զրուցեր :

Ս . Աւետարան . Դ՞՞՛ . Ը . 4 .

Երբոր շատ ժողովուրդներ հաւքեցան , ու զանազան քաղաքներէ որ իրեն եկան , առակով ըսաւ : Արմ ցանող մը ելաւ իր սերմերը ցանելու . և երբոր ցանեց՝ մէկ մասը ճամբուն վրայ ինկաւ ու կոխկըտուեցաւ , ու երկինքի թռչունները անիկայ կերան : Եւ ուրիշը ապառաժի վրայ ինկաւ , ու բուսնելուն

պէս չորցաւ՝ թացութիւն չունենալուն համար : Այլ  
 ուրիշը փուշերու մէջ ինկաւ , ու փուշերը անոր հետ  
 բուսնելով՝ խղզեցին անիկայ : Այլ ուրիշը աղէկ ու  
 պարարտ հողի վրայ ինկաւ , ու երբոր բուսաւ՝ հա-  
 րիւրապատիկ պտուղ տուաւ . երբոր ստիկայ խօ-  
 սեցաւ , ըսաւ . ան որ լսելու ականջ ունի՝ թող լսէ :  
 Աշակերտները կը հարցունէին անոր , թէ ի՞նչ է  
 ան առակը : Այլ ան ըսաւ . ձեզի տրուած է աստու-  
 ծոյ արքայութեան խորհուրդները գիտնալ . բայց  
 ուրիշներուն առականերով . որ պիտի տեսնան՝ ու չի  
 տեսնան , և պիտի լսեն՝ ու չիմանան : Բայց ան ա-  
 ռակը աս է . սերմը աստուծոյ խօսքն է : Այլ ճամ-  
 բուն վրայինները անոնք են՝ որ կը լսեն , ու ետքը  
 սատանան կուգայ՝ անոնց սիրտէն ան խօսքը կը  
 հանէ , որ չըլլայ թէ հաւատան ու փրկուին : Այլ ա-  
 պառաժին վրայինները անոնք են , որ երբոր կը լսեն  
 ուրախութեամբ կ'ընդունին ան խօսքը , ու արմատ  
 չունին . ժամանակ մը կը հաւատան , ու փորձու-  
 թեան ժամանակը կը հեռանան : Այլ փուշերու մէջ  
 ինկածներն ալ անոնք են , որ երբ ան խօսքը կը լը-  
 սեն , ու աշխարհիս հոգերովը ու մեծութիւնովը ու  
 ցանկութիւնովը զբաղած ըլլալով՝ կը խղզուին , և  
 անպտուղ կ'ըլլան : Բայց պարարտ հողին վրային-  
 ները անոնք են , որ ան խօսքը բարի և ուրախ սրտով  
 լսելով՝ կ'ընդունին , ու համբերութիւնով պտուղ  
 կուտան :

այսինքն ինչպէս զիստեանս ինչպէս զիստեանս ինչպէս զիստեանս  
 ինչպէս զիստեանս ինչպէս զիստեանս ինչպէս զիստեանս

Յիսուսներորդ Վերակի .

Որ է երրորդ Վերակի Առաջաւորաց Բարեկենդանէն Էտեւ .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Տէր, դուն որ մեզի սորվեցուցիր թէ առանց սիրոյ եղած որ և իցէ գործ մը բոլորովին անօգուտ է . խրկէ մեզի քու Սուրբ Հոգիդ, և հաստատէ մեր սրտին մէջ ան սիրոյ ազնիւ պարգեւը, որ խաղաղութեան և ամէն առաքինութեանց հաստատ կապն է . և որ առանց անոր ապրողները մեռած կը սեպուին քու առջիդ . Շնորհէ ասիկայ քու միածին Որդւոյդ Հիսուս Քրիստոսի սիրուն համար . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Ա . Կորն . Ժգ . Է .

Թէ որ մարդոց ու հրեշտակներուն լեզուները խօսիմ՝ ու սէր չունենամ, ես պղինձի պէս եղայ՝ որ ձայն կը հանէ . կամ ծնծղաներուն պէս որ կը լողանջեն : Եւ թէ որ մարգարէութիւն ունենամ, ու ամէն խորհուրդները իմանամ՝ և ամէն գիտութիւն, և թէ որ ամէն հաւատքը ունենամ, մինչեւ անգամ լեռները փոխիխելու, ու սէր չունենամ, ոչինչ եմ : Եւ թէ որ ամէն ունեցածս աղքատներուն կերցունեմ, ու մարմինս կրակի տամ, ու սէր չունենամ, բան մը չեմ շահիր : Աէրը երկայնամիտ է, կը քաղցրանայ, սէրը չի նախանձիր, չի գոռօղնար, չի հպարտանար . չի յանդգնիր, իրենը չ'փնտռեր, չի շարանար, գէշ չի խնդրեր . անիրաւութեան վրայ չի խնդար, հապա ճշմարտութեան վրայ

Կուրախանայ . ամէն բանի կը դիմանայ . ամէն բանի կը հաւատայ . ամէն բանի կը յուսայ . ամէն բանի կը համբերէ : Աէրը բնաւ չի տկարանար . թէ որ մարգարէ ու թիւններ ըլլան՝ կը խափանին . թէ որ լեզուներ ըլլան՝ կը լռեն . թէ որ գիտութիւն՝ կը խափանի : Ինչու որ փոքր 'ի շատէ գիտենք . ու փոքր 'ի շատէ կը մարգարէանանք : Բայց երբոր կատարեալը գայ , աս շատէն քիչը պիտի խափանի : Արբոր տղայ էի՝ տղի պէս կը խօսէի , տղի պէս կը խորհէի , տղի պէս կ'իմանայի . բայց երբոր մարդ եղայ՝ տղայութեան բաները մէկ դի դրի : Անք հիմայ իբր հայելիի մէջ օրինակով կը տեսնանք , բայց ան ժամանակը դէմէ դէմ . հիմայ շատէն քիչ տեղեակ եմ , բայց ան ժամանակը պիտի գիտնամ՝ ինչպէս որ ինքը զիս ճանչցաւ : Այլ հիմայ կը մնայ հաւատք՝ յոյս՝ սէր , աս իրեքը . և ասոնցմէ պինտ մեծը սէրն է :

Ս . Աւետարան . Ժբ . 31 .

Այլ տասներկուքը առանձին առներով՝ ըսաւ անոնց . ահա մենք երուսաղէմ կ'ելլենք . ու մարգարէներուն ձեռքով որդւոյ մարդոյ համար բոլոր գրուածները պիտի կատարուին : Ինչու որ հետեանոսներուն պիտի մատնուի ու ծաղր պիտի ըլլայ . ու պիտի ծեծեն ու անիկոյ մեռցունեն , և իրեք օրէն յարութիւն պիտի առնէ : Այլ անոնք աս բաներէն բան մը չիմացան . հապա ան խօսքը անոնցմէ ծած-

կուած էր , ու ըսուածը չէին հասկընար : Այլ եղաւ որ երբ ինքը երիքովի կը մօտենար , կոյր մուրացկան մը ճամբուն վրայ նստած էր : Արբոր ժողովուրդին անյնիլը լսեց , հարցուց՝ թէ ի՞նչ է ան : Այլ անոր ըսին թէ յիսուս նազովրեցին կ'անցնի : Աղաղակեց ու ըսաւ . յիսուս որդի դաւթի՝ ողորմէ ինծի : Այլ ա. նոնք որ առջեւէն կ'երթային՝ կը չեխէին անիկայ որ ձայնը լռէ . և ան էվելոք կը պօռար , որդի դաւթի՝ ողորմէ ինծի : Յիսուս կայնեցաւ , ու հրաման ըրաւ անիկայ իրեն բերելու . ու երբոր մօտեցաւ , հարցուց անոր և ըսաւ . ի՞նչ կ'ուզես դուն որ քեզի ընեմ . ան ալ ըսաւ . տէր՝ որ աչվըներս բացուին , ու տեսնամ : Այլ յիսուս ըսաւ անոր . նայէ , քու հաւատքդ քեզ բժշկեց : Այլ շուտ մը տեսաւ , ու անոր ետեւէն կ'երթար՝ և փառք կուտար աստուծոյ , և ամէն ժողովուրդն ալ որ տեսան , աստուծոյ օրհնութիւն կուտային :

Մտերոց չորեքշաբթի , որ է Մեծ Պահոց առաջին օրը .

ՄԱՂԹԱՆ Ք .

Ո՛վ ամենակալ և յաւիտենական Աստուած , գուն որ քու ստեղծածներուդ մէկն ալ չես ատեր , և ամէն զղջացողներուն մեղքը կը ներես . Նոր ու զղջացող սիրտեր ստեղծէ մեր մէջը , որ մենք մեր մեղքերուն վրայ արժանապէս ողբալով , և մեր թշուառութիւնը ճանչնալով , քենէ կատարեալ նե-

քում և թողութիւն ընդունինք ո՛վ Աստուած ողորմութեան , մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքովը , Ամէն :

Այս Մաղթանքը Մեծ Պահօց ամէն օրը պիտի կարդացուի , առևր պատշաճի Մաղթանքէն ետեւ .

Յովէլէայ . բ . 12 .

Ղարձէք ինծի կ'ըսէ տէր աստուած , ըղոր ձեր սրտովը . պաքով , լալով ու կոծով : Պատուեցէք սիրտերնիդ , չէ՛ թէ հանդերձնիդ , և ձեր տէր աստուծոյն դարձէք , որ ողորմած ու գթած է , երկայնամիտ ու բազումողորմ , որ չարութեան կը ցաւի : Ա՛յլ գիտէ թէ ինքը պիտի դառնայ ու զղջայ , և իր ետեւը օրհնութիւն պիտի թողու . զո՛հ ու պատարագ մեր տէր աստուծոյն : Փող չալեցէք սիօնի մէջ . պաքը սուրբ պահեցէք . պաղատանք քարոզեցէք : Դողովուրդները ժողվեցէք . միաբանութիւնը սրբեցէք , ծերերը ընտրեցէք , աղաքը ու կաթ ուտողները ժողվեցէք . փեսան իր սենեակէն թո՛ղ ելլէ , ու հարսը առագաստէն : Թո՛ղ քահանաները ու տէրոջը պաշտօնեաները աստիճաններուն ու սեղաններուն մէջ տեղը լան և ըսեն . ներէ՛ ո՛վ տէր քու ժողովուրդիդ , և քու ժառանգութիւնդ նախատինքի մի տար , անոր վրայ ուրիշները տիրելու . որ հեթանոսներուն մէջ չընեն թէ՛՛ ո՛ր է անոնց աստուածը :

Ս. Աւետարան. Մարտի 2. 16.

Արքայր պաք կը պահէք՝ կեղծաւորներուն պէս տրտում մի ըլլաք. որ երեսնին կ'աւրեն, որ մարդոց երեւան թէ պաք կը պահեն. ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, անոնց վարձքը միայն ան է: Իսայց դուն երբոր պաք կը պահես, գլուխդ օժէ, ու երեսդ լուսի, որ մարդոց պահողի մը պէս չերեւնաս. հապա գաղտուկ քու հօրդ. և քու հայրդ որ գաղտուկը կը տեսնայ, քեզի յայտնապէս պիտի հատուցանէ: Արկրի վրայ ձեզի համար գանձ մի գիղէք, ուր որ ցեցը ու ժանկը կ'ապականեն, և ուր որ գողերը գետինը կը ծակեն ու կը գողնան: Եւս պա երկինքը ձեզի համար գանձ գիղեցէք, ուր որ ոչ ցեցը ու ոչ ժանկը կ'ապականեն, և ոչ գողերը գետինը կը ծակեն ու կը գողնան: Ինչչու որ ձեր գանձը ուր է նէ, սիրտերնիդ ալ հոն կ'ըլլայ:

Մեծ Պահոց Առաջին Կիրակին.

ՄԱՂԹԱՆՔ.

Ո՛վ Տէր, դուն որ մեզի համար քառսուն օր և քառսուն գիշեր պահեցողութեամբ կեցար. Շընորհք տուր մեզի անանկ պահեցողութիւն մը ունենալու, որ մարմիննիս հոգին հպատակ ըլլալով, կարող ըլլանք միշտ հնազանդելու քու աստուածային ազգեցութիւններուդ արգարութիւնով ու ճշմարիտ սրբութիւնով, քու փառքիդ ու պատուոյդ համար. որ կենդանի ևս ու կը թագաւորես միան-

բամայն շօրը և Սուրբ շոգւոյն հետ , մէկ Մտ-  
տուած մը , յաւիտեանս յաւիտենից . Մէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Բ . Կրն . Գ . 1 .

Ձեզի գործակից ենք , ու կ'աղաչենք որ դուք աս-  
տուծոյ շնորհքը պարապ տեղը չընդունիք : Ինչու որ  
ընդունելի ժամանակը ձեզի լսեցի՝ կ'ըսէ , ու փրկու-  
թեան օրը ձեզի օգնեցի : Ահա ընդունելի ժամանակ .  
ահա օր փրկութեան : Այլայ որ բանով մը պատճառ  
տար , որ պաշտօնը արատաւորի . հապա ամէն բանի  
մէջ անձերնիդ ընծայեցէք իբր աստուծոյ սպասա-  
ւորները՝ մեծ համբերութիւնով նեղութիւններու  
վիշտերու ու չարչարանքներու մէջ , ծեծերու մէջ ,  
բանտերու մէջ , խռովութիւններու մէջ , աշխատու-  
թիւններու մէջ , հսկումներու մէջ , ծոմապահու-  
թիւններու մէջ . սրբութիւնով , գիտութիւնով ,  
երկայնամտութիւնով , քաղցրութիւնով . սուրբ հո-  
գիով , անկեղծ սիրով . ճշմարտութեան խօսքովը ,  
աստուծոյ զօրութիւնովը , արդարութեան զէնքովը՝  
որ աջ կողմէն ու ձախ կողմէն է . փառքով ու անար-  
գանքով , գովութիւնով ու պարսաւանքով . խա-  
բողներու պէս՝ ու ճշմարիտ . անծանօթներու պէս՝  
ու ճանչցուածներ . մահկանացուներու պէս , ու  
ահա կենդանի ենք . պատժուածներու պէս , ու չէ  
թէ սպաննուած . տրտմածներու պէս , ու միշտ ու-  
րախ ենք . տնանկներու պէս , ու շատերը կը մեծցու-  
նենք , իբր թէ բան մը չունինք , և ամէն բան ունինք :

Ս. Աւետարան. Մարտի. Գ. 1.

Ան ժամանակը յիսուս սուրբ հոգիէն անսպասը տարուեցաւ՝ սատանայէն փորձուելու : Այլ քառսուն ցորեկ ու քառսուն գիշեր ծով պահելէն ետքը՝ անթեցաւ : Այլ փորձողը եկաւ անոր ըսաւ . թէ որ դուն աստուծոյ որդին ես՝ ըսէ որ աս քարերը հաց ըլլան : Անքը պատասխան տուաւ ու ըսաւ . գրուած է որ՝ չէ թէ միայն հացով մարդ կ'ապրի , հապա ան ամէն խօսքովը՝ որ աստուծոյ բերնէն կ'ելլէ : Ան ժամանակը սատանան կ'առնէ կը տանի անիկայ սուրբ քաղաքը , ու անիկայ տաճարին աշտարակին վրայ կը կայնեցունէ , և կ'ըսէ անոր . թէ որ աստուծոյ որդին ես՝ դուն քեզ ասկէ վար նետէ . ինչու որ գրուած է , թէ իր հրեշտակներուն պատուիրած է քեզի համար , ու քեզ ձեռքի վրայ պիտի կրեն , որ բնաւ ոտքդ քարի չի զարնես : Այսու անոր ըսաւ . գրուած է , թէ քու տէր աստուածդ չի փորձես : Սատանան նորէն կ'առնէ կը հանէ անիկայ շատ բարձր լեռան մը վրայ , ու աշխարհի բոլոր թագաւորութիւնները անոր կը ցըցունէ , և անոնց փասքը . և անոր կ'ըսէ , աս ամէնք քեզի կուտամ , թէ որ իյնաս ինձի երկրպագութիւն ընես : Ան ժամանակը յիսուս անոր կ'ըսէ . ետիս զնա սատանա . ինչու որ գրուած է՝ քու տէր աստուծուդ երկրպագութիւն ընես , ու անիկայ միայն պաշտես : Ան ժամանակը սատանան անիկայ թողուց . և աս հա հրեշտակները եկան , ու անիկայ կը պաշտէին :

Մէծ Պահոց Երկրորդ Կերակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ամենակարող Աստուած , դուն որ կը տեսնաս  
Թէ ինքը զինքնուս ամենեւին կարողութիւն չունինք  
մեր անձին օգնութիւն մը ընելու . Պահէ դրսուանց  
մեր մարմինները , և ներսուանց մեր հոգիները , որ  
պաշտպանութիւնք մարմինին պատահելու բոլոր ձա-  
խորդութիւններէն , և հոգիին վնասող չար խոր-  
հուրդներէն , մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհք-  
ովը . Ա՛մն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Ա . Թէս . Գ . 1 .

Աղբայրներ ձեզի կ'աղաչենք ու յիսուս քրիս-  
տոսով կը յորդորենք . որ ինչպէս մենէ ընդունե-  
ցիք , Թէ ինտոր պէտք է ձեզի երթալ ու աստուծոյ  
հաճոյ ըլլալ . ինչպէս որ կ'երթաք ալ , որ է վել է-  
վելք անոր մէջ շատնաք : Այլ գիտէք Թէ ինչ պա-  
տուէրներ տուինք ձեզի տէր յիսուսով : Ինչու որ  
աստուծոյ կամքը աս է , ձեր սրբութիւնը . որ դուք  
պոռնկութենէ հրաժարիք . ձենէ ամէն մէկը գիտ-  
նայ իր ամանը մնալու թիւնով ու պատուով ձեռք  
ձգել . չէ Թէ ցանկութեան ցաւերով՝ ինչպէս որ  
ուրիշ հեթանոսները որ զաստուած չին ճանչնար :  
Չըլլայ որ ատ գործին մէջ չստիպանց ըլլայ ու իր  
եղբայրը զրկէ . ինչու որ տէրը վրէժխնդիր է ատ ա-  
մէն բաներուն վրայ . ինչպէս որ առաջուց ձեզի ը-  
սինք և վկայութիւն գրինք : Ասան զի աստուած

մեղ պղծութեան չի կանչեց , հապա սրբութեան :  
 Ուստի ան որ կ'անարգէ , չէ թէ մարդը կ'անարգէ ,  
 հապա աստուած՝ որ սուրբ հոգին ձեզի տուաւ :

Ս . Աւետարան . Մատթ . ԺԵ . 21 .

Աւ ճիսուս անկէ ելաւ տիւրոսի ու սիդոնի կողմերը գնաց : Աւ մէյ մ'ալ քանանացի կնիկ մը աւնոնց սահմաններէն ելած , կ'աղաղակէր ու կ'ըսէր . տէր՝ որդի դաւթի , ողորմէ ինծի . աղջիկս դեւէն չարաչար կը չարչարուի : Աւ ինքը անոր պատասխան չի տուաւ . և իր աշակերտները կ'աղաչէին իրեն՝ և կ'ըսէին . արձըկէ անիկայ ինչու որ մեր ետեւէն կը պոսայ : Ինքը պատասխան տուաւ ու ըսաւ . ես ուրիշին չի խրկուեցայ , հապա խորացելի տանը կորսուած ոչխարներուն : Աւ ան եկաւ երկրպագութիւն կ'ընէր իրեն և կ'ըսէր . տէր , օգնէ ինծի : Ճիսուս պատասխան տուաւ անոր ու ըսաւ . աղէկ չէ տղոցը հացը առնել , ու շուներուն ձգել : Աւ ան ըսաւ . իրաւ է տէր , ինչու որ շուներն ալ իրենց տէրոջը սեղանէն թափած փշրանքներէն կը կերակրին : Ան ժամանակը յիսուս պատասխան տուաւ անոր ու ըսաւ . ո՞վ կին՝ քու հաւատքդ մեծ է . ինչպէս որ կ'ուզես անանկ ըլլայ քեզի . և նոյն ժամուն անոր աղջիկը բժշկուեցաւ :

Մեծ Պահոց Երբորդ Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Կ'աղաչենք քեզի ո՛վ Ամենակարող Աստուած , նայէ քու խոնարհ ծառաներուդ սրտին բաղձանքներուն , և տարածէ մեր վրայ քու Մեծ վայելչութեանդ աջը , որ մեզ պահպանէ բոլոր մեր թշնամիներուն դէմ , մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Ե՛լէս . Ե . 1 .

Աստուծոյ նմանող եղիք՝ սիրելի զաւկըներու պէս , և սիրով վարուեցէք՝ ինչպէս որ քրիստոս մեզ սիրեց , և իր անձը մեզի համար մատնեց՝ աստուծոյ պատարագ ու զոհ ըլլալով անուշ հոտով : Բայց պոռնկութիւն ու ամէն կերպ պղծութիւն , կամ ագահութիւն ալ ձեր մէջը չ'ըսուի , ինչպէս որ սուրբերուն կը վայլէ . ու գարշելի բաներ՝ կամ յիմարական խօսքեր կամ խեղկատակութիւն՝ որ չի վայլեր . հապա էվելօք գոհութիւն : Ասիկայ իմանալով գիտնաք , որ ամէն պոռնիկ՝ կամ պիղծ՝ կամ ագահ , որ կռապաշտ է , քրիստոսի ու աստուծոյ թագաւորութեանը մէջ ժառանգութիւն չունի : Չըլլայ որ մէկը ձեզ սնտոի բաներով խաբէ . ինչու որ ասոր համար աստուծոյ բարկութիւնը անհնազանդ զաւկըներուն վրայ կուգայ : Աւրեմն անոնց հաղորդ մի ըլլաք : Ար թէպէտ ժամանակ մը դուք ալ խաւար էիք , բայց հիմայ լոյս էք տէրոջմով , լուսոյ որդիք :

ներուն պէս քալեցէք . ինչու որ լուսոյ պտուղը ամէն կերպ բարութիւնով է՝ ու արդարութիւնով ու ճշմարտութիւնով : Քննեցէք՝ թէ ինչ է տէրոջը հաճելին . ու խաւարին անպտուղ գործքերուն հաղորդ մի ըլլաք , հապա ելեւ լըք յանդիմանեցէք : Ինչու որ անոնց մէջը գաղտուկ գործուած բանը խօսիլը անգամ ամօթ է : Բայց ամէն բան լուսէն յանդիմանուած՝ յայտնի կ'ըլլայ . ինչու որ ամէն բան որ յայտնի է՝ լոյս է : Ինչոր համար կ'ըսէ . արթնցիր դուն՝ որ կը քընանաս , և մեռելներէն կանգնէ , ու քրիստոս քեզի լուսատու պիտի ըլլայ :

Ս . Աւետարան . Դ . Ժ . 14 .

Յիսուս համբ դեւ մը կը հանէր . ու եղաւ որ երբոր դեւեր լըաւ՝ ան համբը խօսեցաւ , և բոլոր ժողովուրդները զարմացան : Աւ անոնցմէ ոմանք ըսին , դեւերուն իշխանին բէեղգբուղին ձեռքովը ասիկայ դեւերը կը հանէ : Աւրիշներն ալ կը փորձէին ու երկինքէն նշան մը կը խնդրէին անկէ : Բայց ինքը անոնց խորհուրդը գիտնալով , ըսաւ անոնց . ամէն թագաւորութիւն իրեն դէմ բաժնուած՝ կ'աւրուի . և տուն մը իրեն դէմ բաժնուած՝ կը կործանի : Զապա թէ որ սատանան ինքիրմէ բաժնուած է , ինչպէս պիտի մնայ անոր թագաւորութիւնը . որ ինձի համար կ'ըսէք թէ՛ դեւերուն իշխանովը բէեղգբուղով ասիկայ դեւերը կը հանէ : Թէ որ ես բէեղգբուղով դեւերը կը հանեմ , ձեր որդիքները

Ինչով կը հանեն . ատոր համար անոնք ձեր դատաւորը պիտի ըլլան : Հապա թէ որ աստուծոյ մատովը դուք կը հանեմ , ուրեմն աստուծոյ թագաւորութիւնը ձեր վրայ հասած է : Արբոր ուժով մարդ մը զէնքերը վրան առած իր տունը կը պահպանէ , անոր ունեցածը խաղաղութեան մէջ կը մնայ : Իսկ թէ որ իրմէ է վելի ուժովը վրան գալով անիկայ յաղթէ , անոր զէնքերը կը հանէ՝ որուն ինքը ապաւինած էր , և անոր կողոպուտը կը բաժնէ : Ըն որ իմ հետս չէ՝ ինձի հակառակ է , և ան որ իմ հետս չի ժողվեր՝ կը ցրուէ : Ար ժամանակ պիղծ գեւը մարդէ մը կ'ելլէ՝ ցամաք տեղերը կը պտըտի , հանգստութիւն կը փնտրուէ , ու երբոր չի գտնայ , կ'ըսէ . նորէն իմ տունս դառնամ ուսկից որ ելայ : Աւ կուգայ մարբուած ու շըտկուած կը գտնայ : Ըն ժամանակը կ'երթայ ու իրմէն է վելի չար ուրիշ եօթը գեւ կ'առնէ , ու կը մտնայ հոն կը բնակի . և ան մարդուն վերջին վիճակը առջինէն գէշ կ'ըլլայ : Աւ եղաւ որ երբ այս բաները կը խօսէր , ժողովուրդին մէջէն մէկ կնիկ մը ձայնը վերուց՝ ու ըսաւ . երնէկ է ան փորին՝ որ քեզ կրեց , և ան ծիծերուն՝ որ քեզի կաթ տուին : Աւ ինքը ըսաւ . է վելք երնէկ անոնց՝ որ աստուծոյ խօսքը կը լսեն ու կը կատարեն :

Մեծ Պահոց Չորրորդ Կերակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Հնորհէ մեզի կ'ազաչենք ոյլ Ըմենակարող

Ըստուած , որ մենք՝ որ մեր չար գործքերուն հա-  
մար արդարեւ պատժուելու արժանի ենք , գլու-  
թեամբ քու շնորհքիդ մխիթարութիւնովը խալը-  
սինք , մեր Տէր և Փրկիչ Հիսուս Վրիստոսի շն-  
որհքովը . Ը՛հն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Գաղա . Դ . 21 .

Բան մը ըսէք ինծի , որ օրէնքին ներքեւը կ'ու-  
ղէք ըլլալ , օրէնքը չէք մի կարդացեր դուք : Ինչու  
որ գրուած է թէ՛ արբահամ երկու որդի ունէր ,  
մէկը աղախինէն , ու մէկը ազատէն : Բայց ան որ  
աղախինէն էր՝ մարմնոյ կողմանէ ծնած էր , և ան  
որ ազատէն՝ խոստմունքին նայելով . որ օրինակի  
նմանութիւն մըն է . ինչու որ ասոնք են ան երկու-  
կտակարանները , մէկը սինա լեռնէն ծառայութեան  
ծնած՝ որ հագարն է : Ինչու որ հագարը արաբիացի  
մէջ սինա լեռն է , հաւասար է աս երուսաղէմին ,  
որ իր զաւկըններովը մէկ տեղ կը ծառայէ : Բայց վե-  
րին երուսաղէմը ազատ է , որ մեր ամենուն մայրն  
է : Ինչու որ գրուած է , ուրախ եղիր ամուլ՝ որ չէիր  
ծնաներ . կանչէ ու աղաղակէ՝ որ տղաբերքի ցաւ  
չէիր քաշեր . վասն զի դուն մէկ դի ձգուածդ՝ էրիկ  
ունեցողէն էվել զաւկըներ ունիս : Սւտի մենք եղ-  
բայրներ՝ սահակին պէս խոստմունքին զաւկըններն  
ենք : Բայց ինտոր ան ժամանակը ան որ մարմնոյ  
կողմանէ ծնած էր՝ հոգիին կողմանէ եղածը կը հա-  
լածէր , անանկ ալ հիմայ : Սակայն գիրը ի՞նչ կ'ը-

սէ . դժբա հանէ ատ աղախինը ու անոր տղան , որ  
աղախինին զաւակը աղատին զաւկին հետ չի ժա-  
ռանդէ : Ուստի եղբայներ՝ մենք աղախինին զաւկը-  
ները չենք , հապա աղատին :

Ս . Աւետարան . Զ՝ Գ . Գ . 1 .

Յիսուս գալիլեացոց տիրերիայի ծովուն միւս  
կողմը գնաց , և անոր ետեւէն շատ ժողովուրդ կ'եր-  
թար . ինչու որ հիւանդներուն վրայ ըրած հրաշք-  
ները կը տեսնային : Յիսուս լեռ մը ելաւ , ու հոն  
աշակերտներովը մէկ տեղ նստաւ : Այլ հրէաներուն  
զատիկ տօնը մօտ էր : Յիսուս իր աշակերտները վեր  
վերուց , ու տեսաւ որ շատ ժողովուրդ կուգար իր  
քովը , ըսաւ փիլիպպոսին , ուսկի՞ց հաց առնենք՝ որ  
ատոնք ուտեն : Մտիկայ կ'ըսէր անիկայ փորձելու .  
բայց ինքը գիտէր ինչ պիտի ընէր : Փիլիպպոս պա-  
տասխան տուաւ անոր . երկու հարիւր դահեկանի  
հաց ատոնց բաւական չէ , թէ և ամէն մէկը մէյմէկ  
քիչ առնէ : Այր աշակերտներէն մէկը՝ վէմ սիմոնին  
եղբայրը անդրէաս իրեն ըսաւ . հոս տղայ մը կայ ,  
որ հինգ հատ գարիէ հաց ունի՝ ու երկու ձուկ .  
բայց ի՞նչ կ'ըլլայ ան այդչափ մարդոցը : Յիսուս  
ըսաւ . նստեցուցէք ատ մարդիկը , և ան տեղը շատ  
խոտ կար , ու մարդիկը նստան թուով հինգ հա-  
ղարի չափ : Այլ յիսուս հացը առաւ՝ ու գոհացաւ , և  
ան նստողներուն բաժնեց . անանկ ալ ձուկերէն որ-  
չափ որ ուղեցին : Այլ երբոր կշտացան , ըսաւ աշա-

կերաներուն . Ժողովեցէք ան մնացած կտորները՝ որ  
բան մը չի կորսուի : Ժողովեցին , ու տասներկու սա-  
կառ լեցուցին ան հինգ գարիէ նկանակէն մնացած  
կտորուանքները , որ ուտողներէն էվելցաւ : Բայց  
երբոր մարդիկը ան ըրած հրաշքները տեսան՝ կ'ը-  
սէին , թէ աս է Ճշմարիտ մարգարէն՝ որ աշխարհք  
պիտի գար :

Մեծ Պահոյ շինգերորդ Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ար խնդրենք քեզի ո՛վ Ամենակարող Աստուած ,  
քու Ժողովուրդիդ վրայ ողորմութեամբ նայելու .  
որ միշտ քու մեծազօր բարեգթութեամբդ կառա-  
վարուի ու պահպանուի թէ հոգևով և թէ մարմ-  
նով , մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովը .  
Ամէն :

Թուղթ Պօղոսի Աւաքելոյ . Եբր . Թ . 11 .

Բայց բրիստոս որ եկաւ ան գալու բարիքնե-  
րուն քահանայապետը՝ մեծ ու կատարեալ ու անձե-  
ռագործ խորանովը . այսինքն ան՝ որ աս ստեղծուած-  
ներէն չէ , ո՛չ ալ նոխազներուն ու զուարակներուն  
արիւնովը , հապա իր արիւնովը անգամ մը սուրբ  
տեղը մտաւ յաւիտենական փրկութիւն գտնալով :  
Վ ասն զի թէ որ ցուլրուն ու նոխազներուն արիւնը՝  
և երինջներուն մոխիրը ցանուելով պղծուածները  
կը սրբէր մարմնոյ սրբութեանը կողմանէ . Որչափ

նաւելի քրիստոսի արիւնը, որ յաւիտենական հոգիին ձեռքովը իր անձը աստուծոյ անարատ պատարագ մատոյց, ձեր խղճմտանքը պիտի սրբէ ան մեռած գործքերէն՝ կենդանի աստուածը պաշտելու: Աւանոր համար ինքը աս նոր դաշինքին միջնորդն է, որ իր մահը առջի դաշինքները չի պահուելուն համար փրկութիւն ըլլալով, հրաւիրուածները յաւիտենական ժառանգութեան ան խոստմունքը ընդունին:

Ս. Աւետարան. Յ. 15. Ը. 46.

Չենէ ո՞վ կրնայ իս յանդիմանել մեղքի համար. թէ որ ճշմարիտը ձեզի կ'ըսեմ, ի՞նչու ինձի չէք հաւատար: Ի՞ն որ աստուծմէ է՝ աստուծոյ խօսքերը կը լսէ. ու դուք անոր համար մտիկ չէք ըներ, որ աստուծմէ չէք: Պատասխան տուին հրէաները՝ և ըսին անոր. աղէկ չե՞նք մի ըսեր որ դուն սամարացի ես. ու քու ներսիդիդ դեւ կայ: Պատասխան տուաւ յիսուս՝ և ըսաւ. իմ ներսիդիս դեւ չի կայ. հապա ես իմ հայրս կը պատուեմ, ու դուք իս կը նախատէք: Այս իմ փառքս չեմ փնտռեր. կայ մէկը որ կը փնտռէ՝ ու կը դատէ: Ղճմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ որ մէկը իմ խօսքս պահէ՝ յաւիտեան մահ չի տեսնար: Ըրէաները անոր ըսին. հիմայ դիտցանք որ քու ներսիդիդ դեւ կայ. արքահամ մեռաւ՝ ու մարգարէները. և դուն կ'ըսես՝ թէ որ մէկը իմ խօսքս պահէ, յաւիտեան մահ չի ճաշա-

կեր : Սիթէ դուն մեր հայր արբահամէն մե՞ծ ես՝  
որ մեռաւ , և մարգարէները մեռան . հապա դուն  
քեզ ո՞վ կ'ընես : Պատասխան տուաւ յիսուս , թէ  
որ ես իմ անձս փառաւորեմ , իմ փառքս ոչինչ է ,  
իմ հայրս է՝ որ իս կը փառաւորէ , որուն համար  
կ'ըսէք թէ մեր աստուածն է , ու անիկայ չէք ճանչ-  
նար , բայց ես գիտեմ անիկայ . ու թէ որ ըսեմ՝  
թէ անիկայ չեմ գիտեր , ձեզի պէս սուտ կ'ըլլամ .  
հապա ես գիտեմ ան , ու անոր խօսքը կը պահեմ :  
Ձեր արբահամ հայրը կը փափաքէր իմ օրս տես-  
նալու , տեսաւ և ուրախացաւ : Զրէաները անոր  
ըսին . դուն տակաւին յիսուն տարու չի կաս , ար-  
բահամն ալ մի տեսար : Յիսուս անոնց ըսաւ . ճշը-  
մարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի . ես արբահամին ըլ-  
լալէն առաջ եմ : Քարեր առին՝ որ անոր վրայ  
ձգեն . բայց յիսուս պահվրտուեցաւ , ու տաճարէն  
հլաւ գնաց :

Ճաղկազարդի Վերակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՞վ Մեծնակարող ու յաւիտենական Մտուած ,  
որ մարգկային ազգին վրայ ունեցած գորովալից  
սիրոյդ համար Փրկիչնիս Յիսուս Քրիստոս քու  
որդիդ աշխարհ խրկեցիր մեր մարմինը առնելու ու  
խաչին վրայ մեռնելու , որ բոլոր մարգկային ազգը  
անոր ամենամեծ խոնարհութիւնը օրինակ առնէ :

Ողորմութեամբ շնորհէ որ մենք իր համբերութեանը  
օրինակին հետեւելով, իր յարութեանն ալ հա-  
ղորդ ըլլանք, մեր Տէր ։ յիսուս Վրիստոսի միջնոր-  
դութեամբը . Ը, Դ, Է :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Փիւնի . Բ . Ծ .

Ձենէ ամէն մէկը թող նոյն միտքը ունե-  
նայ, որ նաև քրիստոս յիսուսի մէջն էր . որ աս-  
տուծոյ կերպարանքը ունենալով, աստուծոյ հաւա-  
սար ըլլալը զրկանք մը չի սեպեց . հապա անձը ու-  
նայնացուց ծառայի կերպարանք ստնելով, մարդու  
նման ըլլալով, և կերպարանքովը մարդու պէս գրտ-  
նուելով, խոնարհեցուց իր անձը՝ մինչև անգամ  
մահուան հնազանդ ըլլալով : Ընոր համար աս-  
տուած ալ անիկայ էվելոք բարձրացուց, և անոր ա-  
նուն մը շնորհեց, որ ամէն անուններէն վեր է : Ար  
յիսուս քրիստոսի անուանը ամէն ծունր պիտի կրրկ-  
նուի, երկնաւորներուն ու երկրաւորներուն ու սան-  
դարամետականներուն . և ամէն լեզու պիտի խոս-  
տովանի, թէ յիսուս քրիստոս տէր է՝ հօր աստու-  
ծոյ փառքին :

Ս . Աւետարան . Մարթ . Իէ . 1 .

Արբոր առտու եղաւ, բոլոր քահանայապետնե-  
րը ու ժողովուրդին ծերերը խորհուրդ ըրին յի-  
սուսի համար անիկայ մեռցունելու : Ընիկայ կապե-  
ցին՝ ու առին դացին . ու պոնտացի պիղատոս դա-

տաւորին ձեռքը տուին : Ըն ժամանակը յուզան՝ որ  
անիկայ մատնեց , տեսնալով թէ դատապարտուե-  
ցաւ , զղջաց՝ ու ետ դարձուց ան արծաթը քահա-  
նայապետներուն ու ժողովուրդին ծերերուն , և ը-  
սաւ . մեղայ , որ անմեղ արիւն մատնեցի . և անոնք  
ըսին . մեր հոգը չէ , դուն գիտես : Եւ արծաթը տա-  
ճարին մէջ ձգեց՝ ու դուրս ելաւ . ու զնաց ինքը-  
զինքը խղճեց : Բայց քահանայապետները արծաթը  
առնելով ըսին , արժան չէ ատիկայ գանձանակը  
դնել , ինչու որ արիւնի դին է : Կորհուրդ ընելով  
բոլորին արտը ծախու առին անով , օտարներուն  
գերեզմանի համար : Ընոր համար ան արտը մինչեւ  
սյսօր արիւնի արտ ըսուեցաւ : Ըն ժամանակը կա-  
տարուեցաւ երեմիա մարգարէին ձեռքով ըսուածը .  
և առին երսուն արծաթը՝ ծախուածին գինը , որ  
խորայէլի որդիքներէն ոմանք ափեցուցին : Աւ տուին  
անիկայ բոլորին արտին , ինչպէս որ տէրը ինծի  
հրամայեց : Եւ յիսուս դատաւորին դիմացը կայնե-  
ցաւ . դատաւորը հարցուց անոր՝ ու ըսաւ . դուն ես  
հրէաներուն թագաւորը . և ըսաւ . դուն կ'ըսես : Եւ  
քահանայապետներէն ու ծերերէն զըպարտուած ա-  
տներ՝ ամենեւին բան մը պատասխան չի տուաւ : Ըն  
ատները պիղատոս ըսաւ անոր . չե՞ս լսեր , որչափ  
քեզի դէմ ատոնք կը վկայեն : Եւ անոր ամենեւին  
բան մը պատասխան չի տուաւ , մինչեւ շատ զար-  
մացաւ դատաւորը : Բայց սովորութիւն ունէր դա-  
տաւորը՝ որ ան տօնին կապուած մը կ'արձըկէր ժո-

զովուրդին , ով որ ուզէին : Ան ժամանակը յետու  
 բարարբա անունով երեւելի կապուած մը ունէին ,  
 երբոր մէկ տեղ եկան՝ պիղատոս անոնց ըսաւ . սս  
 երկուքէն որը կ'ուզէք որ ձեզի արձըկեմ . յետու  
 բարարբան՝ թէ յիսուս քրիստոս ըսուածը : Անչու  
 որ գիտէր՝ թէ նախանձութեան համար մասնեցին  
 անիկայ : Այլ երբոր ատենը նստած էր , իր կինը  
 խրկեց իրեն՝ ու ըսաւ . ան արդարին հետ դուն բան  
 մը չունիս , ինչու որ այսօր երազես մէջ ատոր հա-  
 մար շատ դիպուածներ անցան իմ վրայէս : Բայց  
 քահանայակաները ու ծերերը ժողովուրդը հաւա-  
 նեցուցին , որ բարարբան ուզեն՝ ու յիսուսը կորսըն-  
 ցունեն : Պատասխան տուաւ զատուորը՝ ու ըսաւ  
 անոնց . սս երկուքէն որը կ'ուզէք որ ձեզի արձըկեմ .  
 և անոնք ըսին . բարարբան : Պիղատոս ըսաւ անոնց .  
 հապա ի՞նչ ընեմ յիսուսը՝ որ քրիստոս կ'ըսուի :  
 Ամենքը ըսին . թող խաչուի . և ինքը ըսաւ . ի՞նչ  
 չար գործ ըբաւ . և անոնք ալ ելելի կ'աղաղակէին  
 ու կ'ըսէին , թող խաչուի : Այլ պիղատոս տեսնալով  
 որ օգուտ մը չըլար՝ հապա եվելօք խոսովութիւն  
 կ'ըլլայ , ջուր առաւ՝ ձեռվերնը ժողովուրդին առ-  
 ջին լուաց՝ ու ըսաւ . ես ատ արդարին արիւնէն ան-  
 պարտ եմ . դուք գիտէք : Պատասխան տուաւ բոլոր  
 ժողովուրդը՝ և ըսաւ . ատոր արիւնը մեր վրայ և մեր  
 զաւկներուն վրայ : Ան ժամանակը բարարբան ար-  
 ձըկեց , ու յիսուսը ծեծելով ձեռվերնին տուաւ՝ որ  
 խաչուի : Ան ատենը դատարին զինուորները պա-

լատին մէջը առին յիսուսը , և բոլոր զինուորներուն  
 գունդը անոր վրայ ժողվեցին . մերկացուցին զինքը ,  
 ու կարմիր վերարկու մը հագուցին անոր : Աւ փու-  
 շերէ թագ մը ոլորելով՝ անոր գլուխը դրին , ու եղէգ  
 մը անոր աջ ձեռքը . և անոր առջին ծունկի վրայ  
 գալով՝ ծաղը կ'ընէին ու կ'ըսէին . ողջ կեցիր հը-  
 րէից թագաւոր : Աւ անոր վրայ թուքնելով՝ եղէգը  
 կ'առնէին , և անոր գլուխը կը ծեծէին : Աւ երբոր  
 ծաղը ըրին անիկայ , կարմիր վերարկուն վրայէն  
 հանեցին , ու իր լաթերը իրեն հագուցին , ու տարին  
 անիկայ որ խաչը հանեն : Աւ գուրս ելլելուն՝ կիւ-  
 րենացի մարդ մը գտան սիմոն անունով , անիկայ  
 բռնեցին՝ որ անոր խաչը վերցունէ : Աւ եկան գող-  
 գոթա ըսուած տեղը , որ գլուխ կտրելու տեղ է :  
 Անոր լեզիով խառնած գինի տուին որ խըմէ , ու  
 երբոր համը առաւ՝ չուզեց խըմել : Աւ անիկայ խաչը  
 հանեցին , անոր լաթերն ալ վիճակով բաժնեցին ,  
 որ մարգարէին ըսած խօսքը կատարուի . իմ լաթերս  
 մէջերնին բաժնեցին , ու պատմուճանիս վրայ վի-  
 ճակ ձգեցին : Աւ նստեր անիկայ կը պահէին : Աւ  
 անոր գլխուն վրայ իր յանցանքը գրուած դրին ,  
 թէ՛ սս է յիսուս հրէից թագաւորը : Ան ժամանակը  
 անոր հետ երկու գողեր խաչը հանեցին , մէկը անոր  
 աջ կողմը՝ և միւսը ձախ կողմը : Աւ անոնք որ կ'անց-  
 նէին՝ կը հայհոյէին անոր , ու գլուխնին շարժելով  
 կ'ըսէին . վախ որ տաճարը կը քակէիր , ու իրեք օ-  
 րը անիկայ կը շինէիր . դուն քեզ ապրեցուր . թէ

որ աստուծոյ որդին ես՝ ատ խաչէդ վար իջնիմ : Անանկ ալ քահանայապետները կարգացողներուն ու ծերերուն հետ ծաղը կ'ընէին՝ ու կ'ըսէին . ուրիշները ապրեցուց , իր անձը չի կրնար ապրեցունել . թէ որ իսրայէլի թագաւորն է՝ թող հիմայ իջնայ խաչէն , և անոր հաւատանք : Թէ որ աստուծոյ յուսացեր է հիմայ թող փրկէ ան՝ թէ որ կ'ուզէ անիկայ , ինչու որ ըսաւ թէ՛ ես աստուծոյ որդին եմ : Ար հետը խաչուած գողերն ալ անիկայ նոյնպէս կը նախատէին : Ալ օրուանը վեց ժամէն մինչեւ ինը ժամը՝ բոլոր երկրին վրայ խաւար եղաւ : Ալ ժամը իննին յիսուս մեծ ձայնով կանչեց՝ ու ըսաւ . էլի՛ էլի՛ լամա սաբաբ թանի . որ ըսել է , աստուած իմ աստուած իմ՝ իս ինչո՞ւ թողուցիր : Անոնցմէ ոմանք՝ որ հոն կայներ էին , երբոր լսեցին՝ ըսին . եղիան կը կանչէ ատ : Ալ շուտ մը անոնցմէ մէկը վազեց՝ քացախով լեցուն սպունդ մը առաւ , ու անցուց եղէգի մը՝ տուաւ անոր որ խըմէ : Ալ ուրիշները կ'ըսէին . թող տուր նայինք թէ եղիան կուգայ՞ ատիկայ ազատելու : Ալ յիսուս նորէն մեծ ձայնով կանչեց՝ ու հոգին արձրկեց : Ալ մէյ մ'ալ տաճարին վարագուրը վերէն վար երկո՞ք ճրղքուեցաւ , ու երկիրը շարժեցաւ , ու քարերը պատուեցան : Ալ գերեզմանները բացուեցան , ու շատ սուրբ ննջեցեալներու մարմիններ յարութիւն առին : Ալ անոր յարութենէն ետեւ գերեզմաններէն ելան՝ սուրբ քաղաքը մտան , ու շատերուն երեւցան : Իսցց հարիւրապե-

տը ու իրեն հետ յիսուսը պահողները , երբոր տե-  
սան շարժմունքը ու եղած բաները՝ շատ վախցան  
ու ըսին . ճշմարիտ ասիկայ աստուծոյ որդին էր :

Աւագ Երկուշաբթի .

Եսայեայ . կգ . 1 .

Ո՞վ է աս՝ որ եդումէն կուգայ . իր զգեստներուն  
կարմրութիւնը բոսորայէն . գեղեցիկ պատմուճա-  
նով ու մեծ զօրութիւնով : Աս արդարութիւն ու  
փրկութեան իրաւունքը կը խօսիմ : Անշու կարմիր  
են քու զգեստդ . ու հանդերձներդ հնձանը կոխու-  
ղին նման : Հնձանը ես միայն կոխեցի , ու հեթա-  
նոսներէն մէկը չի կար . սրտամտութիւնով անոնք  
կոխեցի , ու բարկութիւնով անոնք ճզմեցի , և ա-  
րիւն թափելով իմ՝ ամէն հանդերձներս ներկեցի :  
Ինչու որ հատուցման օրը անոնց վրայ հասած էր ,  
ու փրկութեան տարին եկած հասած : ‘Այցիցայ՝ և  
մէկը չի կար օգնող , մտմտացի՝ ու օգնութեան հաս-  
նող մը չի կար , իմ բազուկս անոնք փրկեց . ու իմ  
սրտամտութիւնս միայն ինծի օգնեց : Անոնք իմ բար-  
կութիւնովս կոխեցի , ու սրտամտութիւնովս մոր-  
թեցի , ու անոնց արիւնը գետինը թափեցի : Տէ-  
րածը ողորմութիւնը պիտի յիշեմ , տէրոջը քաջու-  
թիւնը միտքս պիտի բերեմ ամէն բանի մէջ՝ որ  
տէրը մեզի կը հատուցանէ . տէրը բարեբար դատա-  
ւոր է իսրայէլի տանը , որ իր ողորմութեան շափովը  
և իր մեծ արդարութեան շափովը մեզի կը շնորհէ :

Այլ ըստաւ թէ իմ ժողովուրդս իմ զաւկըններս են ,  
 ու իս չի պիտի անարգին . և անոնց փրկութիւն ե-  
 ղաւ : Անոնց ամէն նեղութենէն , չէ թէ պատգա-  
 մաւոր մէկը , ու չէ թէ հրեշտակ մը . հապա տէրը  
 ինքը փրկեց անոնք . անոնք սիրելուն և անոնց խը-  
 նայելուն համար , անոնք ինքը ազատեց . ու վեր  
 վերուց անոնք . ու յաւիտեան անոնց ամէն օրերուն  
 մէջ բարձրացուց : Սակայն անոնք ապստամբեցան ,  
 և անոր սուրբ հոգին բարկացուցին . ու տէրը անոնց  
 թշնամութեան դարձաւ . ինքը անոնց հետ պատե-  
 րալմեցաւ : Այլ միտքը բերաւ առջի օրերը . թէ ո՞ր  
 է մովսէսը ու անոր ժողովուրդը . որ երկրէն ոչխար-  
 ներուն հովուը հանեց . ո՞ր է ան՝ որ անոնց մէջ  
 տէրօջը հոգին դրաւ : Ար մովսէսը իր աջ ձեռքովը  
 վեր վերուց , ու իր փառաց բազուկովը անոր առջին  
 ջուրերը բաժնեց , իր անունը յաւիտենական ընելու  
 համար : Անոնք անապատը անցնող ձիուն պէս ան-  
 դունդներէն անցուց : Այլ դաշտէն անցնող կենդա-  
 նիին նման , ու չի հոգնեցան . տէրօջը հոգին իջաւ ,  
 ու անոնց առաջնորդեց . անանկ քու ժողովուրդդ  
 տարի՛ր՝ քեզի փառաւոր անուն մը ընելու : Այլ արդ  
 երկինքէն դարձիր , ու քու սրբութեանդ ու փառքիդ  
 տաճարէն տես . ո՞ր է քու նախանձդ՝ ու քու զօ-  
 րութիւնդ . ո՞ր է քու գթութեանդ անբաւ ողոր-  
 մութիւնը , որով մեզի կը ներէիր : Ա՛սն զի դուն  
 ես մեր հայրը , թէ և արբահամ մեզ չի գիտցաւ , ու  
 խորայէլ մեզ չի ճանչցաւ . բայց դուն մեր հայրը՝

մեզ փրկէ, ինչու որ սկիզբէն քու անունդ մեր վրայ է: Ինչու համար մեզ քու ճամբաներէդ մոլորացուցիր, մեր սիրտը խստացուցիր քենէ չի վախնալու, դարձիր քու ծառաներուդ համար, դարձիր քու ժառանգութեանդ ազգերուն համար: Վուցէ քու սրբութեանդ լեռը չի պիտի ժառանգենք, մեր թըշնամիները մեզ նեղեցին, և քու սրբութիւնդ կոխեցին: Առաջինին պէս եղանք՝ երբոր մեր վրայ չէիր նայէր, և քու անունդ մեր վրայ կանչուած չէր:

Ս. Աւետարան. Մարի. Ժգ. 1.

Ալ երկու օրէն ետեւ զատիկ էր ու բաղարջակերք. քահանայապետները ու կարդացողները կ'ուզէին՝ թէ ինչպէս հնարքով մը անիկայ բռնեն ու մեռցունեն: Բայց կ'ըսէին թէ՛ այս տօնին մէջ չէ՛ որ ժողովուրդին մէջ խռովութիւն չըլլայ: Ալ երբոր ինքը բեթանիա էր՝ բորոտ սիմոնին տունը սեղան նստած, կնիկ մը եկաւ՝ որ շիշ մը պատուական սուղ նարդոսի եղ ունէր. և ան շիշը կոտրեց՝ անոր գըլխուն վրայ թափեց: Ալ աշակերտները չարացան ու ըսին, ինչու համար ոչինչ եղաւ ատ եղը: Իրեք հարիւր դահեկանէն էվել կրնար ծախուիլ ատ եղը, ու աղքատներուն տրուիլ. ու շատ կը բարկանային անոր: Ալ յիսուս անոնց ըսաւ, թող տուէք ատոր, ինչու անհանգիստ կ'ընէք. ինչու որ ինծի բարի գործ մը գործեց: Աղքատները ամէն ժամանակ ձեր հետը ունիք, ու երբոր ուզէք՝ կրնաք անոնց բարի

ընել . բայց իս միշտ ձեր հետը չունիք : Ա՛տ ի՛նչ որ ունէր՝ ըրաւ . առաջուց իմ մարմինս օծեց՝ պատնուելու նշան : ՂԶմարիտ կ'ըսեմ ձեզի . բոլոր աշխարհի մէջ ուր որ աս աւետարանը քարոզուի , աստոր ըրածն ալ զինքը յիշելու համար պիտի խօսուի : Այլ յուդա իսկարիովտացին տասներկուքին մէկը՝ գնաց քահանայապետներուն , որ անիկայ անոնց մատնէ : Անոնք երբոր լսեցին՝ խնդացին , ու իրեն ստակ խոստացան տալու . և կ'ուզէր՝ թէ ի՞նչ պէս պատահու թիւնով մը անիկայ մատնէ : Այլ բաղարջակերքին առջի օրը՝ որ զատիկը կը մորթէին , աշակերտները ըսին իրեն . ո՞ւր կ'ուզես երթանք պատրաստենք՝ որ զատիկը ուտես : Այլ ինքը աշակերտներէն երկուքը խրկեց՝ ու ըսաւ անոնց . գացէք քաղաքը , ու երբոր քաղաքը կը մտնաք՝ մարդ մը կը պատահի ձեզի , որ ուսին վրայ ջուրի մաման ունի , անոր ետեւէն գացէք : Այլ որ տունը որ մտնայ , տանը տիրոջը ըսէք . վարդապետը կ'ըսէ , ո՞ւր է ան իջեւանը՝ որ հոն աշակերտներովս զատիկը ուտեմ : Այլ ան ձեզի զարդարուած մեծ վիրնատուն մը պիտի ցրցունէ . հոն պատրաստեցէք մեզի : Ու իր աշակերտները գացին պատրաստելու . քաղաքը եկան՝ ու գտան ինչպէս որ իրենց ըսաւ . ու զատիկը պատրաստեցին : Այլ երբոր իրիկուն եղաւ՝ տասներկուքին հետ մէկ տեղ եկաւ : Ու երբոր նստեցան ու դեռ կ'ուտէին , յիսուս ըսաւ . Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի՝ որ ձենէ մէկը իս պիտի մատնէ , որ հետս ալ

կ'ուտէկոր : Ալ անոնք սկսեցին արամիլ՝ ու ամէն  
 մէկը ըսել . միթէ ե՞ս եմ , և միւսը միթէ ե՞ս եմ :  
 Ինքը պատասխան տուաւ և ըսաւ անոնց . ատ տաս  
 ներկուքէդ մէկը՝ որ ինձի հետ պնակը խօթեց : Ի-  
 րաւ որդին մարդոյ պիտի երթայ՝ ինտոր որ գրուած  
 է անոր համար . բայց վայ ան մարդուն՝ որուն ձեռ-  
 քովը որդին մարդոյ պիտի մատնուի . աղէկ էր ա-  
 նոր՝ որ ծնած ալ չըլար ան մարդը : Աւ դեռ որ  
 կ'ուտէին , յիտուս հաց առաւ , օրհնեց ու կտրեց ,  
 անոնց տուաւ ու ըսաւ . առէք՝ ատ իմ մարմինս է :  
 Աւ բաժակը առաւ , գոհացաւ ու տուաւ անոնց , և  
 ամէնքը անկէ խմեցին : Ալ ըսաւ անոնց . աս իմ ա-  
 րիւնս է նոր ուխտի , որ շատերուն համար կը թա-  
 փուի : Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , որ մէյ մ'ալ որթին  
 բերքէն չի պիտի խմեմ մինչեւ ան օրը , երբոր անի-  
 կայ նոր խմեմ աստուծոյ թագաւորութեանը մէջ :  
 Աւ գոհացան ելան ձիթենեաց լեռը : Ալ յիտուս ը-  
 սաւ անոնց . ամէնքդ ալ աս գիշեր ինէ պիտի գայ-  
 թակղիք . ինչու որ գրուած է , թէ հովիւը պիտի  
 զարնեմ , ու ոչխարները ցիրուցան պիտի ըլլան :  
 Բայց յարութենէս ետեւ ձենէ առաջ գայիլեա  
 պիտի երթամ : Պատասխան տուաւ պետրոս և ըսաւ  
 անոր . թէպէտ ամէնքն ալ պիտի գայթակղին , բայց  
 ես ոչ : Ալ յիտուս ըսաւ անոր . ճշմարիտ կ'ըսեմ  
 քեզի . որ դուն աս գիշեր հաւը երկու անգամ չի  
 խօսած՝ իրեք անգամ իս պիտի ուրանաս : Բայց  
 պ'որոս էվիլոք կը պնդէր ու կ'ըսէր . թէ որ քեզի

Հետ մեռնելու ալ հասնիմ, քեզ չեմ ուրանար  
 նոյնպէս ամէնքն ալ կ'ըսէին: Այլ, կան ան գեղը՝ որուն  
 անունը գեթ սեմանի էր, և աշակերտներուն ըսաւ,  
 հոս նստեցէք՝ մինչեւ որ ես աղօթք ընեմ: Այլ իր  
 հետը առաւ պետրոսը ու յակովբոսը ու յօհաննէսը,  
 ու սկսաւ տրտմիլ ու հոգ ընել: Ան ժամանակը ը-  
 սաւ անոնց, իմ անձս մեռնելու չափ տրտում է,  
 հոս կեցէք՝ ու արթուն մնացէք: Այլ քիչ մը առաջ  
 գնաց, երեսին վրայ գետինը ինկաւ, ու աղօթք ը-  
 րաւ, որ եթէ կարելի է՝ ան ժամը իրմէ անցնի: Այլ  
 ըսաւ, արբա՛ հայր, ամէն բան քեզի հնարաւոր է,  
 անցնու ինչ աս բաժակը. բայց չէ՛ թէ ինչպէս որ ես  
 կ'ուզեմ՝ հապա ինչպէս որ դուն կը կամիս: Այլ ե-  
 կաւ անոնք քնացած գտաւ, ու ըսաւ պետրոսին,  
 սիմոն կը քնանաս, չի կրցար ժամ մը արթուն կե-  
 նալ: Արթուն կեցիք ու աղօթք ըրէք, որ փորձու-  
 թեան մէջ չի մտնաք. հոգիս յօժար է, բայց մար-  
 մինս տկար: Անորէն գնաց աղօթք ըրաւ, և նոյն  
 խօսքերը ըսաւ: Անկէ կրկին դարձաւ, և անոնք  
 քունի մէջ գտաւ. ինչու որ աչվ ըններնին ծանրըցեր  
 էր, ու չէին գիտեր թէ ինչ պատասխան տան ա-  
 նոր: Արորդ անգամ եկաւ՝ ու ըսաւ անոնց, ասկէ  
 ետեւ քնացէք ու հանգչեցէք, ինչու որ վախճանը  
 հասաւ, ժամը եկաւ, և ահա որդին մարդոյ մեղա-  
 ւորներուն ձեռքը կը մատնուի: Այլէք երթանք, ին-  
 չու որ ահա մօտեցաւ ան՝ որ իս պիտի մատնէ:  
 Ան դեռ ինքը ան կը խօսէր՝ յուզա իսկարիով տացին

տասներկուքին մէկը եկաւ , և իր հետ մեծ բաղմու-  
 թիւն սուրերով ու բիրերով քահանայապետներէն  
 ու կարգացողներէն ու ծերերէն : Սասնիչը նշան  
 մը տուած՝ ու ըսած էր . ո՛վ որ ես համբուրեմ՝ ան  
 է . անիկայ բռնեցէք ու զգուշութեամբ տարէք :  
 Այլ շուտ մը գնաց անոր ըսաւ . ուարբի ուարբի . ու  
 անիկայ համբուրեց : Այլ անոնք ձեռք ձգեցին անոր՝  
 ու անիկայ բռնեցին : Այլ անոր քովը կայնողնե-  
 րուն մէկը սուրը քաշեց զարկաւ քահանայապետին  
 ծառային , ու անոր ականջը կտրեց : Պատասխան  
 տուաւ յիսուս՝ և ըսաւ անոնց . իբր գողի վրայ ելաք  
 սուրերով ու բիրերով իս բռնելու : Միշտ ձեր  
 քովն էի՝ ու տաճարին մէջ կը սորվեցունէի , և իս  
 չի բռնեցիք . բայց որ մարգարէներուն գիրքերը  
 կատարուին : Ան ժամանակը բոլոր աշակերտները  
 թողուցին անիկայ՝ ու փախան : Այլ մէկ երիտասարդ  
 մը անոր ետեւէն կ'երթար՝ մերկ մարմինին վրայ  
 կտաւ մը առած . երիտասարդները անիկայ բռնե-  
 ցին : Ան ալ կտաւը թողուց՝ մերկ փախաւ անոնցմէ :  
 Այլ տարին յիսուս կայիափա քահանայապետին . ու  
 անոր հետ կուգային բոլոր քահանայապետները ու  
 կարգացողները ու ծերերը : Այլ պետրոս հեռուանց  
 անոր ետեւէն կ'երթար մինչեւ բուն ներսը քահա-  
 նայապետին բակը , ու սպասաւորներուն հետ նըս-  
 տաւ , ու կրակին լուսովը կը տաքնար : Այլ քահա-  
 նայապետները ու բոլոր տտեանը յիսուսի դէմ վը-  
 կայութիւն կը փնտռէին , որ անիկայ մեռցունեն , և

կարող չէին գտնալու : Ինչու որ շատ սուտ վկայութիւն կը վկայէին անոր դէմ , ու վկայութիւնները մեկզմէկու նման չէին : Ուրիշները ելան սուտ վեկայութիւն կ'ընէին անոր վրայ՝ ու կ'ըսէին , մենք լսեցինք ատկէ՛ որ կ'ըսէր . ես ատ ձեռագործ տաճարը պիտի քակեմ , ու իրեք օրուան մէջ ուրիշ մը պիտի շինեմ՝ անձեռագործ : Բայց անանկ ալ անոնց վկայութիւնը նման չէր : Ա՛յ երջը քահանայապետը ելաւ մէջ տեղը կայնեցաւ՝ կը հարցունէր յիսուսի , ու կ'ըսէր . պատասխան չն՛ս իտար , ի՞նչ կը վկայեն ատոնք քու վրադ : Բայց ան միայն լուռ կեցեր էր , և բան մը պատասխան չէր իտար . քահանայապետը նորէն երկրորդ անգամ անոր կը հարցունէր ու կ'ըսէր . դո՛ւն ես քրիստոսը՝ օրհնեալ աստուծոյ որդին : Պատասխան տուաւ յիսուս և ըսաւ անոր . դո՛ւն ըսիր որ ես եմ . բայց պիտի տեսնաք որդին մարդոյ զօրութեան աջ կողմը նստած , ու երկինքի ամպերովը եկած : Այլ քահանայապետը շուտ մը հանդերձը պատուեց՝ ու ըսաւ , ալ ի՞նչ պէտք է մեզի վկաներ : Ա՛հա ամէնքդ ալ լսեցիք ատոր բերնէն հայհոյութիւնը . ձեզի ի՞նչպէս կ'երեւայ , և ամէնքը դատապարտեցին անիկայ՝ թէ մահապարտ է : Այլ ոմանք սկսեցին երեսը թուրնել , գլխուն վրայ լաթ ձգել , ապտակ զարնել ու ըսել , մարգարէացիր մեզի ո՛վ քրիստոս , ո՛վ է ան որ քեզի զարկաւ . և սպառաւորները անոր ապտակ կը զարնէին : Այլ պետրոս որ դեռ վարը դաւիթն

էր, քահանայապետին մէկ ազախինը եկաւ, ու ան-  
սաւ անիկայ՝ որ կը տաքնար, նայեցաւ անոր՝ ու ը-  
սաւ, դուն ալ նազովընցի յիսուսին հետն էիր :  
Ըն ուրացաւ ու ըսաւ. չեմ ճանչնար ու չեմ գիտեր  
դուն ինչ կը խօսիս . և երբոր դուրսի բակը ելաւ,  
հաւն ալ խօսեցաւ : Ըղախինը նորէն տեսաւ անի-  
կայ, ու սկսեց բոլորտիքը կայնողներուն ըսել, թէ  
աս ալ անոնցմէ է : Այլ ան կրկին ուրացաւ . և քիչ  
մը ժամանակէն ետքը՝ նորէն բոլորտիքը կայնողնե-  
րը պետրոսին ըսին . իրաւցունէ դուն ալ անոնցմէ  
ես . ինչու որ գալիլեացի ես, և իսկ քու խօսքդ նման  
են : Այլ ան սկսեց նշուիլ՝ երգում՝ ընել ու ըսել,  
թէ ես ան մարդը չեմ ճանչնար՝ որուն համար որ  
դուք կ'ըսէք : Այլ նոյն ժամուն երկրորդ անգամ  
հաւը խօսեցաւ . ու յիշեց պետրոս ան խօսքը՝ որ  
յիսուս իրեն ըսաւ, թէ՛ դեռ հաւը երկու անգամ  
չի խօսած՝ դուն իս իրեք անգամ պիտի ուրանաս . և  
սկսաւ լալ :

Աւագ Երեքշաբթի .

Եսայէայ . ծ . 5 .

Տէրոջը խրատը իմ ականջս կը բանայ, ու ես  
չեմ ապստամբիր ու ետ դառնար : Առնակս զար-  
նուելու տուի, ու ծնօտս ապտակուելու . երեսս ա-  
մօթէն ու թուքնուելէն չի դարձուցի : Տայց տէրը՝  
տէրը ինձի օգնական եղաւ . անոր համար չամչցայ .  
հապա երեսս հաստատուն քարի պէս ըրի, ու գիտ-

ցայ՝ թէ չի պիտի ամչնամ : Ինչու որ մօտ է ան՝ որ  
իս կ'արդարացունէ : Ո՞վ է իմ թշնամիս , առանջ  
թող գայ՝ ու կայնի . և իս դատողը ո՞վ է , թող ինծի  
մօտենայ : Ինչու որ ահա տէրը՝ տէրը ինծի օգնա-  
կան է . ո՞վ է՝ որ իս կը չարչարէ . ահա դուք ամէնք-  
նիդ հանդերձի պէս պիտի մաշիք , ու մաշեցունող  
ցեցը ձեզ պիտի ուտէ : Սենէ ո՞վ է՝ որ տէրոջմէն  
կը վախնայ , անոր ծառային ձայնը կը լսէ , որոնք  
խաւարը կը քալէին ու լոյս չունէին . թող տէրօջը  
անուանը յուսան , ու աստուծմով խրատուին : Ահա  
դուք ամէնքդ իբր կրակով վառուած որպէս թէ  
բոցով պատրաստուեցէք . ձեր կրակին լուսովը քա-  
լեցէք . ինծի համար ատիկայ ձեզի եղաւ , տրտմու-  
թիւնով պիտի ննջէք :

Ս. Աւետարան . Մարի . Ժե . 1 .

Եւ առտուանց շուտ մը քահանայապետները  
ձերերուն ու կարգացողներուն հետ՝ ու բոլոր ժո-  
ղովքը խորհուրդ ըրին , յիսուսը կապեցին՝ ու տա-  
րին պիղատոսի մատնեցին : Ու պիղատոս անոր հար-  
ցուց ու ըսաւ . դ՞ուք ես հրէաներուն թագաւորը ,  
ինքր պատասխան տուաւ անոր՝ և ըսաւ , դ՞ուք կ'ը-  
սես : Եւ քահանայապետները անոր վրայ զըպար-  
տութիւն կ'ընէին . ու ան բան մը չէր պատասխա-  
նէր : Բայց պիղատոս նորէն կը հարցունէր անոր .  
պատասխան չե՞ս իտար . նայէ որչափ բաներ կը խօ-  
սին քու վրայ : Եւ յիսուս անկէ ետեւ բան մը պա-

տասխան չի տուաւ , մինչեւ որ պիղատոս շատ զարմացաւ : Նայց ան տօնին կապուած մը կ'արձըրկէր անոնց , ո՛վ որ իրենց կ'ուզէին : Այլ բարարբա ա նունով մէկը կար՝ խոովարարներուն հետ կապուած , որ անոնց խոովութեան ժամանակը մարդ մը սպաննած էր : Նարձր ձայնով սկսեց ժողովուրդը կանչել ու խնդրել՝ ինչպէս որ սովորութիւն էր , որ բարարբան անոնց արձըրկէ : Պիղատոս պատասխան տուաւ և ըսաւ անոնց , կուզէ՞ք որ հրէաներուն թագաւորը ձեզի արձըրկեմ . ինչու որ գիտէր թէ քահանայապետները նախանձութեան համար անիկայ մատնեցին : Արոնք ժողովուրդն ալ հաւանեցուցին՝ որ բարարբան իրենց արձըրկէ : Պիղատոս նորէն պատասխան տուաւ և ըսաւ անոնց , հապա հրէաներուն թագաւորին ի՞նչ կ'ուզէք որ ընեմ : Այլ անոնք նորէն կը կանչուէին՝ քահանայապետներէն դըրդուած , ատիկայ խա՛չը հանէ : Պիղատոս ըսաւ անոնց . ի՞նչ չար գործ ըրած է ատ , և անոնք էվելօք կը պօռային ու կ'ըսէին , խա՛չը հանէ ատիկայ : Նայց պիղատոս երբոր ուզեց ժողովուրդին միտքը հաճեցունել , բարարբան անոնց արձըրկեց , և յիսուսը ծեծելով ձեռք տուաւ որ խաչուի : Այլ զինուորները անիկայ ներսի բակը տարին , ուր որ մեծ ատեանն էր , և բոլոր գունդը մէկ տեղ կանչեցին , ու անոր կարմիր վերարկու ու ծիրանիներ հագուցին , և անոր գլուխը թագ մը դրին փուշերէ շինուած : Այլ սկսեցին անոր բարեւ տալ ու ըսել , ո՞ղջ կեցիր հրէից

Թագաւորը : Աւ եղէգով գլուխը կը ծեծէին , ու երեսը կը թուքնէին , ու ծունկի վրայ եկած անոր երկրպագութիւն կ'ընէին : Աւ երբոր ծագը ըրին անիկայ , վերարկոն ու ծիրանինները հանեցին , և իր լաթերը հագուցին , ու դուրս հանեցին որ անիկայ խաչը հանեն : Աւ բռնեցին սիմոն կիւրենացին՝ աղէքսանդրին ու ոռուփային հայրը , որ անկէ կ'անցնէր արտէն եկած , որ անոր խաչափայտը վերցունէ : Աւ տարին անիկայ գողգոթա՝ տեղ մը , որ կը թարգմանուի գլուխ կտրուելու տեղ : Աւ անոր լեղի խառնած գինի տուին , և ինքը չընդունեց . և խաչը հանեցին անիկայ : Աւ անոր լաթերը բաժնեցին , վրան վիճակ ձգելով՝ թէ ո՞վ ինչ պիտի առնէ : Սամը իրեքն էր՝ ու անիկայ խաչը հանեցին : Աւ անոր յանցանքին գիրը գրուած էր , թէ՛ հրէաներուն թագաւորն է : Աւ անոր հետ երկու գող ալ խաչը հանեցին . մէկը աջ կողմը , և միւսը անոր ձախ կողմը : Աւ ան գիրը կատարուեցաւ որ կ'ըսէ , թէ՛ անօրէններուն հետ սեպուեցաւ : Աւ անոնք որ կ'անցնէին՝ կը հայհոյէին անոր գլուխնին շարժելով ու կ'ըսէին . վախ՛ որ տաճարը կը քակէիր , ու իրեքօրը կը շինէիր . քու անձդ ապրեցուր , ու ատ իաչէն վա՛ր իջիր : Այնպէս քահանայապետներն ալ կարգացողներուն հետ մէջերնին ծագը ընելով կ'ըսէին , ուրիշները ապրեցուց , իր անձը կարող չէ ապրեցունելու : Ատ քրիստոսը՝ իսրայէլի թագաւորը հիմայ ատ խաչէն վա՛ր թող իջնայ , որ տեսնանք ու

Հաւատանք ատոր . և իր հետը խաչը ելլողները կը նախատէին անիկայ : Աւ երբոր ժամը վեց եղաւ՝ բոլոր երկիրը մուժը պատեց մինչեւ ժամը ինը : Աւ ժամը իննին յիսուս մեծ ձայնով մը կանչեց ու ըսաւ . էլի՛ էլի՛ , լամա սաբաբթանի , որ կը թարգմանուի , աստուած իմ աստուած իմ , իս ինչո՞ւ թողուցիր : Աւ անոնցմէ ոմանք որ իր քովը կայներ էին , երբոր լսեցին՝ կ'ըսէին , թէ եղիան կը կանչէ : Աւ մէկը վազեց՝ սպունգ մը քացախով լեցուց , ու ե՞ղէզի մը անցուցած՝ անոր կուտար որ խմէ , և ըսաւ . թո՛ղ տուր նայինք՝ եղիան կուգայ ատիկայ վար իջեցունելու : Աւ յիսուս մեծ ձայնով կանչեց՝ ու հոգին հանեց : Աւ տաճարին վարագոյրը վերէն վար երկուք պատուեցաւ : Աւ հոն կայնող հարիւրապետը տեսնալով թէ՛ կանչեց ու հոգին հանեց , ըսաւ . ճշմարիտ աս մարդը որդի աստուծոյ էր :

Աւագ Չորեքշաբթի .

Թուղթ Պողոսի Առաքելոյ . Եփես . Թ . 16 .

Աւ որ կտակ մը եղած ըլլայ , հարկաւոր է որ ան կտակը գրողին մահը յայտնուի : Ինչու որ կրտակը մեռնելէն ետեւ հաստատուն է . հապա թէ չէ՛ ի՞նչպէս հաստատուն կ'ըլլայ , քանի որ կտակը գրողը կենդանի է : Աւստի առաջինն ալ առանց արիւնի չէր նորոգուէր : Ասան զի երբոր մոլութս օրէնքին ամէն պատուէրները ժողովուրդին պատմեց , ցուլերուն ու նոխազներուն արիւնը առնելով :

շուրով ու բուրդով՝ կարմիրով ու զգայցով, բուն  
 կտակարաններուն և բոլոր ժողովուրդին վրայ սրբու-  
 կեց՝ ըսելով. ասիկայ է ան կտակին արիւնը՝ որ աս-  
 տուած ձեզի պատուիրեց : Աշնպէս խորանին և  
 սպասին բոլոր կարասիքներուն վրայ ան արիւնը ցա-  
 նեց : Այլ գրեթէ ամէն բան արիւնով կը մաքրուէր  
 օրէնքին նայելով . ու առանց արիւն թափելու թու-  
 ղութիւն չէր ըլլար : Աւստի հարկ էր որ օրէնքով  
 եղածները ասանկնէրով սրբուին . և բուն իսկ երկ-  
 նաւորները անոնցմէ առաւել ազէկ պատարագնե-  
 րով : Պատճառն որ քրիստոս չէ թէ ձեռքով շի-  
 նուած սուրբ տեղերը մտաւ ան ճշմարիտին օրինակ-  
 ները . հապա բուն երկինքը, մեզի համար աստուծոյ  
 երեսին առջին ըլլալու : Այլ թէ իր անձը շատ ան-  
 գամ պատարագ մատուցանէ , ինչպէս որ քահա-  
 նայապետը՝ ամէն տարի սրբութիւն սրբութեանցը  
 կը մտնար օտար արիւնով . հապա թէ չէ՝ պէտք էր  
 իրեն աշխարհի սկիզբէն շատ անգամ չարչարուիլ .  
 բայց ահա հիմայ յաւիտենականութեանց վերջը  
 անգամ մը իր պատարագուելովը յայտնուեցաւ մեղ-  
 քերը ջնջելու : Այլ ինչպէս որ սահմանուած է մար-  
 դոց մէկ անգամ մեռնիլ՝ ու անկէ ետեւ դատաս-  
 տան , անանկ ալ քրիստոս մէկ անգամ պատարագ  
 մատուցուեցաւ շատերուն մեղքերը վերցունելու .  
 բայց երկրորդ անգամին առանց մեղքի պիտի յայտ-  
 նուի անոնց՝ որոնք հաւատքով անոր կ'սպասին փրկ-  
 ուելու :

Ս. Աւետարան . Չէ . Իր . 1 .

Յաղարջակերքին տօնը մօտեցաւ՝ որ պատրաստ  
կ'ըսուէր . ու քահանայապետները և կարգացողները  
կը խնդրէին՝ թէ ինչպէս զինքը սպաննեն , միայն  
թէ ան ժողովուրդներէն կը վախնային : Յետոյ սա-  
տանան իսկարհովտացի ըսուած յուդային մէջը մը-  
տաւ , որ ան տասներկօքին թիւէն էր : Վնաց քա-  
հանայապետներուն ու կարգացողներուն ու ժողո-  
վուրդին իշխաններուն խոստացաւ , որ անիկայ ի-  
րենց մատնէ : Այլ անոնք ուրախացան , ու խօսք  
տուին անոր ստակ տալու : Այլ ինքը յանձնառու ե-  
ղաւ , ու պատահութիւն մը կը վնասուէր որ անիկայ  
ժողովուրդէն հեռու անոնց մատնէ : Յաղարջակեր-  
քին օրը եկաւ , որ ան օրը օրէնք էր պատ.քը մոր-  
թելու : Այլ խրկեց պետրոսը ու յօհաննէսը՝ և ըսաւ .  
դացէք պատ.քը մեզի պատրաստեցէք՝ որ ուտենք :  
Այլ անոնք ըսին , ուր կ'ուզես որ պատրաստենք : Այլ  
ըսաւ անոնց , ահա երբոր քաղաքը կը մտնաք , մարդ  
մը ձեզի կը պատահի ջուրի աման մը վերուցած , ա-  
նոր ետեւէն տունը գացէք , ուր որ ինքը կը մտնայ ,  
և ան տունին տէրոջը ըսէք . վարդապետը կ'ըսէ  
քեզի , իմ տեղս ուր է , որ հոն աշակերտներուս հետ  
պատ.քը ուտեմ : Այլ ան մէկ մեծ վերնատուն մը պի-  
տի ցրցունէ ձեզի զարդարուած , ու հոն պատրաս-  
տեցէք : Այլ գացին դտան ինչպէս որ իրենց ըսաւ ,  
ու պատ.քը պատրաստեցին : Այլ երբոր ժամանակը  
եկաւ՝ սեղան նստաւ , ու տասներկու առաքեալներն

ալ իր հետը : Այլ ըսաւ անոնց , փափաքելով փա-  
 փաքեցայ աս պասեքք ձեզի հետ ուտելու՝ չարչա-  
 րուելէս առաջ : Բայց ձեզի կ'ըսեմ , որ ալ ասկէ  
 չի պիտի ուտեմ՝ մինչեւ որ ան աստուծոյ թագաւորու-  
 թեանը մէջ կատարուի : Այլ բաժակը առաւ՝ գո-  
 հացաւ ու ըսաւ . առէք ատիկա՝ ու բաժնեցէք ձեր  
 մէջը : Ձեզի կ'ըսեմ , որ ասկէ ետեւ որթին բերքէն  
 չի պիտի խրմեմ՝ մինչեւ որ աստուծոյ թագաւորու-  
 թիւնը գայ : Այլ հացը առաւ գոհացաւ՝ կտրեց ու  
 անոնց տուաւ՝ և ըսաւ . աս է իմ մարմինս , որ շա-  
 տերուն համար կը կտրուի . ասիկայ զիս յիշելու  
 համար ըրէք : Ենանկ ալ բաժակը ընթրիքէն ետեւ  
 առաւ՝ ու ըսաւ . աս բաժակը նոր ուխտ է իմ արիւ-  
 նովս , որ ձեզի համար կը թափուի : Բայց ահա իս  
 մատնողին ձեռքը ինծի հետ աս սեղանն է : Այլ որ-  
 գին մարդոյ կ'երթայ ինչպէս որ սահմանուած է ,  
 բայց վայ ան մարդուն՝ որուն ձեռքովը որ պիտի  
 մատնուի : Այլ անոնք սկսեցին փնտռել , թէ ո՞վ է  
 ան իրենցմէ՝ որ ան բանը պիտի ընէ : Այլ անոնց մէջ  
 հակառակութիւն մըն ալ եղաւ թէ իրենցմէ ո՞վ մեծ  
 պիտի սեպուի : Ու ինքը ըսաւ անոնց . ազգերուն  
 թագաւորները իրենց վրայ կը տիրեն . և անոնք որ  
 իրենց վրայ կ'իշխեն՝ բարեբար կ'ըսուին . բայց դուք  
 անանկ չէք . հապա ան որ ձեր մէջը մեծ է՝ պղտիկին  
 պէս թող ըլլայ , և առաջնորդը սպասաւորին պէս :  
 Ո՞վ է մեծը , սեղան նստողը՝ թէ սպասաւորը . չէ՞ որ  
 սեղան նստողը , սակայն ես ձեր մէջը սպասաւորի

մը պէս եմ : Այլ դուք անոնք էք՝ որ միշտ իմ հետ  
 փորձութիւններուս մէջ կը կենայիք . ես ալ ձեզի  
 ուխտ կ'ընեմ՝ ինչպէս որ իմ հայրս ալ ինծի թա-  
 գաւորութիւն մը ուխտ ըրաւ . որ դուք իմ սեղանս  
 ստէք ու խըմք արքայութեանս մէջ , ու տասներկու  
 աստուի վրայ նստիք խորայէլի տասներկու ցեղը դա-  
 տելու : Այլ տէրը ըսաւ . սիմոն սիմոն՝ ահա սուտա-  
 նան ուզեց ցորենի պէս ձեզ մտղել . բայց էս քեզի  
 համար աղաչեցի՝ որ քու հաւատքդ չի պակսի . և  
 դուն երբ որ դարձի գաս՝ քու եղբայրդ ալ հաստա-  
 տես : Այլ ինքը ըսաւ անոր . տէր , պատրաստ եմ  
 քեզի հետ բանտը երթալու ու մեռնելու : Այլ ան  
 ըսաւ անոր . պէտրոս քեզի կ'ըսեմ , այսօր դեռ հաւը  
 չի խօսած՝ իրիք անգամ պիտի ուրանաս զիս չի գիտ-  
 նալու : Այլ ըսաւ անոնց . երբ որ ձեզ խրկեցի ա-  
 ոսնց քսակի ու տօպրակի ու կօշիկներու . ի՞նչ բա-  
 նի կարօտութիւն ունեցաք : Այլ անոնք ըսին . բանի  
 մըն ալ չէ . ետքը ըսաւ . բայց հիմայ ան որ քսակ  
 ունի՝ թող վրան առնէ , անանկ ալ տօպրակը . և  
 ան որ սուր չունի՝ թող իր լաթերը ծախէ , ու իրեն  
 մէկ հատ մը ծախու առնէ : Բայց կ'ըսեմ ձեզի որ  
 այս գրուած բանն ալ պէտք է իմ վրաս կատարուի ,  
 թէ անօրէններուն հետը սեպուեցաւ . ինչու որ ին-  
 ծի համար գրուած բանը կը կատարուիկոր : Այլ ա-  
 նոնք ըսին . տէր , ահա հոս երկու սուր կայ , ան ալ  
 ըսաւ անոնց . հերիք են : Այլ ելաւ սովորութեանը  
 պէս ձիթինեաց լեռը գնաց . աշա՛կերաներն ալ ա-

նոր ետեւէն գացին : Արբոր ան տեղը հասաւ՝ ըստ  
 անոնց . աղօթք ըրէք որ փորձութեան մէջ չի մըտ-  
 նաք : Այս ինքը անոնցմէ քար նետելու մը չափ զա-  
 տուեցաւ , ծնկան վրայ եկաւ՝ աղօթք կ'ընէր ու կ'ը-  
 սէր . հայր , թէ որ կ'ուզես այս բաժակը ինէ ան-  
 ցուր . բայց չէ թէ իմ կամքս՝ հապա քուկդ ըլլայ :  
 Այս երկինքէն հրեշտակ մը երեւցաւ անոր՝ ու կը զօ-  
 րացունէր անիկայ . ու սաստիկ նեղութեան մէջ էր ,  
 և մտադրութեամբ ալ կ'աղօթէր : Այս անկէ վազած  
 քրտինքը արիւնի պուտերու պէս կըր կըր գետինը  
 կը թափէր : Այս աղօթքէն ելու աշակերտներուն  
 քովը եկաւ , անոնք տրամութիւնով քունի մէջ  
 գտաւ . ու ըսաւ անոնց . ի՞նչու կը քնանաք , ելէք  
 աղօթք ըրէք՝ որ փորձութեան մէջ չի մտնաք : Այս  
 երբոր կը խօսէր , ահա մէկ բազմութիւն մը , ու ան  
 յուդա ըսուածը՝ տասներկուքին մէկը՝ անոնց առջին  
 էր ինկած . երբոր յիսուսի մօտեցաւ՝ համբուրեց ա-  
 նիկայ . ինչու որ աս նշանը տուած էր անոնց , թէ՛ ու  
 որ ես համբուրեմ , ան է՝ անիկայ բռնեցէք : Յի-  
 սուս ըսաւ անոր . յուդա՝ համբուրելով կը մատնեւ  
 որդին մարդոյ : Արբոր քովը եղողները ան եղած  
 բանը տեսան՝ ըսին անոր . տէր , սուրով զարնենք ա-  
 նոնք : Այս անոնցմէ մէկը քահանայապետին ծառա-  
 յին զարկաւ , ու անոր աջ ականջը մէկ դի հանեց =  
 Պատասխան տուաւ յիսուս և ըսաւ . թող տուէք  
 մինչեւ ատ տեղը , ու դըպաւ ականջին՝ բժշկեց անի-  
 կայ : Այս իրեն վրայ եկողներուն՝ քահանայապետնե-

բուն ու տաճարին իշխաններուն ու ծերերուն ըսաւ ,  
 իբր թէ աւագակի մը վրայ ելա՞ք սուրերով ու բի-  
 րերով : Ա՛մէն ժամանակ ձեր հետն էի տաճարին  
 մէջ , ու ինձի ձեռք չի զարկիք . բայց աս է ձեր ժա-  
 մանակը , ու խաւարին իշխանութիւնը : Այլ բռնեցին  
 անիկայ՝ տարին քահանայապետին տունը խօթե-  
 ցին , ու պետրոս հեռուանց անոր ետեւէն կ'երթար :  
 Արբոր բակը կրակ վառեցին ու բոլորտիքը նստան ,  
 պետրոս ալ անոնց մէջը նստաւ : Ա՛ղախին մը տե-  
 սաւ անիկայ՝ որ կրակին դիմացը նստեր էր . նայե-  
 ցաւ անոր ու ըսաւ . ասիկայ ալ անոնցմէ է՝ որ անոր  
 հետն էին : Բայց պետրոս ուրացաւ և ըսաւ . կնիկ՝  
 ես անիկայ չեմ ճանչնար : Այլ քիչ մը ետքը ուրիշ  
 մը տեսաւ անիկայ , և ըստ . դուն ալ անոնցմէ ես ,  
 և պետրոս ըսաւ . մարդ՝ ես անոնցմէ չեմ : Այլ երբոր  
 վրան ժամ մը անցաւ , ուրիշ մէկը կը պնդէր ու  
 կ'ըսէր . իրաւցունէ ասիկայ ալ անոր հետն էր , ինչու  
 որ գալիլեացի է : Պետրոս ըսաւ . մարդ՝ չեմ գիտեր  
 քու խօսածդ . և նոյն ժամուն դեռ ան բանը որ կը  
 խօսէր , հաւը խօսեցաւ : Ղարձաւ տէրը ու պե-  
 տրոսին նայեցաւ , և յիշեց պետրոս տէրօջը ան խօսքը  
 որ իրեն ըսեր էր . հաւը խօսելէն առաջ իրեք ան-  
 գամ պիտի ուրանաս զիս չի գիտնալու : Այլ դուրս  
 ելաւ՝ դառնարձունք կուլար : Այլ ան մարդիկները՝  
 որ անիկայ կը պահէին , ծաղը կ'ընէին անիկայ՝ ու  
 կը զարնէին : Ա՛նոր երեսը կը ծածկէին ու կը տան-  
 ջէին , և անոր կը հարցունէին ու կ'ըսէին . մարգա-

րէայիր՝ ո՞վ է ան որ քեզի զարկաւ : Այլ ուրիշ շատ բաներ կ'ըսէին անոր հայհոյութեամբ : Այլ երբոր առտու եղաւ , ժողովուրդին ծերակոյտը՝ քահանայապետները ու կարդացողները մէկ տեղ եկան , և անիկայ տարին իրենց ատեանը հանեցին՝ ու ըսին , թէ որ դուն ես նէ քրիստոսը՝ ըսէ մեզի : Ասաւ անոնց . թէ որ ձեզի ըսեմ , անանկ ալ չի պիտի հաւատայք . ու թէ որ ձեզի բան մը հարցունեմ , ինծի պատասխան չի պիտի տայք՝ կամ արձրկէք : Սակայն ասկէ ետեւ որդին մարդոյ աստուծոյ զօրութեանը աջ կողմը պիտի նստի : Այլ ամէնքը ըսին . ուրեմն դուն աստուծոյ որդին ես . և ինքը ըսաւ անոնց . դուք կ'ըսէք , թէ ես եմ : Այլ անոնք ըսին . ալ ի՞նչ պէտք է մեզի վկայութիւն , որ մենք մենէ ատոր բերնէն լսեցինք :

Աւագ Հինգշաբթի .

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Ա . Կորն . Ժա . 17 .

Բայց ասիկայ կը պատուիրեմ , չէ թէ ձեզ կը գովեմ , ինչու որ դուք չէ թէ աղէկին՝ հապա գէշին ջանք կ'ընէք : Պինտ առաջ երբոր եկեղեցիին մէջ մէկ տեղ կը ժողվըվէք , կը լսեմ թէ ձեր մէջը բաժանմունքներ կայ . ու քիչ մը հաւատացի : Բայց ձեր մէջը երկպառակութիւններ պիտի ըլլան , որ ձեր մէջը եղած ընտիրները երեւան ելլեն : Աստի՛ դուք որ մէկ տեղ կը ժողվըվէք՝ տէրօջը տունը ձեզի հաց ուտելու տեղ չէ : Ինչու որ ամէն մէկը առաջ

կը վաղէ իր ընթրիքը ուտելու, ու մէկը անօթի՝ ու  
 մէկը հարբած: Երգեօք ուտելու ու խմելու տուն  
 չունիք մի. միթէ աստուծոյ եկեղեցին կ'անարգէք,  
 ու չքաւորները ամօթով կ'ընէք. ի՞նչ ըսես. ձեզ  
 գովե՛մ մի. ատ բանին մէջ չեմ գովիր: Ինչու որ  
 ես տէրոջմէն ընդունեցի ան բանը՝ որ ձեզի ալ ա-  
 ւանդեցի, թէ տէր յիսուսը իր մատնուած գիշերը  
 հացը առաւ, գոհացաւ՝ կտրեց և ըսաւ. առէք՝ ու  
 կերէք. աս է իմ մարմինս, որ ձեզի համար կը  
 տրուի. ասիկայ զիս յիշելու համար ըրէք: Ենանկ  
 ալ բաժակը ընթրիքէն ետեւ առաւ ու ըսաւ. աս  
 բաժակը նոր ուխտ է իմ արիւնովս. ասիկայ ըրէք,  
 քանի անգամ որ խրմէք զիս յիշելու համար: Վա-  
 նի անգամ որ աս հացը ուտէք, ու աս բաժակը խր-  
 մէք, տէրոջը մահը պատմեցէք, մինչեւ որ ան գայ:  
 Եսկէ ետեւ ան որ աս հացը կ'ուտէ, կամ տէրոջը  
 բաժակը կը խրմէ անարժանութեամբ, պարտական  
 պիտի ըլլայ տէրոջը մարմնոյն և արեանը: Թող  
 փորձէ մարդ իր անձը, ու ետքը ան հացէն ուտէ,  
 ու ան բաժակէն խրմէ: Այսն զի ան որ անարժա-  
 նութեամբ կ'ուտէ ու կը խրմէ, իր անձին դատաս-  
 տան կ'ուտէ ու կը խրմէ. ինչու որ տէրոջը մարմինին  
 խարութիւն չընէք: Ես պատճառաւ ձեր մէջը շատ  
 հիւանդներ ու ցաւագարներ կան, և շատերն ալ  
 կան՝ որ մեռած ալ են: Ինչու որ եթէ անձերնիս  
 քննելու ըլլայինք՝ չէինք դատապարտուէր: Եւ թէ  
 որ դատուինք՝ տէրոջմէն կը խրատուինք, որ աշխարհի

հետ չի դատապարտուինք: Աւտի եղբայրներ՝ երբ  
 քոր ուտելու համար մէկ տեղ կը ժողով ըլլիք, մէկը  
 մէկու սպասեցէք: Հապա թէ որ մէկը անօթի է՝  
 ան թող իր տունը ուտէ, որ դատապարտութեան  
 համար ժողով չլիք: Մայց ուրիշ բաները  
 երբոր գալու ըլլամ՝ ան ժամանակը կը պատուիրեմ:

Ս. Աւետարան, Ղ. Գ. Ի. Գ. 1.

Այն անոնց բոլոր բողոքները ելան՝ անիկայ  
 պիղատոսին տարին, և սկսեցին անոր վրայ չարա-  
 խօսութիւն ընել ու ըսել, ասիկայ գտանք՝ որ մեր  
 ազգը կը մոլորցունէր, ու կ'արգիլէր կայսրին հարկ  
 տալէն, և իրեն համար կ'ըսէր թէ՛ քրիստոսը թա-  
 գաւոր է: Այն պիղատոս հարցուց անոր ու ըսաւ,  
 հրէաներուն թագաւորը դուն էս, անիկայ ալ պա-  
 տասխան տուաւ անոր և ըսաւ, դուն ըսիր: Պիղա-  
 տոս քահանայապետներուն ու ժողովուրդներուն ը-  
 սաւ, աս մարդուն վրայ ես մէկ յանցանք մը չեմ  
 գտնար: Այն անոնք կը պնդէին ու կ'ըսէին, թէ ժո-  
 ղովուրդը տակնու վրայ կ'ընէ, բոլոր հրէաստանի  
 մէջ կը սորվեցունէ գալիլեայէն սկսած մինչեւ հոս:  
 Մայց պիղատոս երբոր լսեց գալիլեային վրայօք,  
 հարցուց թէ ան մարդը գալիլեացի՞ է: Այն երբոր  
 իմացաւ թէ հերովդէսի իշխանութենէն է, անիկայ  
 հերովդէսին տանել տուաւ, որ ան ալ ան օրերը  
 երուսաղէմ էր: Հերովդէս երբոր յիսուսը տեսաւ,  
 շատ ուրախացաւ, վասն զի ինքը շատ ժամանակէ

'ի վեր կը փափաքէր անիկայ տեսնալու . որովհետեւ շատ անգամ անոր վրայօք լսած էր , և կը յուսար որ անկէ եղած նշան մը տեսնայ : Շատ խօսքերով անոր հարցութորձ կ'ընէր . և ան բնաւ պատասխան չի տուաւ անոր : Վասհանայապետները ու կարգացողները կայներ էին՝ և աւելի սաստիկ չարախօսութիւն կ'ընէին անոր վրայ : Հերովդէս ալ իր զօրականներովը անարգեց անիկայ , ու ծաղր ընելով՝ ճերմակ լաթ մը հագուց անոր , ու նորէն պիղատուսին տանել տուաւ : Այլ պիղատոս ու հերովդէս անօրը բարեկամացան . որովհետեւ առաջ իրարու թշնամի էին : Պիղատոս քահանայապետները ու իշխանները ու ժողովուրդը կանչեց , և ըսաւ անոնց , սա մարդը ինծի բերիք հանեցիք ժողովուրդը մուտրցունողի մը պէս , և ահա ձեր առջին դատաստանը տեսայ , ու յանցանք մը չի գտայ սա մարդուն վրայ ստ ձեր ստոր վրայ ըրած չարախօսութիւններէն : Այլ ալ հերովդէս՝ որ ատիկայ անոր տանել տուի , ուստի՝ ատիկայ մեռնելու արժանի բան մը ըրած չէ . անոր պատիժ մը տամ ու արձրկեմ : Արովհետեւ ամէն մէկ տօնին պէտք էր մէկը անոնց արձրկել : Այլ անոնք բոլոր բաղմուտեամբ կը պօռային ու կ'ըսէին . վերցուր ատիկայ՝ ու բարարբան արձրկէ . որ ան քաղաքը եղած կռիւի մը ու մարդասպանութեան պատճառաւ բանտը դրուած էր : Պիղատոս նորէն սկսեց խօսիլ , ինչու որ ինքը յիսուսը արձրկել կ'ուզէր : Վայց անոնք նորէն կը կանչվըու

տէին ու կ'ըսէին . խաչը հանէ ասիկայ : Այլ ինքը  
 իրեք անգամ ըսաւ անոնց . ի՞նչ չարութիւն գործեց  
 ասիկայ , ես ասոր վրայ մեռնելու յանցանք մը չի  
 գտայ , ասոր պատիժ մը տամ ու արձըկեմ : Այլ ա-  
 նոնք մեծ ձայնով կ'ստիպէին ու կ'ուղէին անիկայ  
 խաչը հանել . և էվելըք կը զօրանար անոնց ու քա-  
 հանայապետներուն ձայնը : Այլ պիղատոս հաւանու-  
 թիւն տուաւ անոնց ու զածը ընելու : Քարաբքան  
 արձըկեց անոնց՝ որ խոռվութեան ու մարգասպա-  
 նութեան համար բանտը գրուած էր , որ անիկայ  
 կ'ուղէին . բայց յիսուսը անոնց կամացը մատնեց :  
 Արբոր անիկայ առին գացին , սիմոն կիւրկնացի  
 մէկը բռնեցին՝ որ արտէն կուգար . և խաչը անոր  
 վրայ դրին յիսուսին ետեւէն բերելու : Այլ ժողո-  
 վուրդին բազմութիւնը անոր ետեւէն կ'երթար , ու  
 կնիկներուն ալ՝ որ կ'ողջային ու կ'ախոսոսային անի-  
 կայ : Վարձաւ յիսուս և ըսաւ անոնց . երուսաղէմի  
 աղջիկներ , իմ վրաս մի լաք , հապա ձեր անձերուն  
 վրայ ու ձեր զակրներուն վրայ լացէք : Ինչու որ  
 օրեր պիտի գան՝ որ ան ժամանակը պիտի ըսեն  
 թէ՛ երնէկ ամուլներուն ու ան փորերուն՝ որ չի  
 ծնան , և ան ծիծերուն՝ որ կաթ չի տուին : Ինչ  
 ժամանակը պիտի սկսին ըսել լեռներուն՝ թէ ին-  
 կէք մեր վրայ , ու բլուրներուն՝ թէ մեզ ծածկե-  
 ցէք : Այսն զի թէ որ կանսնչ փատին ասանկ կ'ը-  
 նեն , հապա չորին ի՞նչ պիտի ըլլայ : Արիչ երկու  
 չարագործներ ալ բերին՝ որ անոր հետը սպաննեն :

Երբոր գողգոթա ըսուած տեղը գացին , հոն խաչը  
հանեցին անիկայ . և ան չարագործներն ալ մէկը  
աջ կողմը և միւսը ձախ կողմը խաչեցին : Եւ յի-  
սուս ըսաւ . հայր , թողու թիւն տուր ատոնց , ինչու  
որ ըրածնին չեն գիտեր : Եւ իր հանդերձները բաժ-  
նելու ժամանակը՝ վիճակ ձգեցին : Եւ ժողովուրդը  
կայնած կը նայէր . իշխանները անոնց հետ զինքը  
կը նախատէին ու կ'ըսէին . ուրիշները ապրեցուց ,  
թող ինքըզինքն ալ ապրեցունէ՝ թէ որ ատիկայ է  
քրիստոսը աստուծոյ ընտրեալ որդին : Օ՛ ինուոր-  
ներն ալ անիկայ ծաղո՞ կ'ընէին , դիմացը կուգային  
քացախ կուտային անոր՝ և կ'ըսէին . թէ որդուն ես  
հրէաներուն թագաւորը՝ քու անձդ ազատէ : Եւ  
գիր մը գրուած էր իր վրան , յունարէն և զաղմա-  
տերէն ու եբրայեցերէն գրով , թէ՛ անիկայ է հրէից  
թագաւորը : Բայց ան կախուած չարագործներուն  
մէկը կը հայհոյէր անոր , և կ'ըսէր . դուն քրիստոսը  
չե՞ս մի , ազատէ քու անձդ ու մեղ : Բնկերը պա-  
տասխան տուաւ անիկայ չեխելով ու ըսաւ . դուն  
աստուծմէ չե՞ս վախնար՝ որ նոյն պատիժին մեջն ես :  
Եւ մենք իրաւ , մեր ըրածներուն արժանաւոր վը-  
ճարքը կ'առնենքկոր . բայց ատիկայ մէկ գէշ բան  
մը չի գործեց : Եւ յիսուսին ըսաւ . տէր , իս միտքդ  
բեր , երբ որ քու թագաւորութիւնովդ կուգաս : Եւ  
յիսուս ըսաւ անոր , իրաւ կ'ըսեմ քեզի . դուն այսօր  
իմ հետս դրախտին մէջ պիտի ըլլաս : Եւ ժամը  
վեցին ատեններն էր , ու բոլոր եր'ըին վրայ խաւար

եղաւ մինչեւ ժամը ինը • արեգակը խաւարեցաւ •  
 Եւ տաճարին վարագոյրը մէջ տեղէն պատուեցաւ •  
 Եւ յիսուս բարձր ձայնով մը կանչեց ու ըսաւ •  
 Հայր , քու ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգիս • երբոր  
 ըսաւ տօհկայ , հոգին հանեց • Եւ հարիւրապետը  
 ան եղած բաները որ տեսաւ , աստուծոյ փառք  
 տուաւ • և ըսաւ , իրաւցունէ սս մարդը արգար էր •  
 Եւ բոլոր ժողովուրդը որ եկեր էին , ու կը տեսնային  
 ան տեսարանը ու եղածները , կուճքերնին զարնե-  
 լով • ետ կը դառնային • Եւ մէն իր ճանչուորներն ալ  
 հեռուն կայներ էին • և ան կնիկները որ գալիկայէն  
 իր հետը եկեր էին • ան բաները կը տեսնային •

Աւագ Ուրբաթ .

ՄԱՂԹԱՆՔ .

Եւ մենակալ Եւստուած , կը խնդրենք այս քու ըն-  
 տանիքիդ վրայ գթութեամբ նայելու , որուն հա-  
 մար որ մեր Տէր Հիսուս Քրիստոսը յանձնառու  
 եղաւ մատնուելու և անօրէններուն ձեռքը յանձ-  
 նուելու ու խաչին վրայ մեռնելու , որ հիմայ կենդա-  
 նի է ու կը թագաւորէ միանգամայն քեզի և Սուրբ  
 Հոգւոյն հետ միշտ մէկ Եւստուած մը , յաւիտեանս  
 յաւիտենից . Եւ Ամէն :

Եւ մենակարող և յաւիտենական Եւստուած , որ  
 քու Հոգիովդ եկեղեցւոյ բոլոր մարմինը կը կառա-  
 վարուի ու կը սրբուի . Ընդունէ մեր աղաչանքները

ու պաշտօններն , որ կը մատուցանենք քու առջիդ քու սուրբ եկեղեցւոյդ մէջի ամէն աստիճանաւոր անձերուն համար . որպէս զի անոր ամէն մէկ անդամը իր կոչմանը ու պաշտամանը մէջ կարող ըլլայ ճշմարտապէս ու սրբութեամբ քեզի ծառայելու , մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհքովը . Ա՛հն :

Ո՛վ բարեգութ Աստուած , դուն որ բոլոր մարդկային ազգը ստեղծեցիր , և քու ստեղծածներուդ մէկը չես անարգեր , և ոչ ալ մեղաւորին մասը կը կամիս , հապա անոր ապաշխարելը ու ապրիլը . Ողորմէ՛ բոլոր հրէաներուն , սյլազգաներուն , անհաւատներուն և հերետիկոսներուն . և խափանէ՛ բոլոր անոնց տգիտութիւնը , սրտի յամառութիւնը և քու խօսքերուդ արհամարհութիւնը . և ո՛վ ամենօրէնեալ Տէր , ժողովէ անոնք քու տունդ՝ քու ոչխարներուդ հօտին մէջ , որ ճշմարիտ իսրայէլացիներուն հետ մէկ տեղ փրկուին , և մէկ հօտ ըլլան մեր Տէր Յիսուս Քրիստոսի մի միայն հովուին տակը , որ կենդանի է ու կը թագաւորէ միանգամայն քեզի և Սուրբ Հոգւոյն հետ մէկ Աստուած մը , յաւիտեանս յաւիտենից . Ա՛հն :

Թուղթ Պողոսի Աւաքելոյ . Ե՛րա . Ժ . 1 .

( )րէնքը դալու բարիքներուն շուքը ունէր , ու ոչ թէ ան բաներուն կերպարանքը , տարուէ տարի որ միշտ նոյն պատարագները կը մատուցանեն , կա-

բող չեն ան մատուցանողները կատարել . հապա  
թէ չէ՛ կը դադրէին մատուցանելէն , ինչու որ ան-  
գամ մը պաշտօնեաները սրբուած ըլլալով ետքը  
խղճմտանք մը չէին ունենար , բայց ամէն տարի ա-  
նով նորէն մեղքերը կը յիշէին : Ինչու որ ան նո-  
խալներուն ու ցուլերուն արիւնը չէր կրնար մեղ-  
քերը վերցունել : Անոր համար իր աշխարհ մտնա-  
լու ժամանակը կ'ըսէ . զոհեր ու պատարագներ չու-  
ղցիր դուն . հապա ինծի մարմին մը հաստատեցիր .  
ողջակէզներուն ու մեղքի համար եղողներուն չի  
հաւնեցար : Ան ժամանակը ըսի թէ ահա եկայ .  
գիրքերուն պատմութեանը մէջ ինծի համար գը-  
րուած է՝ քու կամքդ ընելու ո՛վ աստուած : Ա՛ երբ  
կ'ըսէ , թէ՛ զոհերուն՝ ու պատարագներուն՝ ու ող-  
ջակէզներուն՝ ու մեղքի համար եղողներուն չի հաւ-  
նեցար ու չուղցիր , որոնք օրէնքին պէս կը մատու-  
ցուէին : Հետոյ կ'ըսէ , ահա ես կուգամ քու կամքդ  
ընելու ո՛վ աստուած , առաջինը կը մերժէ՛ որ երկ-  
րորդը հաստատէ : Ար ան կամքովը մենք ալ սրբուե-  
ցանք՝ յիսուս քրիստոսի մարմինին անգամ մը պա-  
տարագուելովը : Այլ ամէն քահանայապետ միշտ ան  
պաշտօնին մէջ կը կենայ , ու նոյն պատարագները  
չատ անգամ կը մատուցանէ , որոնք բնաւ կարող  
չեն մեղքերը մէկ դի վերցունելու : Բայց ասիկայ  
մեղքի համար մէկ պատարագ մը մատույց , և յաւի-  
տեան աստուծոյ աջ կողմը նստաւ : Այլ ասկէ ետեւ  
ինքը կ'սպասէ՛ մինչեւ որ իր թշնամիները իր ոտքին

տակը դրուին : Ինչու որ մէկ պատարագով մը յաւ  
 ւփտեան կատարեց ան սրբուածները : Բայց հոգի  
 սուրբ ալ մեզի կը վկայէ՝ առաջուց ըսելէն ետեւ ,  
 թէ ասիկայ է ան ուխտը՝ որ ես անոնց հայրերուն  
 հետ ան օրերէն ետեւ պիտի ընեմ , կ'ըսէ տէրը .  
 իմ օրէնքներս անոնց սրտին մէջը պիտի տամ , և ա-  
 նոնց խորհուրդներուն մէջ պիտի գրեմ անոնք :  
 Ատքը կ'ըսէ թէ՝ անոնց մեղքերը և անոնց անօրէ-  
 նութիւնները ալ չի պիտի յիշեմ : Աւստի ուր որ  
 մեղքի թողութիւն է , ալ մեղքի համար պատարագ  
 պէտք չէ : Ապա ուրեմն եղբայրներ՝ համարձակու-  
 թիւն ունինք սուրբ տեղը մտնալու յիսուսի արիւնու-  
 վը . մէկ նոր ու կենդանի ճամբով մը՝ որ բացուեցաւ  
 մեզի վարագուրին ձեռքովը՝ այսինքն իր մարմինովը .  
 և աստուծոյ տանը վրայ մէկ մեծ քահանայ մը ունե-  
 նալով , մօտենանք ճշմարիտ սրտով՝ լեցուն հա-  
 ւատքով , չար խիղճերէն սիրտերնիս լուանալով՝ ու  
 մարմիննիս սուրբ ջուրով մկրտելով : Հաստատ  
 բռնենք ան անշարժ յոյսին խոստովանութիւնը , ինչ-  
 չու որ հաւատարիմ է ան որ խօսք տուաւ : Աւ հոգ  
 տանինք մէկզմէկ սիրոյ ու բարեգործութեան յոր-  
 դորելու , և մէկ տեղ ժողովրդիկը չի թողունք , ինչ-  
 պէս որ ոմանք սովորած են . հապա իրար յորդո-  
 բենք , ու այնչափ էվելօք՝ որչափ որ ան օրը մօտե-  
 ցած կը տեսնօք :

Ս. Աւետարան. Յ. Է. ԺԺ. 1.

Դն ժամանակը պիղատոս յիսուսը առաւ՝ ու ծեծեց: Այլ զինուորները փուշերէ թագ շինելով՝ անոր գլուխը դրին, և իրեն ծիրանի լաթ մը հագուցին, և կուգային անոր՝ ու կ'ըսէին, սղջ եղեր հրէից թագաւոր, և անոր ապտակներ կը զարնէին: Պիղատոս նորէն դուրս ելաւ և ըսաւ անոնց, ահա անիկայ դուրս ձեզի կը բերեմ, որ գիտնաք թէ ես անոր վրայ վնաս մը չեմ գտնար: Հիսուս դուրս ելաւ, և ունէր փուշերէ թագ՝ ու ծիրանի հանդերձ, և ըսաւ անոնց, ահա ատ մարդը ձեզի: Քահանայապետները և սպասաւորները երբոր անիկայ տեսան ձայներնին վերուցին ու ըսին, խաչը հանէ՛ խաչը հանէ աւտիկայ, պիղատոս ըսաւ անոնց, ձեզի առէք ատիկայ, ու ձեզմէ խաչը հանեցէք, ինչու որ ես ատոր վրայ յանցանք մը չեմ գտնար: Ըրէաները պատասխան տուին անոր, մենք օրէնք ունինք, և մեր օրէնքին նայելով պէտք է որ մեռնի, ինչու որ իր անձը աստուծոյ որդի ըրաւ: Արբոր պիղատոս աս խօսքերը լսեց՝ էվելօք վախցաւ: Աորէն մէյ մ'ալ պալատը մտաւ, և ըսաւ յիսուսին, ուսկից ես դուն, և յիսուս պատասխան չի տուաւ անոր: Պիղատոս ըսաւ անոր, ինձի հետ չե՞ս խօսիր, չե՞ս գիտեր որ ես իշխանութիւն ունիմ քեզ խաչը հանելու, և իշխանութիւն ունիմ քեզ արձրկելու: Հիսուս պատասխան տուաւ, դուն իմ վրայ ամենեւին իշխանութիւն մը չունէիր, թէ որ քեզի վերէն տրուած

շրջար . անոր համար ան որ իս քեզի մասնեց , անոր  
 մեղքը էւելի մեծ է : Ալ անկէ ետեւ պիղատոս կ'ու  
 զէր անիկայ արձըկել . բայց հրէաները կը կանչ  
 վըռտէին ու կ'ըսէին . թէ որ ատիկայ արձըկես՝  
 կայսրին բարեկամը չես . ամէն ով որ ինքըզինքը  
 թագաւոր կը կանչէ , կայսրին հակառակ է : Բայց  
 պիղատոս երբոր աս խօսքերը լսեց , դուրս հանեց  
 յիսուսը . և նստաւ բեմին վրայ , ան տեղը՝ որ քա  
 ռայատակ կ'ըսուէր , ու երբսցեցերէն կապալթա :  
 Չատկի ուրբաթ օրն էր , ու ժամը վեցին ատն  
 ներն էր , և հրէաներուն ըսաւ . ահա ձեր թագա  
 ւորը ձեզի : Ալ անոնք կը կանչվըռտէին , վերցուր  
 մեր մէջէն՝ վերցուր մեր մէջէն , և ատիկայ խաչը  
 հանէ : Պիղատոս ըսաւ անոնց . ես ձեր թագաւորը  
 խաչը պիտի հանեմ . պատասխան տուին քահանա  
 յապետները . մենք կայսրէն ՚ի զատ թագաւոր չու  
 նինք : Ան ժամանակը անիկայ անոնց ձեռքը տուաւ  
 որ խաչուի : Ալ անոնք անիկայ առած կը տանէին ,  
 ու խաչափայտը ինքիրմէն վերուցեր էր , և գագա  
 թան ըսուած տեղը կ'ելէր , որ երբայցեցերէն գող  
 գոթա կ'ըսուի . հոն անիկայ խաչը հանեցին , և ա  
 նոր հետ ուրիշ երկուք ալ մէկ դիէն ու մէկալ  
 դիէն , ու մէջ տեղը յիսուսը : Տախտակ մըն ալ գրեց  
 պիղատոս , ու խաչին վրայ գրաւ . և գրուած էր ,  
 յիսուս նազովընցի՝ թագաւոր հրէից : Հրէաներէն  
 շատերը ան տախտակը կարդացին , ինչու որ քաղա  
 քին մօտ էր ան տեղը՝ ուր որ յիսուս խաչուեցաւ . և

գրուած էր երբայեցերէն , դաղմատերէն և յունարէն : Ըրէից քահանայապետները պիղատոսի ըսին . մի գրեր թագաւոր հրէից , հապա թէ ինքը ըսաւ թագաւոր եմ հրէից : Պիղատոս պատասխան տուաւ . ինչ որ գրեցի նէ՝ գրեցի : Մայց զինուորները երբոր յիսուսը խաչը հանեցին , անոր լաթերը առին՝ ու չորս բաժին ըրին , ամէն մէկ զինուորին բաժին մը . միայն թէ շապիկը՝ որովհետեւ առանց կարի էր վերէն՝ ի վար բոլորը հուսուած . իրարու ըսին . աւտիկայ չի պատռենք , հապա վիճակ ձգենք ատոր վրայ՝ որի որ ելլէ . որ ան գրուածքը կատարուի՝ որ կ'ըսէ . իմ լաթերս մէջերնին բաժնեցին , ու շապիկիս վրայ վիճակ ձգեցին : Օ ինուորները աս բանը ըրին : Աւ յիսուսի խաչին քովը կայներ էին իր մայրը , և մօրը քոյրը մարիամ՝ կղէովպային կինը , ու մարիամ մագդաղենացին : Ճիսուս երբոր իր մայրը տեսաւ և ան սիրելի աշակերտը՝ որ մօտը կայնած էր , ըսաւ մօրը . կնիկ՝ ահա քու որդիդ : Ատքը աշակերտին ըսաւ , ահա քու մայրդ . և ան ժամանակէն անիկայ իր քովը առաւ : Անկէ ետեւ երբոր յիսուս գիտցաւ թէ ամէն բան կատարեալ է , որ ան գրուածն ալ կատարուի , ըսաւ . ծարաւ եմ : Աւ հոն քացախով լեցուն աման մը կար . անոնք ալ սպունգ մը քացախով թաթխած լեղին հետ՝ զսպայի մշտիկին վրայ փաթթած՝ անոր բերանը տուին : Ճիսուս երբոր քացախով լեղին առաւ՝ ըսաւ . ամէն բան կատարուեցաւ , և գլուխը ծռելով

հոգին աւանդեց : Բայց հրէաները՝ որովհետեւ ուր  
բաթ էր, որ չըլլայ թէ ան մարմինները խաչին վրայ  
մեան մինչեւ շաբաթ օրը . ինչու որ ան շաբաթ օրը  
մեծ օր էր . պիղատոսին աղաչեցին որ անոնց ծուն-  
կերը ջարդեն ու վերցուին : Օ, ինուորները եկան՝ ու  
առջինին ծունկերը ջարդեցին, անանկ ալ միւսինը՝  
որ անոր հետ խաչը ելած էր : Բայց երբոր յիսուսին  
եկան՝ ու տեսան որ արդէն ինքը մեռած էր . անոր  
ծունկվները չի ջարդեցին . հապա զինուրներէն  
մէկը գեղարդով անոր կողը խոցեց . ու շուտ մը ա-  
րիւն ու ջուր ելաւ : Եւ ան որ տեսաւ՝ վկայեց, և ա-  
նոր վկայութիւնը ճշմարիտ է, և ինքը գիտէ որ  
ճշմարիտ կ'ըսէ, որ դուք հաւատարք : Եւս բանը ե-  
ղաւ՝ որ կատարուի ան գրուածքը, թէ անոր ոսկորը  
չի պիտի փշրուի : Եւ դարձեալ միւս գիրը կ'ըսէ,  
թէ անոր պիտի նային անոնք՝ որ անիկայ խոցեցին :

Չատկի Հսկման Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Պարգեւէ ո՛վ Տէր, որ ինչպէս որ մեր Փրկիչ  
Յիսուս Քրիստոս քու Որդւոյդ մահուամբը մկր-  
տուեցանք, անանկ ալ մեր ապականեալ ցանկու-  
թիւնները ուրանալով անոր հետ թաղուինք . և որ  
գերեզմանին ու մահուան դուռնէն անցնելով կա-  
րո՞ղ ըլլանք մեր ուրախալի յարութեանը ժամանե-  
լու, քու միածին Որդւոյդ մեր Տէր Յիսուս Քրիս-

տոսի արժանաւորութեամբը , որ մեզի համար մե-  
ռաւ , թաղուեցաւ ու յարութիւն առաւ . Լ.Մէն :

Թուղթ Պետրոսի Առաքելոյ . Ա. Թ. Գ. 17 .

Լ.Ղէկ է բարեգործներուն՝ թէ որ ուղեն աս-  
տուծոյ կա՛նքին պէս չարչարուիլ , քան թէ չարա-  
գործներուն : Պատճառն որ քրիստոս ալ մեղքի  
համար անգամ մը ձեռ վրայ մեռաւ , արդարը ան-  
արդարներուն վրայ , որ ձեզ աստուծոյ մօտեցունէ .  
որ ինքը թէպէտ մարմինով մեռաւ , բայց հոգիով  
կենդանի է : Որով գնաց քարոզեց ան հոգիներուն՝  
որ բանտին մէջն էին . որոնք ժամանակ մը ապրս-  
տամբ էին , երբ որ աստուծոյ երկայնմտութիւնը կը  
ներէր անոնց նոյին օրերը . երբոր տապանը կը շի-  
նուէր . որուն մէջ քիչերը՝ այսինքն ութը հոգիի  
չտի ապրեցան : Որ նոյն օրինակին պէս մկրտու-  
թիւնը ձեզ ալ պիտի ապրեցունէ , չէ թէ մարմինին  
աղտը մէկ դի հանելով , հապա բարի խղճմտանքին  
վկայութիւնը առ սատուած յիսուս քրիստոսի յա-  
րութեամբը , որ աստուծոյ ան կողմն է՝ երկինքը գա-  
ցած . հրեշտակները ու իշխանութիւնները ու զօ-  
րութիւնները իրեն հնազանդած :

Ս . Աւետարան . Մ. Գ. Ի . 57 .

Երբոր իրիկուն եղաւ , արխմատիսցէն հարուստ  
մարդ մը եկաւ , որուն անունը յովսէփ էր , որ ինքն  
ալ յիսուսի աշակերտ էր : Լ.Սիկայ պիղատոսին

գնաց , յիսուսի մարմինը խնդրեց . ան ժամանակը պիղատոս Հրաման ըրաւ որ մարմինը տան : Ալ յովսէփ մարմինը առաւ՝ մաքուր կտաւներով փաթթեց , ու նոր գերեզմանի մը մէջ դրաւ՝ որ քարէ փորեց , և գերեզմանին դուռը գոցելու մէկ մեծ քար մը գլխտորցունելով՝ գնաց : Հոն էր մարիամ մագդաղենացին՝ և միւս մարիամը , գերեզմանին դիմացը նըստած : Ալ վաղուան օրը՝ որ ուրբաթէն ետեւ է , քահանայապետները ու փարիսեցիները ժողով լվեցան պիղատոսին քով , և ըսին , տէր , միտքերնիս եկաւ որ ան մոլորեցուցիչը իր ողջ եղած ժամանակը կ'ըսէր թէ՛ իրեք օրէն ետեւ յարութիւն կ'առնեմ : Ուստի Հրաման ըրէ որ մինչեւ իրեք օր գերեզմանին հոգ տանին , չըլլայ թէ իր աշակերտները գիշերանց գան անիկայ գողնան , ու ժողովուրդին ըսեն , թէ մեռելներէն յարութիւն առաւ . ու ետքի մոլորութիւնը առջինէն գէշ ըլլայ : Պիղատոս ըսաւ անոնց , դուք զինուորներ ունիք , գացէք զգուշութիւն ըրէք ինչպէս որ գիտէք : Ալ անոնք գացին գերեզմանին զգուշացան , ու զինուորներուն հետ քարը զմռեցին :

Զատիկի Օրը .

Առտուան Ազոթի ժամանակը պիտի երգուի կամ ըսուի այս հետեւեալը , եկայք ցնծացուք Սաղմոսին տեղը .

Քրիստոս մեր Չատկի գառը մեզի համար զոհուեցաւ .

Արեմն այս սոնախմբութիւնը կատարենք . չէ

Թէ Հին խմորովը, ու չէ Թէ Հարութեան ու անդգա-  
մութեան խմորովը. հապա անկեղծութեան ու ճըշ-  
մարտութեան չի խմորած հացովը. Լ. Կորն. Ե. 7, 8 :

Վրիստոս մեռելներէն յարութիւն առաւ, աս-  
կէ ետեւ ալ չի մեռնիր, և մահը անոր վրայ ալ չի  
տիրեր :

Ս ասն զի ան որ մեռաւ՝ անգամ մը մեղքի հա-  
մար մեռաւ, և ան որ կենդանի է՝ կենդանի է աս-  
տուծոյ :

Լնանկ ալ դուք ձեր անձը մեղքին մեռած սե-  
պեցէք, ու աստուծոյ կենդանի մեր տէր յիսուս  
քրիստոսով. Լուով. զ. 9, 10, 11 :

Վրիստոս մեռելներէն յարութիւն առաւ, ու  
ննջեցեալներուն առաջին պտուղը եղաւ :

Ինչու որ մարդով եղաւ մահը, և մարդով մեռել-  
ներուն յարութիւնը :

Ինչպէս որ ադամով ամէնքը կը մեռնին, անանկ  
ալ քրիստոսով ամէնքը պիտի ողջնան. Լ. Կորն.  
ԺԵ. 20, 21, 22 :

Փառք շօր, և Որդւոյ, և շողոյն Սրբոյ.

Որպէս էր ՚ի սկզբանէ, սոյժմ, և միշտ, և յաւի-  
տեանս յաւիտենից. Լ. Տէն :

---

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Լմենակալ Լստուած, որ քու միածին Որդւոյդ  
Յիսուս Վրիստոսի միջնորդութեամբը մահուան

յաղթեցիր , և մեզի յաւիտենական կենաց դուռը  
բացիր . Խոնարհեալ կ'աղաչենք , որ ինչպէս նախա-  
ժամանելով քու մասնաւոր շնորհքդ մեր միտքերուն  
մէջ բարի փափաքներ կը հաստատես . անանկ ալ ա-  
նոնք քու շարունակ օգնականութեամբդ բարի վախ-  
ճաններու հասցունենք , մեր Տէր : Իսուս Վրիստոսի  
շնորհքովը , որ կենդանի է ու կը թագաւորէ միան-  
գամայն քեզի և Սուրբ Հոգւոյն հետ միշտ մէկ Աս-  
տուած մը , յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Կողոս . 4 . 1 .

Թէ որ քրիստոսի հետ յարութիւն առիք , ապա  
ուրեմն վերինը խնդրեցէք , ուր որ քրիստոս աստու-  
ծոյ աջ կողմը կը նստի . ան վերինը մտմտացէք , չէ  
թէ ասիկայ՝ որ երկրիս վրայ է : Աստն զի մեռաք՝ ու  
ձեր կեանքը քրիստոսով աստուծոյ քով պահուած  
է : Բայց երբոր քրիստոս ձեր կեանքը յայտնուի ,  
ան ժամանակը դուք ալ փառքով անոր հետ պիտի  
յայտնուիք : Ուստի ձեր երկրաւոր անդամները ըս-  
պաննեցէք . մէկ դի ձգեցէք պոռնկութիւնը , պղծ-  
ծութիւնը , աղտեղութիւնը , չար ցանկութիւնը ու  
ազահութիւնը՝ որ կռապաշտութիւն է . սա բանե-  
րուն համար աստուծոյ բարկութիւնը անհաւանու-  
թեան որդիքներուն վրայ կուգայ , որոնց մէջ ժա-  
մանակ մը դուք ալ կ'երթայիք , երբոր անոնց մէջ  
կ'ապրէիք :

Ս. Աւետարան. Յ. 1. 1.

Սէկշարթի օրը մարիամ մագդաղենացին առտուանց արշալոյսին գերեզմանը կուգայ, ու կը տեսնայ որ քարը գերեզմանին դուռնէն վերցուած էր: Ատքը կը վազէ կուգայ սիմոն պետրոսին և միւս աշակերտին՝ որ յիսուս կը սիրէր, և կ'ըսէ անոնց. տէրը ան գերեզմանէն վերուշին, և չեմ գիտեր ուր դրին անիկայ: Ալա պետրոս և միւս աշակերտը՝ ու գերեզմանը կուգային: Արկուքն ալ մէկ տեղ կը վազէին, և միւս աշակերտը շուտ մը պետրոսէն առաջ վազեց անցաւ, ու առաջ գերեզմանը եկաւ: Ալ ծռելով տեսաւ որ կտաւները հոն կեցեր էին, քայց ինքը ներս չի մտաւ: Սիմոն պետրոս ալ հասաւ՝ որ անոր ետեւէն կուգար, և գերեզմանը մտաւ ու տեսաւ կտաւները՝ որ հոն կեցեր էին, և վարշամակը՝ որ անոր գլուխն էր, միւս կտաւներուն հետը չէր, հապա ծալած մէկ դի մը դրած էր: Ան ժամանակը միւս աշակերտն ալ մտաւ, որ առաջ գերեզմանը եկեր էր, տեսաւ ու հաւատաց: Ինչու որ անոնք գիրքերը դեռ չէին գիտեր, որ պէտք է անոր մեռելներէն յարութիւն առնել: Աշակերտները նորէն մէկայնրուն քով գացին:

Չասկի Երկուշարթի Օրը.

ՍԱՂԹԱՆՔ.

Ամենակալ Աստուած, որ քու միածին Որդւոյդ Յիսուսի Վրիստոսի միջնորդութեամբը մահուան

յաղթեցիր, և մեզի յաւիտեանական կենաց դուր  
բացիր. Ատնարհեալ կ'աղաչենք, որ ինչպէս նա-  
խաժամանելով քու մասնաւոր շնորհքդ մեր միտքե-  
րուն մէջ բարի փափաքներ կը հաստատես, անանկ  
ալ անոնք քու շարունակ օգնականութեամբ բարի  
վախճաններու հասցունենք, մեր Տէր Հիսուս Քրի-  
ստոսի շնորհքովը, որ կենդանի է ու կը թագա-  
ւորէ միանգամայն քեզի և Սուրբ Հոգւոյն հետ  
միշտ մէկ Աստուած մը, յաւիտեանս յաւիտենից,  
Ա.Տ.Ն.:

Գրծք Առաքելոց. Ժ. 34.

Պետրոս իր բերանը բացաւ՝ ու ըսաւ. Ճշմարիտ  
գիտեմ, որ աստուծոյ քով ակնառութիւն չի կայ,  
հապա ամէն ազգի մէջ՝ ան որ անկէ կը վախնայ՝ ու  
արդարութիւն կը գործէ, անոր ընդունելի է: Ան  
խօսքը իսրայէլի որդւոցը խրկեց՝ յիսուս քրիստոսի  
ձեռքովը խաղաղութիւն աւետարանելու, ասիկայ է  
ամէնուն տէրը: Աուր ձենէ գիտէք ան խօսքը՝ որ  
բոլոր հրէաստանի մէջ եղաւ գալիլեայէն սկսած ան  
մկրտութենէն ետեւ՝ որ յօհանէս քարոզեց: Հի-  
սուսը որ նազարէթէն էր՝ աստուած օժեց անիկոյ  
հոգւով սրբով ու զօրութեամբ. որ կը պարտէր  
բարիք ընելու, և սատանայէն բռնուածները բժշ-  
կելու. ինչու որ աստուած անոր հետ էր: Աւ մենք  
կը վրայենք ան ամէն բաներուն՝ որ հրէաստանի  
երկրին ու երուսաղէմի մէջ ըրաւ. որ ինքն ալ փայ-

տէն կախած մեռուցին : Աստուած անիկայ երբորդ  
օրը յարույց , ու յայտնեց անիկայ . չէ թէ բոլոր  
ժողովուրդին , հասցաւ մեզի վկաներուս՝ առաջուց  
աստուծմէ ընտրուածներուս . որ մենք իրեն հետ  
կերանք ու խմեցինք ալ , իր մեռելներէն յարութիւն  
առնելէն ետքը : Այլ պատուիրեց մեզի ժողովուրդին  
քարոզելու ու վկայութիւն տալու , թէ անիկայ է  
աստուծմէ սահմանուածը՝ կենդանիներուն ու մե-  
ռելներուն դատաւորը : Անոր բոլոր մարգարէները  
կը վկայեն , թէ ամէն անոր հաւատացողները անոր  
անունովը մեղաց թողութիւն կ'ընդունին :

Ս . Աւետարան . Դ . Ի . 15 .

Ահա անոնցմէ երկուքը ան օրը գեղ մը կ'եր-  
թային , որ երուսաղէմէն հարիւր վաթսուս ասպա-  
րէզ հեռու էր , ու անոր անունը էմմաուս էր : Այլ  
անոնք մէկըմէկու հետ բոլոր ան եղած բաներուն  
վրայ կը խօսէին : Այլ եղաւ որ անոնց խօսելու ու  
վէճ ընելու ժամանակը՝ յիսուս ինքն ալ մօտեցաւ՝  
ու հետերնին կ'երթար : Բայց անոնց աչքերը բըռ-  
նուած էին՝ որ զինքը չի ճանչնան : Այլ ըսաւ անոնց .  
Ի՞նչ է ատ խօսքերնիդ՝ որուն համար իրարու հետ  
վէճ կ'ընէք քալած ստեննիդ , ու տրամած էք : Պա-  
տասխան տուաւ անոնցմէ մէկը՝ որուն անունը կղէ-  
ովպաս էր , և ըսաւ անոր . դ՞ու՞ն մինակ մնացեր ես  
երուսաղէմի մէջ , որ աս օրերս հոն եղածները չես  
գիտեր : Այլ ինքը ըսաւ անոնց . Ի՞նչ , և անոնք ըսին .

նաղովրեցի յիսուսին համար, որ մարգարէ մարդ  
 մը եղաւ՝ զօրաւոր գործքերով ու խօսքերով աս-  
 տուծոյ և բոլոր ժողովուրդին առջին: Ընչպէս քա-  
 հանսյապետները ու մեր իշխանները անիկայ մա-  
 հուան դատաստանին մատնեցին՝ ու խաչը հանեցին  
 անիկայ: Սենք կը յուսայինք թէ՛ ան է որ իսրայելը  
 պիտի ազատէ, և աս ամէն բաներուն վրայ աս եր-  
 րորդ օրն է՝ որ ան բանը եղաւ: Ասև մեր մէջէն քա-  
 նի մը կնիկներ ալ մեզ զարմացուցին, որ անոնք  
 առտուանց կանուխ գերեզմանը գացին, ու անոր  
 մարմինը չի գտան, եկան ու ըսին, թէ հրեշտակնե-  
 րու երեւոյթ ալ տեսան, որոնք անոր համար ըսեր  
 էին թէ ողջ է: Աւ մենէ ոմանք գերեզմանը գացին,  
 ու անանկ գտան՝ ինչպէս որ ան կնիկները ըսին,  
 բայց զինքը չի տեսան: Աւ ան ըսաւ անոնց, ով ան-  
 միտներ ու սրտով թմրածներ ամէն ան բաներուն  
 հաւատալու, որ մարգարէները խօսեցան: Դէ՞ որ  
 ան բաները պէտք էր քրիստոսի քաշել, ու իր փառ-  
 քը մտնալ: Աւ սկսեց մովսէսէն ու բոլոր մարգա-  
 րէներէն կը մեկնէր անոնց, ինչ որ իրեն համար  
 բոլոր գիրքերուն մէջ գրուած է: Արբոր ան գեղին  
 մօտեցան՝ ուր որ կ'երթային, ինքն ալ կը ցըցունէր  
 որպէս թէ հեռու տեղ մը պիտի երթայ: Բայց  
 զինքը բռնեցին ու ըսին, մեր քովը կեցիր, ինչու որ  
 իրիկուն է, և օրուան ժամանակը անցած է, ու հոն  
 մտաւ անոնց հետ մնալու: Աւ եղաւ որ երբոր ինքը  
 անոնց հետ սեղան նստաւ, հացը առաւ՝ օրհնեց՝

կտրեց ու տուաւ անոնց : Այս անոնց աջի ընկերը բացուեցան , ու զինքը ճանչցան . և ինքը աներեւոյթ եղաւ անոնցմէ : Այս մէկը մէկու կ'ըսէին . չէ՞ որ սիրտերնիս ալ ներսիդինիս կը ճմլուէին՝ երբոր ճամբան մեր հետ կը խօսէր . ու երբոր գիրքերը մեզի կը մեկնէր : Այս նոյն ժամուն ելան երուսաղէմ դարձան , ու տասնըմէկը մէկ տեղ ժողով ըլլած , և անոնց հետ եղողները : Այս ըսին՝ թէ իրաւցունէ տէրը յարութիւն առաւ , ու սիմոնին երեւցաւ : Այս իրենք պատմեցին ճամբուն վրայ եղածները , և թէ ինչպէս ինքրզինքը յայտնեց հացը կտրելու ժամանակը :

Զատիկի Երեքշաբթի Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Բ .

Ըմենակալ Աստուած , որ քու միածին Որդւոյդ Հիսուս Վրիստոսի միջնորդութեամբը մահուան յաղթեցիր , և մեզի յաւիտենական կենաց դուռը բացիր . Խոնարհեալ կ'աղաչենք , որ՝ ինչպէս նախաժամանելով քու մասնաւոր շնորհքդ մեր միտքերուն մէջ բարի փափաքներ կը հաստատես . անանկ ալ անոնք քու շարունակ օգնականութեամբդ բարի վախճաններու հասցունենք , մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը , որ կենդանի է ու կը թագաւորէ միանգամայն քեզի , և Սուրբ Հոգւոյն հետ միշտ մէկ Աստուած մը , յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Գործք Առաքելոց . Ժգ . 26 .

Սարգիս եղբայրներ՝ արրաՏամու ցեղին որդիքը՝  
 և անոնք որ ձեր մէջը աստուածավախ են . այս փրկու-  
 թեան խօսքը ձեզի խրկուեցաւ : Բայց երուսաղէմ  
 բնակողները և անոնց իշխանները անիկայ չի ճանչ-  
 ցան , ու մարգարէներուն խօսքերը , որ ամէն շա-  
 բաթ օրերը կը կարդային՝ դատապարտելով կատա-  
 րեցին : Եւ մէկ մահուան պատճառ մը չի գտնալով՝  
 պիղատոսէն խնդրեցին որ անիկայ սպաննեն : Եւ  
 երբոր անոր համար գրուածներուն ամէնը կատա-  
 րեցին , փայտէն վար իջեցուցին՝ գերեզմանը դրին :  
 Բայց աստուած անիկայ մեռելներէն յարոյց , որ  
 շատ օր երեւցաւ անոնց , որ իր հետը գալիլեայէն  
 երուսաղէմ եկեր էին , որոնք հիմայ անոր վկաներն  
 են Ժողովուրդին առջին : Սենք ալ ձեզի աւետիս-  
 կուտանք ան խոստումը՝ որ մեր հայրերուն եղած էր :  
 Որ անիկայ աստուած մեր վրայ կատարեց՝ որ ան-  
 ոնց զաւկըներն ենք , յիսուսը յարուցանելով .  
 ինչպէս որ երկրորդ սողմոսին մէջն ալ գրուած է .  
 դուն իմ որդիս ես , ես քեզ այսօր ծնայ : Եւ որ  
 անիկայ մեռելներէն յարոյց , ու մէյ մ'ալ ապակա-  
 նութեան չի պիտի դառնայ , ասանկ կ'ըսէ . Թէ՛  
 դաւիթին հաւատարիմ սուրբ խոստմունքները ձեզի  
 պիտի տամ : Եւ որ համար ուրիշ տեղ մըն ալ կ'ը-  
 սէ . քու սուրբիդ ապականութիւն տեսնալ տալու  
 չես : Բայց դաւիթ իր ազգին մէջ ծառայութիւն  
 ըրաւ , ու աստուծոյ կամքովը մեռաւ , և իր հայրե-

բուն քովը դրուեցաւ, ու ապականութիւն տեսաւ :  
 Նայց անիկայ որ աստուած յարոյց՝ ապականութիւն  
 չի տեսաւ : Հայտնի ըլլայ ձեզի մարդիկ եղբայրներ,  
 որ ասով ձեզի մեղաց թողութիւն կը քարոզուի . և  
 ան ամէն բաներէն՝ որ մովսէսին օրէնքովը չի կրցիք  
 արդարանալ, ասով ամէն ո՛վ որ հաւատայ կ'ար-  
 դարանայ : Օգոյշ կեցիք՝ որ չըլլայ թէ ձեր վրայ  
 գայ ան որ մարգարէներուն մէջ ըսուած է : Նայե-  
 ցէք քամահրողներ՝ և զարմացէք ու ոչնչացէք . ին-  
 չու որ ձեր օրերը գործ մը պիտի գործեմ, գործ  
 մը՝ որուն չի պիտի հաւատաք, թէ որ մէկը ձեզի  
 պատմէ :

Ս. Աւետարան. Ղա. 17. 36.

Հիսուս ինքը կայնեցաւ անոնց մէջը և ըսաւ ան-  
 նոնց . խաղաղութիւն ձեզի, ես եմ մի վախնաք .  
 Նայց անոնք զարհուրելով կը վախնային, և կը  
 կարծէին թէ հոգի մը տեսան : Այլ ըսաւ անոնց .  
 ինչո՞ւ կը շփոթիք, և ինչո՞ւ ձեր սրտին մէջ խոր-  
 հուրդներ կ'ելեն : Տեսէք ձեռվըներս ու ոտվը-  
 ներս, որ ես ան եմ . բռնեցէք իս ու նայեցէք . ին-  
 չու որ ոգին մարմին ու ոսկորներ չունի . ինչպէս որ  
 զիս կը տեսնաք՝ որ ունիմ : Այլ ասիկայ զրուցելով  
 ձեռվըները ու ոտվըները ցըցուց անոնց : Այլ երբ  
 որ ինտումնուն դեռ չէին հաւատար, ու զարմացած  
 էին, ըսաւ անոնց . ուտելիք բան մը ունիք հոս :  
 Այլ անոնք կտոր մը խորոված ձուկ՝ ու մեղրի խո-

րիսխ տուին: Այլ առաւ կերաւ անոնց դիմացը, ու  
 էվելցուքը անոնց տուաւ, և ըսաւ անոնց. այս բա-  
 ներն էին որ ձեզի խօսեցայ՝ երբոր ձեր քովն էի,  
 թէ՛ պէտք է որ մովսէսի օրէնքներուն ու մարգա-  
 րէներուն ու սաղմոսներուն մէջ ինծի համար գը-  
 րուածները կատարուի: Ան ժամանակը անոնց  
 միտքը բացաւ գիրքերը իմանալու: Այլ ըսաւ ա-  
 նոնց, թէ՛ ասանկ պէտք էր քրիստոսի չարչարուիլ,  
 ու երբորդ օրը մեռնինքէն յարութիւն առնել. և  
 անոր անունովը մեզոց ապաշխարութիւն ու թու-  
 դութիւն քարոզուիլ ամէն ազգերուն մէջ՝ երուսա-  
 ղէմէն սկսած: Այլ դուք աս բաներուն վկաներն էք:

Չատկէն ետեւի Առաջին կիրակին.

Մ Ա Ղ Թ Ա Ն Բ.

Ամենակարոյ շայր, որ քու միածին Որդիդ  
 տուիր մեր մեղքերուն համար մեռնելու և յարու-  
 թիւն առնելու մեր արդարութեանը համար. Շը-  
 նորհէ որ չարութեան ու անիրաւութեան խմորը  
 մէկ դի նետելով, կարոյ ըլլանք միշտ կեանքի ու  
 ճշմարտութեան սրբութիւնով քեզի ծառայելու  
 քու Որդւոյդ մեր Հիսուս Վրիստոսի արժանաւոր-  
 ութեամբը. Ամէն:

Թուղթ Յովնանու Առաքելոյ. Ա. Թուղթ. Ե. 4.

Ամէն ով որ աստուծմէ ծնած է՝ աշխարհին կը  
 յաղթէ, և ասիկայ է յաղթութիւնը՝ որ աշխարհին

կը յաղթէ, մեր հաւատքը : Այլ ո՞վ է աշխարհին յաղթողը, չէ թէ ան՝ որ կը հաւատայ թէ յիսուս որդի աստուծոյ է : Ասիկայ է՝ որ եկաւ ջուրով հոգիով ու արիւնով՝ յիսուս քրիստոս . չէ թէ միայն ջուրով, հապա արիւնով ու ջուրով . և հոգին է՝ որ կը վկայէ, ինչու որ հոգին է ճշմարտութիւնը : Այսն զի իրեք են որ երկինքը կը վկայեն, հայր, բանը, ու սուրբ հոգին . և աս երեքը մէկ են : Այլ իրեք են որ կը վկայեն երկրի վրայ, հոգի, ջուր, և արիւն . և ան երեքը մէկ են : Թէ որ մարդոց վկայութիւնը կ'ընդունինք, աստուծոյ վկայութիւնը ալ է վերի մեծ է . ասիկայ է աստուծոյ վկայութիւնը, որ իր որդւոյն վրայ վկայեց : Այլ որ աստուծոյ որդւոյն կը հաւատայ, այս վկայութիւնը իր վրան ունի, ան որ աստուծոյ որդւոյն չի հաւատար, սուտը ուց կ'ընէ անիկայ . ինչու որ չի հաւատար ան վկայութեանը, որ աստուած իր որդւոյն վրայ վկայեց : Այլ ասիկայ է ան վկայութիւնը, որ աստուած մեզի յաւիտենական կեանք տուաւ . և ասիկայ ան կեանքն է՝ որ իր որդւոյն մէջն է : Այլ որ որդին կ'ընդունի, կեանքն ալ կ'ընդունի . և ո՞վ որ աստուծոյ որդին չընդունիր, կեանքն ալ չընդունիր :

Ս. Աւետարան. 3. 19.

Մէկշարժի օրը իրիկուն էր՝ և դուռներն ալ դոց, ուր որ աշակերտները հրէից վախուն մէկ սեղ ժողովրդի էին : Հիսուս եկաւ՝ ու անոնց մէջը կայ-

նեցաւ , և ըսաւ անոնց . ողջոյն ձեզի : Այբոր ասի-  
կայ ըսաւ , ձեռվընները ու իր կուշտը ցըցուց անոնց ,  
աշակերտներն ալ ուրախացան երբոր տէրը տեսան :  
'Աորէն անոնց ըսաւ . ողջոյն ձեզի . ինչպէս որ իմ  
հայրս իր խրկեց , ես ալ ձեզ կը խրկեմ : Այլ աս որ  
ըսաւ՝ փչեց անոնց և ըսաւ . առէք հոգին սուրբը ,  
թէ որ մէկուն մեղքը թողուք՝ թողուած ըլլայ ա-  
նոնց . և թէ որ մէկունը արգիլէք՝ արգիլուած ըլլայ :

Չասկէն ետեւի երկրորդ Արակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ամենակալ Աստուած , որ քու միածին Արգիդ  
շնորհեցիր մեզի չէ թէ միայն մեղքի համար պատա-  
րագ մը՝ հապա նաև բարի վարքի օրինակ մը ըլլա-  
լու . Պարգեւէ մեզի ան շնորհքը , որ միշտ գոհու-  
թիւնով ընդունինք ան իր անդին բարեգթուութիւ-  
նը . ու նաև ամէն օր ջանք ընենք անոր սուրբ կեան-  
քին ճամբուն մէջ քալելու , մեր Տէր Հիսուս Վը-  
րիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պետրոսի Առաքելոյ . Ա . Թուղթ . Բ . 19 .

Ասիկայ աստուծամէ շնորհք մըն է , թէ որ մէկը  
բարի մտքով անիրաւութեամբ եղած նեղութիւն-  
ներուն համբերէ : Այսան զի ի՞նչ երախտիք կ'ըլ-  
լայ , երբոր մեղք գործելու ըլլաք՝ տանջուիք ու համ-  
բերէք . հապա թէ որ բարիք գործելու ըլլաք՝ չար-

չարուիք ու համբերէք, անիկայ աստուծմէ շնորհք մընէ : Այսն զի դուք աս բանին կանչուեցաք . ինչու որ քրիստոս ալ ձեզի համար մեռաւ , ու ձեզի օրինակ թողուց՝ որ անոր շաւիղին հետեւիք : Արինքը մեղք մը չի գործեց , և անոր բերանը խարէութիւն մը չի գտնուեցաւ : Ար կը բամբասուէր՝ և փոխարէնը չէր բամբասէր . կը շարչարուէր , ու ռիս չէր պահէր . հապա իրաւունք պահող դատաւորին կը մատնուէր : Ար մեր մեղքերը իր մարմինովը խաչափայտին վրայ վերուց . որ ան մեղքերէն ազատինք , ու արդարութեան հետը ապրինք . որ իր խոցերովը մենք բժշկուեցանք : Ինչու որ մոլորած ոչխարներու պէս էիք , բայց հիմայ ձեր հոգիին հովիւին ու տեսուչին դարձաք :

Ս. Աւետարան . Եւ . Ժ . 11 .

Ես եմ բարի հովիւը . բարի հովիւը իր կեանքը ոչխարներուն վրայ կը դնէ : Բայց վարձկանը՝ որ հովիւ չէ , և ոչխարները իրը չեն , երբոր կը տեսնայ գայլը՝ որ կուգայ , կը թողու ոչխարները ու կը փախչի . և գայլը կը յափշտակէ անոնք ու կը ցրուէ : Ինչու որ ինքը վարձկան է , և իր հոգը չէ ոչխարներուն համար : Ես եմ բարի հովիւը , և կը ճանչնամ իմիններս , ու կը ճանչցուիմ իմիններէս : Ինչպէս որ հայրը գիտէ զիս , ես ալ գիտեմ հայրը , և իմ կեանքս ոչխարներուս վրայ կը դնեմ : Եւ ես ուրիշ ոչխարներ ալ ունիմ , որ աս բակէն չեն , անոնք ալ

պէտք է ինձի որ հոս բերեմ, և իմ ձայնս պիտի  
լսեն. ու մէկ հօտ ու մէկ հովիւ պիտի ըլլան :

Չատկէն ետեւի երրորդ Վերակին .

ՄԱՂԹԱՆՔ .

Բժենակարող Լստուած, որ քու ճշմարտու-  
թեանդ լոյսը մոլորեալներուն կը շնորհես, որոնք  
քու արդարութեանդ ճամբուն մէջ կը դառնան .  
Շնորհէ որ Վրիստոսի Արօնքին միաբանութեանը  
մէջ հաստատուածները հրաժարին ան իրենց դա-  
ւանութեանը հակառակ գործքերէն, և բոլոր անոր  
յարմար բաներուն հետեւին, մեր Տէր Երանու  
Վրիստոսի շնորհքովը . Լ.Պ. Է :

Թուղթ Պետրոսի Առաքելոյ . Ա. Թուղթ. Բ . 11 .

Մերելիներ՝ կ'աղաչեմ, պանդու խոներու և օտա-  
բականներու պէս հեռու կեցլիք մարմնաւորաց ան-  
կուծիւններէն, որ հոգիներուն դէմ կը պատերազ-  
մին : Զեթանոսներուն մէջ պարկեշտ վարք ունե-  
նալով, որ ինչ բանի մէջ ձեզ չարագործներու պէս  
բամբասեցին նէ՛ ձեր բարի գործքերը տեսնալով  
փառաւորեն զաստուած սյցելութեան օրը : Զնա-  
ղանդեցէք ամէն մարդկային ստեղծուածներու տե-  
րոջը համար . թէ որ թագաւորին՝ որպէս թէ մեծ  
մէկու մը : Թէ որ զաստաւորներու՝ որպէս թէ անկէ  
խրկուածներուն, չարագործներուն վրէժխնդրու-

Թեանը ու բարեգործներուն գովութեանը համար :  
 Ս ասն զի աստուծոյ կամքը ասանկ է . որ բարեգործ-  
 ները պապանձեցունեն անզգամ մարդոց տգիտու-  
 թիւնը : Աղատի պէս ըլլալով , ու չէ թէ ազատու-  
 թիւնը չարագործութեան ծածկոցի մը պէս ընե-  
 լով . հասպա աստուծոյ ծառաններու պէս : Ամենքը  
 պատուեցէք . եղբայրսիրութիւնը սիրեցէք : Աս-  
 տուծմէ վախցէք . թագաւորները պատուեցէք :

Ս . Աւետարան . Եւն . ԺԳ . 16 .

Յիսուս իր աշակերտներուն ըսաւ . քիչ մը ժա-  
 մանակէն ալ իս չի պիտի տեսնաք , ու ետքը քիչ  
 մըն ալ իս պիտի տեսնաք , և ես ալ հօրս կ'երթամ :  
 Աշակերտներէն ոմանք մէկզմէկու կ'ըսէին . ի՞նչ է  
 ստիկայ՝ որ մեզի կ'ըսէ՝ թէ քիչ մը ժամանակէն ալ  
 իս չի պիտի տեսնաք , և նորէն քիչ մըն ալ իս պիտի  
 տեսնաք , և թէ՛ ես հօրս կ'երթամ : Այլ կ'ըսէին ,  
 ի՞նչ պիտի ըլլայ ան քիչ մըն ալ ըսելը . չենք գի-  
 տեր ի՞նչ կը խօսի : Յիսուս իմացաւ որ իրեն հար-  
 ցունել կ'ուզէին , և ըսաւ անոնց . քիչ մը ժամա-  
 նակէն իս չի պիտի տեսնաք , և նորէն քիչ մըն ալ  
 իս պիտի տեսնաք ըսելս մէջերնիդ կը հարցունէք զոր :  
 Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , որ դուք պիտի  
 լաք ու ողբսք . բայց աշխարհ պիտի խնդայ . դուք  
 պիտի տրտմիք , բայց ձեր տրտմութիւնը ուրախու-  
 թեան պիտի փոխուի : Անիկ մը երբոր ծնանի՝ ինքը  
 տրտմութիւն կ'ունենայ , ինչու որ իր ժամը հասած

է. բայց երբոր կը ծնանի զաւակը, ալ նեղութիւնը չի յիշեր ուրախութենէն, որ աշխարհ մարդ մը ծնաւ: Եւ դուք հիմայ տրտմութիւն ունիք. բայց ես ձեզ նորէն պիտի տեսնամ, ու ձեր սիրտերը ուրախ պիտի ըլլան. և ձեր ուրախութիւնը մէկը ձենէ չի պիտի հանէ:

Զատկէն ետեւի Չորրորդ Կիրակին.

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք.

Ամենակարող Աստուած, որ դուն միայն կաւրող ես կառավարել մեղաւոր մարդոց անսանձ կամքերը ու յօժարութիւնները. Շ նորհէ քու ժողովուրդիդ որ քու պատուիրանքներդ սիրեն և քու խոստմունքներուդ փառաքին, որ աշխարհիս անհամար և բազմօրինակ փոփոխմունքներուն մէջ սրբտերնիս ապահով հոն ըլլայ, ուր որ ճշմարիտ ուրախութիւններ կը գտնուին, մեր Տէր Հիսուս Քրիստոսի միջնորդութեամբը. Ամէն:

Թուղթ Յակոբայ Առաքելոյ. ա. 17.

Ամէն բարի տուրքերը՝ և ամէն կատարեալ պարգեւները վերէն են, լուսոյ հօրմէն կ'իջնան. որ անոր մէջ ոչ փոփոխութիւն կայ՝ և ոչ դառնալու շուք մը: Իր կամքովը մեզ ծնաւ ճշմարտութեան խօսքովը՝ որ մենք իր ստեղծուածներուն առաջին պտուղը ըլլանք: Վիտցէք իմ սիրելի եղ-

քայրներս , ամէն մարդ թող արագ ըլլայ լսելու , և ծանր՝ խօսելու , և ծանր՝ բարկանալու : Ինչու որ մարդուն բարկութիւնը աստուծոյ արդարութիւնը չի կատարեր : Որ անով բոլոր աղտեղութիւնը ու չարութեանց էվելցութենքերը մէկ դի ձգելով՝ հեղութիւնով ընդունեցէք ան ցանուած խօսքը , որ կրնայ փրկել ձեր հոգիները :

Ս. Աւետարան . Յո՛ւ . ԺԷ . Ծ .

Ճիտուս իր աշակերտներուն ըսաւ . հիմայ ես իսխրկողին քովը կ'երթամ , ու ձենէ մէկը չի հարցուներ ինծի՝ թէ ո՞ւր կ'երթաս : Եւ այց որովհետեւ այս բաները ձեզի խօսեցայ , տրտմութիւնը ձեր սիրտերը լեցուց : Սակայն ես ճշմարիտը կ'ըսեմ՝ ձեզի . աղէկ է ձեզի՝ թէ որ ես երթամ . ինչու որ թէ որ ես չերթամ , մխիթարիչը ձեզի չի գար . հապա թէ որ երթամ՝ անիկայ ձեզի կը խրկեմ : Եւ ան որ դայ՝ աշխարհը պիտի յանդիմանէ , մեղքի համար՝ ու արդարութեան համար՝ և դատաստանի համար : Սեղքի համար՝ որ ինծի չի հաւատացին : Եւրդարութեան համար՝ որ ես իմ հօրս քովը կ'երթամ , ու ալ իս չէք տեսնար : Եւստաստանի համար՝ որ այս աշխարհիս իշխանը դատապարտուած է : Տակաւին ձեզի շատ բաներ ունիմ ըսելու , բայց կարող չէք հիմայ տանելու : Եւրբ որ ան ճշմարտութեան հոգին դայ , ամէնը ճշմարտութիւնով կ'առաջնորդէ ձեզի , որովհետեւ չէ թէ իր քովէն բան մը պիտի

խօսի, հապա ինչ որ լսէ նէ՝ անիկայ պիտի խօսի, ու  
դալիքները պիտի պատմէ: Ըն իս պիտի փառաւորէ,  
ինչու որ ինքը իմինէս պիտի առնէ՝ և ձեզի պատմէ:  
Ըն ամէն բաները որ հայրը ունի՝ իմն է. անոր հա-  
մար ձեզի ըսի, թէ իմինէս պիտի առնէ ու ձեզի  
պատմէ:

Չատկէն ետեւի Հինդերորդ Կիրակին.

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Տէր, որ քննէ կը բղխին ամէն բարիքները,  
Շնորհէ մեզի քու խոնարհ ծառաներուդ որ քու  
Ըստուածային ազդեցութեամբդ միշտ ան բաները  
խորհինք՝ որ բարի են, և քու գթած խնամքովդ ա-  
նոնք ՚ի գործ դնենք, մեր Տէր Յիսուս Վրիստոսի  
չնորհքովը. Ամէն:

Թուղթ Յակոբայ Առաքելոյ. ա. 22.

Ըն խօսքը ընողներ եղիք, ու չէ թէ միայն  
լսողներ սեպէք ինքըզինքնիդ: Ինչու որ թէ որ մէկը  
միայն լսող ըլլայ խօսքին, ու չէ թէ ընող, ինքը ան  
մարդուն կը նմանի՝ որ հայելիին մէջ երեւցած իր  
երեսին վրայ աչքը տնկած կընայի: Այսան զի նայե-  
լով տեսաւ ինքըզինքը, ու շուտ մը մոռցաւ իր  
ինտոր մէկը ըլլալը: Իսոյց ան որ ապատութեան  
կատարեալ օրէնքին դիտելով կը նայի, և անոր  
մէջ կը կենայ՝ ան լսող ու մոռցող չըլլար, հապա

դորձքը ընող . որ ինքը անիկայ ընելովը երանելի  
 կ'ըլլայ : Թէ որ մէկը ուզէ կրօնաւոր ըլլալ՝ ու իր ըն-  
 զուն չի սանձէ , հապա իր սիրտը խաբէ , անանկին  
 կրօնաւորութիւնը պարապ է : Սուրբ ու անարատ  
 կրօնաւորութիւնը աստուծմէ ու հօրմէն՝ սյս է , որ-  
 բերուն և այրիններուն այցելութիւն ընել իրենց՝ նե-  
 զութեանը մէջ . և անձը անարատ պահել աշխարհէն :

Ս. Աւետարան . Յո՛ւ . Ժ . 25 .

Ղշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , որ իմ ա-  
 նունովս ինչ որ իմ հօրմէս ուզէք՝ կուտայ ձեզի :  
 Սինչեւ հիմայ իմ անունովս բան մը չի խնդրեցիք .  
 խնդրեցէք և պիտի առնէք , որ ձեր ուրախութիւնը  
 լրման ըլլայ : Ե՛ս բաները նմանութիւններով խօ-  
 սեցայ ձեզի . Ժամանակ պիտի գայ՝ որ առակներով  
 չի պիտի խօսիմ . հապա յայտնապէս հօրը վրայօք  
 պիտի պատմեմ ձեզի : Ե՛ն օրը իմ անունովս խնդ-  
 րեցէք , ու չեմ ըսեր ձեզի որ ձեզի համար հօրս պիտի  
 աղաչեմ : Ինչու որ հայրը ինքը ձեզ կը սիրէ , որ  
 դուք իս սիրեցիք ու հաւատացիք՝ թէ ես աստուծմէ  
 ելայ : Ըօրմէն ելայ՝ և աշխարհ եկայ . նորէն աշ-  
 խարհը կը թողում ու հօրը կ'երթամ : Ե՛չակերտ-  
 ները իրեն ըսին . ահա հիմայ յայտնապէս կը խօ-  
 սիս , և մէկ նմանութիւն մը չես ըսեր : Ըիմայ իմա-  
 ցանք որ ամէն բանը գիտես . և բան մըն ալ պէտք  
 չէ որ մէկը քեզի հարցունէ , ասով կը հաւատանք որ  
 աստուծմէ ելար : Տիտուս պատասխան տուաւ և ը-

սաւ անոնց . հիմայ կը հաւատանք : Ահա ժամ մը պիտի գայ , և ան եկած ալ է . որ պիտի ցրուիք ամէն մէկերնիդ տեղերնիդ , և իս մինակ պիտի թողուք , բայց ես մինակ չեմ , ինչու որ հայրը իմ հետս է : Այս բանը ձեզի խօսեցայ , որ իմ հետս խաղաղութիւն ունենաք . աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք . բայց քաջսիրտ եղիք , ինչու որ ես աշխարհին յաղթեցի :

Քրիստոսի Համբարձման Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Շ նորհէ կ'աղաչենք քեզի ո՛վ ամենակարող Աստուած , որ՝ ինչպէս որ քու միածին Արդւոյդ մեր Տէր Յիսուս Քրիստոսի այս օրս երկինք համբառնալուն կը հաւատանք . անանկ ալ մենք սրտով ու հոգևով հոն վերնանք , և միշտ անոր հետը բնակինք , որ կենդանի է ու կը թագաւորէ միանգամայն քեզի և Սուրբ Հոգւոյն հետ մէկ Աստուած , յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Գործք Առաքելոց . ա . 1 .

Առջի խօսքը որ ըրի՝ ո՛վ թէոփիլէ , ան ամէն բաներուն վրայ՝ որ յիսուս սկսաւ ընել ու սորվեցընել : Մինչև և ան օրը՝ որ ինքը սուրբ հոգիին ձեռքովը ընտրած առաքելներուն պատուէր տալով երկինքը վերացաւ : Արոնց ինքրզինքը իր չարչար-

րանքներէն ետեւ կենդանի ցրցուց շատ հրաշքներով , քառասուն օր անոնց երեւնալով , և աստուծոյ թագաւորութեանը վրայ խօսելով : Ալ անոնց հետ հաց կերած ժամանակը անոնց կը պատուիրէր որ երուսաղէմէն չի զատուին , հապա հօրը խոստմունքին սպասեն , որ ինէ լսեցիք կ'ըսէր : Ենչու որ յօհաննէս ջուրով մկրտեց , բայց դուք սուրբ հոգիով պիտի մկրտուիք շատ օրեր չանցած : Ալ անոնք եկան կը հարցունէին իրեն և կ'ըսէին . տէր , հիմայ աս ժամանակ իսրայէլի թագաւորութիւնը պիտի հատուցանես : Բսաւ անոնց . ան ժամերը ու ժամանակները ձեր գիտնալու բանը չէ , որ հայրը իր իշխանութեանը մէջ դրաւ : Բայց դուք սուրբ հոգիին զօրութիւնը պիտի առնէք՝ որ ձեր վրայ պիտի գայ . և ինծի վկաներ պիտի ըլլաք երուսաղէմի մէջ , և բոլոր հրէաստանի՝ ու սամարիայի մէջ , և մինչեւ երկրի ծայրերը : Ալ այս որ ըսաւ , դեռ անոնք կը ճայէին՝ համբարձաւ , ու մէկ ամիս մը անոնց աչքէն բռնեց : Ալ երբոր դեռ աչվընին տնկած երկինքը կը նայէին անոր երթալուն վրայ , մէյ մ'ալ երկու հոգի երեւցաւ անոնց ճերմակ լաթերով : Արոնք նաև ըսին . ո՞վ գալիլեացի մարգիկ , ի՞նչու կայներ երկինքը կը նայիք . աս յիսուսը որ ձենէ երկինքը համբարձաւ , ասանկ պիտի գայ՝ ինչպէս որ անոր երկինք երթալը տեսաք :

Ս. Աւետարան. Մ. Բ. Ժ. 14.

Երբոր տասնըմէկը սեղան նստած էին՝ յիսուս անոնց երեւցաւ . և անոնց անհաւատութիւնը յանդիմանեց՝ ու խտասրտութիւնը , որ ինքը մեռելնէրէն յարութիւն առնելով երեւցաւ անոնց , և անոնք չի հաւատացին : Այլ ըսաւ անոնց , զացէք բոլոր աշխարհ , ու քարոզեցէք աւետարանը ամէն ստեղծուածներուն : Եւ որ հաւատայ ու մկրտուի՝ պիտի փրկուի . և ան որ չի հաւատար՝ պիտի դատապարտուի : Եւ նշանները անոնց հետ պիտի երթան՝ որ կը հաւատան . անունովս դուրս պիտի հանեն , լեզուներ պիտի խօսին , օձեր պիտի բռնեն , և թէ որ մահացուցիչ զեղեր խմեն՝ իրենց չի պիտի վնասէ . հիւանդներուն վրայ ձեռք պիտի դնեն՝ ու բժշկեն : Այլ տէր յիսուս ինքը անոնց հետ խօսելէն ետեւ երկինքը համարձաւ , ու հօրը աջ կողմը նստաւ : Այլ անոնք ելան բոլոր երկիր կը քարոզէին տէրօջը օգնականութեամբ . և խօսքը կը հաստատէին բոլոր նշաններով՝ որ իրենց հետը կ'երթային :

Համբարձման ետեւի Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Բ .

Ով Աստուած՝ թագաւոր փառաց , որ մեծայաղթ փառքով բարձրացուցիր Յիսուս Վրիստոս քու միածին Որդիդ երկինքի թագաւորութեանդ մէջ . Կաղաչենք քեզի մի թողուր մեզ անմխիթար . հասպ

խրկէ մեզի քու Սուրբ Հոգիդ, որ մեզ մխիթարէ ու բարձրացունէ նոյն տեղը՝ ուր որ մեր Փրկիչը՝ Վրբիստոս առաջուց գնաց, որ կենդանի է ու կը թագաւորէ միանգամայն քեզի և Սուրբ Հոգւոյն հետ մէկ Մատուած, յաւիտեանս յաւիտենից, Ա՛ռն:

Թուղթ Պետրոսի Առաքելոյ. Ա. Թուղթ. 4. 7.

Ա՛մէն բանին վախճանը մօտ է. ուստի զգաստացէք՝ ու արթուն եղիք աղօթքի մէջ: Ա՛մէն բանէ առաջ սրտանց սէր ունեցէք մէկզմէկու, ինչու որ սէրը մեղքերուն շատութիւնը կը ծածկէ: ( ) տարասէր եղիք մէկզմէկու առանց տրտունջ ընելու: Ա՛մէն մէկը ինչպէս շնորհք որ ընդունեց՝ նոյնը մատակարարէ մէկը մէկալին, որպէս թէ բարի տրտեսներ աստուծոյ կերպ կերպ շնորհքներուն: Թէ որ մէկը կը խօսի՝ աստուծոյ հրամանին պէս. թէ որ մէկը կը մատակարարէ՝ որպէս թէ ան զօրութիւնովը՝ որ աստուած կը շնորհէ, որ ամէն բանի մէջ աստուած փառաւորուի յիսուս քրիստոսով, որուն ըլլայ փառք և զօրութիւն յաւիտեանս, Ա՛ռն:

Ս. Աւետարան. Յո՛ւն. ԺԵ. 26: և ԺԶ. 1.

Երբոր մխիթարիչը գայ՝ որ ես հօրմէն ձեզի կը խրկեմ. ան ճշմարտութեան հոգին որ հօրմէն կ'ելլէ, ան ինծի համար պիտի վկայէ: Եւ դուք ալ կը վկայէք, ինչու որ սկիզբէն իմ հետս էք: Ա՛ս բաները ձեզի խօսեցայ՝ որ չի գայ թակղիք: Եւնեց ժողովա-

բաններէն ձեզ դուրս պիտի հանեն . և ժամանակ պիտի գայ՝ որ ամէն ո՛վ որ ձեզ սպաննէ՝ պիտի սեպէ թէ աստուծոյ պաշտօն կը մատուցանէ : Եւ այս բաները ձեզի պիտի ընեն . ինչու որ ո՛չ հայրը ճանչցան և ո՛չ զիս : Բայց աս խօսեցայ ձեզի՝ որ երբ ժամանակը գայ՝ յիշէք թէ ես ըսի ձեզի :

Հոգեգալտեան Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Տէր Աստուած , որ այս ժամանակ քու Սուրբ Հոգւոյդ լոյսը հաւատացեալներուդ սիրտերը ծագելով հաստատեցիր . Շնորհէ մեզի որ նոյն հոգիովը ամէն բաներու մէջ արդար դատողութիւն մը ունենանք , ու միշտ իր սուրբ մտիթարութիւնովը ուրախանանք , մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի արժանաւորութեամբը , որ կենդանի է ու կը թագաւորէ միանգամայն քեզի հետ նոյն Հոգւոյն միութեամբը՝ մէկ Աստուած , յաւիտեանս յաւիտենից , Ամէն :

Գործք Առաքելոց . բ . 1 .

Պենտէկոստէի օրերը լըմըննալու ժամանակը , ամէնքն ալ միաբան մէկ տեղ էին : Եւ յանկարծակի երկինքէն ձայն մը եղաւ՝ սաստիկ հովի նման եկած , որ լեցուց բոլոր ան տունը՝ ուր որ նստեր էին : Եւ բաժնուած լեզուներ երեւցան իրենց որպէս թէ

կրակէ, ու ամէն մէկուն վրայ նստաւ : Այլ ամէնքն  
 ալ հոգւով սրբով լեցուեցան , ու սկսեցին այլ և  
 այլ լեզուներով խօսիլ , ինչպէս որ հոգին խօսել  
 կուտար իրենց : Այլ երուսաղէմի մէջ հրէաներ կը  
 բնակէին՝ երկիւղած մարդիկներ երկինքին տակը ե-  
 ղած ամէն ազգերէն : Այլ երբ որ այս ձայնը եղաւ՝  
 բազմութիւնը մէկ տեղ եկաւ ու դիզուեցաւ . ինչու  
 որ կը լսէին թէ անոնք իրենց ամէն մէկուն լեզուով  
 կը խօսէին : Ամէնքը կ'սքանչանային՝ ու կը զարմա-  
 նային՝ և մէկըմէկու կ'ըսէին . չէ՞ որ աս ամէնքը որ  
 կը խօսին՝ գալիլեացի են : Այլ ինչպէս մենք ամէն  
 մէկս կը լսենք մեր լեզուովը՝ որուն մէջ ծնած ենք :  
 Պարթեւներ ու մարքեր ու իլամացիներ , և անոնք  
 որ միջագետքը կը բնակին՝ հրէաստանի մէջ՝ ու  
 գամիրքի մէջ՝ պոնտոսի մէջ՝ ու ասիայի մէջ : Փոխ-  
 գիտցի մէջ՝ ու պամիլիլիայի մէջ , եգիպտոսի մէջ՝  
 ու լիբացոց կողմերը , անոնք որ կիւրենացիներուն  
 հետ՝ ու օտարական հռովմայեցիներ : Ըրէաներ՝ ու  
 անոնց հետեւողներ , կրետացիներ ու արաբացիներ՝  
 կը լսենք անոնց որ մեր լեզուներովը աստուծոյ մե-  
 ծամեծ բաները կը խօսին :

Ս . Աւետարան . Թ . 15 . 15 .

Յիսուս իր աշակերտներուն ըսաւ . թէ որ զիս  
 կը սիրէք՝ իմ պատուէրներս պահեցէք : Այլ ես հօրը  
 կ'աղաչեմ , և ուրիշ մխիթարիչ մը կուտայ ձեզի , որ  
 յաւիտեան ձեր հետը բնակի : ՂԶմարտութեան հո-

գին, որ աշխարհս անիկայ չի կրնար ընդունել. ինչու որ չի տեսնար անիկայ, ու չի ճանչնար անիկայ. բայց դուք կը ճանչնաք անիկայ, ինչու որ ձեր քովը պիտի բնակի, ու ձեր հետը պիտի ըլլայ: Ձեզ որբ չի պիտի թողում, կուգամ ձեզի: Վիչ մը ժամանակէն՝ ու աշխարհս ալ իս չի տեսնար. բայց դուք զիս պիտի տեսնաք. ինչու որ ես կենդանի եմ, ու դուք կենդանի պիտի ըլլաք: Մն օրը պիտի գիտնաք՝ որ ես իմ հօրս մէջն եմ, և դուք իմ մէջս, ու ես ձեր մէջը: Մն որ իմ պատուիրանքներս կը բռնէ, ու անոնք կը պահէ, ան է՝ որ իս կը սիրէ. և ան որ զիս կը սիրէ, իմ հօրմէս կը սիրուի. ու ես անիկայ կը սիրեմ, և զիս անոր կ'երեւցունեմ: Հոգա ըսաւ իրեն՝ ոչ իսկարիովտացին. տէր՝ ինչ եղաւ որ դուն քեզ մեզի պիտի յայտնես, ու չէ թէ աշխարհի: Պատասխան տուաւ յիսուս և ըսաւ անոր. թէ որ մէկը զիս կը սիրէ՝ իմ խօսքերս կը պահէ, ու հայրս անիկայ կը սիրէ. և անոր կուգանք, ու մեր բնակարանը անոր քովը կ'ընենք: Այլ ան որ զիս չի սիրեր՝ իմ խօսքերս չի պահեր. և իմ խօսքերս որ կը լսէք՝ իմս չէ, հապա հօրը՝ որ իս խրկեց: Այս բաները ձեզի ըսի՝ քանի որ ձեր քովն եմ: Բայց միտիմարիչ սուրբ հոգին՝ որ հայրը իմ անունովս պիտի խրկէ, ան ձեզի ամէնը պիտի սորվեցունէ. և ամէն ինչ որ ձեզի ըսի՝ պիտի յիշեցունէ: Ձեզի խաղաղութիւն կը թողում, իմ խաղաղութիւնս ձեզի կուտամ. չէ թէ ինչպէս որ աշխարհս կուտայ, ես ձեզի կուտամ.

սիրտերնիդ թող չի պղտորի ու չի վախնայ : Ասեցիք որ ես ձեզի ըսի՝ թէ կ'երթամ , ու կուգամ ձեզի . թէ որ իս սիրէիք՝ հապա ուրախ կ'ըլլայիք թէ ես հօրը քովը կ'երթամ . ինչու որ իմ հայրս ինէ մեծ է : Այլ հիմայ դեռ չեղած ըսի ձեզի , որ երբ որ ըլլայ նէ՝ հաւատաք : Այլ շատ չի պիտի խօսիմ ձեզի հետ . աս աշխարհիս իշխանը կուգայ՝ և իմ վրաս բան մը չի գտնար : Բայց աշխարհ գիտնայ՝ որ ես հայրը կը սիրեմ . և ինչպէս որ հայրը ինձի պատուիրեց՝ անանկ կ'ընեմ :

Հոգեգորտեան Երկուշաբթի Օրը .

ՄԱՂԹԱՆ Ք .

Ո՛վ Տէր Աստուած , որ այս ժամանակ քու Սուրբ Հոգւոյդ լոյսը հաւատացեալներուդ սիրտերը ծագելով հաստատեցիր . Շնորհէ մեզի որ նոյն հոգիովը ամէն բաներու մէջ արդար դատողութիւն մը ունենանք , ու միշտ իր սուրբ մխիթարութիւնովը ուրախանանք մեր Վրկիչ Հիսուս Քրիստոսի արժանաւորութեամբը , որ կենդանի է ու կը թագաւորէ միանգամայն քեզի հետ նոյն Հոգւոյն միութեամբը՝ մէկ Աստուած , յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Գործք Առաքելաց . Ժ . 34 .

Ան ժամանակը պետրոս իր բերանը բացաւ՝ և ըսաւ . Ճշմարտութեամբ կ'իմանամ , որ աստուծոյ

քով ակնառութիւն չի կայ : Հապա ամէն ազգի մէջ՝  
ան որ անկէ կը վախնայ , ու արդարութիւն կը գոր-  
ծէ , իրեն ընդունելի է : Ան խօսքը որ խրայելի  
որդւոցը խրկեց , յիսուս քրիստոսի ձեռքովը խաղա-  
ղութիւն աւետարանելու , անիկայ է ամէնուն տէրը :  
Վուք ձենէ գիտէք ան խօսքը՝ որ բոլոր հրէաստանի  
մէջ եղաւ զալիլեայէն սկսած ան մկրտութենէն ե-  
տեւ՝ որ յօհաննէս քարոզեց : Յիսուս որ նաղարե-  
թէն էր՝ աստուած օծեց անիկայ սուրբ հոգիով ու  
զօրութիւնով . որ պտըտեցաւ բարիք ընելու , և սա-  
տանայէն ամէն բռնուածները բժշկելու , ինչու որ  
աստուած իրեն հետն էր : Այլ մենք վկայ ենք ան ա-  
մէն բաներուն՝ որ ըրաւ հրէաստանի մէջ ու երու-  
սազէմի մէջ . որ ինքը փատէն կախած մեռուցին  
ալ : Աստուած անիկայ երբորդ օրը յարոյց , և յայտ-  
նեց անիկայ : Չէ թէ բոլոր ժողովուրդին , հապա  
մեզի՝ առաջուց աստուծմէ ընտրուած վկաներուս ,  
որ իրեն հետ կերանք ու խմեցինք ալ իր մեռելներէն  
յարութիւն առնելէն ետեւ : Այլ պատուիրեց մեզի  
որ ժողովուրդին քարոզէնք ու վկայութիւն տանք  
թէ՛ ան է աստուծոյ սահմանած կենդանիներուն ու  
մեռելներուն դատաւորը : Անոր ամէն մարդարէները  
կը վկայեն , թէ ամէն անոր հաւատացողները իր ա-  
նունովը մեղաց թողութիւն կ'առնեն : Այլ երբոր  
պետրոս աս բաները կը խօսէր , հոգին սուրբ ամե-  
նուն վրայ հանգչեցաւ՝ որ ան խօսքը կը լսէին : Ան  
թիփատութենէ հաւատացեալները որ պետրոսի հետ

եկած էին զարմայան, որ հեթանոսներուն վրայ ալ հոգւոյն սրբոյ պարգեւները կը լեցուին : Ինչու որ կը լսէին անոնցմէ որ լեզուներ կը խօսէին, ու զաստուած կը փառաւորէին : Ըն ժամանակը պետրոս պատասխան տուաւ . միթէ ով կրնայ ջուրը արգիլել որ ասոնք չի մկրտուին, որոնք մեզի պէս հոգին սուրբն ալ ընդունեցին : Այլ հրաման ըրաւ անոնց որ տէր յիսուս քրիստոսի անունովը մկրտուին, ան ժամանակը իրեն աղաչեցին որ քանի մը օր հոն կենայ :

Ս. Աւետարան. Յո՛ւ. 7. 16.

Աստուած անանկ սիրեց աշխարհը՝ մինչեւ որ իր միածին որդին տուաւ, որ ամէն ով որ անոր հաւատայ՝ չի կորսուի, հապա յաւիտենական կեանքը ընդունի : Ինչու որ աստուած իր որդին աշխարհ չի խրկեց՝ որ աշխարհը դատապարտէ, հապա աշխարհ անով փրկուի : Ըն որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, և ան որ չի հաւատար անոր՝ անիկայ արդէն դատապարտուած է . ինչու որ աստուծոյ միածին որդւոյն անուանը չի հաւատաց : Այլ այս է դատապարտութիւնը, որ լոյսը աշխարհ եկաւ, ու մարդիկ խաւարը լոյսէն էվիլ սիրեցին, ինչու որ իրենց գործքերը չար էին : Ասան զի ամէն ով որ չարութիւն կը գործէ՝ լոյսը կ'ատէ, և լուսին դիմացը չի գար, որ իր գործքերը չի յանդիմանուին : Իայց ան որ ճշմարտութիւն կը գործէ՝ լուսին դիմացը կուգայ, որ իր գործքերը յայտնի ըլլան թէ աստուծով գործուեցան :

Հողեգալտեան Երեքշաբթի Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ով Տէր Աստուած , որ այս ժամանակ բու-  
Սուրբ Հոգւոյդ լոյսը հաւատացեալներուդ սիրտե-  
րը ծագելով հաստատեցիր . Շնորհէ մեզի որ նոյն  
հոգիովը ամէն բաներու մէջ արդար դատողութիւն  
մը ունենանք , ու միշտ իր սուրբ մտիթարութիւնովը  
ուրախանանք մեր Փրկիչ Յիսուս Վրիստոսի ար-  
ժանաւորութեամբը , որ կենդանի է ու կը թագա-  
ւորէ միանգամայն բեզի հետ նոյն Հոգւոյն միու-  
թեամբը՝ մէկ Աստուած , յաւիտեանս յաւիտենից .  
Ամէն :

Գործք Աւաքեաց . Ը . 14 .

Աւաքեալները որ երուսաղէմ էին , երբոր լսե-  
ցին թէ սամարիայի մէջ ալ աստուծոյ խօսքը ըն-  
դունեցին , պետրոսը ու յօհաննէսը անոնց խրկե-  
ցին : Ար անոնք իջան աղօթք ըրին անոնց վրայ , որ  
հոգին սուրբ առնեն : Ինչու որ մինչեւ ան ժամա-  
նակը դեռ անոնց մէկին վրայ հասած չէր , հասար  
միայն տէր յիսուսի անունովը մկրտուած էին : Ան  
ժամանակը ձեռվընին անոնց վրայ դրին՝ և հոգին  
սուրբը կ'առնէին :

Ս . Աւետարան . 3 . 1 . Ժ . 1 .

ՂՃմարիտ ՃՃմարիտ կ'ըսեմ ձեզի . ան որ ոչ-  
խարներուն բակը դուռնէն չի մանար , հասար ուրիշ

տեղէն կելլէ, ան գող ու աւազակ է : Բայց ան որ  
 դուռնէն կը մտնայ, ան ոչխարներուն հովիւն է :  
 Վոնապանը անոր կը բանայ, ու ոչխարները իր  
 ձայնին կը լսեն, և իր ոչխարները անունովը կը  
 կանչէ, և անոնք դուրս կը հանէ : Այլ երբոր ամէն  
 իրենները կը հանէ, անոնց առջեւէն կ'երթայ, ու  
 ոչխարները իր ետեւէն կ'երթան. ինչու որ անոր  
 ձայնը կը ճանչնան : ( ) տարին ետեւէն չեն երթար,  
 հապա անկէ կը փախչին . ինչու որ օտարներուն  
 ձայնը չեն ճանչնար : Յիսուս աս առակը անոնց ը-  
 սաւ. և անոնք չէին իմանար, թէ ինչ էր՝ որ իրենց  
 հետը կը խօսէր : Աորէն յիսուս անոնց ըսաւ. Ճըշ-  
 մարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ես եմ ոչխար-  
 ներուն դուռը : Ինչ առաջ եկողներուն ամէնն ալ  
 գող ու աւազակ էին . բայց ոչխարները անոնց չի  
 լսեցին : Այս եմ դուռը. ինչ թէ որ մէկը ներս մըտ-  
 նայ՝ կ'ապրի, կը մտնայ ու կ'ելլէ, ու անունդ կը  
 գտնայ : Վողը չի գար՝ միայն թէ գողնալու, սպան-  
 նելու, ու կորսնցունելու : Այս եկայ որ կեանք ունե-  
 նաք, ու ալ էլիւրօք ունենաք :

Սուրբ Երրորդութեան Վերակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Մենակարող և յաւիտենական Աստուած, որ  
 մեզի քու ծառաներուդ շնորհք պարգեւեցիր մէկ  
 ճշմարիտ հաւատքի մը խոստովանութեամբը մշտն-

ջննուոր Արրորդութեան փառքը ճաննալու . և Մստուածային մեծվայելութեան զօրութիւնովը նոյն Սիութիւնը պաշտելու . Կ'աղաչենք քեզի որ հաստատ պահես մեզ այս հաւատքին մէջ , և միշտ ամն կերպ ձախորդութիւններէ պահպանես մեզ , որ կենդանի ես ու կը թագաւորես մէկ Մստուած մը , յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Յոյանութիւն Յովհաննու Առաքելոյ . գ . 1 .

Մսկէ ետեւ տեսայ , ու ահա երկինքին դուռները բացուեր էին , և առջի փողին ձայնը որ լսեցի , կը խօսէր ինձի՝ ու կ'ըսէր . հոս ելի՛ր՝ ու քեզի ցըցունեմ ետքի ըլլալու բաները : Այլ մէկէնիմէկ հոգին ինձի հասաւ , ու աթոռ մը տեսայ՝ որ երկինքը կեցեր էր : Այլ ան որ աթոռին վրայ նստեր էր յսուպիս ու սարգիոն քարերուն երեւոյթին նման : Այլ ան աթոռին ըոլորաիքը քահանաներ՝ զմրուխտի երեւոյթի նման . և աթոռին չորս կողմը քսանըչորս աթոռ . և ան աթոռներուն վրայ քսանըչորս երէցներ նստեր էին՝ ճերմակ լաթեր հագած , ու գլուխնին ոսկիէ թագեր : Այլ ան աթոռէն կածկըւտութներ ու ձայներ ու որոտումներ կ'ելլէին . ու եօթը հատ բորբոքուած կրակէ կանթեղներ աթոռին առջին , որոնք աստուծոյ եօթը հոգիներն են : Այլ ան աթոռին առջեւը ապակիէ ծով մը՝ սառի նման ճերմակ , ու աթոռին մէջ տեղը չորս կենդանիներ , որ ետեւնուն ու ստջեւնուն աչքերով լեցուն էին : Այլ

առջի կենդանին առիւծի նման էր . ու երկրորդ կենդանին զուարակի նման . ու երրորդ կենդանին մարդու երես ունէր . ու չորրորդ կենդանին թռչող արծիւի նման : Աւ չորս կենդանիները անոնցմէ ամէն մէկը վեց թեւեր ունէին , բոլորտիքէն ու տակէն աչքերով լեցուն . ու չէին հանգչեր ոչ ցորեկը և ոչ գիշերը՝ ըսելէն , սուրբ , սուրբ , սուրբ , տէր աստուած ամենակալ , որ էն , ու որ ևս , ու որ պիտի գաս : Աւ երբոր աս կենդանիները փառք ու պատիւ ու դոհութիւն կուտային աթոռին վրայ նստողին՝ որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից , ան քսանը չորս երէցները աթոռին վրայ նստողին առջին կ'իյնային , ու երկրպագութիւն կ'ընէին յաւիտեանս յաւիտենից կենդանիին , և իրենց թագերը աթոռին առջեւ կը դնէին՝ ըսելով , արժանի ևս մեր տէր աստուածը՝ փառք ու պատիւ ու զօրութիւն առնելու . ինչու որ ամէն բան դուն ստեղծեցիր , և քու ուզելովդ ստեղծուեցան , ու հաստատուն կեցեր են :

Ս. Աւետարան . 3-է . գ . 1 .

Փարիսեցիներէն մարդ մը կար՝ անոր անունը նիկողեմոս , հրէից իշխան մը : Ասիկայ գիշերանց եկաւ՝ և ըսաւ անոր . ռաբբի՛ դիտենք որ դուն աստուածմէ վարդապետ եկած ևս . ինչու որ մէկը չի կրնար ատ նշանները ընել՝ որ դուն կ'ընես , թէ որ աստուած իր հետը չըլլայ : Հիտուս պատասխան

տուաւ և ըսաւ անոր . Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ  
քեզի . թէ որ մէկը նորէն չի ծնի , չի կրնար աստու-  
ծոյ արքայութիւնը տեսնալ : Աիկողեմոս ըսաւ ա-  
նոր . ի՞նչպէս կրնայ մէկ մարդ մը ծնանիլ , որ ան  
ծեր է . կարելի՞ բան է որ մէյ մ'ալ նորէն իր մօրը  
փորը մտնայ ու ծնի : Պատասխան տուաւ յիսուս  
և ըսաւ անոր . Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի .  
մարդ մը թէ որ ջուրէն ու հողիէն չի ծնի , չի կր-  
նար աստուծոյ արքայութիւնը մտնալ : Ինչու որ  
մարմինէն ծնածը մարմին է , ու հողիէն ծնածը  
հողի է : Առն մի զարմանար որ քեզի ըսի , պէտք  
է ձեզի նորէն ծնիլ : Վանզի հովը ուր որ ուզէ  
կը փչէ , և անոր ձայնը կը լսես . բայց չես գիտեր  
ուսկի՞ կուգայ՝ կամ ո՞ւր կ'երթայ . ասանկ ալ ամէն  
հողիէն ծնածը : Աիկողեմոս պատասխան տուաւ և  
ըսաւ իրեն . ատ ի՞նչպէս կրնայ ըլլալ : Հիսուս պա-  
տասխան տուաւ և ըսաւ անոր . դուն իսրայելացւոց  
վարդապետ մըն ես , ու ատիկայ չե՞ս գիտեր : Ղը-  
մարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի որ՝ ինչ որ գիտենք  
կը խօսինք , և ինչ որ կը տեսնանք կը վկայենք , և  
մեր վկայութիւնը չէք ընդունիր : Թէ որ երկրաւոր  
բաները ձեզի ըսի՝ ու չէք հաւատար , ի՞նչպէս թէ  
որ երկնաւոր բաները ըսեմ՝ պիտի հաւատաք : Եւ  
մէկը երկինքը չե՛լաւ՝ թէ չէ ան՝ որ երկինքէն իջաւ  
որդին մարդոյ , որ երկինքն է : Եւ ինչպէս մով-  
սէս պնապատին մէջ օձը բարձրըցուց , անանկ ալ  
պէտք է որ որդին մարդոյ բարձրանայ : Ար ո՞վ որ

անոր հաւատայ չի կորսուի , հապա յաւիտենական  
կեանքը ընդունի :

Ս. Երրորդութեան յաջորդ Ա. Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

ՈՎ Տէր Լստուած , ամէն քեզի ապաւինողնե-  
րուն զօրութիւնը , գթութեամբ ընդունէ մեր աղա-  
չանքները : և որովհետեւ մեր մահկանացու բնու-  
թեան տկարութեանը պատճառաւ առանց քեզի  
աղէկ բան մը ընելու կարող չենք , պարգեւէ մեզի  
քու շնորհքիդ օգնականութիւնը՝ որ քու պատուի-  
րանքներդ պահելով կամքով ու գործքով քեզի հա-  
ճոյ ըլլանք , մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհք-  
ովք : Լ՛իւն :

Թուղթ Յովհաննու Առաքելոյ . Ա . Թ . 21 . 7 . 7 .

Մերելիներ մեկզմէկ սիրենք . ինչու որ սէրը աս-  
տուծմէ է , և ամէն ո՛վ որ կը սիրէ՝ աստուծմէ ծնած  
է , ու աստուած կը ճանչնայ : Լսւ ան որ չի սիրեր՝  
աստուած չի ճանչնար , ինչու որ աստուած սէր է :  
Լսւ աս բանին մէջ աստուծոյ սէրը մեր վրայ երեւ-  
ցաւ , որ աստուած իր միածին որդին աշխարհ խոր-  
կեց , որ մենք անով կենդանի ըլլանք : Մէրը աս բա-  
նին մէջն է , որ չէ թէ մենք աստուած սիրեցինք ,  
հապա որ ան մեզ սիրեց , ու իր որդին խրկեց մեր  
մեղացը քաւութեան համար : Մերելիներ՝ թէ որ

աստուած մեզ ասանկ սիրեց , մենք ալ պարտինք  
մեկզմէկ սիրել : Ինչաւ մէկը աստուած տեսած չէ ,  
թէ որ մեկզմէկ սիրենք՝ աստուած մեր մէջը կը բը-  
նակի , ու անոր սէրը մեր մէջը կատարեալ է : Ասով  
գիտենք՝ որ մենք անոր մէջ բնական ճիշդ՝ ու ան ալ  
մեր մէջը՝ որ իր հոգիէն մեզի տուաւ : Այլ մենք տե-  
սանք՝ ու կը վկայենք որ հայրը իր որդին աշխարհի  
փրկիչ խրկեց : Այլ որ կը խոստովանի թէ յիսուս  
որդի աստուծոյ է , աստուած անոր մէջ՝ և ինքը աս-  
տուծոյ մէջ կը բնակի : Այլ մենք հաւատացինք ու  
ճանչցանք աստուծոյ սէրը՝ որ մեր վրայ ունի . աս-  
տուած սէր է . և ան որ սիրոյ մէջ կը կենայ՝ աստու-  
ծոյ մէջ բնական է , ու աստուած անոր մէջ կը բը-  
նակի : Այս բանին մէջ անոր սէրը մեր վրայ կատա-  
րեալ է , որ դատաստանի օրը համարձակութիւն  
ունենանք . ինչու որ ինքը ինչպէս է նէ՝ մենք ալ աշ-  
խարհիս մէջ անանկ ենք : Սիրոյ մէջ երկիւղ չի  
կայ , հապա կատարեալ սէրը երկիւղը կը մերժէ . ին-  
չու որ երկիւղը տանջանք ունի . ուստի ան որ կը  
վախնայ , սիրոյ մէջ կատարեալ չէ : Սենք աստուած  
սիրենք , ինչու որ առաջ ան մեզ սիրեց : Թէ որ  
մէկը ըսէ թէ՝ ես աստուած կը սիրեմ , ու իր եղ-  
բայրը ատէ՝ ան ստախօս է . ան որ իր եղբայրը չի  
սիրեր որ կը տեսնայ , աստուած որ չի տեսնար՝ ինչ-  
պէս կրնայ սիրել : Այլ անկէ այս պատուէրը ու-  
նինք , թէ՝ ան որ աստուած կը սիրէ , ան իր եղ-  
բայրն ալ կը սիրէ :

Ս. Աւետարան. Ղևի. ԺԳ. 19.

Մէկ հարուստ մարդ մը կար, որ բեհեզններ ու ծիրանիններ կը հագնէր, ու միշտ էվելօք ուրախութիւն կ'ընէր: Ալ զազարոս անունով աղքատ մը կար անոր դռանը առջին վիրաւոր ինկած գրուած. և կը փափաքէր որ մեծատունին սեղանէն թափած փշրանքներովը կշտանար. նաև շուններն ալ կուգային՝ ու անոր վերքերը կը լզէին: Ալ եղաւ որ ան աղքատը մեռաւ, ու հրեշտակները անիկայ արբահամու գողը տարին. մեծատունն ալ մեռաւ ու թաղուեցաւ: Ալ դժոխքը՝ երբոր տանջանքի մէջ էր, աչքը վերուց, ու հեռուէն տեսաւ արբահամը, ու զազարոս անոր գողը հանգիստ նստած: Ալ ան պօռալով ըսաւ. հայր արբահամ՝ ողորմէ ինձի, ու խրկէ զազարոսը որ իր մատին ծարը ջուրը թաթխէ, ու լեզուս զովացունէ. ինչու որ հոս տեղի սաստիկ տաքէն կը պապակիմկոր: Արբահամ ըսաւ անոր. որդեակ, յիշէ որ դուն անդին կեանքիդ ժամանակը քու բարիքներդ առիր. ու անանկ ալ զազարոս չարչարանքները. հիմայ ան հոս կը մխիթարուի, և դուն հոտ կը պապակիս: Ալ ասկէ 'ի զատ մեր մէջը և ձեր մէջը մեծ անդունդ մը կայ. թէ որ ուղին ասկից ձեզի անցնիլ՝ չեն կրնար, ու ոչ ատկից մէկը՝ մեզի անցնիլ: Ալ ան ըսաւ. ուրեմն կ'աղաչեմ քեզի հայր, որ ատիկայ իմ հօրս տունը խրկես: Էն ես հինգ եղբայր ունիմ, որ անոնց վկայութիւն տայ, որ չըլլայ թէ անոնք ալ այս չարչարանքին տե-

ըը գան : Այլ արբահամ ըստու . անոնք մովսէս ու մարգարէներ ունին , անոնց թող լսեն : Ան ալ ըստու . չէ՛ հայր արբահամ . հապա թէ որ մեռելն երէն մէկը անոնց երթայ՝ կ'ապաշխարեն : Այլ ան ըստու անոր . թէ որ մովսէսին ու մարգարէներուն չեն լսեր , ոչ ալ մեռելներէն ելողին մէկին կը հաւատան :

Ս . Երբորդու թեան յաջորդ Բ . Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Տէր Աստուած , որ բնաւ չես դադարիր անոնց օգնելու և առաջնորդելու , որոնք քու երկիւղովդ ու սիրովդ կը մեծցունես . Աղաչենք քեզի՛ պահպանէ՛ մեզ քու բարի նախախնամութեանդ պաշտպանութեամբը , և պարգեւէ՛ մեզի որ միշտ քու սուրբ Անուանդ երկիւղը ու սէրը ունենանք , մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Յովհաննու Առաքելոյ . Ա . Թուղթ . գ . 15 .

Ան զարմանաք եղբայրներ , թէ որ աշխարհ ձեզ ատէ : Անք գիտենք որ մահէն կեանքի փոխուեցանք . ինչու որ եղբայրները կը սիրենք , բայց ան որ չի սիրեր՝ մահուան մէջ կը մնայ : Ամէն ո՛վ որ իր եղբայրը կ'ատէ՝ մարդասպան է . և գիտէք որ ամէն մարդասպան իր մէջը յաւիտենական կեանք հաստատուած չունի : Ասով գիտցանք աստուծոյ սէրը .

որ ան իր անձը մեր վրայ դրաւ . մենք ալ մեր եղբայր-  
ներուն համար պարտինք անձերնիս դնել : Այլ որ  
աս աշխարհիս բարիքը ունի, ու իր եղբայրը բանով  
մը կարօտ կը տեսնայ, և իր գութը անկէ կը ծած-  
կէ . ինչպէս աստուծոյ սէրը անոր մէջ բնակած  
կ'ըլլայ : Արդեակներ՝ խօսքով ու լիզուով չի սի-  
րենք, հապա գործքով ու ճշմարտութիւնով : Այլ  
ասով ճանչցուած ըլլանք թէ ան ճշմարտութենէն  
ենք . և սրտերնիս անոր առջին կ'ստուգենք : Այսին  
զի թէ որ սրտերնիս մեզ կը դատապարտեն, հապա  
աստուած՝ որ մեր սրտերէն մեծ է, և ամէն բա-  
ները գիտէ : Արեւիներ՝ թէ որ մեր սիրտերը մեզ  
չի դատապարտեն, առ աստուած համարձակութիւն  
կ'ունենանք : Այլ ինչ որ խնդրենք՝ անկէց կ'առ-  
նենք . ինչու որ իր պատուիրանքները կը պահենք,  
և իր առջին հաճոյ եղածը կ'ընենք : Այլ ասիկայ է  
անոր պատուիրանքը՝ որ իր որդւոյն յիսուս քրիս-  
տոսի անուանը հաւատանք, ու մէկդմէկ սիրենք,  
ինչպէս որ մեզի պատուէր տուաւ : Այլ ո՛վ որ անոր  
պատուիրանքները կը պահէ՝ անոր մէջ հաստա-  
տուած է, և ան ալ ասոր մէջ . և ասկէ գիտինք որ  
ան մեր մէջը կը բնակի, ան հոգիէն՝ որ մեզի տուաւ :

Ս . Աւետարան . ԴԷ . ԺԴ . 16 .

Այլ մարդ մը ընթրիք ըրաւ, ու շատերը հը-  
րաւիրեց : Այլ ընթրիքին ժամանակը իր ծառան  
խրկեց՝ որ ան հրաւիրուածները կանչէ, թէ՛ եկէք .

ինչու որ ահա ամէն բան պատրաստ է : Այս սկսեցին  
 ամէնքն ալ մէկիկ մէկիկ հրատարիլ . առջինը ըսաւ .  
 արտ մը ծախու առի , ու պէտք է որ ելլեմ անիկայ  
 նայիմ . կ'աղաչեմ քեզի որ իս թող տաս : Այս  
 միւսը ըսաւ . հինգ զոյգ եզ ծախու առի , ու կ'եր-  
 թամ որ անոնք փորձեմ . կ'աղաչեմ քեզի որ իս թող  
 տաս : Այս միւսը ըսաւ . կնիկ առի , ու անոր համար  
 չեմ կրնար գալ : Այս ծառան եկաւ իր տէրոջը պատ-  
 մեց անիկայ , ան ժամանակը տանուտէրը բարկա-  
 նալով ըսաւ իր ծառային . շուտով քաղաքին հրա-  
 պարակները ու փողոցները ել , ու աղքատները՝ ու  
 պակասաւորները՝ ու կաղերը՝ ու կոյրերը հոս բեր :  
 Այս ծառան ըսաւ . տէր՝ հրամայածիդ պէս եղաւ ,  
 ու տակաւին տեղ կայ : Այս տէրը ծառային ըսաւ .  
 ել ճամբաները ու ցանկերը , և հոս մտցուր , որ իմ  
 տունս լեցուի : Չեզի կ'ըսեմ , որ ան կանչուածնե-  
 րուն մէկն ալ իմ ընթրիքիս համը պիտի չառնէ :

Ս . Երրորդութեան յաջորդ Գ . Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Տէր Աստուած , կ'աղաչենք լսէ մեզի . և  
 շնորհէ որ մենք՝ որոնց սրտեռանդ փափաք մը տուած  
 ես աղօթելու , քու մեծազօր օգնականութեամբդ  
 պաշտպանուինք և միսիթարուինք ամէն վտանգնե-  
 րու ու ձախորդութիւններու մէջ , մեր Տէր Հիսուս  
 Քրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պետրոսի Առաքելոյ. Ա. Թուղթ. Է. 5.

Ամէնքդ մէկզմէկու հետ խոնարհութիւն ունեցէք. ինչու որ աստուած ամբարտաւաններուն հակառակ է, խոնարհներուն շնորհք կուտայ: Աստուծոյ հզօր ձեռքին տակը խոնարհեցէք, որ ժամանակին ձեզ բարձրացունէ: Բոլոր ձեր հոգերը անոր ձգեցէք. ինչու որ ան է որ ձեզի համար կը հոգայ: Արթն կեցիք՝ հսկեցէք, ինչու որ ձեր թշնամին սատանան առիւծի պէս կը պօռայ, կը պտըտի ու կը փնտռէ թէ ո՞վ կրնայ կըլներ: Որուն՝ հաւատքով հաստատուած դէմ դրէք. գիտնա՞ք որ ձեր եղբայրներն ալ աշխարհի մէջ նոյն չարչարանքները անձամբ քաշեցին: Այլ ամէն շնորհքներուն աստուածը՝ որ ձեզ իր յաւիտենական փառքին կանչեց յիսուս քրիստոսով, որուն չարչարանքներուն քիչ մը հաղորդ եղաք. ինքը ձեզ զօրացունէ, կարողացունէ, հիմերնիդ հաստատ ընէ: Անոր իշխանութիւն ու փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ս. Աւետարան. Ղ. 1. Ժ. 1.

Այլ բոլոր մաքսաւորները ու մեղաւորները անոր մօտը կուգային անկէ ըսելու համար: Փարիսեցիները ու կարդացողները տրտունջ կ'ընէին և կ'ըսէին. «աս ի՞նչու մեղաւորները կ'ընդունի, ու անոնց հետը կ'ուտէ»: Այս առակը ըսաւ անոնց, ձենէ ո՞վ է ան մարդը՝ որ հարիւր ոչխար ունենայ, և անոնցմէ մէկը որ կորսնցունէ, ան իննըսունըինը

չի՞ ձգեր անապատին մէջ , ու ան կորսուածին ետեւ  
 էն երթար՝ մինչեւ որ անիկայ գտնայ : Այլ երբոր  
 կը գտնայ՝ խնդալով իր ուսերուն վրայ կ'առնէ ա-  
 նիկայ : Այլ տուն կ'երթայ , կը կանչէ բարեկամները  
 ու գրացիները՝ և կ'ըսէ անոնց . ուրախ եղիք իմ  
 հետս . ինչու որ կորսուած ոչխարս գտայ : Ձեզի կ'ը-  
 սեմ , որ ասանկ ուրախութիւն պիտի ըլլայ երկինքը  
 ապաշխարող մեղաւորի մը համար , քան թէ իննը-  
 սունըինը արգարներուն համար՝ որոնց ապաշխա-  
 րութիւն պէտք չէ : Այամ թէ ո՞վ է ան կնիկը՝ որ  
 տասը դրամ ունենայ , ու թէ որ դրամ մը կորսըն-  
 ցունէ , ճրագ չի՞ վառեր , ու տանը մէջ աւել զար-  
 ներ , և աղէկ մը փնտռեր՝ մինչեւ որ գտնայ : Այլ  
 երբոր կը գտնայ , կը կանչէ բարեկամները ու դրա-  
 ցիները և կ'ըսէ . ուրախ եղիք իմ հետս , ինչու որ  
 կորսնցուցած դրամս գտայ : Ասանկ ալ ձեզի կ'ը-  
 սեմ . ուրախութիւն կ'ըլլայ աստուծոյ հրեշտակնե-  
 րուն առջին մէկ մեղաւորի մը համար՝ որ կ'ապաշ-  
 խարէ :

Ս. Երբորդութեան յաջորդ Դ. Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՞վ Տէր Աստուած՝ քեզի ապաւինողներուն  
 պաշտպանը , որ առանց քեզի զօրութիւն ու սրբ-  
 բութիւն չի կայ . Առատացնուր ու աճեցնուր քու  
 գթութիւնդ մեր վրայ , որ դուն՝ մեր տէրը ու ա-

ուսմանորդը ըլլալով, աս ժամանակաւոր բաները աւանակ անցունենք, որ վերջը անանցին բարեքները չի կորսնցունենք. Շնորհէ ասիկայ ուլ երկնաւոր Հայր, մեր Տէր ( )իսուս Վրիստոսի սիրուն համար. Ամէն :

Թուղթ Պօղոսի Աւարելոյ. Հոռ. ը. 18.

Ինծի ասանկ կ'երեւայ թէ՛ ժամանակիս չարչարանքները արժանի չեն դալու փառքերուն, որ մեզի պիտի յայտնուին : Ինչու որ ստեղծուածներուն յոյսը աստուծոյ որդւոյն յայտնութեանը կ'սպասէ : Ասն զի ստեղծուածները փուճ բաներու հնազանդեցան, չէ թէ իրենց կամքովը, հապա անոր համար՝ որ յոյսով հնազանդեցուց, որ իրենք նոյն ստեղծուածներն ալ ապականութեան ծառայութեանէն ազատին՝ աստուծոյ որդւոյն փառաւոր ազատութիւնովը : Ինչու որ գիտենք թէ բոլոր ստեղծուածները մինչեւ հիմայ կը հառաչեն ու ցաւ կը քաշեն : Եւ չէ թէ միայն այսչափ, հապա մե՛ք ալ որ հոգիին պտուղը ունինք, ինքնին մեր անձերուն մէջ կը հառաչենք որդեգրութեան ակնկալութեամբը՝ մեր մարմինին փրկութեանը :

Ս. Աւետարան. Դոռ. զ. 36.

Վթած եղիք՝ ինչպէս որ ձեր հայրն ալ գթած է : Սի դատէք՝ ու չի պիտի դատուիք, մի պատժէք՝ ու չի պիտի պատժուիք, արձըկեցէք՝ ու պիտի ար-

ձրկուիք : Տուէք՝ ու ձեզի պիտի տրուի . աղէկ չափով , կոխուած , ցնցուած , լեփլեցուն պիտի տրուի ձեր գոգը . ան չափովը ձեզի պիտի չափուի՝ որով որ դուք կը չափէք : Ընտնց առակ մըն ալ ըսաւ , միթէ կուրը կուրին կրնայ առաջնորդել , չէ՞ որ երկուքն ալ փօսը կ'իյնան : Ըշակերտը իր վարպետէն աղէկ չէ . ամէն կատարեալը իր վարպետին պէս կ'ըլլայ : Ինչո՞ւ քու եղբօրդ աչքին մէջի շեղը կը տեսնաս , ու քու աչքիդ մէջի գերանը չես տեսնար : Այամ թէ ի՞նչ պէս կրնաս ըսել քու եղբօրդ . եղբայր , թող տուր որ քու աչքիդ մէջի շեղը հանեմ . ու դուն քու աչքիդ մէջի գերանը չես տեսնար . կեղծաւոր , առաջ քու աչքէդ գերանը հանէ , ու ետքը նայէ՝ որ քու եղբօրդ աչքէն շեղը հանես :

Ս . Երբորդու թեան յաջորդ Ե . Կիրակին .

ՄԱՂԹԱՆՔ .

Պարգեւէ ո՛վ Տէր՝ կ'աղաչենք քեզի , որ այս աշխարհիս ընթացքը քու կառավարութեամբդ աւնանկ խաղաղութեամբ առաջնորդուի , որ քու Եկեղեցիդ կարող ըլլայ ամենայն բարեպաշտ հանդարտութիւնով քեզի ծառայելու , մեր Տէր Հիսուս Քրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պետրոսի Առաքելոյ . ա . Թուղթ . Գ . 8 .

Ա՛յնկ մտքի վրայ եղիք , մէկ յօժարութիւնով , եղբայրասէր , ազնուագութ , խոնարհ : Ըրլլայ որ

չարին տեղը չար հատուցանէք, կամ բամբասանքին  
գէժ բամբասանք • հապա անոր ներհակը՝ օրհնե-  
ցէք • ինչու որ ասոր համար կանչուեցաք, որ օրհ-  
նութիւն ժառանգէք : Ասն զի ո՛վ որ իր կեանքը  
կ'ուզէ սիրել, ու աղէկութեան օրեր տեսնալ, լե-  
զուն թո՛ղ չարութենէ լուռ պահէ, ու շրթունքները  
խաբէութիւն խօսելէն : Չարէն ետ քաշուի, ու  
բարին ընէ • խաղաղութիւնը փնտրուէ, ու անոր ե-  
տեւէն երթայ : Արովհետեւ տէրոջը աչքը արդար-  
ներուն վրայ է, և իր ականջները անոնց աղօթքին •  
տէրոջը երեսը չարագործներուն վրայ է : Աւ ո՛վ է  
ան որ ձեզ պիտի չարչարէ, թէ որ դուք բարին  
նախանձաւոր ըլլաք : Բայց թէ որ արդարութեան  
համար չարչարուիք ալ նէ՛ երանելի էք • և անոնց  
երկիւղ տալէն մի վախնաք, ու մի խռովիք : Հապա  
նոյն տէրը քրիստոսը ձեր սրտերուն մէջ սուրբ պա-  
հեցէք :

Ս. Աւետարան. Ղաթ. Ե. 1.

Աւ եղաւ որ երբոր ժողովուրդը անոր բողոքաբեր  
դիզուեցան՝ ու աստուծոյ խօսքը մտիկ կ'ընէին • ինքն  
ալ գեննեսարէթ ծովակին քովն էր կայնած : Աւ  
երկու նաւ տեսաւ որ ծովակին քով կեցեր էին, ու  
ձկնորսները անոնցմէ ելած՝ գործիքները կը լուային :  
Ինքը ան նաւերուն մէկին մէջը մտաւ՝ որ սիմոնինն  
էր, ու աղաչեց անոր որ քիչ մը ցամաքէն առաջ  
տանի, նստաւ՝ ու նաւէն ժողովուրդները կը սորվե-

ցունէր : Այլ երբոր խօսելէն լոեց , սիմոնին ըսաւ .  
 առաջ գէպ 'ի խորունկը տար , ու գործիքներնիդ  
 ձգեցէք որսալու : Սիմոն պատասխան տուաւ և ըսաւ  
 անոր . վարդապետ՝ բոլոր գիշերս աշխատեցանք՝ ու  
 բան մը չի բռնեցինք . բայց քու խօսքիդ համար ձը-  
 դենք գործիքներնիս : Այբոր ասիկայ ըրին՝ էվելօք  
 շատ ձուկեր մէջը առին . անանկ որ ուռկաններնին  
 կը պատըռտէր : Այլ աչք կ'ընէին միւս նաւը ձուկ  
 բռնող իրենց ընկերներուն՝ որ գան իրենց օգնեն .  
 ու եկան , ու երկու նաւ ալ լեցուցին , մինչեւ որ ըն-  
 կըղմելու մօտ էին : Սիմոն պետրոս երբոր տեսաւ՝  
 յիսուսի ծունկերուն ինկաւ՝ և ըսաւ . տէր՝ իմ քովէս  
 մէկ դի գնա , ինչու որ ես մեղաւոր մարդ մըն եմ :  
 Այսն զի վախը պատեց անիկայ և իր հետը եղող-  
 ներուն ամէնքը ան ձուկերուն որսին համար՝ որ  
 բռնեցին : Անանկ ալ զերեդոսին տղաքը յակորոսը  
 ու յօհաննէսը , որոնք որ սիմոնին որսորդութեան  
 ընկերներն էին . և յիսուս ըսաւ սիմոնին . մի վախ-  
 նար , ասկէ ետեւ կենաց համար մարդիկ պիտի որ-  
 սաս : Այլ նաւը ցամաքը հանելով՝ ամէն բաներնին  
 թողուցին , ու անոր ետեւէն գացին :

Ս. Երբորդութեան յաջորդ 2. Արտակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

ՈՎ Տէր Աստուած , որ քեզ սիրողներուն հա-  
 մար անիմանալի բարիքներ պատրաստեցիր . Այս-

ղաչենք՝ քեզ սիրելու համար անանկ մէկ սէր մը բորբոքէ մեր սրտերուն մէջ , որ մենք՝ ամէն բանէ կ'իջլ քեզ սիրելով քու խոստմունքներդ ձեռք ձրգենք , որոնք բոլոր մեր ուղածներէն վեր են , մեր Տէր Հիսուս Քրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Հռոմ . Գ . 5 .

Այնք մի գիտեր , որ մենք որ յիսուս քրիստոսով մկրտուեցանք , անոր մահուամբը մկրտուեցանք : Աստուծան համար մկրտութիւնով անոր հետ թաղուեցանք , որ ինչպէս քրիստոս հօրը փառքովը մեռելներէն յարութիւն առաւ , անանկ ալ մենք կենաց նորոգութեանը մէջ պտըտինք : Ինչու որ եթէ մենք անոր մահուանը նմանութիւնովը տնկուեցանք , անոր յարութեանը նմանութիւնովը ալ պիտի ըլլանք : Ասիկայ գիտնաք՝ որ մեր հին մարդը անոր հետ խաչուեցաւ , որ մեղաց մարմինը խափանի , որ ալ մեղքի չի ծառայենք : Ասան զի ան որ կը մեռնի , ինքը մեղքէն արդարացած է : Հապա թէ որ քրիստոսով մեռանք , կը հաւատանք որ անոր հետ ալ պիտի ապրինք : Վիտենք որ քրիստոս մեռելներէն յարութիւն առած է , ասկէ ետեւ չի մեռնիր , և մահը ալ անոր չի շխտեր : Ասան զի ան որ մեռաւ նէ՛ անգամ մը մեղքին մեռաւ . և ան որ կենդանի է՝ կենդանի է աստուծոյ : Անանկ ալ դուք ձեր անձը մեղքին մեռած սեպեցէք , և աստուծոյ կենդանի , մեր տէր յիսուս քրիստոսի ձեռքովը :

Ս. Աւետարան. Մարթ. է. 20.

Ճիսուս իր աշակերտներուն ըսաւ. թէ որ ձեր արդարութիւնը կարգացողներուն ու փարիսեցիներուն արդարութենէն էվել չըլլայ, երկինքի թագաւորութիւնը չէք մտնար: Ասած էք որ առջիններուն ըսուեցաւ թէ՛ սպաննութիւն մի ըներ. վասն զի ո՛վ որ սպաննութիւն կ'ընէ՛ դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ: Բայց ես ձեզի կ'ըսեմ. ո՛վ որ իր եղբօրը անիրաւ տեղը բարկանայ, դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ. և ո՛վ որ իր եղբօրը յիմար ըսէ, ատեանի պարտաւոր պիտի ըլլայ. և ո՛վ որ իր եղբօրը անմիտ ըսէ, գեհեանի կրակին պարտաւոր պիտի ըլլայ: Թէ որ քու ընծադ սեղանին վրայ կը մատուցանես, և հոն կը յիշես՝ որ քենէ քու եղբայրդ քէն պահած է, ընծադ սեղանին վրայ ձգէ, գնահ առաջ եղբօրդ հետ հաշտուէ, ու հասպա եկոր քու ընծադ տուր: Բու ներհակիդ հետ շուտ մը միաբանէ քանի որ անոր հետ ճամբուն մէջն ես, չըլլայ թէ ներհակդ քեզ դատաւորին մատնէ, ու դատաւորը դահիճին, ու բանտը ձգուիս: Այնպէս յիշէ՛ք. անկէ չի պիտի ելլես, մինչեւ որ ետքի մանր ստակը չի վճարես:

Ս. Երրորդութեան յաջորդ է. Կիրակին.

Մ Ա Ղ Թ Ա Ն Բ.

Ըմենակարող և հզօր Տէր, որ ամէն բարութեանց արարիչը ու պարգեւատուն ես, Պատուաստէ

քու անուանդ սէրը մեր սրտերուն մէջ . աճեցնուր  
մեր մէջը ճշմարիտ կրօնքը . դարմանէ մեզ ամէն  
մէկ բարութիւնով , և քու ամենամեծ ողորմութիւ-  
նովդ մեզ անոնց մէջ պահէ , մեր Տէր Հիսուս Քրի-  
ստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պողոսի Առաքելոյ . Հոռ. Գ . Է . 19 .

Սարգկօրէն կ'ըսեմ ձեր մարմինին տկարու-  
թեանը համար . ինչու որ ինչպէս ձեր անդամները  
պղծութեան ու անօրէնութեան ծառաներ պատ-  
րաստեցիք՝ անօրէնութիւնով . անանկ ալ հիմայ ձեր  
անդամները արդարութեան ծառաներ պատրաստե-  
ցէք՝ սրբութիւնով : Ասան զի երբոր մեղաց ծառա-  
ներ էիք , արդարութենէն ազատ էիք : Աւրեմն ան  
ժամանակը ի՞նչ պտուղ ունէիք , որոնցմով հիմայ  
ամօթով էք . ինչու որ անոնց վերջը մահ է : Բայց  
հիմայ մեղքերէն ազատած ու աստուծոյ ծառաներ  
եղած , դուք ձեր պտուղը ունիք սրբութիւնով , և  
անոր վերջը յաւիտենական կեանք : Արովհետեւ  
մեղքին վճարքը մահ է . բայց աստուծոյ պարգեւը  
յաւիտենական կեանք , մեր տէր յիսուս քրիստոսի  
ձեռքովը :

Ս . Աւետարան . Մտի . Ը . 1 .

Ան օրերը նորէն շատ ժողովուրդ կար , և ու-  
տելու բան մը չունէին . կանչեց իր աշակերտները՝  
և ըսաւ անոնց . խեղճս կուգայ ատ ժողովուրդին

վրայ . ինչու որ Հիմայ իրեք օր է՝ որ իմ քովս են , և ուտելու բան մը չունին : Այլ թէ որ ատոնք անօթի տուներնին խրկեմ , ճամբան պիտի մարին . ինչու որ անոնցմէ ոմանք հեռու տեղէ եկած են : Պատասխան տուին իրեն իր աշակերտները . աս անապատին մէջ ուսկից կրնաս կշտացունել ատոնք հացով : Այլ անոնց հարցուց . քանի՞ նկանակ հաց ունիք . և անոնք ըսին՝ եօթը : Այլ հրաման ըրաւ ժողովուրդին՝ որ գետնին վրայ նստին , ու առաւ եօթը նկանակը դոհացաւ՝ կտրեց ու աշակերտներուն տուաւ որ դրնեն . ու ժողովուրդին առջին դրին : Այլ քիչ մը ձուկ ունէին , ու ան ալ օրհնեց , ու հրաման ըրաւ որ դնեն : Կերան ու կշտացան , և կտորուանքներուն փշրանքները եօթը զամբիւղ վերուցին : Այլ ուտողները չորս հազարի չափ էին , ու արձըկեց անոնք :

Ս . Երրորդութեան յաջորդ Ը . Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Տէր Աստուած , որ քու անմոլար նախա- նամութեամբդ երկինքի ու երկրի մէջի ամէն բաները կը կարգադրես . Խոնարհեալ կ'աղաչենք՝ հեռացուր մենէ ամէն վնասակար եղած բաները , և շնորհէ մեզի ան բաները՝ որոնք օգտակար են , մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Հոգի . Ը . 12 .

Այլէ ևտեւ եղբայրներ՝ պարտական ենք չէ թէ մարմինով մարմինին պէս ապրելու : Այսան զի թէ որ մարմինին պէս ապրելու ըլլաք՝ պիտի մեռնիք . հապա թէ որ հոգիով մարմինին գործքերը սպաննիք, պիտի ապրիք : Ինչու որ աստուծոյ հոգիովը վարուողները աստուծոյ որդիքներն են : Արովհետեւ դուք ծառայութեան հոգին չառիք կրկին վախնալու, հապա որդեգիր ըլլալու հոգին առիք . որով արբա՛հայր կը կանչենք : Ան նոյն հոգին մեր հոգիին կը վկայէ թէ մենք աստուծոյ որդիքն ենք : Այլ թէ որ որդիք, ուրեմն ժառանգներ, աստուծոյ ժառանգներ, ու բրիստոսի ժառանգակիցներ, թէ որ չարչարանքներուն կցորդ ըլլանք, փառքին ալ հաղորդ պիտի ըլլանք :

Ս . Աւետարան . Մատթ . Է . 13 .

Օգոյշ կեցիք ան սուտ մարգարէներէն՝ որ ոչ խարի հագուստներով ձեզի կուգան, ու ներսուանց ջափշտակող գայլեր են : Իրենց պտուղէն պիտի ճանչնաք անոնք . միթէ փուշերէն խաղող կը քաղեն, կամ տատասկէն թուղ : Այսանկ՝ ամէն բարի ծառ՝ բարի պտուղ կուտայ, ու չար ծառ՝ չար պտուղ կուտայ : Խարի ծառը չի կրնար չար պտուղ տալ, ոչ ալ չար ծառը բարի պտուղ տալ : Այլէն ծառ՝ որ բարի պտուղ չի բերեր, կը կտրուի ու կրակը կը ձգուի : Արեմն իրենց պտուղէն իրենք պիտի ճանչ

նաք : Չէ թէ ամէն ինծի տէր՝ տէր ըսողը երկինքի  
թագաւորութիւնը պիտի մտնայ . հապա ան՝ որ իմ  
երկնաւոր հօրս կամքը կը կատարէ :

Ս . Երբորդութեան յաջորդ թ . Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Տէր , կ'աղաչենք՝ շնորհէ մեզի ան հոգին  
ամէն ժամանակ ան տեսակ բաները խորհելու ու  
գործելու , որոնք արդար են . որ մենք՝ որ առանց  
քեզի բարեգործութիւն մը ընելու կարող չենք ,  
քեզմով զօրանանք քու կամքիդ պէս ապրելու , մեր  
Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը , Ա՛մէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Ա . Կոթն . Ժ . 1 .

Չեմ ուզեր եղբայրներ՝ որ տգէտ ըլլաք , որ  
բոլոր մեր հայրերը ամպին տակն էին . ու ամէնքն  
ալ ծովէն անցան : Այլ ամէնքն ալ մոլիսէսով մկրտ-  
տուեցան ամպին ու ծովին մէջ : Այլ ամէնքն ալ նոյն  
հոգեւոր կերակուրը կերան : Այլ ամէնքն ալ նոյն  
հոգեւոր խմելքը խմեցին . ինչու որ ան հոգեւոր  
քարէն կը խմէին՝ որ անոնց հետը կ'երթար , ու ան  
քարը քրիստոս ինքն էր : Բայց աստուած անոնցմէ  
չատերուն չի հաճեցաւ . ինչու որ անապատին մէջ  
փռուած ինկան : Այլ ան բաները օրինակով մեզի  
համար կ'ըլլար , որ չար բաներու ցանկացող չըլ-  
լանք , ինչպէս որ անոնք ցանկացան : Ո՛չ ալ կ'ա-

պաշտներ ըլլանք, ինչպէս որ անոնցմէ ոմանք, ին-  
տոր որ գրուած է. ժողովուրդը նստաւ ուտելու ու  
խմելու, ու ելան խաղալու: Այլ պոռնկութիւն չը-  
նենք, ինչպէս որ անոնցմէ ոմանք պոռնկութիւն ը-  
րին, ու մէկ օրուան մէջ քսանըչորս հազար հոգի  
ինկաւ: Այլ տէրը չի փորձենք, ինչպէս որ անոնցմէ  
ոմանք փորձեցին, ու ան օձերէն սատկեցան: Այլ  
տրտունջ չընենք, ինչպէս որ անոնցմէ ոմանք տրտ-  
տունջ ըրին, ու ան սատկըցունողէն կորսուեցան:  
Իսկ ան ամէնքը օրինակով կ'ըլլար անոնց. սա-  
կայն անոնք մեզի խրատի համար գրուեցան, որոնց  
վրայ դարերուն վերջը հասաւ: Աւստի ան՝ որ զինքը  
հաստատ կեցած կը սեպէ, թող զգուշանայ որ չիյ-  
նայ: Չեր վրայ մարդունէն ՚ի զատ ուրիշ փորձու-  
թիւն չէ եկած. բայց աստուած հաւատարիմ է, որ  
ձեզ ձեր կարողութենէն էվել փորձութեան մէջ չի  
ձգեր. հապա ինքը փորձութեանը հետ ազատելու  
ճամբան ալ կը շնորհէ, որ կարող ըլլաք համբե-  
րելու:

Ս. Աւետարան. Ղաթ. Ժդ. 1.

Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. մէկ հա-  
րուստ մարդ մը կար՝ որ տնտես մը ունէր. և անոր  
վրայօք գանգատ մը եղաւ, որպէս թէ իր ունեցածը  
կը վատնէ: Այնչեց՝ ու ըսաւ անոր. ի՞նչ է աս՝ որ  
քու վրայովդ կը լսեմ. տուր քու տնտեսութեան  
համարդ, ինչու որ ալ չես կրնար տնտես ըլլալ:

Տնտեսը իր մտքին մէջ ըսաւ . ի՞նչ պիտի ընեմ, որ տէրս իմ տնտեսութիւնս ինէ կը հանէկոր . բան չեմ կրնար բանիլ , մուրալու կ'ամչնամ : Վիտեմ ինչ պիտի ընեմ, որ երբ որ տնտեսութենէ ելլեմ՝ զիս իրենց տունը առնեն : Այլ իր տէրոջը պարտը կանները մէկիկ մէկիկ իրեն կանչեց , տոջինին ըսաւ . իմ տէրոջս իրչափ պարտք ունիս : Ան ալ ըսաւ . հարիւր չափ ձէթ . անոր ըսաւ . գիրդ ան՝ ու շուտ մը նստէ յիստուն գրէ : Այնպէս մէկալին ըսաւ . դուն իրչափ պարտք ունիս , ան ալ ըսաւ . հարիւր չափ ցորեն , անոր ըսաւ , գիրդ ան՝ ու նստէ ութսուն գրէ : Այլ տէրը անիրաւ տնտեսը գովեց , որ խեղացութիւնով ըրաւ . ինչու որ աշխարհիս որդիքը իրենց ցեղին մէջ լուսոյ որդիքներէն էլելի խեղացի են : Այլ ևս ձեզի կ'ըսեմ , անիրաւ մամու նայէն ձեզի բարեկամներ ըրէք , որ երբ անիկոյ պակտի՝ ձեզ յաւիտենական բնակարաններուն մէջ ընդունին :

Ս . Երրորդութեան յաջորդ Թ . Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ասելի ըլլան բեզի քու խոնարհ ծառաներուդ աղաչանքները ո՛վ Տէր , և որ իրենց խնդրուածքները ընդունելի ըլլալու համար անոնց անանկ բաներ խնդրել տուր՝ որ քեզի հաճելի են , մեր Տէր Հիսուս Քրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պողոսի Առաքելոյ . Ա . Կրն . Ժբ . 1 .

Չեմ ուզեր եղբայրներ՝ որ տգէտ ըլլաք հոգե-  
 ւորբաներուն վրայօք : Դուք գիտէք , որ երբ հե-  
 թանոս էիք՝ ինչպէս ան մունճ կուռքերուն կ'ը-  
 թայէք ու կուգայէք : Ասան որոյ ձեզի կը ցըցու-  
 նեմ , որ մէկը չըլլար որ աստուծոյ հոգիովը խօսի ,  
 ու յիսուսը նշովիալ կանչէ . և մէկն ալ չի կրնար  
 յիսուսը տէր կանչել , միայն թէ սուրբ հոգիով :  
 Թէպէտ պարգեւները բաժնուած են , բայց հոգին  
 նոյն է : Թէ որ պաշտօնները բաժնուած են , բայց  
 տէրը նոյն է : Թէ որ յաջողութիւնները բաժնուած  
 են , բայց աստուած նոյն է , որ ամէն բան ամէնուն  
 կը յաջողէ : Իսկ ամէն մէկին հոգիին յայտնու-  
 թիւնը տրուած է ամէն մէկուն օգտին համար : Մէ-  
 կին իմաստութեան խօսք տրուած է հոգիէն . մէ-  
 կաին գիտութեան խօսք՝ նոյն հոգիին չափովը :  
 Միւսին հաւատք՝ նոյն հոգիովը , ուրիշին բժշկու-  
 թեան պարգեւներ՝ նոյն հոգիովը : Ուրիշին՝ հրաշք-  
 ներու յաջողութիւն . ուրիշին՝ մարգարէութիւն .  
 ուրիշին՝ հոգւոյ ընտրութիւն . ուրիշին՝ այլ և այլ  
 լեզուներ . ուրիշին՝ լեզուներու թարգմանութիւն :  
 Իսկ աս ամէնը մի և նոյն հոգին կը գործէ , և ա-  
 մէն մէկուն կը բաժնէ՝ ինչպէս որ կ'ուզէ :

Ս . Աւետարան . Դ . Ժ . ԺԹ . 41 .

Իւ երբոր մօտեցաւ՝ քաղաքը տեսնալով անոր  
 վրայ լացաւ ու ըսու . գոնէ աս օրերս դուն քու

խաղաղութիւնդ գիտնայիր . բայց հիմայ քննէ ծածկուեցաւ : Ասան զի օրեր պիտի գան քու վրայ , որ թշնամիներդ քու բոլորտիքդ պատ պիտի քաշեն , ու քեզ պիտի պաշարեն , և ամէն կողմէն քեզ պիտի նեղեն . ու հիմնայտակ պիտի ընեն քեզ՝ ու քու մէջդ եղած զաւկրներդ . և բոլորովին քար մը քարի մը վրայ չի պիտի թողուն քու մէջդ . ինչու որ չի ճանչցար քու սցեւելութեան ժամանակդ : Այլ տաճարը մտնալով սկսեց դուրս հանել աղանի ծախողները ու գնողները , և ստակ փոխողներուն սեղանները ցրուեց : Այլ ըսաւ անոնց . գրուած է թէ՛ իմ տունս աղօթքի տունն ըլլայ . և դուք ատիկայ գողերու սյր ըրիք : Այլ միշտ տաճարին մէջ անոնք կը սորվեցունէր :

Ս. Երրորդութեան յաջորդ ժԱ. Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Այլ Մտտուած , որ դուն քու ամենակարող զօրութիւնդ կը յայտնես , մանաւանդ ողորմութիւն ու գթութիւն ցըցուցած ժամանակդ . Վթարար պարգեւէ մեզի քու շնորհքդ , որ մենք՝ քու պատուիրանքներուդ ճամբուն մէջ քալելով քու խոստմունքներդ ժառանգենք , և քու երկնային գանձիդ մասնակից ըլլանք , մեր Տէր Հիսուս Քրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պողոտի Առաքելոյ . Ա . Կրճ . Ժե . 1 .

Եղբայրներ՝ ձեզի կը ցըցունեմ իմ աւետարանս՝ որ ես ձեզի քարոզեցի . որ դուք ալ ընդունեցիք , և որուն վրայ հաստատուած էք : Որ անով դուք ապրեցաք , թէ որ բռնէք՝ ինչ որ ձեզի քարոզեցի . միայն թէ գուցէ պարապ տեղը հաւատացիք : Ինչու որ պինտ առաջ ես ձեզի անիկայ աւանդեցի՝ որ ես ալ ընդունեցի , որ քրիստոս մեր մեղքերուն համար մեռաւ գիրքերուն նայելով : Եւ որ թաղուեցաւ , ու որ երրորդ օրը յարութիւն առաւ գիրքերուն նայելով : Եւ որ կեփասին երեւցաւ , ու յետոյ տասներկուփին : Յետոյ հինգ հարիւրէն էվելի եղբայրներուն մէկ տեղ երեւցաւ . որ անոնցմէ շատերը մինչեւ հիմայ կան , և ոմանք ալ ննջեցին : Եւ ետքը յակոբին երեւցաւ , յետոյ բոլոր առաքեալներուն : Եւ մէնէն ետեւ որպէս թէ մէկ անարգի մը՝ ինծի ալ երեւցաւ : Ինչու որ ես առաքեալներուն ամէնէն պզտիկն եմ . որ արժանի ալ չեմ առաքեալ ըսուելու . ինչու որ աստուծոյ եկեղեցին հալածեցի : Սակայն աստուծոյ շնորհքովը եմ՝ ինչ որ եմ նէ . և անոր ինծի ըրած շնորհքը պարապ բան մը չեղաւ . հապա անոնցմէ ամէնէն էվել ես աշխատեցայ . ու չէ թէ ես , հապա աստուծոյ շնորհքը՝ որ ինծի հետ էր : Ուստի՝ թէ ես և թէ անոնք ասանկ քարոզեցինք , և դուք ասանկ հաւատացիք :

Ս. Աւետարան . Գլ . Ժ . 9 .

Յիսուս աս առակը մէկ քանիներուն համար  
 քսաւ , որ ինքիրեննին կը պարծենային թէ արդար  
 են , և շատերը վստիկ կը զարնէին : Արդու մարդ տա-  
 ճարը ելան աղօթք ընելու . մէկը՝ փարիսեցի , և  
 միւսը՝ մաքսաւոր : Փարիսեցին զատ կայներ էր , ու  
 մինաւոր աս աղօթքը կ'ընէր . աստուած իմ՝ շնոր-  
 հակալ եմ քննէ , որ ուրիշ մարդոց պէս չեմ ես՝  
 յափշտակող , անիրաւ , շնացող , կամ թէ աս  
 մաքսաւորին պէս : Հապա շարաթը երկու անգամ  
 ծով կը պահեմ , ու բոլոր ունեցածներուս տասա-  
 նորդը կուտամ : Աւ մաքսաւորը մէկ կողմը կայներ  
 էր , ու չէր ուզեր աչքը երկինքը վերցունել . հապա  
 իր կուրծքը ծեծելով կ'ըսէր . աստուած , ներէ  
 ինձի մեղաւորիս : Ձեզի կ'ըսեմ , ասիկայ անկէ է-  
 վելի արդարացած իր տունը իջաւ . վասն զի ամէն  
 ով որ իր անձը կը բարձրըցունէ , անիկայ պիտի  
 ցածնայ . և ով որ իր անձը կը խոնարհեցունէ , ան-  
 իկայ պիտի բարձրանայ :

Ս. Երրորդութեան յաջորդ ԺԲ . կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Մենակարող և յաւիտենական Ըստուած , որ  
 դուն մեր խնդրելէն էվել միշտ պատրաստ ես մեզի  
 լսելու , և սովորած ես մեր ուզածէն ու արժանաւո-  
 րութենէն էվել շնորհելու . թափէ քու ամենառատ

ողորմութիւնդ մեր վրայ, թողութիւն շնորհելով անբաներուն՝ որոնցմէ մեր խիղճերը կը վախնան. և շնորհելով մեզի ան բարեխնները՝ որոնք խնդրելու արժանի չենք, չէ թէ մեր՝ հապաքու Արդարացի մեր Տէր Հիսուս Քրիստոսի արժանաւորութեամբը ու միջնորդութեամբը. Ե.Պ.ն :

Թուղթ Պողոսի Առաքելոյ . Բ . Կրճ . Գ . 4 .

Եսանկ յոյս մը ունինք աստուծոյ՝ քրիստոսի ձեռքովը : Ընթէ մենք ինքնիրեննիա բաւական ենք բան մը մտածելու՝ որպէս թէ մենէ, հապա մեր բաւականութիւնը աստուծոմէ է : Ար բաւական ալ ըրու մեզ նոր կտակարանին պաշտօնեաներ, չէ թէ գրով, հապա հոգիով . ինչու որ գիրը կ'սպաննէ, բայց հոգին կ'ողջնցունէ : Ասան զի թէ որ մահուան պաշտօնը գիրով փորուած քարէ տախտակներու վրայ՝ փառքով եղաւ, որ իտրայէլի որդիքը մովսէսի երեսը տեսնալու կարող չըլլան, անոր երեսին փառքին համար, որ պիտի խափանուէր . Որչափ էվելի հոգւոյն պաշտօնը փառքով պիտի ըլլայ : Ինչու որ եթէ դատապարտութեան պաշտօնը փառքով էր, որչափ էվելի արդարութեան պաշտօնը՝ փառքով :

Ս . Աւետարան . Մարտի . է . 51 .

Յիսուս նորէն տիւրոսի ու սիզոնի սահմաններէն ելաւ, ու գալիլեացւոց ծովեզերքը եկաւ՝ դեկապոլիսի սահմաններուն մէջէն : Այլ խուլ ու համր

մէկը բերին անոր առջին, և աղաչեցին որ անոր վրայ ձեռք դնէ : Այլ անիկայ ժողովուրդէն մէկ դի առաւ, իր մատները ականջներուն խօթեց՝ ու հոն թուքաւ, և անոր լեզուէն բռնեց, երկինքը նայեցաւ՝ հառաչեց և ըսաւ. եփփաթա, որ բացուէ ըսել է : Այլ նոյն ժամուն անոր ականջները բացուեցան, ու լեզուին կապերը քակուեցան, և շիտակ կը խօսէր : Այլ ապրւպրեց անոնց որ մէկու մը չըսեն. և որչափ ինքը կը պատուիրեր անոնց՝ անոնք էվելըք կը տարածայնէին : Այլ չափազանց կը զարմանային ու կ'ըսէին, ասիկայ ամէն բաները աղէկ ըրաւ, որ խուլերուն ըսել կուտայ, ու մունձերուն՝ խօսիլ :

Ս. Երրորդութեան յաջորդ ԺԳ. Կիրակին.

ՄԱՂԹԱՆՔ.

Ըմենակարոյ և մարդասէր Ըստուած, որ հաւատացեալներուն քեզի արժանաւորապէս և գովութեամբ ծառայելը մի միայն քու պարգեւդ է. կը խնդրենք՝ շնորհէ մեզի որ այս կեանքիս մէջ անանկ հաւատարմօքար ծառայենք քեզի, որ վերջը քու երկնային խոստմունքներդ ընդունելէն չի զրկուինք, մեր Տէր Հիսուս Քրիստոսի արժանաւորութեամբը. Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ. Գաղա. դ. 16.

Խոստմունքները արբահամին ու անոր զուկին եղան. ու չըսէր թէ զուկրներուն որպէս թէ շա-

տերուն, հապա իբր թէ մէկի մը, թէ՛ քու զաւկիդ  
 ալ, որ ան քրիստոսն է : Ասկայն ասիկայ կը զը-  
 րուցեմ, ան կտակը՝ որ առաջուց աստուծմէ հաս-  
 տատուած էր քրիստոսով, օրէնքը՝ որ չորս հարիւր  
 երեսուն տարիէն ետեւ դրուեցաւ, չի կրնար խախ-  
 տել ան խոստմունքը խախտելու : (Թ)է որ ժառան-  
 գութիւնը օրէնքէն է, ուրեմն ալ ան խոստմունքէն  
 չէ. բայց աստուած խոստմունքով արբահամին շնոր-  
 հեց : Հապա օրէնքը ինչո՞ւ համար է, յանցանքի հա-  
 մար էվելցաւ, մինչեւ որ ան զաւակը գայ՝ որուն որ  
 խոստացուեր էր, հրեշտակներով սահմանուած միջ-  
 նորդի մը ձեռքով : Բայց մէկու մը միջնորդ չըլլար .  
 սակայն աստուած մէկ է : Անանկ է նէ օրէնքը աս-  
 տուծոյ խոստմունքին հակառակ է մի . քաւ լիցի .  
 վասն զի թէ որ օրէնքը տրուած ըլլար՝ որ կարող  
 ըլլար կենդանացունելու, ան ժամանակը իրաւ-  
 ցունէ օրէնքէն էր արգարութիւնը : Բայց գիրքը  
 ամէնը մեղքի տակ գոցեց, որ ան խոստմունքը յի-  
 սուս քրիստոսի հաւատքէն տրուի հաւատացեալնե-  
 րուն :

Ս. Աւետարան . Գ-ի՝ Ժ . 23 .

Արանի ան աչքերուն՝ որ ձեր տեսածները կը  
 տեսնան : Չեղի կ'ըսեմ, որ շատ մարգարէներ ու  
 թագաւորներ ուղեցին ձեր տեսածը տեսնալ՝ ու չի  
 տեսան, և ձեր լսածը լսել՝ ու չի լսեցին : Ալ մէջ  
 մ'ալ օրինական մը ելաւ՝ կը փորձէր անիկայ ու

կ'ըսէր, վարդապետ՝ ի՞նչ ընեմ որ յաւիտենական  
կեանքը ժառանգեմ : Ի՞նչը ըսաւ անոր, օրէնքին  
մէջ ի՞նչ գրուած է, ի՞նչպէս կը կարդաս : Ան  
պատասխան առաւ և ըսաւ, սիրէ քու տէր աս-  
տուածդ քու բոլոր սրտէդ, և քու բոլոր անձէդ, և  
քու բոլոր զօրութենէդ, և քու բոլոր մտքէդ, և  
քու ընկերդ ալ քու անձիդ պէս : Այլ ինքը ըսաւ  
անոր, պատասխանդ շիտակ տուիր, առիկայ ըրէ՛ ու  
կ'ապրիս : Ան երբոր ուղեց իր անձը արդարացու-  
նել, ըսաւ յիսուսին, բայց ո՞վ է իմ ընկերս : Հի-  
սուս պատասխան տուաւ և ըսաւ, մարդ մը երու-  
սաղէմէն երիքով կ'իջնար, ու գողերուն ձեռքը ին-  
կաւ, որոնք հանուեցուցին անիկայ, ու վրան վէրքեր  
դրին, կիսամեռ թողուցին՝ ու գացին : Պատահե-  
ցաւ որ քահանայ մը ան ճամբէն կ'իջնար, և անի-  
կայ տեսաւ՝ զանց ըրաւ : Այնպէս զեւտացի մը՝ ան  
տեղէն գալով՝ տեսաւ՝ ու հողը չեղաւ : Սամարացի  
մը ճամբորդութիւն ընելով հօն անոր քովը եկաւ,  
ու անիկայ տեսնալով մեղքըցաւ, և քովը գնաց  
անոր վէրքերը փաթթեց՝ վրան ձէթ ու գինի գնե-  
լով, և իր գրաստին վրայ դրաւ՝ պանդոկ մը տա-  
րաւ անիկայ, և անոր պէտը ըրաւ : Այլ ետեւի օրը  
երբոր կ'ելէր, հանեց պանդոկապետին երկու դա-  
հեկան տուաւ և ըսաւ, հոգ տար ատոր, և ինչ  
ծախք որ ընես ատոր համար, մէյ մ'ալ գալու ա-  
տենս ես քեզի կը վճարեմ : Հիմայ ան իրիքէն  
ո՞րը մօտաւ որ ըլլալ կը թուի քեզի ան գողերուն

ձեռքը խնորհն : Ան ալ ըսաւ . ան որ անոր վրայ  
ողորմութիւն ըրաւ . յիսուս ըսաւ անոր . գնա՛ դուն  
ալ անանկ ըրէ :

Ս . Երրորդութեան յաջորդ ժԴ . Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ամենակարող և յաւիտենական Աստուած , ա-  
ճեցնուր մեր հաւատքը՝ յոյսը՝ ու սէրը , և քու խոստ-  
մունքներդ ժառանգելու համար տուր մեզի սիրել  
քու հրամայած բաներդ , մեր Տէր Հիսուս Վրիս-  
տոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Գաղա . Է . 16 .

Միայն թէ աս կ'ըսեմ . հոգիով գացէք , ու  
մարմինին ցանկութիւնը մի կատարէք : Անչու որ  
մարմինը հոգիին հակառակ կը ցանկայ , և հոգին  
մարմինին հակառակ , և ասոնք որ մեկզմէկու հա-  
կառակ են , չէ թէ ինչ որ կուղէք՝ ան ընէք : Վայց  
թէ որ հոգիով վարուիք՝ ալ օրէնքին տակը չէք :  
Ս ասն զի մարմինին գործքերը յայտնի են՝ որ ա-  
սոնք են , շնութիւն , պոռնկութիւն , պղծութիւն ,  
գիճութիւն , կոտորածութիւն , կախարդութիւն ,  
թշնամութիւն , վէճ , նախանձութիւն , բարկու-  
թիւն , հակառակութիւններ , երկպառակութիւն-  
ներ , հերձուածողութիւններ , չարակնութիւններ ,  
սպաննութիւններ , արբեցողութիւններ , անառա-

կութիւններ, և ինչ որ ասոնց նման են . որ հիմա կուց ձեզի կը զըուցեմ , ինչպէս որ առաջուց ալ կը զըուցէի թէ՛ ասանկ բաներ գործողները աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգեր : Նայց հոգիին պըտուղը աս է . սէր , խնդութիւն , խաղաղութիւն , երկայնմտութիւն , քաղցրութիւն , բարութիւն , հաւատք , նեղութիւն , ժուժկալութիւն , ասանկնեւրուն վըայով օրէնքը հակառակ չէ : Նայց անոնք որ քրիստոսիւններն են՝ իրենց մարմինը խաչ հանեցին կիրքերովը ու ցանկութիւններովը մէկ տեղ :

Ս . Աւետարան . Ղա՛ . Ժէ . 11 .

Նա եղաւ որ երբ ինքը երուսաղէմ կ'երթար , ու սամարիայի ու գալիլեացուց մէջէն կ'անցնէր : Նա երբոր գեղ մը պիտի մտնար՝ տասը բորոտ մարդ անոր հանդիպեցան , որոնք հեռուէն կայնած , ձայներնին վերուցին՝ և ըսին . յիսուս վարդապետ , ուղորմէ՛ մեզի : Նա երբոր տեսաւ անոնք՝ ըսաւ անոնց , գացէք դուք ձեզ քահանային ցըցուցէք . և եղաւ որ երբ գացին՝ իսկոյն մաքրուեցան : Նոնցմէ մէկը երբոր տեսաւ որ բժշկուեցաւ , ետ դարձաւ՝ մեծ ձայնով փառք կուտար աստուծոյ , անոր ոտքը ինկաւ երեսի վըայ , և անկէ շնորհակալ կ'ըլլար . և ինքը սամարացի մըն էր : Պատասխան տուաւ յիսուս՝ և ըսաւ . չէ՞ որ ասոնք տասն ալ սրբուեցան . հապտան ինը ո՛ւր են : Ար չեն գտնուիր դառնալու աստուծօ փառք տալու , միայն թէ աս օտարազգին : Նա

բաւ անոր . ելիր գնա , ինչու որ քու հաւատքդ քեզ  
ողջնուց :

Ս . Երբորդ տ թեան յաջորդ ժե . Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Պահպանէ ո՞վ Տէր՝ կ'աղաչենք քու սուրբ Աշ-  
կեղեցիդ քու յաւիտենական ողորմութեամբդ . և  
որովհետեւ մարդս իր տկարութենէն առանց քեզի  
միշտ սխալական է , պահպանէ մեզ ամէն ժամա-  
նակ քու օգնականութեամբդ բոլոր մնաստակար  
գործքերէն , և մեզ մեր փրկութեանը օգտակար  
գործքերուն առաջնորդէ , մեր Տէր Հիսուս Քրիս-  
տոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Գաղա . զ . 11 .

Տեսէք՝ ինտոր գիրով ձեզի գրեցի իմ ձեռքովս :  
Սասն զի ան ամէնքը որ կ'ուզեն մարդոյ հաճոյ ըլ-  
լալ մարմինով , անոնք ձեզ կ'ստիպեն որ թլփա-  
տուիք , միայն թէ քրիստոսի խաչին ետեւէն չեր-  
թան : Ինչու որ անոնք ալ որ թլփատուած են , չէ թէ  
օրէնքը կը պահեն , հասպա կուզեն որ դուք թլփա-  
տուիք , որ իրենք ձեր մարմինովը պարծենան : Բայց  
ես՝ քաւ լիցի , որ պարծենամ . հասպա միայն թէ  
մեր տէր յիսուս քրիստոսի խաչովը , որ անով աշ-  
խարհք ինծի խաչը ելած է , ես ալ աշխարհի : Ին-  
չու որ քրիստոս յիսուսով թլփատութիւնը ու ան-

Թլիատու թիւնը բան մը չէ . հասցանոր ստեղծում :  
 Այն ամէնը որ այս կանոնին կը միաբանին , խա-  
 ղաղու թիւն ու ողորմութիւն անոնց վրայ , և աս-  
 տուծոյ իսրայէլին վրայ : Ասկէ ետեւ մէկը թող խ-  
 չի հոգնեցունէ . ինչու որ ես քրիստոսի չարչարանքը  
 իմ մարմնիս մէջ կը կրեմ : Աղբայրներ՝ մեր տէր  
 յիսուս քրիստոսի շնորհքը ձեր հոգիին հետ ըլ-  
 լայ . ամէն :

Ս. Աւետարան . Մարտի . 24 .

Մարտի մը չի կրնար երկու տիրոջ ծառայել .  
 կամ մէկը պիտի առէ , և միւսը պիտի սիրէ . կամ  
 մէկը պիտի պատուէ , և միւսը անարգէ . չէք կրնար  
 ծառայել աստուծոյ և մամոնայի : Անոր համար  
 ձեզի կ'ըսեմ . ձեր կեանքին համար մի մտմտաք ,  
 թէ՛ ինչ պիտի ուտէք , կամ ինչ պիտի խմէք . ոչ ալ  
 ձեր մարմիններուն համար թէ՛ ինչ պիտի հագնէք .  
 չէ՞ որ կեանքը կերակուրէն աւելի է , ու մարմինը  
 հագուստէն : Ասցեցէք երկինքի թռչուններուն , որ  
 ոչ կը ցանեն ու ոչ կը քաղեն ու ոչ ամբարի մէջ կը  
 ժողուեն , և ձեր երկնաւոր հայրը անոնք կը կե-  
 րակրէ . չէ՞ որ դուք անոնցմէ էվելի էք : Հիմայ՝ ձե-  
 նէ ո՞վ կրնայ իր մտմտալովը իր հասակը կանգուն  
 մը երկնցունել : Այս հագուստի համար ինչ կը  
 մտմտաք . նայեցէք լեռանը շուշան ծաղիկին , ինչ  
 պէս կը մեծնայ . ոչ կ'աշխատի և ոչ կը մանէ : Ձեզի  
 կ'ըսեմ , որ սողմոն ալ իրին բոլոր փառաւորու-

Թեանը մէջ անոնցմէ մէկին պէս չի հագուելցաւ :  
 Հապա թէ որ լեռան խոտը որ այսօր կայ, ու վաղը  
 փուռը կը ձգուի, աստուած անանկ կը հագուեցունէ  
 նէ. հապա որչափ ասաւել ձեզ՝ թերահաւատներ :  
 Եթէ ետեւ հոգ մի ընէք ու մի ըսէք, ի՞նչ պիտի  
 ուտենք, կամ ի՞նչ պիտի խմենք, կամ ի՞նչ պիտի  
 հագնինք : Ինչու որ աս ամէնը հեթանոսները կը  
 խնդրեն. որովհետեւ ձեր երկնաւոր հայրը գիտէ  
 թէ աս ամէնը ձեզի պէտք են : Պինտ ասաջ աս-  
 տուծոյ արքայութիւնը խնդրեցէք, և անոր արդա-  
 ղութիւնը, ու ամէն ատ բաները ձեզի կ'ելվինայ :  
 Եթէ ետեւ վաղուանը մի հոգտք, ինչու որ վաղուան  
 օրը իրեն համար պիտի հոգայ. հերեք է օրուան՝  
 իրեն սրտմաշութիւնը :

Ս. Երրորդութեան յաջորդ ժ. Վերակին.

Ս Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Տէր՝ կ'աղաչենք քեզի, թող քու մշտնջե-  
 նաւոր ողորմութիւնդ քու եկեղեցիդ մայրէ ու  
 պաշտպանէ. և առանց քու օգնականութեանդ կա-  
 ըող չըլլալուն ինքնին ապահով առաջ երթալու,  
 պաշտպանէ՛ անիկայ քու օգնութեամբդ ու բարե-  
 ըարութեամբդ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շը-  
 նորհարովը, Ա.Պ.Ն. :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ. Եփես. գ. 15.

Կ'աղաչեմ որ չի ձանձրանայ մեր ներդրութիւննե-

բուն մէջ , որ ձեզի համար է . որ ան ձեր փառքն է :  
 Ասոր համար ծունկ կը չոքեմ մեր տէր յիսուս քրիս-  
 տոսի հօրը . որ անկէ բոլոր նահապետութիւնները  
 երկինքի մէջ ու երկրի վրայ՝ անուն կ'առնեն . որ  
 տայ ձեզի իր փառքին մեծութեանը չափովը՝ զօրու-  
 թիւնով հաստատուիլ իր հոգիովը ներքին մարդուն  
 մէջ . որ քրիստոս հաւտաբով ձեր սրտին մէջ բը-  
 նակի , սիրով արմատ կապած ու հաստատուած :  
 Ար կարող ըլլաք բոլոր սուրբերուն հետ մէկ տեղ  
 իմանալու , թէ՛ ինչ է լայնութիւնը ու երկայնու-  
 թիւնը , բարձրութիւնը ու խորութիւնը : Շ'անչնալ  
 քրիստոսի սիրոյն գիտութեանը առաւելութիւնը ,  
 որ աստուծոյ բոլոր լիութիւնովը լեցուիք : Ասոյց ա-  
 նոր որ կարող է առատութեամբ կատարել ամէն  
 բանէն էվէլ՝ որ մենք կը խնդրենք ու կ'իմանանք ան  
 զօրութիւնովը՝ որ մեր մէջը յաջողուած է : Իրեն  
 փառք եկեղեցիին մէջ , ու քրիստոս յիսուսով՝ բոլոր  
 ազգերուն մէջ , յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Ս. Աւետարան . Դ-ի . է . 11 .

Աւելաւ որ վաղուան օրը ինքը քաղաք մը կ'եր-  
 թար , որուն անունը նային էր . իր հետը կ'երթային  
 իր աշակերտներն ալ , ու շատ ժողովուրդ : Արբոր  
 քաղաքին դռանը մօտեցաւ , մէյմ՝ ալ մեռել մը  
 կ'ելէր , իր մօրը մէկ հատիկ տղան , և ինքը որբու-  
 արի էր . ու քաղաքին շատ ժողովուրդը անոր հետն  
 էր : Տէրը երբոր անիկայ տեսաւ՝ մեղքըցաւ , և ը-

տաւ . մի լար : Այլ զնաց ճաղին մօտեցաւ . և անօնք  
 որ վերուցեր կը տանէին կանկ առին . և ըսաւ . զոն  
 կտրի՞՞ քեզի կ'ըսեմ , ելիր : Անուելը ելաւ նըս-  
 տաւ՝ ու սկսեց խօսիլ , և անիկայ իր մօրը տուաւ :  
 Այլ ամէնքն ալ վախով բռնուեցան , ու աստուած  
 կը փառաւորէին ու կ'ըսէին , թէ մեծ մարգարէ մը  
 ելած է մեր մէջը . և թէ՛ աստուած բարութիւնով իր  
 ժողովուրդին տես եկած է : Այլ այս խօսքը իր վրայո-  
 վը բոլոր հրէաստան ելաւ , և ան աշխարհին բոլոր  
 կողմերը :

Ս . Երբորդու թեան յաջորդ ժէ . Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Տէր , կ'աղաչենք քեզի , որ քու շնորհքդ  
 կանխէ մեզի և ուղղէ մեզ . ու միշտ անձերնիս ամէն  
 տեսակ բարեգործութիւններու նուիրել տայ , մեր  
 Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պօղոսի Աւաքեցոյ . Եփե՞ . 7 . 1 .

Ուստի՛ կ'աղաչեմ ձեզի ես՝ որ տէրօջը համար  
 կապուած եմ , որ զուք վայլածին պէս երթաք ան  
 կոչմանը՝ որուն որ կանչուեցաք : Ամէն խոնարհու-  
 թիւնով , ու հեղութիւնով , ու երկայնամտութիւնով ,  
 սիրով մէկզմէկու մտիկ ընելով : Տանա՛ք հոգւոյ  
 միաբանութիւնը խաղաղութեան կապով պահելու :  
 Սէկ մարմին ու մէկ հոգի , ինչպէս որ ձեր կոչմանը

մէկ յոյսովը կանչուեցաք : Մէկ է տէրը , մէկ հաւ-  
ւատք , մէկ մկրտութիւն : Մէկ աստուած , և ամէ-  
նուն հայրը , որ ամէնուն վրայ , ու ամէնուն հետ , և  
մեր ամէնուս մէջը :

Ս . Աւետարան . Դ . Ժ . 1 .

Աւ եղաւ որ երբ ինքը շարաթ օր մը փարիսեց-  
ւոց իշխաններուն մէկուն տունը հաց ուտելու մը-  
տաւ . և անոնք կ'սպասէին անոր : Աւ ահա հոն իր  
առջեւը ջրգողեալ մարդ մը կար : Հիսուս պատաս-  
խան տուաւ՝ և ըսաւ օրինականներուն ու փարիսե-  
ցիներուն , թէ՛ արժան է շարաթ օրը բժշկութիւն  
ընել : Աւ անոնք մունճ կեցան . ու ինքը բռնեց ա-  
նիկայ՝ բժշկեց անիկայ , ու թող տուաւ : Աւ ըսաւ  
անոնց . ձեռք որոնք էջը կամ եզը հորը իյնայ , ու  
շուտ մը չի հաներ անիկայ շարաթ օրը : Աւ այս  
բանիս համար չի կրցան անոր պատասխան տալ :  
Առաջ մը ըսաւ ան հրաւիրուածներուն ալ , երբ որ  
տեսաւ թէ ինչպէս առջի տեղերը կ'ընտրէին . ը-  
սաւ անոնց : Արբոր մէկը քեզ հարսնիքի մը կամ  
հարկիքի մը հրաւիրէ՝ առջի բարձին վրայ մի'նըս-  
տիր , չըլլայ թէ քենէ էվելի պատուաւոր մէկը անկէ  
կանչուած ըլլայ . և ան՝ որ քեզ ու անիկայ կան-  
չեց , գայ զըուցէ քեզի , ասոր տեղ տուր , և անկէ  
ետեւ սկսիս ամօթով ետքի տեղը բռնել : Վայց  
երբոր կանչուիս , գնա՛ ետքի տեղը նստէ . որ երբ  
քեզ կանչողը գայ նէ՛ քեզի ըսէ . բարեկամ վեք

հրամմէ . ան ժամանակը քու հետդ նստողներուն  
անջին քեզի փառք կ'ըլլայ : Այսն զի ո՛վ որ իր  
անձը կը բարձրըցունէ՝ պիտի ցածնայ . և ան որ իր  
անձը կը խոնարհեցունէ՝ պիտի բարձրընայ :

Ս . Երրորդութեան յաջորդ ժ.Ը . Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Տէր՝ կ'աղաչեմք , պարգեւէ քու շնորհքդ  
քու ժողովուրդիդ որ աշխարհի , սասանային ու  
մարմինին փորձութիւններուն դէմ դնեն , և սուրբ  
սրտով ու մտքով քեզի՝ մի միայն Աստուծոյ հե-  
տեին , մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը .  
Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Ա . Կորն . ա . 4 .

Ամէն իժիբ ձեզի համար իմ աստուծմէս կը գո-  
հանամ՝ ան շնորհքներուն վրայ , որ ձեզի տրուած  
են քրիստոս յիսուսով : Որ դուք ամէն բանի մէջ  
անով հարուստցաք , ամէն խօսքով , ու ամէն գի-  
տութիւնով : Ինչպէս որ աստուծոյ վկայութիւնն ալ  
ձեր մէջը հաստատուեցաւ : Որ չըլլայ թէ դուք մէկ  
շնորհքով մըն ալ պակսիք , մեր Տէր յիսուս քրիս-  
տոսի յայանուելուն սպասելով : Որ ձեզ նաև պիտի  
հաստատէ մինչեւ վերջը՝ անարատ՝ մեր տէր յիսուս  
քրիստոսի օրը :

Ս. Աւետարան. Մատթ. Իր. 54.

Փարիսեցիները երբոր լսեցին թէ՛ սագուկեցի-  
 ները պապանձեցուց, մէկ տեղ ժողով ըվեցան : Այս  
 անոնցմէ մէկը անիկայ փորձելով հարցուց՝ և ըսաւ .  
 վարդապետ՝ ո՞ր պատուիրանքը մեծ է օրէնքին մէջ :  
 Այս յիսուս ըսաւ անոր . քու տէր աստուածդ սիրես  
 քու բոլոր սրտէդ՝ և քու բոլոր անձէդ՝ և քու բոլոր  
 մտքէդ : Այսիկայ է մեծ ու առաջին պատուիրանքը :  
 Արկորդը ասոր նման . քու ընկերդ քու անձիդ  
 պէս սիրես : Այս երկու պատուիրանքէս բոլոր օ-  
 րէնքները ու մարգարէները կախուած են : Այս փա-  
 րիսեցիները երբոր ժողով ըվեցան, յիսուս հարցուց  
 անոնց՝ և ըսաւ . ձեզի ի՞նչպէս կը թուի քրիստոսի  
 համար, որո՞ւն որդին է . ըսին իրեն՝ դաւիթին :  
 Եւ յիսուս ըսաւ անոնց . հապա ի՞նչու դաւիթ հոգիու-  
 վը անիկայ տէր կը կանչէ՝ ու կ'ըսէ . տէրը իմ տե-  
 րոջս ըսաւ . իմ աջ կողմս նստէ, մինչեւ որ քու թըշ-  
 նամիներդ քու ոտքիդ պատուանդան ընեմ : Աւրեմն  
 թէ որ դաւիթ անիկայ տէր կը կանչէ, ի՞նչպէս ա-  
 նոր որդին կ'ըլլայ : Այս մէկը չէր կրնար անոր բան  
 մը պատասխան տալ . ու ան օրէն ետեւ մէկը չէր  
 համարձակեր անոր բան մը հարցունել :

Ս. Երբորդու թեան յաջորդ ժ. Թ. Վրակին .

Մ Ա Ղ Թ Ա ն Բ .

ՈՎ Տէր Աստուած, որ առանց քեզ կարող

չենք քեզի հաճոյ ըլլալու . Պթու թեամբ պարգեւէ որ քու Սուրբ Հոգիդ ամէն բանի մէջ մեր սիրտերը ուղղէ ու կանոնաւորէ , մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պողոսի Առաքելոյ . Եփե . դ . 17 .

Ուստի ասիկայ կ'ըսեմ ու տէրոջմով դաշինք կ'ընեմ . որ դուք մէյ մ'ալ ան կերպով չերթաք , ինչպէս որ միւս հեթանոսները կ'երթան իրենց մտքին ունայնութիւնովը : Ար անոնց սիրտերը խաւարած է , ու աստուծոյ կեանքէն օտար են , իրենց մէջը եղած տգիտութեան պատճառաւ , իրենց սրտերուն կուրութեանը համար : Արոնք իրենց անձերուն յոյսը կտրեցին , ու ինքրզինքնին անառակութեան տուին , ամէն պղծութեան գործքերով՝ ազահուութիւնով : Բայց դուք քրիստոսը թսանկ չի սորվեցաք , թէ պէտեւ անոր վրայով ըսեցիք՝ և անկէ սորվեցաք , թէ ինչպէս է յիսուսի ճշմարտութիւնը . խաբեբայ ցանկութիւններով ապականուած առաջին վարմունքին պէս հին մարդը ձենէ մէկ դի հանէք . և ձեր մտքին հոգիովը նորոգուիք . ու նոր մարդը վրանիդ հագնիք , որ աստուծմով հաստատուած է արդարութիւնով ու ճշմարիտ սրբութիւնով : Ուստի՝ ստու-  
թիւնը մէկ դի ձգեցէք . ամէն մէկերնիդ իր ընկերին հետ ճշմարտութիւն խօսեցէք . ինչու որ մենք մէկըզմէկու անդամներ ենք : Բարկացէք ու մեղք մի գործիք , արեւը ձեր բարկութեանը վրայ չի մանայ :

Եւ սատանային տեղի մի տաք : Եւն որ կը գողնար՝  
ալ թող չի գողնայ . հապա էվելօք աշխատի իր  
ձեռքովը բարեք գործելու , որ կարող ըլլայ տալու՝  
որուն որ հարկաւոր է : Եւմէն անշնորհք խօսք ձեր  
բերնէն չելէ : հապա որ բանը որ բարի է՝ շինու-  
թեան պէտք եղածը որ շնորհք տայ լսողներուն : Եւ  
աստուծոյ սուրբ հոգին մի տրտմեցունէք , որով որ  
դուք կնքուեցաք փրկութեան օրը : Եւմէն դառնու-  
թիւն , ու բարկութիւն , ու սրտմտութիւն , ու աղա-  
ղակ , ու հայհոյութիւն ամէն չարութիւններով մէկ  
տեղ ձենէ վերցուի : Մէկզմէկու հետ քաղցր եղէք՝  
գթած , ներելով իրարու , ինչպէս որ աստուած քը-  
րիստոսով մեզի ներեց :

Ս. Եւետարան . Մարտի . Թ . 1 .

Տիսուս նաւը մանալով միւս կողմը անցաւ , և  
իր քաղաքը եկաւ : Եւ մէյ մ'ալ անդամալոյծ մը  
բերին իրեն՝ որ մահիճն մէջ պառկած էր , և յի-  
սուս անոնց հաւատքը տեսնալով՝ անդամալոյծին  
ըսաւ . քու մեղքերդ քեզի թողուն : Եւ ահա կար-  
դացողներէն ոմանք իրենց մտքին մէջ ըսին , կը  
հայհոյեկոր ատ : Եւ յիսուս անոնց խորհուրդը ի-  
մանալով՝ ըսաւ իրենց . ինչո՞ւ համար սրտերնուդ  
մէջ գէշ բաներ կը խորհիք : Ո՞րը դիւրին է . քու  
մեղքերդ քեզի թողուն ըսելը , եթէ՛ ելիր ու քալէ  
ըսելը : Եւ այց գիտնա՞ք՝ որ որդին մարդոյ իշխանու-  
թիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տա-

լու . ան ժամանակը անդամալոյծին ըսաւ . ելի՛ր մա-  
 հիճդ ան՝ ու տունդ գնա՛ : Այլ ելաւ իր տունը գնաց :  
 Եւ որովուրդն երբ երբոր տեսան , զարմացան՝ ու աւ-  
 տուած կը փառաւորէին , որ մարդու անանկ իշխա-  
 նութիւն կուտայ :

Ս . Երբորդութեան յաջորդ Ի . Կիրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Մենակարող և ողորմած Մտտուած , կ'աղաչենք  
 քեզի քու ամենառատ մարդասիրութեամբդ պահ-  
 պանէ՛ մեզ ամէն վնասակար բաներէն . որ մենք  
 հոգով ու մարմնով պատրաստ ըլլալով՝ ուրախ  
 սրտիւ ան քու ուզած բաներդ կատարենք , մեր Տէր  
 Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Եփես . Է . 15 .

Նայեցէք՝ որ ինչպէս շիտակ երթաք . անմիտ-  
 ներուն պէս չէ . հապա իմաստուններուն պէս . ժա-  
 մանակները գնեցէք , ինչու որ օրերը չար են : Աւս-  
 տի՛ անմիտ մի ըլլաք , հապա իմացէք՝ ինչ է տէ-  
 րոջը կամքը : Այլ գինիով մի գինովնաք , որուն մէջ  
 որ անառակութիւն կայ . հապա էվելոք հոգիով  
 լեցուցէք : Արտերնուդ մէջ սաղմոսներ ու օրհնու-  
 թիւններ խօսելով , ու հոգեւոր տաղեր , երգելով  
 ու սաղմոս ըսելով տէրոջը ձեր սրտին մէջ : Ամէն  
 ժամանակ ամէն բանի համար գոհութիւն տուէք

հօրը ու աստուծոյ՝ մեր տէր յիսուս քրիստոսի ա-  
նունովը : Մէկզմէկու հնազանդ եղևք քրիստոսի  
վախովը :

Ս. Աւետարան. Մարտի . իբ . 1 .

Յիսուս ըսաւ . երկինքի թագաւորութիւնը թա-  
գաւոր մարդու մը կը նմանի , որ իր տղին համար  
հարսնիք ըրաւ : Այլ իր ծառաները խրկեց՝ որ հարս-  
նիքի հրաւիրուածները կանչեն , և անոնք չուղեցին  
գալ : Աորէն ուրիշ ծառաներ խրկեց՝ և ըսաւ . ը-  
սէք ան հրաւիրուածներուն , ահա իմ ճաշս պատ-  
րաստեցի . զուարակներս ու գեր կենդանիներս մոր-  
թուած են , և ամէն բան պատրաստ է . հարսնիքս  
եկէք : Այլ անոնք անհոգութեամբ՝ մէկը իր արտը  
գնաց , և մէկալը իր առուտուրին : Այլ ուրիշները  
անոր ծառաները բռնեցին , նախատեցին ու մեռու-  
ցին : Այլ թագաւորը երբոր լսեց՝ ըարկացաւ . և իր  
զօրքերը խրկեց ու ան սպաննողները սատկըցուց ,  
և անոնց քաղաքը երեց : Ան ժամանակը իր ծա-  
ռաներուն ըսաւ . հարսնիքս պատրաստ է , և հրա-  
ւիրուածները արժանի չէին : Ուստի՝ գացէք պողո-  
տաները , և ո՛վ որ գանալու ըլլաք՝ հարսնիքս կան-  
չեցէք : Այլ ծառաները գացին ճամբաներուն վրա ,  
ո՛վ որ գտան չարն ու բարին՝ ամէնը ժողուեցին , ու  
հարսնիքը սեղան նստողներով լեցուեցաւ : Այլ թա-  
գաւորը երբոր հասնելու որները սենալու մտաւ՝ մարդ  
մը տեսաւ հոն , որ հարսնիքի լաթ չէր հագած :

Եւ ըսաւ անոր . ը'նկեր՝ ինչո՞ւ համար հոս մտար՝  
 թէ որ հարսնիքի լաթ չունէիր , և ան պատանձե-  
 ցաւ : Են ատենը թաղաւորը սպասաւորներուն ը-  
 սաւ . կապեցէք ատոր ուրբերը ու ձեռքերը , ու դուր-  
 սի մտժը հանեցէք . հոն պիտի ըլլայ լալ ու ակ-  
 ւաներ կըճոցունել : Ինչու որ կանչուածները շատ  
 են , ու ընտրուածները քիչ :

Ս. Երրորդութեան յաջորդ Ի Ա. Կրակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք . :

Կաղաչենք ո՞վ բազումողորմ՝ Տէր , քու հաւա-  
 տացեալ ժողովուրդիդ քաւութիւն ու խաղաղու-  
 թիւն շնորհէ , որ ամէն իրենց մեղքերէն մաքրուին  
 ու խաղաղ մտքով քեզի ծառայեն , մեր Տէր Յիսուս  
 Քրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Եփես. զ . 10 .

Նըայրներ՝ ասկէ ետեւ տէրոջմով զօրացէք , ու  
 իր զօրութեան կարողութիւնովը : Եւ աստուծոյ  
 զէնքերը վրանիդ հագէք , որ կարող ըլլաք սատա-  
 նային հնարքներուն դէմ դնելու : Ինչու որ մեր  
 պատերազմը մարմինի ու արիւնի հետ չէ , հապա  
 իշխանութիւններու ու պետութիւններու հետ , և  
 այս խաւար աշխարհիս իշխաններուն հետ , երկինքի  
 ներքեւը եղած չար դեւերուն հետ : Ենոր համար  
 աստուծոյ զէնքերը առէք , որ կարող ըլլաք չարին

դէմ դնելու չարութեան օրը : Այլ երբոր ամէն բանը կը կատարէք , հաստատուն կեցէք , տեղերնիդ կեցէք , մէջքերնիդ ճշմարտութիւնով ամուրցուցած , ու արդարութեան զրահները հագած : Այլ ոտքերնիդ խաղաղութեան աւետարանին պատրաստութիւնովը հագուցած : Այլ ան բոլորին վրայ հաւատոյ վահանը առէք , որով կարող ըլլաք չարին ամէն կրակոտ նետերը մարելու : Այլ առէք փրկութեան սաղաւարդը , ու հոգիին թուրը՝ որ ան աստուծոյ խօսքն է : Ամէն աղօթքներով ու խնդրուածքներով միշտ աղօթք ըրէք հոգիով . և ան բանին վրայ հսկեցէք ամէն ժուժկալութիւնով՝ ու խնդրուածքներով ամէն սուրբերուն համար : Ինծի համար ալ . որ խօսք տուի ինծի՝ երբոր բերանս բանալու ըլլամ , որ համարձակ աւետարանին խորհուրդները ցըցունեմ : Արուն համար իմ կապերովս դեսպանութիւն կ'ընեմ . որ անով ինչպէս որ պէտք է նէ՝ համարձակիմ խօսելու :

Ս . Աւետարան . ԶԻՆ . Դ . 46 .

Թագաւորի ցեղէ մարդ մը կար , որ իր որդին հիւանդ էր կապիտանայումի մէջ : Արբոր ինքը լսեց՝ թէ յիսուս հրէաստանէն գալիլեա իկեր է , եկաւ անոր ու կ'աղաչէր՝ որ իջնայ ու իր որդին բժշկէ , ինչու որ մեռնելու մօտ էր : Հիսուս անոր ըսաւ . թէ որ նշաններ ու հրաշքներ չի անսնաք նէ՝ չէք հաւատար : Թագաւորի ցեղ մարդը ըսաւ իրեն . տէր՝

իղեր քանի որ տղաս մեռած է : Յիսուս ըսաւ անոր .  
 գնա՛ , քու որդիդ ողջ է . և ան մարդը հաւատաց ան  
 խօսքին՝ որ յիսուս իրեն ըսաւ , ու գնաց : Այլ երբոր  
 կ'իջնար՝ ծառաները գիմացը ելան . աւետիս տուին՝  
 ու ըսին , թէ իր տղան ողջ է : Բժշկուած ժամուն  
 վրայով անոնց կը հարցունէր , և ըսին իրեն . երէկ  
 ժամը եօթին տենդը թողուց անիկայ : Եւ մացաւ ա-  
 նոր հայրը թէ ան ժամուն էր՝ որ յիսուս ըսաւ իրեն  
 թէ՛ , քու տղադ ողջ է . ու հաւատաց ինքը և իր բո-  
 լոր տունը : Այս նորէն՝ յիսուս երկրորդ նշանը ը-  
 րաւ , երբոր հրէաստանէն գալիլեա եկաւ :

Ս . Երրորդութեան յաջորդ Ի Բ . Վերակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ով Տէր Աստուած , կ'աղաչենք պահէ՛ քու ըն-  
 տանիքդ՝ քու սուրբ Ակեղեցիդ մշտնջենաւոր սս-  
 տուածպաշտութեան մէջ . որ քու պաշտպանութիւ-  
 նովդ ամէն հակառակութիւններէ ազատ՝ բոլորովին  
 ինքըղինքը բարի գործքերու նուիրած քեզի ծա-  
 ոայէ , քու Անուանդ փառաբանութեանը համար ,  
 մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պողոսի Առաքելոյ . Փիւհո . ա . 5 .

Այլ գոհանամ իմ աստուծմէս ամէն ժամանակ՝  
 ձեզ որ կը յիշեմ : Ամէն ատեն իմ ամէն խընդ-  
 բուածքներուս մէջ ձեր ամենուդ համար ուրախու-

Թիւնով աղօթք կ'ընեմ՝, ձեր՝ աւետարանին հաղորդ  
 ըլլալուն համար առջի օրէն մինչեւ հիմայ : Աս  
 բանին վրայ վստահ եմ՝ թէ ան որ ձեր մէջը բա-  
 րեգործութիւն սկսեց, ինքը մինչեւ յիսուս քրիս-  
 տոսի օրը կը կատարէ : Ինչպէս ինձի ալ յարմար  
 կ'երեւայ ձեր ամէնուր վրայ աս բանը խորհիլ՝ ձեզ  
 իմ սրտիս մէջ ունենալու համար իմ կապերուս  
 մէջ, և իմ ջատագովութեանս, և աւետարանը հաս-  
 տատելուս մէջ, որ դուք ամէնքդ իմ շնորհքներուս  
 հաղորդ էք : Աստուած ինձի վկայ է, որ ինչպէս  
 սիսիաք ունիմ ձեր ամէնուր վրայ յիսուս քրիստոսի  
 գթութիւնովը : Այլ ան աղօթք կ'ընեմ, որ ձեր  
 սէրը էվելօք շատնայ գիտութիւնով ու ամէն իմաս-  
 տութիւնով, որ դուք լաւը ընտրէք, որ հաստա-  
 տուն ըլլաք և առանց գայթակղութեան քրիստոսի  
 օրը, արդարութեան պտուղներով լեցուած՝ յիսուս  
 քրիստոսի ձեռքովը աստուծոյ փառքին ու գովու-  
 թեանը համար :

Ս. Աւետարան. Մատթ. ԺԸ. 21.

Պետրոս յիսուսի ըսաւ, տէր՝ քանի՞ անգամ  
 թէ որ եղբայրս ինձի մեղանչելու ըլլայ՝ ներեմ ա-  
 նոր, մինչեւ եօթը անգամ : Հիսուս ըսաւ անոր,  
 չեմ ըսեր քեզի թէ՛ մինչեւ եօթը անգամ, հապա  
 եօթանասուն անգամ եօթը : Ասոր համար երկինքի  
 թագաւորութիւնը թագաւորի մը նմանեցաւ, որ  
 իր ծառաներէն հաշիւ առնել ուզեց : Այլ երբոր

սկսեց առնել , տասը հազար քանքարի պարտըկան  
 մը անոր բերուեցաւ : Արբոր վճարելիք չունէր , իր  
 տէրը հրաման ըրաւ ծախել անիկայ , և անոր կինը  
 ու որդիքը , և ամէն ինչ որ ունի նէ , ու վճարել :  
 Այլ ծառան ինկուա՝ երկրպագութիւն կ'ընէր և կ'ը-  
 սէր . համբերէ ինծի՝ ու ամէնքը կը վճարեմ քեզի :  
 Ըն ծառային տէրը վրան խղճալով՝ արձրկեց անի-  
 կայ , ու պարտքը թողուց անոր : Այլ նոյն ծառան  
 ելաւ՝ իր ընկեր ծառաներէն մէկը գտաւ , որ իրեն  
 հարիւր դահեկան պարտք ունէր , և անիկայ բռ-  
 նեց՝ կը խղրէր ու կ'ըսէր , վճարէ ինծի ունեցած  
 պարտքդ : Ուստի ընկեր ծառան իր ոտքը ինկաւ ,  
 կ'աղաչէր անոր՝ և կ'ըսէր , համբերէ ինծի , ու քեզի  
 կը վճարեմ : Այլ ինքը չէր ուզեր , հապա զնաց ա-  
 նիկայ բանտը գրաւ , մինչեւ որ պարտքը վճարէ :  
 Արբոր իր ընկեր ծառաները անսան ան եղած բա-  
 նը , խիստ տրտմեցան՝ ու ամէն ինչ որ եղաւ նէ՝ ե-  
 կան իրենց տէրոջը իմացուցին : Ըն ժամանակը իր  
 տէրը կանչեց անիկայ՝ ու ըսաւ . չար ծառայ՝ բոլոր  
 ան պարտքդ ես քեզի թողուցի , ինծի աղաչելուդ  
 համար : Ուրեմն քեզի ալ պէտքը չէր՝ որ քու ընկեր  
 ծառայիդ ողորմէիր , ինչպէս որ ես քեզի ողորմեցայ :  
 Այլ անոր տէրը բարկանալով՝ դահիճներուն մատ-  
 նեց անիկայ , մինչեւ որ բոլոր պարտքը վճարէ : Ա-  
 սանկ ալ իմ հայրս որ երկինքն է՝ ձեզի պիտի ընէ ,  
 թէ որ չի թողուք ձեր ամէն մէկը իր եղբօրը ձեր  
 սրտերէն անոնց յանցանքները :

Ս. Երրորդութեան յաջորդ ԻԳ. Վերակին .

ՄԱՂԹԱՆՔ .

Ո՛վ Տէր Աստուած՝ մեր ապաւէնը ու զօրութիւնը, որ դուն բարեպաշտութեան աղբիւրն ես, կ'աղաչենք պատրաստ եղիր քու Ակեղեցիիդ ջերմեռանդ խնդրուածքները լսելու . և շնորհէ՛ որ ինչ որ հաւատարմաբար քենէ կը խնդրենք իրօք ընդունինք, մեր Տէր Հիսուս Քրիստոսի շնորհքովը, Ա՛մէն :

Թուղթ Պողոսի Առաքելոյ . Փիւլի . Գ . 17 .

Այլբայրներ՝ ինծի նմանող եղիք, ու գիտցէք անանկները որ ան ճամբովը կ'երթան, ինչպէս որ մեզ ձեզի օրինակ ունիք : Ասան զի շատերը կը քայլեն՝ որոնց համար շատ անգամ ձեզի կ'ըսէի . որ հիմայ լալով ալ կ'ըսեմ քրիստոսի խաչին թշնամիներուն համար, որ անոնց վերջը կորոնուտ է, որոնց աստուածը իրենց փորն է, ու փառքը՝ իրենց ամօթը . որոնք երկրաւոր բաները միայն կը մտմտան : Բայց մեր վարմունքը երկինքն է, որ անկէց փրկիչին կ'ըսպասենք մեր տէր յիսուս քրիստոսին . որ պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը իր փառաւոր մարմինին կերպարանակից ըլլալու, ան զօրութիւնովը՝ որ կարող է ամէնքը իր ներքեւը հնազանդեցունելու :

Ս. Աւետարան . Մարթ . Իբ . 15 .

Ան ատենը փարիսեցիները գացին՝ իր վրայ խորհուրդ ըրին թէ՛ ինչ բանով անոր որոգայթ մը

լարեն : Այլ իրենց աշակերտները հերովդէսեաննե-  
րուն հետ մէկ տեղ խրկեցին անոր՝ և ըսին . վարդա-  
պետ՝ գիտենք որ ճշմարիտ ես , ու ճշմարտութիւնով  
աստուծոյ ճամբան կը սորվեցունես , և մէկէ մը հոգ-  
չես ըներ , ու մարդու երեսպաշտութիւն չունիս :  
Ուստի՝ ըսէ մեզի , քեզի ի՞նչպէս կ'երեւայ . կայսրին  
տուրք տալ պէ՞տք է՝ թէ չէ : Յիսուս գիտցաւ ա-  
նոնց խորամանկութիւնը՝ և ըսաւ . իս ինչո՞ւ կը  
փորձէք կեղծաւորներ . ցրցուցէք ինձի տուրքին դա-  
հեկանը . և անոնք դահեկան մը տուին իրեն : Այլ  
ըսաւ անոնց . որո՞ւնն է աս պատկերը կամ գիրը :  
Ըսին՝ կայսրին . ան ժամանակը ըսաւ անոնց . գա-  
ցէք՝ կայսրինը՝ կայսրին առէք . ու աստուծոյն՝ աս-  
տուծոյ : Արբոր լսեցին՝ զարմացան , և թողուցին ա-  
նիկայ՝ ու գացին :

Ս. Երրորդութեան յաջորդ ԻԴ. Վերակին .

Մ Ա Ղ Թ Ա Ն Բ .

Ո՛վ Տէր աստուած , կ'ազաչենք արձրկէ քու  
ժողովուրդդ իրենց մեղքերէն . որ քու ամենաուստ  
ողորմութեամբդ բոլոր ան մեղքերուն կապանքնե-  
րէն ազատինք , որոնք մեր մարդկային տկարու-  
թեամբը դործած ենք . Շնորհէ ասիկայ ո՛վ երկ-  
նաւոր Հայր՝ մեր օրհնեալ Տէր և Փրկիչ Յիսուս  
Քրիստոսի սիրուն համար . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Կողոս . ա . 5 .

Ար գոհանանք աստուծմէ և մեր տէր յիսուս քրիստոսի հօրմէն , ամէն ստեղծեցի համար աղօթք ընելով : Արոր լսեցինք մեր տէր յիսուս քրիստոսի վրայ ունեցած ձեր հաւատքը , և ամէն սուրբերուն վրայ ունեցած ձեր սէրը , ան յոյսին համար՝ որ երկինքը ձեզի համար կը պահուի . որուն վրայով աւետարանի ճշմարտութեան խօսքովը լսեցիք . որ ձեզի ալ հասաւ . ինչպէս որ բոլոր աշխարհի մէջ կ'աճի ու պտղաբեր կ'ըլլայ . ինչպէս որ ձեր մէջն ալ . ան օրէն՝ ի վեր որ լսեցիք , ու աստուծոյ շնորհքը ճշմարտութիւնով ճանչցաք . ինչպէս որ եպափրաստի խնդիրէն սորվեցաք՝ մեր ծառայակիցէն , որ ձեզի համար յիսուսի հաւատարիմ պաշտօնեան է : Ար ինքն ալ ձեր սէրը մեզի պատմեց՝ հոգիով : Ասն որոյ մենք ալ ան օրէն որ լսեցինք՝ չենք դադարիր ձեզի համար աղօթք ընելէն , ու խնդրուածք մատուցանեցինք . որ իր կամքին գիտութիւնովը լսեցուիք , ամէն իմաստութիւնով ու հոգեւոր հանճարով : Ար դուք տէրոջը արժանի ճամբովը երթաք ամենայն հաճութեամբ , ամէն բարի գործքերով պրտաբերած , ու աստուծոյ գիտութիւնովը աճած . ամէն զօրութիւնով ուժովցած՝ իր փառքին զօրութեանը չափովը , ամէն բանի համբերելու ու երկայնամիտ ըլլալու՝ ուրախութիւնով , շնորհակալութիւն մատուցանելով հօր աստուծոյ , որ մեզ կանչեց սուրբերուն վիճակին մասնակից ըլլալու լոյսի մէջ :

Ս. Աւետարան, Մատթ. Թ. 18.

Արբոր յիսուս անոնց հետ անհկայ կը խօսէր, ահա իշխան մը եկաւ անոր երկրպագութիւն կ'ընէր՝ և կ'ըսէր. աղջիկս մինչեւ հիմայ ալ մեռաւ. բայց եկոր ձեռքդ անոր վրայ դիր՝ ու պիտի ապրի : Հիսուս ելաւ աշակերտներուն հետ անոր ետեւէն գնաց : Աւ մէյ մ'ալ տասներկու տարուան տեռա տես կին մը ետեւէն դալով անոր հանդերձին ծարին դպաւ : Ինչու որ իր մտքին մէջը կ'ըսէր, միայն թէ որ անոր լաթերուն դպչիմ՝ կը բժշկուիմ : Հիսուս երբոր ետին դարձաւ ու անհկայ տեսաւ, ըսաւ. սիրտդ ամուր բռնէ աղջիկ, քու հաւատքդ քեզ բժշկեց, ու ան ժամէն կնիկը բժշկուեցաւ : Արբոր յիսուս իշխանին տունը եկաւ, ու տեսաւ փող չալողները ու մեծ բազմութիւնը, ըսաւ անոնց. մէկ դի գացէք : Ինչու որ աղջիկը մեռած չէ՝ հապա կը քնանայ : Աւ ծաղը կ'ընէին անհկայ. և երբոր բազմութիւնը մէկ դի ելաւ, ներս մտաւ՝ անոր ձեռքէն բռնեց, ու աղջիկը յարութիւն առաւ : Աւ այս համբաւը բոլոր ան երկիրը տարածուեցաւ :

Ս. Երբորդութեան յաջորդ Ի Ե. Կիրակին.

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Տէր Աստուած՝ կ'աղաչենք, արթնցուր քու հաւատացեալ ժողովուրդիդ փափաքները, որոնք առատապէս բարեգործութեան պատուներ յառաջ

բերելով , կարող ըլլան նաև առատապէս անոնց փո-  
խարէնը քենէ ընդունելու , մեր Տէր Հիսուս Վր-  
բիստոսի շնորհքովը . Մժէն :

Մարդարեւթիւն Երեմիայի . իգ . 5 .

Մհա օրեր կուգան՝ կ'ըսէ տէրը . ու արդարու-  
թեան ծագումը պիտի յարուցանեմ դաւիթիւն . որ  
թագաւոր՝ պիտի թագաւորէ ու յաջողի . և երկրի  
վրայ իրաւունք ու արդարութիւն պիտի կատարէ :  
Մնոր օրերը յուգան պիտի փրկուի , ու խրայէլ  
յուսով պիտի բնակի . և անոր անունը սյս է՝ որ  
պիտի կանչուի , տէր արդարութիւն մեր : Ուստի՝  
ահա օրեր կուգան՝ կ'ըսէ տէրը , ու ալ չի պիտի  
ըսեն թէ՛ տէրը կենդանի է , որ խրայէլի տունը ե-  
զիպտացւոց երկրէն հանեց : Հապա կենդանի է  
տէրը , որ ամէն խրայէլի զաւակը հիւսիսի երկրէն  
ու բոլոր ան երկիրներէն հանեց , ուր որ անոնք մեր-  
ժած էր , ու նորէն անոնք իրենց երկիրներուն մէջ  
բնակեցուց ,

Ս . Աւետարան . Յ՛՛ . զ . 5 .

Հիսուս իր աշվըները վեր վերուց , ու տեսաւ  
որչատ ժողովուրդ կուգար իր քովը , ըսաւ փիլիպ-  
պոսին . ո՞ւսկից հաց առնենք որ ատոնք ուտեն : Մ<sup>ս</sup>  
կ'ըսէր անիկայ փորձելու համար . բայց ինքը գի-  
տէր ինչ պիտի ընէր : Վիլիպպոս պատասխան տուաւ  
անոր . երկու հարիւր դահեկանի հաց ատոնց չի

բաւէր, թէ և ամէն մէկը մէյ մէկ քիչ առնէ : Կր  
աշակերտաներէն մէկը վէմ սիմոնին եղբայրը անդ-  
րէաս իրեն ըսաւ : Զոս պատանի մը կայ, որ հինգ  
նկանակ գարիէ հաց ունի՝ ու երկու ձուկ. բայց ա-  
նիկայ ինչ պիտի ըլլայ այդչափ մարդոցը : Յիսուս  
ըսաւ. նստեցուցէք ատ մարդիկը. և ան տեղը շատ  
խոտ կար, ու մարդիկը նստան թուով հինգ հա-  
զարի չափ : Եւ յիսուս հացը առաւ՝ ու գոհացաւ,  
ու ան նստողներուն բաժնեց. անանկ ալ ձուկերէն  
որչափ որ ուզեցին : Եւ երբոր կշտացան՝ աշակերտ-  
ներուն ըսաւ. ժողուեցէք ան մնացած կտորուանք-  
ները՝ որ բան մը չի կորսուի : Ժողուեցին՝ ու տասն-  
երկու սակառ լեցուցին ան հինգ գարիէ նկանակէն  
մնացած կտորուանքները, որ ուտողներէն էվելցաւ :  
Ընտանը մարդիկ երբոր ան ըրած հրաշքը տե-  
սան՝ կ'ըսէին թէ՛ ասիկայ է ան ճշմարիտ մարգա-  
րէն՝ որ աշխարհ պիտի գար :

Թէ որ Քրիստոսի ճննդեան նախընթաց՝ գալստեան  
ըսաւած չորս Արարկիներէն առաջ, քանըհինգ Արարկիէն  
էվել պատահելու ըլլայ. Յայանութեան Արարկիներէն ետեւ  
թողուած Պաշտամունքը այս Արարկիներուն մէջ պիտի կա-  
տարուի : Եւ թէ որ քանըհինգ Արարկիէն պակաս ըլլայ,  
մնացածները պիտի ձգուին. միայն թէ այս վերջին Մաղ-  
թանքը, թուղթը ու Աւետարանը միշտ Գալստեան Արա-  
րկիներուն նախընթաց Արարկին պիտի կարգացուին :

Սուրբ Անդրէաս Առաքելոյ Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ամենակարող Աստուած , որ քու սուրբ Անդրէաս Առաքեալիդ անանկ շնորհք պարգեւեցիր , որ քու Որդւոյդ Հիսուս Վարիստոսի կանչելուն իսկոյն հնազանդեցաւ , ու անյապաղ անոր ետեւէն գնաց , Պարգեւէ ամէնուս , որ քու սուրբ խօսքովդ կանչուած ըլլալով , ինքրզինքնիս ասկէ ետեւ հնազանդութեամբ քու սուրբ պատուիրանքներդ կատարելու ընծայենք , մեր Տէր Հիսուս Վարիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Հոռ. Ժ . Գ .

Ի՞նչ որ քու բերնովդ տէր յիսուսը դաւանիս , ու քու սրտիդ մէջ հաւատաս , որ աստուած անիկայ մեռելներէն յարոյց , պիտի ապրիս : Այսն զի սրտով արդարութեան կը հաւատաք , ու բերնով փրկուածիւնը կը խոստովանիք : Ինչու որ գիրը կ'ըսէ . ամէն ո՞վ որ անոր կը հաւատայ , չի պիտի ամչնայ : Արովհետեւ հրէսցին ու հեթանոսին մէջ խտրութիւն չի կայ . ինչու որ ինքը ամէնուն տէրն է , բաւական ամէնուն՝ որ անոր կը կանչեն : Այսն զի ո՞վ որ տէրօջը անունը կը կանչէ՝ պիտի ապրի : Հասարակութեամբ՝ ի՞նչպէս պիտի կանչեն անոր՝ որուն որ չի հաւատացին . կամ ի՞նչպէս պիտի հաւատան անոր՝ որուն վրայով չի լսեցին . կամ ի՞նչպէս պիտի լսեն առանց մէկուն քարոզելուն , կամ ի՞նչպէս պիտի

բարոզեն, թէ որ չի խրկուին • ինչպէս որ գրուած է . ինտոր գեղեցիկ են խաղաղութիւն աւետարանողներուն ու բարի բաներու աւետիս տուողներուն ոտքերը : Բայց ամէնքը աւետարանին չի հնազանդեցան : Ասային կ'ըսէ . տէր՝ մեր ձայնին ո՞վ հաւատաց : Անանկ է նէ հաւատքը լսելէն է , ու լըսելը քրիստոսի խօսքէն : Բայց կ'ըսեմ , միթէ չի լսեցի՞ն մի • մանաւանդ որ բոլոր երկիր անոնց ձայնը ելաւ , ու անոնց խօսքը մինչեւ աշխարհի ծայրերը : Բայց կ'ըսեմ , միթէ իսրայէլ չի լսեց մի , առաջ մովսէս կ'ըսէ . ես ձեզ նախանձի մէջ պիտի ձգեմ ոչինչ ժողովուրդով մը , ու անմիտ ազգով մը ձեզ պիտի բարկացունեմ : Բայց եսային էվելօք կը համարձակի՞ ու կ'ըսէ . ես անոնց գտնուեցայ՝ որ իսչէին փնտուեր , անոնց յայտնուեցայ՝ որ իսչէին հարցուներ : Բայց իսրայէլին կ'ըսէ . ամէն օր իմ ձեռքս անհաւատ ու դիմադարձ ժողովուրդին երկնցուցի :

Ս . Աւետարան . Մարթ . 7 . 18 .

Արբոր յիսուս գալիլեացուց ծովեղերքը ժուռ կուգար , երկու եղբայր տեսաւ , սիմոնը որ պետրոս կ'ըսուէր , ու անոր եղբայրը անդրէասը՝ ծովը ուսկան ձգած , ինչու որ ձկնորս էին : Աւ անոնց ըսաւ . իմ ետեւէս եկէք , ու ձեզ մարդոց որսորդ ընեմ : Անոնք ալ շուտ մը գործիքնին թողուցին , ու անոր ետեւէն գացին : Աւ անկից առաջ երթալով , տեսաւ երկու եղբայրներ ալ , զբբեգեան յակոբոսը ու անոր

եղբայրը յօհաննէսը նաւին մէջ , իրենց հօրը զերե-  
դեային հետ երբ ուռկաններնին կը կարկըտէին , ու  
անոնք կանչեց : Անոնք ալ շուտ մը նաւը ու հայ-  
րերնին թողուցին՝ անոր ետեւէն գացին :

Սուրբ Թովմաս Առաքելոյ Օրը .

ԽԱՂԹԱՆՔ .

Ամենակարող և յաւիտենական Աստուած , որ  
հաւատոյ հաստատութեանը համար թող տուիր  
քու սուրբ Թովմաս Առաքելիդ քու Արդարոյդ յա-  
րութեանը երկբայելու . Պարգեւէ մեզի անանկ հաս-  
տատարար ու առանց երկբայութեան Յիսուս Վր-  
րիստոս քու Արդարոյդ հաւատալու , որ բնաւ չի յան-  
դիմանուի մեր հաւատքը քու առջիդ : Ասէ մեզի ո՛վ  
Տէր՝ Յիսուս Վրիստոսի շնորհքովը , որուն՝ քեզի  
ու Սուրբ Հոգւոյն ըլլայ բոլոր փառքը ու պատիւը ,  
հիմայ , ու միշտ , ու յաւիտեանս . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Եփես . բ . 19 .

Ուրեմն ասկէ ետեւ դուք օտար ու պանդուխտ  
չէք , հապա սուրբերուն քաղաքացիներ , ու աստու-  
ծոյ ընտանիքը : Առաքելներուն ու մարգարէներուն  
հիմին վրայ շինուած , որ անոր անկիւնին գլուխը  
Յիսուս քրիստոս է : Արով բոլոր շինուածքը մէկ  
տեղ յօդած ու յարմարած՝ կ'աճի սուրբ տաճար  
կ'ըլլայ տէրով : Որ անով դուք ալ մէկ տեղ աս-  
տուծոյ բնակարան կը շինուէք հոգիով :

Ս. Աւետարան. Գ. Է. Ի. 24.

Թո՛վմաս տասներկուքէն մէկը՝ երկուորեակ ըտուածը, անոնց հետը չէր՝ երբոր յիսուս եկաւ : ՍԴԼ աշակերտները իրեն կ'ըսէին թէ՛ տէրը տեսանք. ան ալ ըսաւ անոնց. թէ՛ որ անոր ձեռքը բեւեռներուն նշանը չի տեսնամ, ու մատներս դամբրուն տեղը չի գնեմ, ու իմ ձեռքս անոր կողը չի խօթեմ՝ չեմ հաւատար : Աւ ութը օրէն ետեւ նորէն աշակերտները ներսն էին, ու թո՛վմաս անոնց հետը. յիսուս եկաւ դուռները գոց ըլլալով, ու անոնց մէջը կայնեցաւ, և ըսաւ. ողջոյն ձեզի : Հետոյ թո՛վմասին ըսաւ. բեր մատվըներդ՝ ու հոս դիր, և նայէ իմ ձեռվըներս. ու բեր քու ձեռքդ՝ ու իմ կողս խօթէ. և անհաւատ մի ըլլար, հապա հաւատացեալ : Պատասխան տուաւ թո՛վմաս՝ և ըսաւ անոր. իմ տէրս՝ ու իմ ստտուածս : Հիսուս ըսաւ անոր. ատ որ դուն իս տեսար՝ ու հաւատացիր, երնէկ անոնց՝ որ չեն տեսած՝ ու պիտի հաւատան : Հիսուս ուրիշ շատ նշաններ ալ ըրաւ իր աշակերտներուն առջին, որ այս գրքին մէջ գրուած չէ : Հապա աս այնչափ բան գրուեցաւ, որ հաւատաք՝ թէ յիսուսը քրիստոս է աստուծոյ որդին. և որ հաւատաք, ու յաւիտենական կեանքը ընդունիք անոր անունով :

Սուրբ Պօղոսի Դարձման Յիշատակը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Տէր Աստուած , որ քու երանելի Պօղոս  
Առաքեալիդ քարոզութիւնովը աւետարանին լոյսը  
բոլոր աշխարհ տարածեցիր . Պարգեւէ կ'աղաչենք,  
որ իր հրաշալի դարձը յիշելով՝ գոհութիւն մա-  
տուցանենք քեզի , մեզի սորվեցուցած սուրբ վար-  
դապետութեանը հետեւելով , մեր Տէր Հիսուս Վր-  
րիստոսի շնորհքովը . Ամէն :

Գործք Առաքելոց . Թ . 1 .

Իսոյց սօղոս տակաւին սպաննալիքով լեցուած՝  
ու տէրօջը աշակերտները սպաննելու մտքով քահա-  
նայապետին գնաց . անկէց թուղթեր խնդրեց դա-  
մասկոսի ժողովարաններուն . որ նոյն ճամբուն հե-  
տեւող էրիկ մարդ կամ կնիկ մարդ ո՛վ որ գտնայ  
նէ , անոնք կապած երուսաղէմ բերէ : Այլ ինքը եր-  
թալուատենը՝ դամասկոսի որ մօտեցաւ , յանկարծ  
երկինքէն լոյս մը շողըղաց իր բոլորաթիքը : Այլ գե-  
տինը ինկաւ , ձայն մը լսեց որ կ'ըսէր իրեն . սաւուղ  
սաւուղ , ինչո՞ւ համար իս կը հալածես : Այլ ան  
ըսաւ . ո՞վ ես տէր . ան ալ ըսաւ , ես յիսուսն եմ՝ որ  
դուն կը հալածեսկոր . կարծր բան է քեզի խթանին  
դէմ ոտք զարնել : Այլ գողգըղալով ու շունչը կըտ-  
րելով ըսաւ . տէր՝ իս ի՞նչ կ'ուզես ընել : Այլ տէրը  
ըսաւ անոր . հապա ոտքի վրայ ել՝ ու քաղաքը մտիր՝  
և քեզի պիտի ըսուի ինչ որ քեզի պէտք է ընել .

բայց ան մարդիկը որ իր հետը կ'երթային՝ մունճ  
 եղեր կեցեր էին . միայն ձայնը կը լսէին , բայց բան  
 մը չէին տեսնար : Սողոս գետնէն ելաւ , ու աշվը-  
 ները բաց մէկը չէր տեսնար . անոր ձեռքէն բռնե-  
 ցին դամասկոս խօթեցին : Այլ հոն իրիք օր կեցաւ ,  
 ու չէր տեսնար , ու ոչ կերաւ ու ոչ խմեց : Այլ դա-  
 մասկոսի մէջ անանիա անուն աշակերտ մը կար ,  
 տէրը տեսիլքի մէջ անոր ըսաւ , անանիա , ան ալ  
 ըսաւ տէր՝ ահա հոս եմ : Այլ տէրը ըսաւ անոր , ոտքի  
 վրայ ել՝ ու ան փողոցը գնա՛ , որ ուղիղ կ'ըսուի . և  
 յուդային տունը՝ սօղոս անունով տարսոնացի մը  
 վնտռէ , որ ինքը դեռ աղօթք կ'ընէ : Այլ տեսիլքին  
 մէջ անանիա անունով մարդ մը տեսաւ , մտաւ ու  
 ձեռքը իր վրան դրաւ՝ որ տեսնայ : Պատասխան  
 տուաւ անանիա , տէր՝ ես շատերէն ան մարդուն  
 համար լսեցի , որ երուսաղէմի մէջ որչափ չարիքներ  
 ըրաւ քու սուրբերուդ : Այլ հոս քահանայապետնե-  
 րէն իշխանութիւն ունի կապելու ան ամէնքը , որ  
 քու անունդ կը կարդան : Տէրը ըսաւ անոր , դուն  
 գնա՛ , ինչու որ անիկայ ինձի ընտրուած աման մըն  
 է , իմ անունս կրելու հեթանոսներուն ու թագա-  
 ւորներուն , ու իսրայէլի որդւոցը առջին : Այսն  
 զի ես անոր պիտի ցըցունեմ թէ իմ անունիս հա-  
 մար որչափ ինքը չարչարանք պիտի քաշէ : Անանիա  
 ալ գնաց՝ ու ան տունը մտաւ . և անոր վրայ ձեռք  
 դնելով՝ ըսաւ . սա՛ւուղ եղբայր՝ վեր նայէ . տէրը իս  
 խրկեց , ան յիսուսը՝ որ եկած ճամբուդ վրայ բեղի

երեւցաւ , որ դուն տեսնաս , ու հոգւմ սրբով լե-  
ցուիս : Աւշուտ մը իր աչմըններէն կեղեւներու պէս  
բաներ ինկան . տեսաւ , ու ելաւ մկրտուեցաւ : Աւ  
կերակուր առաւ՝ ու ժովցաւ . ու քանի մը օր դա-  
մասկոսի մէջ աշակերտներուն հետը մնաց : Աւշուտ  
մը ժողովարաններուն մէջ յիսուսը քարոզեց , թէ  
անիկայ աստուծոյ որդին է : Ամէն լսողները կը զար-  
մանային՝ ու կ'ըսէին . ասիկայ ան չէ՞ր՝ որ երուսա-  
ղէմի մէջ յիսուսի անունը տուողները կը կործանէր  
ու հոս ալ ան բանին համար եկած էր , որ ասոնք  
կապած քահանայապետներուն տանի : Վայց սօղոս  
էվելօք կը զօրանար , ու կ'ամէցունէր դամասկոսի  
մէջ բնակող հրէաները , և կը համոզէր թէ՛ քրիս-  
տոսը ասիկայ է :

Ս. Աւետարան . Մատթ . ԺԺ . 27 .

Պետրոս պատասխան տուաւ և ըսաւ իրեն՝  
ահա մենք ամէն բան թողուցինք , ու քու ետեւէդ  
եկանք . ուստի մեզի ի՞նչ պիտի ըլլայ : Հիսուս ըսաւ  
անոնց . Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , որ դուք՝ որ իմ ե-  
տեւէս եկաք , միւսանգամ գալուստին երբոր որդին  
մարդոյ իր փառաց աթոռը պիտի նստի , դուք ալ  
տասներկու աթոռի վրայ պիտի նստիք՝ իսրայէլի  
տասներկու ազգը դատելու : Աւ ամէն ով որ տունը ,  
կամ եղբայրները , կամ քոյրերը , կամ հայրը , կամ  
մայրը , կամ կինը , կամ որդիքը , կամ արտերը իմ  
անունիս համար թողուց , հարիւրապատիկ պիտի

առնէ, ու յաւիտենական կեանքը պիտի ժառանգէ :  
 Իսպառ առաջիններուն շատերը՝ յետին պիտի ըլլան,  
 ու յետինները՝ առաջին :

Տեառներդ առաջի Օրը .

ՄԱՂԹԱՆՔ .

Ամենակարող և յաւիտենական Աստուած, խո-  
 նարհես՛լ կ'աղաչենք քու Անծալայելէութեանդ, որ  
 ինչպէս այս օրս քու Արածին Արդիդ մեր մարմինին  
 գոյացութեամբը տաճարը ընծայուեցաւ . անանկալ  
 մենք ամբիժ ու սուրբ սրտով քեզի ընծայուինք, քու  
 Արդուդ մեր Տէր Հիսուս Վարիստոսով . Ամէն :

Մարգա . Մաղաքիայ . գ . 1 .

Ահա ես իմ հրեշտակս կը խրկեմ, և իմ առջիս  
 ճամբայ պիտի պատրաստէ . և տէրը յանկարծակի  
 իր տաճարը պիտի գայ որ դուք կը փնտրուէք . և ան  
 ուխտին հրեշտակը՝ որուն դուք կը փափաքիք . ահա  
 կուգակոր կ'ըսէ տէր ամենակալ : Ալ անոր մտած օրը  
 ո՞վ կրնայ դիմանալ . և կամ ո՞վ կրնայ կայնիլ անոր  
 երեւցած ժամանակը . ինչու որ ան հալոցի բոցին  
 պէս պիտի մտնայ, ու թափիչին օձառին նման : Ալ  
 ինքը արծաթ զտողի մը ու մաքրողի մը պէս պիտի  
 նստի, ու զեւիին որդիքները պիտի սրբէ . ու ոսկիի  
 պէս ու արծաթի պէս անոնք պիտի հալեցունէ . և  
 տէրօջը պատարագներ մատուցանել պիտի ըլլայ ար-

դարութիւնով : Ալ յուդայի ու Երուսաղէմի պատարագը հաճելի պիտի ըլլայ տէրոջը . ինչպէս հին օրերը ու առջի տարիները : Ալ ես ձեր վրայ դատաստանով պիտի հասնիմ . և պատրաստ վկայ պիտի ըլլամ կախարդներուն ու շնացող կնիկներուն վրայ , և անոնց վրայ՝ որ սուտ տեղը իմ անունովս երգում կ'ընեն . ու վարձկանին վարձքը կը կտրեն , այրիները կը տանջեն ու որբերը կը նեղեն . և օտարականին իրաւունքը ծուռը կը տանին , և ինէ չեն վախնար , կ'ըսէ տէր ամենակալ :

Ս. Աւետարան. Գլ. Բ. Բ. 52.

Ալ մովսէսի օրէնքին նայելով , երբոր անոր մարութեան օրերը լմնցաւ , երուսաղէմ տարին անիկայ տէրոջը առջին հանելու . ինչպէս որ գրուած է տէրոջը օրէնքին մէջ , թէ՛ ամէն մանչ զաւակ որ արգանդ կը բանայ , տէրոջը սուրբ ըսուի : Ալ տէրոջը օրէնքին մէջ ըսուածին պէս ընծայ տրուի ջուխտ մը տատրակ , կամ երկու աղաւնիի ձագեր : Ալ ահա երուսաղէմի մէջ մարդ մը կար , որուն անունը սիմէոն էր . և ան մարդը արգար ու երկիւղած էր , ու իսրայէլի միսիթարութեանը կ'սպասէր , ու հոգին սուրբ անոր ներսիդին էր : Ալ ինքը սուրբ հոգիէն հրաման առած էր՝ որ մահ չի տեսնայ , մինչեւ որ տէրոջը օծեալը տեսնայ : Ալ հոգիով տաճարը եկաւ , ու երբոր ծնողքը յիսուս մանուկը բերին որ օրէնքին սովորութեանը պէս անոր վրայ

կատարեն : Ինքն ալ անիկայ իր գիրկը առաւ , ու զատուած օրհնեց՝ և ըսաւ . ալ հիմայ կ'արձըկես տէր քու ծառագ խաղաղութիւնով քու խօսքիդ պէս . ինչու որ իմ աշվըներս քու փրկութիւնդ տեսան , որ ան բոլոր ժողովուրդներուդ առջին պատրաստեցիր : Այս մը հեթանոսները լուսաւորելու , ու փառք քու խորայէլ ժողովուրդիդ : Այլ անոր հայրը ու մայրը զարմացած էին ան բաներուն վրայ , որ անոր համար կը խօսուէին : Այլ սիմէոն օրհնեց անոնք , ու անոր մօրը մարիամին ըսաւ . ահա ասիկայ խորայէլի մէջ շատերուն իյնալուն ու ելլելուն համար կեցած է , և հակառակութեան նշան մը : Այլ քու անձէդ ալ թուր մը պիտի անցնի , որ շատ սիրտերէն խորհուրդներ պիտի յայտնուին : Այլ հոն էր աննա մարգարէն փանուելի աղջիկը ասերի ցեղէն . ասիկայ իր օրերը շատ անցուցած էր , իր կուսութեան ժամանակէն եօթը տարի իր էրկանը հետ կենալով : Այլ որբեւարի էր ութսունըշորս տարուան չափ , որ տաճարէն չէր զատուէր , հապա պաքով ու աղօթքով գիշեր ցորեկ ծառայութիւն կ'ընէր : Այլ ասիկայ նոյն ժամուն ելաւ տէրօջը գոհութիւն կուսար , ու անոր վրայով ան ամենուն հետ կը խօսէր , որ երուսաղէմի փրկութեանը կ'սպասէին : Այլ երբոր բոլոր բաները կատարեցին տէրօջը օրէնքին նայելով , նորէն գալիլեա դարձան՝ իրենց նազարէթ քաղաքը : Այլ մանուկը կը մեծնար ու կը զօրանար իմաստութիւնով լիցուած , և աստուծոյ շնորհքը անոր վրայ էր :

Սուրբ Մատթիա Առաքելոց Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ով Ամենակարող Աստուած , որ ան մասնիչ յուզային տեղը քու հաւատարիմ ծառայդ Մատթիան ընտրեցիր , տասներկու առաքեալներուն մէկը ըլլալու . ( Նորհէ՛ որ քու Ակեղեցիդ միշտ սուտ առաքեալներէն զերծ ըլլալով , հաւատարիմ ու հարազատ հովիւներով առաջնորդուի ու կառավարուի , մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքովը . Ամէն :

Գործք Առաքելոց . ա . 15 .

Այլ ան օրերը պետրոս եղբայրներուն մէջ ելաւ ըսաւ . ու հոն հարիւր քսան անունի չափ բազմութիւն կար : Մարդիկ եղբայրներ՝ պէտք էր ան գըրուածքը կատարուէր , որ առաջուց հոգին սուրբ դաւիթին բերնովը ըսաւ յուզային համար՝ որ յիսուսը բռնողներուն առաջնորդ եղաւ : Ինչու որ անիկայ մեզի հետ մեր համբանքին մէջն էր , և այս պաշտամունքին բաժինը անոր ալ ինկած էր : Ասիկայ անիրաւ վարձքով գեղ մը ձեռք ձգեց . և ուռեցուորած մէջքէն ճղքուեցաւ , ու բոլոր իր փորը դուրս թափեցաւ : Այլ յայտնի եղաւ ամէն երուսաղէմ բնակողներուն , մինչև որ իրենց լեղուովը ան գեղին անունին ակեղդամա ըսուեցաւ , որ ըսել է արեան գեղ : Ասան զի սաղմոսներուն գիրքին մէջ գրուած է . անոր բնակարանը աւերակ թող ըլլայ , և անոր մէջը մէկը չի բնակի , ու անոր կարգը ուրիշը

պիտի առնէ . Աստի պէտք է որ՝ տա մարդիկներէն որ մեր հետը եղան ան բոլոր ստեղծը , որ տէր յիսուս մէջը ընիս մտաւ ու ելաւ . յօհաննէսի մկրտութենէն սկսած՝ մինչեւ ան օրը որ ինքը մենէ համբարձաւ . ասոնցմէ մէկը մեզի հետ վկայ ըլլալու անոր յարութեանը : Այլ երկու հոգի որոշեցին , յովսէփը՝ որուն բարսարա կը կանչէին , որ յուստոս կ'ըսուէր . ու մատաթիան : Այլ աղօթք ընելով ըսին . դուն ո՞վ տէր՝ որ ամենուն սիրաւ գիտես , այս երկօքիս մէկը՝ որն որ ընտրեցիր նէ , յայտնէ մեզի . որ այս պաշտօնիս ու առաքելութեան վիճակը առնէ , որ անկէ յուզան ինկաւ իր տեղը երթալու : Այլ անոնց վիճակները տուին , ու վիճակը մատաթիային ելաւ . և ան տասներկու առաքելներուն հետը սեպուեցաւ :

Ս . Աւետարան . Մտք . Ժա . 25 .

Ըն ժամանակը յիսուս պատասխան տուաւ՝ և ըսաւ . կը գոհանամ քենէ ո՞վ հայր՝ տէր երկնի և երկրի , որ ասիկայ ծածկեցիր իմաստուններէն ու գիտուններէն , և տղոցը յայտնեցիր : Այլ ո՞վ հայր , ինչու որ քու առջիգ ասանկ հաճելի եղաւ : Այլ մենբան իմ հօրմէս ինծի արուեցաւ . և մէկը չի ճանչնար որդին՝ բայց միայն հայրը . և մէկը չի ճանչնար հայրը՝ բայց միայն որդին . և ան՝ որուն որ որդին կ'ուղէ յայտնել : Այլէք ինծի ամէն հոգնածներ ու բեռնաւորածներ , ու ես ձեզ հանգչեցունեմ : Իմ լուծս վրանիդ առէք , և ինէ սորվեցէք՝ որ հեզ ևմ

ու սրտով խոնարհ . և ձեր անձերուն հանդատու  
թիւն պիտի գտնայք : Ինչու որ իմ լուծս քաղցր է ,  
ու իմ բնուս թեթեւ :

Ամենօրհնեալ [Այցա Մարիամու Աւետման Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ա՛ղաղաչենք քեզի ո՛վ Տէր , թափէ քու շնորհքդ  
մեր սրտերուն վրայ , որ ինչպէս Հիսուս Վրիստոս  
քու Որդւոյդ մարդեղութիւնը հրեշտակին աւետիս  
տալովը ճանչցանք . անանկ ալ իր խաչովը ու չար-  
չարանքներովը իր յարութեանը փառքին ժամա-  
նենք , մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը .  
Ա՛մէն :

Մարգա . Եսայեայ . է . 10 .

Եւ տէրը կրկին խօսեցաւ աքաղին՝ ըսելով .  
քու տէր աստուծմէդ նշան մը խնդրէ , անիկայ կամ  
խորութեան մէջ , կամ վերը բարձրութեան մէջ :  
Եւ աքաղ ըսաւ . չեմ խնդրեր , և ո՛չ տէրը կը փոր-  
ձեմ : Եւ ըսաւ . լսեցէք հիմայ ո՛վ դաւիթին տունը .  
մարդոց նեղութիւն տալը ձեզի թեթեւ բան մը մի  
կը թուի . և տէրո՞ջն ալ նեղութիւն պիտի տաք :  
Ետոր համար տէրը ձեզի մէկ նշան մը պիտի տայ .  
ասա կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի ,  
և անոր անունը էմմանուէլ պիտի կանչուի : Եղ ու  
մեղը պիտի ուտէ մինչեւ որ ճանչնայ չարը ատելու ,  
և բարին ընտրելու :

Ս. Աւետարան. Դ. 1. 26.

Եւ վեցերորդ ամսուն մէջ գարրիէլ հրեշտակը աստուծմէ խրկուեցաւ գալիլեացոց մէկ քաղաքը՝ որուն անունը նազարէթ էր . մէկ կոյսի մը՝ մէկ մարդու մը նշանուած , որուն անունը յովսէփի էր դաւիթի տունէն . և ան կոյսին անունը մարիամ : Եւ եկաւ անոր ըսաւ . ուրախ եղի՛ր դուն բերկրեալ , տէրը քու հետդ : Եւն ալ աս խօսքերուն վրայ շփոթեցաւ , ու ինքիրենը կը մտմտար՝ թէ ի՞նչպէս ողջոյն պիտի ըլլայ աս : Եւ հրեշտակը անոր ըսաւ . մի վախնար , ինչու որ աստուծմէ շնորհք գտար : Եւ ահա պիտի ծոցուորնաս , ու որդի պիտի ծնանիս . և անոր անունը յիսուս պիտի կանչես : Եւնիկայ մեծ պիտի ըլլայ , ու որդի բարձրելոյ պիտի ըսուի . և տէր աստուած անոր դաւիթ հօրը աթոռը իրեն պիտի տայ , ու յակոբայ տանը վրայ յաւիտեան պիտի թագաւորէ . և անոր թագաւորութիւնը վերջ չի պիտի ունենայ : Սարիամ ալ հրեշտակին ըսաւ . ատ բանը ի՞նչպէս պիտի ըլլայ ինձի , որ ես մարդ չեմ գիտեր : Պատասխան տուաւ հրեշտակը և ըսաւ անոր . հոգին սուրբ պիտի գայ քեզի , ու բարձրելոյն զօրութիւնը քու վրագ հովանի պիտի ըլլայ . ինչու որ՝ ան որ քենէ պիտի ծնանի՝ սուրբ է , ու աստուծոյ որդի պիտի ըսուի : Եւ ահա քու եղիսաբէթ ազգականդ՝ անիկայ ալ իր պառաւութեան ժամանակը յի է . և աս անոր վեցերորդ ամիսն է , որ ամուլ ըսուած էր : Ինչու որ աստուծոյ քով բան մը չի տը-

կարանար : Այլ մարիամ ըսաւ . ահա ես տէրոջը ազախինն եմ . քու ըսածիդ պէս թող ըլլայ ինծի . ու հրեշտակը անոր քովէն գնաց :

Սուրբ Մարկոս Աւետարանչի Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Բ .

Ով Ամենակարող Աստուած , որ քու սուրբ Մարկոս Աւետարանչիդ երկնային վարդապետութեամբը քու սուրբ Ակեղեցիդ վարժեցիր , Պարգեւէ մեզի քու շնորհքդ որ ամէն ունայն վարդապետութեան հողմով տարուբեր եղող տղոցը պէս չըլլալով , քու սուրբ Աւետարանիդ ճմարտութեանը մէջ հաստատ մնանք , մեր Տէր Հիսուս Քրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Եփե . դ . 7 .

Մեր ամէն մէկուս շնորհք տրուած է քրիստոսի պարգեւներուն չափովը : Անոր համար կ'ըսէ . վեր բարձրը ելաւ՝ գերիութիւնը գերի ըրաւ , ու մարդոց պարգեւներ տուաւ : Ան որ ելաւ նէ՛ ի՞նչ է , թէ՛ չէ ան՝ որ առաջ երկրին վարի կողմը իջաւ : Ան որ իջաւ նէ՛ նոյնն է որ բոլոր երկինքներէն վեր ելաւ , որ ամէն բան լեցունէ : Այլ ինքը մէկ քանին տուաւ որ առաքեալ ըլլան , մէկ քանին մարգարէներ , մէկ քանին աւետարանիչներ , ոմանք հովիւներ և վարդապետներ : Սուրբերուն հաստատութեանը համար , պաշ-

տամուկին գործքին համար, քրիստոսի մարմնոյն շինու թեանը համար : Սինչևև որ ամէնքս ալ հասնինք հաւատոյ միաբանութեանը ու աստուծոյ որդւոյն գիտութեանը . կատարեալ մարդ եղած՝ քրիստոսի կատարելութեան հասակին չափովը : Ար ալ ասկէ ետեւ տղայք չըլլանք պղտորուած և վարդապետութեան ամէն հովերէն խախտուած՝ մարդոց խաբէութիւնովը, որ հնարքով կը խաբեն մոլորցունելու : Հապա սիրով ճշմարտութիւնը խօսելով՝ ամէն բանի մէջ անով ածինք՝ որ գլուխ է քրիստոս . որ անկէց բոլոր մարմինը մէկ տեղ կցուած, և ամէն խաղերը մէյմէկու հաղորդուելով յարմարած՝ ամէն մէկ մասին չափով ներգործելով ան մարմինին աճում կուտայ, իր անձին շինութեանը համար սիրով :

Ս. Աւետարան . Գ . Է . Ժե . 1 .

Այս եմ ճշմարիտ որթը, և իմ հայրս մշակ է : Եւ ամէն ճիւղ որ իմ վրաս է՝ ու պտուղ չի բերեր, կը կտրէ անիկայ . և ամէնը որ պտուղ կը բերէ՝ կը մաքրէ անիկայ, որ շատ էվելօք պտղաբեր ըլլայ : Դուք արդէն սուրբ էք ան խօսքովը՝ որ ձեզի խօսեցայ : Իմ մէջս կեցէք, ու ես ձեր մէջը . ինչպէս որ ճիւղը ինքնիրէն չի կրնար պտուղ բերել, թէ որ որթին վրայ հաստատուած չըլլայ . ասոր պէս դուք ալ թէ որ իմ վրաս հաստատուած չըլլաք : Այս որթ եմ՝ ու դուք ուս . ան որ իմ վրաս հաստատուած է՝ ու ես անոր վրայ, անիկայ շատ պտուղ կը բերէ . ինչ

չու որ առանց ինծի բան մը չէք կրնար ընել : (Թէ որ մէկը իմ վրաս հաստատուած չէ , անիկայ ճիւղի մը պէս դուրս ինկաւ ու չորցաւ . և կը ժողունն աւնիկայ ու կրակը կը նետեն՝ և կ'երի : (Թէ որ դուք իմ մէջս կենայք , և իմ խօսքերս ալ ձեր մէջը կենան , ինչ որ կ'ուզէք՝ խնդրեցէք՝ ու կ'ըլլայ ձեզի : Ասով իմ հայրս փառաւորուեցաւ , որ առատ պտուղ բերէք , և իմ աշակերտներս ըլլաք : Ինչպէս որ հայրը զիս սիրեց , ես ալ ձեզ սիրեցի . իմ սիրոյս մէջ հաստատ կեցիք : (Թէ որ իմ պատուիրանքներս պահէք , իմ սիրոյս մէջ կը կենայք . ինչպէս որ ես իմ հօրս պատուիրանքները պահեցի՝ և անոր սիրոյն մէջ կեցեր եմ : Այս բաները ձեզի հետ խօսեցայ , որ իմ ուրախութիւնս ձեր մէջն ըլլայ , և ձեր ուրախութիւնը լըման ըլլայ :

Սուրբ Փիլիպպոս և Սուրբ Յակոբոս Առաքելոց Օրը՝

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Ամենակալ Աստուած , որ քեզ ճշմարտապէս ճանչնալը յաւիտենական կեանք է . Պարգեւէ՛ մեզի որ կատարեալ ճանչնանք քու Որդւոյդ (Յիսուս Վրիստոսի ճանապարհ , ճշմարտութիւն և կեանք ըլլալը . որպէս զի սուրբ Փիլիպպոս և սուրբ Յակոբոս առաքելոցդ շաւիղներուն հետեւելով , ապահով քալենք ան ճամբուն մէջ , որ յաւիտենական կեանքին կ'առաջնորդէ , քու Որդւոյդ մեր Տէր (Յիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Թուղթ Յակոբայ Առաքելայ . ա . 1 .

Յակոբոս՝ աստուծոյ և տէր յիսուս քրիստոսի ծառան, տասներկու ցեղերուդ՝ որ ցրուած էք, ողջոյն : Եղբայրներ՝ բոլորովին ուրախութեան արժանի բան սեպեցէք, երբոր կերպ կերպ փորձութիւններու մէջ կ'իյնաք : Գիտնա՞ք որ ձեր հաւատքին փորձառութիւնը աղէկ կարգի դրած՝ համբերութիւն կը գործէ : Բայց համբերութիւնը կատարեալ գործ թող ունենայ, որ ամբողջ ու կատարեալ ըլլաք, ու բանի մը պակասութիւն չունենաք : Էապա թէ որ ձեռնէ մէկը իմաստութեանէ պակասած ըլլայ, թող աստուծմէ խնդրէ՝ որ ամէնուն առատապէս կուտայ, ու չի նախատեր . և իրեն պիտի տրուի : Միայն թէ հաւատքով թող խնդրէ, ու չի երկմտի . վասն զի ան որ երկմտ է՝ ծովուն հողմակոծեալ ու տատանեալ ալիքներուն նման է : Ըն մարդը թող յոյս չունենայ աստուծմէ բան մը առնելու : Ինչու որ երկմտ մարդը անհաստատ է բոլոր իր ճամբաներուն մէջ : Խոնարհ եղբայրը իր բարձրութեանը վրայ թող պարծենայ, և ան որ հարուստ է՝ իր խոնարհութեանը վրայ . ինչու որ անիկայ խոտի ծաղիկի մը պէս պիտի անցնի : Ասան զի արեւը խաշող տաքութիւնով մը ծագեց՝ ու ցամքեցուց խոտը, ու անոր ծաղիկը թափթըրիեցաւ, և իր երեսին գեղեցկութիւնը կորսուեցաւ . անանկ ալ հարուստը իր վաստըրկածներովը պիտի թողմի : Արանելի է ան մարդը որ փորձութիւններու կը համբերէ . ինչու որ

եթէ ընտիր գտնուելու ըլլայ, կենաց սրակը պիտի առնէ, որ անիկայ տէրը իր սիրելին իրուն խոստացաւ :

Ս. Աւետարան. Զո՛ւ. Ժդ. 1.

Աւ յիսուս իր աշակերտներուն ըսաւ, ձեր սիրտերը թո՛ղ չի պղտորի. հապա աստուծոյ հաւատացէք, ինձի ալ հաւատացէք: Եւ հօրս տունը շատ բնակարաններ կան. հապա թէ չէ՛ ես ձեզի կ'ըսէի. թէ երթամ ու ձեզի տեղ պատրաստեմ. Աւ թէ որ երթամ ձեզի տեղ պատրաստեմ, նորէն կուգամ ու ձեզ քովս կ'առնեմ. որ ես ուր եմ նէ՛ գուք ալ հոն ըլլաք: Աւ ուր կ'երթամ նէ գիտէք, ու ճամբան գիտէք: Թու՛մաս ըսաւ իրեն. տէր՛ չնիք գիտեր ո՞ւր կ'երթաս, և ի՞նչպէս ճամբան կրնանք գիտնալ: Հիսուս ըսաւ անոր, ես եմ ճանապարհը ու ճշմարտութիւնը ու կեանքը. մէկը հօրը քով չի գար, թէ չէ՛ ինձմով: Թէ՛ որ զիս գիտնայիք՝ հապա իմ հայրս ալ կը գիտնայիք, և ասկէ ետեւ գիտէք անիկայ, ու տեսաք անիկայ: Փիլիպպոս ըսաւ անոր, տէր՛ ցըցուր մեզի հայրը, ու հերիք է մեզի: Հիսուս ըսաւ անոր, սյւքան ժամանակ ձեր հետն եմ, ու իս չի ճանչցար փիլիպպոս. ան որ իս տեսաւ՝ հայրը տեսաւ. և դուն ի՞նչպէս կ'ըսես՝ թէ հայրը մեզի ցըցուր: Ան հաւատար թէ ես հօրը մէջը՝ ու հայրը իմ մէջս է. ան բանը որ ես ձեզի հետ կը խօսիմ, չէ՛ թէ ինքիրմէս կը խօսիմ, հապա հայրը որ իմ

մէջս բնական է՝ ան կը գործէ նոյն գործքերը : Ին-  
 ծի կը հաւատա՞ք մի, որ ես հօրը մէջը, ու հայրը իմ  
 մէջս է : Զապա թէ չէ՝ գոնէ գործքերուն համար  
 ինծի հաւատացէք . ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,  
 թէ՛ ան որ ինծի կը հաւատայ, ան գործքերը որ ես  
 կը գործեմ, ինքն ալ պիտի գործէ, ու անոնցմէ է-  
 վելի մեծ մեծ գործքեր պիտի գործէ . ինչու որ ես  
 հօրը քովը կ'եմ թամ : Այլ իմ անունովս ինչ որ  
 խնդրէք՝ անիկայ պիտի ընեմ, որ հայրը որդիովը  
 փառաւորուի : Այլ ինչ որ խնդրելու ըլլաք ինէ՛ ա-  
 նիկայ պիտի կատարեմ :

Սուրբ Բառնարաս Առաքելոյ Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ով Տէր՝ Ըմենակարող Ըստուած, որ քու սուրբ  
 Բառնարաս առաքեալդ շողոյն Սրբոյ մասնաւոր  
 շնորհքներովը զարդարեցիր . կ'աղաչենք՝ քու բազ-  
 մատեսակ պարգեւներէդ մեզ մի զրկեր, և ոչ ալ  
 քու շնորհքէդ, որ անոնք քու պատուոյդ ու փառքիդ  
 համար՝ ի գործ դնենք, մեր Տէր Յիսուս Վրիստոսի  
 շնորհքովը . Ըմէն :

Գործք Առաքելոյ . Ժա . 22 .

Ըս բանը անոնց վրայով երուսաղէմ եղած ե-  
 կեղեցիին ականջը հասաւ . ու բառնարասը մինչև  
 անտիր խրկեցին : Ար երբոր եկաւ՝ ու ստատուծոյ

չնորհարքը տեսաւ, ուրախացաւ. և ամէնքը կը յորդորէր՝ որ յօժար սրտով տէրոջը հետ մնան: Ինչու որ զուարթամիտ մարդ մըն էր, ու հոգևով սրբով ու հաւատքով լեցուն. ու տէրոջը շատ ժողովուրդ է վելցաւ: Այլ ասարսոն ելաւ սօղոսը փնտռելու, ու անիկայ գտնալով անտիրք բերաւ: Այլ եղաւ որ անոնք լման տարի մը եկեղեցիին հետ ժողովելեցան, ու շատ ժողովուրդ սորվեցուցին, ու պինտ առաջ անտիրքի մէջ աշակերտները քրիստոնէսայ անուանեցան: Ան օրերը երուսաղէմէն մարգարէներ իջան անտիրք: Անոնցմէ մէկը ագաբոս անունով ելաւ՝ հոգիով գուշակեց թէ՛ բոլոր աշխարհ մեծ սով մը պիտի ըլլայ. որ կըրդիոսի ժամանակը եղաւ: Բայց աշակերտներէն ով որ կարող էր, անոնցմէ ամէն մէկը որոշեցին հրէաստանի մէջ բնակող եղբայրներուն կարօտութիւնը խրկեն: Ար անիկայ ըրին ալ. երէցներուն խրկելով բառնարասին ու սօղոսին ձեռքովը:

Ս. Աւետարան. Յ. 12. 12.

Այս է իմ պատուերս՝ որ մէկզմէկ սիրէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի: Ասկէց եվելի սէր չի կըրնար ունենալ մէկը, որ իր կեանքը բարեկամներուն վրայ կը դնէ: Դուք իմ բարեկամներս էք, թէ որ ընելու ըլլաք՝ ինչ որ ես ձեզի կը պատուիրեմ: Ալ ձեզի ծառայ չեմ կանչեր, ինչու որ ծառան չի գիտեր իր տէրը ինչ կ'ընէ. հասցա ես ձեզ բարեկամ կան-

չեցի, ինչու որ ան ամեն բաները որ իմ հօրմէս լըսեցի՝ ձեզի իմացուցի : Չէ թէ դուք զիս ընտրեցիք, հապա ես ձեզ ընտրեցի, ու ձեզ դրի՝ որ դուք երթաք ու պտղաբեր ըլլաք, ու ձեր պտուղը մնայ . և իմ անունովս ինչ որ իմ հօրմէս խնդրէք՝ ձեզի տայ :

Սուրբ Յօհաննէս Մկրտչի Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Բ .

Ով Ամենակարող Աստուած, որ քու նախախնամութեամբդ Յօհաննէս Մկրտչի քու ծառագհրաշալի կերպով ծնաւ, ու խրկուեցաւ քու Արդարացմեր Վրկչին ճամբան պատրաստելու, ապաշխարութիւն քարոզելով . Տուր ձեզի անոր վարդապետութեանը ու սուրբ վարքին հետեւելու, որ կարող ըլլանք ճշմարիտ զղջմամբ ապաշխարել, ինչպէս որ ինքը կը քարոզէր, և իրեն պէս շարունակ ճշմարտութիւնը խօսինք, համարձակ ու աներկիւղ մտլութիւնները յանդիմանենք, և ճշմարտութեան համար համբերութիւնով նեղութիւն կրենք, մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Մարգա . Եսայեայ . Խ . 1 .

Մխիթարեցէք՝ մխիթարեցէք իմ ժողովուրդս կ'ըսէ աստուած : Վրահանաներ՝ երուսաղէմի սրտին խօսեցէք, և ատիկայ մխիթարեցէք, ինչու որ տառապանքով լեցուեցաւ, իր մեղքերը թողուին ատոր .

ինչու որ տէրոջը ձեռքէն իր մեղքերուն կրկին հա-  
տուցումը ընդունեց : Չայն մը անապատին մէջ կը  
կանչէ , պատրաստեցէք տէրոջը ճամբան , և մեր աս-  
տուծոյ շաւիղը շտկեցէք : Ամէն ձորերը պիտի լե-  
նան , ու ամէն լեռները ու բլուրները պիտի խոնար-  
հին , և ամէն դժուարները դիւրին պիտի ըլլան , ու  
խորտուբորտ տեղերը դաշտեր պիտի ըլլան : Այս տէ-  
րոջը փառքը պիտի երեւայ , ու ամէն մարմին աս-  
տուծոյ փրկութիւնը պիտի տեսնայ , ինչու որ տէրը  
խօսեցաւ : Մէկ ձայն մը որ կ'ըսէ , կանչէ . և կ'ը-  
սեմ , ի՞նչ կանչեմ . կանչէ՝ ամէն մարմին խոտէ ,  
ու մարդուն բոլոր փառքը խոտին ծաղիկին պէս է :  
Խոտը չորցաւ , ու անոր ծաղիկը թափեցաւ . ինչու  
որ տէրոջը ոգին անոր վրայ փչեց . իրաւցունէ՝ այս  
ժողովուրդը խոտ է : Խոտը չորցաւ ու ծաղիկը թա-  
փեցաւ . բայց տէրոջը խօսքը յաւիտեան կը մնայ :  
Ով դուն սիօնի աւետարանիչ՝ բարձր լեռանը վրայ  
ել . ձայնդ զօրութիւնով բարձրըցուր՝ ով դուն ե-  
րուսաղէմի աւետարանիչ . բարձրըցուցէք . մի վախ-  
նաք . յուդայի քաղաքներուն ըսէ : Ահա ձեր աս-  
տուածը . ահա տէր տէր՝ զօրութիւնով պիտի գայ ,  
ու բազուկը իր տէրութիւնովը . ահա իր վարձքը իր  
հետը , և գործքը իր առջին է : Էովիւի մը պէս իր  
հօտը պիտի հովուէ , և իր բազուկովը գառնուկները  
պիտի ժողուէ . ու անոնք իր գիրկը պիտի առնէ , և  
և յղիններուն մխիթար պիտի ըլլայ :

Ս. Աւետարան. Դ. 1. ա. 57.

Այլ եղիսարեթին ծնանելու ժամանկները լեցաւ, և որդին ծնաւ : Այլ լսեցին անոնք որ անոր քովերն էին, ու անոր ազգականները, որ աստուած իր մեծողորմութիւնը անոր վրայ ըրաւ, և անոր հետը ուրախացան : Այլ եղաւ որ ութերորդ օրը եկան տղան թլիատելու, ու անիկայ իր հօրը անունովը զարարիա կը կանչէին : Պատասխան տուաւ անոր մայրը՝ և ըսաւ. չէ, հապա յօհաննէս պիտի կանչուի : Այլ անոր ըսին. քու ազգականներուդ մէջ մէկը չի կայ՝ որ անունը յօհաննէս ըսուի : Այլ կ'ընէին անոր հօրը՝ թէ ի՞նչ կ'ուզէ կանչել անիկայ : Այլ ալ տախտակ մը ուզեց՝ գրեց՝ ու ըսաւ. յօհաննէս է ատոր անունը, ու ամէնքը զարմացան : Այլ շուտ մը անոր բերանը ու անոր լեզուն բացուեցաւ, և կը խօսէր՝ ու զաստուած կ'օրհնէր : Այլ վախ մը ինկաւ ան ամէնուն վրայ որ ասիկայ կը լսէին, ու անոնց բոլորտիքը բնակողներուն վրայ, և բոլոր հրէաստանի լեռան կողմերը ամէն աս բաները կը պատմուէր : Այլ ան ամէնքը որ կը լսէին՝ սրտերնուն մէջը դրին՝ ու ըսին. այս տղան ի՞նչ պիտի ըլլայ, ու տէրօջը ձեռքը անոր հետն էր : Այլ զարարիա անոր հայրը հոգւով սրբով լեցուեցաւ, մարգարէացաւ ու ըսաւ. օրհնեալ է իսրայէլի տէր աստուածը, որ մեզի այցելութեան ելաւ, ու իր ժողովուրդին փրկութիւն ըրաւ : Այլ մեզի փրկութեան եղջիւր մը հանեց իր դաւիթ ծառային տունէն : Ինչպէս որ սուրբերուն բերնովը

խօսեցաւ , որոնք որ աշխարհի սկիզբէն անոր մարգարէներն էին : Վրկութիւն մեր թշնամիներէն , ու բոլոր մեզ ատողներուն ձեռքէն : Մեր հայրերուն վրայ ողորմութիւն ընելու , և իր սուրբ ուխտը յիշելու : Են երգումը՝ որ մեր հօրը արբահամին երգմընցաւ մեզի տալու : Ար առանց վախի մեր թշնամիներուն ձեռքէն խալըսած զինքը պաշտենք , սրբութիւնով ու արդարութիւնով անոր առջին՝ բոլոր մեր կեանքին օրերուն մէջ : Այլ դուն ո՞վ մանուկ բարձրեալին մարգարէն պիտի ըսուիս , ինչու որ տէրօջը երեսին առջեւէն պիտի երթաս՝ անոր ճամբաները պատրաստելու . անոր ժողովուրդին փրկութեան գիտութիւնը տալու՝ իրենց մեղքին թողութեանը համար : Մեր աստուծոյ գթած ողորմութեանը համար , որ անով վերէն արեգակը մեզի տես եկաւ , երեւնալու համար անոնց՝ որոնք խաւարին ու մահուան շուքին մէջ նստեր էին , մեր ոտքերը խաղաղութեան ճամբուն մէջ շահելու : Այտղան կ'աճէր ու կը զօրանար հոգիով . և անապատներուն մէջն էր մինչեւ ան օրը՝ որ ինքը իարայէլի երեցաւ :

---

Սուրբ Պետրոս Առաքելոյ Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Այլ Ամենակարող Աստուած , որ Յիսուս Քրիստոս քու Արդւոյդ ձեռքովը քու սուրբ Պետրոս

առաքեալիդ շատ գերադայն պարգևներ շնորհեցիր ,  
 և հրամայեցիր անոր խնամքով քու ոչխարներուդ  
 հօտը հովուելու . Մաղաչենք՝ բոլոր Ապիսկոպոսնե-  
 րուն ու Հովիւներուն իութաջան քարոզել տաս  
 քու սուրբ Պատգամդ , և ժողովուրդը անոնց հը-  
 նազանդեցունես , որ ամէնքը անվախճան փառքին  
 պսակը ընդունին , մեր Տէր Հիսուս Քրիստոսի  
 շնորհքովը . Ամէն :

Գործք Առաքելաց . Ժբ . 1 .

Ան ժամանակները հերովդէս թագաւորը ձեռք  
 ձգեց եկեղեցիէն մէկ քանիները չարչարելու : Աւ-  
 յօհաննէսին եղբայրը յակորոսը թուրով սպաննեց :  
 Տեսաւ թէ հրէաներուն ուզածն է , պետրոսն ալ  
 բռնեց , և բազարջակերքի օբերն էին : Արբոր անի-  
 կայ բռնեց՝ բանտը դրաւ , ու չորս չորսական զինուոր-  
 ներուն ձեռքը տուաւ որ անիկայ պահեն . ու կ'ու-  
 ղէր զատկէն ետեւ ժողովուրդին հանել անիկայ :  
 Աւ պետրոս բանտին մէջ պահուած էր , ու եկեղե-  
 ցիէն անդադար աղօթք կ'ըլլար աստուծոյ անոր հա-  
 մար : Արբոր հերովդէս ուղեց անիկայ բերել , ան  
 գիշերը պետրոս երկու զինուորներու մէջ քնացեր  
 էր՝ կրկին շղթաներով կապուած , ու պահապաննե-  
 րը դռանը առջեւը բանտին պահպանութիւն կ'ը-  
 նէին : Աւ ահա տէրօջը հրեշտակը եկաւ վրան կայ-  
 նեցաւ , ու տանը մէջ լոյս մը ծագեց . ու պետրոսին  
 հողը մշտեց՝ անիկայ արժնցուց՝ և ըսաւ . շուտ մը

ելիր . ու շղթաները անոր ձեռքէն վար ինկան : Այս  
 հրեշտակը ըսաւ անոր . գօտիդ կապէ , ու հողա-  
 թափներդ ուքդ հագիր . ան ալ անանկ ըրաւ . և  
 ըսաւ անոր . լաթերդ վրագ ան՝ ու իմ ետեւէս եկոր :  
 Այս ան ելաւ ետեւէն կ'երթար , ու չէր գիտեր թէ  
 ան հրեշտակէն եղած բանը իրան է մի . ինչու որ կը  
 սեպեր թէ երազ կը տեսնայ : Այս երբոր անոնք ա-  
 ռաջին ու երկրորդ պահապանները անցան , մինչև  
 երկաթի դուռը եկան՝ որ քաղաքը կը հանէր . որ  
 ան ինքնիրենը բացուեցաւ անոնց . և մտնալով փո-  
 ղոց մը անցան , ու հրեշտակը շուտ մը իրմէն զա-  
 տուեցաւ : Այս պետրոս երբոր ինքըզինքին եկաւ՝ ը-  
 սաւ . հիմայ ճշմարիտ գիտեմ՝ որ տէրը իր հրեշ-  
 տակը խրկեց , ու իս հերովդէսին ձեռքէն ազատեց ,  
 ու հրէից ժողովուրդին ամէն սպասած բաներէն :

Ս . Աւետարան . Մարտ . Ժ . 13 .

Այս յիսուս փիլիպպէի կեսարիայի կողմերը ե-  
 լաւ , աշակերտներուն կը հարցունէր ու կ'ըսէր . ին-  
 ծի համար մարդիկ ո՞վ կ'ըսեն՝ որ որդին մարդոյ  
 ըլլայ : Այս անոնք ըսին . մէկը՝ յօհաննէս մկրտիչը .  
 և ուրիշները՝ եղիան , ոմանք՝ երեմիան , կամ մար-  
 գարէներէն մէկը : Յիսուս ըսաւ անոնց . բայց դուք  
 ո՞վ կ'ըսէք ինծի համար որ ըլլամ : Սիմոն պետրոս  
 պատասխան տուաւ անոր և ըսաւ . դուն ես քրիս-  
 տոսը՝ կենդանի աստուծոյ որդին : Պատասխան  
 տուաւ յիսուս՝ և ըսաւ անոր . երևէկ քեզի սիմոն

յովնանու որդին . ինչու որ մարմինը ու արիւնը քեզի չի յայտնեց , հապա իմ հայրս՝ որ երկինքն է : Ալ ես քեզի կ'ըսեմ . որ դուն քար ես , ու ատ քարին վրայ իմ եկեղեցիս պիտի շինեմ , ու դժոխքին դուռները անիկայ չի պիտի յաղթեն : Ալ երկնից արքայութեան բալլիքները քեզի պիտի տամ , ու ինչ բան որ երկրի վրայ կապես՝ երկինքի մէջ կապուած ըլլայ . և ինչ բան որ երկրի վրայ արձըկես՝ երկինքի մէջ արձըկուած ըլլայ :

Սուրբ Յակոբոս Առաքելոյ Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Պարգեւէ ո՛վ Ամենողորմ Հայր , որ ինչպէս քու սուրբ Յակոբոս առաքեալդ իր հայրը և բոլոր ունեցածները ձգելով՝ անյապաղ Յիսուս Վրիստոս քու Որդւոյդ ձայնին հնազանդեցաւ , ու անոր ետեւէն գնաց . անանկ ալ մենք բոլոր աշխարհային ու մարմնաւոր ցանկութիւններէն հրաժարելով միշտ պատրաստ ըլլանք քու պատուիրանքներուդ հետեւելու , մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովը .  
 Ամէն :

Գործք Առաքելոյ . Ժա . 27 . և Ժբ . 5 .

Ան օրերը երուսաղէմէն մարգարէներ իջան անտիոք : Անոնցմէ մէկը ազաբոս անունով՝ հոգիով իմացուց թէ՛ բոլոր աշխարհ մեծ սով մը պիտի ըլլայ ,

որ կողոզեոսի ժամանակը եղաւ : Բայց աշակերտնե-  
րէն ո՛վ որ կարող էր, անոնցմէ ամէն մէկը որոշեցին  
հրէաստանի մէջ բնակող եղբայրներուն կարօտու-  
թիւնը խրկեն : Ար անիկայ ըրին ալ, երէցներուն  
խրկելով բառնարասին ու սօղոսին ձեռքովը : Ան  
ժամանակը հերովդէս թագաւորը ձեռք ձգեց եկե-  
ղեցիէն մէկ քանինները չարչարելու : Ալ յակոբոսը  
յօհաննէսին եղբայրը թուրով սպաննեց : Տեսաւ որ  
հրէաներուն ուզածն է, պետրոսն ալ բռնեց :

Ս. Աւետարան . Մատթ . Ի . 20 .

Ան ժամանակը զերեգոսի որդւոցը մայրը իր  
տղոցմովը անոր եկաւ՝ երկրպագութիւն կ'ընէր ու  
բան մը կը խնդրէր անկէ : Ալ ան ըսաւ անոր . ի՞նչ  
կ'ուզես . ըսաւ անոր . ըսէ՛ որ աս երկու որդիքս  
մէկը աջ կողմից և միւսը ձախ կողմից նստին քու ար-  
քայութեանդ մէջ : Հիսուս պատասխան տուաւ և  
ըսաւ . չէք գիտեր ինչ կը խնդրէք . կրնա՞ք խմել ան  
գաւաթը՝ որ ես պիտի խմեմ, կամ ան մկրտութիւնը  
մկրտուիլ՝ որ ես պիտի մկրտուիմ . ըսին իրեն՝ կըր-  
նանք : Հիսուս ըսաւ անոնց . իմ գաւաթս պիտի  
խմէք, և ան մկրտութիւնը որ ես պիտի մկրտուիմ՝  
պիտի մկրտուիք . բայց իմ աջ կողմս և ձախ կողմս  
նստեցունել տալը իմն չէ, հապա որոնց որ իմ հօր-  
մէս տրուած է : Ալ երբոր տասը լսեցին, ան երկու  
եղբայրներուն վրայ բարկացան : Հիսուս անոնք իր  
քովը կանչեց՝ ու ըսաւ . գիտէ՞ք որ ազգերուն իշ-

խանները կը տիրեն իրենց, և մեծամեծները կ'իշխեն  
 անոնց : Չեր մէջը ասանկ չի պիտի ըլլայ . հապա  
 ձնէ ո՛վ որ մեծ ըլլալ կ'ուզէ՝ ձեր պաշտօնեան պի-  
 տի ըլլայ : Եւ ձնէ ո՛վ որ առաջին ըլլալ կ'ուզէ՝  
 ձեր ծառան պիտի ըլլայ : Ինչպէս որ որդին մարդոյ  
 չեկաւ սպասաւորութիւն ընդունելու, հապա սպա-  
 սաւորելու, և իր կեանքը շատերուն համար փրկու-  
 թեան գին մը տալու :

Սուրբ Բարթուղիմէոս Առաքելոյ Օրը՝

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք :

Ո՛վ Ամենակարող և յաւիտենական Աստուած,  
 որ քու Բարթուղիմէոս առաքեալիդ շնորհք տուիր  
 ճշմարտապէս հաւատալու և քու խօսքերդ քարոզել-  
 լու . Շնորհէ՛ կ'աղաչենք որ քու Ակեղեցիդ նոյն  
 խօսքը սիրէ՝ որուն որ ան կը հաւատար, և որ նոյն  
 խօսքը ընդունի և քարոզէ, մեր Տէր Հիսուս Քրի-  
 իստոսի շնորհքովը . Ամէն :

Գործք Առաքելոց . Ե . 12 .

Եւ առաքեալներուն ձեռքովը շատ նշաններ ու  
 հրաշքներ կ'ըլլար Ժողովուրդին մէջ, ու ամենքը  
 մեկ տեղ սողմոնի սրահին մէջն էին : Եւ ուրիշներէն  
 մէկը չէր համարձակէր անոնց մօտենալու . հապա  
 Ժողովուրդը կը մեծարէր անոնք : Եւ հաւատացեալ-  
 ները խիստ շատ կ'էվելնային տէրոջը, շատ էրիկ

մարդ ու կնիկ մարդ : Անանկ որ հիւանդները հրապարակները կը հանէին, և իրենց պատգարակովը ու անկողինովը կը դնէին, որ պետրոսին անցած ժամանակը՝ գոնէ անոր շուքը անոնց մէկին վրայ հասնի : Այս ան քովի քաղաքներէն շատ բազմութիւն երուսաղէմ կը ժողվովէր . հիւանդները ու պիղծ դեւերէն չարչարուածները կը բերէին . որ ամէնքն ալ կը բժշկուէին :

Ս. Աւետարան. Գլ. Իբ. 24.

Այս անոնց մէջ վէճ մը եղաւ թէ՛ իրենցմէ ո՞վ մեծ պիտի սեպուի : Ինքն ալ ըսաւ անոնց . ազգերուն թագաւորները իրենց վրայ կը տիրեն, և անոնք որ իրենց վրայ կ'իշխեն՝ բարերար կ'ըսուին : Իսկ ձերը անանկ չէ . հապա ան որ ձեր մէջը մեծ է պղտիկին պէս թող ըլլայ, ու առաջնորդը սպասաւորին պէս : Ո՞վ է մեծը, սեղան նստողը՝ թէ սպասաւորը . չէ՞ թէ սեղան նստողը . բայց ես ձեր մէջը սպասաւորի մը պէս եմ : Այս դոք անոնք էք՝ որ միշտ ինծի հետ իմ փորձութիւններուս մէջը կը կենայիք : Այս ես ձեզի ուխտ կ'ընեմ, ինչպէս որ իմ հայրս ալ ինծի արքայութիւնը ուխտ ըրաւ . որ դոք իմ սեղանս ուտէք ու խմէք իմ թագաւորութեանս մէջ . և տասներկու ամիսներու վրայ նստիք՝ իսրայէլի տասներկու ազգը դատելու :

Սուրբ Մատթէոս Առաքելոյ Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Բ .

Ո՛վ Ամենակարող Աստուած , որ քու ամէնօրհնեալ Որդւոյդ ձեռքովը Մատթէոսը մտքսաւորութենէ առաքեալ մը ու աւետարանիչ մը ըլլալու կանչեցիր . Պարգեւէ մեզի քու շնորհքդ որ ամէն ազասցանկութիւնները ու հարստութեան անյագ փափաքները թողունք , և Յիսուս Վրիստոս քու Որդւոյդ ետեւէն երթանք , որ կենդանի է ու կը թագաւորէ միանգամայն քեզի՝ և Սուրբ Հոգւոյն հետ մէկ Աստուած , յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Թուղթ Պողոտի Առաքելոյ . Բ . ԿԴ՝ . Դ . 1 .

Ուստի այս պաշտօնը ունինք , ինչպէս որ ողորմութիւն գտանք , ու չենք ձանձրանար : Հապա ետ կեցանք ամօթալի ծածուկ բաներէն , որ խորամանկութիւնով չի վարուինք , ու աստուծոյ խօսքին մէջ խարդախութիւն չընենք . Հապա ճշմարտութեան յայտնութիւնովը անձերնիս ամէն մարդոց մտքին ընծայենք աստուծոյ առջին : Հապա թէ որ մեր աւետարանը ծածկուած ալ է նէ՛ անիկայ կորսուածներուն մէջն է ծածկուած : Ար այս աշխարհիս աստուածը ան չի հաւատացողներուն սիրտերը կուրացուց , որ քրիստոսի փառաւորեալ աւետարանին լուսաւորութիւնը անոնց վրայ չի ծագէ . որ ինքը աներեւոյթ աստուծոյ պատկերն է : Ինչու որ չէ թէ անձերնիս կը քարոզենք , Հապա յիսուս քրիստոս

տէրը, և մեզ՝ ձեր ծառայները քրիստոսի համար :  
Վանդի աստուած՝ որ ըսաւ խաւարէն լոյս ծագե-  
լու, որ ան ծագեց ալ մեր սրտին մէջ՝ աստուծոյ  
փառքին գիտութեան լոյսը տալու յիսուս քրիստոսի  
դիմացը :

Ս. Աւետարան . Մատթ . Թ . 9 .

Ալ յիսուս անկէ որ կ'անցնէր՝ մէկ մարդ մը  
տեսաւ մատթէոս անունով՝ որ նստեր մաքսաւորու-  
թիւն կ'ընէր, ու ըսաւ անոր, իմ ետեւէս եկ՛որ, ու  
ելաւ անոր ետեւէն գնաց : Ալ եղաւ որ երբոր տունը  
սեղան նստած էր՝ ահա ուրիշ շատ մաքսաւորներ ու  
մեղաւորներ ալ եկած ու սեղան նստած էին յի-  
սուսի՝ և իր աշակերտներուն հետը : Վարիսեցիները  
երբոր տեսան՝ ըսին իր աշակերտներուն, ինչո՞ւ հա-  
մար ձեր վարդապետը մաքսաւորներուն ու մեղա-  
ւորներուն հետը կ'ուտէ : Վայց յիսուս երբոր լսեց՝  
ըսաւ անոնց, առողջներուն բժիշկ պէտք չէ, հապա  
հիւանդներուն : Վացէք սորվեցէք ի՞նչ է, ողոր-  
մութիւն կ'ուզեմ, ու չէ թէ զոհ . ինչու որ ես ար-  
գարները կանչելու չեկայ, հապա մեղաւորները :

Սուրբ Միքայէլի և ամէն Հրեշտակաց Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ի՛վ յաւիտենական Մատուած, որ դուն հրեշ-  
տակներուն և մարդոց պաշտօնները հրաշալի կեր-

պով կարգեցիր ու հաստատեցիր . Պարգեւէ քու  
 սղորմութեամբդ՝ որ ինչպէս քու սուրբ հրեշտակ-  
 ներդ երկինքը միշտ քեզի ծառայութիւն կ'ընեն .  
 անանկ ալ քու հրամանաւդ այս աշխարհիս մէջ  
 մեզի թիկունք ըլլան և մեզ պաշտպանեն , մեր Տէր  
 Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Յայտնութիւն Յովհաննու . Ժբ . 7 .

Աւ երկինքը պատերազմ մը եղաւ . միքայէլ ու  
 իր հրեշտակները ան վիշապին դէմ կը կռուէին .  
 վիշապն ալ իր զօրքերովը կը պատերազմէր : Աւ չի  
 կրցան դէմ դնել , ու երկինքը անոնց տեղ չի գըտ-  
 նուեցաւ : Աւ ինկաւ ան մեծ վիշապը՝ առջի օձը , որ  
 բէեղզեբուզ ու սատանայ կ'ըսուի , որ բոլոր աշխարհ  
 մորորցուց . ու իր հրեշտակները իրեն հետ ինկան :  
 Աւ երկինքէն մեծ ձայն մը լսեցի՝ որ կ'ըսէր . հիմայ  
 եղաւ մեր աստուծոյ զօրութիւնը ու փրկութիւնը ու  
 թագաւորութիւնը , ու անոր օձեալին իշխանութիւ-  
 նը . ինչու որ մեր եղբայրներուն դէմ չար խօսողը  
 ինկաւ , որ անոնց վրայ գիշեր ցորեկ աստուծոյ առ-  
 ջին չարախօսութիւն կ'ընէր : Աւ անոնք անոր յաղ-  
 թեցին դառին արիւնովը , ու անոր վկայութեան  
 խօսքովը . և ան վիշապին չի հաճեցան մինչև 'ի  
 մահ : Աւստի ուրախ թող ըլլայ երկինքը՝ և անոր  
 մէջ բնակողները . վայ երկրին ու ծովուն՝ որ բան-  
 սարկուն ձեզի ինկաւ , որ սաստիկ բարկութիւն ու-  
 նի , ու քիչ ժամանակ պիտի կենայ :

Ս. Աւետարան. Մարտի. ԺԸ. 1.

Ըն օրերը աշակերտները յիսուսի քովը եկան՝  
ու ըսին . մենէ ո՞վ մեծ է երկնից թագաւորութեանը  
մէջ : Այլ յիսուս տղեկ մը իրեն կանչեց , անիկայ  
անոնց մէջը կայնեցուց . և ըսաւ . Ճշմարիտ կ'ըսեմ  
ձեզի , թէ որ դարձի չի գայք ու տղոց պէս չըլլաք ,  
երկնից թագաւորութեանը մէջ չի պիտի մտնաք :  
Ուստի ո՞վ որ իր անձը այս տղին պէս կը խոնարհե-  
ցունէ , անիկայ մեծ է երկնից թագաւորութեանը  
մէջ : Այլ ո՞վ որ ասանկ տղայ մը իմ անունովս կ'ըն-  
դունի , զիս կ'ընդունի : Այլ ո՞վ որ այս պղտիկներէն  
մէկը կը գայթակղեցունէ որ ինծի կը հաւատան ,  
աղէկ է անոր որ իր վեզէն իշու աղացքի քար մը  
կախուի , ու ծովուն տակը ընկղմի : Այս աշխարհի  
գայթակղութիւններուն համար , գայթակղութիւն-  
ները պէտք է որ գան . բայց վայ ան մարդուն՝ որուն  
ձեռքովը գայթակղութիւնը կուգայ : Թէ որ քու  
ձեռքդ կամ ոտքդ քեզ կը գայթակղեցունէ , կտրէ  
անիկայ՝ ու քեզմէ ձգէ . աղէկ է քեզի մէկ ձեռքով՝  
կամ կաղ՝ կեանքը մտնալ , քան թէ երկու ձեռք ու  
երկու ոտք ունենալ , ու յաւիտենական կրակը իյ-  
նալ : Այլ թէ որ աչքդ քեզ կը գայթակղեցունէ ,  
հանէ անիկայ՝ ու քեզմէ ձգէ . աղէկ է քեզի մէկ  
աչքով կեանքը մտնալ , քան թէ երկու աչք ու  
նենալ , ու կրակի գեհնէն իյնալ : Գագոյշ կեցիք՝  
որ աս պղտիկներէն մէկը չանարգէք . ձեզի կ'ըսեմ ,  
որ երկինքին մէջ անոնց հրեշտակները միշտ կը տես-  
նան իմ հօրս երեսը՝ որ երկինքն է :

Սուրբ Ղուկաս Աւետարանի Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Ամենակարող Աստուած , որ Ղուկաս բը-  
ժիշկը՝ որուն գուլութիւնը Աւետարանին մէջ կը  
գտնուի , աւետարանիչ ու հոգւոյ բժիշկ ըլլալու  
կանչեցիր . Շնորհէ որ անոր աւանդած վարդապե-  
տութեանը առողջարար զեղերովը բոլոր մեր հոգի-  
ներուն հիւանդութիւնները բժշկուին , քու Որդւոյդ  
մեր Տէր Հիսուս Քրիստոսի արժանաւորութեամբը .  
Ամէն :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Բ . ՏԷԺ . գ . 5 .

Իայց դուն ամէն բանի մէջ արթուն կեցիր ,  
ջանք ըրէ , աւետարանիչի գործ գործէ . քու պաշ-  
տօնդ կատարեալ բռնէ : Ասան զի ես ասկէ ետեւ  
նուիրուած եմ , ու իմ դարձի ժամանակս հասած է :  
Ան բարի պատերազմը պատերազմեցայ , վազելս լը-  
մընցուցի , հաւատքը պահեցի : Ասկէ ետեւ կայ կը  
մնայ ինծի արդարութեան պսակը , որ ան օրը տէրը՝  
ան արդար դատաւորը ինծի պիտի հատուցանէ . չէ  
թէ միայն ինծի , հապա ան ամէնուն ալ՝ որ իր յայտ-  
նութիւնը սիրեցին . արտորա՛ շուտով ինծի գալու :  
Ինչու որ դեմասը իս թողուց , ու աշխարհը սիրեց ,  
և թեսաղոնիկէ գնաց : Արեւսկէսը՝ գալիլեա . տի-  
տոսը՝ դաղմատիա : Ղուկասը միայն իմ հետս է .  
մարկոսը առնես քու հետդ բերես , ինչու որ սպա-  
սաւորութեան համար ինծի պէտք է անիկայ : Տիւ-

քիկոսը եփեսոս խրկկցի : Վիլլոնը տրովադա թուղուցի կարպոսի քովը . երբոր գալու ըլլաս՝ բերես գիրքերն ալ , մանաւանդ մատեանները : Ղարբին աղէքսանդրոսը շատ չարչարանք տուաւ ինձի . տէրը անոր հատուցանէ իր գործքերուն փոխարէնը : Ընկէց դուն ալ ինքըղինքդ պահես . ինչու որ մեր խօսքերուն շատ դէմ կեցաւ :

Ս. Աւետարան . Գլ . Ժ . 1 .

Ըսկէ ետեւ տէրը ուրիշ եօթանասուներկուք ալ երեւցուց . և անոնք երկերկուք իր առջեւէն խրկկց բոլոր ան քաղաքները ու տեղերը՝ ուր որ ինքը պիտի երթար : Եւ ըսաւ անոնց . հունձերը շատ են՝ ու մշակները քիչ . ուստի հունձերուն տէրոջը աղաչեցէք որ մշակներ հանէ իր հունձերուն : Ղացէք դուք . ահա ձեզ գառերու պէս գայլերուն մէջը կը խրկկեմ : Է ետերնիդ քսակ մի առնէք , ոչ տոպրակ , ոչ կօշիկներ . ու ճամբան մէկուն բարեւ մի տաք : Ար տուն որ մտնալու ըլլաք՝ առաջ ըսէք , թէ ողջոյն այս տանս : Թէ որ հոն ողջունի որդի կայ նէ՝ ձեր ողջոյնը անոր վրայ պիտի հանգչի . հապա թէ չէ՝ ձեզի պիտի դառնայ : Եւ նոյն տունը մնացէք , անոնցմէ կերէք . ինչու որ մշակը իր վարձքին արժանաւոր է :

Սուրբ Սիմոն և Սուրբ Յուդա Առաքելոց Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ով Ամենակարող Աստուած , որ քու Այնշնորհիդ առաքելալներուն ու մարդարէներուն հիմին վրայ կանգնեցուցիր , որուն անկիւնին վէմը նոյն ինքն է՛խուս Վրիստոս է . Պարգեւէ մեզի որ անոնց վարդապետութիւնովը անանկ կապակցինք Հոգւոյ միութեամբ , որ քեզի ընդունելի սուրբ տաճար մը ըլլանք , մեր Տէր էջիսուս Վրիստոսի շնորհքովը .  
Ամէն :

Թուղթ Յուդայի Առաքելոյ . ա .

Յուդա՛ յիսուս քրիստոսի ծառայ ու յակորին եղբայր . հեթանոսներուդ՝ որ հօր աստուծմէ սիրուած էք , և յիսուս քրիստոսի պահուած ու ընտրուած : Ողորմութիւնը և խաղաղութիւնը ու սէրը ձեր վրայ շատնայ : Սիրելիներ՝ բոլոր ջանքը վրաս անելով ձեզի գրելու մեր հասարակաց փրկութեանը համար , իմ անձիս հարկ սեպեցի ձեզի գրել ու աղաչել , որ հաստատ կենսք ան հաւատքին վրայ՝ որ անգամ մը սուրբերուն տրուեցաւ : Ինչու որ մէկ քանինքը սկրդուեցան մտան , որոնք առաջուց այս դատապարտութեանը սահմանուած էին . ամբարիշտները որ մեր աստուծոյ շնորհքը անկարգութեան դարձուցին , և ան մի միայն իշխանը ու մեր տէր յիսուս քրիստոսը ուրացան : Աւստի իմ կամքս աս է՝ որ ձեր միտքը ձգեմ , որ ամէնը գիտէք . թէ

աստուած անգամ մը ժողովուրդը եգիպտոսէն ազա-  
տեց , երկրորդ անգամը անհաւատները կորսնցուց :  
Եւ հրեշտակները՝ որ իրենց իշխանութիւնը չի պա-  
հեցին , հապա իրենց բնակութիւնը ձգեցին , անոնք  
մշտնջենաւոր կապերով խաւարին մէջ պահեց ան  
մեծ դատաստանի օրուանը : Ինչպէս սողմ ու գո-  
մոր , ու անոնց քովերը եղած քաղաքները նոյն կեր-  
պով պոռնկեցան ընկերներուն մարմիններուն հետ ,  
առջեւնիս օրինակ կեցեր են յաւիտենական կրակին  
դատաստանը ընդունած : Ենոր պէս ասոնք ալ քու-  
նով թմրածի պէս մարմինը կը պղծեն , տէրու-  
թիւնները կը քամահընեն , փառաւորուածներուն կը  
հայհոյեն :

Ս. Աւետարան . Յ՛. Ժ . 17 .

Եսիկայ կը պատուիրեմ որ մէկըմէկ սիրէք : Թէ  
որ աշխարհ ձեզ կ'ատէ՝ գիտնաք որ առաջ իս ատեց :  
Թէ որ աս աշխարհէս եղած ըլլայիք՝ աշխարհը ի-  
րենները կը սիրէր . բայց որովհետեւ աշխարհէ չէք ,  
հապա ես ձեզ աշխարհէն ընտրեցի , անոր համար  
աշխարհ ձեզ կ'ատէ : Տիշեցէք ան խօսքը որ ձեզի  
ըսի , թէ ծառան իր տիրոջմէն մեծ չէ . թէ որ իս  
հալածեցին՝ ուրեմն ձեզ ալ պիտի հալածեն . թէ որ  
իմ խօսքս պահեցին՝ ձերն ալ պիտի պահեն : Բայց  
ան բաները պիտի ընեն ձեզի իմ անունիս համար .  
ինչու որ չի ճանչցան անիկայ՝ որ իս խրկեց : Թէ որ  
ես եկած ու անոնց հետ խօսած չըլլայի , անոնք մեղք

մը չէին ունենար . բայց ալ հիմայ իրենց մեղքերուն պատճառանք մը չի կայ : Ան որ իս կ'ատէ՝ իմ հայրս ալ կ'ատէ : Թէ որ ան գործքերը իրենց մէջը ըրած չըլլայի՝ որ ուրիշ մէկը չէ ըրած , անոնք մեղք մը չէին ունենար . բայց հիմայ տեսան ու ատեցին , իս ալ իմ հայրս ալ : Հապա որ կատարուի ան խօսքը՝ որ իրենց օրէնքին մէջ գրուած է թէ՛ զուր տեղը իս ատեցին : Բայց երբոր մտիթարիչը գայ , որ ես հօրմէն ձեզի պիտի խրկեմ , ան ճշմարտութեան հոգին՝ որ հօրմէն կ'ելէ , ան ինծի համար պիտի վկայէ : Այլ դուք ալ կը վկայէք . ինչու որ սկիզբէն հետէ իմ հետս էք :

ԱՄէն Սուրբերուն Օրը .

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ Ամենակարող Աստուած , որ քու ընտրեալներդ միաբանութիւնով ու եղբայրութիւնով միաւորեցիր քու Որդւոյդ մեր Տէր Հիսուս Վրիստոսի խորհրդաւոր մարմինովը . Շնորհք տուր մեզի որ բարեպաշտ ու կատարեալ առաքիլնի վարքով անանկ քու երանելի սուրբերուդ շաւիղներուն հետեւինք , որ արժանի ըլլանք ան անպատում ուրախութիւնները վայելելու , որ անկեղծ սիրով քեզ սիրողներուն համար պատրաստեցիր , մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Յայտնութիւն Յովնանու Առաքելոյ . է . 2 .


Այլ ուրիշ հրեշտակ մը տեսայ՝ որ արեւելքէն ելաւ , ու կենդանի աստուծոյ կնիքը ունէր . և ան չորս հրեշտակներուն մեծ ձայնով մը կանչեց , որոնք իշխանութիւն առած էին երկիրը ու ծովը ապակա ներլու : Այլ կ'ըսէր . երկրին վնաս մի ընէք , ոչ ծովուն , ոչ ծառերուն . դադարեցէք՝ մինչեւ որ իմ աստուծոյս ծառաներուն իրենց ճակատները կնքեմ : Այլ կնքուածներուն թիւը լսեցի՝ որ հարիւր քառասունըչորս հազար էին , իսրայէլի որդւոցը ցեղէն կնքուած : Տուգայի ցեղէն՝ տասներկու հազար կրնքուած . ոուբենի ցեղէն՝ տասներկու հազար կրնքուած . գադի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած : Մսերի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած . նեփթաղէմի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած . մաւառի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած : Շմաւոնի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած . Ղեւիի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած . իսաքարի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած : Օւրբուզոնի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած . յովսէփի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած . բենիամինի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած : Այլ ասկէ ետեւ տեսայ՝ ու ահա շատ ժողովուրդներ որ համբանք չունէին , բոլոր հեթանոսներէն ու բոլոր ազգերէն , և բոլոր լեզուներէն ու բոլոր ժողովուրդներէն , որոնք աթոռին առջեւը ու գանձուկին առջեւը կեցեր էին՝ ձերմակլաթեր հագած , ու անոնց ձեռքը արմաւե-

նիններ : Ս) Ե՛ժ ձայնով կը կանչէին՝ ու կ'ըսէին . փըր-  
կութիւն մեր աստուծոյն՝ որ աթոռին վրայ կը նստի ,  
ու ան գառնուկին : Ա) Երբոր հրեշտակները ան ա-  
թոռին ու երէցներուն ու չորս կենդանիներուն բո-  
լորտիքը կեցեր էին , ու աթոռին սողելը երեսի  
վրայ կ'իյնային ու աստուծոյ երկրպագութիւն կ'ը-  
նէին՝ ըսելով , ամէն : ( ) Բհնութիւն ու փառք ու ի-  
մաստութիւն ու գոհութիւն ու պատիւ ու զօրու-  
թիւն ու շնորհակալութիւն մեր տէր աստուծոյն՝ յա-  
ւիտեանս յաւիտենից . ամէն :

Ս. Աւետարան . Մարտ . Ե . 1 .

Յիսուս ժողովուրդը տեսնալով՝ լեռը ելաւ . ու  
երբոր հոն նստաւ՝ իր աշակերտները քովը գացին :  
Ա) Իր բերանը բացաւ՝ կը սորվեցընէր անոնք , ու  
կ'ըսէր : Արանի հոգւով աղքատներուն , ինչու որ  
երկնից թագաւորութիւնը անոնցն է : Արանի սգա-  
ւորներուն , ինչու որ անոնք պիտի մխիթարուին :  
Արանի հեղերուն , ինչու որ աշխարհը պիտի ժա-  
ռանդեն : Արանի անոնց՝ որ անօթի ու ծարաւ են  
արդարութեան , ինչու որ անոնք պիտի կշտանան :  
Արանի ողորմածներուն , ինչու որ անոնք ողորմու-  
թիւն պիտի գտնան : Արանի անոնց՝ որ սրտով  
սուրբ են , ինչու որ անոնք աստուած պիտի տեսնան :  
Արանի խաղաղութիւն ընողներուն , ինչու որ ա-  
նոնք աստուծոյ զաւկընէրը պիտի ըսուին : Արանի ա-  
նոնց՝ որ արդարութեան համար հալածուած են ,

ինչու որ երկնից թագաւորութիւնը անոնցն է : Արամնի է ձեզի՝ երբոր կը նախաստին ձեզ ու կը հաւաքեն, ու ինծի համար սուտ տեղը ամէն կերպ գէշ խօսքեր կը զրուցեն վրանիդ : Ինչպէք ու ուրախ եղիք, ինչու որ ձեր վարձքը շատ է երկինքը . վասն զի ձենէ առաջ եղած մարգարէները աս կերպով հաւածեցին :



# ԱՄՆԱՄՆ

## ՏԵՐՈՒՆԱԿՆԵՆ ԸՆԹՐԻՒՐԻՆ

ԿԱՄ

ԱՄԵՆԱՍՈՒՐԻ Է ԱՂԱՌԴՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ  
ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ

---

Ո՛վ որ ուզէ ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդը ընդունիլ, գոնէ օր մը առաջ իր անունը Ճողովորդապետին պիտի իմացունէ ։

Եւ եթէ մէկը յայտնի ու հրապարակաւ չարագործութիւն կ'ընէ, կամ բանիւ և կամ գործքով իր ընկերը վնասուցած է, անանկ որ Ճողովուրդը գայթակղած ըլլայ. թէ որ Ճողովորդապետը գիտնայ՝ պիտի կանչէ ու խրատէ անիկայ, որ առանց իր զղջումը ու վարքին փոփոխութիւնը յայտնելու չի համարձակի Տէրունական Սեղանին ներկայանալու. որ ան առաջուց գայթակղած Ճողովուրդը համոզուի կամ գոհ ըլլայ. կամ թէ իր ըրած ֆրասին հատուցումը՝ կամ գոնէ պատշաճաւոր կերպով կատարելու իր հաստատ գիտաւորութիւնը իմացունէ ։

Նոյն կանոնով պիտի վարուի Ճողովորդապետը անոնց հետ՝ որոնց մէջ ատելութիւն ու քէն կը տեսնայ, չի թողելով անոնց Սուրբ Սեղանին մօտենալու, մինչեւ որ անոնց հաշտութիւնը չիմանայ ։ Եւ եթէ քէն ունեցողներուն մէկը սրտանց ներել ուզէ միւսին ըրածներուն, և իր ըրած ֆրասներուն հատուցումը փոխարինելու կը հաճի, բայց միւսը հաշտութեան հաւանութիւն չիտար իր կամակորութեանը ու ատելութեանը մէջ հաստատ մնալով. ան ժամանակը պէտք է որ Ճողովորդապետը զղջացողը Հաղորդութեան ընդունի, և միւս յամառեալը մերժէ ։ Բայց երբ որ Ճողովորդապետը աս երկու

կանոններով մէկը մերժելու ըլլայ, պարտի օրինաւոր Առաջնորդին խնայունեւէ գոնէ տասնըհինգ օր չանցած : Եւ ան օրինաւոր Առաջնորդը ըստ կանոնի յանցաւորին դատը պիտի վարէ .

Հաղորդութեան ժամանակը Սուրբ Աեղանին վրայ խիստ մաքուր ճերմակ կտաւ մը բռուած ըլլայ, ու ժողովուրդին կամ դասին մէջ տեղը դրուի, ուր որ Առատան ու Իրիկուան ժամերգութիւնները կը կատարուին : Եւ քահանան Աեղանին Հիւսիսային կողմը կայնած Տէրունական Աղօթքը հետեւեալ Մաղթանքովը պիտի ըսէ, ժողովուրդը ծնրադրած .

Ով մեր Հայրը՝ որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ . Վու թագաւորութիւնդ գայ . Վու կամքդ ըլլայ, ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ . Սեր ամէն աւուր հացը սյսօր տուր մեզի . Աւ ներէ մեզի մեր պարտքերը, ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն . և մեզ փորձութեան մի տանիր, հապա չարէն ազատէ մեզ . ամէն :

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ամենակարող Աստուած, որ ամէնուն սիրտը քեզի բաց է, և ամէնուն ուղածները գիտես, և ամենեւին քենէ բան մը չի ծածկուիր . Սաքրէ մեր սրտին խորհուրդները քու Սուրբ Հոգւոյդ ազգեցութեամբը, որ քեզ կատարելապէս սիրենք, և արժանապէս քու Սուրբ Անունդ փառաւորենք, մեր Տէր Հիսուս Վրիտասի Հնորհքովը . Ամէն :

Յետոյ քահանան ժողովուրդին դարձած՝ որոշակի՝  
ՏԱՍՆԱԲ ԱՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆ ՔՆԵՐԸ պիտի ըսէ :

և ժողովուրդը տակաւին ծնրադրած՝ ամէն մէկ պատուէրէն  
ետեւ իրենց առջի ըրած օրինազանցութիւններուն համար  
Աստուծոյ թողութիւն պիտի խնդրեն, ու նաև շնորհք՝ որ  
անոնք ապառնիին մէջ պահէ, ինչպէս որ կը հետեւի:

Պաշտօնեան

Ըստուած խօսեցաւ աս խօսքերը ու ըսաւ. ևս  
եմ քու տէր աստուածդ. ինէ՛ի զատ ուրիշ աստուած  
չունենաս:

Ժողովուրդը. Տէր, ողորմէ՛ մեզի, և խոնարհե-  
ցուր մեր սիրտերը աս օրէնքը պահելու:

Պաշ. Պառն քեզի փորուած կուռք չի պիտի շի-  
նես, ոչ ալ ամէն ան բաներուն նմանութիւնը՝ որ  
վերը երկինքը, և որ վարը երկրիս վրայ, և որ գետ-  
նին տակը ջուրերուն մէջը կայ: Անոնց երկրպագու-  
թիւն չի պիտի ընես, անոնք չի պիտի պաշտես. ին-  
չու որ ես եմ քու տէր աստուածդ՝ աստուած նա-  
խանձոտ. հայրերուն մեղքերը իրենց զաւկրներուն  
կը հասուցանեմ, մինչեւ անոնց իրեք ու չորս պոր-  
տին՝ որ իս կ'ատեն. և ողորմութիւն կ'ընեմ մինչեւ  
անոնց հազար պորտին՝ որ իս կը սիրեն, և իմ պա-  
տուիրանքներս կը պահեն:

Ժող. Տէր, ողորմէ՛ մեզի, և խոնարհեցուր մեր  
սիրտերը աս օրէնքը պահելու:

Պաշ. Քու տէր աստուծոյդ անունը սնտաի բա-  
ներու վրայ չի պիտի առնես. ինչու որ տէրը անմեղ  
չի պիտի բռնէ ան՝ որ իր անունը սնտաի բաներու  
վրայ կ'առնէ:

Ժող. Տէր, ողորմէ մեզի, և խոնարհեցուր մեր սիրտերը աս օրէնքը պահելու :

Պաշ. Միտքդ պահէ շաբաթ օրը սուրբ պահելու : Այց օր պիտի գործես, և քու ամէն գործքերդ ընես . բայց եօթներորդ օրը քու տէր աստուծոյդ շաբաթն է : Ըն օրը բնաւ գործ մը գործելու չես, դուն, ու քու մանչ զաւակդ ու աղջիկդ, քու ծառադ և քու աղախինդ, քու անասունդ և քու դռանդ ներսիդին եղող օտարակունը : Եւ չու որ տէրը վեց օրին մէջ երկինքը ու երկիրը ստեղծեց, ծովը և ինչ որ սնոնց մէջը կը գտնուի, և եօթներորդ օրը հանգչեցաւ . անոր համար տէրը եօթներորդ օրը օրհնեց և սրբեց անիկայ :

Ժող. Տէր, ողորմէ մեզի, և խոնարհեցուր մեր սիրտերը աս օրէնքը պահելու :

Պաշ. Պատուէ քու հայրդ և քու մայրդ . որ քու օրերդ երկար ըլլայ ան երկրին մէջ՝ որ քու տէր աստուածդ քեզի կուտայ :

Ժող. Տէր, ողորմէ մեզի, և խոնարհեցուր մեր սիրտերը աս օրէնքը պահելու :

Պաշ. Սպանութիւն մի ընբր :

Ժող. Տէր, ողորմէ մեզի, և խոնարհեցուր մեր սիրտերը աս օրէնքը պահելու :

Պաշ. Մի շնար :

Ժող. Տէր, ողորմէ մեզի, և խոնարհեցուր մեր սիրտերը աս օրէնքը պահելու :

Պաշ. Մի գողանար :

Եւ. Տէր, ողորմէ՛ մեզի, և խոնարհեցու՛ր մեր սիրտերը աս օրէնքը պահելու :

Պաշ. Վու ընկերիդ գէ՛մ սուտ վկայութիւն մի ընել :

Եւ. Տէր, ողորմէ՛ մեզի, և խոնարհեցու՛ր մեր սիրտերը աս օրէնքը պահելու :

Պաշ. Վու ընկերիդ կնոջը մի ցանկար, և քու ընկերիդ տանը մի ցանկար, ո՛չ անոր ծառային, ո՛չ անոր աղախինին, ո՛չ անոր եղին, ո՛չ անոր իշուն, և ո՛չ քու ընկերիդ մէկ ունեցած բանին :

Եւ. Տէր, ողորմէ՛ մեզի, և բոլոր աս քու օրէնքներդ մեր սրտերուն վրայ գրէ՛, կ'աղաչենք քեզի :

Յետոյ աս երկու Մաղթանքներէն մէկը կուգայ Թագաւորին համար. Բահանան առջեւքի պէս կայնած պիտի ըսէ :

Աղօթէ՛ք .

Մենակարող Մտուած, որ քու Թագաւորութիւնդ յաւիտենական է, և քու կարողութիւնդ ամբաւ. Ողորմէ՛ բոլոր Ակեղեցիին. և անանկ կառավարէ քու ընտրեալ Օսառայիդ՝ մեր Թագաւորին և ինքնակալին սիրտը, որ (ինքը՝ որուն պաշտօնեան ըլլալը ճանչնալով) ամէն բանէն առաջ քու փառքդ ու պատիւդ խնդրէ. և մենք ու բոլոր անոր հպատակներն ալ (անոր իշխանութեանը ուսկից ըլլալուն վրայ ըստ արժանւոյն մտածելով) հաւատարմութեամբ իրեն ծառայենք, զինքը պատուենք, և

խոնարհութեամբ իրեն հնազանդինք քու շնորհքովդ, և քու սիրոյդ համար, ինչպէս որ սուրբ պատգամովդ սահմանեցիր. մեր Տէր Հիսուս Քրիստոսի միջնորդութիւնովը, որ քեզի ու Սուրբ Հոգւոյն հետ կենդանի է ու կը թագաւորէ միշտ մէկ Մատուած մը, յաւիտեանս յաւիտենից. Ամէն :

Կամ ասիկայ

Մենակարող և յաւիտենական Մատուած, քու ամենասուրբ Պատգամովդ մեզի սորվեցուցիր, որ թագաւորներուն սիրտերը դուն կը կառավարես ու կ'ուղղես, և քու Մատուածային իմաստութեանդ հաճելի երեւցած կերպովը անոնք կը կարգադրես ու կը հաստատես. Խոնարհեալ կ'աղաչենք քեզի, որ քու ծառայիդ՝ մեր թագաւորին և Ինքնակալին սիրտը անանկ ուղղես ու հաստատես, որ ամէն իր խորհուրդներուն, խօսքերուն ու գործքերուն մէջ միշտ քու փառքդ ու պատիւդ փնտրուէ. և սորվի իրեն յանձնուած քու ժողովուրդդ յաջողութիւնով, խաղաղութիւնով ու աստուածպաշտութիւնով պահելու. Շնորհէ ասիկայ ո՛վ ամենողորմ Հայր, քու սիրելի Որդւոյդ մեր Տէր Հիսուս Քրիստոսի համար. Ամէն :

Յետոյ Աւուր պատշաճի Մաղթանքը պիտի ըսուի : Եւ անմիջապէս Մաղթանքէն ետեւ Քահանան Առաքելոց Թուղթը պիտի կարդայ ըսելով, Թուղթ (կամ Առաքելոց Թուղթին տեղը Սուրբ Գրոց մէկ մասը) գրուած . . . գլուխը.

... գրքին . . . համարէն սկսելով : Եւ թուղթը լըմնալէն  
 ետեւ պիտի ըսէ , ' հոս կը վերջանայ Առաքեալին թուղթը :  
 Ետքը Աւետարանը պիտի կարգայ ( բոլոր ժողովուրդը կանգ-  
 նած ) ըսելով , Սուրբ Աւետարանս գրուած է . . . գլուխը  
 . . . Աւետարանին . . . համարէն սկսելով : Եւ Աւետարանը  
 լըմնալէն ետեւ հետեւեալ հաւատամքը պիտի երգեցուի  
 կամ ըսուի ժողովուրդը առջի պէս կանգնած մնալով :

Ես կը հաւատամ մի միայն Ամենակարող Հօր  
 Աստուծոյ , երկինքի ու երկրի և բոլոր երեւցած ու  
 չերեւցած բաներուն Ստեղծողին .

Ու մի միայն Տէր Հիսուս Քրիստոսի Աստուծոյ  
 միածին Որդւոյն , ամէն բանէ առաջ իր Հօրմէն  
 ծնած , Աստուծմէ Աստուած , Լոյսէն Լոյս , ՃՂԸ-  
 մարիտ Աստուած Ճշմարիտ Աստուծմէ , ծնած , չէ  
 թէ ստեղծած , մի և նոյն Հօրը էութենէն ըլա-  
 լով . Որով ամէն բան ստեղծուեցաւ , Որ մեզի՝ մար-  
 դոց համար ու մեր փրկութեանը համար երկինքէն  
 վար իջաւ , Եւ Սուրբ Հոգւով Սարիամ կոչսէն  
 մարմին առաւ , ու մարդ եղաւ , Եւ մեզի համար Պոն-  
 տացի Պիղատոսի դատաւորութեամբը խաչուեցաւ :  
 Չարչարուեցաւ ու թաղուեցաւ , Եւ երրորդ օրը  
 գիրքերուն նայելով յարութիւն առաւ , Ու երկինքը  
 ելաւ , Ու Հօրը աջ կողմը կը նստի : Եւ ինքը նորէն  
 պիտի գայ փառքով կենդանիները ու մեռելները  
 դատելու . որուն թագաւորութիւնը վախճան չունի :

Ու ես կը հաւատամ Սուրբ Հոգիին՝ Տէր և  
 Պարգևատու կենդանութեան , Որ՝ ի Հօրէ և յՈրդ-  
 ոյ կը բղխի , Որ միանգամայն Հօրը ու Որդւոյն

Հետ կը պաշտուի ու կը փառաւորուի, Որ Սարգա-  
րէններուն ձեռքովը խօսեցաւ : Ու ես կը հաւատամ  
մէկ կաթուղիկէ ու Լուսաբեւական Լսկեղեցւոյ մը :  
Եւ կը խոստովանիմ մէկ Սկրտութիւն մը՝ մեղաց  
թողութեան համար, Եւ մեռելներուն յարութեա-  
նը, Ու հանդերձեալ աշխարհի կեանքին կ'սպասեմ,  
ամէն :

Ետքը ժողովրդապետը հետեւեալ շաբթուան մէջի պա-  
հուելու Տօն կամ Պահք օրերը ծանուցում պիտի ընէ : Ու հա-  
պանակ (թէ որ հարկը պահանջէ) Հաղորդութեան Խորհուր-  
դը պիտի խմբուէն . և Պաշտօնեայի մը ձեռքով տեսն բե-  
րուելու Հրամանագիրերը ու կոնդակները ու Բանագրանք-  
ները պիտի կարգացունին : Ժամերգութեան Ժամանակը Եկե-  
ղեցւոյ մէջ ըլլալու ծանուցումը կամ հրատարակութիւնը  
միայն Պաշտօնեան կրնայ ընել . ան ալ ուրիշ բան մը չի  
կրնար ծանուցում ընել կամ հրատարակել, հապա միայն  
ի՛նչ որ աս Գրքիս կանոններուն մէջ սահմանուած է, կամ  
Տէրութենէն և կամ նոյն օրինաւոր Առաջնորդէն հրա-  
մայուած է :

Յետոյ Քարողը կամ Աւետարանական Ճառերուն մէկը  
կուգայ, որ արդէն սահմանուած է, և կամ ասկէ ետեւ  
հեղինակութեամբ պիտի հաստատուի :

Ետքը Քահանան Տէրոջը Սեղանին կը դառնայ, ու  
Ընծայութեան Ազօթքը կ'սկսի, աս հետեւեալ տուներուն  
մէկը կամ մէկ քանին ըստ պատշաճի կարգալով :

Լուսանկ թող լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առ-  
ջին, որ ձեր բարի գործքերը տեսնալով, ձեր հայրը  
փառաւորեն՝ որ երկինքն է. (Սափ. է. 16 :)

Լորկրի վրայ ձեզի համար գանձ մի գիղէք, ուր

որ ցեցը ու ժանկը կ'ապականեն, և ուր որ գողերը գետնին տակէն ծակ կը բանան ու կը գողնան . հապա երկինքը ձեզի համար գանձ գիղեցէք, ուր որ ոչ ցեցը և ոչ ժանկը կ'ապականեն, և ոչ գողերը գետնին տակէն ծակ կը բանան ու կը գողնան . (Մատթ. 2. 19, 20 :)

Ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց անանկ ըրէք . ինչու որ աս է օրէնքը ու մարգարէութիւնները . (Մատթ. 2. 12 :)

Ղէ թէ ամէն ով որ ինծի տէր տէր կ'ըսէ, երկինքի թագաւորութիւնը պիտի մտնայ . հապա ան որ իմ երկնաւոր հօրս կամքը կը կատարէ . (Մատթ. 2. 21 :)

Օգբէոս եկաւ՝ ու տէրոջը ըսաւ . տէր, ահա իմ ունեցածիս կէսը աղքատներուն կուտամ . և թէ որ մէկուն զրկեցի նէ, չորս անգամը կը վճարեմ անոր . (Մատթ. 2. 8 :)

Ով իրեն ապրուստովը զինուորութիւն կ'ընէ . ով այգի մը կը տնկէ, ու անոր պտուղէն չուտէր . ով ոչխարներ կ'արածէ, ու ոչխարներուն կաթէն չուտէր . (Մատթ. 2. 7 :)

Թէ որ ձեզի հոգեւոր բաներ ցանեցինք, մեծ բան մըն է թէ որ ձեզի երկրաւոր բաներ հնձենք . (Մատթ. 2. 11 :)

Ղէք մի գիտեր, որ տաճարին մէջ աշխատողները տաճարէն կ'ուտեն . և անոնք որ սեղանին պաշտօնեաներն են, նոյն սեղանէն կը վայելեն : Մտանկ

ալ տէրը հրաման տուաւ որ աւետարանը քարոզողները աւետարանէն պիտի ապրին. (Մ. Արհ. Թ. 13, 14 :)

Այն որ խնայելով կը ցանէ՝ քիչ կը հնձէ. և ան որ առատութիւնով կը ցանէ՝ առատութիւնով կը հնձէ : Ամէն մէկը ինչպէս որ իր սրտովը կը յօժարի նէ, չէ թէ հարկաւ ու տրամութիւնով. ինչու որ աստուած զուարթառատութիւնը կը սիրէ. (Մ. Արհ. Թ. 6, 7 :)

Աշակերտը բոլոր իր ունեցած բարիքներէն իր վարդապետին ալ թող հաղորդէ : Այն խաբուիք. աստուած ծաղը չըլլար. ինչու որ մէկ մարդ մը ինչ որ կը ցանէ՝ նոյնը կը հնձէ. (Պաղա. զ. 6, 7 :)

Ուստի՛ քանի որ ժամանակը ձեռվընիս է՝ ամէնուն բարիք ընենք, մանաւանդ հաւատքի ընտանիքներուն. (Պաղա. զ. 10 :)

Աստուած պաշտութիւնը մեծ հարստութիւն է՝ բաւականութիւնով մէկ տեղ : Ինչու որ բան մը աշխարհ չի բերինք, ու բան մըն ալ չենք կրնար տանիր. (Մ. Տիմ. զ. 6, 7 :)

Աս աշխարհիս մէջի հարուստներուն պատուիրէ որ չի հպարտանան, և յոյսերնին սնտոյ մեծութեան վրայ չի դնեն, հապա աստուծոյ վրայ՝ որ ամէն բան առատապէս մեզի կուտայ որ վայելենք. բարիք գործեն, բարեգործութիւնով հարստանան, առատաձեռն, սիրուն ու հաղորդող ըլլան. հանդերձաւին համար բարի հիմ մը գանձեն անձերնուն, որ

յաւիտենական կեանքը ձեռք ձգեն . (Մ. ՏԻՏ. Զ . 17, 18, 19 :)

Աստուած անիրաւ չէ՛ որ ձեր գործքերը մոռնայ , և ան սէրը՝ որ իր անուանը համար ցըցուցիք , որ սուրբերուն ծառայեցիք ու կը ծառայէք . (Աբրա . Զ . 10 :)

Իարերարութիւն ու հաղորդութիւն ընելը մի մոռնաք . ինչու որ աստուած անանկ պատարագներուն կը հաճի . (Աբրա . ԺԳ . 16 :)

Ան որ աս աշխարհիս բարիքը ունի , և իր եղբորը կարօտութիւնը կը տեսնայ , և իր գութը անկէ կը գոցէ . ինչպէս աստուծոյ սէրը անոր մէջ կը բնակի . (Մ. Յովհ . Գ . 17 :)

Քու ունեցածէդ ողորմութիւն տօւր , ու բնաւ քու երեսդ աղքատէ մը մի դարձուներ . ան ժամանակը աստուած իր երեսը բնէ չի դարձուներ . (ՏՊ . Գ . 7 :)

Կարողութեանդ չափ ողորմած եղիւր . թէ որ շատ ունիս՝ առատապէս տօւր . թէ որ քիչ ունիս՝ ջանք ըրէ ան քիչէն ուրախ սրտով տալու . ինչու որ ասանկով բեզի մէկ աղէկ հատուցում մը կը պատրաստես կարօտութեան օրուանը մէջ . (ՏՊ . Գ . 8, 9 :)

Այլ որ աղքատին կ'ողորմի՝ փոխ կուտայ տէրօջը . անոր տուրքին նայելով աստուած անոր հատուցում պիտի ընէ . (Մատ . ԺԺ . 17 :)

Երանի անոր՝ որ աղքատին ու տնանկին հող կը տանի , նեղութեան օրը տէրը անիկայ կ'աղատէ . (Սաղմ . Խ . 1 :)

Երբոր Սուրբ Գրոց աս խօսքերը կը կարդացուի : Սարկաւագները : Եկեղեցականները : կամ մասնաւորապէս որչաւած ուրիշ յարմար անձինքները նոյն եկեղեցիին ժողովուրդէն պատրաստուած վայելուչ ամանովը աղքատներուն համար եղած ողորմութիւնը : և ժողովուրդին ուրիշ նուէրները ժողովն : ու յարգութեամբ Քահանային բերեն : որ ան ալ խոնարհութեամբ պիտի առնէ ու Սուրբ Սեղանին վրայ դնէ անիկայ :

Եւ երբոր Հաղորդութիւն բլլալու բլլայ : Քահանան բաւական Հաց ու գինի պիտի դնէ Սեղանին վրայ : և անկէ ետեւ պիտի բսէ :

Մշտմբ ընենք աս աշխարհիս վրայ եղած Վրբիստոսի զինուորեալ Ակեղեցւոյն ընդհանուր վիճակին համար :

Մենակարող և յախտենական Մտուած , որ քու Սուրբ Մարքեալիդ ձեռքովը մեզի աղօթք ու խնդրուածք ու դոհութիւն մատուցանել սորվեցուցիր ամէն մարդոց համար : Խոնարհեալ կ'աղաչենք քեզի ( ողորմութեամբ ընդունէ մեր նուէրները ու ողորմութիւնները ) ( թէ որ նուէր ու ողորմութիւն չըլլայ , փակագծով այս միջանկեալը ( ընդունէ մեր նուէրները ու ողորմութիւնները ) չի պիտի ըսուի ) , ընդունէ մեր աղօթքները՝ որ քու Մտուածային Սեծվայելչութեանդ կը մատուցանենք , աղաչելով քեզի որ միշտ քու ընդհանուր Սուրբ Ակեղեցիդ ճշմարտութեան , միութեան ու համակամութեան հոգիովը արծարծես : Աւշնորհէ որ ամէն քու Սուրբ Մտուեց խոստովանողները քու սուրբ Խօսքիդ ճըշ-

մարտութիւնովը միարանին, ու միութիւնով ու Մս-  
տուածային սիրով ապրին: Ա՛ղաղչենք ևս քեզի՝ որ  
փրկես ու պահպանես բոլոր Վրիստոնեաց թագա-  
ւորները, Աշխանազունները ու Առաւվարները, և  
մասնաւորապէս քու ծառագ. (Մ) մեր թագաւորը,  
որ անոր իշխանութեանը տակը բարեպաշտութեամբ  
ու հանդարտութեամբ կառավարուինք: Շնորհէ  
բոլոր անոր Խորհրդականներուն ու իր իշխանու-  
թեանը տակը եղող պաշտօնեաններուն, որ ճշմար-  
տապէս ու անաչտրապէս արդարութիւն ընեն՝ ա-  
նօրէնութիւնը ու մոլութիւնը պատժելու համար,  
և քու ճշմարիտ կրօնքիդ ու առաքինութեանդ պահ-  
պանութեանը համար: Շնորհք տուր ո՛վ երկնա-  
ւոր Հայր, բոլոր Ապիսկոպոսներուն ու Եղովբե-  
րատէրերուն, որ իրենց վարքովը ու վարդապետու-  
թիւնովը քու ճշմարիտ ու կենդանի Պատգամդ  
քարոզեն, ու յարմար ու պատշաճ կերպով քու  
տուրը Խորհուրդներդ մատակարարեն: Այլ պար-  
զեւէ քու երկնային շնորհքդ բոլոր քու ժողովուրդ-  
իդ, ու մասնաւորապէս հոս ներկայ գանուող միա-  
բանութեանը, որ խոնարհ սրտով ու արժանաւոր  
յարգութեամբ քու տուրը Խօսքդ ըսեն և ընդունին,  
սրբութիւնով ու արդարութիւնով բոլոր իրենց  
կեանքին մէջ ճշմարտապէս քեզի ծառայելով: Այլ  
մենք խոնարհեալ կ'աղաչենք քեզի ո՛վ Տէր, որ քու  
բարութեամբդ բոլոր անոնք մխիթարես և անոնց  
օգնական ըլլաս՝ որոնք աս անցաւոր կեանքիս մէջ

նեղութեան , տրամութեան , չքաւորութեան , հիւանդութեան կամ ուրիշ ո՛ր և իցէ ձախորդութեան մէջ են : Աւնակ կ'օրհնարանենք քու սուրբ Անունդ բոլոր ան քու ծառաներուդ համար , որոնք քու հաւատքովդ ու երկիւղովդ աս կեանքէս ելած են . շնորհք խնդրելով քենէ անանկ անոնց բարի օրինակներուն հետեւելու որ կարող ըլլանք անոնց հետ քու երկնաւոր թագաւորութեանդ հաղորդ ըլլալու . ( շնորհէ ասիկայ ո՛վ Հայր , մեր մի միայն Սիջնորդ և Պաշտպան Յիսուս Վրիստոսի սիրոյն համար . Ամէն :

Երբոր Պաշտօնեան Ամենասուրբ Հաղորդութեան ծանուցումը կ'ընէ ( որ աս ծանուցումը անմիջապէս Հաղորդութեան մատակարարութեանը նախընթաց Աիրակին , կամ Տօնի մը օր ըլլալու է ) , Քարոզը կամ Աւետարանական Ճառը վերջացածին պէս հետեւեալ Յորդորակը պիտի կարդայ :

Սիրելի եղբայրներ , եկած Աիրակի ( կամ այսինչ Տօնի ) օրը , միտք ունիմ Աստուծոյ օգնականութեամբը Վրիստոսի Սարմնոյ և Արեան Խորհուրդը անոնց մատակարարելու , որոնք երկիւղածութեամբ ու ջերմեռանդութեամբ կը պատրաստուին իրենց հոգեւոր գիւրութեանը ու մեծ օգնականութեանը համար , իր արդիւնաւոր խաչին ու չարչարանացը յիշատակութեանը համար ընդունելու , որով միայն մեր մեղքերուն թողութիւն կը գըտնանք , և երկնից թագաւորութեանը բաժանորդ

կըլլանք : Աւստի՛ պարտաւոր ենք խոնարհ ու ջերմ-  
եռանդ գոհութիւններ մատուցանել ամենակարող  
Ըստուծոյ մեր երկնաւոր Զօրը, որ մեր Փրկիչը է՝ ի-  
սուս Վրիստոս իր Արդին մեզի տուաւ, չէ՛ թէ միայն  
մեզի համար մեռնելու, հապա նաև ան ամենասուրբ  
Խորհրդովը մեր հոգեւոր կերակուրը ու սնունդը  
ըլլալու : Նոյն Խորհուրդը արժանաւորապէս ըն-  
դունողներուն անանկ աստուածային ու մխիթարա-  
կան բան մը ըլլալուն, և նմանապէս անարժան հա-  
մարձակութեամբ ընդունողներուն ալ մեծ վտանգ  
մը ըլլալուն, ձեզ յորդորելը իմ պարտքս է որ նոյն  
միջոցին լաւ մը քննէք ան սուրբ Խորհուրդին մե-  
ծութիւնը, և անարժանութեամբ ընդունելուն ան  
մեծ վտանգը . և անանկ մանրամասնաբար քննէք  
ու փորձէք ձեր խիղճերը (ու չէ՛ թէ կեղծաւոր ապտ-  
ուածապաշտներուն նման արտաքին ու հարեւանցի  
ջերմեռանդութեամբ, հապա անանկ ) որ կարող ըլ-  
լաք ասանկ մէկ երկնաւոր Ղաշի մը սրբուած ու  
մաքրուած մօտենալու, ան հարսանեաց հանդեր-  
ձովը՝ որ Ըստուած Սուրբ Պրոց մէջ կը պահանջէ,  
և ան Սուրբ Սեղանին իբր արժանաւոր հաղորդա-  
կից ընդունուելու :

Ըսոր ճամբան ու կանոնը այս է . Պինտ առաջ  
պէտք է որ դուք ձեր վարքերը ու կենակցութիւննե-  
րը քննէք Ըստուծոյ պատուիրանքներուն կանոնովը,  
և ինչ բանի մէջ որ դուք ձեզ թէ խորհրդով, թէ  
բանիւ և թէ գործքով մեղանշած կը գտնաք, ան

Ժամանակը ձեր մեղանշականութեանը վրայ ողբա-  
 լու էք, ու բարի վարքի հաստատ դիտարարութիւ-  
 նով ամենակարող Մատուցոյ առջին խոստովանելու  
 էք: Այս երբոր կը տեսնաք թէ ձեր գործած մեղքերը  
 չէ թէ միայն Մատուցոյ դէմ է՝ հապա ձեր ընկեր-  
 ներուն ալ, ան ժամանակը անոնց հետ հաշտուելու  
 էք, պատրաստ ըլլալով ձեռքերնուդ եկածին չափ  
 վճարք ու հատուցում ընելու, ուրիշներուն ըրած  
 ամէն մեղաներնուդ ու անիրաւութիւններնուդ փո-  
 խարէն, և նմանապէս յօժարամիտ ըլլալով ուրիշ-  
 ներուն ներելու՝ որոնք ձեզի դէմ մեղք գործած են,  
 ինչպէս որ դուք ձեր մեղքերուն համար Մատուցի  
 ներում կը խնդրէք: Ինչու որ չէ նէ ան սուրբ Հա-  
 զորդութիւնը առնելը ուրիշ բան մը չընէք, հապա  
 ձեր դատապարտութիւնը կ'եզելցունէ: Աւստի՝ ձե-  
 նէ ո՛վ որ Մատուցոյ դէմ հայհոյիչ է, իր Խօսքը  
 խափանող ու բամբասող, շնացող, կամ չարութեան  
 ու ստելութեան, և կամ ուրիշ մեծ մեղքի մեջ  
 ապրող, թող զզջայ բոլոր իր մեղքերուն վրայ, չէ նէ  
 թող ան սուրբ Աղանին չի մտնենայ, որ չըլլայ թէ  
 ամենասուրբ Ասորհուրդը ընդունելէն ետեւ սատա-  
 նան իր սիրտը մտնայ, ինտոր որ Հոգայինը մտնու,  
 և ամէն չարութիւններով լեցունէ, ու հողիով ու  
 մարմինով կորսնցունէ:

Այս որովհետեւ հարկաւոր է որ բնաւ մէկը Մ-  
 մենասուրբ Հազորդութեան չի մտնենայ, հապա  
 միայն սատուցոյ ողորմութեանը հաստատ ստատի-

նու թեամբ մը, ու հանդարտ խղճմտանքով մը, ուստի՝ ձենէ ո՞վ որ կարող չէ իր խղճմտանքը աս միջոցներովը հանդարտեցունել, հապա ելելըք մխիթարու թեանն ու յորդորանքի կարօտ է, թող ինծի գայ, կամ մէկ ուրիշ Մտուծոյ խօսքին հմուտ և տեղեակ Պաշտօնեայի մը երթայ, և իր սրտին դանու թիւնը բանայ, որ Մտուծոյ սուրբ Խօսքին քարոզութիւնովը կարող ըլլայ հոգեւոր խորհուրդներով ու խրատներով արձակման շնորհքը ընդունելու, իր խիղճը հանդարտեցունելով ու իր կասկածը ու տարակոյսը փարատելով :

Թէ որ Քահանան ժողովուրդին Ամենասուրբ Հաղորդութիւնը ընդունելու զանցառու ըլլանին տեսնայ, աւջեւքինն տեղը աս Յորդորակը պիտի կարդայ :

Արեւի եղբայրներ, եկած Արակի, (կամ այս ինչ Տօնի) օրը, Մտուծոյ շնորհքովը Տէրունական Ընթրիքը պիտի ընեմ, որուն՝ հոս գտնուող ձեզ ամէնքդ Մտուծոյ կողմանէ կը հրաւիրեմ. և Հիսուս Քրիստոսի սիրովը կ'ազաւեմ, որ ասանկ Մտուծամով կանչուած ու հրաւիրուած ըլլալով, ան Խորհուրդին ներկայ գտնուելու զանցառութիւն չընէք : Արդեօք գիտէք թէ ինչ ցաւալի ու ծանր բան մըն է, երբօր մէկը շատ հարուստ ճաշ մը կը պատրաստէ, սեղանը բազմատեսակ կերակուրներով զարդարած, անանկ որ ուրիշ ամենեւին բան մը պակաս չէ. հապա միայն հրաւիրուածները գան ունըս-

տին . բայց ան հրաւիրուողները ապերախտութեամբ  
( առանց պատճառի ) ետ կը փախչին ու չին ուզեր  
գալ : Ասանկ դիպուածի մը մէջ ձենէ որերննուդ  
դժուարը չի պիտի գար : Ա՞յլ իր անձին մէկ մեծ անի-  
րաւութիւն մը ու նախատինք մը չի պիտի սեպեր : Ա-  
րեմն Վրիստոսով սիրելի եղբայրներ , զգո՛յճ կեցեք  
որ չըլլայ թէ աս սուրբ Անթրիքէն դուք ձեզ ետ պա-  
հելով Աստուծոյ բարկութիւնը ձեզի գէ՛մ բորբոքել  
տար : Ղիւրին է մէկի մը ըսել թէ՛ ես չի պիտի հա-  
ղորդուիմ , ինչու որ աշխարհի այլևայլ գործքերովը  
զբաղեալ եմ : Բայց աս տեսակ պատճառները ա-  
նանկ դիւրաւ ընդունելի ու հաճելի չէ Աստուծոյ :  
Թէ՛ որ մէկը կ'ըսէ թէ՛ ես մէկ մեծ մեղաւոր մըն եմ ,  
ու անոր համար կը վախնամ ներկայ գտնուելու .  
ուրեմն՝ ինչո՞ւ համար չէք ապաշխարեր , ու վարքեր-  
նիդ շտկեր : Արբոր Աստուած ձեզ կը կանչէ , մենք  
չենք ուզեր գալ ըսելու չէ՛ք մի ա՛մէնար : Այլ Աստու-  
ծոյ դառնալ ուզելու ժամանակնիդ պատրաստու-  
թիւն չունինք ըսելը դուք ձեզի պատճա՞ռ մը մի  
պիտի ընէք : Ղուք ձեզի աղէկ մտմտացէ՛ք , ձեր ա-  
սանկ սուտ պատճառանքները Աստուծոյ առջին ձեզ  
չարդարացուներ : Անոնք որ Աւետարանի մէջի հը-  
րաւէրը մերժեցին ըսելով թէ՛ այգի առած ենք ,  
կամ եզերնիս փորձելու կ'երթանք , կամ թէ ա-  
մուսնացած ենք , անոնք ասանկով չարդարացան ,  
հապա ան երկնային կոչմանը անարժան սեպուե-  
ցան : Այս իմ կողմանէս կը պատրաստուիմ , և իմ

պաշտօնիս նայելով Մատուծոյ Մեծաւորը ձեզ կը  
հրաւիրեմ . Յիսուս Վրիստոսի կողմանէ ձեզ կը  
կանչեմ . և ձեզ կը յորդորեմ թէ որ դուք ձեր  
փրկութիւնը կ'ուղէք , որ աս Մեծասուրբ Հաղոր-  
դութեանը մասնակից ըլլաք : Եւ ինչպէս որ Մա-  
տուծոյ Արդին ձեր փրկութեանը համար իր հոգին  
աւանդելու յանձնառու եղաւ խաչին վրայ մեռնե-  
լով , անանկ ալ ձեր պարտքն է Մեծասուրբ Հա-  
ղորդութիւնը ընդունելը , իր մահուանը պատարա-  
գին յիշատակութեանը համար , ինչպէս որ ինքը  
պատուիրեց . որ եթէ անհկայ կատարելու զանցա-  
ռութիւն ընէք , անգամ մը ինքիրեննիդ մտմտացէք  
թէ ինչ մեծ անիրաւութիւն կ'ընէք Մատուծոյ . և  
այս բանին համար ինչ մեծ պատիժ մը կ'ստուած է  
գլխունուդ վրայ , երբոր կամաւ Տէրօջը Աեղանէն  
կը հրաժարիք , ու ձեր եղբայրներէն կը զատուիք ,  
որոնք այս երկնային կոչմանը կուգան հոգեւոր սը-  
նունդ առնելու : Թէ որ դուք զգուշութեամբ աս  
բաները քննելու ըլլաք , Մատուծոյ շնորհքովը միտ-  
քերնիդ բարիի պիտի դառնայ . ինչու որ անհկայ  
առնելովնիս անդադար մեր երկնաւոր Հօրը՝ ամե-  
նակարող Մատուծոյ մեր խոնարհ աղաչանքները պի-  
տի մատուցանենք :

Հաղորդութեան խորհուրդը կատարուելու ժամանակը  
հաղորդուելու անձինքները իրենց յարմար տեղերնին կայնե-  
լով , Քահանան աս Յորդորակը պիտի ըսէ :

Արեւիկ եղբայրներ Տէրօջմով , դուք՝ որ պատ-

րաստ էք մեր Վրկիչ Յիսուս Վրիստոսի Սարմնոյ  
և Մրեան Խորհուրդին մօտենալու, պարտիք մը-  
տածել ինչպէս որ Պօղոս Մաքեալ կը յորդորէ,  
թէ մարդիկ ան շացէն ուտելու և ան Քաժակէն  
խմելու համար ձակելէն առաջ, պարտին անձերնին  
լաւ մը փորձել ու զգուշութեամբ քննել, և անկէ  
ետեւ համար ձակին ան շացէն ուտելու և ան Քա-  
ժակէն խմելու: Ինչու որ մեծ է օգուտը՝ թէ որ ճըշ-  
մարիտ սրտի զղջումով ու կենդանի հաւատքով ան  
սուրբ Խորհուրդը ընդունելու ըլլանք, (որովհետեւ  
ան ժամանակը Վրիստոսի Սարմինը կը ճաշակենք  
և իր Մրիւնը կը խմենք, ան ժամանակը մենք Վրիս-  
տոսի մէջ և Վրիստոս մեր մէջը կը բնակի, մենք  
Վրիստոսի հետ կը միանանք ու Վրիստոս մեզի  
հետ), անանկ ալ մեծ է վտանգը՝ թէ որ անարժա-  
նութեամբ անիկայ ընդունենք: Այսին զի ան ժա-  
մանակը մեր Վրկիչ Յիսուս Վրիստոսի Սարմնոյ  
և Մրեանը յանցաւոր կ'ըլլանք, բուն մեր դատա-  
պարտութիւնը կ'ուտենք ու կը խմենք Տէրոջը Սար-  
մինին վրայ չի խորհելով, մենք Մատուծոյ բարկու-  
թիւնը մեր վրայ կը բորբոքենք, զինքը կը դրդենք  
որ տեսակ տեսակ հիւանդութիւններով, ու կերպ  
կերպ մահերով մեզ պատժէ: Արեմն եղբայրներ,  
դուք ձեր անձը դատեցէք որ Տէրը ձեզ չի դատէ,  
ձեր անցած մեղքերուն համար անկեղծ զղջմամբ ա-  
պաշտարեցէք, մեր Վրկիչ Յիսուս Վրիստոսի վը-  
րայ կենդանի ու հաստատ հաւատք մը ունեցէք:

ձեր վարքերը շտկեցէք, ու ամէնուն հետ կատա-  
 րեալ սիրով վարուեցէք. և ասանկով ան սուրբ  
 Խորհուրդներուն արժանաւորապէս մասնակից կ'ըլ-  
 լաք: Այլ ամէնէն էվել պարտիք խոնարհ ու ջերմե-  
 ռանդ շնորհակալութիւններ մատուցանել Աստու-  
 ծոյ, շօրը և Սուրբ շոգւոյն, աշխարհիս փրկու-  
 թեանը համար՝ որ մեր վրկիչ Աստուած և Սարդ  
 Յիսուս Վրիստոսի մահուամբ ու չարչարանքնե-  
 րովը եղաւ. ան որ իր անձը մինչև խաչին մահուա-  
 նը անգամ խոնարհեցուց մեզի պէս ողորմելիներուն  
 համար, որ մահուան շուքին ու խաւարին մեջ նըս-  
 տած էինք. որպէս զի մեզ Աստուծոյ որդիքները  
 ընէ, և յաւիտենական կեանքին բարձրացունէ: Այ-  
 սպ նպատակովը միշտ մեր հէր և մի միայն վրկիչ  
 Յիսուս Վրիստոսի մեր վրայ ունեցած բազմառատ  
 սէրը պարտինք յիշել ասանկ մեզի համար մեռնե-  
 լով, և ան անթիւ բարութիւնները՝ որ իր անգին  
 արիւնը թափելովը մեզի համար ձեռք ձգեց, ինքը  
 ան սուրբ Խորհուրդները սահմանեց ու հաստատեց  
 իբր առհաւատչեաց իր սիրոյն և իր մահուանը մըշ-  
 տընչենաւոր յիշատակութեանը, մեր մեծ ու ան-  
 վախճան մխիթարութեանը համար: Աւստի անոր՝  
 միանգամայն շօրը և Սուրբ շոգւոյն միշտ գոհու-  
 թիւն մատուցանենք (ինչպէս որ էվելօք պարտաւոր  
 ենք), մենք մեզ բոլորովին իր սուրբ կամքին ու հա-  
 ճութեանը յանձնելով, և ճշմարիտ սրբութիւնով  
 ու արդարութիւնով բոլոր մեր կեանքին օրերուն  
 մեջ իրեն ծառայելու ջանք ընելով. Ամէն:

Ետքը Վահանան Ամենասուրբ Հաղորդութիւնը առնելու  
Եկողներուն պիտի ըսէ .

Վուք՝ որ ճշմարտապէս և բոլորով սրտիւ ձեր  
մեղքերուն վրայ զղջացած էք , և ձեր ընկերներուն  
հետ սիրով ու կարեկցութեամբ կը վարուիք , և  
միտք ունիք մէկ նոր կեանք մը վարելու Աստուծոյ  
պատուիրանքներուն հետեւելով , և ասիէ՛ կտեւ իր  
սուրբ ճամբաներուն մէջ քալելով . հաւատքով մա-  
տեցէք , և ձեր հոգեւոր մխիթարութեանը համար  
աս սուրբ Խորհուրդը ընդունեցէք . և ձեր խոնարհ  
խոստովանութիւնը Ամենակարող Աստուծոյ մատու-  
ցէք խոնարհութեամբ ծնկան վրայ գալով :

Յետոյ Պաշտօններուն մէկը հաղորդուելու պատ-  
րաստ ըլլողներուն կողմանէ աս ընդհանուր Խոստովանու-  
թիւնը պիտի ըսէ , թէ ինքը և թէ բոլոր ժողովուրդը իտ-  
նարհութեամբ ճնրադրած՝ ըսելով .

Ամենակարող Աստուած՝ մեր Տէր Յիսուս Վը-  
րիստոսի Հայրը , ամէն բաներուն Ստեղծողը , բոլոր  
մարդոց Վատաւորը , մենք կը ցաւինք ու կ'ողբանք  
մեր բազմատեսակ մեղքերուն ու չարութիւններուն  
համար , որ շատ ժամանակ խորհրդով , բանիւ ու  
գործքով չափազանց քու Աստուածային Սե-  
վայելութեանդ դէմ գործած ենք , արդարապէս  
քու բարկութիւնդ ու սրամաութիւնդ մեզի դէմ  
գրգռելով : Չ'ընկրմեա՛նդ սրտով կը զղջանք ու կը  
ցաւինք աս մեր մեղքերուն համար , որոնց յիշատա-

կու թիւնը խիստ դառն է, և ծանրութիւնը անտանելի : Ողորմէ մեղի . Ողորմէ մեղի ո՛վ Ամենողորմ Հայր . քու Որդւոյդ մեր Տէր Յիսուս Վրիստոսի համար ան անցած մեղքերնուս թողութիւն տուր, և շնորհէ որ ասկէ ետեւ նոր վարքով կարող ըլլանք միշտ քեզի ծառայելու ու հաճելի ըլլալու, քու Անուանդ պատուոյն ու փառքին համար, մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովը : Ա՛մէն :

Յետոյ Քահանան (կամ Եպիսկոպոսը, թէ որ ներկայ զանուի) սորի վրայ պիտի կայնի, ու երեսը ժողովուրդին դարձուցած՝ աս Արձատրումը պիտի ըսէ .

Ամենակարող Աստուած՝ մեր երկնաւոր Հայրը, որ իր ամենամեծ ողորմութիւնովը ամէն անոնց մեղքերուն թողութիւն խոստացաւ, որոնք անկեղծ զղջմամբ ու ճշմարիտ հաւատքով իրեն կը դառնան, Ողորմի ձեզի . ձեր մեղքերուն թողութիւն տայ, ու անոնցմէ ազատէ ձեզ . հաստատէ ձեզ ու զօրացունէ ամէն բարութիւնով . և ձեզ յաւիտենական կեանքին առաջնորդէ, մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովը . Ա՛մէն :

Վերջը Քահանան կ'ըսէ .

Լսեցէք՝ ինչ միտի թարական խօսքեր կ'ըսէ անոնց մեր Փրկիչը Վրիստոս, որոնք ճշմարտապէս իրեն կը դառնան :

Եկէք ինձի ամէն հոգնածներ ու բեռնաւոր

բաճներ, ու ես ձեզ պիտի հանդէպցունեմ • (Մատթ. Ժա. 28 ։)

Աստուած աշխարհը անանկ սիրեց՝ որ իր միածին Որդին տուաւ . որ ամէն անոր հաւատացողը չի կորսուի , հապա յաւիտենական կեանքը ընդունի . (Յովհ. 7 . 16 ։)

Ասեցէք նաև Պողոս Աստուածաբանին ըսածը .

Ղշմարտի է աս խօսքը և բողոքովին ընդունելութեան արժանի , որ Յիսուս Վրիստոս աշխարհեկաւ մեղաորները փրկելու . (Ա. Տէճ. ա. 15 ։)

Ասեցէք նաև Յովհաննու Աստուածաբանին ըսածը .

Ի՞նչ որ մէկը մեղք գործելու ըլլայ , Աստուծոյ քով բարեխօս ունինք Յիսուս Վրիստոս արդարեւ ու անարատը . և անիկայ մեր մեղքերուն քառութիւնն է . (Ա. Յովհ. ք . 1 , 2 ։)

Որոնցմէ ետեւ Քահանան պիտի շարունակէ ըսելով .

Սիրտերնիդ վեր վերուցէք ,

Պատ . Սենք անոնք Տէրօջը կը վերցունենք ,

Վահ . Սեր Տէր Աստուծոյն գոհութիւն մատուցանենք :

Պատ . Անանկ ընելը արժան և իրաւ է :

Յետոյ Քահանան սուրբ Սեղանին դարձած՝ պիտի ըսէ .

Հատ արդար և իրաւ է , և մեր հարկաւոր պարտքն է որ մենք ամէն ժամանակ և ամէն տեղ

քեզի գոհութիւն մատուցանենք ո՛վ Տէր, Սուրբ  
Հայր\*, Ամենակարող, Հաւիտենական Աստուած:

Հոս կը հետեւի Պատարագի Սրբատապաթեան Ազօթ-  
քը թէ որ աւուր պատշաճի յատուկ գրուած բնոյ, ապա  
թէ ոչ՝ առ հետեւեալը կուգայ:

Ուստի՝ Հրեշտակներուն և Հրեշտակապետնե-  
րուն և բոլոր երկնային զօրքերուն հետ մէկ տեղ  
քու փառաւորեալ Անունդ կ'օրհնենք ու կը փա-  
ռաւորենք, անդադար քեզ գովարանելով և բսե-  
լով, Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր Աստուած զօրու-  
թեանց, քու փառքովդ երկինքը ու երկիրը լեցուն  
է. փառք քեզ՝ ո՛վ Տէր Բարձրեալ, Ամէն:

ՄԱՍՆԱՒՈՐ ՍՐԲԱՍԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ճանդեան օրը, և եօթը օր ետքը.

Վու միածին Որդիդ Հիսուս Վրիստոս՝ որ  
մեզի համար առ ժամանակ պարգեւեցիր ծնելու, որ  
ինքը Հոգւոյն Սրբոյ զօրութիւնովը կատարեալ  
մարդ եղաւ, իր մօրը կոյս Մարիամին գոյութենէն,  
և որ առանց մեղքի աղտոհոսթեան մեզ ամէն մեղքե-  
րէն մաքրելու. Ուստի՝ Հրեշտակներուն, և այլն:

Չատկի օրը, և եօթը օր ետքը.

Բայց գլխաւորապէս մեր պարտքն է քեզ գո-

\* Այս (Սուրբ Հայր) խօսքը Ամենասուրբ Երրորդ-Որդեան Հիսուսին է:

վաբանել քու Որդւոյդ մեր Տէր Յիսուս Վրիստոսի փառաւոր յարութեանը համար . ինչու որ ինքը ան ճշմարիտ զատկական Գառն է, որ մեզի համար զոհ եղաւ , ու աշխարհի մեղքը վերուց . և որ իր մահուամբը մահը կործանեց , և իր յարութեամբը մեզի յաւիտենական կեանք պարգեւեց . Ուստի՝ Հրեշտակներուն . և այլն :

Համբարձման օրը , և եօթը օր ետքը .

Վու սիրելի Որդւոյդ մեր Տէր Յիսուս Վրիստոսի միջնորդութեամբը , որ իր փառաւոր հարութենէն ետեւ յայտնապէս բոլոր իր Մտաբեալներուն երեւցաւ , և անոնց առջեւը երկինքը համբարձաւ մեզի համար տեղ պատրաստելու , որ իր եղած տեղը մենք ալ կարող ըլլանք ելլելու ու իր հետը փառքով թագաւորելու . Ուստի՝ Հրեշտակներուն . և այլն :

Հոգեգալստեան օրը , և վեց օր ետքը .

Սեր Տէր Յիսուս Վրիստոսի միջնորդութեամբը , որուն ճշմարիտ խոստմանը նայելով աս ժամանակ Հոգին Սուրբ երկինքէն իջաւ , յանկարծ մեծ ձայնով մը , սաստիկ հովի մը պէս , կրակէ լեզուներու նման Մտաբեալներուն վրայ հանգչելով , որ անոնց սորվեցունէ ու ամէն ճշմարտութեան առաջնորդէ . շնորհելով անոնց զանալան լեզուներու պարգեւը , ու նաև համարձակութիւն՝ եռանդուն նախանձով

շարունակ Աւետարանը քարոզելու ամէն աղգե-  
րուն . որով մենք խաւարէն ու մոլորութենէ պայ-  
ծառ լուսին ելած քու՝ և քու Որդւոյդ Հիսուս Վը-  
րիստոսի ճշմարիտ գիտութեանը բերուեցանք . Ուս-  
տի՛ շրեշտակներուն . և այլն :

Երրորդութեան կիրակին միայն .

Ղուն միայն մէկ Աստուած մըն ես , մէկ Տէր  
մը . չէ թէ միայն մէկ Անձ մը , հապա երեք Անձ  
մէկ գոյութեամբ : Վանզի ինչ որ շօրը փառքին  
համար կը հաւատանք , նոյնը կը հաւատանք Որդ-  
ւոյն և Սուրբ շոգւոյն համար , առանց տարբերու-  
թեան կամ զանազանութեան . Ուստի՛ շրեշտակ-  
ներուն . և այլն :

Ամէն մէկ Սրբասացութենէն ետեւ անմիջապէս պիտի  
ըսուի կամ երգեցուի սա հետեւեալը .

Ուստի՛ շրեշտակներուն և շրեշտակապետնե-  
րուն և բոլոր երկնային զօրքերուն հետ մէկ տեղ  
քու փառաւորեալ Անունդ կ'օրհնենք ու կը փառա-  
ւորենք , անդադար քեզ գովաբանելով ու ըսելով ,  
Սուրբ , Սուրբ , Սուրբ , Տէր Աստուած զօրութեանց ,  
քու փառքովդ երկինքը ու երկիրը լեցուն է . Փառք  
քեզ ո՛վ Տէր Բարձրեալ . Ամէն :

Անկէ ետքը Քահանան Տէրունական Սեղանին առջին ծնրագրած՝ հազարգուեւուններուն կողմանէ առ հետեւեալ Ազօթքը կ'ըսէ .

Ըմենողորմ Տէր, համարձակութիւն չունինք այս քու Սուրբ Սեղանիդ մօտենալու մեր արդարութեանը ապաւինելով, հապա միայն քու բազմօրինակ և մեծ ողորմութեանցդ : Սենք արժանի չենք քու սեղանէդ թափած փշրանքները անգամ ժողովելու : Բայց դուն նոյն Տէրն ես, որուն բնութիւնը միշտ ողորմութիւն ընել է, ուստի՝ շնորհէ մեզի ո՛վ բարեգութ Տէր, որ անանկ քու սիրելի Որդւոյդ Յիսուս Վրիստոսի Սարմինը ուտենք և Ըրիւնը խմենք, որ մեր մեղանշական մարմինները իր Սարմինովը մաքրուին, և մեր հոգիները իր անգին Ըրիւնովը լուսացուին, և որ միշտ մենք անոր մէջը բնակինք, և ան մեր մէջը, Ըմէն :

Երբոր Քահանան Սեղանին առջևը կայնած Հացը ու գինին անանկ պատրաստ կ'ունենայ որ կարող ըլլայ շուտ մը վայելուչ կերպով Հացը ժողովուրդին առջին մանրելու, ու Սկիհը ձեռքը առնելու, ան ժամանակը առ հետեւեալ Քահանայագործութեան Ազօթքը պիտի ըսէ .

Ըմենակարող Ըստուած՝ մեր երկնաւոր Հայրը, որ քու քաղցր ողորմութիւնովդ քու միածին Որդիդ Յիսուս Վրիստոս պարգեւեցիր մեր փրկութեանը համար խաչին վրայ մեռնելու, որուն վրայ (ինքը իր անձին նուիրմամբը անգամ մը պատարագ եղած) բոլոր աշխարհի մեղքերուն համար ամ-

բողջ , կատարեալ և բաւական պատարագ մը , նուէր մը ու հատուցում մը ըրաւ . և իր պատուական մահուանը մշտնջենաւոր մէկ յիշատակութեանը համար ինքը սահմանեց և իր Աւետարանին մէջ մեղի պատուիրեց , որ մինչև իր երկրորդ դալուստը շարունակենք անիկայ . ո՛վ Ամենագթած Հայր , խոնարհեալ կ'աղաչենք լսէ մեզի , և շնորհէ որ այս քու պարգեւներդ՝ Հացը ու Վինին առնելով , մեր Փրկիչ Յիսուս Վրիստոս քու Որդւոյդ սուրբ աւանդութեանը նայելով , իր մահուանը ու շարժարանացը յիշատակութեամբը իր ամենասուրբ Մարմնոյն և Արեանը հաղորդ ըլլանք , որ ինքը՝ իր մատնուելու գիշերը ( հոս Վահանան մաղղմանը ձեռքը առնէ ) հացը առաւ , ու գոհանալէն ետեւ ( և հոս Հացը մանրէ ) անիկայ մանրեց ու իր աշակերտներուն տուաւ ըսելով , Առէք , կերէք . ( և հոս իր ձեռքը բոլոր Հացին վրայ դնէ ) աս է իմ Մարմինս , որ ձեզի համար կը տրուի . Ասիկայ զիս յիշելու համար ըրէք : Նոյնպէս ընթրիքէն ետեւ ( հոս Սիւնը ձեռքը առնէ ) բաժակը առաւ , և գոհանալէն ետքը անոնց տուաւ ըսելով , Խմեցէք ասկէ ամենքդ ինչու որ ( հոս իր ձեռքը Սկիհին և միւս ան ամաններուն վրայ դնէ , որոնց մէջ քահանայագործուելու գինի կայ ) , Աս իմ արիւնս է ան նոր Ուստին , որ ձեզի և շատերուն համար կը թափուի մեզոց թողութեան համար . Ասիկայ ըրէք , անիկայ ամէն անգամ խմած ժամանակնիդ , զիս յիշելու համար . Ամէն :

Հիմայ Պաշտօնեան աւաջ ինքը երկու տեսակէն ալ  
կը հաղորդուի , ու յետոյ Եպիսկոպոսները , Քահանաները  
ու Սարկաւագները նոյն կերպով կը հաղորդէ ( Թէ որ ներ-  
կայ գտնուելու ըլլան ) , և անկէ ետեւ կարգաւ ժողովուր-  
դին կ'ուսոյ անոնց ձեռքին մէջը դնելով , ամէնքը խոնար-  
հաբար ծնրագրած : Եւ Հացը ամէն մէկուն տուած ժամա-  
նակը պիտի ըսէ ,

Սեր Տէր Յիսուս Վրիստոսի Մարմինը՝ որ  
քեզի համար տրուեցաւ , քու մարմինդ ու հոգիդ  
անվախճան կեանքին պահէ : Ա՛ռ ու կեր ստիկայ ,  
յիշելով Թէ Վրիստոս քեզի համար մեռաւ . և ան-  
կէ սնունդ գտիր հաւատքով քու սրտիդ մէջ՝ շնոր-  
հակալութիւն տալով :

Եւ Պաշտօնեան Գաւաթը ամէն մէկուն տուած  
ժամանակը պիտի ըսէ ,

Սեր Տէր Յիսուս Վրիստոսի Արիւնը՝ որ քեզի  
համար թափուեցաւ , քու մարմինդ ու հոգիդ ան-  
վախճան կեանքին պահէ : Ա՛սիկայ խմէ , յիշելով  
Թէ Վրիստոսի Արիւնը քեզի համար թափուեցաւ ,  
ու շնորհակալ եղիր :

Թէ որ քահանայագործեալ Հացը ու Գինին ամէնքը  
չի հաղորդուած պակսելու ըլլայ , պէտք է որ Քահանան  
ուրիշը օրհնէ նախագրեալ կերպով , սկսելով այսպէս ( Սեր  
Փրկիչ Յիսուս Վրիստոսի մատնուելու գիշերը . . . ) Հացը  
օրհնելու համար . և Գինին օրհնելու համար ( Նոյնպէս  
Ընթրիքէն ետեւ . . . ) :

Ամէնքը հաղորդուելէն ետեւ Պաշտօնեան Տէրունական  
Սեղանին պիտի դառնայ , ու անոնցմէ եվելցածները յարգու-

Թեամբ անոր վրայ պիտի գնէ , խիստ մաքուր ճերմակ կը-  
տաւով մը ծածկելով :

Յետոյ Քահանան Տէրունական Ազօթքը կ'ըսէ , Ժողո-  
վուրդն ալ անոր ետեւէն ամէն մէկ խնդրուածքը կրկնելով .

Ո՛վ մեր Հայրը՝ որ երկինքն ես , քու Անունդ  
սուրբ ըլլայ . Քու Թագաւորութիւնդ դայ . Քու  
կամքդ ըլլայ . Ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկ-  
րիս վրայ . Սեր ամէն աւուր հացը սյսօր տուր մե-  
զի . Աւ ներէ մեզի մեր պարտքերը , ինչպէս որ մենք  
ալ կը ներենք մեր պարտականներուն , Աւ մեզ փոր-  
ձութեան մի տանիր , հապա չարէն ազատէ մեզ ,  
Ինչու որ քուկդ է արքայութիւնը ու զօրութիւնը ու  
փառքը , յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Ետքը աս հետեւեալ Ազօթքը կ'ըսուի .

Ո՛վ Տէր և երկնաւոր Հայր , մենք քու խոնարհ  
ծառաներդ բոլորովին քու հայրական բարեգթու-  
թեանդ կ'աղաչենք որ աս մեր գոհութեան և փա-  
ռարանութեան պատարագը մարդասիրաբար ըն-  
դունես . և խոնարհեալ կ'աղերսենք ևս՝ շնորհէ որ  
Յիսուս Քրիստոս քու Որդւոյդ արժանաւորու-  
թեամբը ու մահուամբը , և իր արեանը վրայ հա-  
ւատքով մենք և բոլոր քու եկեղեցիդ մեզաց Թողու-  
թիւն , և իր չարչարանքներուն ամէն ուրիշ բա-  
րիքները ընդունենք : Աւ ահա քեզի կը ներկայա-  
ցունենք ու կը մատուցանենք ո՛վ Տէր , մենք մեզ՝ մեր  
հոգիները ու մարմինները քեզի մէկ բանաւոր , սուրբ

ու կենդանի պատարագ մը ըլլալու, խոնարհեալ աղաչելով որ մենք՝ որ աս սուրբ հաղորդութեանը մասնակից եղած ենք, քու շնորհքովդ ու երկնային օրհնութիւնովդ լիցուինք: Աւ թէպէտ մեր բազմատեսակ մեղքերովը արժանի չենք քեզի պատարագ մատուցանելու, սակայն կը խնդրենք ընդունէ աս մեր պարտաւորեալ պարտականութիւնը ու ծառայութիւնը, առանց մեր անարժանութիւնը կրճուելու. հապա մեր մեղքերուն թողութիւն շնորհելով, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքովը, որով և միանգամայն շողոյն Արքայ միութեամբը քեզի ըլլայ ո՛վ ամենակարող շայր, բոլոր փառքը ու պատիւը, յաւիտեանս. Ամէն:

Կամ ասիկայ.

Ամենակարող և յաւիտենական Աստուած, բոլորով սրտիւ կը գոհանանք քենէ, որ կը հաճիս մեզ՝ աս սուրբ Խորհուրդները արժանաւորապէս ընդունողները Մեր Փրկիչ Յիսուս Քրիստոս քու Որդւոյդ անգին Մարմնոյ և Արեան շողեւոր կերակուրովը սնուցանելու. և անոնցմով մեր վրայ ունեցած քու մարդասիրութիւնդ ու բարութիւնդ ապահով կ'ընես. և որ մենք քու Որդւոյդ Խորհրդաւոր Մարմնոյն բուն անդամները կ'ըլլանք, որ բոլոր հաւատացեալներուն երջանիկ միութիւնն է. ու նաև յուսով քու յաւիտենական արքայութեանդ ժառանգներ կ'ըլլանք, քու սիրելի Որդւոյդ անգին.

մահուանը ու շարչարանացը արժանաւորութեամբը :  
 Այս արդ՝ խոնարհեալ կ'աղաչենք քեզի ով՝ երկնա-  
 ւոր Հայր, քու շնորհքովդ անանկ օգնէ մեզի, որ  
 մշտ կարող ըլլանք նոյն սուրբ միութեամբը մնալու,  
 և նոյն բարեգործութիւնները ընելու, որոնց մէջ  
 մեզ պատրաստեցիր քալելու, մեր Տէր Էջիսուս Վր-  
 ղիստոսի արժանաւորութեամբը, որուն՝ քեզի ու  
 Սուրբ Հոգւոյն ըլլայ բոլոր փառքը ու պատիւը, յա-  
 կտեանս. Ամէն :

Յետոյ ըսուի կամ երգէցուի .

Մատուծոյ փառք բարձրութիւններուն մէջ,  
 երկրին վրայ խաղաղութիւն, մարդկանց հաճու-  
 թիւն: Ար փառաբանենք քեզ, կ'օրհնենք քեզ, եր-  
 կրպագութիւն կ'ընենք քեզի, կը փառաւորենք քեզ,  
 քու մեծ փառքիդ համար գոհութիւն կուտանք քե-  
 զի, ով Տէր Մատուած, երկնաւոր թագաւոր, Մա-  
 տուած, և Մենակալ Հայր :

Ով Տէր, միածին Որդի Էջիսուս Վրիստոս, ով  
 Տէր Մատուած, Մատուծոյ Ղառը, Հօրը Որդին,  
 որ աշխարհի մեղքերը մէկ դի կը վերցունես, ողոր-  
 մէ մեզի: Ղառն որ աշխարհի մեղքերը մէկ դի կը  
 վերցունես, ողորմէ մեզի: Ղառն որ աշխարհի մեղ-  
 քերը մէկ դի կը վերցունես, ընդունէ մեր աղա-  
 չանքները: Ղառն որ Հօր Մատուծոյ աջ կողմը կը  
 նստիս, ողորմէ մեզի:

Ինչու որ դուն միայն սուրբ ես . դուն ես միայն Տէր . դուն միայն ո՛վ Վրիստոս , Սուրբ Հոգւոյն հետ մէկ տեղ Հօր Մատուծոյ փառքին մէջ բարձրացեալ ես . **Մէն :**

Յետոյ Քահանան ( կամ Եպիսկոպոսը թէ որ ներկայ գտնուի ) կ'որձրկէ զանոնք աս օրհնութիւնը ըսելով .

Մատուծոյ խաղաղութիւնը՝ որ ամէն միտքերէ վեր է , ձեր սիրտերը ու միտքերը Մատուծոյ և Հիսուս Վրիստոս իր Որդւոյն գիտութեանը ու սիրոյն մէջ պահէ . և Մենակարող Մատուծոյ , Հօրը , Որդւոյն և Սուրբ Հոգւոյն օրհնութիւնը իջնայ ու միշտ ձեր ամէնուն վրայ հանգչի . **Մէն :**

Հաղորդութիւն չեղած օրը , Ընծայման Աղօթքէն ետեւ հետեւեալ մաղթանքներուն մէկը կամ մէկ քանին կ'ըսուի . նաեւ անոնք կրնան ըսուիլ որչափ որ պատահութիւնը պահանջէ Պաշտօնեային ընտրողութեամբը , Աստուան և Իրիկուան Աղօթքի Մաղթանքներէն , Հաղորդութեան Խորհուրդէն , կամ Լիթանի Մաղթանքներէն ետեւ :

( ) Գնէ մեզի քու ողորմութիւնովդ ո՛վ Տէր , աս մեր աղօթքներուն ու պաղատանքներուն մէջ , և քու ծառաներուդ ճամբան դէպի յաւիտենական փրկութեան հասնելու ուղղէ , որ այս մահկանացու կեանքին այլևայլ պատահմունքներուն մէջ քու բարեգութ ու հզօր օգնականութեամբդ միշտ պահպանուին , մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը . **Մէն :**

Ո՛վ Ամենակարող Տէր , և յաւիտենական Աստուած , շնորհէ կ'աղաչենք քեզի , մեր հոգիները ու մարմինները քու օրէնքներուդ ճամբաներուն և քու պատուիրանքներուդ գործագրութեանը մէջ աւաջնորդելու , և անոնք սրբելու ու ուղղելու , որ քու ամենակարող պահպանութեամբդ հիմայ ու յաւիտեան հոգևով ու մարմնով պահպանուինք , մեր Տէր և Վրկիչ Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Ա՛ն :

Պարգեւէ կ'աղաչենք քեզի ո՛վ Ամենազօր Աստուած , որ մեր արտաքին ականջներովը այսօրուան լսած խօսքերնիս , քու շնորհքովդ ներսիզինիս մեր սրտերուն մէջ անանկ տպաւորուին , որ մեր մէջը բարի վարքի պտուղներ յառաջ բերեն , քու Անուանդ փառքին ու պատուոյն համար , մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Ա՛ն :

Նախաժամանէ մեզի ո՛վ Տէր՝ բոլոր մեր գործքերուն մէջ քու շնորհաձիր պարգեւովդ , և քու մըշտընջենաւոր օգնականութեամբդ ձեռնտու եղիր մեզի , որ ամէն մեր գործքերը քեզմով սկսած , շարունակած ու վերջացուցած , կարող ըլլանք քու սուրբ Անունդ փառաւորելու , և վերջապէս քու ողորմութեամբդ յաւիտենական կեանքը վայելելու , մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Ա՛ն :

Ամենակարող Աստուած , ամէն իմաստութեան աղբիւրը , դուն որ մեր խնդրելէն առաջ մեր պա-

կասութիւնը գիտես, և խնդրելու ժամանակնիս մեր տգիտութիւնը կը ճանչնաս, կ'աղաչենք ողորմէ՛ մեր տկարութիւններուն, և ան բաները՝ որ մեր անարժանութեանը ու կուրութեանը համար չենք համարձակիր խնդրելու, առատապէս պարգուէ՛ մեզի, մեր Տէր Հիսուս Վրիստոս քու Որդւոյդ արժանաւորութեամբը. Ա՛մէն:

Ամենակարող Աստուած, որ քու Որդւոյդ Անունովը խնդրուած աղաչանքները ընդունելու խօսք տուած ես, կ'աղաչենք՝ խոնարհեցուր մարդասիրաբար քու ականջներդ մեր հիմակուան ըրած աղաչանքներուն ու պաղատանքներուն. և շնորհէ՛ որ՝ ան քու կամքիդ պէս հաւատարմաբար խնդրած բաներնիս իրօք ընդունինք մեր կարօտութեանցը օգնութեանը և քու փառքիդ յայտնութեանը համար, մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը. Ա՛մէն:

Աիրակի և ուրիշ Տօն օրերը (Թէ որ Հաղորդութիւն չըլլայ), Հաղորդութեան համար կարգուած աս ընդհանուր աղօթքին մինչեւ վերջը պիտի ըսուի, որ սասնկ կ'ըսկըսի. (Աղօթք ընենք այս աշխարհիս վրայ եղած Քրիստոսի վնասուեալ եկեղեցւոյն ընդհանուր վիճակին համար). նախօրգ Մաղթանքներուն մէկը կամ մէկ քանին կարդալով, ու Օրհնութեան աղօթքովը վերջացունելով:

Տէրունական Ընթրիքը չի մատակարարուիր, մինչեւ որ Քահանային ընտրողութեամբը իր հետը չափաւոր թուով մարդիկ չըլլայ հաղորդուելու:

Հաղորդութեան Խորհուրդը չի կրնար մատակարարուիլ, Թէ որ չորս կամ գոնէ երեք հոգի չի գտնուի Քահանային հետ հաղորդուող:

Եպիսկոպոսանիս, Ժողովարանի ու Դպրոցի Եկեղեցիները, ուր որ շատ Քահանայ ու Սարկաւագ կը գտնուի՝

բորքն ալ դնէ ամէն կիրակի Պատարագւորին հետ պիտի հաղորդուին , թէ որ բանաւոր արգելք մը չունենան :

Հացին ու Գինին համար եղած երկպառակութեանը ու աւերորդապաշտութեանը պատճառները խափանելու համար , բաւական է ան հասարակ հացը՝ որ կ'ուտուի , միայն թէ որչափ կարելի է լաւ ու մաքուր ցորենէ ըլլայ :

Թէ որ շորհնուած Հացը ու Գինին եփելնայ , Ճողովորդապետը անոնք իրեն համար վար պիտի դնէ . բայց թէ որ օրհնուածը եփելնայ , Եկեղեցիէն դուրս չի պիտի տարուի . հապա Քահանան մէկ քանի ուրիշ հաղորդուողները իրեն կանչելով , անմիջապէս օրհնութենէն ետեւ ամենայն յարգութեամբ պիտի ուտեն ու խմեն անոնք :

Հաղորդութեան Հացը ու Գինին Ճողովորդապետը ու Եկեղեցւոյ վերակացուները պիտի պատրաստեն ժողովրդապետութեան ծախքովը :

Եւ գիտնալու է որ , ամէն Ճողովորդապետութեան անձինք պարտաւոր են դնէ տարին երեք անգամ հաղորդուիլ . որոնցմէ մէկը Չատիկը պիտի ըլլայ : Ամէն տարի Չատիկին Ճողովորդապետութեան անձինքները իրենց հաշիւը ընեն , և ամէն պարտք եղած Եկեղեցական իրաւունքը ըստ սովորութեան Առաջնորդին , կամ Աթոռակալին , կամ Ճողովորդապետին , և կամ անոնցմէ կարգուած անձինքներուն հաւտուցանեն . որ աս ժամանակ տրուելու է :

Ատուածային ժամերգութենէն ետեւ , Ընծայման Աղօթքին ժամանակը ժողովուած տուրքը ողորմութեան ու սիրոյ գործքերու համար պիտի բաժնուի , ինչպէս որ Ճողովորդապետը ու Եկեղեցւոյ վերակացուները յարմար կը գտան : Թէ որ չի միաբանին , նոյն թեմի Եպիսկոպոսին ընտրութեանը նայելով կատարուի :

« Թէպէտեւ Հաղորդութեան մատակարարութեանը համար սոսի խորհուրդիս մէջ կարգուած է որ հաղորդուելու անձինքները ծնրագրած առնեն անիկայ , ( որ նոյն կարգադրութիւնը Վրիստոսի երախտեսցը վրայ մեր ունեցած խոնարհութեան երախտագէտ խոստովանութիւնը յայտնելու հա-

« մար եղած է, որոնք այս սուրբ Խորհուրդովս բո-  
 « չոր արժանաւորապէս ընդունողներուն կը տրուի.  
 « ու նաև անանկ անպատուութիւնը ու անկարգու-  
 « թիւնը արգիլելու, որ գուցէ ուրիշ կերպով պա-  
 « տահի). սակայն այս ծերադրութիւնը մէկը տգի-  
 « տութիւնով ու տկարութիւնով, կամ չարութիւ-  
 « նով ու յամառութիւնով ծուռ չի հասկընալու ու  
 « նախատելու համար, ասով կը ցուցուի թէ ծըն-  
 « րագրութիւն ընելով ամենեւին աստուածային եր-  
 « կրրպագութեան դիտաւորութիւն մը չի կայ, ոչ  
 « ան շացին ու Վինիին որ այս Խորհուրդիս մէջ  
 « կ'ընդունուի, և ոչ ալ Վրիստոսի երկրաւոր  
 « Սարմնոց և Մրեանը նիւթական ներկայութեա-  
 « նը: Այս ան զի ան Խորհուրդին մէջի շացը և Վի-  
 « նին տակաւին իրենց էական գոյացութիւնը կը պա-  
 « հեն, և անոր համար աստուածաբար երկրպա-  
 « գուելու չեն. (քանզի կռապաշտութիւն պիտի ըլ-  
 « լար անիկայ, որ ամէն ճշմարիտ քրիստոնեայ պար-  
 « տի հրաժարիլ անկէ). և մեր Վրկիչ Վրիստոսի  
 « երկրաւոր Սարմինը և Մրիւնը երկինքի մէջն են,  
 « ու չէ թէ հոս վարը. ինչու որ Վրիստոսի երկրա-  
 « լոր Սարմինին ճշմարտութեանը հակառակ է ան՝  
 « մի և նոյն ժամանակի մէջ զանազան տեղեր գրու-  
 « նուիլ » \*

\* Այս Բանը Անգլիոյ Եկեղեցւոյն շարքաւեալութեանը հոխտոյ  
 իմացուելու չէ, թէ՛ « Քրիստոսի Մարմնը և Արիւնը հասարակեալ  
 ներք ճշմարտապէս և իբր ի ընդունին Տերօջը Անթիոյն ժամանակ » :

ՏՊԱՅՈՅ ՀԱՆԴԻՍԱԿԱՆ

ՏՊԱՅՈՅ ՀԱՆԴԻՍԱԿԱՆ

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԵԱՆԸ

ՈՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՋ ՊԱՐՏԻ ԿԱՏԱՐՈՒԻԼ

Մկրտութեան մատակարարութիւնը Վերակի և ուրիշ Տոն օրերը ըլլալուն աւելի պատշաճաւոր ըլլալը պարտի ժողովուրդին ծանուցուիլ, որ ժամանակ որ շատ ժողովուրդ մէկ տեղ կը գտնուի. մէյմը որ հոն ներկայ գտնուող միաբանութիւնը ան նոր մկրտուածներուն Գրիստոսի Եկեղեցիին մէջ ընդունուելուն համար կը վկայեն. ու մէյմ'ալ մկրտութեան ներկայ գտնուող մարդը միաքը կը բերէ իր մկրտուած ժամանակը Աստուծոյ եղած դաւանութիւնը: Նոյն պատճառաւ հարկ է որ մկրտութիւնը պարզ և գործածական լեզուով մատակարարուի: Սակայն (թէ որ հարկը պահանջէ) տղաք ուրիշ օր ալ կրնան մկրտուիլ:

Նաեւ գիտնալու է որ մկրտուելու տղին համար թէ որ մանչ է նէ՝ երկու Կնքահայր ու մէկ Կնքամայր մը պէտք է. և թէ որ աղջիկ՝ մէկ Կնքահայր մը ու երկու Կնքամայր:

Երբ որ մկրտուելու տղաքներ ըլլան, ճնողքները պարտին ժողովուրդապետին խնայուել օր մը առաջ, կամ նոյն առաւր Առաւուան Աղօթքը չսկրսած: Եւ յետոյ Կնքահայրները ու Կնքամայրները ու տղին հետի ժողովուրդը աւելնքը պատրաստ պիտի գտնուին մկրտութեան աւազանին քով, կամ անմիջապէս Առաւուան Աղօթքին վերջին Ընթերցուածէն ետեւ, կամ անմիջապէս Իրիկուան Աղօթքին վերջին Ընթերցուածէն ետեւ, ինչպէս որ ժողովուրդապետը կ'որոշէ: Եւ Քահանան մկրտութեան աւազանին քով գալով

( որ նոյն ժամանակը անիկայ մարտը ջուրով լեցուած պիտի ըլլայ ) ու հոն կանգնած պիտի ըսէ .

Ըրդէն սա մանուկը մկրտուած է , թէ չէ .

Թէ որ պատասխան տրուի թէ՛ չէ՛ . ան ժամանակը Քահանան կը շարունակէ , ինչպէս որ կը հետեւի .

Արեւիկներ՝ որովհետեւ բոլոր մարդիկ մեղքով կը յղանան ու կը ծնանին , և որ մեր Փրկիչը Վրիստոս կ'ըսէ , մէկը չի կրնար Ըստուծոյ արքայութիւնը մանալ մինչեւ որ նորածնեալ՝ Չուրով ու Սուրբ Հոգւով վերստին չի ծնանի . Աղաչեմ ձեզի որ Հօր Ըստուծոյ օգնութիւնը խնդրէք մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը , որ իր անբաւ ողորմութեամբը այս երեխայիս ան բանը շնորհէ , որ բնական զօրութիւնով կարող չէ ձեռք ձգելու . որ Չուրով ու Սուրբ Հոգւով մկրտուի , և Վրիստոսի սուրբ Այկեղեցիին մէջ ընդունուի , ու անոր կենդանի անդամ մը ըլլայ :

Յետոյ Քահանան կ'ըսէ .

Ազօթեհք .

Ըմենակարող և յաւիտենական Ըստուած , որ քու անբաւ ողորմութեամբդ՝ Աոյ՝ Ասհապետը բոլոր իր ընտանիքովը տապանակին մէջ ազատեցիր ջուրով կորսուելէն . ու նաեւ իսրայէլի որդիքներուն քու ժողովուրդիդ ապահով առաջնորդեցիր կարմիր ծովուն մէջ , անով քու սուրբ Ակրտութիւնդ ցըցու-

ներով . և Յիսուս Վրիստոս քու սիրելի Որդւոյդ  
 չորդանան գետը մկրտուելովը ջուրը սրբացուցիր ,  
 որ մեղաց խորհրդաւոր լուացում մը ըլլայ . Ա՛աղա-  
 չենք քու անհուն ողորմութեանդ համար՝ որ գը-  
 թութեամբ այս երախայիս վրայնայիս , լուսանի-  
 կայ ու սրբես Սուրբ Էոզուով . որ ինքը քու բարկու-  
 թենէդ խալըսած Վրիստոսի Ազեղեցիին տապա-  
 նակին մէջ ընդունուի . և հաւատքով հաստատ ,  
 յոյսով զուարթ ու սիրով արմատ կապած՝ կարող  
 ըլլայ այս ախտալից աշխարհիս ալիքները անանկ  
 անցունելու , որ վերջը անվախճան կենաց երկիրը  
 հասնի , հոն քեզի հետ թագաւորելու յաւիտեանս  
 յաւիտենից , մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհք-  
 ովը . Ա՛մէն :

Ամենակարող Աստուած անմահութեան , ամէն  
 կարօտալներուն թիկունքը , օգնութեան համար  
 ամէն քեզի դիմողներուն օգնականը , հաւատա-  
 ցեալներուն կեանքը և ննջեցելոց յարութիւնը .  
 Ա՛աղաչենք այս երեխայիս համար , որ ինքը քու  
 սուրբ Մկրտութեանդ գալով իր մեղքերուն թու-  
 ղութիւն ընդունի հոգեւոր վերածնութեամբ : Ա՛ն-  
 դունէ անիկայ ո՛վ Տէր , ինչպէս որ քու սիրելի Որդ-  
 ւոյդ ձեռքովը խօսք տուած ես՝ ըսելով . խնդրեցէք  
 ու ձեզի պիտի տրուի , փնտռեցէք ու պիտի գտնաք ,  
 չալեցէք ու ձեզի պիտի բացուի . Ա՛յնպէս պար-  
 գեւէ հիմայ մեզի՝ որ կը խնդրենք . գտնանք՝ ինչ որ

կը փնտռենք . բայց մեզի դուռը՝ որ կը չարենք , որպէս  
զի այս երեխայս քու երկնային շուքմանդ անվախ  
ճան օրհնութիւնը վայելէ , և քու յաւիտենական  
արքայութեանդ ժամանէ , որ խոստացար մեր Տէր  
Յիսուս Վրիստոսի շնորհքովը . ԱՄԷ :

Յետոյ ժողովուրդը ոտքի վրայ կ'ելլէ , ու  
Քահանան կ'ըսէ .

Լսեցէք Ս . Սարկոս Աւետարանչի խօսքերը ,  
տասներորդ Վիլոն տասնիրեքերորդ համարէն  
սկսելով .

Եւ մանր տղաքներ բերին քրիստոսի , որ անոնց  
վրայ ձեռք դնէ . բայց աշակերտները կը յանդիմա-  
նէին բերողները : Յիսուս երբոր տեսաւ՝ բարկա-  
նալով չեխեց անոնք՝ և ըսաւ . Թող տուէք ատ մանր  
տղոցը որ ինծի գան , ու անոնց արգելք մի ըլլաք .  
ինչու որ ատանկներուն է աստուծոյ թագաւորու-  
թիւնը : Ոչմարիտ կ'ըսեմ՝ ձեզի . ո՛վ որ աստուծոյ  
թագաւորութիւնը պզտի տղի մը պէս չընդունիր ,  
ան հոն չի պիտի մտնայ : Եւ անոնք գիրկը առաւ ,  
ձեռքը անոնց վրայ դրաւ , և օրհնեց անոնք :

Աւետարանը կարդացուելէն ետքը , Պաշտօնեան Աւետա-  
րանի խօսքերուն վրայ այս համառօտ Յորդորակը կ'ըսէ .

Սիրելիներ՝ դուք աս աւետարանի մէջի մեր Վրկիչ  
Յիսուս Վրիստոսի խօսքերը լսեցիք , որ ինքը հը-

բաման ըրաւ ան տղաքները իրեն բերուելու, ինչպէս յանդիմանեց անոնք՝ որ անոնց երթալը կ'արգիլէին. ինչպէս կը յորդորէր ամէնքը՝ որ անոնց անմեղութեանը հետեւին: Կուք աղէկ կը տեսնաք թէ ինչպէս իր արտաքին շարժմունքովը ու գործքովը իր անոնց վրայ ունեցած բարի կամքը յայտնեց. ինչու որ անոնք գիրկը առաւ, ձեռքը անոնց վրայ դրաւ, ու օրհնեց անոնք: Աստի՛ մի երկբայիք, հապա հաստատաբար հաւատացէք, որ ինքը նոյնպէս սիրով պիտի ընդունի այս ներկայ գտնուող երեխան. որ ինքը իր տղորմութեան բազուկներովը պիտի գրկէ անիկայ. որ ինքը յաւիտենական կենաց օրհնութիւնը պիտի շնորհէ անոր, և իր անվախճան թագաւորութեանը հաղորդակից պիտի ընէ անիկայ: Անն որոյ մեր երկնաւոր Հօրը այս երեխայիս վրայ ունեցած սէրը ճանչնալով, որ Հիսուս Քրիստոս իր Արդւոյն ձեռքովը ցըցուց, և տարակոյս չունենալով որ այս երեխայս իր սուրբ Ակրտութեանը բերելով մեր ըրած սիրոյ գործքը պիտի ընդունի, հաւատարմութեամբ անոր գոհութիւն մատուցանենք, և ջերմեռանդութեամբ ըսենք.

Մենակարող և յաւիտենական Մօտուած՝ երկնաւոր Հայր, մենք խոնարհ սրտով գոհութիւն կը մատուցանենք քեզի, որ հաճեցար մեզ քու շնորհքիդ գիտութեանը և քու վրադ հաւատք ունենալու կանչելու, աճեցուր այս գիտութիւնը, և միշտ հաս-

տատ պահէ այս հաւատքը մեր մէջը : Պարգեւէ այս  
 երեխայիս քու Սուրբ Հոգիդ, որ վերստին ծնանի,  
 ու յաւիտենական փրկութեան ժառանգ ըլլայ, մեր  
 Տէր Հիսուս Քրիստոսի շնորհքովը, որ կենդանի  
 է ու կը թագաւորէ քեզի՝ և Սուրբ Հոգւոյն հետ,  
 հիմայ ու յաւիտեան . Ամէն :

Յետոյ Քահանան կնքահայրներուն ու կնքամայր-  
 ներուն այս կերպով կ'ըսէ .

Մերելիներ՝ դուք այս երեխայս հոս բերիք մկրտ-  
 տուելու . դուք աղաչեցիք որ մեր Տէր Հիսուս Քրի-  
 ստոս շնորհք ընէ անիկայ ընդունելու, անիկայ իր  
 մեղքերէն ազատելու, Սուրբ Հոգւով անիկայ մաք-  
 րելու, և անոր երկնից թագաւորութիւնը ու յաւի-  
 տենական կեանքը պարգեւելու : Ասե լսած էք որ  
 մեր Տէրը Հիսուս Քրիստոս իր աւետարանին մէջ  
 խօսք տուած է ամէն ձեր խնդրած բաները շնորհե-  
 լու, որ նոյն խոստմունքը իր կողմանէ հաստատաբար  
 պիտի պահէ ու կատարէ : Ուստի՝ Քրիստոսի ըրած  
 աս խոստմունքին նայելով, այս երեխան նաև իր  
 կողմանէ հաւատարմաբար խօսք պիտի տայ ձեր միջ-  
 նորդութեամբը, որ իր երաշխաւորներն էք, (մին-  
 չեւ որ չափահաս ըլլայ անիկայ իր վրայ առնելու),  
 որ ինքը սատանայէն ու բոլոր անոր խաբէութիւննե-  
 րէն կը հրաժարի, ու շարունակ Աստուծոյ սուրբ  
 խօսքին կը հաւատայ, և հնազանդութեամբ անոր  
 պատուիրանքները կը պահէ :

Ուստի կը հարցունեմ :

Այլ հրաժարի՞ս դուն այս երեխայիս տեղը սա-  
տանայէն ու բոլոր անոր խարէութիւններէն, աշ-  
խարհի ունայն շքեղութենէն ու փառքէն, ամէն ան-  
որ անյագ ցանկութիւններովը ու մարմնոյն հեշ-  
տասիրութիւններովը . անանկ որ անոնց չի հետեւ-  
իս, ու ոչ ալ անոնցմով յաիշտակուիս :

Պատասխանի . Այս բոլորէն կը հրաժարիմ :

Պաշտօնէ՛ան . Այլ հաւատան՞ս դուն երկնի ու երկրի  
Ստեղծող Ամենակարող Հօր Աստուծոյ .

Այլ մեր Տէր Հիսուս Քրիստոսի՞ իր միածին  
Որդւոյն . որ Սուրբ Հոգւով յղացաւ . Սարիամ  
կուսէն ծնաւ , պոնտացի Պիղատոսի դատարորու-  
թեան ժամանակը չարչարուեցաւ , խաչուեցաւ , մե-  
ռաւ ու թաղուեցաւ . դժոխքը իջաւ , ու երրորդ օ-  
րը կրկին յարութիւն առաւ . երկինքը ելաւ , ու Ա-  
մենակարող Հօր Աստուծոյ աջ կողմը նստաւ . և  
անկէ նորէն պիտի գայ աշխարհիս վերջին կենդա-  
նիները ու մեռելները դատելու :

Այլ կը հաւատան՞ս դուն Սուրբ Հոգիին , ընդ-  
հանրական սուրբ Ակեղեցւոյն , Սուրբերուն Հա-  
ղորդութեանը , մեղաց թողութեանը , մարմինին  
յարութեանը , և մեռնելէն ետեւ յաւիտենական  
կեանքին :

Պատ . Այս աս ամէնուն հաստատութեամբ կը  
հաւատամ :

Պաշ . Ա՛նուզե՛ս դուն այս հաւատքովը մկրտուիլ .

Պատ. Ըն է իմ փտիարս :

Պատ. Ուրեմն՝ Ըստուծոյ սուրբ կախքը և իր պատուիրանքները հնազանդութեամբ պիտի պահես, ու մինչեւ քու կեանքիդ վերջը անոնց մէջ պիտի քալես :

Պատ. Ը՛յո՛, պիտի պահեմ ու քալեմ :

Յետոյ Քահանան կ'ըսէ .

Ո՛վ ամենողորմ՝ Ըստուած՝ շնորհէ որ այս երեսայիս մէջի հին մարդը անանկ թաղուի, որ անոր մէջ ան նոր մարդը յարութիւն առնէ. Ը՛հն :

Ընորհէ, որ բոլոր անոնց մարմնական հեշտութիւնները մեռնի, և շոգիին վերաբերեալ ամէն բան կենդանի մնայ ու աճի. Ը՛հն :

Ընորհէ, որ ինքը կարողութիւն ու զօրութիւն ունենայ յաղթելու. և սատանան, աշխարհը ու մարմինը նուաճելու. Ը՛հն :

Ընորհէ, որ ո՛վ որ հիմայ հոս մեր սպասաւորութեամբը ու պաշտօնովը քեզի կ'ընծայուի, երկնային առաքինութիւններով ալ զարդարուի, ու յաւիտեան վարձատրուի քու շնորհքովդ, ո՛վ Տէր ամենօրհնեալ Ըստուած, որ կենդանի ես, և ամէն բան կարգի կը դնես, միշտ ու յաւիտեան. Ը՛հն :

Ըմենակարող և յաւիտենական Ըստուած, որ

Ճիսուս Վրիստոս քու սիրելի Արդիդ մեր մեղացը  
 քառութեանը համար իր անգին կողէն ջուր ու ա-  
 ըին թափեց, և իր աշակերտներուն հրաման ըրաւ  
 որ երթան ու բոլոր ազգերը սորվեցընեն, ու շօր,  
 և Արդւոյ, և Սուրբ շոգւոյն անունովը անոնք մը-  
 կըրտեն. 1 սէ՛ կ'աղաչենք քու միաբանութեանդ ա-  
 ղերսանացը. սրբէ այս ջուրը որ մեղաց խորհրդաւոր  
 լուացարան մը ըլլայ. և շնորհէ որ այս երեխան որ  
 հիմայ անոր մէջ պիտի մկրտուի, քու շնորհքիդ  
 լիութիւնը ընդունի, և միշտ քու հաւատացեալ ու  
 ընտիր որդիքներուդ թուոյն մէջ գտնուի, մեր Տէր  
 Ճիսուս Վրիստոսի շնորհքովը. Ամէն:

Յետոյ Քահանան իր ձեռքը կ'առնէ երեխան, և  
 կնքահայրներուն ու կնքամայրներուն կ'ըսէ.

Օրուցեցէք այս երեխայիս անունը.

Եւ յետոյ անոնց զուցած անունը կանչելով (թէ որ  
 ապահովացունեն զինքը որ տղան կրնայ դիմանալ), ինքը  
 ըստ պատշաճի ու զգուշութեամբ անիկայ ջուրը կը խօթէ  
 ըսելով.

Ա.—Այս կը մկրտեմ քեզ շօր, և Արդւոյ, և  
 Սուրբ շոգւոյն անունովը. Ամէն:

Բայց թէ որ տղին տկար ըլլալը իմանայ, բաւական է միայն  
 անոր վրայ ջուրը թափելը նախայիշեալ խօսքերը ըսելով.

Ա.—Այս կը մկրտեմ քեզ շօր, և Արդւոյ, և  
 Սուրբ շոգւոյն անունովը. Ամէն:

Յետոյ Քահանան կ'ըսէ .

Սենք այս մանուկը Վրիստոսի Հօտին միութեանը մ. ջ կ'ընդունինք, և ան Խաչին ( հոս Քահանան տղին ճակատը խաչ մը պիտի շինէ ) նշանովը կը կնքենք, որ չամբնայ ասկէ ետեւ խաչը ելած Վրիստոսի հաւատքը խոստովանելու, և անոր դրօշակին տակը մեղքին, աշխարհին ու սատանային դէմ քաջութեամբ պատերազմելու . և մինչեւ իր կեանքին վերջը հաւատարիմ զինուոր մը ու Վրիստոսի ծառայ մը ըլլալու . Ը՞նէ :

Ետքը Քահանան կ'ըսէ .

Տեսնալով հիմայ սիրելի եղբայրներ՝ որ այս մանուկս վերստին ծնած՝ Վրիստոսի Լիկեղեցիին մարմնոյն յարեցաւ, գոհութիւն մատուցանենք ւսմենակարող Ըստուծոյ այս բարերարութիւններուն համար . և ամէնքս մէկ տեղ աղօթք ընենք որ այս մանուկը բոլոր իր կեանքը աս սկզբնաւորութեանը համեմատ անցունէ :

Յետոյ ամէնքը ծնրադրած կ'ըսուի .

Ո՛վ մեր Հայրը՝ որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ . Վու թագաւորութիւնդ գայ . Վու կաթիլ ըլլայ, ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ . Սեր ամէն աւուր հացը այսօր տուր մեզի . Լու ներէ մեզի մեր պարտքերը, ինչպէս որ մենք ալ

կը ներենք մեր պարտականներուն . Ի՞նչ մեզ փորձու  
թեան մի տանիր , հապա չարէն ազատէ մեզ . Ի՞նչ :

Յետոյ Քահանան կ'ըսէ .

Ո՛վ ա մենողորմ շայր , բոլորով սրտիւ կը գոճ  
հանանք քենէ , որ հաճոյ թուեցաւ քեզի այս մա  
նուկս քու Սուրբ շողովոյ վերստին ծնել տալու ,  
որդեպու թեամբ անխկայ իբր քու որդիդ ընդունե  
լու , ու քու սուրբ Աղեղեցւոյդ միութեանը խառնե  
լու : Ի՞նչ խոնարհեալ կ'աղաչենք , պարգևէ՞ որ ինքը  
մեզքին մեռած ու արդարութեան կենդանի և Քրի  
ստոսի հետ իր մահուամբը թաղուած ըլլալով ,  
կարող ըլլայ ան հին մարդը խաչելու , ու բոլորովին  
մեղաց մարմինը ջնջելու , և որ՝ ինչպէս որ ինքը քու  
Արդեոյդ մահուանը հաղորդ եղաւ , անանկ ալ իր  
յարութեանը մասնակից ըլլայ . որ վերջը բոլոր քու  
սուրբ եկեղեցիիդ հետ մէկ տեղ քու յաւիտենական  
արքայութեանդ ժառանգ ըլլայ , մեր Տէր Յիսուս  
Քրիստոսի շնորհքովք . Ի՞նչ :

Երբը ամենքը կանգնած՝ Քահանան կնքահայրներուն ու  
կնքամայրներուն այս Յորդորակը կը կարդայ .

Արչափ որ այս մանուկս ձեր միջնորդութեամբը  
խօսք տուած է՝ որ իր երաշխաւորներն էք , սատա  
նայէն ու բոլոր անոր խաբէութիւններէն հրաժա  
րելու , Ի՞ստուծոյ հաւատարու և անոր ծառայելու .  
պարտիք յիշել որ ձեզի կը վերաբերի , և ձեր պարտքն


է նայիլ որ այս մանուկս գիտնայ երրորդ ուսման ընդունակ ըլլայ, թէ ինչ երեւելի ուխտ մը, խոստում մը ու դաւանութիւն մը ըրած է ինքը հոս ձեր միջնորդութեամբը : Այլ ինքը աս բաները աղէկ գիտնալու համար պէտք է որ քարոզ ըսելու հրաւիրէք, և մասնաւորապէս հոգ տանիք որ Հաւատամքը, Տէրունական Եղօ՛թքը և Տասնարանեայ Պատուիրանքները գործածական լեզուով սորուի, և բոլոր ան բաները՝ որ քրիստոնեայի մը հոգւոյն փրկութեանը համար հարկաւոր է գիտնալ ու հաւատալ, և որ այս մանուկս առաքինաբար մեծնայ, ու բարեպաշտ և քրիստոնէական վարքով մը ապրի, ամէն տուն միտքը բերելով թէ՛ Մկրտութիւնը մեր դաւանութիւնը մեզի կը ներկայացունէ, որ է՝ մեր Վրդկիչ Վրիստոսի օրինակին հետեւիլ և անոր նմանիլ. որ ինչպէս որ ինքը մեզի համար մեռաւ ու յարութիւն առաւ. անանկ ալ մենք որ մկրտուեցանք՝ մեղքին մեռած ըլլանք, ու յարութիւն առնենք արդարութեան. մեռցունելով միշտ բոլոր մեր չար ու սպականեալ յօժարութիւնները, և օր ըստ օրէ ամէն տեսակ առաքինութիւնով ու սուրբ վարքով զարգանանք :

Յետոյ նսեւ կ'ըտէ .

Ղառք հոգ տանելու էք որ այս մանուկս Հաւատամքը, Տէրունական Եղօ՛թքը և Տասնարանեայ Պատուիրանքները գործածական լեզուով սորու-

ծին պէս Ապրիսկոպոսին բերուի, որ անկէ գրողմուխու նաև այս բանին համար հրատարակուած Աղեղեցւոյ Վերհաստնէականին մէջ աղէկ վարժուի:

« Եստուծոյ խօսքովը ստուգուած է որ մկրտեալ  
« տղաքները ներգործական մեղքը չի գործելէն ա-  
« ռաջ երբոր մեռնելու ըլլան, անտարակոյս կը փրո-  
« կուին: Սկրտութեան ժամանակը Առաջանիչ սո-  
« վորութեան գործածութեանը կասկածը վերցու-  
« նելու համար, անոր բացատրութիւնը և անոր պա-  
« հուելուն պատճառները երեսներորդ կանոնին մէջ  
« կը տեսնուի, որ առաջին անգամ հրատարակուե-  
« ցաւ ՍՍՎՎ թուականին »:



*[Faint, illegible text bleed-through from the reverse side of the page]*

ՔՐԻՍՏՈՍ

ՏՂԼՅՈՅ ԵՌԵՆՁԻՆ

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԵԱՆԸ

ՈՐ ՏՈՒՆԵՐՈՒՆ ՄԵՋ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ

Ամէն թեմի ժողովրդապետները պէտք է որ տուելով տուել ժողովուրդին իմաց տան , որ տղայոց Մկրտութիւնը իրենց ծննդեանը առաջին կամ երկրորդ կիրակիէն , կամ նոյն միջոցին պատահած Տօն օրէն աւելի շերկարի . բայց ՚ի մեծ և օրինաւոր պատճառով մը , որուն որ ժողովրդապետը հաւանութիւն կուտայ :

Նաեւ անոնց իմացունելու էն որ առանց անանկ մեծ ու հարկաւոր պատճառի մը իրենց տղաքը առանձին տուներնուն մէջ չեն կրնար մկրտել տար . բայց երբոր հարկաւորի , ան ժամանակը Մկրտութեան խորհուրդը այս կերպով կը կատարուի :

Նախ և առաջ թող ժողովրդապետութեան Պաշտօնեան ( կամ անոր չեղած ժամանակը ուրիշ օրինաւոր Պաշտօնեան ) ներկայ գտնուողներուն հետ մէկ տեղ Աստուծոյ ազաչէ , և Տէրունական Աղօթքը ըսէ , և ան Մաղթանքներուն միայն այնչափը՝ որ առաջ հանդիսական Մկրտութեան ժամանակը զուրցուելու համար դրուած էն , որչափ որ ժամանակը ու ներկայ կարօտութիւնը կը պահանջէ : Եւ յետոյ հոն տեղը գտնուողներէն տղին անունը դրուելով , Պաշտօնեան կը թափէ ջուրը անոր վրայ՝ այս խօսքերը ըսելով ,

Եւ—Ես կը մկրտեմ քեզ Հօր , և Որդւոյ , և Սուրբ Հոգւոյն անունովը . Եւ Տէն :

Յետոյ ամէնքը ծուներ գրած՝ Պաշտօնեան գոհութիւն  
կուտայ Աստուծոյ ըսելով :

Ով ամենողորմ շայր, բողբով սրտիւ կը գո-  
հանանք քննէ, որ հաճոյ թուեցաւ քեզի այս մա-  
նուկս քու Սուրբ շողովդ վերստին ծնել տալու,  
որդեգրութեամբ անիկայ իբր քու որդիդ ընդունե-  
լու, ու քու սուրբ եկեղեցիիդ յարելու : Այլ խո-  
նարհեալ կ'աղաչենք, պարգեւէ՛ որ ինքը ինչպէս  
որ հիմայ քու Որդւոյդ մահուանը հաղորդ եղաւ,  
անանկ ալ իր յարութեանը մասնակից ըլլայ : որ  
վերջը բոլոր քու սուրբերուդ հետ մէկ տեղ քու  
յանիափնական արքայութեանդ ժողանդ ըլլայ, քու  
Որդւոյդ մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքովը .  
Ամէն :

Թող բնաւ չի երկբային՝ որ այս կերպով մկրտուած  
տղան օրինաւորապէս ու կատարեալ մկրտուած է, վասն որոյ  
պէտք չէ որ կրկին մկրտուի : Բայց թէ որ այս կերպով  
մկրտուած տղան ետքը ապրելու ըլլայ, պէտք է որ եկեղեցին  
տարուի, ան խորհուրդովը՝ որ եթէ նոյն ժողովրդապետու-  
թեան Պաշտօնեան մկրտած է նէ ան տղան, միաբանութիւնը  
ազատուցունէ առանձին իր բրած մկրտութեանը ճշմարիտ  
արարողութեանը վրայ . նոյն ժամանակը Պաշտօնեան այս  
կերպով պիտի ըսէ :

Այս կ'ապահովացունենմ ձեզ որ այս մանուկս ես  
ինքս մկրտեցի Արքեպեպոս սահմանած օրինաւոր ա-  
րարողութեամբը, այն ինչ ժամանակ և այն ինչ  
տեղը այլ և այլ վկաներու առջին :

Բայց թէ որ մանուկը ուրիշ օրինաւոր Պաշտօնեայէ մը մկրտուած ըլլայ , ան ժամանակը տղին ծնած կամ մկրտուած տեղին Ժողովրդապետը պիտի քննէ ու իմանայ թէ օրինաւորապէս մկրտուած է՝ թէ չէ : Եթէ պատահի որ մանուկը Եկեղեցի տանողները զրուցեն թէ արդէն մկրտուած է , ան ժամանակը Պաշտօնեան եզելօք հարցուփորձ պիտի ընէ՝ ըսելով .

Մյս մանուկը ո՞վ մկրտեց .

Մյս մանուկը մկրտուած ժամանակը ո՞վ կար .

Արովհետեւ ասանկ յետին հարկաւորութեան ժամանակ կրնայ պատահիլ , որ վախով կամ խիստ արտորնօք այս Խորհուրդիս էական մասունքներուն վերաբերեալ պակասութիւն մը ըլլայ , անոր համար կրկին կը հարցունեմ ձեզի ,

Մյս մանուկս ինչո՞վ մկրտուեցաւ .

Մյս մանուկս ի՞նչ խօսքերով մկրտուեցաւ :

Թէ որ Պաշտօնեան մանուկը բերողներուն պատասխաններէն իմանայ , որ ամէն բան ըստ պատշաճի կատարուած է . ան ժամանակը կրկին չի մկրտեր , հապա անիկայ իբր ճշմարիտ քրիստոնէից հօտին մէկը կ'ընդունի՝ ըսելով .

Մյս վկայութեամբ կը զրուցեմ ձեզի , որ այս մանուկիս մկրտութեանը վերաբերեալ ամէն բան աղէկ և ինչպէս որ պէտք է նէ ուղիղ կարգով եղած է . այս մանուկս որ սկզբնական մեղքով և Մատուծոյ բարկութեամբը ծնած էր , մկրտութեամբ՝ վերածնութեան լուացմամբը հիմայ Մատուծոյ որդիքներուն և յաւիտենական կենաց ժառանգներուն դասը

կ'ընդունուի . վասն զի մեր Տէրը Հիսուս Վրիստոս  
իր շնորհքը ու ողորմութիւնը չի զոկեր ասանկ տը-  
ղաքներէն , հասպա սիրով անոնք իրեն կը կանչէ .  
ինչպէս որ սուրբ աւետարանը մեր մխիթարութեա-  
նը համար այս կերպով կը վկայէ :

Ս . Աւետարան . Մարի . Ժ . 15 .

Եւ մանր տղաքներ բերին քրիստոսի , որ անոնց  
վրայ ձեռք դնէ . բայց աշակերտները կը յանդիմա-  
նէին բերողները : Հիսուս երբոր տեսաւ՝ բարկա-  
նալով չեխեց անոնք՝ և ըսաւ . թող տուէք ատ մանր  
տղոցը որ ինձի գան , ու անոնց արգելք մի ըլլաք .  
ինչու որ ատանկներուն է աստուծոյ թագաւորու-  
թիւնը : Ղ'չմարիտ կ'ըսեմ ձեզի . ո՛վ որ աստուծոյ  
թագաւորութիւնը պզտի տղի մը պէս չընդունիր ,  
ան հոն չի պիտի մտնայ : Եւ անոնք գիրկը առաւ ,  
ձեռքը անոնց վրայ դրաւ , և օրհնեց անոնք :

Աւետարանը կարդացուելէն ետքը : Պաշտօնեան Աւետա-  
րանի խօսքերուն վրայ այս համառօտ Յորդորակը կ'ըսէ .

Միրելիներ՝ դուք աս աւետարանի մէջի մեր Վրկիչ  
Հիսուս Վրիստոսի խօսքերը լսեցիք , որ ինքը հը-  
րաման ըրաւ ան տղաքները իրեն բերուելու . ինչ-  
պէս յանդիմանեց անոնք՝ որ անոնց երթալը կ'ար-  
գիլէին . ինչպէս կը յորդորէր ամէնքը՝ որ անոնց  
անմեղութեանը հետեւին : Վուրք աղէկ կը տեսնաք  
թէ ինչպէս իր արտաքին շարժմունքովը ու գործքովը

իր աննոյ վրայ ունեցած բարի կամքը յայտնեց, ինչու որ անոնք գիրկը առաւ, ձեռքը անոնց վրայ գրբաւ, ու օրհնեց անոնք: Աստի՛ մի երկրայիք, հապա հաստատարար հաւատացէք, որ ինքը նոյնպէս սիրով ընդունեց այս ներկայ գտնուող երեխան, որ ինքը իր ողորմութեան բաղուկներովը գրկեց անիկայ, և (ինչպէս որ իր սուրբ պատգամովը խօսք տուած է) յաւիտենական կենաց օրհնութիւնը պիտի շնորհէ անոր, և իր անվախճան թագաւորութեանը հաղորդ պիտի ընէ անիկայ: Այսն որոյ մեր երկնաւոր Հօրը այս տղիս վրայ ունեցած սէրը ճանչնալով, որ Յիսուս Վրիստոս իր Արդւոյն ձեռքովը ցըցուց, հաւատարմութեամբ անոր գոհութիւն մատուցանենք ու ջերմեռանդութեամբ ան Մղծքը ըսենք, որ Տէրը ինքը մեզի սորվեցուց:

Վ՛ի մեր Հօրը՝ որ երկինքն էս, քու անունդ սուրբ ըլլայ, Վ՛ու թագաւորութիւնդ գայ, Վ՛ու կամքդ ըլլայ, ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ: Սեր ամէն աւուր հացը այսօր տուր մեզի, Ալ ներէ մեզի մեր պարտքերը, ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն, Ալ մեզ փորձութեան մի տանիր, հապա չարէն ազատէ մեզ, Մ՛իկն:

Մենակարող և յաւիտենական Մատուած՝ երկնաւոր Հօր, մենք խոնարհ սրտով գոհութիւն կը մատուցանենք քեզի, որ հաճեցար մեզ քու շնորհք-

իդ գիտութեանը և քու վրագ հաւատք ունենալու  
 կանչելու . Ը՛ծեցնուր այս գիտութիւնը , և միշտ հաս-  
 տատ պահէ այս հաւատքը մեր մէջը : Պարգեւէ այս  
 երեսայիս քու Սուրբ շնորհ , որ ինքը վերստին ծը-  
 նած ու յաւիտենական կենաց ժառանգ եղած , կա-  
 րող ըլլայ : 3) Իսուս Վրիստոսի շնորհքովը շարու-  
 նակ քեզի ծառայելու , և քու խոստմանդ ժամանե-  
 լու , քու Որդւոյդ մեր Տէր 3) Իսուս Վրիստոսի շը-  
 նորհքովը , որ կենդանի է ու կը թագաւորէ քեզի՝ և  
 Սուրբ շնորհն հետ , հիմայ ու յաւիտեան . Ը՛Քէ :

Յետոյ Քահանան տղին անունը կը հարցունէ . Կնքա-  
 հայրները ու Կնքամայրները անոր անունը զրուցելէն ետեւ՝  
 Պաշտօնեան կ'ըսէ .

Կը հրաժարի՞ս դուն այս երեսայիս տեղը սա-  
 տանայէն ու բոլոր անոր խաբէութիւններէն , աշ-  
 խարհի ունայն շքեղութենէն ու փառքէն , բոլոր ա-  
 նոր անյագ ցանկութիւններովը , ու մարմնոյն հեշ-  
 տութիւններովը , անանկ որ անոնց չի հետեւիս , ու  
 ոչ ալ անոնցմով յաիշտակուիս :

Պատասխանի . Ես բոլորէն կը հրաժարիմ :

Պաշտօնեան . Կը հաւատաս՞ դուն երկնի ու երկրի  
 Ստեղծող Ը՛մենակարող շօր Ը՛ստուծոյ .

Եւ մեր Տէր 3) Իսուս Վրիստոսի՝ իր միածին  
 Որդւոյն , որ Սուրբ շնորհով յղացաւ . Սարիամ  
 կուսէն ծնաւ , պոնտացի Պիղատոսի դատաւորու-  
 թեան ժամանակը չարչարուեցաւ , խաչուեցաւ , մե-  
 աւ ու թաղուեցաւ . դժոխքը իջաւ , ու երրորդ օ-

բը նորէն յարութիւն առաւ . և րհինքը ելաւ , ու Մ-  
մենակարող Հօր Մտուծոյ աջ կողմը նստաւ . և  
անկէ նորէն պիտի գայ աշխարհիս վերջին կենդա-  
նինները ու մեռելները դատելու :

Եւ կը հաւատածս դուն Սուրբ Հոգիին , ընդ-  
հանրական սուրբ Եկեղեցւոյն , Սուրբերուն հա-  
ղորդութեանը , մեղաց թողութեանը , մարմինին  
յարութեանը , և մեռնելէն ետեւ յաւիտենական  
կեանքին :

Պատ . Ես սոս ամէնուն հաստատութեամբ կը  
հաւատամ :

Պաշ . Ուրեմն Մտուծոյ սուրբ կաթը և իր  
պատուիրանքները հնազանդութեամբ պիտի պա-  
հե՞ս , ու մինչեւ քու կեանքիդ վերջը անոնց մէջ  
պիտի քալե՞ս :

Պատ . Ե՛ս , պիտի պահեմ ու քալեմ :

Յետոյ Քահանան կ'ըսէ .

Սննք այս մանուկը Վրիստոսի Հօտին միու-  
թեանը մէջ կ'ընդունինք , և ան Խաչին ( հոս Քա-  
հանան տղին ճակատը խաչ մը պիտի շինէ ) նշանովը կը  
կնքենք , որ չամբնայ ասկէ ետեւ խաչուած Վրիս-  
տոսի հաւատքը խոստովանելու , և անոր դրօշակին  
տակը մեղքին , աշխարհին ու սատանային դէմ քա-  
ջութեամբ պատերազմելու . և մինչեւ իր կեանքին  
վերջը հաւատարիմ զինուոր մը ու Վրիստոսի ծա-  
ռայ մը ըլլալու . Ե՛մն :

Ետքը Քահանան կ'ըսէ .

Տեսնալով Հիմայ սիրելի եղբայրներ՝ որ այս մանուկս վերստին ծնած՝ Վրիստոսի Ազկեղեցիին մարմնոյն յարեցաւ, գոհութիւն մատուցանենք աւ մենակարող Աստուծոյ այս բարերարութիւններուն համար. և ամէնքս մէկ տեղ աղօթք ընենք որ այս մանուկը բոլոր իր կեանքը աս սկզբնաւորութեանը համեմատ անցունէ :

Յետոյ Քահանան կ'ըսէ .

Այլ ամենողորմ շայր, բոլորով սրտիւ կը գոհանանք քննէ, որ հաճոյ թուեցաւ քեզի այս մանուկս քու Սուրբ Ազգւովդ վերստին ծնել տալու, որդեգրութեամբ անիկայ իբր քու որդիդ ընդունելու, ու քու սուրբ եկեղեցւոյդ միութեանը խառնելու : Այլ խոնարհեալ կ'աղաչենք, պարգեւէ՛ որ ինքը մեղքին մեռած ու արդարութեան կենդանի և Վրիստոսի հետ իր մահուամբը թաղուած ըլլալով, կարող ըլլայ ան հին մարդը խաչելու, ու բոլորովին մեղաց մարմինը ջնջելու. և որ՝ ինչպէս որ ինքը քու Արգուոյդ մահուանը հազորդ եղաւ, անս'նկ ալ իր յարութեանը մասնակից ըլլայ. որ վերջը բոլոր քու սուրբ եկեղեցիիդ հետ մէկ տեղ քու յաւիտենական արքայութեանդ ժառանգ ըլլայ, մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովը. Ամէն :


Ետքը ամէնոր կանգնած՝ Քահանան Կնքահայրներուն ու  
Կնքամայրներուն այս Յորդորակը կը կարգայ .

Արչափ որ այս մանուկս ձեր միջնորդութեամբը  
խօսք տուած է՝ որ իր երանջխաւորներն էք , սատա-  
նայէն ու բոլոր անոր խաբէութիւններէն հրաժա-  
րելու , Աստուծոյ հաւատալու և անոր ծառայելու ,  
պարտիք յիշել որ ձեզի կը վերաբերի , և ձեր  
պարտքն է նայիլ որ այս մանուկս գիտնայ երբոր  
ուսման ընդունակ ըլլայ , թէ ինչ երեւելի ուխտ  
մը , խոստում մը ու դաւանութիւն մը ըրած է ինքը  
հոս ձեր միջնորդութեամբը : Այլ ինքը աս բաները  
աղէկ գիտնալու համար պէտք է որ քարոզ լսելու  
հրաւիրէք , և մասնաւորապէս հոգ տանիք որ Հա-  
ւատամքը , Տէրունական Աղօթքը և Տասնաբանեայ  
Պատուիրանքները գործածական լեզուով սորուի ,  
և բոլոր ան բաները՝ որ քրիստոնեայի մը հոգւոյն  
փրկութեանը համար հարկաւոր է գիտնալ ու հա-  
ւատալ , և որ այս մանուկս առաքինաբար մեծնայ ,  
ու բարեպաշտ և քրիստոնէական վարքով մը ապրի ,  
ամէն ատեն միտքը բերելով թէ՛ մկրտութիւնը մեր  
դաւանութիւնը մեզի կը ներկայացունէ , որ է՝ մեր  
Փրկիչ Վրիստոսի օրինակին հետեւիլ և անոր նը-  
մանիլ . որ ինչպէս որ ինքը մեզի համար մեռաւ ու  
յարութիւն առաւ , անս'նկ ալ մենք որ մկրտուե-  
ցանք՝ մեզքին մեռած ըլլանք , ու յարութիւն առ-  
նենք արդարութեան . մեռցունելով միշտ բոլոր մեր  
չար ու ապականեալ յօժարութիւնները , և օր ըստ

որէ ամէն տեսակ առարկինու թիւնով ու սուրբ վարք-  
ով զարգանանք :

Բայց թէ որ տղան եկեղեցի տանտէները Քահանային  
հարցմանը անանկ անատոյգ սրտատախան տան , որ Հօր , և  
Որդւոյ , և Սուրբ Հոգւոյն անունովը աղին ջուրով մկրտուիլը  
յայտնի չիմացուի , ( որոնք Մկրտութեան էական մասունքներն  
են ) , ան ժամանակը նախակարգեալ ազայոց հանդիսական  
Մկրտութեան կերպովը Քահանան պէտք է որ անիկայ մկրտէ ,  
միայն այս տարբերութեամբ որ մանուկը մկրտութեան ա-  
ւազանը խօթած ժամանակը , այս խօսքերը պիտի ըսէ ,

Ո՛հ որ դուն արդէն մկրտուած չես . Ա՛ս  
կը մկրտեմ բեզ Հօր , և Որդւոյ , և Սուրբ Հոգւոյն  
անունովը . Ա՛մէն :



# ՊԼՄՆԱՊԵՆ

## ՉԸՓԸ ՀԸՄՆԵՐՈՒՆ

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԵԱՆԸ

ՈՐ ԻՆՔԻՐԵՆՈՒՆ ԿՐՆԱՆ ԳՅՏԱՍԻԱՆԵԼ

Երբոր չափահաս մարդիկ մկրտուելու ըլլան, անոնց ծնողքները կամ ուրիշ խոհական անձինք գոնէ շարաթ մը առաջ պարտին Եպիսկոպոսին ծանուցանել, կամ անոր՝ որ նոյն գործքին համար Եպիսկոպոսը ընտրած է. որպէս զի պարտուպատշաճ հոգաբարձութեամբ Քրիստոնէական կը բծնքին վերաբերեալ հարկաւոր սորուելիքներուն բաւական հմտութիւն ունենալը քննուի. և որ յորդորուին ինքզինքնին պատրաստելու ազօթքով ու ծոմապահութեամբ այս սուրբ խորհուրդը ընդունելու:

Եւ թէ որ ընդունակ սեպուելու ըլլան, ան ժամանակը կնքահայրները ու կնքամայրները (որոշուած կիրակի կամ Տօնի օրը, ժողովուրդին հաւքուած ժամանակը) պատրաստ ըլլան մկրտութեան աւազանին առջին բերելու անիկայ, ան միջապէս Աւտուան կամ Իրիկուան Ազօթքին երկրորդ Ընթերցուածքէն ետեւ, ինչպէս որ Ժողովրդապետը իր խոհականութեամբը յարմօր կը դատէ:

Մկրտուելու անձինքները հոն կանգնած, Քահանան կը հարցունէ թէ՛ իրեն բերուած անձինքները մկրտուած են, թէ չէ. թէ որ չէ պատասխանուի, ան ժամանակը Քահանան այս կերպով կ'ըսէ.

Մերելիներ՝ որովհետեւ բոլոր մարդիկ մեղքով կը յղանան ու կը ծնանին, (և ան որ մարմինէ ծնած է,

մարմին է), և անոնք որ մարմինով են կարող շնչ  
 Լստուծոյ հաճոյ ըլլալու, հասցա մեղքի մէջ կ'ապ-  
 րին, անհամար գործնական օրինազանցութիւններ  
 ընելով, և որովհետեւ մեր վրկիչք Վրիստոս կ'ը-  
 սէ, մէկը չի կրնար Լստուծոյ արքայութիւնը մտնալ  
 մինչև որ նորածնեալ՝ ջուրով ու Սուրբ Հոգւով  
 վերստին չի ծնանի. Կ'աղաչեմ ձեզի որ Հօր Լս-  
 տուծոյ օգնութիւնը խնդրէք մեր Տէր Հիսուս Վր-  
 թիստոսի շնորհքովք, որ իւր անբաւ ողորմութեամբը  
 այս մարդոցը ան բանը շնորհէ, որ բնական զօրու-  
 թիւնով կարող չեն ձեռք ձգելու, որ ջուրով ու  
 Սուրբ Հոգւով մկրտուին, և Վրիստոսի սուրբ Լ-  
 կեղեցիին մէջ ընդունուին, ու անոր կենդանի ան-  
 դամներ ըլլան ։

Յետոյ քահանան կ'ըսէ .

Եզոթենք .

( Հոս բոլոր Միաբանութիւնը ծունկի վրայ պիտի գայ . )

Լմենակարող և յաւիտենական Լստուած, որ  
 քու անբաւ ողորմութեամբդ՝ Առնահապետը բոլոր իք  
 ընտանիքովք տապանակին մէջ ազատեցիր ջուրով  
 կորուելէն, ու նաև իսրայէլի որդիքներուն քու ժո-  
 ղովուրդիդ ապահով առաջնորդեցիր կարմիր ծո-  
 վուն մէջ, անով քու սուրբ Մկրտութիւնդ ցըցու-  
 նելով, և Հիսուս Վրիստոս քու սիրելի Արդւոյդ  
 Յորդանան գետը մկրտուելովք ջուրը սրբացուցիւ,

որ մեզաց խորհրդաւոր լուացում մը ըլլայ . Ա՛աղա-  
 շենք քու անբաւ ողորմութեանդ համար՝ որ գծու-  
 թեա՛ր այս քու ծառաներուդ վրայ նայիս . լուաս  
 անոնք ու սրբես Սուրբ Էօզուով . որ անոնք քու  
 բարկութենէդ ազատած Վրիստոսի Արկեղեցիին  
 տապանակին մէջ ընդունուին . և հաւատքով հաս-  
 տատ , յոյսով զուարթ ու սիրով արմատ կապած՝  
 կարող ըլլան այս ախտալից աշխարհիս ալիքները ա-  
 նանկ անցունելու , որ վերջը անվախճան կենաց եր-  
 կիրը հասնին , հոն քեզի հետ թագաւորելու յաւի-  
 տեանս յաւիտենից , մեր Տէր Յիսուս Վրիստոսի  
 շնորհքովը . Ա՛մէն :

Ա՛մենակարող Աստուած անմահութեան , ամէն  
 կարօտեալներուն թիկունքը , ամէն օգնութեան հա-  
 մար քեզի դիմողներուն օգնականը , հաւատա-  
 ցեալներուն կեանքը և ննջեցելոց յարութիւնը .  
 Ա՛աղաշենք այս մարդոցը համար , որ քու սուրբ  
 Ակրտութեանդ գալով իրենց մեղացը թողութիւն  
 ընդունին հոգեւոր վերածնութեամբ : Ա՛նդունէ ա-  
 նոնք ո՛վ Տէր , ինչպէս որ քու սիրելի Արդարաց ձեռ-  
 քովը խօսք տուած ես՝ ըսելով . խնդրեցէք ու ձեզի  
 պիտի տրուի , փնտռեցէք ու պիտի գտնաք , չալեցէք  
 ու ձեզի պիտի բացուի . Ա՛յնպէս պարգեւէ հիմց  
 մեզի՝ որ կը խնդրենք . գտնանք՝ ինչ որ կը փնտը-  
 ւենք . բաց մեզի դուռը՝ որ կը չալենք . որպէս զի այս  
 մարդիկը քու երկնային լուացմանդ անվախճան օրհ-

նութիւնը վայելեն , և քու յաւիտենական արքայութեանդ ժամանեն , որ խոստացար մեր Տէր Յիսուս Վրիստոսի միջնորդութեամբը . Ա՛ռն :

Յետոյ ժողովուրդը ոտքի վրայ կ'ելէ , և Քահանան կ'ըսէ .

Ասեցէք Ս . Հօհաննէս Աւետարանչին խօսքերը , երրորդ գլխոյն առաջին համարէն սկսելով .

Վարիսեցիներէն մէկ մարդ մը կար՝ նիկողեմոս անունով , հրէից մէկ իշխանը : Ասիկայ գիշերանց իրեն քովը եկաւ՝ և ըսաւ անոր . ոտքի՛ գիտենք որ դուն աստուծո՛ւմէ վարդապետ եկած ես . ինչու որ մէկը կարող չէ ատ հրաշքները ընել՝ որ դուն կ'ընես , թէ որ աստուած անոր հետ չըլլայ : Պատասխան տուաւ յիսուս՝ և ըսաւ անոր . Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ՝ քեզի . թէ որ մէկը նորէն չի ծնանի , աստուծոյ արքայութիւնը չի կրնար տեսնալ : Վիկողեմոս ըսաւ անոր . ի՞նչպէս մարդ մը կրնայ ծնանիլ , որ ինքը ծեր է . կարելի բան է որ նորէն իր մօրը փորը մտնայ ու ծնանի : Պատասխան տուաւ յիսուս և ըսաւ . Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ՝ քեզի . թէ որ մարդ մը ջուրէն ու հոգիէն չի ծնանի , չի կրնար աստուծոյ արքայութիւնը մտնալ : Ա՛յսն զի մարմինէն ծնածը մարմին է , ու հոգիէն ծնածը հոգի է : Ղուն մի զարմանար որ քեզի ըսի . պէտք է ձեզի նորէն ծնանիլ : Ինչու որ հովը ուր որ ուզէ կը փչէ , և անոր ձայնը կը լսես . բայց չես գիտեր թէ ան ուսկի՞ց

կուգայ, կամ ո՛ւր կ'երթայ, ասանկ ալ հոգիէն լու-  
րոր ծնածները :

Ասկէ ետեւ այս հետեւեալ Յորդորակը կը կարգայ .

Սիրելիներ՝ այս աւետարանիս մէջի մեր Փրկիչ  
Յիսուս Քրիստոսի բացարձակ խօսքը լսեցիք, թէ  
ո՞վ որ Յուրէն ու Հոգիէն չի ծնանի, չի կրնար Մու-  
տուծոյ արքայութիւնը մտնալ : Մալա ուրեմն կրնաք  
տեսնալ այս Խորհուրդիս մեծ հարկաւորութիւնը,  
որ ժամանակ որ կարելի ըլլայ ընդունելու : Կա՛ն ան-  
միջապէս երկինքը համբառնալէն առաջ (ինչպէս  
որ կը կարգանք Ս) . Սարկոս Մշտարանչի վերջին  
գլխուն մէջ ) իր աշակերտներուն պատուիրեց ըսե-  
լով . գացէք բոլոր աշխարհ, ու քարոզեցէք աւետա-  
րանը ամէն արարածներուն : Ս՛վ որ կը հաւատայ  
ու կը մկրտուի՝ պիտի փրկուի . և ո՞վ որ չի հաւատար՝  
պիտի դատապարտուի : Արն որ մեր անկէ ընդունած  
ան մեծ բարութիւնը կը յայտնէ մեզի : Այս պատ-  
ճառաւ Պետրոս առաքեալ երբ որ առաջին անգամ  
Մշտարանը քարոզած ժամանակը շատերուն սիր-  
տը ելաւ, և թէ իրեն և թէ միւս առաքեալներուն  
ըսին՝ մարդիկ ու եղբայրներ ի՞նչ ընենք, ինքը պա-  
տասխան տուաւ և ըսաւ անոնց . ապաշխարեցէք ու  
ամէն մէկերնիդ մկրտուեցէք մեղաց թողութեան  
համար, և Սուրբ Հոգւոյն պարգեւը կ'ընդունիք :  
Ս ասն զի խոստմունքը ձեզի և ձեր որդիքներուն է,  
և բոլոր ան հետու եղողներուն, որչափ որ մեր Տէր

Մատուածը պիտի կանչէ : Այլ ուրիշ շատ խօսքերով  
կը յորդորէր անոնք ըսելով . զգուշացէ՛ք այս մո-  
լորած ազգէն : Ասան զի (ինչպէս որ նոյն առա-  
քեայը ուրիշ տեղ մ'ալ կը վկայէ) մկրտութիւնը  
անգամ հիմայ մեզ կը փրկէ (չէ թէ մարմնոյ աղտո-  
ղութիւնը մաքրելով, հապա Մատուծոյ առջին բարի  
խղճմտանքի մը վկայութիւնը) : Հիսուս Վրիստոսի  
յարութեամբը : Ուստի մի երկբայիք, հապա հաս-  
տատ հաւատացէ՛ք որ ինքը սիրով պիտի ընդունի  
այս ներկայ անձինքները, թէ որ ճշմարտապէս զըղ-  
ջան ու հաւատքով իրեն մօտենան . որ ինքը անոնց  
մեզքին թողութիւն պիտի տայ, Հոգւոյն Սրբոյ  
պարգեւը անոնց պիտի շնորհէ, յաւիտենական կե-  
նաց երջանկութեանը արժանաւոր և իր անվասխճան  
թագաւորութեանը հաղորդ պիտի ընէ : Ուստի մեր  
երկնաւոր Հօրը այս անձինքներուն վրայ ունեցած  
սէրը ճանչնալով, որ Հիսուս Վրիստոս իր Որդւոյն  
ձեռքովը ցրցուց, հաւատարմութեամբ ու ջերմե-  
ռանգ սրտով շնորհակալութիւն մատուցանենք ը-  
սելով,

Մենակարօղ և յաւիտենական Մատուած՝ երկ-  
նաւոր Հայր, մենք խոնարհ սրտով գոհութիւն կը  
մատուցանենք քեզի, որ հաճեցար մեզ քու շնորհք-  
իդ գիտութեանը և քու վրադ հաւատք ունենալու  
կանչելու . Մճեցօ՛ւր այս գիտութիւնը, և միշտ հաս-  
տատ պահէ՛ այս հաւատքը մեր մէջը : Պարգեւէ՛ այս

անձինքներուն քու Սուրբ Հոգիդ՝ որ վերստին ծընանին , ու յաւիտենական փրկութեան ժառանգըլլան , մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը , որ կենդանի է ու կը թագաւորէ քեզի՝ և Սուրբ Հոգւոյն հետ , հիմայ ու յաւիտեան . Ամէն :

Յետոյ Քահանան մկրտուելու անձինքներուն այս կերպով կ'ըսէ .

Միրելիներ՝ որ սուրբ Սկրտութիւնը ընդունելու համար փափարով հոս եկած էք , լսեցիք թէ ինչպէս միաբանութիւնը աղօթք ըրաւ որ մեր Տէրը Հիսուս Վրիստոս բարեհաճի ձեզ ընդունելու ու օրհնելու , ձեր մեղքերէն ձեզ ազատելու , և ձեզի երկնից թագաւորութիւնը ու յաւիտենական կեանքը տալու : Լսեցիք նաև որ մեր Տէրը Հիսուս Վրիստոս իր սուրբ խօսքովը խօսք տուած է ամէն խնդրածնիս մեզի շնորհելու . որ նոյն խոստումը իր կողմանէ հաստատաբար կը պահէ ու կը կատարէ :

Ուստի՝ Վրիստոսով այս խոստմունքը ըլլալէն ետքը , պէտք է որ դուք ալ ձեր կողմանէ հաւատարմութեամբ խօսք տաք ձեր վկաներուն և այս միաբանութեանը առջին , որ դուք կը հրաժարիք սատանայէն ու ամէն անոր խարէութիւններէն , և հաստատութեամբ կը հաւատար Աստուծոյ սուրբ խօսքերուն , և հնազանդութեամբ կը պահէք իր պատուիրանքները :

Յետոյ Քահանան մկրտուելու անձինքներուն ամէն մէկին առանձին կը հարցունէ այս հետագայ խնդիրները .

**Խնդիր .** Կը հրաժարի՞ս դուն սատանայէն ու բոլոր անոր խաբէութիւններէն , աշխարհի ունայն շքեղութենէն ու փառքէն , ամէն անոր անյագ ցանկութիւններովը , ու մարմնոյն հեշտութիւններովը . անանկ որ անոնց չի հետեւիս , ու ոչ ալ անոնցմով յաիշտակուիս :

**Պատասխանի .** Ես բոլորէն կը հրաժարիմ :

**Խնդ .** Կը հաւատամ՞ս դուն երկնի ու երկրի Ստեղծող Լ'մենակարող Հօր Լ'ստուծոյ .

Եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի՞ իր միածին Որդւոյն . որ Սուրբ Հոգւով յղացաւ . Մարիամ Կուսէն ծնաւ , պոնտացի Պիղատոսի դատաւորութեան ժամանակը չարչարուեցաւ , խաչուեցաւ , մեռաւ ու թաղուեցաւ . դժոխքը իջաւ , ու երրորդ օրը նորէն յարութիւն առաւ . երկինքը ելաւ , ու Լ'մենակարող Հօր Լ'ստուծոյ աջ կողմը նստաւ . և անկէ նորէն պիտի գայ աշխարհիս վերջին կենդանիները ու մեռելները դատելու :

Եւ կը հաւատամ՞ս դուն Սուրբ Հոգիին , ընդհանրական սուրբ Եկեղեցւոյն , Սուրբերուն հաղորդութեանը , մեղաց թողութեանը , մարմինին յարութեանը , և մեռնելէն ետեւ յաւիտենական կեանքին :

**Պատ .** Ես սոս ամէնուն հաստատութեամբ կը հաւատամ :

Ի՞նչ . Կուզե՞ս դուն այս հաւատքովը մկրտուիլ .

Պատ . Ըն է իմ փափաքս :

Ի՞նչ . Ուրեմն՝ Ըստուծոյ սուրբ կախքը և իր պատուիրանքները հնազանդութեամբ պիտի պահե՞ս , ու մինչև քու կեանքիդ վերջը անոնց մէջ պիտի քալե՞ս .

Պատ . Ըստուծոյ օգնականութեամբը պիտի ջանամ անանկ ընելու :

Յետոյ Քահանան կ'ըսէ .

Ո՛վ ամենողորմ Ըստուած , շնորհէ որ այս անձինքներուն մէջի հին Ըղարը անանկ թաղուի , որ անոնց մէջ ան նոր մարդը յարութիւն առնէ . Ընն :

Շնորհէ որ բոլոր անոնց մարմնական հեշտութիւնները մեռնին , և հոգիին վերաբերեալ ամէն բան կենդանի մնայ ու աճի . Ընն :

Շնորհէ որ անոնք կարողութիւն ու զօրութիւն ունենան յաղթելու . և սատանան , աշխարհը ու մարմինը նուաճելու . Ընն :

Շնորհէ որ հիմայ հոս մեր սպասաւորութեամբը ու պաշտօնովը քեզի ընծայուածները երկնային առաքինութիւններով զարդարուին , ու յաւիտեան վարձատրուին քու ողորմութեամբդ ո՛վ Տէր ամէնօրհնեալ Ըստուած , որ կենդանի ես և ամէնուն ինամակալը , միշտ և յաւիտեան . Ընն :

Լ՝ մենակարող և յաւխտենական Լ՝ ստուած , որ  
 Հիսուս Վրբիստոս քու սիրելի Որդիդ մեր մեղացը  
 քառութեանը համար իր անգին կողէն ջուր ու ա-  
 թիւն թափեց , և իր աշակերտներուն հրաման ըրաւ  
 որ երթան ու բոլոր ազգերը սորվեցընեն , ու շօր ,  
 և Որդւոյ , և Սուրբ շոգւոյն անունովը անոնք մկրը-  
 տեն . լսէ՛ կ'աղաչենք քու միաբանութեանդ աղեր-  
 սանացը . սրբէ այս ջուրը որ մեղաց խորհրդաւոր  
 լուացարան մը ըլլայ . և շնորհէ որ հիմայ անով մը-  
 կրտուելու անձինքները քու շնորհքիդ լիութիւնը  
 ընդունին , և միշտ քու հաւատացեալ ու ընտիր որ-  
 դիքներուդ թուոյն մէջ գտնուին , մեր Տէր Հիսուս  
 Վրբիստոսի շնորհքովը . Լ՝ Տէն :

Յետոյ Բահանան մկրտուելու անձինքներուն ամէն  
 մէկին ալ ձեռքէն բռնելով , և իր ընտրողութեամբը յար-  
 մարագէս աւաղանին քովը կայնեցունելով , անունը պիտի  
 հարցունէ Կնքահայրներուն ու Կնքամայրներուն . ու ետքը  
 ջուրը պիտի խօթէ անիկայ , կամ վրան պիտի թափէ ըսելով .

Ե— Ես կը մկրտեմ քեզ շօր , և Որդւոյ , և  
 Սուրբ շոգւոյն անունովը . Լ՝ Տէն :

Յետոյ Բահանան կ'ըսէ .

Սննք այս անձը Վրբիստոսի շօտին միութեանը  
 մէջ կ'ընդունինք , և ան Խաչին ( հոս Բահանան մկր-  
 տուած մարդուն ճակատը խաչ մը պիտի շինէ ) նշանովը կը  
 կնքենք , որ չամբընայ ասկէ ետեւ խաչը ելած Վրբիս-  
 տոսի հաւատքը խոստովանելու , և անոր դրօշակին

տակը մեղքին, աշխարհին ու սատանային դէմ՝ քաջութեամբ պատերազմելու, և մինչեւ իր կեանքին վերջը հաւատարիմ զինուոր մը ու Վրիստոսի ծառայ մը ըլլալու. Ամէն:

Ետքը Քահանան կ'ըսէ.

Տեսնալով հիմոյ սիրելի եղբայրներ՝ որ այս անձինքները վերստին ծնած՝ Վրիստոսի Ակեղեցիին մարմնոյն յարեցան, գոհութիւն մատուցանենք ամենակարող Աստուծոյ այս բարերարութիւններուն համար, և ամէնքս մէկ տեղ աղօթք ընենք որ այս անձինքները բոլոր իրենց կեանքը աս սկզբնաւորութեանը համեմատ անցունեն:

Յետոյ ամէնքը ծնրագրած՝ Տէրունական Աղօթքը կ'ըսուի.

Ո՛վ մեր Հայրը՝ որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ. Վու թագաւորութիւնդ գայ. Վու կամօքդ ըլլայ, ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ, Սեր ամէն աւուր հացը այսօր տուր մեզի. Աւ ներէ մեզի մեր պարտքերը, ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն. Աւ մեզ փորձութեան մի տանիր, հապա չարէն ազատէ մեզ. Ամէն:

Ո՛վ երկնաւոր Հայր, խոնարհ սրտով գոհութիւն կը մատուցանենք քեզի, որ հաճեցար մեզ քու շնորհքիդ գիտութեանը և քու վրադ հաւատք ունենալու կանչելու. Ա՛ճեց՛ուր այս գիտութիւնը, և

միշտ հաստատ պահէ այս հաւատքը մեր մէջը : Պարգևէ՛ք բոլորը Հոգիդ այս անձինքներուն , որ հիմայ վերստին ծնած , ու յաւիտենական փրկութեան ժառանգ եղած՝ կարող ըլլան մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը շարունակ քեզի ծառայելու , և քու խոստմանցդ ժամանելու , քու Որդւոյդ մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը , որ կենդանի է ու կը թագաւորէ քեզի՝ և Սուրբ Հոգւոյն հետ, հիմայ ու յաւիտեան . Ա՛ռն :

Յետոյ ամէնքը ոտքի վրայ կանգնած՝ Քահանան այս հետեւեալ Յորդորակը կ'ըսէ , աւաջ կնքահայրներուն և կնքամայրներուն խօսելով .

Որչափ որ այս անձինքները ձեր առջևը խօսք տուին սատանայէն ու բոլոր անոր խարէութիւններէն հրաժարելու , Աստուծոյ հաւատալու և անոր ծառայելու . պարտիք յիշել որ ձեզի կը վերաբերի , և ձեր պարտքն է անոնց միտքը ձգել թէ ինչ երեւելի ուխտ մը , խոստում մը ու դաւանութիւն մը ըրած են այս միաբանութեանս և մանաւանդ ձեր առջին , որ իրենց ընտիր վկաներն էք : Պարտական էք նաև անոնք խրատել , որ մեծ ջանք ունենան Աստուծոյ սուրբ Խօսքին մէջ անսխալ կրթուելու , որ անանկ մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը ու գիտութեամբը զարգանան , և այս աշխարհիս մէջ զգաստութեամբ , արդարութեամբ ու աստուածապաշտութեամբ ապրին :

Եւ յետոյ նոր մկրտուածներուն կ'ըսէ .

Եւ դուք որ մկրտուելով Վրիստոսը զգեցաք, ձեզի կը վերաբերի ու նաև ձեր պարտքն է ՚՛խոսու Վրիստոսի հաւատքովը որդիք Աստուծոյ և որդիք լուսոյ ըլլալով, որ ձեր բրիստոնէական կոչմանը համեմատ ապրիք, և ինչպէս որ լուսոյ որդիքներուն կը վայլէ, ամէն ատեն միտք բերելով թէ՛ մկրտութիւնը մեր դաւանութիւնը մեզի կը ներկայացունէ, որ է՝ մեր Քրիկիչ Վրիստոսի օրինակին հետեւիլ և անոր նմանիլ. որ ինչպէս որ ինքը մեզի համար մեռաւ ու յարութիւն առաւ, անանկ ալ մենք որ մը կըրտուեցանք՝ մեղքին մեռած ըլլանք, ու յարութիւն առնենք արդարութեան. մեռցունելով միշտ բոլոր մեր չար ու ապականեալ յօժարութիւնները, և օր ըստ օրէ ամէն տեսակ առաքինութիւնով ու սուրբ վարքով զարգանանք :

Այս կերպով մկրտուած անձը որչափ որ կարելի է մկրտութենէն ետեւ շուտով պարօրի Եպիսկոպոսէն դռմուել, որ կարող ըլլայ ամենատարբէ Հաղորդութեան խորհուրդը ընդունելու :

Թէ որ չի մկրտուած անձինքները չափահաս ըլլալէն առաջ մկրտուելու բերուելու ըլլան, որ ինքիբեկնուն բուականութիւն չունին պատասխան տալու, կընայ Տղայոց Հանդիսական մկրտութեան Կանոնը գործածուել, կամ (յետին վրանդի ժամանակ) Առանձին Մկրտութեան Կանոնը՝ միայն (Մանուկ բաւը Տղի կամ Անձի) յիստելով, ինչպէ՞ս որ հարկը կը պահանջէ :

ՎԵՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԼԵՒԵՏՈՅ

ՈՐ Ե ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԸ ՈՐ  
ԱՄԷՆ ՄԵԿ ԱՆՁ ՊԱՐՏԻ ՍՈՐՈՒԼ ԴՐՈՇՄԻ  
ԽՈՐՀՈՒՐԴԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՊԻՍԿՈՍ

ՊՈՍԻՆ ԲԵՐՈՒԵԼԷՆ ԱՌԱՋ

Հարց. Անունդ ի՞նչ է.

Պատ. Ա. — :

Հարց. Այս անունը քեզի ո՞վ դրաւ .

Պատ. Անբաճայրներս ու Անբամայրներս իմ մը-  
կըրտութեանս ժամանակը, որով Վրբիստոսի ան-  
դամ եղայ, Աստուծոյ որդի, և երկնից արքայու-  
թեանը ժառանգ :

Հարց. Ան ժամանակը Անբաճայրներդ ու Ան-  
բամայրներդ քեզի համար ի՞նչ ըրին .

Պատ. Եւ անուամբս իրեք բանի խօսք տուին և  
ուխտ ըրին : Պինտ առաջ՝ որ հրաժարիմ սատանայէն  
ու ըղոր անոր խաբէութիւններէն . այս չար աշխար-  
հիս փառասիրութենէն ու ունայնութենէն . և ըո-  
ւր մարմնոյ մեղանչական ցանկութիւններէն : Արկ-  
րորդ՝ որ հաւատամ Վրբիստոնէական Հաւատոյ ա-  
մէն մասերուն : Արրորդ՝ որ հնազանդիմ Աստուծոյ  
սուրբ կամքին ու պատուիրանքներուն . և մինչեւ  
իմ կեանքիս վերջը անոնց մէջ քալեմ :

Հարց. Պարտականութիւն չունին արդեօք ամէն անբաներուն հաւատալու և անոնք կատարելու, որ անոնք քեզի համար խօսք տուած են .

Պատ. Ե՛ր, արգարեւ ունիմ, և Ե՛ստուծոյ օգնականութեամբը այնպէս կ'ուզեմ ընել : Եւ բոլորով սրտիւ կը գոհանամ մեր երկնաւոր Հօրմէն, որ մեր Վրկիչ Յիսուս Վրիստոսի շնորհքովը իս այս փրկութեան վիճակին կանչեց : Եւ կ'ազաչեմ Ե՛ստուծոյ որ ինծի իր շնորհքը պարգեւէ, որ կարող ըլլամ մինչեւ իմ կեանքիս վերջը նոյն վիճակին մէջ քալելու :

Հարց. Օրուցէ քու Հաւատքիդ Սասունքները .

Պատ. Ես կը հաւատամ երկնի ու երկրի Ստեղծող Ե՛մենակարող Հօր Ե՛ստուծոյ .

Եւ մեր Տէր Յիսուս Վրիստոսի իր միածին Որդւոյն, որ Սուրբ Հոգւով յղացաւ . Սարիամ կուսէն ծնաւ, պոնտացի Պիղատոսի դատաւորութեան ժամանակը չարչարուեցաւ, խաչուեցաւ, մեռաւ ու թաղուեցաւ . դժոխքը իջաւ, ու երրորդ օրը նորէն յարութիւն առաւ . երկինքը ելաւ, ու Ե՛մենակարող Հօր Ե՛ստուծոյ աջ կողմը նստաւ . և անկէ նորէն պիտի գայ աշխարհիս վերջին կենդանիները ու մեռելները դատելու :

Եւ կը հաւատամ Սուրբ Հոգիին, ընդհանրական սուրբ Եկեղեցիին, Սուրբերուն հաղորդութեանը, մեղաց թողութեանը, մարմինին յարու-

Թեանը, և մեռնելէն ետեւ յաւիտենական կեանքին .  
Ա՛հն :

Հարց . Ե՛ս քու հաւատքիդ Սասունքներէն  
գլխաւորաբար ի՞նչ կը սորուիս .

Պատ . Ե՛ս և առաջ կը սորուիմ հաւատալ  
Հօր Աստուծոյ, որ իս ու բոլոր աշխարհը ստեղծեց .

Երկրորդ՝ Աստուծոյ Արդւոյն, որ եկաւ իս ու  
բոլոր մարդկային ազգը փրկելու .

Երրորդ՝ Աստուծոյ Սուրբ Հօգւոյն, որ իս ու  
բոլոր Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը կը սրբէ :

Հարց . Գառն ըսիր որ Անքահայրներդ ու Անքա-  
մայրներդ քեզի համար խօսք տուած են, որ դուն  
Աստուծոյ պատուիրանքները պահես . Ը՛սէ նայիմ  
քանի՞ են .

Պատ . Տասը :

Հարց . Ար՞ո՞ք են .

Պատ . Աստուծոյ են, որ Աստուած պատուիրեց Երկր  
քսաներորդ գլխուն մէջ՝ ըսելով . Ե՛ս եմ քու Տէր  
Աստուածդ՝ որ հանեցի քեզ Եգիպտացւոց երկրէն,  
ծառայութեան տունէն .

Ե . Ինէ՛ ՚ի զատ ուրիշ Աստուած չի պիտի ու-  
նենաս :

Ի . Գառն քեզի փորուած կուռք չի պիտի շի-  
նես, ո՛չ ալ ամէն բաներուն նմանութիւնը ինչ որ  
վերը երկինքը, և ինչ որ վարը երկրի վրայ, և ինչ  
որ գետնին տակը ջուրին մէջն է : Ա՛նոնց երկրպա-  
գութիւն չի պիտի ընես, և անոնք չի պիտի պաշտես .

ինչու որ ես եմ քու Տէր Աստուածդ, Աստուած նախանձոտ, հայրերուն մեղքերը իրենց որդիքներուն կը հատուցանեմ, անոնց մինչեւ իրեք ու չորս ազգին՝ որ զիս կ'ատեն. և կ'ողորմիմ անոնց հազար ազգին՝ որ զիս կը սիրեն, և իմ հրահաններս կը պահեն:

Գ. Քու Տէր Աստուծոյդ անունը սնտոի բաներու վրայ չի պիտի դնես, ինչու որ Տէրը չարդարացընէր անիկայ, որ իր անունը սնտոի բաներու վրայ կը դնէ:

Գ. Օգոյշ կեցիր շաբաթ օրը սուրբ պահելու: Այն օր պիտի գործես, և քու ամէն գործքդ ընես. բայց եօթներորդ օրը քու Տէր Աստուծոյդ շաբաթն է: Ան օրը բնաւ չի պիտի գործես, դուն, և քու մանչ զուակդ, և քու աղջիկ զուակդ. քու ծառայ և քու աղասխինդ, քու անասունդ, և քու դռանդ ներսի դին եղող օտարականը: Այսն զի Տէրը վեց օրուան մէջ երկինքը ու երկիրը, ծովը ու անոնց մէջ գտնուածները ըրաւ. ու եօթներորդ օրը հանգչեցաւ. անոր համար Տէրը եօթներորդ օրը օրհնեց, և սրբեց անիկայ:

Լ. Պատուէ քու հայրդ և քու մայրդ, որ քեզի աղէկ ըլլայ, և քու օրերդ երկար ըլլայ ան երկրին վրայ, որ քու Տէր Աստուածդ քեզի կուտայ:

Օ. Սի սպանաներ:

Ե. Սի շնար:

Բ. Սի գողանար:

Թ. Քու ընկերիդ դէմ սուտ վկայութիւն մի ընես:

Ե. Վառ ընկերիդ տանը մի ցանկար, և քու ընկերիդ կնոջը մի ցանկար. ու ոչ անոր ծառային, ու ոչ անոր ազատինին, ու ոչ անոր եզին, ու ոչ անոր իշուն, և ոչ քու ընկերիդ մէկ ունեցածին:

Հարց. Վառն գլխաւորապէս ի՞նչ կը սորուիս այս պատուիրանքներէն.

Պատ. Երկու բան կը սորուիմ. առաջ Մատուծոյ ունեցած պարտքս, և երկրորդ ընկերներուս:

Հարց. Ո՞րն է Մատուծոյ ունեցած քու պարտքդ.

Պատ. Մատուծոյ ունեցած պարտքս ան է, որ ես անոր հաւատամ, իրմէն վախնամ, և ինքը սիրեմ բոլոր իմ սրտովս, բոլոր իմ մտքովս, բոլոր իմ անձովս, և բոլոր իմ զօրութիւնովս. ինքը պաշտեմ, իմ շնորհակալութիւնս իրեն մատուցանեմ, և բոլորովին իրեն ապաւինիմ, իր օգնութիւնը խնդրեմ, իր սուրբ Մնունը ու Խօսքը պատուեմ, և բոլոր իմ կեանքիս մէջ ճշմարտապէս իրեն ծառայեմ:

Հարց. Ո՞րն է ընկերներուդ ունեցած քու պարտքդ.

Պատ. Ընկերներուս ունեցած պարտքս ան է, որ ես անոնք իմ անձիս պէս սիրեմ, ու ինչպէս որ կ'ուզեմ որ ուրիշները ինծի ընեն, անանկ ալ ես անոնց ընեմ. Հայրս մայրս սիրեմ, պատուեմ և անոնց ձեռնառու ըլլամ. Թագաւորին հնազանդիմ, և անոր իշխանութեանը տակը եզոզներուն բոլորը պատուեմ, Բոլոր իմ մեծերուս, դաստիարակներուս, հոգեւոր հովիւներուս ու վարժապետներուս

հնազանդիմ . Ինէ վեր եղող երեւելի անձերուն հետ խոնարհութիւնով ու պատուով վարուիմ . Սէկը խօսքով ու գործքով չի վշտացունեմ ու վնասեմ . Ինչոր իմ գործքերուս մէջ անկեղծ ու արդար ըլլամ . Սրտիս մէջ չարութիւն ու ատելութիւն չունենամ . Չեմ վրենբս գողութենէ ետ պահեմ , և իմ լեզուս չարախօսութենէ , ստութենէ և զրպարտութենէ զսպեմ . Մարմինս ժուժկալութիւնով , ու զգաստութիւնով պահպանեմ . Ուրիշներուն ունեցածին չի ցանկամ , հապա սորուիմ ու ջանք ընեմ իմ արդար վաստակս շահելու , և ան վիճակին մէջ իմ պարտքս կատարելու , որուն որ Աստուծոյ հաճելի պիտի երեւնայ զիս կանչելու :

Հարց . Իմ սիրելի զաւակս , գիտցիր որ դուն ինքնին ասոնք կատարելու կարող չես , ոչ Աստուծոյ պատուիրանքները պահելու , և ոչ ալ իրեն ծառայելու , առանց իր մասնաւոր շնորհքին . որ նոյն շնորհքը պէտք է որ անդադար աղօթքով խնդրես . Ուստի թէ որ Տէրունական Աղօթքը գիտես՝ ըսէ որ լսեմ .

Պատ . Ո՛վ մեր Հայրը՝ որ երկինքն ես , քու անունդ սուրբ ըլլայ . Ի՛նչ որ թագաւորութիւնդ գայ , Ի՛նչ որ կամքդ ըլլայ , ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ . Մեր ամէն աւուր հացը այսօր տուր մեզի . Եւ ներէ մեզի մեր պարտքերը , ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն . Եւ մեզ փորձութեան մի տանիր , հապա չարէն ազատէ մեզ . Եւ՛ն :

Հարց. Ե՞ս լսոթքովը ի՞նչ կը խնդրե՞ս Եստուծմէ .

Պատ. Ես կը խնդրեմ որ իմ Տէր Եստուծս՝ մեր երկնաւոր Հայրը որ ամէն բարութեան պարգեւատուն է, իր շնորհքը խրկէ ինձի ու միանգամայն բոլոր մարդոց, որ կարող ըլլանք զինքը պաշտելու, իրեն ծառայելու և հնազանդելու, ինչպէս որ մեր պարտքն է : Ա՛նղաչեմ հս Եստուծոյ, որ մեր հոգիներուն և մարմիններուն հարկաւոր եղածները մեզի պարգեւէ, և ինքը ողորմի մեզի և մեր մեղացը թողութիւն շնորհէ . և որ հոգեւոր ու մարմնաւոր փորձութիւններէ փրկէ ու պահպանէ մեզ . ամէն չարագործութիւններէ և անօրէնութիւններէ, մեր հոգեւոր թշնամիներէն ու յաւիտենական մահուանէ ազատէ մեզ : Եւ կը յուսամ որ իր ողորմութիւնովը ու գթութիւնովը այս իմ խնդրուածքս պիտի կատարէ, մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը : Ուստի կ'ըսեմ, Եմէն . Աղիցի և եղիցի :

Հարց. Վրիստոս քանի՞ Խորհուրդ հաստատեց իր Ակեղեցիին մէջ .

Պատ. Միայն երկու, առ հասարակ ամէնուն փրկութեանը հարկաւոր եղածը . այսինքն՝ Սկըրտութիւն և Լնթրիք Տեստն, որ է ամենասուրբ Հաղորդութիւնը :

Հարց. Խորհուրդ ըսելով ի՞նչ կ'իմանաս .

Պատ. Ես կ'իմանամ մեզի տրուած ներքին և հոգեւոր շնորհքի մը արտաքին և տեսանելի մէկ նը-

շանը՝ Վրիստոսով հաստատուած . իբր մէկ միջոց մը որով զինքը կ'ընդունինք , և անոր վրայ մեզ ապահով կեցունելու համար իբր մէկ գրաւ մը :

Հարց . Խորհուրդի մը մէջ քանի՞ մասունք կը գտնուի .

Պատ . Լքրկու . գրսըվանց երեւցած նշանը , և ներքին հոգեւոր շնորհքը :

Հարց . Ո՞րն է Սկրտութեան գրսըվանց երեւցած նշանը .

Պատ . Չուրն է . որով անձը կը մկրտուի , Հօր , և Որդւոյ , և Սուրբ Հոգւոյն Մնունովը :

Հարց . Ո՞րն է ներքին և հոգեւոր շնորհքը .

Պատ . Սեղաց մեռնիլը և արդարութեան վերածնիլը . վասն զի բնութեամբ մեղքով ծնելով և բարկութեան որդիքներ ըլլալով , ասոր միջնորդութեամբը որդիք շնորհաց կ'ըլլանք :

Հարց . Սկրտուելու անձինքներէն ի՞նչ կը պահանջուի .

Պատ . Օղջում՝ որով մեղքը կը թողուն . և հաւատք՝ որով հաստատ կը հաւատան այս Խորհուրդովս Մատուծոյ իրենց ըրած խոստմունքներուն :

Հարց . Ուրեմն ի՞նչու կը մկրտուին նորածին մանկունքները , որոնք իրենց մատաղ հասակին մէջ ան բաները կատարելու կարող չեն .

Պատ . Իրենց Լքրաշխաւորներուն ձեռքովը ան բաներուն համար խօսք տալերնուն համար . որ նոյն խոստումը չափահաս եղածնուն պէս ինքնին կատար-

րելու պարտաւոր են :

Հարց . Ի՞նչ պատճառով Տէրօջը Բնթրիքը՝  
Հաղորդութեան Խորհուրդը հաստատուեցաւ .

Պատ . Վրիստոսի մահուանը պատարագին մըշ-  
տընջենաւոր յիշատակութեանը , և մեր անկէ ըն-  
դունած բարութիւններնու համար :

Հարց . Ո՞րն է Տէրօջը Բնթրիքին արտաքին  
մասը կամ նշանը .

Պատ . Հացը և Պինին , որ Տէրը հրամայեց ըն-  
դունելու :

Հարց . Ո՞րն է ներքին մասը , կամ նշանակուած  
բանը .

Պատ . Վրիստոսի Սարմինը և Մրինը , որ  
հաւատացեալները ճշմարտապէս և իրօք կ'ընդու-  
նին Տէրօջը Բնթրիքին ժամանակը :

Հարց . Ի՞նչ բարիք կ'ընդունինք այս Խոր-  
հուրդէն .

Պատ . Յիսուս Վրիստոսի Սարմինովը և Մ-  
րինովը մեր հոգիներուն զօրութիւն ու օգնութիւն  
կ'ընդունինք , ինչպէս որ հացը ու գինին մեր մար-  
միններուն հաստատութիւն ու զօրութիւն է :

Հարց . Ի՞նչ կը պահանջուի Տէրօջը Բնթրիքին  
եկողներէն .

Պատ . Պէտք է որ իրենց անձերը շատ աղէկ  
քննեն թէ արդեօք իրենց առջի գործած անօրէ-  
նութիւններէն ճշմարտապէս զղջացած են մի , հաս-  
տատարար մէկ նոր կեանք մը վարելու գիտաւորու-

Թեամբը . Եւ Լստուծոյ ողորմութեամբը Վրիստոսի շնորհքովը կենդանի հաւատք մը ունենան , իր մահուանը երախտագէտ յիշատակութեամբը , ու բոլոր մարդկանց հետ սիրով ըլլան :

Ամէն Թեմի Ժողովրդապետը կիրակի և Տօն օրերը Իրիկուան Աղօթքին Երկրորդ Ընթերցումէն ետեւ պէտք է որ իր Թեմէն խրկուած տղոցմէն քանի հազար որ պատշաճ կը համարի , հրապարակաւ Եկեղեցւոյ մէջ ամենայն զգուշութեամբ այս Հաւատոյ Վարդապետութեանը քանի մը մասերուն մէջ վարժէ և քննէ զանոնք :

Եւ բոլոր Ծնողքները , Տէրերը և Տիկիները ջանք ընեն իրենց զաւկրները , ծառաները և աշակերտները ( որ Հաւատոյ Վարդապետութիւնը դեռ սորուած չեն ) սահմանուած Ժամանակին Եկեղեցի խրկել , որ հնազանդութեամբ լեն և փարձուին Ժողովրդապետին առաջնորդածներուն մէջ , մինչեւ որ բոլոր իրենց համար հոս տեղի դրուած քանիքը ազէկ մը սորուին :

Տղաքները բաւական շախհաս եղածնուն պէս , որ իրենց մայրենի լեզուովը Հաւատամբը , Տէրունական Աղօթքը և Տանտարանեաց Պատուիրանքները կրնան զրօցել , ու նաեւ այս համառօտ Հաւատոյ Վարդապետութեանը հարցմունքներուն կարող են պատասխան տալու , պարտին Եպիսկոպոսին բերուիլ : Եւ ամէն մէկը կնքահայր մը կամ կնքամայր մը որտեղ ունենալ , որ վկայ ըլլայ իր գրոշմուելուն :

Եւ երբոր Եպիսկոպոսը խնայուներ ըլլայ որ տղաքները իրեն բերուին գրոշմուելու , ամէն Թեմի Ժողովրդապետին պարտքն է , որ ասնի կամ խրկէ իր ստորագրութեամբը իր Թեմի մէջի եղածներուն այնչափին անունները , որչափ որ ինքը պատշաճ և ընդունակ կը համարի Եպիսկոպոսին խրկուելու անկէ գրոշմուելու համար : Եւ թէ որ Եպիսկոպոսը հաւանելու ըլլայ , հետեւեալ ձեւովը կը գրոշմէ :

# ԱՄԱՌԱ

## Դ Ր Ո Շ Մ Ի

Կ Ա Մ

ԱՆՈՆՑ ՎՐԱՅ ՁԵՌՔ ԴՆԵԼՈՒ

ՈՐ ՄԿՐՏՈՒԵԼԵՆ ԵՏԵՒ ՉԱՓԱԼԱՍ ԵՂԱԾ ԵՆ

Մահմանեալ օրը բոլոր դրօշմուելու անձինքները Եպիսկոպոսին դիմացը կանգնած, Եպիսկոպոսը (կամ անկէ կարգուած ուրիշ Պաշտօնեայ մը) այս հետեւեալ ազդարարութիւնը կը կարդայ.

Դրոշմը ընդունողներուն աւելի հոգեւոր շինութեանը համար, Ակեղեցին յարմար դատեցաւ հաստատելու, թէ ասկէ ետեւ Դրոշմը միայն անոնք ընդունին, որ Հաւատամքը, Տէրունական Աղօթքը և հասնաբանեայ Պատուիրանքները ըսելու կարող են, ու նաև Հաւատոյ ան Համառօտ Արդապետութեանը մէջ եղած ուրիշ հարցմունքներուն պատասխան տալու կարող են. նոյն կանոնը պահելը խիստ պատշաճ է, որովհետեւ տղաքները չափահաս ըլլալով, և մկրտուած ժամանակնին Անբահայրներուն և Անբամայրներուն իրենց համար ըրած խոստմունքները սորուած ըլլալով, կարող ըլլան ինքնին հրապարակաւ Ակեղեցւոյ մէջ իրենց բերնովը ու հաւանութեամբը հաստատելու, և անոնք

վաւերական ընելու . Աւ նաև խօսք տալու , որ իրենք  
Մատուծոյ շնորհքովը միշտ պիտի ջանան հաւատար-  
մութեամբ ան բաները պահելու , որոնց հաւանու-  
թիւն տուած են իրենց խոստովանութեամբը :

Յետոյ Եպիսկոպոսը կ'ըսէ .

Ար նորոգէք դուք հոս ամէնքդ Մատուծոյ և այս  
միաբանութեանս առջին ան երեւելի խոստմունքը  
և ուխտը , որ մկրտուած ժամանակնիդ ձեր տեղը ե-  
ղած է . ինքնին ձեր անձամբը վաւերական ընելով  
և հաստատելով , և դուք ձենէ պարտք սեպելով հա-  
ւատալու և կատարելու ինչ որ ձեր Անբահայրները  
և Անբամայրները ձեզի համար ան ժամանակը խօսք  
տուած են :

Եւ ամէն մէկը բարձր ձայնով պիտի պատասխանէ ,

Ես անոնք կը նորոգեմ :

Եպիսկոպոսը .

Սեր օգնութիւնը Տէրոջը անունովն է .

Պատ . Որ երկիւնքը ու երկիրը ստեղծեց :

Եպիս . Օրհնեալ ըլլայ Տէրոջը Անունը .

Պատ . Ասկէ ետեւ մինչեւ յաւիտեան :

Եպիս . Ո՛վ Տէր , լսէ մեր աղօթքներուն .

Պատ . Եւ մեր աղաչանքներուն ձայնը քեզի

հասնի :

Եպիսկոպոսը կ'ըսէ

Ազօթենք .

Լճենակարող և յաւիտենական Լստուած , որ  
հաճեցար այս քու ծառաներդ Յուրով ու Սուրբ  
Հոգւով վերստին ծնել տալու , և բոլոր անոնց մե-  
ղացը թողութիւն շնորհեցիր . Ա'աղաչենք Տէր՝ զօ-  
րացուր անոնք քու Այսիթարիչ Սուրբ Հոգիովդ . և  
օր ըստ օրէ անոնց վրայ քու շնորհացդ սյլևսյլ պար-  
գեւները եվելցուր . Իմաստութեան և հանճարոյ հո-  
գին . խրատու և հոգեւոր զօրութեան հոգին . գի-  
տութեան և ճշմարիտ Լստուածպաշտութեան հո-  
գին . և լեցուր անոնք ո՛վ Տէր քու սուրբ երկիւղովդ ,  
այժմ և յաւիտեանս . Լճէն :

Վերջը անոնց ամէնքը կարգաւ Եպիսկոպոսին առջեւը  
ծնրադրած , և ան իր ձեռքը ամէն մէկուն գլխուն վրայ  
զատ զատ դնելով պիտի ըսէ ,

Պաշտպանէ ո՛վ Տէր՝ այս քու Որդիդ ( կամ այս  
քու ծառադ ) քու երկնային շնորհքովդ , որ միշտ  
և յաւիտեան քուկդ ըլլայ . և օր ըստ օրէ ալ  
քու Սուրբ Հոգւովդ եվելօք զարգանայ , մինչեւ որ  
քու յաւիտենական արքայութեանդ արժանի ըլլայ .  
Լճէն :

Յետոյ Եպիսկոպոսը կ'ըսէ ,

Տէր ընդ ձեզ .

Պատ . Ալ ընդ հոգւոյդ քում :

Եւ ( ամէնքը ծնրադրած ) Եպիսկոպոսը կ'ըսէ ,

Ազօթենք .

Ո՛վ մեր շայրը՝ որ երկինքն ես , քու անունդ սուրբ ըլլայ . Վու թագաւորութիւնդ գայ . Վու կաճքդ ըլլայ , ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ . Սեր ամէն աւուր հացը պսօր տուր մեզի . Եւ ներէ մեզի մեր պարտքերը , ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն . Եւ մեզ փորձութեան մի տանիք , հապա չարէն ազատէ մեզ . Եւ մէն :

Եւ այս Մաղթանքը .


Եւ մենակարող և յաւիտենական Աստուած , որ մեզի ան բաները ուղել և ընել կուտաս , որ քու աստուածային Սնծվայելութեանդ հաճելի և ընդունելի են . Սնք մեր խոնարհ աղաչանքները քեզի կը մատուցանենք այս քու ծառաներուդ համար , որոնց վրայ (քու սուրբ Առաքեալներուդ օրինակին հետեւելով) հիմայ ձեռք դրինք . որպէս զի (այս նշանովս) ապահով ըլլան իրենց վրայ ունեցած մարդասիրութեանդ ու շնորհաձիր բարութեանդ համար : Կ'աղաչենք որ քու հայրական բազուկդ միշտ անոնց վրայ ըլլայ , և քու Սուրբ շողիդ միշտ անոնց հետը ըլլայ , և անանկ առաջնորդէ անոնց քու Խօսքերուդ ճանաչողութեանը և հնազանդութեանը մէջ , որ վերջը յաւիտենական կենաց արժանի ըլլան , մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը , որ կենդանի է , և կը թագաւորէ քեզի՝ և Սուրբ շողոյն հետ միշտ մէկ Աստուած մը , յաւիտեանս . Եւ մէն :

Ամենակարող Տէր՝ և յաւիտենական Աստուած,  
կ'աղաչենք ուղղէ, մաքրէ և կառավարէ մեր սիրտե-  
րը ու մարմինները քու օրէնքներուդ և քու պա-  
տուիրանքներուդ գործքերուն մէջ, որ քու ամենա-  
զօր պաշտպանութեամբդ հիմայ ու յաւիտեան հոգ-  
ւով և մարմնով պահպանուինք, մեր Տէր և Փրկիչ  
Յիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն:

Յետոյ Եպիսկոպոսը անոնք կ'օրհնէ՝ ըսելով .

Ամենակարող Աստուծոյ, Հօր, Որդւոյ, և  
Սուրբ Հոգւոյն օրհնութիւնը ձեր վրայ իջնայ ու  
հանգչի յաւիտեան . Ամէն:

Ամենասուրբ Հաղորդութեան Խորհուրդը մէկը չի կըր-  
նար ընդունիլ, մինչեւ որ սուղ չի գրոշմուի, կամ գրոշ-  
մուելու ընդունակութիւն և փափագ չունենայ:



# ԱՄԱՌՆԱ

## ԵՄՈՒՍՆՈՒԹԵԼՆԵ

### Հ Ա Ն Դ Ե Ս Ը Կ Ա Տ Ա Ր Ե Լ Ո Ւ

Նախ և առաջ պէտք է որ Ամուսնութեան Հրամանը Եկեղեցին մէջ իրեք զատ զատ Վիրակի ծանուցուի, Առտուան Ժամերգութեան Ժամանակը. կամ (թէ որ առտուանց Ժամերգութիւն չըլլայ) անմիջապէս Իրիկուան Ժամերգութեան Երկրորդ Ընթերցուածէն ետեւ. Ժողովրդապետը այս սովորական կերպովը ըսելով.

Եւ կը հրատարակեմ Ըմուսնութեան Հրամանը, Ը— (այն ինչ տեղացի), և Ը— (այն ինչ տեղացի) անձերուն: Թէ որ ձենէ մէկը անոնց ամուսնութեանը պատճառ մը կամ իրօք արգելք մը ըլլալը գիտէ, որ այս երկու անձինքները սուրբ ամուսնութեամբ կարող չեն կարգուելու, պէտք է որ ծանուցանէ: Ըսիկայ առաջին (երկրորդ կամ երրորդ) անգամն է, որ ես ձեզի կը հարցունեմ:

Թէ որ կարգուելու անձինքները այլևայլ Ժողովրդապետութեան վերաբերելու ըլլան, երկու տեղն ալ պէտք է որ ծանուցուի. և մէկ տեղի մը Ժողովրդապետը կարող չէ ամուսնացունել առանց միւս Ժողովրդապետին իրեք անգամ հրատարակելուն վկայութեանը:

Սահմանեալ օրը և Ժամանակը ամուսնանալու անձինքները իրենց բարեկամներովը և ազգականներովը Եկեղեցին

մէջ տեղը կուգան . և հոն Փետան աջ կողմը և Հարսը ձախ կողմը քովէ քով կայնած քահանան կ'ըսէ .

Սիրելիներ՝ մենք հոս եկած ու հաւքուած ենք Մատուծոյ և այս միաբանութեանս առջին , այս Սարգը և այս Աինը սուրբ ամուսնութեամբ պսակելու . որ պատուաւոր վիճակ մըն է մարդուն անմեղութեան ժամանակը Տէր Մատուծմէ հաստատուած , ցրցունելով մեզի Վրիստոսի և իւր Աղեղեցւոյն խորհրդաւոր միութիւնը . որ նոյն սուրբ վիճակին Վրիստոս փառք և պատիւ շնորհեց իւր ներկայութեամբը և առաջին հրաշագործութեամբը , որ գալիլեացւոց կանա քաղաքը ըրաւ . ինչպէս որ Պօղոս Մոսքեալ ալ կը գովէ բոլոր մարդկանց մէջ ասոր յարգի ըլլալը . ուստի չի վայլեր մէկու մը այս բանիս ձեռնամուխ ըլլալ կամ մտնալ անմտաբար , թեթեւութեամբ կամ անտակութեամբ , մարդուս հեշտասիրութեանը և ցամակութեանը պատճառաւ անբան կենդանիներուն պէս , որ ընտրողութիւն չունին . հապա յարգանօք , խոհականութեամբ , զգաստութեամբ և Մատուծոյ երկիւղովը , ամուսնութիւնը հաստատուելուն պատճառները արժանապէս քրննելով :

Կախ և առաջ անիկայ հաստատուեցաւ որդեծնութեան համար . որ անոնք Տէրօջը երկիւղովը ու կրթութեամբը վարժուին . և իւր սուրբ Մնուանը փառքին համար :

Արկրորդ , հաստատուեցաւ մեղքին դէմ դար-

ման մը ըլլալու , և պոռնկութենէ ետ պահելու : որ  
ողջխոստութեան պարգեւը չունեցողները ամուսնա-  
նան , և ինքըզինքնին Վրիտանիա Վարմինին անա-  
պական անդամներ ընեն :

Երրորդ , Հաստատուեցաւ միմեանց ընկերու-  
թեան , օգնութեան և մխիթարութեան համար , որ  
մէկը միւսին վրայ պտրտի ունենալ , թէ յաջողու-  
թեան մէջ և թէ ձախորդութեան մէջ : Աւ հիմայ  
նոյն սուրբ միճակին մէջ միանալու եկած են այս եր-  
կու անձինքները : Սուտի թէ որ մէկը ստոյգ պատ-  
ճառ մը կրնայ ցըցունել որ անոնք ըստ օրինի չեն  
կրնար ամուսնանալ , թող հիմայ զրուցէ . չենէ  
ասկէ ետեւ բոլորովին թող ըլլէ :

Եւ ամուսնանալու անձինքներուն ալ կ'ըսէ .

Աս կը հարցունեմ և կը պարտաւորեմ ձեզ եր-  
կուքդ ալ (ինչպէս որ ան ահաւոր դատաստանի օրը  
պիտի պատասխանէք , երբոր սրտին բոլոր գաղա-  
նիքները յայտնուելու ըլլան) որ թէ որ ձենէ մէկը  
ձեր ամուսնութեամբ օրինաւորապէս միաւորութեա-  
նը մէկ արգելք մը ըլլալը գիտէ , թող հիմայ խոստու-  
վանի : Ասն զի աղէկ գիտէք որ ո՛վ որ Աստուծոյ  
խօսքին պէս ամուսնութեամբ միացած չէ , անոնք  
Աստուծմով մէկզմէկու հետ միաւորած չեն . և անոնց  
ամուսնութիւնը օրինաւոր չէ :

Թէ որ մէկը ամուսնութեան օրը արգելք մը առաջ  
բերէ և զրուցէ , որով կամ Աստուծոյ օրէնքովը , և կամ

մեր Տէրութեանը օրէնքներովը կարող չեն ըլլար ըստ օր ՚ի ամուսնանալու , և թէ որ հակառակօրդը բաւական ստուգութեամբ պիտի պարտաւորի իր վկայութիւնը հաստատելու , ձեռագիր տալով ( ան ամուսնալու անձինքներուն ) ան տեսակ ծախքերուն փոխարէնը հատուցանելու , որ ան երկուքին պիտի պատահի . ան ժամանակը պէտք է որ ամուսնութիւնը ետ ձգուի , մինչեւ որ ճշմարտութիւնը հաստատուի :

Թէ որ արդէլք մը չիմացուի , ան ժամանակը ծողը վերդապետը Փետին կ'ըսէ .

Լ՝— Կ'ուզե՞ս դուն քեզի օրինաւոր ամուսին ընել այս Կինը . Լ՝ստուծոյ օրէնքովը ամուսնութեան ան սուրբ վիճակին մէջ ապրելու : Կ'ուզե՞ս դուն անոր հետ սիրով վարուիլ , անիկայ միտթարել ու պատուել , և թէ հիւանդութեան և թէ առողջութեան մէջ անիկայ պահել . և բոլոր ուրիշները ձրգելով դուն քեզ միայն անոր տաս , որչափ որ երկուքդ ալ ապրիք :

Փեսան կը պատասխանէ .

Կ'ուզեմ :

Յետոյ Քահանան Հարսին կ'ըսէ .

Լ՝— Կ'ուզե՞ս դուն քեզի օրինաւոր ամուսին ընել այս Լ՝սրը . Լ՝ստուծոյ օրէնքովը ամուսնութեան ան սուրբ վիճակին մէջ ապրելու : Կ'ուզե՞ս դուն անոր հնազանդիլ , և անոր ծառայել . անոր հետ սիրով վարուիլ , անիկայ պատուել . և թէ հիւանդութեան մէջ և թէ առողջութեան մէջ անիկայ պա-

հել . և բոլոր ուրիշները ձգելով դուն քեզ միայն  
անոր տաս , որչափ որ երկուքդ ալ ապրիք :

Հարբը կը պատասխանէ .

Ա՛րուզեմ :

Ան ժամանակը Պաշտօնեան կ'ըսէ .

Ա՛յլ է ան որ այս Աինը այս Ս'արդուն ամուսնա-  
նալու կուտայ .

Յետոյ իրենց հաւատարմութիւնը այս կերպով մէկը-  
մէկու կուտան :

Պաշտօնեան Հարբը իր հօրը կամ բարեկամին ձեռքէն  
կ'առնէ , և անոր աջ ձեռքը Փեսին աջ ձեռքը կուտայ .  
և Փեսան Պաշտօնեային ետեւէն այս հետեւեալ խօսքերը  
կ'ըսէ .

Ես Ա' — կ'առնեմ քեզ Ա' — իմ օրինաւոր ա-  
մուսնութեանս , որ միշտ քեզ ունենամ և քեզ պա-  
հեմ , թէ յաջողութեան մէջ և թէ ձախորդութեան  
մէջ , թէ հարստութեան մէջ և թէ աղքատութեան  
մէջ , թէ հիւանդութեան մէջ և թէ առողջութեան  
մէջ , սիրելով և գգուելով քեզ , մինչեւ որ մահը  
մեզ բաժնէ , Ա' ստուծոյ սուրբ օրէնքին նայելով . և  
այս պատճառաւ իմ հաւատարմութիւնս քեզի կը  
խոստանամ :

Յետոյ Փեսան Հարսին աջ ձեռքը կը թողու . և  
Հարբը իր աջ ձեռքովը Փեսին աջ ձեռքը կը բռնէ , ու

նմանապէս Պաշտօնեային ետեւէն այս հետեւեալ խօսքերը կ'ըսէ .

Եւ Մ. — կ'առնեմ քեզ Մ. — իմ օրինաւոր ամուսնութեանս, որ միշտ քեզ ունենամ և քեզ պահեմ, թէ յաջողութեան մէջ և թէ ձախորդութեան մէջ, թէ հարստութեան մէջ և թէ աղքատութեան մէջ, թէ հիւանդութեան մէջ և թէ առողջութեան մէջ, սիրելով և զգուշելով քեզ, և քեզի հնազանդ ըլլալով, մինչեւ որ մահը մեզ բաժնէ, Մ. ստուծոյ սուրբ օրէնքին նայելով. և այս պատճառաւ իմ հաւատարմութիւնս քեզի կը խոստանամ :

Յետոյ անոնք կրկին ձեռվունին կ'արձրկեն. և Փեսան մատնի մը կուտայ Հարսին Գրքին վրայ դնելով, և միանգամայն Քահանային ու դպրոց հասարակ տուրքը. Քահանան ալ մատնին առնելով Փեսին կուտայ, որ անիկայ Հարսին ձախ ձեռքին չորրորդ մատը դնէ : Եւ Փեսան նոյն մատնին նոյն տեղը բռնելով և Քահանայէն ստրուելով կ'ըսէ .

Եւ այս մատնիովս ես քեզի հետ կ'ամուսնանամ, իմ անձամբս քեզ կը պատուեմ, և բոլոր աշխարհային բարիքներուն քեզ մասնակից կ'ընեմ, և օր, և Որդոյ, և Սուրբ և ոգւոյն անունովը. Մ. Բն :

Վերջը Փեսան մատնին Հարսին ձախ ձեռքին չորրորդ մատը թողելով, երկուքն ալ ծնրադրած Պաշտօնեան կ'ըսէ .

Աղօթենք .

Ո՛վ յաւիտենական Մ. ստուած, բոլոր մարդկային ազգին Ստեղծողը ու Պահպանողը, ամէն հոգեւոր պարգեւները Եւ նորհողը, յաւիտենական կենաց

Պատճառը. Խորիկէ քու օրհնութիւնդ այս քու ծառաներուդ՝ այս մարդուն և այս կնկանը վրայ, որոնք քու անունովդ կ'օրհնենք. որ ինչպէս որ Նասահալը ու Ռեբեկան մէկ տեղ հաւատարմութեամբ ապրեցան, անանկ ալ այս անձինքները հաւատարմօրայր կատարեն ու պահեն իրարու խօսք տուած ան երեւելի դէտարու դաշինքը, (որ այն պատճառաւ տրուած ու առնուած մատնին մէկ նշան մը ու երաշխաւորութիւն մըն է), և որ ամէն ժամանակ կատարեալ խաղաղութեամբ ու սիրով մնան մէկ տեղ, և քու օրէնքներովդ ապրին, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքովը. Ամէն :

Յետոյ քահանան անոնց ալ ձեռքները մէկզմէկու կուտայ և կ'ըսէ,

Անոնք որ Աստուած միացուց, մարդը չի զատէ :

Վերջը Պաշտօնեան ժողովուրդին կ'ըսէ.

Որովհետեւ այս Ա. — և այս Ա. — երկուքը մէկ տեղ հաւանութիւն տուին սուրբ ամուսնութեամբ, և անիկայ Աստուծոյ և այս ժողովուրդիս առջին հրատարակեցին, և այս վախճանաւ մէկզմէկու երաշխաւորութիւն տուին իրենց հաւատարմութեանը համար, և նոյն բանը մատնի մը տալով ու առնելով հաստատեցին, և նաև մէկզմէկու ձեռք բռնելով. Այս կը հրատարակեմ որ ասոնք այր և կին եղած են մէկ տեղ Հօր, և Որդւոյ, և Սուրբ Հոգւոյն անունովը. Ամէն :

Եւ Պաշտօնեան այս օրհնութիւնն ալ կը զուցէ .

Այր Աստուած , Արդին Աստուած , Ոգին  
Սուրբ Աստուած , օրհնէ ձեզ , պահէ և պահպանէ .  
Տէրը իր բարեգթութեամբը ողորմութեամբ ձեր  
վրայ նայի , և անանկ լեցունէ ձեզ ամէն հոգեւոր  
օրհնութիւնով ու շնորհքով , որ դուք այս աշխար-  
հիս վրայ իրարու հետ անանկ ապրիք , որ հանդեր-  
ձեալին մէջ կարող ըլլաք յաւիտենական կեանքը  
վայելելու . Ամէն :

Յետոյ Պաշտօնեան կամ Գպիրները սուրբ Սեղանը երթալով  
կ'երգեն կամ կ'ըսեն այս հետեւեալ Սաղմօսը .

Արանի ամենեցուն . ( Սաղ . Ճիէ : )

Արանի ան ամէնուն՝ որ տէրոջմէն կը վախնան ,  
և անոր ճաճբաներուն մէջ կը քալեն :

Վու ձեռքիդ վաստակը պիտի ուտես , երանի է  
քեզի , ու աղէկ կ'ըլլայ :

Վու կինդ վայելուչ այգիի նման է քու տանդ  
ներսիդին . քու զաւկրներդ ձիթենիին տունկերուն  
պէս քու սեղանիդ բոլորտիքը :

Ասանկ պիտի օրհնուի ամէն մարդ որ տէրոջմէն  
կը վախնայ :

Տէրը քեզ սիօնէն պիտի օրհնէ , և քու կեանքիդ  
ամէն օրերուն մէջ երուսաղէմի մէջ բարու թիւն  
պիտի տեսնաս :

Վուն քու զաւկրներուդ զաւկրները պիտի տես-  
նաս . խաղաղութիւն ըլլայ ի սրայէլի վրայ :

Փառք շօր , և Արդւոյ , և շողոյն Արբոյ .  
Արպէս էր 'ի սկզբանէ , այժմ , և միշտ , և յաւիտեանս յաւիտենից . Ըմէն :

Կամ այս Սաղմար .

Ըստուած ողորմեալ մեզ . ( Սաղ . Կղ : )

Այլ աստուած , ողորմէ մեզի , և օրհնէ մեզ , քու երեսդ մեզի ցրցուր . և ողորմէ մեզի :

Ար երկրի վրայ քու ճամբաներդ ճանչնան , քու փրկութիւնդ ամէն ազգերուն մէջ :

Հնորհակալ ըլլան քեզի ժողովուրդները ոյլ աստուած . Հնորհակալ ըլլան քեզի ամէն ժողովուրդները :

Ըմէն ազգերը ուրախ ըլլան ու ցնծան , ինչու որ դուն ժողովուրդները ուղղութիւնով կը դատես , և երկրի ազգերուն դուն կ'առաջնորդես :

Փառք տան քեզի ժողովուրդները ոյլ աստուած , Հնորհակալ ըլլան քենէ ամէն ժողովուրդները :

Նրկիրը իր պտուղը տուաւ , և աստուած՝ մեր աստուածը մեզ օրհնեց :

Մեր աստուածը մեզ պիտի օրհնէ , և անկէ ամէն երկրի ծայրերը պիտի վախնան :

Փառք շօր , և Արդւոյ , և շողոյն Արբոյ .

Արպէս էր 'ի սկզբանէ , այժմ , և միշտ , և յաւիտեանս յաւիտենից . Ըմէն :

Սաղմար լմբնալէն ետեւ , Փետան ու Հարբը ծընրա .

զրած սուրբ Սեղանին առջևը , և Քահանան սեղանին քովը  
կանգնած ու իր երեսը անոնց վրայ դարձուցած կ'ըսէ .

Տէր , ողորմէ՛ մեզի .

Պատասխանի . Վրիժառու , ողորմէ՛ մեզի .

Պաշտօնէան . Տէր , ողորմէ՛ մեզի .

Ո՛վ մեր Հայրը՝ որ երկինքն ես , քու անունդ  
սուրբ ըլլայ . Վու թագաւորութիւնդ գայ . Վու  
կամքդ ըլլայ , ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկ-  
րիս վրայ . Մեր ամէն աւուր հացը սցսօր սուր մեզի .  
Եւ ներէ՛ մեզի մեր պարտքերը , ինչպէս որ մենք ալ կը  
ներենք մեր պարտականներուն . Եւ մեզ փորձու-  
թեան մի տանիր , հապա չարէն ազատէ՛ մեզ . Ա՛մէն :

Պաշ . Տէր , փրկէ՛ քու ծառայ , և քու աղախինդ .

Պատ . Որ քեզի կ'ապաւինին :

Պաշ . Տէր , օգնութիւն խրկէ՛ անոնց քու սրբ-  
բութեանդ տեղէն .

Պատ . Եւ միշտ պահպանէ՛ անոնք :

Պաշ . Ա՛նոնց զօրութեան աշտարակ մը եղիր .

Պատ . Թշնամիներուն յարձակմանը դէմ :

Պաշ . Տէր , լսէ՛ մեր աղօթքին .

Պատ . Եւ մեր աղաչանքներուն ձայնը քեզի  
հասնի :

Պաշ . Ո՛վ Աստուած Աբրահամու , Աստուած  
Իսահակայ , և Աստուած Էսակորայ , օրհնէ՛ այս քու  
ծառաներդ , և ցանէ՛ անոնց սրտին մէջ յաւիտենա-  
կան կենաց սերմը . որ ինչ որ քու սուրբ Աստուծոյ  
օգնութեամբը սորուին , կարող ըլլան գործքով կա-

տարել զանոնք : Այլ ինչպէս որ քու օրհնութիւնդ  
 Մբրահասին ու Ստուային խրկեցիր անոնց մեծ միտ-  
 թարութեանը համար , անանկ ալ նոյն օրհնութեա-  
 նը արժանի ըրէ այս քու ծառաներդ . որ քու կամքիդ  
 հնազանդելով , և քու պաշտպանութեամբդ միշտ  
 ապահով ըլլալով քու սիրովդ ապրին մինչև իրենց  
 կեանքին վերջը , մեր Տէր Յիսուս Վրիստոսի շը-  
 նորհարովը . Ա՛ն :

Հեռուէս Մարտի կը թողուի . թէ որ կնկանը որդե-  
 ծնութեան ժամանակը անցած ըլլայ :

Այլ բաղմագութ Մատուած՝ և երկնաւոր Հայր ,  
 որ քու շնորհածիր պարգեւովդ մարդկային ազգը կը  
 բաղմանայ . Ա՛յ աղաչենք օգնէ քու օրհնութեամբդ  
 այս երկու անձինքներուն , որ անոնք չէ թէ միայն  
 որդեծնութեամբ բեղմնաւորին , հապա անանկ սուրբ  
 սիրով ու պարկեշտութեամբ մէկ տեղ ապրին , որ  
 կարող ըլլան իրենց զաւկրները քրիստոնէութեամբ  
 և առաքինութեամբ զարգացած տեսնալու , քու  
 փառքիդ և պատուոյդ համար , մեր Տէր Յիսուս Վր-  
 ըիստոսի շնորհարովը . Ա՛ն :

Այլ Տէր Մատուած , որ քու ամենակարողու-  
 թիւնովդ ամէն բանը ոչնչէն ստեղծեցիր . ու նաև  
 ( ամէն բանը կարգի դնելէդ ևտեւ ) ուղեցիր որ ( քու  
 պատկերիդ և նմանութեանդ պէս ստեղծուած ) մար-  
 դէն կինը իւր սկզբնաւորութիւնը առնէ . և անոնք

մէկ տեղ յօգելով սորվեցուցիր որ բնաւ օրինաւ որ  
 չէ զատել անոնք՝ որոնք դուն ամուսնութեամբ միա-  
 ւորեցիր . Ո՛վ Աստուած , որ ամուսնութիւնը սըր-  
 բութեան վիճակ մը բրիր անանկ գերազանց խոր-  
 հուրդ մը ըլլալու , որով Վարիստոսի և իւր Ակեղեց-  
 ւոյնմէջ տեղի եղած հոգեւոր ամուսնութիւնը և միու-  
 թիւնը կը ցուցուի ու կը նշանակուի , ողորմութեամբ  
 նայէ այս քու ծառաներուդ վրայ , որ չէ թէ միայն  
 այս այրը իր կիներ սիրէ քու խօսքիդ նայելով , (ինչ-  
 պէս որ Վարիստոս Ակեղեցին՝ իր Հարսը սիրեց , և  
 անոր համար իր անձը մատնեց , անիկայ իր մարմինին  
 պէս սիրելով ու գգուելով ) , հապտ այս կիներն ալ  
 քաղցրաբարոյ և սիրալիւր , հաւատարիմ և հնազանդ  
 ըլլայ իր լծակցին . և ամենայն հեղութեամբ , հա-  
 մեստութեամբ ու խաղաղութեամբ սուրբ և բարե-  
 պաշտ կանանց հետեւի : Ո՛վ Տէր , անոնց երկուքն  
 ալ օրհնէ , և շնորհէ որ անոնք քու յաւիտեանական  
 արքայութիւնդ ժառանգեն , մեր Տէր Հիսուս Վը-  
 րիստոսի շնորհքովը . Ամէն :

Յետոյ Քահանան կ'ըսէ .

Ամենակարող Աստուած , որ սկիզբէն մեր առա-  
 ջին ծնողքները ստեղծեց Ադամը ու Աւան , և անոնք  
 ամուսնութեամբ սրբեց ու միացուց , (Թատիէ ձեր  
 վրայ իր շնորհքին առատութիւնը , սրբէ և օրհնէ  
 ձեզ , որ հոգւով և մարմնով իրեն հաճոյ ըլլաք , և  
 մէկ տեղ սուրբ սիրով ապրիք մինչեւ ձեր կեանքին  
 վերջը . Ամէն :

Հստ թէ որ ամուսնացեալներուն պարտականութեանը վերաբերեալ քարոզու թիւն մը չըլլայ, Պաշտօնէան այս հետեւեալը կը կարգայ.

Պարբ ամենքդ որ ամուսնացած էք, կամ թէ ամուսնութեան սուրբ վիճակին միտք ունիք մշտնաշու, լսեցէք Սուրբ Վիրքին ըսածները, էրիկ մարդոց իրենց կնկանը ունեցած պարտաւորութիւններնուն, և կնիկ մարդոց իրենց էրկանը ունեցած պարտաւորութիւններնուն համար:

Պօղոս առաքեալ Ափեսացւոց գրած թուղթին հինգերորդ գլխուն մէջ, ամէն կարգուած էրիկ մարդոց այս հրամանը կ'ընէ. էրիկ մարդիկ՝ սիրեցէք ձեր կնիկները, ինչպէս որ քրիստոս սիրեց եկեղեցին, և իր անձը անոր համար մատնեց. որ ինքը աւազանին մաքրութեամբը՝ ան բանովը սրբէ ու մաքրէ անիկայ. որ ինքը իր գիմացը մէկ յիսուսոր եկեղեցի մը կեցունէ, որ արատ մը, կամ աղտ մը կամ ուրիշ սասանկ բաներ չունենայ. հապա որ սուրբ և անարատ ըլլայ: Ասանկ պարտին էրիկ մարդիկ իրենց կնիկները սիրել, իրենց մարմիններուն պէս: Ան որ իր կնիկը կը սիրէ, ան իր անձը կը սիրէ. ինչո՞ւ որ բնաւ մէկը իր անձը չատեր, հապա կը սնուցանէ անիկայ, և հոգ կը տանի անոր. ինչպէս որ քրիստոս եկեղեցին. վասն զի մենք անոր մարմինին անդամներն ենք, անոր մարմինէն և անոր սուկորներէն: Աւստի էրիկ մարդը պիտի թողու իր հայրը և իր մայրը, ու իր կնկանը հետ երթայ, ու

երկուքը մէկ մարմին պիտի ըլլան: Այս խորհուրդս  
մեծ է, բայց ես քրիստոսի և եկեղեցիին նայելով  
կ'ըսեմ. Ուստի ամէն մէկերնիդ մասնաւորապէս իր  
կնիկը իր անձին պէս թող սիրէ. ( Աղ. 17. 25: )

Վասնապէս նոյն Պողոս առաքեալը Աղ. սայ-  
ւոց գրելով, բոլոր կարգուած մարդոց այսպէս կը  
խօսի. էրիկ մարդիկ սիրեցէք ձեր կնիկները, և ա-  
նոնք մի վշտացունէք. ( Աղ. 17. 19: )

Նսեցէք նաև Պետրոս՝ Քրիստոսի առաքեալը, որ  
ինքն ալ ամուսնացած էր, ինչ կը զրուցէ կարգուած  
մարդոցը. էրիկ մարդիկ խոհեմութեամբ անոնց հետ  
բնակին, տկար ամանի պէս պատիւ ընեն կնիկնե-  
րուն, և որպէս թէ կենաց շնորհքին ժառանգակից-  
ներուն. որ ձեր աղօթքներուն խափանում չըլլայ.  
( Ա. Պ. 4. 7: )

Սինչևև հիմայ էրիկ մարդու մը կնկանը վրայ  
ունեցած պարտաւորութիւնը լսեցիք. դուք ալ հի-  
մայ կնիկ մարդիկ լսեցէք ու սորուեցէք ձեր էրիկ-  
ներուն վրայ ունեցած պարտաւորութիւննիդ, ինչ-  
պէս որ յայտնի կը ցուցուի սուրբ Վրբին մէջ:

Պողոս Առաքեալ վերոյիշեալ Նիքիասացոց գը-  
րած թուղթին մէջ ձեզի այսպէս կը սորվեցընէ.

Կնիկները հնազանդ ըլլան իրենց էրիկներուն,  
ինչպէս որ տէրօջը: ինչու որ էրիկ մարդը կնկանը  
գլուխն է, ինչպէս որ քրիստոս եկեղեցւոյ գլուխն  
է, և նոյն մարմնոյն փրկիչը: Ուստի ինչպէս որ ե-  
կեղեցին քրիստոսի հնազանդ կ'ըլլայ, անանկ ալ

կնիկները ամէն բանի մէջ իրենց էրկանը հնազանդ  
ըլլան. (Աբդ. Ե. 22:)

1, Եւ կողոսացոց գրած թուղթին մէջ Պօղոս Մ.  
ուսքեալ այս համառօտ պատուէրը ձեզի կուտայ .

Կնիկներ՝ հնազանդ եղիք ձեր էրիկներուն, ինչ-  
պէս որ տէրոջմով անանկ կը վայլէ. (Սողոմ. 7. 18:)

Պետրոս Մ. ուսքեալ ալ շատ ազէկ կը սորվե-  
ցընէ ձեզի ըսելով .

Մասնկ ալ կնիկները հնազանդ ըլլան իրենց  
էրիկներուն, որ՝ եթէ անոնք խօսքի հնազանդ չըլ-  
լան, առանց խօսքի շահուն կնիկներուն վար-  
մունքովը, ձեր երկիւղած՝ պարկեշտ վարքը տեսնա-  
լով : Որ անոնց զարդարանքները արտաքին հիւ-  
ստածներով, և ոսկեհոն մազկապներով, կամ  
զարդարուած հագուստներով չըլլայ . հապարտին  
մէջի եղած ծածուկ մարդը (զարդարուի), անկեղ-  
ծութիւնով, հնազանդ և հանդարտ հոգևով, որ  
աստուծոյ առջին շատ յարգի է : Այսն զի հին ժա-  
մանակները աստուծոյ յուսացող կնիկները անձեր-  
նին իրենց էրիկներուն հնազանդ ընելով կը զար-  
դարէին : Ինչպէս որ սառան ալ հնազանդ էր ար-  
րահամին, և անիկայ իրեն տէր կը կանչէր . որ դուք  
անոր զաւկըններ եղաք՝ բարեգործ էին, և կասկած  
չունէին՝ ոչ ալ մէկ վախէ մը. (Մ. Պետ. 7. 1:)

Ան նորաստակ անձիքները կը վայլէ որ ամուսնացած  
Ժամանակին հարդուին . կամ գոնէ ամուսնութենէն և  
տեւ առաջին պատեհութեամբը նոյն գործքը կատարեն :

( 106 )

# ԱՆՈՒՆ

## ԵՅՅԵԼՆՈՒԹԵԼՆ

### ՀԻՒԱՆԴԻ

---

Երբոր մէկ մարդ մը կը հիւանդանայ, ժողովրդապետութեան Պաշտօնեային պարտի ծանուցուիլ . և ան հիւանդին տունը մտած ժամանակը կ'ըսէ .

Խաղաղութիւն այս տանս, և բոլոր հոս բնակողներուն :

Երբոր հիւանդին կը ներկայանայ՝ ծնրագրած կ'ըսէ .

Տէր՝ մի յիշեր մեր անօրէնութիւնները, ոչ ալ մեր հայրերուն անօրէնութիւնները . 'Այրէ մեզի ով բարեգութ Տէր, ներէ քու ժողովուրդիդ՝ որ դուն քու անգին արիւնովդ փրկեցիր, և մի բարկանար մեզի յաւիտեան .

Պատիւով . 'Այրէ մեզի ով բարեգութ Տէր :

Յետոյ Պաշտօնեան կ'ըսէ .

Եզօթէնք .

Տէր, ողորմէ մեզի .

'Քրիստոս, ողորմէ մեզի .

Տէր, ողորմէ մեզի .

Ո՛վ մեր Հայրը՝ որ երկինքն էս , քու անունդ սուրբ ըլլայ . Վ՛ու թագաւորութիւնդ գայ . Վ՛ու կամքդ ըլլայ , ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ . Ս՛եր ամէն աւուր Հացը այսօր տուր մեզի . Եւ ներէ մեզի մեր պարտքերը , ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն . Եւ մեզ փորձու թեան մի տանիր , Հապա չարէն ազատէ մեզ . Վ՛մէն :

Պաշ . Տէր՝ փրկէ քու ծառայ .

Պապ . Որ քեզի կը յուսայ :

Պաշ . Խրկէ քու սուրբ տեղէդ քու օգնութիւնդ անոր .

Պապ . Եւ ամէն ատեն պաշտպանէ՛ անիկայ մեծ զօրութեամբ :

Պաշ . Թշնամին թող չի Հարստահարէ անիկայ .

Պապ . Եւ անօրէնը չի մօտենայ անիկայ չարհաբելու :

Պաշ . Տէր՝ զօրութեան աշտարակ մը եղիր անոր .

Պապ . Ի՞ր թշնամիներուն յարձակմանը դէմ :

Պաշ . Տէր՝ ըսէ մեր աղօթքին .

Պապ . Եւ մեր աղաչանքներուն ձայնը քեզի Հասնի :

Պաշ . Ո՛վ Տէր՝ նայէ երկինքէն . տես , այցելու եղիր և ազատէ այս քու ծառայ : Վ՛ու ողորմութեանդ աչքովը անոր վրայ նայէ . պարգեւէ անոր որ քու վրայ միսիթարութիւն և Հաստատ ապաւինութիւն ունենայ . պաշտպանէ անիկայ թշնամիին վտանգէն , և մշտնջենաւոր խաղաղութեամբ ու ա-

պահովութեամբ պահէ անիկայ, մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը. Ա՛՛ն:

Ա՛՛մենակարող և բարեգութ Տէր և Փրկիչ, լսէ մեզի. և տարածէ քու սովորական բարութիւնդ այս քու ծառայիդ, որ հիւանդութեամբ կը չարչարուի: Ա՛՛աղաչենք օգտակար ըրէ այս քու հայրական խորատրդ անոր, որ իր տկարութեան զգայութիւնը վերջը զօրացունէ իր հաւատքը, և իր զղջմանը գերազանց անկեղծութիւն մը շնորհէ. որ՝ եթէ քու աստուածային հաճութեամբդ անիկայ նորէն իր առջի առողջութեանը դարձունես, կարող ըլլայ մնացած կեանքը քու երկիւղովը և քու փառքիդ համար վարելու. ապա թէ ոչ՝ քու առատաբաշխ շնորհքդ պարգեւէ, որ քու այցելութիւնդ անանկ սիրով ընդունի, որ այս տառապեալ կեանքը վերջանալէն ետեւ քեզի հետ յաւիտենական կեանքին մէջ բնակի, մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը. Ա՛՛ն:

Յետոյ Պաշտօնեան հիւանդը հետեւեալ կամ այս կերպ խրատներով կը յորդորէ.

Արեւիս՝ գիտցած եղեր որ Ա՛՛մենակարողն Աստուած կենդանութեան և մահուան Տէր է, և անոնց վերաբերեալ բաներուն, այսինքն, երիտասարդութեան, զօրութեան, առողջութեան, ծերութեան, տկարութեան և հիւանդութեան: Աստի քու հիւանդութիւնդ ինչ որ ըլլայ, հաստատ գիտ-

ցիր որ անիկայ Աստուծոյ այցելութիւնն է : Այսինչ բանի համար որ այս հիւանդութիւնը քու վրայ խրկուած ըլլայ, թէ քու համբերութիւնդ փորձելու համար ուրիշներուն բարի օրինակ ըլլալու, և թէ դատաստանի օրը քու հաւատքդ գովելի և փառաւորեալ գտնուելու՝ փառքին և անվախճան երջանկութեան առաւելութեանը համար, և կամ անիկայ խրկուած ըլլայ քեզ զգաստացունելու և ուղիւնան բաներուն մէջ՝ որ քու երկնաւոր Զօրդ աչվընները կը գայթակղեցունեն, աղէկ գիտցիր՝ որ եթէ քու մեղքերդ ճշմարտապէս զղջաս, և համբերութեամբ քու հիւանդութիւնդ տանիս Աստուծոյ ուղորմութեանը սպաւինելով իր սիրելի Արդոյն (Յիսուս Քրիստոսի սիրոյն համար, և իւր հայրական այցելութեանը համար շերմեռանդ գոհութիւններ մատուցանես դուն քեզ բոլորովին իր կամացը հրպատակելով, ան ժամանակը անոր փոխարէնը քեզի կը վճարուի, և յաւիտենական կեանքին առաջ նորդոզ շիտակ ճամբուն մէջ քեզի կ'օգնէ :

Թէ որ հիւանդը ծանր ըլլայ, ժողովրդապետը հոս կ'աւարտէ իր խրատը, ապա թէ ոչ՝ կը շարունակէ :

Աւստի Աստուծոյ խրատը հեղութեամբ ընդունէ, վասն զի (ինչպէս որ Պօղոս առաքեալ Արքայեցւոց ժԲ երօրդ գլխուն մէջ կ'ըսէ) Տէրը ո՛վ որ կը սիրէ՝ անիկայ կը խրատէ, ամեն ընդունած օրդին կը տանջէ : Թէ որ սրատիժի մէջ հարցնելու թիւնը

նէք, Մատուած իր որդիքներուն պէս ձեզի հետ կը վարուի. ինչու որ ո՞ր որդին է ան՝ որ հայրը չի պատժէ անիկայ: Մայց թէ որ առանց պատիժի մնալու ըլլաք, որուն որ ամէնքն ալ հաղորդ եղան, ան ժամանակը խորթ կ'ըլլայիք՝ ու չէ թէ հարազատ որդիքներ: Ասե՛ք թէ որ մեր մարմնաւոր հայրերէն՝ որ մեզի պատժող ունինք՝ կ'ամչնանք, ալ ո՞րչափ առաւել հոգիներուն հօրը պիտի հնազանդինք, ուսպրինք: Ինչու որ ասոնք քիչ մը ժամանակ իրենց կամքին պէս կը պատժեն. բայց անիկայ շահու համար, որ իր սրբութիւնը ընդունինք: Մ. յս խօսքերը (աղնիւ եղբայր) սուրբ Վրբին մէջ գրուած են, մեր միթարութեանը ու հրահանգութեանը համար, որ համբերութեամբ ու շնորհակալութեամբ մեր երկնաւոր Հօրը խրատը կրնիք, որ ժամանակ որ թըշուառութեան կերպով իւր ամենամեծ բարութեանը հաճելի երևնայ մեզի այցելութիւն ընելու: Մ. առաւել մէկ մեծ միթարութիւն մը չի կրնար ըլլալ քրիստոնեայ անձինքներուն, քան թէ Վրիստոսի նմանիլ համբերութեամբ ընդդիմութիւններ, նեղութիւններ և հիւանդութիւններ կրելով: Այսին զի Վրիստոս ինքը իր ուրախութեանը չի վերացաւ, հապա առաջ վիշտ կրեց, իր խաչուելէն առաջ իր փառքին չի մտաւ: Մ. սանկ ալ մեր յաւիտենական ուրախութեանը հասնելուն ճշմարիտ ճամբան հոս Վրիստոսի հետ նեղութիւն կրել է, և մեր յաւիտենական կեանքը մանալու դուռը Վրիստոսի հետ

ուրախութեամբ մեռնիլ է . որ կարող ըլլանք կրկին  
 մահուանէ յարութիւն առնելու , և անոր հետ յա-  
 ռիտենական կեանքին մէջ ապրելու : Աւստի՛ այս  
 քու հիւանդութիւնդ համբերութեամբ տանելով՝  
 որ քեզի այսչափ օգտակար է , Աստուծոյ անուամբը  
 քեզ կը յորդորեմ , որ միտքդ բերես Ազրատութեան  
 ժամանակ Աստուծոյ ըրած քու խոստովանութիւնդ :  
 Այլ որովհետեւ այս կեանքէն ետեւ մէկ համար մը  
 կայ տալու ան արգար Ղաատաւորին , որ առանց ա-  
 չառութեան ամէնքը պիտի դատէ . անոր համար  
 կը խնդրեմ որ ինքըզինքդ և քու վիճակդ քննես  
 Աստուծոյ և մարդկան վերաբերեալ . որ դուն  
 քեզ մեղադրելով և դատապարտելով քու յան-  
 ցանքներուդ համար , արժանի ըլլաս Վրիստոսի  
 սիրոյն համար մեր երկնաւոր Հօրը ձեռքէն ողոր-  
 մութիւն գտնալու , ու չէ թէ ամբաստանուիս ու դա-  
 տապարտուիս ան ահարկու դատաստանի օրը : Աւս-  
 տի մեր Հաւատոյ Աստուծոյնքները քեզի կը զրուցեմ  
 որ գիտնաս թէ կը հաւատաս՝ թէ չէ , ինչպէս որ քը-  
 ղիստոնէի մը պարտքն է :

Հոս Պաշտօնեան ան Հաւատոյ Աստուծոյնքները այս կերպով  
 կ'ըսէ .

Աը հաւատաս դուն երկնի ու երկրի Ստեղծող  
 Ամենակարող Հօր Աստուծոյ .

Այլ մեր Տէր Աստուծոյ Վրիստոսի՛ իր միաձին  
 Արգելոյն , որ Սուրբ Հոգւով յղացաւ . Մարիամ

կուսէն ճնաւ , պոնտացի Պիղատոսի դատաւորութեան ժամանակը չարչարուեցաւ , խաշուեցաւ , մեռաւ ու թողուեցաւ . դժոխքը իջաւ , ու երրորդ օրը կրկին յարութիւն առաւ . երկինքը ելաւ , ու Մեծնակարող Հօր Մատուցոյ աջ կողմը նստաւ . և անկէ նորէն պիտի դայ աշխարհիս վերջին կենդանիները ու մեռելները դատելու :

Եւ կը հաւատան դուն Սուրբ Հոգիին , ընդհանրական սուրբ Աշկեղեցւոյն , Սուրբերուն Հաղորդութեանը , մեղաց թողութեանը , մարմինին յարութեանը , և մեռնելէն ետեւ յաւիտենական կեանքին :

Հիւանդը կը սրատասխանէ ,

Եւս սոս ամէնուն հաստատութեամբ կը հաւատամ :

Ան ժամանակը Պաշտօնեան կը քննէ թէ ան ճշմարտապէս զընացած և ամէնուն հետ սիրով է մի , յորդորելով որ բոլորով սրտիւ ներէ զինքը վշտացունսղներուն . և թէ որ ինքը վշտացուցած է նէ մէկը , անկէ թողութիւն խնդրէ . և ուր տեղ որ ինքը վնաս մը կամ անիրաւութիւն մը բրած է , իր կարողութեանը չափ հատուցում ընէ : Եւ թէ որ իր ունեցածը արդէն կարգի դրած չըլլայ , պէտք է անոր զրուցել որ իր կտակը ընէ . և իր խղճմտանքը արգարացունելու համար , և միանգամայն իր կտակակայներուն հանդարտութեանը համար ինչ տալիք ու առնելիք ունի նէ զրուցէ : Բայց շատ աղէկ կ'ըլլայ յաճախակի ամէնուն ծանուցանել , որ մարդս իր առողջութեան ժամանակը իր աշխարհային ստացուածքը կարգի դրած ըլլայ :

Պաշտօնեան թէ որ յարմար դասի , այս խօսքերը Ազօթը դեռ չսկսած զրուցէ :

Պաշտօնեան զանցաւութիւն չի պիտի ընէ Յերմեան դարար յորդորելու , որ հիւանդները իրենց կարողութեանը շափ սղբասներուն առտտաօգէս տան :

Հոս տեղ հիւանդը պիտի յորդորուի իր մեղքերուն համար մասնաւոր Խոստովանութիւն մը ընելու : Թէ որ իր խղճնասները ծանր բանով մը նեղած կ'իմանայ : Նոյն Խոստովանութենէն ետեւ (թէ որ հիւանդը խանարհութեամբ ու սրտով փափաքելու ըլլայ) , այս կերպով Արձակումը կը զրուցէ անոր :

Սեր Տէր Հիսուս Վրիստոս , որ իր Ակեղեցիին իշխանութիւն թողուց անկեղծութեամբ զղջացողները և իրեն հաւատացող մեղաւորները արձրկելու , իր անբաւ ողորմութեամբը թողութիւն շնորհէ քու մին մեղքերուդ . Այլ իր ինծի տուած իշխանութեամբը՝ ես կ'արձրկեմ քեզ քու ամէն մեղքերէդ , և որ , և Արդւոյ , և Սուրբ Հոգւոյն անուամբը . Եւնի :

Եւ յետոյ Քահանան հետեւեալ Մաղթանքը կ'ըսէ :

Ազօթենք .

Ս՛վ ամենողորմ Մտուած , որ քու անբաւ ողորմութեամբդ ճշմարտապէս զղջացողներուն մեղքերը անանկ կը ջնջես , որ մէյմ՝ ալ չես յիշեր . բայց քու ողորմութեանդ աչքը այս քու ծառայիդ վրայ , որ սրտով կը փափաքիններում և թողութիւն գտնալու : Իարեգութ Հայր , նորոգէ ան ամէն բաները անոր օրտին մէջ , որ սատանային խարէութեամբը ու չա-

քու թեամբը, կամ իր մարմնաւոր տկարութեամբը ու  
ցանկութեամբը եղծուած են. պահէ և պահպանէ այս  
հիւանդ անդամը Արեւելեացոյ միութեանը մէջ, նայէ  
իր զղջմանը, ընդունէ իր արտասուքը, մեղմացուր իր  
ցաւը, ինչպէս որ անոր համար քեզի հաճելի կ'ե-  
րեւայ: Աւ որովհետեւ ինքը միայն քու ողորմու-  
թեանդ բողբոջին կ'ապաւինի, անոր առջի մեղքերը  
մի սեպեր, հապա քու Սուրբ Հոգւոյդ զօրութեամ-  
բը զօրացուր անիկայ, և երբոր կամք ընես անիկայ  
այս աշխարհէս վերցունելու, քու խաղաղութեանդ  
ընդունէ, մեր Տէր Հիսուս Քրիստոս քու սիրելի  
Որդւոյդ արժանաւորութեամբը. Ամէն:

Յետոյ Պաշտօնեան այս Սաղմուր կ'ըսէ.

Ի քեզ Տէր յուսացայ. (Սաղ. 52)

Հոյսս քեզի դրի ո՛վ Տէր, յաւիտեան չամչնամ.  
քու արդարութեամբդ փրկէ ու ապրեցուր իս:

Ահանջդ ինձի ծուէ, և իս փրկէ:

Ինձի ապաւէն աստուած, և իս ապրեցունելու  
համար ամբութեան տեղի եղիր. վասն զի իմ հաս-  
տատութիւնս և իմ ապաւէնս դուն ես:

Ո՛վ իմ աստուածս, իս մեղաւորին ձեռքէն ա-  
զատէ, անօրէնին ու անիրաւին ձեռքէն:

Ո՛վ տէր, իմ համբերութիւնս դուն ես. ո՛վ  
տէր իմ մանկութենէս ՚ի վեր իմ յոյսս:

Աս արգանդէն քեզի յանձնուեցայ, իմ մօրս  
որովայնէն դուն ես իմ ապաւէնս, և իմ օգնու-  
թիւնս ամէն ժամանակ քննէ է:

Ես շատերուն որպէս թէ նշաւակ մը եղայ , և ինծի օգնականն ու զօրութիւնն առուողը դունն ես :

Երանս գովութիւնով լեցուի , որ քու փառքդ օրհնեմ , ամէն օր քու մեծվայելչութիւնդ :

Օտերութեան ժամանակս իս մի ձգեր ո՛վ տէր , զօրութիւնս պակսած ժամանակը իս մի թողուր :

Թշնամիներս ինծի ըսին , և իմ անձս պաշարողները մէկ տեղ խորհուրդ ըրին և ըսին , աստուած անիկայ թողուց , հալածենք և անոր հասնինք . ինչու որ անիկայ փրկող մը չի կայ :

Ո՛վ իմ աստուածս , ինէ մի հեռանար , և ո՛վ աստուած , ինծի օգնելու նայէ :

Եւ մընանն ու պակսին անոնք՝ որ իմ անձիս համար չարախօսութիւն կ'ընէին . ամօթով ու պատկառանքով ծածկուին անոնք՝ որ ինծի համար չարութիւն կ'ուզէին :

Ես ամէն ժամանակ պիտի յուսամ , և քու օրհնութիւններդ պիտի շատցունեմ :

Իմ բերանս քու արդարութիւններդ պիտի պատմէ , ամէն օր քու գովութիւններդ :

Ես անանկ խարդախութեան դիտութիւնը չէի դիտեր , հապա տէրոջը զօրութեանը ապաւինեցայ . և ո՛վ տէր , միայն քու արդարութիւններդ յիշեցի :

Ո՛վ իմ աստուածս , իմ մանկութենէս ինծի սորվեցուցիր . վասն որոյ քու արդարութիւններդ պիտի պատմեմ :

Սինչեւ հալուողութեան ու ծերութեան իս մի

Թողուր ո՛վ իմ աստուածս . մինչև որ քու բազուկդ  
ամէն զալու ազգին պատմուի :

Վու ըրած մեծամեծ զօրութիւններդ ու արդա-  
րութիւնդ մինչև երկինքներն են . ո՛վ Աստուած ,  
քեզի նման ո՛վ կայ :

Փառք Հօր , և Որդւոյ , և Հոգւոյն Սրբոյ .

Որպէս էր 'ի սկզբանէ , այժմ , և միշտ , և յաւի-  
տեանս յաւիտենից . Ամէն :

Եւ ասիկայ ալ կ'ըսէ .

Ո՛վ Փրկիչ աշխարհի , որ մեզ քու Խաչովդ ու  
անգին Արիւնովդ ազատեցիր , Փրկէ և օգնէ մեզի  
ո՛վ Տէր , որ խոնարհեալ կ'աղաչենք քեզի :

Յետոյ Պաշտօնեան կ'ըսէ .

Ամենակարողն Աստուած , որ ամէն իրեն ապա-  
ւինողներուն զօրաւոր աշտարակ մըն է , և որուն  
երկինքի ու երկրի և անոր ներքելը եղած ամէն բա-  
ները կը հնազանդին ու կը խոնարհին , հիմայ ու միշտ  
քու պաշտպանութիւնդ ըլլայ . և քեզի իմացունէ  
ու ճանչցունէ որ ուրիշ Անուն չի կայ երկինքին ներ-  
քելը մարդու տրուած , որով դուն կարող ըլլաս ա-  
ռողջութիւն ու փրկութիւն գտնալու , հապա միայն  
մեր Տէր Յիսուս Վրիստոսի Անունը . Ամէն :

Եւ անկէ ետեւ կ'ըսէ .

Աստուծոյ անբաւ ողորմութեանը ու պաշտպա-  
նութեանը կը յանձնենք քեզ : Աստուած օրհնէ և

պահպանէ քեզ : Իր երեսը քեզի երեւցունէ և քեզի  
ողորմի : Տէրը իր երեսը քու վրայդ վերցունէ , և  
քեզի խաղաղութիւն շնորհէ , հիմայ ու յաւիտեան ,  
ԱՄէն :

ԱՊ՝ Օ Թ՝ Վ՝

Մ Ա Ն Ո Ի Կ Հ Ի Ի Ա Ն Դ Ի Ի

Ամենակարող Աստուած և ամենողորմ Հայր ,  
մի միայն Տէր կենդանութեան և մահուան . Խո-  
նարհեալ կ'աղաչենք , նոյէ երկինքէն քու գթու-  
թեան աչքովդ այս մանկանս վրայ , որ հիւանդու-  
թեան անկողինը ինկած է . Վրու փրկութիւնովդ  
սցցելու եղիր անոր ո՛վ Տէր . աղատէ անիկայ քու  
պատեհ ժամանակիդ իր մարմնաւոր նեղութենէն ,  
և քու գթութեամբդ անոր հոգին փրկէ . որ եթէ  
հաճելու ըլլաս անոր կեանքը հոս երկարելու , ինքը  
կարող ըլլայ քեզի համար ապրելու , և քու փառքիդ  
մէկ գործիք մը ըլլալու , հաւատարմաբար քեզի ծա-  
ռայելով և բարիք ընելով իր կեանքին մէջ . ապա  
թէ ոչ՝ ընդունէ անիկայ քու երկնային օթեւաննե-  
բուդ մէջ , ուր որ Հիսուս Վրիստոսով ննջողնե-  
րուն հոգիները յաւիտեանական հանգստութիւնը ու  
երջանկութիւնը կը վայելեն : Ար խնդրենք ասիկայ  
ո՛վ Տէր քու բարեգթութենէդ , մեր Տէր Հիսուս  
Վրիստոս քու Որդւոյդ շնորհքովը , որ կենդանի է  
և կը թագաւորէ քեզի՝ և Սուրբ Հոգւոյն հետ միշտ  
մէկ Աստուած մը , յաւիտեան . ԱՄէն :

Ազօթք խիստ ծանր հիւանդի .

Հայր ողորմութեան , և Աստուած ամենայն մը-  
 խիթարութեան , կարօտութեան ժամանակնիս մեր  
 մի միայն օգնականը . Այս քու ծառայիդ համար քե-  
 ղի օգնութեան կը դիմենք , որ հիմայ քու ձեռքիդ  
 ներքեւը մարմնով չարաչար կը տանջուի : Ա՛աղաչենք  
 ո՞վ Տէր՝ ողորմութեամբ նայէ անոր վրայ . և որչափ  
 որ արտաքին մարդը կ'ապականի , այնչափ իր ներ-  
 քին մարդը հաստատուի քու շնորհքովդ և Սուրբ  
 Հոգւոյն զօրութեամբ : Ի՛ր անցեալ կեանքին ա-  
 մէն մեղքերուն համար ճշմարիտ զղջում շնորհէ , և  
 հաստատ հաւատք՝ Հիսուս Վրիստոս քու Արդւոյդ  
 վրայ . որ իր մեղքերը քու ողորմութեամբդ ջնջուին ,  
 և իր քաւութիւնը երկինքի մէջ հաստատ կնքուի ,  
 դեռ ինքը այս աշխարհէս չելած ու անյայտ չեղած :  
 Վիտենք ո՞վ Տէր՝ որ ամէն բան քեզի հնարաւոր է ,  
 և թէ որ ուզես՝ կրնաս ասիկայ բժշկել , և մեզի հետ  
 ապրելու երկար կեանք շնորհել . բայց իր մահուա-  
 նը ժամանակը մօտենալը հիմայ երեւալուն համար ,  
 կ'աղաչենք անանկ պատրաստէ և զօրացուր անիկայ  
 մահուան ժամուն դէմ , որ խաղաղութեամբ ու քու  
 շնորհքովդ այս աշխարհէս ելլելէն ետեւ , իր հո-  
 դունուի , մեր Տէր և Փրկիչ՝ Հիսուս Վրիստոս քու  
 մի միայն Արդւոյդ արժանաւորութեամբը ու միջնոր-  
 դութեամբը . Ամէն :

Յանձնարարական Աղօթք մահուան կէտին մէջ .

Ամենակարող Աստուած , որուն քով կ'ապրին բոլոր արդարներուն հոգիները իբնց երկրաւոր բանտերէն ազատելնուն ետեւ . Սննք խոնարհութեամբ քու ձեռքդ կը յանձնենք այս մեր սիրելի եղբօրը քու ծառայիդ հոգին , որպէս թէ մէկ հաւատարիմ Ատեղծողի մը և ամենողորմ Փրկիչի մը . սրտեռանդ աղաչանօք խնդրելով որ անիկայ պատուական ըլլայ քու առջիդ : Առանձնակայ կ'աղաչենք ան անարատ Վառին արիւնովը , որ մեռաւ աշխարհիս մեղքերը վերցունելու . որպէս զի ասիկայ այս ցաւալի և թշուառ աշխարհիս մէջ ո՛ր և իցէ մարմնական ցանկութիւններով , կամ սատանայական խաբէութիւններով ունեցած աղտեղութիւններէն մաքրուած ու սրբուած , անարատ և ամբիժ քեզի ներկայանայ : Այլ մեզի մնացողներուս սորվեցուր որ այս կամ ուրիշ ամէն օրուան մահկանացու կեանքիս տեսարաններէն տեսնանք մեր վիճակին ինչպէս տրկար ու անհաստատ ըլլալը . և քանի որ հոս ենք՝ անանկ մեր կեանքին օրերը համբենք , որ միշտ սրտի մտօք մտվընիս ան սուրբ ու երկնային իմաստութեանը տանք , որ վերջը մեզ յաւիտենական կեանքին առաջնորդէ , մեր Տէր Հիսուս Վրիստոս քու միածին Արդւոյդ արժանաւորութեամբը . Ամէն :

Աղօթք մտքով կամ խղճմտանքով նեղեալ անձերուն համար .

Ո՛վ ամենօրհնեալ Տէր , Հայր ողորմութեան ,

և Մատուած ամենայն մտիթարութեան . կ'աղաչենք  
 նայէ քու ողորմութեամբդ ու գթութեամբդ այս քու  
 տառապեալ ծառայիդ վրայ . դուն անոր դէմ դառն  
 բաներ կը գրես . անոր առջի անօրէնութիւնները ի-  
 րեն կ'իմացունես . քու բարկութիւնդ անոր վրայ կը  
 ծանրանայ , և իր հոգին նեղութիւններով լեցուն  
 է . բայց ո՛վ ամենողորմ Տէր , դուն՝ որ քու սուրբ  
 Պատգամներդ մեր գիտութեանը համար գրեցիր ,  
 որ մենք համբերութիւնով ու սուրբ Վիքբերուն  
 մտիթարութեամբը յոյս ունենանք . շնորհէ անոր  
 մէկ արդար ճանաչողութիւն մը որ ինքըզինքը և  
 քու սպառնալիքներդ ու խոստմունքներդ աղէկ քըն-  
 նէ . որ ոչ քու վրայ ունեցած յոյսը կտրէ , և ոչ ա-  
 նիկայ քենէ՝ ի զատ ուրիշ բանի վրայ դնէ : Օջրա-  
 ցոր անիկայ իր ամէն փորձութիւններուն դէմ , և  
 բոլոր անոր տկարութիւնները առողջացուր : Տջախ-  
 ջախած եղեգը մի՛ փշրեր , և պըլպըլացող պատրոյկը  
 մի՛ մարեր : Վարկութիւնով քու բազմագութ ողոր-  
 մութիւններդ մի խափաներ . հապա ուրախութիւն  
 ու ցնծութիւն լսել տուր , որ քու ջախջախած ոսկոր-  
 ներդ ցնծան : Մղատէ անիկայ թշնամիին երկիւղէն ,  
 և քու երեսիդ լոյսը անոր վրայ փայլեցուր , և անոր  
 խաղաղութիւն շնորհէ , մեր Տէր Յիսուս Վրիստո-  
 սի արժանաւորութեամբը ու միջնորդութեամբը .  
 Մ.Պ.ն .



# ԱՄԵՆԱՄԵՆ

## ԸՄՆԵՆԵՍՈՒՐԻ ԼՇՂՈՐԴՈՒԹԻՒՆ

### ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀԻՒԱՆԴԻ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ

Բոլոր մահկանացու մարդիկները բազմաատակ վտանգներու, փորձութիւններու և հիւանդութիւններու տակ ըլլալնուն, և այս կեանքէն ելլելնուն ժամանակը անգամ անատոյգ ըլլալուն, և ամէնքը միշտ մահուան պատրաստ գտնուելու համար, երբոր Ամենակարօղն Աստուած կը բարեհաճի զանոնք կանչելու, Ժողովրդապետները պէտք է որ երբեմն երբեմն (և մանաւանդ ժամտախտի կամ ուրիշ ժահահոտ հիւանդութեան ժամանակ) փութով յորդորեն, որ Ժողովուրդը յաճախակի ընդունի մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի ամենասուրբ Մարմնոյ և Արեան Հաղորդութեան Խորհուրդը, երբոր Եկեղեցւոյ մէջ հրապարակաւ կը մատուցուի, որպէս զի այսպէս ընելով յանկարծ այցելութեան ժամանակ առաւել քիչ պատճառ ունենան անհանգիստ ըլլալու անոր կարօտութեանը համար: Բայց թէ որ հիւանդը Եկեղեցի երթալու կարող չըլլայ, և փափաքի տունը Հաղորդութեան Խորհուրդը ընդունիլ, ան ժամանակը պէտք է որ առաջուց Ժողովրդապետին իմացունէ, և իրեն հետ Հաղորդուող ուրիշ քանի հոգի ըլլալն ալ, որ (իրեք կամ քսնէ երկու հոգի պիտի ըլլան): և հիւանդին տունը վայելուչ տեղ մը բոլոր հարկաւոր եղածներովը պատրաստուած ըլլայ, որ Ժողովրդապետը կարող ըլլայ յարգութեամբ մատակարարելու, ինքը հոս ամենասուրբ Հաղորդութեան Խորհուրդը կը կատարէ հետեւեալ Մաղթանքը, Ընթերցուածը և Աւետարանը սկսելով:

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք :

Մենակարող և յաւիտենական Մատուած ,  
 Ստեղծող ազգի մարդկան , որ սիրածդ կը խրատես  
 և ընդունածդ կը տանջես , Ա'ազաչենք ողորմէ այս  
 քու ծառայիդ , որ քու ձեռքովդ կը խրատուի . և  
 շնորհէ որ իր հիւանդութիւնը համբերութեամբ տա-  
 նի , և իր մարմնաւոր առողջութիւնը վերստին ըս-  
 տանայ ( թէ որ քեզի հաճելի երեւնայ ) , և երբոր  
 հոգին մարմնոյ կապերէն արձրկուի , անիկայ անա-  
 րատ քեզի ներկայանայ , մեր Տէր և Փրկիչ Յի-  
 սուս Վրիստոսի շնորհքովը . Ա'էն :

Թուղթ Պօղոսի . Եֆ. ա . Ժբ . 5 , 6 .

Արդեակա՛ տէրոջը խրատներէն մի թու՛նար , և  
 անկէ յանդիմանուելով սիրտդ չի կտտրի : Ինչու որ  
 Տէրը ան որ կը սիրէ՝ կը խրատէ , ամէն որդի կը  
 տանջէ՛ որ ինքը կ'ընդունի :

Ս . Աւետարան . 3-ւէ . Է . 24 .

Ղշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի . թէ՛ ան որ  
 իմ խօսքս կը լսէ , և կը հաւատայ անոր որ իս խրկեց ,  
 յաւիտենական կեանքը կ'ընդունի , ու չի դատա-  
 պարտուիր . հապա մահէն կեանքը անցաւ :


Արճնցմէ ետեւ Քահանան Հաղորդութեան նախակար-  
 գեալ կանոնը կը շարունակէ , որ այսպէս կ'ըսկսի ( Դուք որ  
 ճշմարտապէս և բոլորով սրտիւ ձեր անօրէնութիւններէն  
 զըջցած էք և այլն : )

Ամենասուրբ Հաղորդութեան Խորհուրդը մատակարարեբլ ժամանակը , Քահանան առաջ ինքը կը հաղորդուի , ու յետոյ հիւանդին հետ հաղորդուելու անձինքները կը հաղորդէ , և ամէնէն ետքը հիւանդը :

Թէ որ մէկը խիստ ծանր հիւանդութեան պատճառաւ , կամ Ժողովրդապետին ժամանակաւ չխնայուներով , կամ իրեն հետ ուրիշ հաղորդողներ չի գտնուելուն , և կամ ուրիշ ո՛ր և իցէ արգելքով մը կարող չըլլայ Քրիստոսի Մարմնոյ և Արեան Խորհուրդը ընդունելու , Ժողովրդապետը հիւանդին պիտի խնայուէ , որ եթէ ինքը ճշմարտապէս իր մեղքերէն կը զզլայ , և հաստատ կը հաւատայ որ Յիսուս Քրիստոս իրեն համար խաչին վրայ մեռաւ , և իր փրկութեանը համար արիւն թափեց , ջերմեռանդաբար մտքը բերելով իր անկէ ընդունած բարութիւնները , և անոնց համար սրտի մտօք գոհութիւններ մատուցանելով , ինքը կերած ու խմած կ'ըլլայ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի Մարմինը և Արիւնը իր հոգւոյն օգտին համար , թէեւ նոյն Խորհուրդը բերնով չընդունի :

Քահանան հիւանդի այցելութեան և միանգամայն Հաղորդութեան կանոնը կատարելու ժամանակը երկար չըլլալու համար , կը թողու հիւանդի Այցելութեան կանոնին Սաղմոսը ( Ի քեզ Տէր յուսացայ ) , և անմիջապէս կ'ըստի Հաղորդութեան Մատակարարութիւնը :

Թէ որ հիւանդը մեծ փափաքով ուզելու ըլլայ Հաղորդուիլ , և մահտարաժամի , ժահահոտ քրտինքներու , կամ ուրիշ տարափոխիկ հիւանդութեան ժամանակ երբոր մը ձաւորներէն կամ ուրիշ հաւատացեալներէն նոյն գարշահոտ հիւանդութեան երկիւղով չեն ուզեր մէկ տեղ հաղորդուիլ , ան ժամանակը Պաշտօնեան միայն հաղորդուի , հիւանդին Հաղորդութեան Խորհուրդը մատակարարելու ժամանակը :



# ԱՄԱՄԱ

## Թ Ե Ղ Մ Ե Կ

Պէտք է գիտնալ որ հետեւեալ պաշտօնը չի կատարուիր  
առանց Մկրտութեան, կամ բանադրեալ, և կամ անձնաս-  
պանութեամբ մեռած անձինքնեքուն հասար :

Քահանաները և Դպիրները գերեզմանատանը առջին  
ննջեցեալը գիմաւորելով, և անոր առջեւէն կամ Եկեղեցի  
կամ գերեզմանը երթալով կ'ըսեն կամ կ'երգեն .

Ես եմ յարութիւն և կեանք, կ'ըսէ տէրը, ան  
որ ինծի կը հաւատայ՝ թէ և մեռնելու ալ ըլլայ՝  
կ'ապրի, և ամէն ո՛վ որ կենդանի է՝ ու ինծի կը  
հաւատայ, յաւիտեան չի պիտի մեռնի . (Յով. Ժա .  
25, 26 :

Ես գիտեմ որ իմ փրկիչս կենդանի է, որ ինքը  
վերջին օրը երկրին վրայ պիտի կայնի : Այլ իմ մորթս  
իմ մարմինիս հետ ապականուելէն ետեւ, իմ մար-  
մինովս զատուած պիտի տեսնեմ, որն որ ես ինքս  
պիտի տեսնեմ, ու իմ աչվըներս պիտի տեսնան, ու  
չէ թէ ուրիշը . (Յօբ . 25, 26, 27 :

Ես աշխարհս բան մը չի բերինք, և յայտնի է  
որ բան մըն ալ չենք կրնար տանիլ : Տէրը տուաւ, և  
տէրը առաւ . օրհնեալ ըլլայ տէրօջը անունը . (Լ .  
Տիմ. զ . 7 : Յօբ . ա . 21 :

Եկեղեցի մանաղէն ետեւ այս հետեւեալ Սաղմոսներուն մէկը  
կամ երկուքն ալ կը կարդացուի .

Ասացի թէ պահեցից . ( Սաղ . 118 : )

Բսի թէ՛ իմ ճամբաներս պահեմ . որ լեզուովս  
մեղք չի գործեմ :

Պահուպան դրի իմ բերնիս , մեղաւորին իմ առ-  
ջիս հակառակած ժամանակը :

Խուլ եղայ ու խոնարհեցայ . աղէկութենէ լը-  
ռեցի , և իմ ցաւերս իմ մէջս նորոգեցան :

Իմ սիրտս ներսիդիս բորբոքեցաւ , և իմ խոր-  
հուրդներուս մէջ կրակ վառեցաւ :

Իմ լեզուովս խօսեցայ և ըսի , ո՞վ տէր , ցըցուր  
ինձի իմ վերջս , և իմ օրերուս թիւին որչափ ըլլալը՝  
որ գիտնամ թէ որչափ բան պակասած է ինէ :

Ահա իմ օրերս չափով դրիր , և իմ զօրութեանս  
կարողութիւնը իբր թէ ոչինչ է քու առջիդ . սա-  
կայն ամէն մտեղէն մարդ ոչինչ է :

Իրաւցունէ մարդը պատկերի մը պէս կը պըտը-  
տի , բայց պարապ տեղը անհանգիստ կ'ըլլայ . կը  
դանձէ և ո՞վ պիտի ժողուէ՝ չի գիտեր :

Բայց արդ՝ ո՞վ է իմ համբերութիւնս , չէ թէ  
դուն ո՞վ տէր . կամ իմ զօրութեանս կարողութիւ-  
նը , որ քենէ է :

Իմ ամէն անօրէնութիւններէս իս փրկեցիր .  
անզգամներուն նախատինքը ըրիր իս :

Խուլ եղայ , ու բերանս չի բացի , ինչու որ դուն  
ըրիր :

Հեռացուր ինէ իմ տանջանքներս, ինչու որ քու  
ձեռքիդ զօրութենէն ես տկարացայ :

Սեղքին համար յանդիմանելով մարդը խըրա-  
տեցիր, ոստայնի պէս անոր անձը մաշեցուցիր . սա-  
կայն ամէն մարդ փուճ է :

Ո՛վ տէր, լսէ իմ աղօթքիս, ահանջ դիր իմ  
խնդրուածքներուս . արցունքներուս մի լսեր :

Քու առջիդ պանդուխտ եմ ես, հիւր մը և ան-  
ցաւոր մը իմ ամէն նախնիքներուս պէս :

Թող տուր ինծի որ հանգստանամ դեռ չի գա-  
ցած, ինչու որ մէյմ' ալ չի պիտի գտնուիմ :

Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ .

Որպէս էր 'ի սկզբանէ, այժմ, և միշտ, և յա-  
ւիտեանս յաւիտենից . Ամէն :

Տէր ապաւէն . (Սաղ . ձ[Թ] :

Ո՛վ տէր, դուն մեր ապաւէնը եղար ազգէ մին-  
չեւ ազգ . լեռները չի հաստատուած, երկիրը ու բո-  
լոր աշխարհը չստեղծուած, յաւիտենից մինչեւ յա-  
ւիտեանս դուն ես աստուած :

Սարդը թշուառութեան կը դարձունես, և կ'ը-  
սես՝ ինծի դարձէք մարդկանց զաւկերներ :

Հազար տարին տէրոջը աչքին առջին երեկուան  
անցնող օրին պէս է, գիշերուան մէկ պահուն պէս .  
և անոնց տարիները անարգութիւնով պիտի ըլլան :

Ղուտուանց կանանչ խոտին պէս պիտի բուս-  
նին . առտուանց կանանչ խոտի պէս պիտի զուար-

Ճանան ու ծաղկին . իրիկուան զէմ պիտի թողմին ,  
չորնան ու իյնան :

Գու բարկութենէդ պակսեցանք , և քու սրտա-  
մըտութենէդ խռովեցանք :

Սեր անօրէնութիւնները քու առջիդ դրի , և  
մեր կեանքը քու կրեսիդ լոյսին :

Սեր ամէն օրերը պակսեցան , և քու բարկու-  
թենէդ խռովեցանք :

Սեր տարիներուն ժամանակը սարգի նման ան-  
դադար է , ու անոնց մէջ մեր տարիներուն թիւը  
եօթանասուն տարի է . թէ որ քիչ մըն ալ էլելի  
ըլլայ՝ ութսուն տարի . անկէ ինչ որ աւելի ըլլայ  
ցաւօք ու հեծութեամբ է :

Սեր վրայ հեզութիւն եկաւ ու խրատեցանք .  
արդ՝ ո՞վ կրնայ քու բարկութեանդ զօրութիւնը  
դիտնալ . կամ քու երկիւղէդ քու սրտմտութիւնդ  
համրել :

Եսպէս քու աջ ձեռքդ ինծի ցըցուր , և խո-  
նարհ սրտով եղողներուն քու իմաստութիւնդ :

Գարձիր ո՞վ տէր , մինչև և՛ րբ . քու ծառանե-  
րովդ միտիթարուէ :

Եւտուանց քու ողորմութիւնովդ լեցուեցանք .  
ցնծացինք և ուրախ եղանք մեր կեանքին ամէն օրե-  
րուն մէջ :

Ուրախ եղանք ան օրերուն տեղը՝ որ մեզ խոնար-  
հեցուցին , և ան տարիներուն տեղը՝ որ չարչարանք  
տեսանք :

Ո՛վ տէր, քու ծառաներուդ նայէ, և քու ձեռքիդ գործքերուն, և անոնց որդիքներուն առաջնորդէ. և մեր տէր աստուծոյ լոյսը մեր վրայ ըլլայ:

Ո՛վ տէր, մեր ձեռքին գործքերը մեզի ուղիղ ըրէ. մեր ձեռքին գործքերը մեզի յաջողէ:

Փառք և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ.

Որպէս էր ՚ի սկզբանէ, այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Յետոյ կը կարդացուի Պօղոս Առաքելալին Արմեթացւոց գրած առաջին թուղթէն առնուած Հնթերցուածը.

Գլուխ. Ժ. 20.

Արդ՝ Քրիստոս Հիմայ մեռելներէն յարութիւն առած է՝ ննջեցելոց առաջին պտուղը: Ինչու որ մարդով եղաւ մահը, ու մարդով ալ մեռելներուն յարութիւնը: Ինչպէս որ ազամով ամէնքը կը մեռնին, անանկ ալ քրիստոսով ամէնքը կենդանի պիտի ըլլան: Ամէն մէկը իր կարգով. առաջ՝ քրիստոս, ու ետքը՝ քրիստոսիները անոր գալու ատենը: Առանկէ ետեւ վախճանը, երբոր թագաւորութիւնը պիտի տայ աստուծոյ և հօրը ձեռքը, որ ժաւմանակ որ պիտի խափանէ բոլոր իշխանութիւնները, և բոլոր պետութիւնը ու զօրութիւնը: Այսն զի անոր պէտք է թագաւորութիւն ընել, մինչեւ որ բոլոր թշնամիները իր ոտքերուն ներքեւը դնէ: Այլ չին թշնամին՝ որ պիտի խափանի, մահն է. և ամէն բան անոր ոտքերուն տակը հնազանդեցուց: Իսկ

երբոր կ'ըսէ, թէ՛ ամէն բան անոր հնազանդած է, յայտնի է թէ բաց ՚ի անկէց՝ որ ամէնը անոր հնազանդեցուց : Բայց երբոր ամէնը անոր հնազանդըլայ, ան ժամանակը ինքը որդին ալ կը հնազանդի անոր՝ որ ամէնը իրեն հնազանդեցուց . որ աստուածըլայ ամէնը ամէն բանի մէջ : Զապա թէ չէ՛ ի՞նչ պիտի ընեն անոնք՝ որ մեռելներուն համար կը մըկըրտուն, թէ որ իրաւցունէ մեռելները յարութիւն չեն առներ . ուրեմն ինչո՞ւ անոնց համար կը մկըրտուն : Ինչո՞ւ համար մենք ալ ամէն ժամանակ նեղութիւն կը քաշենք . և ամէն իժիր կը մեռնինք . երգում կ'ընեմ եղբայրներ՝ ձեր պարծանքովը որ ես ունիմ մեր տէր յիսուս քրիստոսով : Թէ որ մարդու համար եփեսոսի մէջ գազաններու կոխի մէջըլայի, ի՞նչ օգուտ էր ինձի, թէ որ մեռելները յարութիւն չառնեն . ուտենք խըմենք, ինչու որ վաղը կը մեռնինք : Մի խարուէք . գէշ խօսքերը քաղցր բարքերը կ'ապականեն : Արթնցէք արդարութիւնով, ու մեղք մի գործէք . ինչու որ ոմանք աստուծոյ գիտութիւնը չունին, ձեզ ամէնցունելու համար կ'ըսեմ : Բայց մէկը ըսելու ըլլայ, թէ՛ մեռելները ի՞նչ պէս յարութիւն կ'առնեն, կամ թէ ի՞նչ մարմինով կուգան : Ա՛նմիտ՝ դուն որ անիկայ կը ցանես, չի կենդանանար՝ թէ որ չի մեռնի : Այլ ան որ կը ցանես, չէ՛ թէ ան մարմինը որ պիտի ծնանի՝ կը ցանես, հապա մերկ հատ մը, թէ ցորենի ըլլայ, և թէ ուրիշ սերմերու : Այլ աստուած անոր մարմին կու-

տայ՝ ինչպէս որ կ'ուզէ, ու ամէն մէկ սերմերուն իր մարմինը: Ամէն մարմին մէկ մարմին չէ. հապա՛ մարգուն մարմինը ուրիշ է, ու անասուններուն մարմինը՝ ուրիշ, ու թռչուններուն մարմինը՝ ուրիշ, ու ձուկերուն մարմինը՝ ուրիշ: Արկնաւոր մարմիններ ալ, երկրաւոր մարմիններ ալ, բայց երկնաւորներուն փառքը ուրիշ է, ու երկրաւորներուն փառքը՝ ուրիշ: Արեւին փառքը ուրիշ է, ու լուսինին փառքը՝ ուրիշ, սատղերուն փառքը՝ ուրիշ, ու աստղ մը աստղէ էջիլ է փառքով: Անանկ ալ մեռելներուն յարութիւնը. պակհանութիւնով կը ցանուի, ու առանց պակհանութեան յարութիւն կ'առնէ. Անարգութիւնով կը ցանուի, ու փառքով յարութիւն կ'առնէ. տկարութիւնով կը ցանուի, ու զօրութիւնով յարութիւն կ'առնէ. Մունչ ունեցող մարմին կը ցանուի, ու հոգի ունեցող մարմին յարութիւն կ'առնէ. թէ որ շնչաւոր մարմին կայ նէ՛ հոգեւոր ալ կայ: Ասանկ ալ գրաւած է, պոջի մարգը ագամ կենդանի շունչ եղաւ, երկրորդ ագամը կենդանի ընող հոգի: Բայց չէ թէ առաջ հոգեւորը, հապա շնչաւորը, ու ետքը հոգեւորը: Առջի մարգը երկրէն է՝ հողեղէն. բայց երկրորդ մարգը՝ տէր է, երկինքէն: Ինչպէս որ ան հողեղէնը, անանկ ալ մերք հողեղէններս, և ինչպէս ան երկնաւորը, անանկ ալ երկնաւորները: Աւ ինչպէս որ հողեղէնին պատկերը հագանք, երկնաւորին պատկերն ալ պիտի հագնինք: Սիայն թէ աս կ'ըսեմ եղբայրներ՝ որ մարմին ու արիւն աստու-

ծոյ արքայութիւնը չեն կրնար ժառանգել . ոչ ալ  
ապականութիւնը անապականութիւնը կը ժառան-  
գէ : Ուստի խորհուրդ մը ըսեմ ձեզի . ամէնքս պիտի  
ննջենք , բայց ամէնքս չի պիտի նորոգուինք . յան-  
կարծակի աչք գոցել ըմբռնու մէջ՝ վերջին փողին  
ժամանակը . վասն զի փողը կը չալուի , ու մեռել-  
ները յարութիւն պիտի առնեն առանց ապականու-  
թեան , և մենք կը նորոգուինք : ԱրովՏետեւ պէտք է  
որ սս ապականութիւնս անապականութիւն հագնի ,  
ու սս մահկանացուս անմահութիւն հագնի : Բայց  
երբոր այս մահկանացուս անմահութիւն հագնի , ու  
այս ապականութիւնս անապականութիւն , ան ժա-  
մանակը կը կատարուի ան բանը որ գրուած է , թէ՛  
մահը յաղթութիւնով կը լլուեցաւ : Ո՛վ մահ ո՞ւր է  
քու յաղթութիւնդ . ո՛վ գերեզման ո՞ւր է քու կը-  
ճելդ : Մահին կճելը՝ մեղքն է , ու մեղքին զօրու-  
թիւնը՝ օրէնքը : Բայց գոհութիւն աստուծոյ , որ մե-  
զի յաղթութիւն տուաւ , մեր տէր յիսուս քրիստոսի  
ձեռքովը : Ուստի իմ սիրելի եղբայրներս , հաստատ  
եղիք , անշարժ կեցէք , ամէն ժամանակ տէրոջը  
գործքերուն մէջ յառաջացէք . գիտնաք որ ձեր  
աշխատանքները տէրոջը առջին պարապ չէ :

Երբոր գերեզմանը կը հասնին , մարմինը հողը գրուե-  
լու պատրաստութիւնները ըլլալու ժամանակը , Քահանան  
կ'ըսէ . կամ Քահանան ու Դպիրները կ'երգեն .

Մարդը՝ որ կնիկէ կը ծնանի , շատ կարճ կեանք

ունի ապրելու, ու թշուառութիւնով լեցուն է: Օտար կի կի մը պէս կ'ելլէ ու կը կտրուի, ստուերի մը պէս կը փախչի, ու բնաւ հաստատութիւն չունի. (Ճօր. Ժդ. 1, 2):

Կենդանութեան մէջ մահուան դռանը մէջն ենք. ուրկէ օգնութիւն խնդրենք, չէ թէ քենէ ո՛վ տէր, որ արդարապէս մեր մեղքերուն համար բարկացած ես:

Սակայն ո՛վ Տէր՝ Մատուած սրբութեան, ո՛վ ամենակարող Տէր, ո՛վ ամենօրհնեալ և ողորմած Փրկիչ, մի մատնէր մեզ յաւիտենական մահուան դռն պատժոյն:

Դուն գիտես ո՛վ Տէր՝ մեր սրտին գաղտնիքները. քու գթութեան ականջներդ մի գոցեր մեր աղաչանքներուն. հապա փրկէ մեզ ո՛վ ամենասուրբ Տէր, ո՛վ ամենազօր Մատուած, ո՛վ ամենասուրբ և ողորմած Փրկիչ, դուն ո՛վ ամենընտիր Գատաւոր յաւիտենական, մի թողուր մեզ վերջին ժամուն, որ չըլայ թէ մահուան ցաւերուն համար քենէ զատուինք:

Մեռելին վրայ հողը տուած ժամանակին քահանան կ'ըսէ.

Արովհետեւ Մենակարողն Մատուած հաճեցաւ իւր անբաւ ողորմութեամբը այս մեր մեռեալ ազնիւ եղբօրը հողին իւր քովը առնելու. ուստի հիմայ իւր մարմինը հողին կը յանձնենք. հողը հողին, մոխիրը մոխիրին, փոշին փոշին. յաւիտենական

կենաց յարութեանը հաստատ և աներկբայ յոյսովը,  
մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը: որ մեր խո-  
նարհ մարմինը պիտի նորոգէ, իւր փառաւոր մարմ-  
նոյն կերպարանակից ըլլալու, ան զօրութիւնովը՝  
որով ամէն բան իրեն հնազանդեցունելու կարող է:

Յետոյ կ'ըսուի կամ կ'երգուի .

Երկինքէն ձայն մը լսեցի՝ որ ինծի կ'ըսէր . գրէ,  
երնէկ ան մեռելներուն՝ որ շուտ մը հիմայ տէրօջմով  
ննջեցին . հոգին ասիկայ կ'ըսէ, ինչու որ իրենց աշ-  
խատութենէն հանգչեցան . (Հայփ . ԺԴ . 13 :

Յետոյ Քահանան կ'ըսէ .

Տէր, ողորմէ՛ մեզի .

Վրիստոս, ողորմէ՛ մեզի .

Տէր, ողորմէ՛ մեզի .

Ո՛վ մեր Հայրը՝ որ երկինքն ես, քու անունդ  
սուրբ ըլլայ . Վու թագաւորութիւնդ գայ . Վու  
կախքդ ըլլայ, ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկ-  
րիս վրայ . Մեր ամէն աւուր հացը այսօր տուր մեզի,  
Եւ ներէ մեզի մեր պարտքերը, ինչպէս որ մենք ալ կը  
ներենք մեր պարտականներուն . Եւ մեզ փորձու-  
թեան մի տանիր, հապա չարէն ազատէ մեզ . Ամէն :

Քահանան .

Ամենակարող Աստուած, որ քու քովդ կ'ապրին  
Տէրօջմով այս աշխարհէս ելլողներուն հոգիները .

և որ քու քովդ ան հաւատարեալներուն հոգիները մարմինին ծանրութենէն ազատելուն ետև ցըն-  
 ծութեան և ուրախութեան մէջ են . թ իրմեռանդ  
 գոհութիւններ կը մատուցանենք . քեզի , որ հաճեցար  
 այս մեր եղբայրը այս մեղանչական աշխարհիս թը-  
 շուառութիւններէն խտրելու . նաև կ'աղաչենք . քե-  
 ղի որ . քու բարեգթութեամբդ հաճիս . քիչ ժամանա-  
 կէն . քու ընտրեալներուդ թիւը լրման ընելու , և քու  
 թագաւորութիւնդ շուտով հասցունելու . որ մենք  
 ալ . քու սուրբ անուանդ ուղիղ հաւատքովը այս աշ-  
 խարհէս ելլողներուն հետ մէկ տեղ հոգւոյ և մարմ-  
 նոյ կատարեալ վախճանը ու երջանկութիւնը վայել-  
 լենք , քու յաւիտենական և անվախճան փառքիդ  
 մէջ , մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ո՛վ ամենողորմ Աստուած , մեր Տէր Հիսուս  
 Վրիստոսի Հայրը , որ յարութիւն է և կեանք . ու-  
 թուն ո՛վ որ հաւատարու ըլլայ , թէև մեռնի՝ կ'ապրի .  
 և ո՛վ որ կենդանի է՝ և անոր կը հաւատայ՝ յաւիտեան  
 չի պիտի մեռնի . որ ինքը նաև իր սուրբ Պօղոս առաւ-  
 քեալին ձեռքովը սորվեցուց մեզի , որ իրմով ննջող-  
 ներուն համար չի տրտմինք , ուրիշ յոյս չունեցող-  
 ներուն պէս . Խոնարհեալ կ'աղաչենք քեզի ՚վ  
 Հայր , վերցուր մեզ մեղաց մահուանէ արդարու-  
 թեան կեանքին , որպէս զի երբոր այս կեանքէն հը-  
 րաժարինք , իրմով հանգստութիւն դանանք , ինչ-

պէս որ հիմայ կը յուսանք այս մեր եղբայրը կը գըտնայ . և որ վերջին յարութեան օրը քեզի հաճելի երեւանք , ու ան օրհնութիւնը ընդունինք , որ քու սիրելի Արդիդ պիտի տայ քեզ սիրողներուն և քենէ վախցողներուն՝ ըսելով . Այլէք իմ հօրս օրհնած զաւկըները , աշխարհիս սկիզբէն ձեզի համար պատուաստուած արքայութիւնը ժառանգեցէք . Շնորհէ ասիկայ կ'աղաչենք ո՞վ ամենողորմ շայր , մեր Սիջնորդ և Վրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհքովը .  
 Ա՛՛՛՛ն .

Սեր տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը , Աստուծոյ սէրը , և Սուրբ շոգւոյն հաղորդութիւնը միշտ ամէնուս հետ ըլլայ . Ա՛՛՛՛ն : (Բ . Արն . Ժգ . 15 :)

### ԳՆՈՒԹԻՒՆ

Յ Ե Տ ՈՐԴԵԾՆՈՒԹԵԱՆ ԿԱՆԱՆՑ

Կնիկ մը իր տղաբերքի սովորական օրերը անցրելէն ետեւ , պէտք է որ պարկեշտ կերպով հագուած Եկեղեցի երթայ , և հոն յարմար տեղ մը ծնրագրած՝ ուր որ սովորած է կամ թեմակալ Եպիսկոպոսը կ'որոշէ : Քահանան կ'ըսէ անոր .

Արովհետեւ Ա՛՛մենակարողն Ա՛՛ստուած իւր անբաւ բարեգթութեամբը քեզի մէկ անվտանգ աղատութիւն մը շնորհեց , և տղաբերքի ան մեծ վտանգէն քեզ ազատեց , ուստի դուն պարտիս ջերմեռանդ գոհութիւններ մատուցանել Ա՛՛ստուծոյ և ըսել .

Յետոյ Քահանան ձժ. Դ. երորդ Սաղմուր կ'ըսէ :

Աիրեցի , զի լուիցէ տէր .

Տէրը սիրեցի , ինչու որ իմ աղօթքիս ձայնն՝  
պիտի լսէ . ինչու որ իր ականջը ինձի խոնարհեցուց ,  
ու ես իմ օրերուս մէջ անոր կանչեցի :

Ահա հուան ցաւերը իս պատեցին , ու գերեզմա-  
նին վիշտերը իս գտան :

Վեղուծիւն ու անձկուծիւն գտայ , ու տէրոջը  
անունը կանչեցի :

Ո՛վ տէր , ազատէ իմ անձս . մեր տէր աստուա-  
ծը ողորմած ու արդար է . տէրը կ'ողորմի ու տղաքը  
կը պահէ :

Աս խոնարհեցայ ու տէրը իս ապրեցուց . ո՛վ  
իմ անձս՝ քու հանգստութեանդ գարծիր , ինչու որ  
տէրը քեզի օգնեց :

Իմ անձս մեռնելէն փրկեց , իմ աչվըներս ար-  
ցունքէն , ու իմ ռաւըներս իյնալէն :

Հաւատացի՝ ինչ որ խօսեցայ , ու շատ խոնարհ  
եղայ :

Իմ զարմանքիս մէջը ըսի թէ՛ ամէն մարդ  
սուտ է :

Ի՞նչ հատուցում պիտի ընեմ տէրոջը ամէն ա-  
նոր ինձի տուածներուն փոխարէն :

Փրկութեան ըստակը պիտի ընդունիմ , ու տէ-  
րոջը անունը պիտի կանչեմ :

Իմ աղօթքս տէրոջը պիտի մատուցանեմ , ա-  
նոր բոլոր ժողովուրդին առջին :

Տէրոջը առջին իր սուրբերուն մահը պատուա-  
կան է. ո՛վ տէր, ես քու ծառայեմ, քու աղախինիդ  
ծառան ու որդին :

Իմ կապերս կտրեցիր, քեզի օրհնութեան պա-  
տարագ պիտի մատուցանեմ, և տէրոջը անունը  
պիտի կանչեմ :

Տէրոջը պիտի մատուցանեմ իմ աղօթքս ամէն  
իր ժողովուրդին առջին, տէրոջը տանը սրահներուն  
մէջ, և քու մէջդ ո՛վ երուսաղէմ :

Վասք շօր, և Որդւոյ, և շողոյն Արքայ,  
Արպէս էր՝ի սկզբանէ, այժմ, և միշտ, և յաւի-  
տեանս յաւիտենից . Ամէն :

Կամ ձեզ երորդ Սաղմոսը .

Եթէ ոչ տէր շինէ .

Թէ որ տէրը տունը չի շինէ, պարապ տեղը կ'աշ-  
խատին անոր շինողները :

Թէ որ տէրը քաղաքը չի պահպանէ, պարապ  
տեղը արթուն կը մնան անոր պահպանները :

Ոչինչ բան է ձեզի կանուխ ելլելը. հապա չի քը-  
նացած ելլիք՝ որ ցաւերու հաց չուտէք :

Ինչու որ տէրը իր սիրելիներուն քուն կուտայ,  
մարդուն ժառանգութիւնը որդիքներն են. իր վարձ-  
քը որովայնին պատուին է :

Ինչպէս որ զօրաւորին ձեռքի նետերը. անանկ  
են երիտասարդները :

Երանի անոր՝ որ իր ցանկութիւնը անոնցմէ լի-

ցուց • և չի պիտի ամբնան երբոր իրենց թշնամինե-  
րուն հետ դռանը մէջ խօսելու ըլլան :

Փառք Հօր , և Որդւոյ , և Հոգւոյն Սրբոյ .

Որպէս էր 'ի սկզբանէ , այժմ , և միշտ , և յաւի-  
տանս յաւիտենից . Ամէն :

Յետոյ Քահանան կ'ըսէ ,

Աղօթենք .

Տէր , ողորմէ՛ մեզի .

Քրիստոս , ողորմէ՛ մեզի .

Տէր , ողորմէ՛ մեզի .

Ո՛վ մեր Հայրը՝ որ երկինքն ես , քու անունդ  
սուրբ ըլլայ . Քու թագաւորութիւնդ գայ , Քու  
կամքդ ըլլայ , ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկ-  
րիս վրայ . Ս'եր ամէն աւուր հացը այսօր տուր մեզի ,  
Եւ ներէ՛ մեզի մեր պարտքերը , ինչպէս որ մենք ալ կը  
ներենք մեր պարտականներուն . Եւ մեզ փորձու-  
թեան մի տանիր , հապա չարէն ազատէ մեզ . Ամէն :

Պաշտօնէան . Փրկէ՛ ո՛վ Տէր այս կինը քու աղա-  
խինդ .

Պապասխանի . Որ քեզի կ'ապաւինի :

Պաշ . Ո՛վ Տէր , անոր զօրաւոր աշտարակ մը  
եղիր .

Պապ . Իր թշնամիին գիմացը :

Պաշ . Ո՛վ Տէր լսէ՛ մեր աղօթքին .

Պապ . Եւ մեր աղաչանքներուն ձայնը քեզի  
հասնի :

Պաշտօնեան .

Ազօթեանք .

Ամենակարող Աստուած , ջերմեռանդ գոհու-  
 թիւններ կը մատուցանենք որ այս կիներ քու աղա-  
 խինդ տղաբերքի ան մեծ ցաւէն ու վտանգէն ազա-  
 տեցիր . Ա՛աղաչենք շնորհէ՛ ո՛վ ամենողորմ Հայր ,  
 որ ինքը քու օգնականութեամբդ հաւատարմու-  
 թեամբ ապրի այս կեանքին մէջ , և քու կամքիդ հա-  
 մեմատ կեանք վարէ . և հանդերձեալին մէջ քու  
 յաւիտենական փառքիդ մասնակից ըլլայ , մեր Տէր  
 Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Գոհութիւն մատուցանող կիներ Եկեղեցի գալու ժա-  
 մանակը պարտի սովորական նուէրները հատուցանել . և թէ  
 որ Հաղորդութեան Խորհուրդը մատակարարուելու ըլլայ ,  
 պէտք է որ ինքն ալ հաղորդուի :

## ԵՍՏՈՒԾՈՅ ԲԱՐԿՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ  
 ԿԱՄ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՂԱՒՈՐԱՅ ԴԵՄ

Քանի մը Ազօթքներով , որ Մեծ Պահոց առաջին օրը  
 և ուրիշ ժամանակ ալ կը գործածուի , ինչպէս որ թեմա-  
 կալ Եպիսկոպոսը կ'որոշէ :

Աստուան Ազօթքէն ետեւ երբոր Լիթանի Մաղթանքը  
 սովորական կերպով կ'աւարտի , Քահանան Ամբիոնէն կամ  
 Աստուան Ազօթքը կարդացուած տեղէն կ'ըսէ .

Եղբայրներ՝ նախկին Եկեղեցւոյ մէջ մէկ բա-

բեպաշտ սովորութիւն մը կար, որ Սեծ Պահոց սկիզբին հրապարակական մեղաւորները համարձակ ապաշխարութեան կը բերուէին, և այս աշխարհիս մէջ կը պատժուէին, որ անոնց հոգիները փրկուին Տէրօջը օրը. և որ ուրիշները անոնցմէ օրինակ առնելով՝ չարագործութիւն ընելէն էվելօք վախնան:

Եսոր տեղը, (մինչեւ որ նոյն խիստ փափաքելի սովորութիւնը կրկին հաստատուի) պատշաճ կը համարուի որ հիմայ այս ժամանակ (ձեր ամէնուդ առջին) անզեղջ մեղաւորներուն դէմ Եստուծոյ անէծքին ընդհանուր վճիռները կարգացուի. Արկրորդ Օրինացին քսանըօթներօրդ գլխէն, և Սուրբ Գրոց ուրիշ այլևայլ տեղերէն առնելով, որ դուք ալ ամէն մէկ վճոցն պիտի պատասխանէք. Ե.Պէն. Ե.Սս խորհուրդովը որ դուք Եստուծոյ մեղաւորներուն դէմ ունեցած բարկութիւնը ճանչնալով, ճշմարիտ և հաստատ ապաշխարութեան մեծ ջանք ունենաք. և այս վտանգաւոր օրերուն մէջ աւելի զգուշութեամբ ապրիք, հեռանալով այն մոլութիւններէն՝ որոնց համար Եստուծոյ անէծքին արժանաւորութիւնը դուք ձեր բերնովը կը խոստովանիք:

Ենիծեալ ըլլայ ան մարդը՝ որ երկրպագութիւն ընելու համար փորուած կամ թափուած արձան կը շինէ. (Արկրորդ Օրինաց. իէ. 15:)

Եւ բոլոր ժողովուրդը կը պատասխանէ ու կ'ըսէ.

Ե.մէն:

Պատգամներ . Լ'նիծեալ ըլլայ ան՝ որ իր հայրը  
կամ իր մայրը կ'անարգէ . ( Բ . ( ) րէ . իէ . 16 : )

Պատգամներ . Լ'մէն :

Պատգ . Լ'նիծեալ ըլլայ ան՝ որ օտարականին , որ-  
բին ու սյրիին իրաւունքը կը խոտորէ . ( Բ . ( ) րէ .  
իէ . 17 : )

Պատգ . Լ'մէն :

Պատգ . Լ'նիծեալ ըլլայ ան՝ որ իր ընկերին սահ-  
մանը կը փոխէ . ( Բ . ( ) րէ . իէ . 18 : )

Պատգ . Լ'մէն :

Պատգ . Լ'նիծեալ ըլլայ ան՝ որ կոյրը իր ճամբէն  
կը մոլորցունէ . ( Բ . ( ) րէ . իէ . 19 : )

Պատգ . Լ'մէն :

Պատգ . Լ'նիծեալ ըլլայ ան՝ որ իր ընկերը նեն-  
գութեամբ կ'ըսպաննէ . ( Բ . ( ) րէ . ժէ . 24 : )

Պատգ . Լ'մէն :

Պատգ . Լ'նիծեալ է ան՝ որ շնութիւն կը գործէ  
իր ընկերին կնկանը հետ . ( Գ Լ - . ի . 10 : )

Պատգ . Լ'մէն :

Պատգ . Լ'նիծեալ է ան՝ որ կաշառք կ'առնէ ան-  
մեղը սպաննելու . ( Բ . ( ) րէ . իէ . 25 : )

Պատգ . Լ'մէն :

Պատգ . Լ'նիծեալ է ան՝ որ մարդուն կը յուսայ ,  
և մարմնովը անոր բազուկին կ'ապարինի , և իր սրը-  
տովը տէրոջմէն կը հեռանայ . ( Երէ՛՛ . ժէ . 5 : )

Պատգ . Լ'մէն :

Պատգ . Լ'նիծեալ են անիրաւները , պոռնիկները ,

չնացողները, ագահները . կռապաշտները , բամբասողները , արբեցողները և յախշտակողները . (Մ . Կորն . 4 . 9 , 10 :

Պատ . Լ՛մէն :

Պատ . Լ՛հա տեսնալով որ Մատուծոյ պատուիրանքներուն դէմ մեղանչողները , և անոնցմէ մոլորողները անիծեալ են (ինչպէս որ Ղաւիթ մարգարէն կը վկայէ) , և (միտք բերելով մեր գլխուն վրայ կախուած ան ահաւոր դատաստանը , որ միշտ պատրաստ է վրանիս իյնալու) . կատարեալ զղջմամբ և խոնարհ սրտիւ մեր Տէր Մատուծոյն դառնանք . ողբ ու կոծ ընելով մեր կեանքին վրայ , մեր յանցանքը ճանչնալով ու խոստովանելով , և ապաշխարութեան արժանի պտուղներ յառաջ բերելու ջանք ընելով : Ասան զի հիմայ տապարը ծառերուն արմատին քովը դրուած է , որ բարի պտուղ չի տուող ծառը կը կրտուի ու կրակը կը ձգուի : Խիստ ահարկու բան է կենդանի Մատուծոյ ձեռքը իյնալը . ինքը անձրեւ կը խրկէ մեղաւորներուն վրայ , որոգայթ , հուր և ծրծումք , մրրիկ ու փոթորիկ . ասիկայ պիտի ըլլայ անոնց խմելու բաժինը : Ինչու որ ահա Տէրը իր սրբութեան տեղէն եկած է երկրի վրայի բնակիչներուն անօրէնութիւնները պատժելու : Բայց ո՞վ կրնայ կենալ անոր եկած օրը : Ո՞վ կը գիմանայ անոր յայտնուած ժամանակը : Իր հեծանոցը իր ձեռքն է , և իր կալը պիտի մաքրէ , ու ցորենը իր համբարը պիտի ժողուէ , ու յարդը անմարելի կը-

բակով պիտի երէ : Տէրոջը օրը գիշերուան գողին պէս կը հասնի . և երբոր մարդիկ ըսեն թէ խաղաղութիւնը և ուրիշ ամէն բան ապահով է , ան ժամանակը յանկարծ կործանումը անոնց վրայ կը հասնի , ցաւ քաշող կնկանը վրայ եկած արտմութեանը պէս , և չի պիտի ապրին : Ան ժամանակը վրէժխրնդրութեան օրը Աստուծոյ բարկութիւնը պիտի երեւայ , որն որ կամակոր մեղաւորները իրենց խտաւարտութեամբը իրենց վրայ դիզեցին . որոնք Աստուծոյ քաղցրութիւնը , ներելը ու երկայնամտութիւնը արհամարհեցին , երբոր զիրենք շարունակ ապաշխարութեան կը հրաւիրէր : Ան ժամանակը ինծի պիտի աղաղակեն (կ'ըսէ Տէրը) , բայց ես մտիկ չի պիտի ընեմ . իս շատ պիտի փնտռեն , բայց չի պիտի գտնան . ինչու որ իմաստութիւնը ատեցին , ու Տէրոջը երկիւղը չընդունեցին . հապա իմ խորհուրդս արհամարհեցին և իմ խրատս անարգեցին : Շատ ուշ պիտի ըլլայ դուռը գոցուելէն ետեւ չալելը , և արդարութեան ժամանակ ողորմութիւն փնտռելը : Ինչ սարսափելի է ան արդար վճռոյն ահարկու ձայնը՝ որ անոնց վրայ պիտի վճռուի , երբոր անոնց զուրցուի . գացէք ինէ անխիճեալներ յաւիտենական հրոյն , որ սատանային ու իր հրեշտակներուն համար պատրաստուած է : Աւստի եղբայրներ՝ ժամանակին հոգ տանինք , քանի որ փրկութեան օրը ձեռ վընիս է , ինչու որ գիշերը կուգայ , երբոր մէկը գործելու կարող չէ : Հապա քանի որ լոյսը ունինք ,

լուսոյն հաւատանք , և լուսոյ որդիքներուն պէս պը-  
տրտինք , որ դուրսի խաւարը չի ձգուինք , ուր տեղ  
լալ ու ահուաներու կճոցունել կայ : Աստուծոյ քաղց-  
րութիւնը չարհամարհենք , որ մեզ բարեգթու-  
թեամբ ուղղութեան կը հրաւիրէ , և իր անբաւ ու  
ղորմութեամբը մեր անցեալ մեղքերուն թողութիւն  
կը խոստանայ , թէ որ անկեղծ ու կատարեալ սրտիւ  
իրեն դառնանք : Ասան զի թէև մեր մեղքերը ծի-  
րանիի նման կարմիր ըլլան , ձիւնի պէս պիտի ճեր-  
մըկնան . ու թէև որդանի սաստիկ կարմրութիւնը  
ունենան , բուրդի պէս ազնիւ ճերմակ պիտի ըլլան :  
Վարձէք (կ'ըսէ Տէրը) բոլոր ձեր ամբարշտութիւն-  
ներէն , որ ձեր մեղքը ձեզի տանջանք չըլլայ , մէկ դի  
ձգեցէք ձենէ ամէն ձեր ըրած ամբարշտութիւննե-  
րը . Վոր սիրտեր և նոր հոգի ունեցէք . Ենչ՞ու պի-  
տի մեռնիս սվ խրայէլի տունը , տեսնալով որ մեռ-  
նողին մահուանը վրայ ուրախութիւն չունիմ , կ'ըսէ  
Տէր Աստուած : Ապա ուրեմն դարձէք որ ապրիք :  
Սեղաւոր ալ ըլլալու ըլլանք , օրը քով բարեխօս  
մը ունինք արդար և անարատ Հիսուս Վրիստոսը .  
և ան է մեր մեղացը քաւութիւնը : Ենչու որ ան մեր  
մեղքերուն համար վիրաւորեցաւ , և մեր անօրէնու-  
թեանը համար պատժուեցաւ : Աւրեմն իրեն դառ-  
նանք , որ ամէն ճշմարտապէս զղջացող մեղաւորները  
մարդասիրութեամբ իրեն կ'առնէ . մենք մեզ ապա-  
հով ընելով որ ինքը պատրաստ է մեզ ընդունելու ,  
և կամեցող մեզի թողութիւն շնորհելու , թէ որ ան-

կեղծ զղջմամբ իրեն զիմելու ըլլանք . թէ որ մեր անձը իրեն հնազանդեցունենք , ու ասկէ ետեւ իր ճամբաներուն մէջ քալենք . թէ որ իր քաղցր լուծը ու թեթեւ բեռը մեր վրայ առնենք , հեղու թեամբ , համբերութեամբ ու սիրով իրեն հետեւելով , և մեր գնացքները իր Սուրբ Հոգւոյն առաջնորդութեամբ ըր ուղղելով . միշտ իր փառքը խնդրելով , և մեր կոչմանը մէջ արժանաւոր ծառայութեամբ իրեն շնորհակալութիւն մատուցանելով : Թէ որ ասիկայ ընելու ըլլանք , Վրիստոս կ'ազատէ մեզ օրէնքի անէծքէն , և ձախակողմեաններուն վրայ իջնալու յետին անէծքէն . և մեզ իր աջ կողմը կ'ընդունի , ու իր Հօրը ամենագութ օրհնութիւնը մեզի կը շնորհէ , հրամայելով մեզի իր փառաւոր արքայութիւնը ժառանգելու . որուն ամէնքս արժանի ընէ իւր անբաւ բարեգթութեամբը . Լճն :

Յետոյ ամէնքը ծնկան վրայ կուգան , և Քահանան ու Դպիրներն ալ ( Լիթանի Մաղթանքը բուսած սովորական տեղը ) ծնրագրած՝ այս Սաղմոսը կ'ըսեն .

Ողորմեա՛ ինձ աստուած . ( Սաղ . Ժ . )

Ո՛վ աստուած , ողորմէ՛ ինձի քու մեծ ողորմութեանդ չափովը , քու անբաւ գթութեանդ չափովը քաւէ իմ անօրէնութիւններս :

Իմ անօրէնութենէս բոլորովին իս լուա . և իմ մեղքերէս իս սրբէ :

Իմ անօրէնութիւններս ես ինձմէ գիտեմ . և

իմ մեղքերս ամէն ժամանակ իմ առջիւ են :

Ո՛վ տէր , քեզի միայն մեղանշիցի , և քու առջեղ  
չարութիւն գործեցի :

Որ ասանկ արդար ըլլաս քու խօսքիդ մէջ , և  
յաղթող՝ երբոր դատելու գաս :

Ընօրէնութեամբ յղացաւ , և մեղքով ծնաւ իս  
իմ մայրս :

Դուն ո՛վ տէր , ճշմարտութիւնը սիրեցիր , ան-  
յայտները ու ծածուկները քու իմաստութեամբդ  
ինծի յայտնեցիր :

Սշտիկով իմ վրաս սրսկէ , ու մաքուր ըլլամ ,  
իս լուս՝ որ ձիւնէն աւելի ճերմակ ըլլամ :

Տնծութիւն ու ուրախութիւն լսել տուր ինծի  
որ տառապեալ ոսկորներս ցնծան :

Իմ մեղքերէս քու երեսդ դարձուր . և իմ ամէն  
անօրէնութիւններս ինէ քաւէ :

Ո՛վ աստուած , իմ անձիս մէջ մաքուր սիրտ  
հաստատէ . և ուղիղ հոգի իմ փորիս մէջ :

Իս քու երեսէդ մի ձգեր . և քու սուրբ հոգիդ  
ինէ մի հաներ :

Տուր ինծի քու փրկութեանդ ցնծութիւնը , և  
քու պետութեանդ հոգիովը իս հաստատէ :

Ընօրէններուն քու ճամբաներդ սորվեցընեմ ,  
և ամբարիշտները քեզի գառնան :

Ո՛վ աստուած , իմ փրկութեանս աստուածը ,  
փրկէ իս արիւնէ . լեզուս քու արգարութիւնովդ  
պիտի ցնծայ :

Ո՛վ տէր, թէ որ իմ շրթունքներս բանաս, իմ  
բերանս քու օրհնութիւնդ պիտի երգէ :

Թէ որ ուզելու ըլլայիր՝ պատարագներ կը մա-  
տուցանէինք. բայց դուն ողջակէզները անգամ չուն-  
դունեցիր :

Աստուծոյ զոհ՝ խոնարհ հոգին, սուրբ սիրտը  
խոնարհ հոգին աստուած չարհամարեր :

Վու կամքովդ սիօնին բարիք ըրէ, և երուսա-  
ղէմի պարիսպները շինուին :

Ան ժամանակը դուն արդարութեան պատա-  
րագները պիտի ընդունիս. ու խտի պատարագներ ե-  
ղած զուարակները քու սեղանիդ վրայ պիտի հանեն :

Փառք Հօր, և Արդւոյ, և Հօգւոյն Արբոյ .

Արպէս էր 'ի սկզբանէ, այժմ, և միշտ, և յաւի-  
տեանս յաւիտենից . Ամէն :

Տէր, ողորմէ՛ մեզի .

Վրիստոս, ողորմէ՛ մեզի .

Տէր, ողորմէ՛ մեզի .

Ո՛վ մեր Հայրը՝ որ երկինքն ես, քու անունդ  
սուրբ ըլլայ . Վու թագաւորութիւնդ դայ . Վու  
կամքդ ըլլայ, ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկ-  
րիս վրայ . Մեր ամէն աւուր հացը այսօր տուր մեզի .  
Աւ ներէ մեզի մեր պարտքերը, ինչպէս որ մենք ալ կը  
ներենք մեր պարտականներուն . Աւ մեզ փորձու-  
թեան միտանիր, հապա չարէն ազատէ մեզ . Ամէն :

Պաշտօնիս . Ո՛վ Տէր, փրկէ՛ քու ծառաներդ .

Պապասխանի . Ար քեզի կը յուսան :

Պաշ. () գնու թիւն խրկէ անոնց քու սրբու-  
թեանդ տեղէն .

Պատ. Եւ միշտ քու զօրութեամբդ պաշտպանէ :

Պաշ. () գնէ մեզի ո՛վ Տէր Աստուած մեր վըր-  
կիչը .

Պատ. Եւ փրկէ մեզ քու Անուանդ փառքին հա-  
մար . ողորմէ մեզի մեղաւորներուս քու Անուանդ սի-  
րոյն համար :

Պաշ. Ո՛վ Տէր, լսէ մեր աղօթքին .

Պատ. Եւ մեր աղաչանքը քեզի հասնի :

Պաշտօնեան .

Աղօթեմք .

Ո՛վ Տէր՝ կ'աղաչենք բարեգթութեամբ լսէ մեր  
աղաչանքներուն, և թողութիւն շնորհէ անոնց, որ  
իրենց մեղքերը քեզի կը խոստովանին . որպէս զի  
անոնք՝ որոնց խիղճերը մեղքով ամբաստանուած  
են, քու ամենագթած ողորմութեամբդ թողութիւն  
ընդունին, մեր Տէր Հիսուս Քրիստոսի շնորհքովը .  
Ամէն :

Ո՛վ ամենակարող Աստուած՝ և բարեգութ  
ւայր, որ կ'ողորմիս ամէն մարդոց, և քու ստեղծած  
ներուդ մէկը չես ատեր . որ մեղաւորին մահը չես  
կամենար, հապա իր մեղքերէն դառնալը ու փրկուի-  
լը . Ողորմութեամբ ներէ մեր մեղքերուն, ընդունէ  
և մխիթարէ մեզ, որ մեր մեղացը ծանրութենէն չար-

չարուած ու հոգնած ենք : Վրու սեպհական յաա-  
կութիւնդ է միշտ ողորմութիւն ընելը , և քեզի միայն  
կը վերաբերի մեզքի թողութիւն տալը : Ուստի նե-  
րէ մեզի ո՛վ Տէր բարերար , ներէ՛ քու ժողովուրդիդ ,  
որ դուն փրկեցիր . քու ծառաներուդ հետ դատի մի  
մտնար , որոնք անպիտան հող և ողորմելի մեղաւոր-  
ներ են . հապա հեռացուր մենէ քու բարկութիւնդ ,  
որ խոնարհ սրտիւ կը խոստովանինք մեր անպիտա-  
նութիւնը , և անկեղծութեամբ կը զզջանք մեր մեղ-  
քերէն . և փութան այս աշխարհիս մէջ մեզի օգնելու ,  
որ հանդերձեալին մէջ քեզի հետ յաւիտեան ապ-  
րինք , մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը .  
Ամէն :

Յեւոյ ժողովուրդը Պաշտօնեային ետեւէն մէկ տեղ այս  
հետեւեալ Աղօթքը կ'ըսէ .

Վարձուր մեզ ո՛վ մարդասէր Տէր , որ մենք ալ  
քեզի դառնանք : Աղորմէ՛ ո՛վ Տէր , ողորմէ՛ քու ժո-  
ղովուրդիդ , որ քեզի դառնայ լալով , պաքով ու ա-  
ղօթքով : Ասան զի դուն մէկ ողորմած Մտնած  
մըն ես , գթած , երկայնամիտ և բազումողորմ : Արբ  
որ մենք պատժոյ արժանի ըլլանք , դուն կը ներես .  
և քու բարկութեանդ ժամանակը ողորմութիւնը կը  
յիշես : Ներէ՛ քու ժողովուրդիդ ո՛վ մարդասէր  
Տէր , ներէ՛ անոնց . և քու ժառանգութիւնդ յաւի-  
տեան չամրչնոյ : Ասէ՛ մեզի ո՛վ Տէր , ինչու որ քու  
դժութիւնդ անբաւ է : Այլ քու ամենաուստ ողորմու-

Թեամբդ նայէ մեր վրայ, քու օրհնեալ Արդւոյդ մեր  
Տէր Հիսուս Վրիստոսի արժանաւորութեամբը ու  
միջնորդութեամբը . Ա՛մէն :

Յետոյ Քահանան միայն կ'ըսէ .

Տէրը օրհնէ մեզ և պահպանէ . Տէրը իր երեսին  
լոյսը մեզի երեւցունէ, և մեզի խաղաղութիւն շնոր-  
հէ, հիմայ ու յաւիտեան . Ա՛մէն :



Երանելի է ասի :

1. Երանելի են մարդուն որ ամբողջութեամբ ն  
խորհարգը չի գտայ, միայնակեամբ . Երանելի է  
գաւ, և Երանելիութեամբ ամբողջ չի նայու .

2. Երանելի են մարդուն որ ամբողջութեամբ մեզ  
է : և շարժել զիշեր անոր ամբողջութեամբ մեզ  
ու անկողնուց անկողնու անկողնու ան անկողն  
զեւ պիտի բնայ :

3. Երանելի են մարդուն որ ամբողջութեամբ մեզ  
նայուցիւք չի պիտի թողի . և ինչ քան որ զեւ  
պիտի յարգի :

4. Երանելի են մարդուն որ ամբողջութեամբ մեզ  
պիտի որ հոգի երկրին երկրի կը պիտի :

5. Երանելի են մարդուն որ ամբողջութեամբ մեզ  
նայուցիւք չի պիտի թողի . և ինչ քան որ զեւ  
պիտի յարգի :

6. Երանելի են մարդուն որ ամբողջութեամբ մեզ  
նայուցիւք չի պիտի թողի . և ինչ քան որ զեւ  
պիտի յարգի :



# ԱՆՄՈՍ ԳԱԹԻ

## ՕՐ ԵՌԱՋԻՆ

### ԱՂՕԹ Ք ԱՌԱՒՕՏՈՒ

ՍԱՂՄՈՍ Ա.

Երանեալ է այր .

1 Երանի ան մարդուն՝ որ ամբարիշտներուն խորհուրդը չի գնաց, մեղաւորներուն ճամբան չի կեցաւ, և ծաղր ընողներուն աթուր չի նստաւ :

2 Հապա անոր կամքը աստուծոյ օրէնքին մէջն է, և ցորեկ գիշեր անոր օրէնքին վրայ կը մտածէ . ու անիկայ ջուրերուն գնացքները տնկուած ծառին պէս պիտի ըլլայ :

3 Ար ժամանակին իր պտուղը պիտի տայ, և անոր տերեւը չի պիտի լծաի . և ինչ բան որ ընէ՝ պիտի յաջողի :

4 Ամբարիշտները ասանկ չեն, հապա փոշիի պէս՝ որ հովը երկրին երեսը կը ցրուէ :

5 Ետը համար ոչ ամբարիշտները գատապատանի պիտի ելեն, և ոչ մեղաւորները արգարներուն ժողովը :

6 Այսան զի տէրը արգարներուն ճամբան կը

Ճանչնայ, և ամբարիշտներուն ճամբան պիտի կորսուի :

ՍԱՆՄՈՍ Բ .

Ընդէ՞ր խոովեցան հեթանոսք .

1 Ինչո՞ւ համար հեթանոսները խոովութիւն ըրին, և ժողովուրդները զուր տեղը մտածեցին :

2 Արկրի թագաւորները իրար գտան, և իշխանները մէկ տեղ եկան տէրոջը համար՝ և անոր օծեալին համար :

3 Ընոնց կապերը կտորենք, և անոնց լուծը մեր վրայէն նետենք :

4 Արկինքը բնակողը անոնց վրայ պիտի ծիծաղի, ու տէրը անոնք պիտի արհամարհէ :

5 Ըն ժամանակը պիտի խօսի անոնց իր բարկութիւնովը, և իր սրտմտութիւնովը անոնք պիտի խրոսովեցունէ :

6 Ես անկէ թագաւոր օծուեցայ անոր սիօն սուրբ լեռանը վրայ, տէրոջը հրամանները պատմելու :

7 Տէրը ինծի ըսաւ՝ դուն իմ որդիս ես, ես քեզ այսօր ծնայ :

8 Խնդրէ ինձ՝ և հեթանոսները քեզի թառանգութիւն պիտի տամ. և իշխանութիւն քեզի երկրին ամէն ծայրերը :

9 Արկաթէ գաւազանով անոնք պիտի հովուես,

բրուտի ամանի պէս անոնք պիտի փշրես :

10 Ըրդ՝ թագաւորներ ասիկայ իմացէք, և աւձն երկիրը դատողներ՝ խրատուեցէք :

11 Ա՛խտով ծառայեցէք տէրոջը, և անոր գիւմացը դողով ցնծացէք :

12 Ընոր խրատը ընդունեցէք, որ տէրը չի բարկանայ, և արդարութեան ճամբէն չի կորսուիք :

13 Ըն ժամանակը՝ երբ որ անոր բարկութիւնը բորբոքի, երանի ան ամէնուն՝ որ տէրոջը կը յուսան :

ՍԱՂՄՈՍ Գ .

Տէր, զի բազում .

1 Ա՛վ տէր, իմ թշնամիներս սրչափ շատցան, և շատերը իմ վրաս ելան :

2 Շատերը իմ անձիս համար կ'ըսէին թէ՛ աւոր փրկութիւն չի կայ իր ասառածմէն :

3 Ի՛այց ո՛վ տէր, գուն ես իմ օգնականս ու փառքս, և իմ գլուխս բարձրացունողը :

4 Իմ ձայնովս տէրոջը կանչեցի, և իր սուրբ լեռնէն լսեց ինձի :

5 Պառկեցայ ու քնացայ, արթնցայ՝ և տէրը իս պաշտպանեց :

6 Ես չի պիտի վախնամ անոնց բիւրաւոր զօրքերէն, որ չորս կողմս պատած պաշարած իս կը պահէին :

7 Այլեր ո՛վ տէր, և փրկէ իս ո՛վ իմ աստուածս .

վասն զի դուն զարկիր ան ամենը՝ որ անիրաւ տեղը  
իմ հետս թշնամութիւն կ'ընէին . և մեղաւորներուն  
ակռաները պիտի փշրես :

8 Տէրոջն է փրկութիւնը . քու ժողովուրդիդ  
վրայ ըլլայ քու օրհնութիւնդ :

ՍԱՂՄՈՍ Դ .

Ի կարգալ իմում .

1 Բեզի աղաղակած ժամանակս ինծի լսցիր  
ո՞վ իմ արդարութեանս աստուածը , նեղութենէս իս  
հանգստացուցիր . ողորմէ ինծի , և իմ աղօթքիս լսէ :

2 Սարդկան որդիքներ , մինչեւ ե՞րբ խստա-  
սիրտ պիտի մնաք . ինչո՞ւ համար ունայնութիւնը կը  
սիրէք , և ստութիւնը կը փնտռէք :

3 Գիտցէք , որ տէրը իր սուրբին սքանչելիքներ  
ըրաւ , և տէրը ինծի պիտի լսէ իրեն կանչելու ժա-  
մանակս :

4 Աը բարկանաք՝ և մեղք մի գործէք . ինչ որ  
ձեր սրտին մէջ կը խորհլիք , անկողիններնուդ մէջ  
զղջացէք :

5 Արդարութեան պատարագներ մատուցէք ,  
և տէրոջը յուսացէք :

6 Հատերը կ'ըսէին թէ՛ ո՞վ պիտի ցըցունէ  
մեզի տէրոջը բարութիւնը . քու երեսիդ լոյսը նշան  
եղաւ մեր վրայ , և մեր սրտին ուրախութիւն տուիր :

7 Հորենին գինիին ու ձէթին պտուղէն լնցու-

ցիր անսնք :

8 Իսաղաղութիւնով պիտի ննջենք ու արթըն-  
նանք . վասն զի դուն միայն ով տէր , առանձին քու  
յոյսովդ մեզ հանգչեցուցիր :

Բանից իմոց սենկն դիր .

ՍԱՂՄՈՍ Ե .

1 Ո՛վ տէր , լսէ իմ խօսքերուս . ու միտք առ  
իմ աղաղակս :

2 'Նայէ իմ աղօթքիս ձայնին՝ ով իմ թագաւ  
ւորս և անտուածս :

3 Ո՛վ տէր ես քեզի կ'աղաչեմ , անտուանց իմ  
ձայնիս պիտի լսես . անտուանց պատրաստ պիտի ըլ-  
լամ քու առջիդ ելլելու :

4 Ո՛վ աստուած դուն անօրէնութիւն չես ու-  
ղեր , և չարերը քու քովդ չեն բնակիր . ու անօրէն-  
ները քու աչքիդ առջին չեն բնակիր :

5 Մ'նօրէնութիւն գործողները ատեցիր . ամէն  
սուտ խօսողները կը կորսնցունես :

6 Ո՛վ տէր , դուն արիւնահեղ ու նենգաւոր մար-  
դը պիղծ կը սեպես . բայց ես քու անբաւ ողորմու-  
թիւնովդ քու տունդ պիտի մտնամ , և քու երկիւ-  
ղովդ քու սուրբ տաճարիդ մէջ երկրպագութիւն  
պիտի րնեմ :

7 Ո՛վ տէր , քու արգարութեանդ մէջ իս ա-  
ռաջնորդէ , իմ թշնամիներուս համար քու ճամ-

բաներդ շտկէ իմ առջիս :

8 Ս ասն զի անոնց բերանը ճշմարտութիւն չի կայ, և անոնց սիրտերը չար են :

9 Բաց գերեզմանի պէս է անոնց կոկորդը, և իրենց լեզուովը նենգաւոր եղան :

10 Ընոնք դատէ՛ ո՛վ աստուած, որ իրենց խորհուրդներէն իյնան. իրենց մեծ ամբարշտութիւնը համար մերժէ անոնք. վասն զի քեզ նեղացուցին :

11 Բայց քեզի յուսացողներուն ամէնքը ուրախ պիտի ըլլան. յաւիտեան պիտի ցնծան. և դուն աւնոնց մէջ պիտի բնակիս :

12 Վրու անունդ սիրողները քեզմով պիտի պարծենան. ինչու որ արդարը դուն պիտի օրհնես. ո՛վ տէր, քու հաճութեամբդ որպէս թէ սուրով անոնց չորս կողմը պատեցիր :

## ՕՐ ԵՌԵՅՒՆ

### ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԻ

#### ՍԱՂՄՈՍ Զ.

Տէր՝ մի սրտմտութեամբ քով :

1 Ո՛վ տէր, քու սրտմտութիւնովդ իս մի յանդիմաներ, և քու բարկութիւնովդ իս մի խրատեր :

2 Ո՛վ տէր, ողորմէ ինձի, ինչու որ ես հիւանդ

եմ . իմ անձս բժշկէ , ինչու որ իմ ոսկորներս խռ-  
ուովեցան :

5 Իմ անձս չափազանց խռովեցաւ . և դուն ո՞վ  
տէր , մինչեւ ե՞րբ :

4 Ո՞վ տէր , դարձիր ու փրկէ իմ անձս . ո՞վ  
տէր , իս քու ողորմութիւնովդ ազատէ :

5 Սաան զի չի կայ մէկը՝ որ մահուան մէջ քեզ  
յիշէ . կամ գերեզմանին մէջ քեզի շնորհակալու-  
թիւն ընէ :

6 Ես հառաչանքով մաշեցայ . ամէն գիշեր իմ  
մահիճս լալով լուացի , և իմ անկողինս արտասու-  
քով թրջեցի :

7 Արտմոռութենէն աչվրներս աւրուեցաւ . և ա-  
մէն թշնամիներուս վրայ մաշեցայ :

8 Եռու կեցէք ինէ դուք ամէնքդ՝ որ անօրէ-  
նութիւն կը գործէք :

9 Տէրը իմ լալուս ձայնին լսեց , տէրը իմ ա-  
ղօթքներուս լսեց . և տէրը իմ խնդրուածքս ընդու-  
նեց :

10 Իմ ամէն թշնամիներս թող չափազանց ա-  
մրչնան ու խռովին . ետ դառնան ու շատ շուտով  
թող ամրչնան ու խռովին :

ՍԱՂՄՈՍ Է .

Տէր աստուած իմ .

1 Ո՞վ տէր՝ իմ աստուածս , քու վրագ իմ յոյսս

դրած եմ՝ իս փրկէ, և իմ ամէն հալածողներէս իս  
ապրեցոր :

2 Չըլայ որ իմ անձս առիւծի պէս յափշտակէ,  
և մէկը չի գտնուի որ աղատէ, և անանկ մէկը որ  
խալըսէ :

3 Ո՛վ տէր՝ իմ աստուածս, թէ որ սս բանը  
ըրի, և թէ որ իմ ձեռքս անօրէնութիւն գտնուի :

4 Թէ որ ինձի չարութիւն ընողներուն գէշու  
թիւն ըրի, ես իմ թշնամիներէս զուր տեղը յաղ-  
թուիմ :

5 Ըն ժամանակը իմ անձս թող թշնամին հա-  
լածէ, ինձի հասնի ու իմ կեանքս ոսքին տակը առ-  
նէ, և իմ փառքս հողը իջեցունէ :

6 Այլիք ո՛վ տէր, քու բարոյութիւնովդ, ու թըշ-  
նամիներուս հատած ժամանակը դուն բարձրըցիր :

7 Ո՛վ տէր՝ իմ աստուածս, քու պատուիրած  
հրամաններուդ համար, և ժողովուրդին բազմու-  
թիւնները քու բողբոջիքդ պիտի առնեն :

8 Ըսոր համար ո՛վ տէր, բարձր տեղերը դար-  
ձիր, և տէրը իր ժողովուրդը պիտի դատէ :

9 Ո՛վ տէր, իմ արդարութեանս ու բնութեանս  
անմեղութեանը նայելով իս դատէ :

10 Չարութիւնները մեղաւորներուն վրայ պի-  
տի կատարուին, և արդարին դուն պիտի յաջողես :

11 Սիրտերը և երիկամունքները քննող արդար  
աստուած, իրաւցունէ իմ օգնութիւնս աստուծմէ  
է, ան որ ուղիղ սրտով եղողները կ'ապրեցունէ :

12 Ատուած արդար դատաւոր է, հղօր և երկայնամիտ. ան ամէն օր իր բարկութիւնը չի խրկեր:

13 Հապա թէ անոր չի դառնաք, իր սուրը սրած է, և իր աղեղը լարած. անոր վրայ մահուան գործիքները պատրաստած է, և իր նետերը այրող (բաներով) է շինած:

14 Ահա անօրէնութիւնով տղարեքի ցաւը բռնեց, ցաւով յղացաւ, և անօրէնութիւն ծնաւ:

15 Հոր փորեց և բացաւ, ան իր շինած փոսը ինքը պիտի իյնայ:

16 Հաւերը իր գլխուն պիտի դառնան, և իր անօրէնութիւնները իր գագաթին վրայ պիտի իջնան:

17 Տէրօջմէն պիտի գոհանամ իր արդարութեանը չափովը. սաղմոս պիտի երգեմ բարձրեալ տէրօջը անուանը:

ՍԱՂՄՈՍ Ը.

Տէր տէր մեր.

1 Ո՛վ տէր՝ մեր տէրը, ինչպէս սքանչելի է քու անունդ բոլոր երկրի վրայ:

2 Վրու մեծ փառքդ երկինքներէն վեր բարձրըցաւ:

3 Սանուկներուն՝ կաթ ծծող տղօքը բերնովը քու գովութիւնդ կատարեցիր ո՛վ տէր, քու թշնամիներուդ համար. որ թշնամին ու հակառակօրդը ամբնայ:

4 Պիտի տեսնամ երկինքը՝ քու մատներուդ  
դործքը, լուսինը ու աստղերը՝ որ դուն հաստատեցիր:

5 Ի՞նչ է մարդը՝ որ դուն անիկայ կը յիշես,  
կամ մարդուն որդին՝ որ դուն անոր հոգ կը տանիս:

6 Դուն անիկայ քու հրեշտակներէդ քիչ մը  
պղտիկ ըրիր. փառքով ու պատուով անիկայ պրտա-  
կեցիր, և ձեռքով շինած ամէն բաներուդ վրայ վե-  
րակացու դրիր ան:

7 Եւ ամէն բան անոր ոտքին ներքեւը հնազանդե-  
ցուցիր, ոչխարը արջառը և ամէն բաները:

8 Ու նաև վայրի անասունները, երկինքի թռու-  
չունները, ու ծովու ձուկերը՝ որ ծովուն ճամբանե-  
րը կը պտըտին:

9 Ո՛վ տէր՝ մեր տէրը, ինչպէս զարմանալի է  
քու անունդ բոլոր երկրի վրայ:

## ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

### ԱՂՕԹՔ ԱՌԱԻՕՏՈՒ

ՍԱՂՄՈՍ Թ.

Գոհացայց զքէն տէր.

1 Շնորհակալ պիտի ըլլամ քե՛նէ ո՛վ տէր,  
բոլոր իմ սրտովս. քու ամէն սքանչելիքներդ պիտի  
պատմեմ:

2 Ուրախ պիտի ըլլամ ու քեզմով ցնծամ.

Սաղմոս պիտի երգեմք քու բարձրեալ անուանդ :

3 Թշնամիներուս ետ դարձած ժամանակը քու երեսէդ պիտի իյնան ու կորսուին :

4 Իմ դատաստանս ու իրաւունքս դուն ըրիր . արդարութեան աթոռը դուն դատաւորնստար :

5 Եթանոսները յանդիմանեցիր , ու ամբարիշտը կորսուեցաւ . անոնց անունները յաւիտեան ջնջեցիր . և թշնամիին զէնքը յաւիտեան պակսեցաւ :

6 Վաղաքները աւրեցիր , և անոնց յիշատակը աղաղակով կորսուեցաւ :

7 Ըստուած յաւիտեան կայ ու կը մնայ , իր աթոռը պատրաստ ըրաւ դատաստանի :

8 Ինքը արդարութիւնով կը դատէ աշխարհը , և իր ժողովուրդը ուղղութիւնով :

9 Տէրը տնանկին ապաւէն եղաւ , օգնականն էր լութեան պէտք եղած ժամանակին :

10 Վեզի պիտի յուսան անոնք՝ որ քու անունդ գիտեն . ինչու որ անոնք չի պիտի թողուս ո՛վ տէր , որ քեզ կը խնդրեն :

11 Սաղմոս երգեցէք տէրոջը՝ որ սիօն կը բընակի . անոր գործքերը հեթանոսներուն պատմեցէք :

12 Ընոնց արիւնը խնդրած ժամանակը՝ յիշեց ու չի մոռցաւ խեղճերուն աղաղակը :

13 Ո՛վ տէր , ողորմէ ինձի , ու իմ թշնամիներէս յաղթուիլս տես . դուն իս մահուան դռներէն վերուցիր :

14 Ինչպէս որ պիտի պատմեմք քու ամէն գո-

վութիւններդ , սիօնի աղջկանը դուռներուն մէջ ,  
և քու փրկութիւնովդ պիտի ցնծամ :

15 Հեթանոսները իրենց շինած ապականու-  
թիւններուն մէջ ընկղմեցան . և անոնց ոտվըները  
իրենց գաղտուկ լարած որոգայթին մէջ պիտի իյնայ :

16 Տէրը կը ճանչցուի իր դատաստանին օրը , և  
մեղաւորները իրենց ձեռքին գործքովը պիտի կա-  
պուին :

17 Սեղաւորները կրկին դժոխքը պիտի դառ-  
նան , և ամէն հեթանոսները՝ որ աստուած մոռցած  
են :

18 Տէրը աղքատը միշտ չի մոռնար , տնանկնե-  
րուն համբերութիւնը բնաւ չի պիտի կորսուի :

19 Աշխի օվ տէր , որ մարդը չի զօրանայ , հե-  
թանոսները քու առջիդ պիտի դատուին :

20 Ո՛վ տէր , անոնց վրայ օրէնսդիր հաստատէ ,  
և հեթանոսները ճանչնան թէ մարդիկ են :

21 Ո՛վ տէր ինչո՞ւ հեռու կայնեցար , նեղու-  
թեան հարկաւոր ժամանակը անտես եղար :

22 Ըմբարշտին ամբարտաւանութիւնովը աղ-  
քատը կը տառապի , իրենց մտքին խորհուրդներովը  
պիտի բռնուին :

23 Ինչու որ մեղաւորը իր անձին ցանկութիւ-  
նովը կը պարծենայ , ան որ կը զրկէ՝ կը գովուի :

24 Ուստի՛ ինչո՞ւ համար մեղաւորը աստուած  
բարկացուց , իր բարկութեանը շատութեանը համար  
չի փնտրուեր :

25 Լ'նոր աչվըներուն առջին աստուած չի կայ .  
անոր ճամբաները միշտ չար են :

26 Լ'նոր առջեւէն իրաւունքը վերցած է , իր  
ամէն թշնամիներուն վրայ պիտի տիրէ :

27 Իր սրտին մէջը ըսաւ թէ՛ չի պիտի սասա-  
նիմ , ազգէ ազգ առանց վնասի պիտի ըլլամ :

28 Լ'նէճքով ու դառնութիւնով ու նենգու-  
թիւնով անոր բերանը լեցուած է , և անոր լեզուին  
տակը ցաւ ու վաստակ կայ :

29 Վաղտնի դարանակալ կ'ըլլայ զօրաւոր մար-  
դոցմով , արդարը մեռցունելու համար :

30 Լ'նոր աչվըները աղքատներուն կը նային ,  
գաղտուկ տեղը կը նստի՝ ինչպէս որ առիւծը իր բը-  
նակարանը :

31 Որոգայթ կը լարէ աղքատը յափշտակելու  
համար , աղքատը յափշտակելու և անիկայ իր որո-  
գայթը ձգելու :

32 Լ'նիկայ մինչեւ իր որոգայթը պիտի իջեցու-  
նէ . տնանկներուն վրայ տիրած ժամանակը ինքը  
պիտի ծռի ու իյնայ :

33 Ա՛յսն զի իր սրտին մէջ ըսաւ թէ՛ աստուած  
մոռցաւ . իր երեսը դարձուց՝ որ բնաւ չի տեսնայ :

34 Այլեր ո՛վ տէր՝ իմ աստուածս , քու ձեռքդ  
թող բարձրընայ , և տնանկները մի մոռնար :

35 Ուստի՛ ինչո՞ւ համար ամբարիշտը աստուած  
բարկացուց . ինչու որ իր սրտին մէջ ըսաւ թէ՛ չի  
քննուիր :

36 Դուն անիկայ ցաւի ու նեղութեան մէջ կը տեսնաս, ու հոգ կը տանիս. աղքատը քեզի յանձնուած է. և որքին դուն ես օգնական:

37 Սեղաւորին ու չարին թելը պիտի խորտակի, անոր մեղքերը պիտի խնդրուի, և ինքը չի պիտի գտնուի:

38 Տէրը յաւիտեանս յաւիտենից թագաւոր է, անոր երկրէն հեթանոսները պիտի կորսուին:

39 Տնանկներուն ցանկութիւնը տէրը լսեց, անոնց սրտին պատրաստութեանը նայեցաւ քու աչքդ:

40 Որքին ու տնանկին դատը կատարելու համար, որ մէկը անգամ չի համարձակի երկրի վրայ մեծ զրուցելու:

### ՍԱՂՄՈՍ Ժ.

#### Ի տէր յուսացայ.

1 Տէրոջը ապաւինեցայ. ի՞նչպէս իմ անձիս կ'ըսէք թէ՛ ճնճղուկի պէս լեռները փախիր:

2 Այսն զի ահա մեղաւորները աղեղներնին լարեցին. կապարճներուն մէջ նետերը պատրաստեցին, որ մութ տեղը սրտով ուղիղներուն նետեն:

3 Ինչու որ քու շինածդ անոնք աւրեցին, բայց արդարը ի՞նչ ըրաւ:

4 Տէրը իր սուրբ տաճարին մէջն է. տէրը երկինքը իր աթոռին վրայ է:

5 Ինոր աչքները տնանկներուն կը նայի, անոր

արտեւանունքները մարդոց որդիքները կը քննեն :

6 Տէրը արդարը ու ամբարիշտը կը քննէ . մեղք սիրողը իր անձը կ'ատէ :

7 Սեղաւորին վրայ որոգայթ հուր ու՛ ծծումբ պիտի գայ . մըրիկը անոնց բաժակին բաժինն է :

8 Տէրը արդար է , արդարութիւնը կը սիրէ . անոր երեսները թւղլութիւնը կը տեսնան :

## ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

### ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԻ

ՍԱՂՄՈՍ ԺԱ.

Մարեցո՛ զիս տէր .

1 Ո՛վ տէր , իս յիրկէ , ինչու որ սուրբը քիչցաւ ,  
մարդոց որդիքներէն ճշմարտութիւնը պակսեցաւ :

2 Ե՛մէն մարդ սուտ ըսաւ իր ընկերին . նենգաւոր  
չըթունքով սրտէ՛ի սիրտ խօսեցաւ :

3 Տէրը պիտի կորսնցունէ նենգաւոր շըթունք-  
ները , և մեծզրուց լեզուները :

4 Ե՛նոնք ըսին թէ՛ լեզուներնիս պիտի մեծցու-  
նենք , շըթունքներնիս մեր քովն է , ուստի՛ ո՞վ է  
մեր տէրը :

5 Ե՛ղբատներուն տառապանքին՝ և տնանկնե-  
րուն հեծութեանը համար , հիմայ պիտի ելլեմ կ'ը-

սէ տէրը . իմ փրկութիւնս պիտի ցըցունեմ , և անոնց մէջ պիտի յայտնուիմ :

6 Տէրօջը պատգամները սուրբ պատգամներ են , արծաթի պէս երկրէն ընտրուած ու փորձուած . եօթն անգամ հողէն փորձուած ու մաքրուած :

7 Ա՛յլ տէր , դուն մեզ պահեցիր , և այս ազգէն մինչեւ յաւիտեան մեզ ապրեցուցիր :

8 Ա՛մբարիշտները չորս կողմը կը պտըտին . քու բարձրութեանդ չափովը պիտի մեծցունես մարդկանց որդիքները :

ՍԱՂՄՈՍ ԺԲ .

Սինչեւ յերբ տէր մոռանաս .

1 Ա՛յլ տէր , մինչեւ ե՞րբ իս բոլորովին պիտի մոռնաս . մինչեւ ե՞րբ քու երեսդ ինէ պիտի դարձունես :

2 Սինչեւ ե՞րբ մտքիս մէջը մտմտուք , և սրտիս մէջ ամէն օր ցաւեր պիտի դնեմ :

3 Սինչեւ ե՞րբ թշնամին իմ վրայ կը բարձրենայ . նայէ՛ ու լսէ ինձի ո՛վ իմ տէր աստուածս :

4 Ա՛յլ տէր , լոյս տուր իմ աչիւններուս , որ բնաւ մահուան քունը չի քնանամ :

5 Թշնամին թող չըսէ թէ՛ անոր յաղթեցի . կամ թէ ինձի նեղութիւն տուողները ցնծան թէ՛ ես սասանեցայ :

6 Ա՛յլ տէր , ես քու ողորմութեանդ յուսացի ,

քու փրկութիւնովդ իմ սիրտս ուրախացաւ . բեղի  
գոհութիւն պիտի տամ ո՛վ իմ տէրս :

ՍԱՂՄՈՍ ԺԳ .

Ասաց անզգամն 'ի սրտի իւրում .

1 Անզգամը իր սրտին մէջը ըսաւ թէ՛ առտուած  
չի կայ :

2 Իրենց անօրէնութիւնովը գէշցան ու պըղ-  
ծուեցան . բարեբարութիւն ընող մէկը անգամ չի  
կայ :

3 Տէրը երկինքէն բոլոր մարդկանց որդիքնե-  
րուն նայեցաւ , որ տեսնայ թէ՛ իմաստուն մէկը կայ  
որ զաստուած փնտրուէ .

4 Ամէնը մոլորեցան՝ մէկ տեղ անպիտան եղան :

5 Բարիք ընող մէկը չի կայ , մինչեւ անգամ  
մարդ մը չի կայ :

6 Որպէս թէ ամէն անօրէնութիւն գործողնե-  
րը չի պիտի գիտնան . որ իմ ժողովուրդս հաց ուտե-  
լու պէս կ'ուտէին , և տէրը չի յիշեցին :

7 Հոն պիտի վախնան վախով՝ ուր որ վախ չի  
կայ , ինչու որ տէրը արդարներուն ազգին մէջն է :

8 Աղքատին խորհուրդը ծաղը ըրին . սակայն  
տէրն է անոր յոյսը :

9 Ո՞վ փրկութիւն պիտի տայ սիօնէն իսրայէ-  
լին . տէրը իր ժողովուրդը գերութենէ դարձուցած  
ժամանակը յակորը պիտի ցնծայ , և իսրայէլը ու-  
րախանայ :

ՕՐ ԵՐԻՈՐԴ

ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏՈՒ

ՍԱՂՄՈՍ ԺԴ.

Տէր, ո՞վ կացցէ.

1 Տէր, ո՞վ պիտի կենայ քու վրանիդ մէջ, կամ ո՞վ պիտի բնակի քու սուրբ լեռանդ վրայ:

2 Ըն՝ որ ամբիժ վարքով կ'ապրի՝ արդարութիւն կը գործէ, իր սրտին մէջ ճշմարտութիւն կը խօսի:

3 Ըն՝ որ իր լեզուովը նենգութիւն չըրաւ, և իր ընկերին չարութիւն չըրաւ:

4 Ըն իր մօտը եղողներէն նախատինք չառներ, անոր առջին չարագործը պատիւ չունի:

5 Տէրոջմէն վախցողները կը փառաւորէ, իր ընկերին երգում կ'ընէ, և իր երգումը կը կատարէ:

6 Իր դրամը վարձքի չի տար, և իրաւունքով կաշառք չառներ. ով որ ասիկայ կ'ընէ՝ ան յաւիտեան հաստատ կը մնայ:

ՍԱՂՄՈՍ ԺԵ.

Պահեա՛ զիս աստուած.

1 Ո՞վ իմ աստուածս, իս պահէ, ինչու որ քեզի յուսացի. տէրոջը ըսի, դուն ես իմ տէրս, և իմ

բարիքներս քենէ եւ ինծի :

2 Վրու երկրիդ մէջ եղած սուրբերուդ՝ զարմանալի ըրիր անոնց մէջ բոլոր իմ փառաքններս :

3 Անոնց հիւանդութիւնները պիտի շատնան, անկէ ետեւ պիտի արտորան :

4 Անոնց արիւնահեղ բազումութեանը մէջ չի պիտի ժողովրդիմ, և անոնց անուները պուկունքներովս չի պիտի յիշեմ :

5 Իմ ժառանգութեանս և իմ բաժակիս բաժինը տէրն է, դուն ես որ իմ ժառանգութիւնս կրկին ինծի կը դարձունես :

6 Անտիրներուն հետ վիճակներ ելաւ ինծի, և իմ ժառանգութիւնս ինծի հաճելի եղաւ :

7 Անորհակալութիւն պիտի տամ տէրոջը՝ որ իս իմաստուն ըրաւ, գիշերը անգամ երիկամունքներս իս կը խրատեն :

8 Առաջ ամէն ժամանակ տէրը իմ առջիս կը տեսնայի, ինչու որ իմ աջ կողմն է՝ որ ես չի սասանիմ :

9 Ասոր համար իմ սիրտս ուրախացաւ, և իմ սիրտս բերկրեցաւ, և իմ մարմինս ալ յուսով պիտի ապրի :

10 Ինչու որ իմ անձս գերեզմանը չի պիտի թողուս, և քու սուրբիդ ապականութիւն տեսնալ չի պիտի տաս :

11 Վրու կենաց ճամբաներդ ինծի ցըցուցիր, քու երեսիդ ուրախութիւնովը իս լեցուցիր՝ յաւի-

տեան քու աջ կողմիդ վայելչութեանը բաղցրութեանէն :

ՍԱՂՄՈՍ ԺԶ .

Դուր տէր արդարութեան .

1 Մի տէր արդարութեան՝ լսէ , և իմ խնդրուածքիս նայէ , ականջ դիր իմ աղօթքիս , ինչու որ նենգաւոր շրթունքով չէ :

2 Քու երեսէդ իրաւունք ելլէ ինծի , և իմ աչքըներս ուղղութիւն տեսնան :

3 Իմ սիրտս փորձեցիր և գիշեր ժամանակ քննեցիր . իս փորձեցիր , և իմ քովս անիրաւութիւն չի գտնուեցաւ :

4 Իմ բերանս մարդկանց որդիքներուն գործքերը չի խօսի . քու շրթունքիդ խօսքերուն համար ես խիստ ճամբաները պիտի պահեմ :

5 Իմ շաւիղներս քու ճամբուդ մէջ հաստատէ , որ իմ դնացքներս չի սահին :

6 Ես քեզի կանչեցի ո՛վ տէր , ինչու որ ինծի լսեցիր ո՛վ աստուած , խոնարհեցուր ինծի քու ականջդ , և իմ խօսքիս լսէ :

7 Սքանչելի ըրիր քու ողորմութիւնդ , դուն որ քեզի յուսացողները քու աջ կողմիդ հակառակ եղողներէն կ'ազատես :

8 Իս աչքի բիբի պէս պահէ , քու թեւերուդ հովանաւորութիւնովը իս ամբարիշտներուն երեսէն ծածկէ՝ որ ինծի նեղութիւն տուին :

9 Թշնամիները իմ անձս պաշարեցին, և իրենց պարարտութեանը մէջ մնացին, և անոնց բերանները ամբարտաւանութիւն խօսեցան :

10 Եւ մերժեցին՝ և Հիմայ նորէն իմ չորս կողմս պատեցին . միտվընին դրին որ իս գեաօինը զարնեն :

11 Եւ ուրիշի պէս վըաս քալեցին՝ որ որսի պատրաստ է . և առիւծի ձագի պէս՝ որ դարանակալ կը նստի :

12 Եւ իր սվ տէր, անոնց հասիր ու անոնք խափանէ . և իմ անձս ամբարիշտներուն սուրէն և Թշնամիին ձեռքէն խալըսէ :

13 Ո՛վ տէր, անոնք երկրին երեսէն կորսնցուր իրենց կեանքին մէջ խափանէ ու բաժնէ անոնք :

14 Եւ անոնց փորերը քու գաղտնիքներովդ լեցուցան . կերակուրներով կշտացան, ու մնացածները իրենց տղոցը թողուցին :

15 Եւ արգարութիւնով քու առջիդ պիտի երեւամ . և քու փառքիդ երեւցած ժամանակը պիտի կշտանամ :

## ՕՐ ԵՐՐՈՐԴ

### ԱՂՕԹ Ք ԵՐԵԿՈՅԻ

ՍԱՂՄՈՍ ԺԷ .

Սիրեցից զքեզ տէր .

1 Ո՛վ տէր, իմ զօրութիւնս, քեզ պիտի սիրեմ :

տէրը իմ հաստատութիւնս , իմ ապաւէնս և իմ փրկկիչս է :

2 Աստուած է իմ օգնականս , և ես անոր կը յուսամ . իմ ապաւէնս , իմ փրկութեանս եղջիւրը և իսրնդունողն է :

3 ()ըհնութիւններով տէրոջը պիտի աղաչեմ , և իմ թշնամիներէս պիտի աղատիմ :

4 Սահուան տրտմութիւնները չորս կողմն պատեցին , և անօրէնութեան հեղեղները իս խռովեցուցին :

5 Ղերեզմանին ցաւերը իս պաշարեցին , և մահուան որոգայթները ինծի հասան :

6 Իմ նեղութեանս մէջ տէրոջը աղաղակեցի , և իմ աստուծոյս կանչեցի :

7 Իր սուրբ տաճարէն իմ աղօթքիս ձայնին լսեց . և անոր առջեւը ըրած աղաղակս անոր ականջը պիտի մտնայ :

8 Արկիրը խռովեցաւ ու դողաց , և լեռներուն հիմերը շարժեցան ու սասանեցան , ինչու որ անոնց վրայ աստուած բարկացաւ :

9 Անոր բարկութենէն ծուխ ելաւ , և անոր երեսներէն հուր բորբոքեցաւ , և անկէ կայծակներ արձրկեցան :

10 Արկինքները խոնարհեցուց ու իջաւ , և մէզը անոր ոտքին տակն էր :

11 Ղերորէները հեծաւ ու թռաւ , և հովերուն թևերուն վրայ արագ գնաց :

12 Խաւարը իրեն ծածկոց ըրաւ, և իր բնակարանները անոր չորս կողմն է. ու խաւար ամպեր են մինչև օդերուն ամպերը :

13 Անոնց առջեւը իր փայլակ հանած ժամանակը, ամպերը կարկուտը ու հուրին կայծակները իջեցուցին :

14 Տէրը երկինքէն որոտաց, և բարձրեալը իր ձայնը կարկուտին ու կայծակին հուրերուն տուաւ :

15 Իր նետերը խրկեց ու անոնք ցրուեց, իր փայլակները շատցուց և անոնք խռովեցուց :

16 Չուրերուն աղբիւրները երեւցան, ու աշխարհիս հիմերը յայտնուեցան՝ քու սաստկէդ ո՛վ տէր, և քու բարկութենէդ փշած հովէն :

17 Մարձրութիւններէն խրկեց ու իսընդունեց, իս շատ ջուրերէն ազատեց :

18 Իմ զօրաւոր թշնամիներէս և իս ատողներէն տէրը իս պիտի խալըսէ, ինչու որ ինէ էվելի զօրացան :

19 Իմ նեղութեանս օրը ինծի հասան. տէրը իմ օգնականս եղաւ, ու իս խաղաղութեան հանեց. և տէրը իս պիտի փրկէ, ինչու որ ինծի հաճեցաւ :

20 Տէրը իմ արդարութեանս փոխարէն ինծի պիտի հատուցանէ. իմ մաքրութեանս փոխարէն ինծի պիտի հատուցանէ :

21 Ես տէրոջը ճամբաները պիտի պահեմ, և իս աստուծոյս ամբարշտութիւն չի պիտի ընեմ :

22 Անոր ամէն դատաստանները իմ առջիս են. և իր արդարութիւնը ինէ չի հեռացուց :

23 Այս ալ անոր հետ ամբիժ պիտի ըլլամ . ու  
իմ անօրէնութիւնէս պիտի զգուշանամ :

24 Տէրը իմ արդարութեանս փոխարէն ինձի  
պիտի հատուցանէ , իմ ձեռւըններուս սրբութեանը  
նայելով՝ որ անոր աչիւններուն առջին է :

25 Արդարին հետ արդար կ'ըլլաս , ամբիժ մար-  
դուն հետ ամբիժ . ընտրեալներուն հետ ընտրեալ  
կ'ըլլաս , և ծուռ եղողները գլխի վար կը բերես :

26 Գուն խոնարհ ժողովուրդները կ'ապրեցու-  
նես . և ամբարտաւաններուն աչիւնները դուն կը խո-  
նարհեցունես :

27 Գուն իմ ճրագս կը լուսաւորես ո՞վ տէր .  
ո՞վ իմ աստուածս , խաւարին մէջ լոյս տուր ինձի :

28 Վեզմով փորձութենէ պիտի փրկուիմ , իմ  
աստուծովս պարիսպները պիտի անցնիմ :

29 Ո՞վ իմ աստուածս , քու ճամբաներդ կա-  
տարեալ են , և տէրօջը խօսքերը ընտրուած են . և ա-  
պաւէն է ան ամէնուն՝ որ իրեն կը յուսան :

30 Արովհետեւ՝ տէրօջմէն 'ի զատ ո՞վ է աս-  
տուած , կամ մեր աստուծմէն 'ի զատ ո՞վ է աս-  
տուած :

31 Ո՞վ աստուած , դուն ինձի զօրութիւն հա-  
գուցիր , և իմ ճամբաներս մաքրեցիր :

32 Ոտվըներս եղջերուին ոտվըներուն պէս հաս-  
տատեցիր , և բարձր տեղերը իս կայնեցուցիր :

33 Իմ ձեռքս պատերազմի վարժեցիր , և իմ  
բազուկս զօրաւոր աղեղին պէս ըրիր . և ինձի քու

փրկութեանդ պաշտպանութիւնը շնորհեցիր :

34 Վրու աջ ձեռքդ իս ընդունեց, և քու խրատդ իս յաւիտեան հաստատեց, և քու խրատդ իս պիտի վարժէ :

35 Իմ քայլերս լանցուցիր իմ տակս, և իմ շուրջներս չի տկարացան :

36 Իմ թշնամիներս պիտի հալածեմ, և անոնց պիտի հասնիմ . և անոնցմէ ետ չի պիտի դառնամ՝ մինչև որ անոնց վերջը բերեմ :

37 Ընոնք պիտի նեղեմ, ու մէյ մ'ալ կայնելու կարող չի պիտի ըլլան . և իմ ոտվըներուս ներքեւը պիտի իյնան :

38 Վրու զօրութիւնդ ինծի հագուցիր պատերազմի ժամանակ . իմ վրայ ելլողները՝ իմ իշխանութեանս տակը ձգեցիր :

39 Իմ թշնամիներս հալածական ըրիր, ու իս ատողները սատկըցուցիր :

40 Եղադակեցին՝ և մէկը չի կար որ անոնք ազատեր . տէրոջը աղաղակեցին՝ և անոնց չի լսեց :

41 Ետոյն առջեւը եղած փոշիին պէս անոնք պիտի մանրեմ . և փողոցներուն տիղմին պէս անոնք պիտի կոխեմ :

42 Տէրը իս պիտի փրկէ ժողովուրդներուն հակառակութենէն, ու իս հեթանոսներուն գլուխ պիտի կարգէ :

43 Ըն ժողովուրդը՝ որ ես ամենեւին չէի ճանչնար, ինծի ծառայեց . և իր ականջներովը ինծի լսեց :

44 ( ) օտարներուն զաւկըները ինծի սուտ զրուցեցին . օտարներուն զաւկըները տկարցան , և իրենց ճամբաներէն մնորեցան :

45 Կենդանի է տէրը , և օրհնեալ է աստուած , և իմ փրկութեանս աստուածը թող բարձրնայ :

46 Եստուած է որ իմ վրէժս կը խնդրէ , և ժողովուրդը իմ իշխանութեանս տակը հնազանդ կ'ընէ :

47 Գոռն իմ բարկացող թշնամիներէս իս ազատեցիր . իմ վրաս ելլողներուն վրայ իս բարձրացուցիր , և անիրաւ մարդէն իս փրկեցիր :

48 Ուստի ո՛վ տէր , հեթանոսներուն մէջ քեզ պիտի գովեմ . և քու անուանդ սաղմոսներ պիտի երգեմ :

49 Սեծ ըրիր անոր թագաւորին փրկութիւնը , ողորմութիւն ընելու անոր օծեալին , դաւիթին և անոր զաւկին ազգէ մինչեւ ազգ :

## ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

### ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏՈՒ

ՍԱՂՄՈՍ ԺԸ .

Երկինք պատմեն զիառուս աստուծոյ .

1 Երկինքները աստուծոյ փառքը կը պատմեն , և երկինքի հաստատութիւնը անոր ձեռքին գործերը կը ցըցունէ :

2 ()ըը օրին կը յայտնէ խօսքը , և գիշերը գիշերին կը ցըցունէ գիտութիւնը :

3 Չի կան բաներ և չի կան խօսքեր , որ անոնց ձայները չի լսուին :

4 Ամէն երկիր անոնց բարբառը ելաւ , և մինչեւ աշխարհի ծայրերը անոնց խօսքերը :

5 Արեւին մէջ կանգնեցուց իր խորանը , և ինքը առագաստէն ելող փեսայի պէս է , և զօրաւոր մարդու պէս ճամբան վազած ժամանակը կ'ուրախանայ :

6 Անոր ելքը երկինքի ծայրերէն է , և անոր հանդիստը մինչեւ անոր ծայրերը , և չի կայ մէկ բան մը՝ որ անոր սաստիկ տաքութենէն փախչի :

7 Տէրօջը օրէնքը ուղիղ է , և հոգիները կը դարձունէ , տէրօջը վկայութիւնը հաւատարիմ է , և տղաքները իմաստուն կ'ընէ :

8 Տէրօջը արդարութիւնը ուղիղ է , և սիրտերը կ'ուրախացունէ , տէրօջը պատուիրանքները լոյս են , և աչքներուն լոյս կուտան , տէրօջը վախը սուրբ է , և յաւիտեան կը մնայ :

9 Տէրօջը դատաստանները ճշմարիտ են , և բոլորովին արդար են :

10 Պատուական են անոնք ոսկիէն ու շատ պատուական քարերէն , անոնք քամուած մեղրէն ա՛նուշ են :

11 Ինչու որ քու ծառագ անոնք պիտի պահէ , և անոնք պահելէն շատ հատուցում կայ իրեն :

12 Իր յանցանքները ո՞վ կրնայ գիտնալ , իմ

գաղտնի անօրէնութիւններէս իս սրբէ , ո՛վ տէր , և  
օտարէն բու ծառայ զգուշացիր :

13 Հապա թէ որ անոնք ինծի չի տիրեն , ան  
ժամանակը ամբիժ պիտի ըլլամ , և մեծ մեղքերէն  
պիտի սրբուիմ :

14 Ինքնիս խօսքերը ու սրտիս խորհուրդները  
ամէն ժամանակ քու առջիդ ընդունելի պիտի ըլլան  
ո՛վ տէր , իմ օգնականս ու փրկիչս :

ՍԱՂՄՈՍ ԺԹ .

Լուիցէ քեզ տէր .

1 Եւղութեան օրը տէրը քեզի լսէ , յակորին  
աստուծոյն անունը քեզի օգնական ըլլայ :

2 Տէրը քեզի օգնութիւն խրկէ իր սուրբ տե-  
ղէն սիօնէն , և քեզ ընդունի :

3 Տէրը քու ամէն պատարագներդ յիշէ , և քու  
ուխտերդ ընդունելի ընէ :

4 Տէրը քու սրտիդ պէս քեզի տայ , և քու ա-  
մէն խորհուրդներդ ան կատարէ :

5 Սննք բու փրկութեանդ համար ուրախ ըլ-  
լանք , մեր աստուծոյ անուանը համար մեծ ըլլանք :

6 Տէրը քու ամէն խնդրուածքներդ կատարէ .  
հիմայ գիտցանք՝ որ տէրը իր օծեալը փրկեց :

7 Ասոր լսեց երկինքէն՝ իր սուրբ տեղէն , իր  
աջ ձեռքին փրկութեան զօրութիւնովը :

8 Ոմանք կառքերուն և ոմանք ձիերուն կ'սպա-

հինին , բայց մենք մեր աստուծոյ անուանը աղաղակենք :

9 Անոնք խափանեցան ու ինկան , մենք ելանք ու շիտակ կայնեցանք :

10 Այլ տէր փրկէ թագաւորը , և լսէ մեզի անօրը՝ որ քեզի կ'աղաղակենք :

ՍԱՂՄՈՍ Ի .

Տէր 'ի զօրութեան քում .

1 Այլ տէր , քու զօրութիւնովդ թագաւորը պիտի ուրախանայ , և քու փրկութիւնովդ խիստ պիտի ցնծայ :

2 Անոր սրտին փափաքը իրեն շնորհեցիր , և անոր շրթունքներուն ուղածը իրմէն չարգիլեցիր :

3 Վրու քաղցր օրհնութեանդ հասուցիր անիկայ , և անոր գլուխը պատուական բարէ պսակ դրիր :

4 Վրենէ կեանք խնդրեց , և անոր երկար օրեր տուիր յաւիտեանս յաւիտենից :

5 Վրու փրկութիւնովդ անոր փառքը մեծ է , անոր վրայ փառք ու մեծվայելութիւն պիտի դնես :

6 Անիկայ քու օրհնութեանդ արժանի պիտի ընես յաւիտեանս յաւիտենից . անիկայ պիտի ուրախացունես քու երեսիդ ուրախութիւնովդ :

7 Թագաւորը տէրօջը յուսաց , բարձրեալին ու զօրութիւնովդ ան չի պիտի սասանի :

8 Վրու ձեռքդ քու թշնամիներուդ վրայ գրտ-

նուի, և քու աջ ձեռքդ բոլոր քեզ ատողները գտնայ :

9 Անոնք հնոցի պէս կրակին մէջ պիտի դնես դատաստանիդ ժամանակը :

10 Տէրը իր բարկութիւնովը անոնք պիտի զարհուրեցունէ, և կրակը անոնք պիտի ուտէ :

11 Անոնց պտուղը երկրէն պիտի կորսուի, և անոնց զաւկընները մարդկանց որդիքներէն :

12 Չարութիւնով քենէ մոլորեցան, խորհուրդ մտմտացին՝ որ կարող չեղան կատարելու :

13 Անոնք պիտի հալածես, քու մնացած (բարկութիւններուդ) պիտի պատրաստես անոնց երեսը :

14 Ա՛յ տէր, քու զօրութիւնովդ բարձր եղիր, որ հնութիւն պիտի տանք ու սաղմոս ըսենք քու զօրութեանդ :

## ՕՐ ՉՈՐՐՈՐԳ

### ԱՂՕԹ Ք ԵՐԵԿՈՅԻ

#### ՍԱՂՄՈՍ ԻԱ.

Աստուած աստուած իմ .

1 Ա՛յ աստուած՝ իմ աստուածս, ինձի նայէ, ինչո՞ւ իսթողուցիր. իմ փրկութիւնէս հեռու կայնեցար իմ յանցանքներուս համար :

2 Ա՛յ աստուած, ցորեկը քեզի աղաղակեցի, և ինձի չի լսեցիր. գիշերը՝ ու ինձի մտիկ չըրիր :

3 Պուն քու սուրբերուդ մէջը բնակած ես, և իսրայէլին մէջ գովեալ :

4 Սեր հայրերը քեզի յուսացին, քեզի յուսացին՝ և անոնք փրկեցիր :

5 Վեզի աղաղակեցին և ազատեցան, քեզի յուսացին ու չամբչցան :

6 Հապա ես՝ որ որդ եմ ու չէ թէ մարդ, մարդոց նախատինք և ժողովրդոց արհամարհանք :

7 Մէն իս տեսնողները իս կ'անարգէին, իրենց շրթունքներովը կը խօսէին, և իրենց գլուխը կը շարժէին :

8 Տէրոջը յուսաց, և ինքը անիկայ թող փրկէ. թող ազատէ անիկայ՝ թէ որ կը կամի :

9 Պուն ես՝ որ իս արգանդէն հանեցիր, իմ մօրս փորէն դուն ես իմ յոյս :

10 Արգանդէն ես քեզի յանձնուեցայ, մօրս փորէն դուն ես իմ աստուածս :

11 Ինէ մի հեռանար, ինչու որ նեղութիւնները մօտ են, և ինծի օգնող մէկը չի կայ :

12 Հատ զուարակներ իմ բողբոսիքս պատեցին, և գէր ցուլեր չորս կողմն առին :

13 Բերաննին իմ վրայ բացին, յափշտակող ու մոնչող առիւծի նման :

14 Ես ջուրի պէս թափուեցայ, և իմ ամէն ոսկորներս ցրուեցան, ու սիրտս փորիս մէջ մոմի պէս հալեցաւ :

15 Իմ զօրութիւնս հողէ շինուած ամանի պէս

չորցաւ , լեղուս քիւքիս փակաւ , և իս մահուան  
հողը դրին :

16 Շատ շուներ չորս կողմն առին , և չարերուն  
ժողովները իս պաշարեցին :

17 Չեռւմներս ու ոտւմներս ծակեցին , և իմ  
ամէն ոսկորներս համրեցին . անոնք նայեցան ու իս  
տեսան :

18 Իմ հանգերծս իրենց մէջ բաժնեցին , և իմ  
վերարկուիս վրայ վիճակ ձգեցին :

19 Դուն ուլ տէր , քու օգնութիւնդ ինէ մի հե-  
ռացուններ . և ուլ տէր , նայէ որ ինծի օգնես :

20 Իմ անձս սուրէն փրկէ , և իմ մինակու-  
թիւնս շուներուն ձեռքէն :

21 Իս առիւծին բերնէն ազատէ , և իմ խոնար-  
հութիւնս միեղջերուին եղջիւրէն :

22 Վրու անունդ իմ եղբայրներուս պիտի պատ  
մեմ . եկեղեցիին մէջ քեզ պիտի օրհնեմ :

23 Ուլ տէրոջմէն վախցողներ , տէրը օրհնեցէք .  
յակորին ամէն զաւկրները թող անիկայ փառաու-  
րեն :

24 Իսրայէլի ամէն զաւկրները թող տէրոջմէն  
վախնան . ինչու որ տէրը իմ՝ աղքատիս աղօթքը չա-  
նարգեց ու չի մերժեց , և իր երեսը ինէ չի դարձուց .  
հասպա անոր աղաղակած ժամանակս ինծի լսեց :

25 Իմ գովութիւնս քենէ է ուլ տէր , մեծ բաղ-  
մութիւններուն մէջ քեզ պիտի օրհնեմ :

26 Իմ ուխտերս ամէն անկէ վախցողներուն առ-

ջին պիտի կատարեմ :

27 Տնանկները պիտի ուտեն ու պիտի կշտանան ,  
տէրը պիտի օրհնեն անոնք՝ որ զինքը կը փնտռեն :

28 Անոնց սիրտերը յաւիտեանս յաւիտենից  
պիտի ապրին , պիտի յիշեն , և երկրի ամէն ծայրերը  
տէրոջը պիտի դառնան :

29 Ամէն ազգերուն զեղերը անոր երկրպագու-  
թիւն պիտի ընեն , ինչու որ արքայութիւնը տէրոջն  
է , և ան ամէն հեթանոսներուն վրայ կը տիրէ :

30 Արան ու անոր երկրպագութիւն ըրին երկ-  
րի ամէն պարարտները , անոր առջին ծունր պիտի  
կրկնեն ան ամէնքը՝ որ հողը կ'իջնան :

31 Անով իմ անձս կ'ապրի , և իմ զաւակս անոր  
պիտի ծառայէ :

32 Տէրոջը համար ան գալու ազգին պիտի պատ-  
մեմ , տէրոջը ըրած արդարութիւնը պիտի պատմեմ  
ան ժողովուրդին՝ որ պիտի ծնանի :

ՍԱՂՄՈՍ ԻԲ .

Տէր հովուեսցէ զիս .

1 Տէրը իս պիտի հովուէ , և ինձի բան մը պա-  
կաս չի պիտի ըլլայ :

2 Խոտաւէտ տեղը իս բնակեցուց , ու հանգիստ  
ջուրերուն քով իս սնուց :

3 Իմ անձս ինձի դարձուց , իս արդարութեան  
ճամբաներուն մէջ առաջնորդեց իր անուանը հա-  
մար :

4 Թէպէտեւ մահուան ստուերներուն մէջը ան-  
գամ երթալու ըլլամ, չարէն չի պիտի վախնամ,  
ինչու որ դուն ո՞վ տէր, իմ հետս ես:

5 Վո՛ւ ցուպդ ու գաւաղանդ, անոնք իս պիտի  
մխիթարեն:

6 Իմ առջիս սեղան պատրաստեցիր, ինծի նե-  
ղութիւն տուողներուն դէմ:

7 Իմ գլուխս իւղով օծեցիր, քու բաժակդ ա-  
նարատ գինիի պէս իս գինով ըրաւ:

8 Ո՞վ տէր, քու ողորմութիւնդ իմ հետս պի-  
տի գայ կեանքիս ամէն օրերուն մէջ, տէրօջը տանը  
մէջ բնակելու երկար օրերով:

## ՕՐ ՀԻՆԳԻՆՐՈՐԳ

### ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏՈՒ

ՍԱՂԾՈՍ ԻԳ.

Տեառն է երկիր.

1 Տէրօջն է երկիրը բոլոր իր լիութիւնովը, աշ-  
խարհը ու ամէն անոր բնակիչները:

2 Ըն ձգեց անոր հիմերը ծովուն վրայ, գետե-  
րուն վրայ պատրաստեց անիկայ:

3 Ո՞վ պիտի ելէ տէրօջը լեռը, կամ ո՞վ պի-  
տի կենայ անոր սուրբ տեղը:

4 Ան որ ձեռքով սուրբ է՝ և սրտով ամբիժ , ան որ իր անձը ստուծեան չի տուաւ , և իր ընկերին նենգութիւնով երգում չըրաւ :

5 Ան տէրոջմէն օգնութիւն պիտի առնէ . որորմութիւն՝ իր փրկութեանը աստուծմէն :

6 Այս ազգն է որ տէրը կը փնտռէ . կը խնդրէ տեսնալ յակորայ աստուծոյ երեսը :

7 Ո՛վ իշխաններ , ձեր դուռները վերուցէք , հաստատ դուռները պիտի բացուին , ու փառաց թագաւորը պիտի մտնայ :

8 Ո՞վ է աս փառաց թագաւորը , հըօր տէրը իր զօրութիւնովը , պատերազմի մէջ հըօր տէրը :

9 Ո՛վ իշխաններ , ձեր դուռները վերուցէք , հաստատ դուռները պիտի բացուին , և փառաց թագաւորը պիտի մտնայ :

10 Ո՞վ է աս փառաց թագաւորը , զօրութիւններուն տէրը , աս ինքն է փառաց թագաւորը :

### ՍԱՂՄՈՍ ԻԴ .

Ա. քեզ տէր համբարձի .

1 Ո՛վ տէր , իմ անձս քեզի վերուցի . ո՛վ իմ աստուածս , քեզի յուսացի չի պիտի ամբշնամ , և իմ թշնամիներս իմ վրայ չի պիտի ծիծաղին :

2 Ան ամէնքը՝ որ քեզի կ'սպասեն , չի պիտի ամբշնան . հապա անօրէնները իրենց ունայնութիւնովը պիտի ամբշնան :

5 Ո՛վ տէր, քու ճամբաներդ ինծի ցրցուր, և քու շաւիղներդ ինծի սորվեցուր :

4 Վու ճշմարտութեանդ մէջ իս առաջնորդէ, ու ինծի սորվեցուր, ինչու որ դուն ես իմ փրկիչ աստուածս. և ես ամէն օր քեզի կ'սպասեմ :

5 Ո՛վ տէր, քու գթութիւններդ ու ողորմութիւններդ յիշէ, որ հին ժամանակէն են :

6 Սանկութեան ու ազխութեան մեղքերս մի յիշեր. հասկա իս քու ողորմութեանդ չափովը յիշէ ո՛վ տէր, քու քաղցրութեանդ համար. ինչու որ քաղցր և ուղիղ ես ո՛վ տէր :

7 Եսոր համար մեղքին ճամբուն մէջ գտնուողներուն կը սորվեցունես, դատաստանի մէջ հեղերուն կ'առաջնորդես. քու ճամբաներդ հեղերուն կը սորվեցունես :

8 Տէրօքը ամէն ճամբաները ողորմութիւնով ու ճշմարտութիւնով են անոնց՝ որ անոր ուխտը ու վկայութիւնը կը խնդրեն :

9 Ո՛վ տէր, քու անուանդ համար ներէ իմ մեղքերս, ինչու որ շատցան. ո՛վ է ան մարդը՝ որ տէրօջմէն կը վախնայ. իր ուզած ճամբովը կը ճանչցունէ անոր :

10 Եսոր անձը բարութիւնով պիտի հանգչի, և անոր զաւակը երկիրը պիտի ժառանգէ :

11 Տէրը իրմէն վախցողներուն զօրութիւն է, և իր ուխտերը անոնց կը սորվեցունէ :

12 Ի՞մէն ժամանակ աչվըներս տէրօջն է. և ան

իմ ոտվըններս որոգայթէն կը հանէ :

13 Ինծի նայէ ու ողորմէ . ինչու որ մինակ ու աղքատ եմ ես :

14 Իմ սրտիս նեղութիւնները խիտ շատցան ,  
և իմ նեղութիւններէս իս հանէ :

15 Իմ խոնարհութիւնս ու աշխատութիւնս  
տես , և իմ ամէն մեղքերուս ներէ :

16 Իմ թշնամիներուս նայէ՛ որ շատցան , զուր  
տեղը իս ատելութիւնով ատեցին :

17 Իմ անձս պահէ ու իս փրկէ , ու չամրնամ .  
ինչու որ իմ յոյսս քու վրագ դրի :

18 Ըրգարները և ուզիղները ինծի կցորդ ե-  
ղան , ու ես քեզի համբերեցի . ո՛վ աստուած , փրկէ  
իսրայէլը իր ամէն նեղութիւններէն :

### ՍԱՂՄՈՍ ԻԵ .

Դատ արա ինձ տէր .

1 Ո՛վ տէր , իմ դատաստանս տես , վասն զի ամ-  
բըժութիւնով քալեցի . տէրոջը յուսացի՛ որ չի տը-  
կարանամ :

2 Ո՛վ տէր , իս փորձէ ու իս քննէ , փորձէ իմ  
երիկամունքներս ու իմ սիրտս :

3 Ո՛վ տէր , քու ողորմութիւնդ իմ աչքիս առ-  
ջին է . և քու ճշմարտութեանդ պիտի համիմ :

4 Վրուճ մարդոյը ժողովը չի պիտի նստիմ , և  
անօրէններուն հետ չի պիտի խառնուիմ :

5 Ես չարերուն ժողովը ատեցի, ու ամբարիշտ-  
ներուն հետ չի պիտի նստիմ :

6 Սրբութիւնով իմ ձեռւորներս պիտի լուամ,  
և քու սեղանիդ ըղորտիքը պիտի պտըտիմ՝ ո՛վ տէր :

7 Վեզի եղած օրհնութեան ձայնը լսելու, և  
քու ամէն սքանչելիքներդ պատմելու :

8 Ո՛վ տէր, ես քու տանդ վայելչութիւնը սի-  
րեցի, և քու փառքիդ եղած տեղը :

9 Իմ անձս ամբարիշտներուն հետ մի կորսըն-  
ցուներ, և իմ կեանքս արիւնահեղ մարդոցը հետ :

10 Ընոնց ձեռւորները անօրէնութեան մէջ են, և  
անոնց աջ ձեռւորները կաշառքով լեցուն է :

11 Ես իմ անմեղութիւնովս գացի, ո՛վ տէր իս  
փրկէ, և ինձի ողորմէ :

12 Իմ ոտվորներս ուղղութեան մէջ կը կենայ,  
մեծ ժողովներուն մէջ քեզ պիտի օրհնեմ :

### ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԻ

ՍԱՂՄՈՍ ԻԶ.

Տէր լոյս իմ և կեանք իմ,

1 Տէրը իմ լոյսս ու իմ կեանքս է, ես ո՛ւրկէ  
պիտի վախնամ. տէրը իմ կեանքիս ապաւէնն է, ես  
ո՛ւրկէ պիտի դողամ :

2 Չարերը իմ մարմինս ուտելու համար ինձի մտեցած ժամանակնին, ինձի ներշնչութիւն տուողները ու իմ թշնամիներս տկարացան ու ինկան :

3 Թէ որ վրաս պատերազմ պատրաստուի, իմ սիրտս չի պիտի վախնայ, թէ որ վրաս բանակ ելլէ, սակայն այսու ամենայնիւ ես քեզի յուսացի ո՛վ տէր :

4 Մէկ բան մը խնդրեցի տէրոջմէն և անիկայ կ'ողաչեմ, որ իմ կեանքիս ամէն օրերը տէրոջը տանը մէջ բնակիմ, տէրոջը վայելութիւնը տեսնամ, և անոր տանը մէջ հրաման ընեմ :

5 Փորձութեան օրը իս իր խորանին մէջ պահեց, իր խորանին ծածկոցովը իս ծածկեց :

6 Վարէն վեր վերուցիր իս, և հիմայ իմ թըշնամիներուս վրայ իմ գլուխս բարձրըցուր :

7 Ենոր բոլորտիքը պիտի պտըտիմ և անոր խորանին մէջ օրհնութեան պատարագ պիտի մատուցանեմ, օրհնեմ ու սաղմոս պիտի երգեմ տէրոջը :

8 Ո՛վ տէր, իմ ձայնիս լսէ, ինչու որ քեզի կանչեցի. ողորմէ ինձի ու լսէ, ինչու որ իմ սիրտս քեզի ըսաւ, և իմ երեսներս խնդրեցին, ո՛վ տէր՝ քու երեսդ խնդրեցին :

9 Վու երեսդ ինէ մի դարձուներ, և բարկութիւնով քու ծառայէդ մի մոլորիր :

10 Ո՛վ տէր, իմ օգնականս եղիր, և իս մ'անարգեր, ու իս մի թողուր ո՛վ աստուած՝ իմ փրկիչս :

11 Իմ հայրս ու մայրս իս թողուցին, և տէրը իս ընդունեց :

12 Ո՛վ տէր, քու օրէնքիդ գիտութիւնը ինծի շնորհէ քու ճամբուդ մէջ, իս քու ուղիդ շաւիղնե-  
րուդ մէջ առաջնորդէ :

13 Ի՛մ թշնամիներու համար, իս ինծի նեղու-  
թիւն տուողներուն ձեռքը մի տար :

14 Սուտ վկաներ իմ վրաս ելան, և իրենց անօ-  
րէնութիւնովը ինծի սուտ խօսեցան :

15 Հաւատացի տէրօջը բարութիւնը կենդա-  
նիներուն երկրին մէջ տեսնալու, տէրօջը սպասէ ու  
կարիճ եղիր. քու սիրտդ թող զօրանայ, և տէրօջը  
սպասէ :

ՍԱՂՄՈՍ ԻԷ .

Ը՞ն քեզ տէր կարգացի .

1 Ո՛վ իմ աստուածս քեզի կանչեցի, ինծի մի-  
լուեր, բնաւ ինծի մի լուեր, որ չըլլայ թէ գերեզմանը  
իջնողներուն նմանիմ :

2 Ո՛վ տէր, իմ խնդրուածքներու ձայնին լսէ  
քեզի աղաչած ժամանակս, քու սուրբ տաճարիդ  
մէջ ձեռավրներս քեզի վերուցած ժամանակս :

3 Ի՛մ անձս ամբարիշտներուն հետ մի սեպեր,  
անօրէնութիւն գործողներուն հետ իս մի կորսնցու-  
ներ :

4 Որո՞նք՝ իրենց ընկերներուն հետ խաղաղու-  
թիւն կը խօսէին, և իրենց սրտին մէջ չարութիւն  
կայ :

5 Ը՞նոնց գործքերուն նայելով սուր անոնց ո՞վ

տէր , անոնց անօրէն վարքերուն նայելով տուր անոնց . անոնց ձեռքին գործքերուն նայելով անոնց հատուցում ըրէ :

6 Անոնք տէրոջը գործքերը չիմացան , ու ոչ ալ անոր ձեռքին գործքերուն նայեցան , անոնք գետինը պիտի զարնես , ու ալ չի պիտի կայնին :

7 ()ըհնեալ է տէրը , որ իմ աղօթքիս ձայնին ըսեց . տէրը իմ օգնականս ու իմ պաշտպանս է :

8 Իմ սիրտս անոր յուսաց . օգուտ գտաւ իմ մարմինս և ուրախացաւ . ու ես իմ կամքովս գոհութիւն պիտի տամ անոր :

9 Տէրը իր ժողովուրդին զօրութիւնը , ու իր օծեալին փրկութեանը ապաւէնն է :

10 Փրկէ քու ժողովուրդդ , ու օրհնէ քու ժառանգութիւնդ . հովուէ անոնք ու յաւիտեան բարձրըցուր :

ՍԱՂՄՈՍ ԻԸ .

Մատուցէք տեսնն որդիք աստուծոյ .

1 Տէրոջը տուէք ո՛վ աստուծոյ որդիքներ , տէրոջը մատուցէք խոյերուն ձագերը :

2 Վառք ու պատիւ տուէք տէրոջը , իր անուանը փառքը տէրոջը մատուցէք . ու տէրոջը երկրպագութիւն ըրէք իր սուրբ սրահին մէջ :

3 Տէրոջը ձայնը ջուրերուն վրայ է , և փառաց աստուածը որոտաց . և ինքը տէրը շատ ջուրերուն վրայ է :

4 Տէրոջը ձայնը զօրաւոր է, և տէրոջը ձայնը  
խիստ փառաւոր է :

5 Տէրոջը ձայնը մայր ծառերը կը ջարդէ, և տէ-  
րը լիբանանու մայր ծառերը կը մանրէ :

6 Անոնք լիբանանու նորարոյս ընծիւղին պէս  
պիտի մանրէ, որ սիրելի է միեղջերուին ձագերուն  
պէս :

7 Տէրոջը ձայնը կրակին բոցերը կը ճղքէ. տէ-  
րոջը ձայնը անապատը կը շարժէ, և տէրը կաղէտ  
անապատը կը գողացունէ :

8 Տէրոջը ձայնը եղջերուները կը հաստատէ, ու  
անտառները կը յայտնէ. իր տաճարին մէջ ամէնքը  
անոր փառքը պիտի պատմեն :

9 Տէրը ջրհեղեղները կը նստեցունէ ու կը ցած-  
ցունէ, տէրը յաւիտեան պիտի թագաւորէ :

10 Տէրը իր ժողովուրդին զօրութիւն պիտի տայ,  
և իր ժողովուրդը խաղաղութիւնով պիտի օրհնէ :

## ՕՐ ՎԵՅԵՐՈՐԳ

### ԱՂՕԹ Ք ԱՌԱԻՕՏՈՒ

ՍԱՂՄՈՍ ԻԹ.

Բարձր առնեմ զբեղ տէր.

1 Ա՛լ տէր, քեզ կը բարձրըցունեմ, ինչու որ

իս ընդունեցիր. ու թշնամիներս վրաս չուրախացուցիր :

2 Ո՛վ տէր՝ իմ աստուածս, քեզի աղաղակեցի, ու իս բժշկեցիր. ո՛վ տէր, իմ անձս գերեզմանէն հանեցիր. գերեզմանը իջնողներէն իս ազատեցիր :

3 Սաղմոս Լրգեցէք տէրօջը ով անոր սուրբերը, անոր սրբութիւնը յիշելով շնորհակալ եղիք :

4 Մնոր բարկութեանը մէջ սրտմտութիւն կայ, և անոր կամքէն կեանք կայ :

5 Իրիկունը լալով պիտի պառկին, առտուանց ուրախութիւն պիտի ըլլայ :

6 Աս իմ հանգստութեանս մէջ ըսի թէ՛ յաւիտեան չի պիտի շարժիմ, ո՛վ տէր, քու հաճութեամբդ իմ փառքիս զօրութիւն տուիր, երեսդ ինէ դարձուցիր, ու ևս խռովեցայ :

7 Ո՛վ տէր քեզի կանչեցի, իմ աստուծոյս աղաղակեցի. ի՞նչ օգուտ կայ քեզի իմ արիւնէս, թէ որ ես ապականութեան իջնամ :

8 Սի՛թէ՞ հողը քեզ պիտի փառաբանէ. կամ քու ճճմարտութիւններդ պիտի պատմէ :

9 Տէրը ինծի լսեց ու ողորմեցաւ. և տէրը ինծի օգնական եղաւ :

10 Իմ սուգս ուրախութեան դարձուց, քուրձը ինէ հանեց, ու ինծի ուրախութիւն հագուց :

11 Մնոր համար իմ փառքս քեզի սաղմոս պիտի երգէ, ու ալ չի պիտի դադարիմ. ո՛վ տէր՝ իմ աստուածս, քեզի յաւիտեան շնորհակալ պիտի ըլլամ :

ՍԵՂՄՈՍ Լ.

Ի քեզ տէր յուսացայ .

1 Ո՛վ տէր , քեզի յուսացի՝ յաւիտեանն չի պիտի  
ամբընամ . քու արդարութիւնովդ իս փրկէ ու ապ-  
րեցուր :

2 Լսկանչդ ինծի ծռէ , շուտ ըրէ իս ազատելու :

3 Երբ ինծի պաշտպան աստուած եղիր , և իս  
ապրեցունելու համար տուն ապաւինի . ինչու որ ին-  
ծի կարողութիւն տուողը և իմ ապաւէնս դուն ես :

4 Վառ անուանդ համար ինծի առաջնորդ ե-  
ղար , ու իս սնուցիր . և իս աս որոգայթէն պիտի հա-  
նես , որ ինծի համար դրուեցաւ :

5 Ո՛վ տէր , դուն ես իմ պաշտպանս , և քու  
ձեռքիդ կը յանձնեմ իմ հոգիս :

6 Ո՛վ տէր աստուած , քու ճշմարտութիւնովդ  
իս փրկեցիր . ատեցիր անոնք՝ որ ոչինչ տեղը վախ կը  
պահեն :

7 Ես տէրոջը յուսացի , պիտի ցնծամ ու ուրախ  
ըլլամ քու փրկութիւնովդ :

8 Իմ խոնարհութիւնս տեսար , ու իմ անձս  
նեղութիւններէն ազատեցիր . և ինծի նեղութիւն  
տուողներուն ձեռքը իս չի մատնեցիր , և իմ ոտովներս  
լայն արձակ տեղը կայնեցուցիր :

9 Ո՛վ տէր , ողորմէ ինծի , ինչու որ նեղութեան  
մէջ եմ . սրտնեղութենէն աչքս , անձս ու փորս  
մաշեցան :

10 Նաւերէն իմ կեանքս պակսեցաւ , և իմ տարիներս հառաջանք ընելով :

11 Իմ զօրութիւնս տկարութիւնով պակսեցաւ , և իմ ոսկորներս մաշեցան :

12 Իմ ամէն թշնամիներէս էվել նախաստինք եղայ ես իմ դրացիներուս , իմ ծանօթներուս խիստ ահ ու երկիւղ . ան ամէնքը որ իս կը տեսնային , դուրս կը փախէին :

13 Ես մեռածի պէս մոռցուեցայ . ու կորսուած ամանի պէս եղայ :

14 Ինչու որ ես շատերուն բամբասանքները լսեցի , որ իմ չորս կողմն էին . անոնց մէկ տեղ եկած ժամանակը խորհուրդ ըրին որ իմ հոգիս առնեն . սակայն ո՛վ տէր , ես քեզի յուսացի :

15 Ես ըսի թէ՛ դուն ես իմ աստուածս , և իմ կեանքս քու ձեռքդ է . փրկէ իս իմ թշնամիներուս ձեռքէն , ու իս հալածողներէն :

16 Օտառաներուդ ցրցուր քու երեսդ . ապրեցուր իս ո՛վ տէր , քու ողորմութիւնովդ . ո՛վ տէր , ամօթով չիյնամ , ինչու որ քեզի աղաղակեցի :

17 Եմբարիշտները թող ամընչան , ու դժօխքը իջնան . և նենգաւոր շրթունքները թող լռեն՝ որ արգարին դէմ անիրաւութիւն կը խօսէին , ամբարտաւանութիւնով ու բամբասանքով :

18 Ո՛վ տէր , որչափ մեծ է քու քաղցրութեանդ ողորմութիւնը , որ քենէ վախցողներուն պահեցիր անիկայ :

19 Վեղի յուսացողներուն ըր՛ր անիկայ, մարդկանց որդիքներուն առջին :

20 Վու երեսիդ ծածկոցովը անոնք ամուրցուցիր՝ մարդկանց խռովութենէն :

21 Վու խորանիդ մէջ անոնք ծածկեցիր, լեզուններուն հակառակութենէն :

22 () Ըհնեալ է տէրը, ինչու որ զարմանալի ըրաւ իր ողորմութիւնը պարսպաւոր քաղաքին մէջ :

23 Աս իմ շիրտութեանս մէջ ըսի թէ՛ ուրեմն քու աչքիդ առջեւէն մերժուեցայ :

24 Եսոր համար իմ աղօթքիս ձայնին լսեցիր, քեզի աղաղակած ժամանակս :

25 Տէրը սիրեցէք ո՛վ անոր ամէն սուրբերը, ինչու որ տէրը հաւատարմութիւն կը խնդրէ, և է՛վելի ամբարտաւանութիւն ընողներուն հասուցումը կ'ընէ :

26 Ո՛վ ամէն տէրոջը յուսացողները՝ քաջաբերինք, և ձեր սիրտերը թող զօրանայ :

## Օ Ր Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ

### Ա Ղ Օ Թ Ք Ե Ր Ե Կ Ո Յ Ի

ՍԱՂՄՈՍ ԼԱ.

Արանի ում թողութիւն եղև մեղաց.

1 Արանի անոր՝ որուն մեղքերուն թողութիւն

եղաւ , ու անոր ամէն յանցանքները ծածկուեցան :

2 Արանի ան մարդուն՝ որուն մեղքերը տէրը չի պիտի սեպէ , և անոր բերանը նենգութիւն չի կայ :

3 Աս լուռ կեցայ ու իմ ամէն ոսկորներս մաշեցան , ամէն օր գիշեր ցորեկ տէրոջը աղաղակելէն :

4 Վրու ձեռքդ իմ վրաս ծանրըցաւ , թշուառութեան դարձայ , ինչու որ փոշիքը ինձի մտան :

5 Իմ մեղքերս քեզի պիտի ցըցունեմ , և իմ անօրէնութիւններս քենէ չի պիտի ծածկեմ :

6 Բ՛սի թէ՛ ես ինքիրմէս իմ մեղքերս խոստովանիմ , և դուն իմ մեղքերուս ամէն ամբարտաւանութիւնները պիտի ներես :

7 Ա՛սոր համար ամէն սուրբերը աղօթքի պիտի կայնին քեզի . ընդունելի ժամանակը , մանաւանդ մեծ ջուրերուն հեղեղներուն ժամանակը , որ անոր չի մօտենան :

8 Դուն ես իմ ապաւէնս աս նեղութենէն , որ իմ չորս կողմս առին . ո՛վ իմ ցնծութիւնս , իս անոնցմէ փրկէ՛ որ իս պաշարեցին :

9 Վրեզի պիտի սորվեցունեմ , և երթալու ճամբադ քեզի պիտի ցըցունեմ , և իմ աչվըներս քու վրադ պիտի հաստատեմ :

10 Չիին ու ջորիին պէս մ'ըլլաք , որ անոնց քով իմաստութիւն չի կայ . սանձերով ու դանդաւնաւանդներով անոնց կզակները պիտի սխմես , որ քեզի չի մօտենան :

14 Սեղաւորներուն տանջանքը շատ է , բայց ո՛վ

որ տէրոջը կը յուսայ, տէրոջը ողոր հուծիւնը անոնց բոլորտիքը պիտի ըլլայ :

12 Վ՛ի արդարներ, ուրախ եղիք տէրոջմով ու ցնծացէք, պարծնցէք դուք ամէնքդ՝ որ սրտով ու շիղ էք :

ՍԱՂՄՈՍ ԼԲ .

Ճնծացէք արդաւք՝ի տէր .

1 Վ՛ի արդարներ, տէրոջմով ցնծացէք, շիտակներուն կը վայլէ օրհնութիւնը . տէրը օրհնութիւնով գովեցէք . տասը թելէ նուազ արանով անոր սաղմոս երգեցէք :

2 Նոր օրհնութիւնով տէրը օրհնեցէք, որ բարի է, օրհնութիւնով սաղմոս երգեցէք անոր :

3 Տէրոջը պատգամները ուղիղ են, և անոր ամէն ճամբաները հաւատարմութիւնով են, ու տէրը արդարութիւնը ու իրաւունքը կը սիրէ :

4 Տէրոջը ողորմութիւնովը երկիրը լեցուեցաւ, ու տէրոջը խօսքովը երկինքները հաստատուեցան, և անոր բերնին հոգիովը անոնց ամէն զօրութիւնները :

5 Օտովուն ջուրերը իբր թէ տիկերու մէջ ժողվեց, և անդունդներուն մէջ կը դնէ իր գանձերը :

6 Բոլոր երկիր թող տէրոջմէն վախնայ, ու աշխարհի ամէն բնակիչները թող անկէ դողան :

7 Ինչու որ ան ըսաւ ու եղաւ, ինքը հրամայեց ու հաստատուեցան :

8 Տէրը հեթանոսներուն խորհուրդները կը ցըրուէ, տէրը ժողովուրդներուն խորհուրդները կ'անարգէ, ու տէրը իշխաններուն խորհուրդները կ'արհամարհէ :

9 Տէրօջը խորհուրդը յաւիտեան կը մնայ, և անոր սրտին խորհուրդը ազգէ մինչեւ ազգ :

10 Արանի ազգին՝ որուն տէր աստուած օգնական է, ան ժողովուրդին՝ որ իրեն ժառանգութեան համար ընտրեց :

11 Տէրը երկիրքէն ամէն մարդկանց որդիքներուն նայեցաւ, իր պատրաստ ընակութենէն աշխարհի ամէն ընակիչներուն նայեցաւ :

12 Ըն որ աւանձին անոնց սիրտերը ստեղծեց, և անոնց ամէն ըրածները կ'իմանայ :

13 Ղէ թէ թագաւոր մը իր զօրքերուն բազմութիւնովը կ'ապրի, ու չէ թէ զօրաւոր մարդ մը իր ուժին շատութիւնովը :

14 Աղատութեան համար ձին ոչինչ բան է. իր ուժին շատութիւնովը վրան հեծնողը չի կրնար ապրեցունել :

15 Տէրօջը աշխնները իրմէն վախցողներուն վրայ է, և անոնց վրայ՝ որ իր ողորմութեանը կը յուսան. անոնց անձերը մահէն փրկելու, ու սովի ժամանակ անոնք կերակրելու համար :

16 Սեր անձերը տէրօջը կ'սպասեն. ինչու որ մեր օգնականը ու պաշտպանն է :

17 Սեր սիրտերը անով պիտի ուրախանան, և

անոր սուրբ անուանը կը յուսանք :

18 Ո՛վ տէր, քու ողորմութիւնդ մեր վրայ ըլլայ, ինչպէս որ քեզի յուսացինք :

ՍԱՂՄՈՍ ԼԳ .

( Ըրհնցից զտէր .

1 Ըմէն ժամանակ տէրը պիտի օրհնեմ՝, ամէն ժամանակ անոր գովութիւնը իմ բերանս է :

2 Իմ անձս տէրոջմով պիտի պարծի, հեղբրը թող լսեն և ուրախ ըլլան :

3 Ինծի հետ տէրը մեծցուցէք, և անոր անունը մէկտեղ բարձրըցունենք :

4 Տէրոջմէն խնդրեցի և ինծի լսեց, իմ ամէն նեղութենէս իս փրկեց :

5 Տէրոջը մօտեցէք և լոյս առէք, և ձեր երեսները չամբռնան :

6 Ես աղքատը տէրոջը աղաղակեց, և տէրը ասոր լսեց . իր ամէն նեղութենէն ազատեց ասիկայ :

7 Տէրոջը հրեշտակներուն բանակը իրմէն վախցողներուն չորս կողմը կը կենայ, և անոնք կը պահէ :

8 Ղաշակեցէք ու տեսէք՝ որ տէրը քաղցր է, երանի ան մարդուն՝ որ անոր կը յուսայ :

9 Տէրոջմէն վախցէք ո՛վ անոր ամէն սուրբերը, վասն զի անկէ վախցողներուն բան մը պակաս է :

10 Սեծատունները աղքատցան ու անօթեցան . սակայն տէրը փնտրողներուն բնաւ մէկ բա-

րութիւն մը չի պակսիր :

11 Այլէք ով իմ զաւկըններս ու լսեցէք ինձի, և տէրոջը երկիրը ձեզի սորվեցունեմ :

12 Ո՞վ է ան մարդը՝ որ կեանք կը փնտրուէ, և իր օրերը բարութեան մէջ տեսնալ կ'ուզէ :

13 Անգուդ գէշ խօսքերէն պահէ. շրթունքներդ նենդութիւն չի խօսին :

14 Չարէն ետ կեցիր ու բարիք ըրէ. խաղաղութիւն խնդրէ և անոր ետեւէն գնա :

15 Տէրոջը աչիւնները արդարներուն վրայ է, և անոր ականջները անոնց աղօթքներուն վրայ :

16 Տէրոջը երեսները չարագործներուն վրայ է, անոնց յիշատակը երկրին երեսէն բնաջինջ ընելու համար :

17 Արդարները տէրոջը աղաղակեցին, և տէրը անոնց լսեց, անոնց ամէն նեղութիւններէն ազատեց անոնք :

18 Տէրը անոնց մօտ է՝ որոնց սիրտը որ մաշած է, և հոգւով խոնարհները կ'ապրեցունէ :

19 Արդարներուն նեղութիւնները շատ են, տէրը ամէնէն կը փրկէ անոնք, և անոնց ամէն ոսկորները կը պահէ, և անոնցմէ մէկը չի պիտի փշրի :

20 Սեղաւորին մահը չար է. սակայն ով որ արդար կ'ատէ՝ պիտի զղջայ :

21 Տէրը իր ծառաներուն անձերը կը փրկէ, ամէն անոր յուսացողները չի պիտի զղջան :

ՕՐ ԵՕԹՆԵՐՈՐԳ

ԱՂՕԹՔ ԱՌԱԻՕՏՈՒ

ՍԱՂՄՈՍ ԼԴ.

Դատեա՛ տէր զայնոսիկ .

1 Ո՛վ տէր, անոնք դատէ՛ որ իս կը դատեն . ին-  
ծի հետ պատերազմողներուն հետ պատերազմէ :

2 Վ՛ու զէնդ ու վահանդ առ , և ելիր ինծի օգ-  
նութիւն ընելու . իս հալածողներուն դէմ՝ քու սուրդ  
հանէ , արգիլէ անոնք , և իմ անձիս ըսէ թէ՛ քու  
փրկութիւնդ ես եմ :

3 Թ՛ող ամբշնան ու խայտառակ ըլլան անոնք՝  
որ իմ անձս կը փնտրուէին . ետ դստնան ու ամբշնան  
անոնք՝ որ ինծի համար չարութիւն կը մտմտային :

4 Հ՛ովին առջեւը անոնք փոշիի պէս թող ըլ-  
լան . և տէրօջը հրեշտակը անոնք նեղէ :

5 Ա՛նոնց ճամբաները խաւար ու սկրզեցունող  
ըլլան . և տէրօջը հրեշտակը անոնք հալածէ :

6 Պարապ տեղը ինծի որոգայթ լարեցին իրենց  
ապականութեանը համար . ու զուր տեղը իմ անձս  
նախատեցին :

7 Իրենց չի գիտցած որոգայթը իրենց վրայ  
հասնի . և իրենց լարած որոգայթը իրենց ոտքը պի-  
տի որսայ , և նոյն որոգայթը պիտի խնան :

8 Սակայն իմ անձս տէրոջմով պիտի ցնծայ, և անոր փրկութիւնովը պիտի ուրախանայ. և իմ ամէն ոսկորներս պիտի ըսեն, ո՞վ տէր, քեզի ո՞վ կը նմանի:

9 Ինչու որ հզօրին ձեռքէն աղքատը ազատեց, աղքատը ու տնանկը յափշտակողներէն:

10 Իմ վրաս չար վկաներ ելան. չի գիտցած բաներս ինծի կը հարցունէին:

11 Լղէկութեան փոխարէն ինծի չարութիւն հատուցին. մարդկանց որդիքներուն մէջ իմ անձս անժառանգ ձգելու խորհեցան:

12 Եւ անոնց նեղութեան ժամանակը քորձ կը հագնէի, իմ անձս պարով կը խոնարհեցունէի, և իմ աղօթքներս իմ ծոցս դարձան:

13 Եղբօր ու ընկերի մը պէս կը վարուէի, սրգաւոր ու տրտմած անձի մը անանկ կը խոնարհէի:

14 Իմ վրաս ուրախացան ու մէկտեղ եկան. իմ վրաս տանջանքներ դիզուեցան, ու ես չիմացայ. ցըրուեցան ու չի զղջացին:

15 Իս փորձեցին ու ծաղը ըրին, իմ վրաս ծաղը ընելով իրենց ակռաները կը ճռտացուցին, ո՞վ տէր, ե՞րբ պիտի տեսնաս:

16 Իմ անձս անոնց խորամանկութենէն հեռացուր, և առիւծներէն իմ միայնակութիւնս:

17 Սե՛ծ բազմութիւններուն մէջ քեզի փառք պիտի տամ ո՞վ տէր. և շատ մարդոց մէջ քեզ պիտի օրհնեմ:

18 Թշնամիներս իմ վրաս չուրախանան՝ որ

զուր տեղը իս կ'ատէին . իրենց աշխններովը իմ վրաս նշան՝ կուտային :

19 Իմ հետս խաղաղութիւն կը խօսէին , և իւրենք բարկութիւնով նենգութիւն կը խորհէին :

20 Իրենց բերանը իմ վրաս բացին , և ըսին՝ այո՛ այո՛ մեր աշխնները տեսան :

21 Ո՛վ տէր , տեսար ու մի ըւեր . ո՛վ տէր , ինէ՛ մի հեռանար :

22 Ո՛վ տէր , արթնցիր ու իմ իրաւունքիս նայէ , ո՛վ իմ աստուածս ու տէրս , իմ դատաստանիս , և քու արդարութիւնովդ իմ իրաւունքս կատարէ ո՛վ տէր՝ իմ աստուածս :

23 Թշնամիներս իմ վրաս չի խնդան , և իրենց սրտին մէջը թող չըսեն թէ՛ վա՛շ վա՛շ մեր անձերուն , ինչու որ անիկայ կորսնցուցինք :

24 Թող ամբնան ու խայտառակ ըլլան անոնք՝ որ իմ խեղճութեանս կը խնդային . իմ վրաս մեծ զուրցողները ամօթ ու անարգանք հագնին :

25 Թող ցնծան ու ուրախ ըլլան քեզմով անամէնքը՝ որ իմ արդարութիւնս կ'ուզեն . ամէն ժամանակ թող ըսեն՝ աստուած մեծ է . և անոնք որ քու ծառայիդ խաղաղութիւնը կ'ուզեն :

26 Իմ լեզուս քու արդարութիւնդ պիտի խօսի , ամէն օր քու գովութիւնդ :

ՍԱՂՄՈՍ ԼԵ .

Լսէ անօրէնն ՚ի մեղանչել ընդ միտս իւր .

1 Լսնօրէնը մեղք գործած ժամանակը իր մտքին մէջը կ'ըսէ թէ՛ աստուծոյ վտիւր չի կայ իր աչքին առջին :

2 Սենգութիւնով վարուեցաւ անոր առջին իր անօրէնութիւնը գտնալու և անիկայ ատելու ժամանակը :

3 Լսնոր բերնին խօսքերը անօրէնութիւն ու խաբէութիւն են . բարիք ընելը չուզեց իմանալ , իր անկողինին մէջ անօրէնութիւն մտածեց :

4 Լսն ամէն մէկ չար ճամբաները գնաց , և չարէն բնաւ չի ձանձրացաւ :

5 Ո՛վ տէր , քու ողորմութիւնդ մինչև երկինքն է , քու ճշմարտութիւնդ մինչև ամպերը :

6 Ո՛վ աստուած , քու արդարութիւնդ լեռններու պէս է , քու իրաւունքդ մեծ անդունդի մը պէս . մարդիկը ու անասունները դուն կ'ապրեցունես ո՛վ տէր :

7 Ինչպէս դերազանց ըրիր քու ողորմութիւնդ ո՛վ աստուած . և մարդկանց որդիքները քու թեւերուդ հովանաւորութեանը պիտի ապաւինին :

8 Լսնո՛ք քու տանդ պարարտութենէն պիտի խմեն , և քու քաղցր հեղեղներէդ անոնց պիտի խրմչուեն :

9 Ո՛վ տէր , կենաց աղբիւրը քննէ է , և քու

երեսիդ լուսովը լոյսը կը տեսնանք :

10 Վու ողորմութիւնդ անոնց վրայ ծագել տուր՝ որ քեզ կը ճանչնան , քու արդարութիւնդ ուղիղ սիրտ ունեցողներուն :

11 Ամբարտաւաններուն օտքը մեր վրայ չի գայ , և մեղաւորներուն ձեռքը մեզ չի դողացունեն :

12 Ամէն անօրէնութիւն գործողները հոն թող իյնան . մերժուեցան ու ալ կարող չըլլան կայնելու :

ՕՐ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԻ

ՍԱՂՄՈՍ ԼԶ .

Սի նախանձիր ընդ չարս .

1 Չարերուն մի նախանձիր , ու ոչ ալ անոնց՝ որ անօրէնութիւն կը գործեն :

2 Ինչու որ խոտի պէս շուտով պիտի չորնան , կանաչ խոտի պէս շուտով պիտի անցնին :

3 Հոյսդ տէրօջը վրայ դիր և աղէկութիւն ըրէ , երկրի վրայ բնակէ , և անոր մեծութիւնովը արածուէ :

4 Տէրօջմէն խնդրէ , ու ան քու սրտիդ խընդրուածքները քեզի կուտայ . քու ճամբաներդ տէրօջը յայտնէ , ու անոր ապաւինէ . ան կը կատարէ և դուրս կը հանէ քու արդարութիւններդ լոյսի պէս , և քու իրաւունքներդ կէսօրի պէս :

5 Լնազանդ եղիւր տէրոջը՝ և անոր ծառայէ, և մի նախանձիր անոնց՝ որոնց ճամբաները անօրէնութիւն գործող մարդուն հետ եղած են :

6 Բարկութենէ ետ կեցիր, ու սրտմտութենէ դադրէ, և չարերուն մի նախանձիր :

7 Ինչու որ չարերը շուտով պիտի սատկին, սակայն տէրոջը համբերողները երկիրը պիտի ժառանգեն :

8 Քիչ մը ժամանակ՝ ու անկէ ետեւ ամբարիշտը չի պիտի մնայ. անոր տեղը պիտի փնտռես ու չի պիտի գտնաս :

9 Սակայն հեղերը երկիրը պիտի ժառանգեն, և իրենց մեծ խաղաղութիւնովը պիտի հանգստանան :

10 Սնդակորը արդարին կ'սպասէ, և անոր վերայ իր սկուաները կը կծրոցունէ. սակայն տէրը ծաղը պիտի ընէ անիկայ. ինչու որ առաջուց կը տեսնայ որ անոր օրը հասած է :

11 Սնդակորները թուր քաշեցին և իրենց աղէղները լարեցին աղքատը ու տնանկը զարնելու, սրտով խոնարհ եղողը սպաննելու :

12 Ենոնց թուրերը իրենց սիրտը պիտի մտնայ, և անոնց աղէղները պիտի կոտրին :

13 Երդարին քիչ մը բանը մեղակորներուն շատ մեծութենէն աղէկ է. և ամբարիշտներուն բազուկները պիտի կոտրտին :

14 Տէրը արդարները կը հաստատէ, և անմեղներուն օրերը կը ճանչնայ, անոնց ժառանգութիւնը

յաւիտեանական պիտի ըլլայ :

15 Փորձութեան ժախանակները անոնք չի պիտի ամբշնան , հապա սովի օրերը պիտի կշտանան :

16 Ահա մեղաւորները պիտի կորսուին , սակայն տէրօջը թշնամիները իրենց փառաւորելու ու բարձրանալու ժամանակը պիտի պակսին , ինտոր որ մուսը կը պակսի :

17 Սեղաւորը փոխ կ'առնէ ու չի վճարեր , սակայն արդարը կ'ողորմի և կուտայ :

18 Տէրը օրհնողները երկիրը պիտի ժառանգեն , և անիծողները անկէ պիտի զարնուին :

19 Սարդուն գնացքները տէրօջմէն կը շտկուին , անոր ճամբաները ան շատ կը սիրէ :

20 Թէ որ սահելու ալ ըլլայ չի պիտի իյնայ , ինչու որ տէրը անոր ձեռքէն կը բռնէ :

21 Տղայ էի ու ծերացայ , և արդարը արհամարհուած չի տեսայ , ու ոչ ալ անոր զաւակը՝ որ հաց մուրայ :

22 Ամէն օր կ'ողորմի ու փոխ կուտայ , անոր զաւակը յաւիտեան օրհնեալ պիտի ըլլայ :

23 Չարութենէ ետ կեցիր , ու բարիք ըրէ , յաւիտեանս յաւիտենից անոր քով պիտի բնակիս :

24 Տէրը իրաւունքը կը սիրէ , և իր սուրբերը վար չի զարներ , հապա յաւիտեան կը պահէ անոնք :

25 Անօրէնները մէկտեղ պիտի կորսուին , և ամբարիշտներուն զաւակը պիտի սատկի :

26 Բայց արդարները երկիրը պիտի ժառանգեն ,

և յաւիտեանս յաւիտենից անոր քով պիտի բնակին :

27 Արդարին բերանը իմաստութիւն կը պատմէ , և անոր լեզուն իրաւունք պիտի խօսի :

28 Իր աստուծոյն օրէնքները իր սրտին մէջն են , և անոր քալուածքները չի պիտի գայթակղին :

29 Սեղաւորը արդարը կը դիտէ , և անիկայ սպաննել կ'ուզէ , սակայն տէրը անոր ձեռքը չի ձգեր անիկայ , և դատաստան տեսած ժամանակը անիկայ չի դատապարտեր :

30 Տէրօջը համբերէ , և անոր ճամբաները պաշտէ , և ան քեզ կը բարձրացունէ՝ որ երկիրը ժառանգես , և մեղաւորներուն սատակումը տեսնաս :

31 Ամբարիշտը վրայ ելած ու բարձրբացած տեսայ լիբանանու մայր ծառերուն պէս , իսկոյն անցայ՝ ու ահա չի կար , փնտռեցի՝ և անոր տեղը չի գտնուեցաւ :

32 Ամբծութիւն պաշտէ , և ուղղութիւն տեսնինչու որ խաղաղարար մարդուն վերջը խաղաղութիւն է :

33 Անօրէնները մէկտեղ պիտի կորսուին , և ամբարիշտներուն զաւակը պիտի փճանայ :

34 Արդարներուն փրկութիւնը տէրոջմէն է , նեղութեան ժամանակները անոնց վերակացու է :

35 Տէրը անոնց պիտի օգնէ , և անոնք պիտի փրկէ : մեղաւորնէն պիտի ազատէ և անոնք պիտի փրկէ , ինչու որ անոր յուսացին :

ՕՐ ՈՒԹԵՐՈՐԳ

ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏՈՒ

ՍԱՂՄՈՍ ԼԵ .

Տէր մի սրտմտութեամբ քով .

1 Ո՛վ տէր , քու սրտմտութիւնովդ իս մի յանդիմաններ . և քու բարկութիւնովդ իս մի խրատեր :

2 Այսն զի քու նետերդ ինձի մտան , և քու ձեռքդ իմ վրաս իջաւ :

3 Իմ մարմնոյս բժշկութիւն չի կայ քու բարկութեանդ համար . իմ ոսկորներուս հանգստութիւն չի կայ իմ մեղքերուս համար :

4 Ընօրէնութիւններս գլխէս վեր բարձրցան , ծանր բեռի պէս իմ վրաս ծանրրցան :

5 Իմ վերքերս հոտեցան ու փտտեցան իմ անզգամութեանս համար :

6 Չարչարանք քաշեցի ու խոնարհեցայ , ամէն օր տրտում կը քալէի . ինչու որ անձս նեղութիւնով լեցուեցաւ , և իմ մարմնոյս բժշկութիւն չի կայ :

7 Չարչարուեցայ ու խիստ խոնարհեցայ , սրտիս հեծութենէն կը պոռայի :

8 Ո՛վ տէր , իմ ամէն բաղձանքներս քու առջիդ են , և իմ հեծութիւնս քեռէ չի ծածկուեցաւ :

9 Սիրտս ներսիդիս խոռվեցաւ , և իմ զօրու-

Թիւնս իս թողուց . իմ աչքիս լոյսն ալ իմ հետս չեղաւ :

10 Իմ բարեկամներս ու ազգականներս իմ առջիս մօտեցան ու կայնեցան , ու իմ մերձաւորներս ինէ հեռու կայնեցան :

11 Ինծի համար չարութիւն խորհողները ինծի հետ բռնութիւնով կը վարուէին , և իմ անձս կը փնտռէին . անօրէնութիւն խօսեցան , ու ամէն օր նենգութիւն խորհեցան :

12 Սակայն ես խուլին նման եղայ՝ որ չի լսեր , համրին պէս՝ որ իր բերանը չի բանար :

13 Ես ան մարդուն նման եղայ՝ որ չի լսեր , և անոր բերանը խօսք չի կայ :

14 Ո՛վ տէր , քեզի կը յուսամ , և դուն ինծի լսես ո՛վ իմ տէր աստուածս :

15 Ի՛սի թէ՛ թշնամիներս իմ վրաս չուրախանան , ոտվըներուս խախտած ժամանակը մեծ մեծ խօսքեր խօսեցան վրաս :

16 Ես տանջանքի պատրաստ եմ , և ամէն ժամանակ իմ ցաւերս առջիս են :

17 Իմ անօրէնութիւններս պիտի պատմեմ , և իմ մեղքերուս համար պիտի հոգամ :

18 Սակայն թշնամիներս ողջ են , և ինէ էվել ուժով ցած են , և իս զուր տեղը ատողները շատ էին :

19 Ի՛նոնք՝ որ աղէկութեան փոխարէն ինծի չարութիւն հատուցին , իմ վրաս չարութիւն կը խօսէին , ինչու որ ես արդարութեան կը հետեւէի :

20 Ո՛վ տէր՝ իմ աստուածս , իս մի թողուր . և  
ինէ հեռու մ'ըլլար , նայէ որ ինծի օգնես՝ ո՛վ իմ  
փրկութեանս տէրը :

ՍԱՂՄՈՍ ԼԸ .

Ասացի թէ պահեցից .

1 Բ՛ար թէ՛ իմ ճամբաներս պահեմ . որ լե-  
զուովս մեղք չի գործեմ :

2 Պահապան դրի իմ բերնիս , մեղաւորին իմ  
առջիս հակառակած ժամանակը :

3 Խուլ եղայ ու խոնարհեցայ , աղէկութենէ լը-  
ռեցի , և իմ ցաւերս իմ մէջս նորոգեցան :

4 Իմ սիրտս ներսիդիս բորբոքեցաւ , և իմ խոր-  
հուրդներուս մէջ կրակ վառեցաւ :

5 Իմ լեզուովս խօսեցայ և ըսի , ո՛վ տէր , ցը-  
ցո՛ւր ինծի իմ վերջս , և իմ օրերուս թիւին որչափ  
ըլլալը . որ գիտնամ թէ որչափ բան պակասած է ինէ :

6 Ա՛հա իմ օրերս չափով դրի՛ր , և իմ զօրու-  
թեանս կարողութիւնը իբր թէ ոչինչ է քու առջիդ .  
սակայն ամէն մտեղէն մարդ ոչինչ է :

7 Իրաւցունէ մարդը պատկերի մը պէս կը պը-  
տըտի , բայց պարապ տեղը անհանգիստ կ'ըլլայ , կը  
գանձէ և ո՛վ պիտի ժողուէ չի գիտեր :

8 Բայց արդ՝ ո՛վ է իմ համբերութիւնս , չէ՛ թէ  
դուն ո՛վ տէր , կամ իմ զօրութեանս կարողութիւ-  
նը , որ քենէ է :

9 Ի՛մ ամէն անօրէնութիւններէս իս փրկեցիր .  
անղգամներուն նախատինքը ըրիր իս :

10 Իտու յեղայ , ու բերանս չի բացի , ինչու որ  
դուն ըրիր :

11 Հեռացուր ինէ իմ տանջանքներս , ինչու որ  
քու ձեռքիդ զօրութենէն ես տկարացայ :

12 Ս'եղբին համար յանդիմանելով մարդը խը-  
րատեցիր , ոստայնի պէս անոր անձը մաշեցուցիր .  
սակայն ամէն մարդ փուճ է :

13 Ո՛վ տէր , լսէ իմ աղօթքիս , ահանջ դիր իմ  
խնդրուածքներուս . արցունքներուս մի լոնր :

14 Կ'ու առջիդ պանդուխտ եմ ես , հիւր մը և  
անցաւոր մը իմ ամէն նախնիքներուս պէս :

15 Թող տուր ինծի որ հանդատանամ դեռ չի  
դացած , ինչու որ մէյ մ'ալ չի պիտի դտնուիմ :

ՍԵՂՄՈՍ ԼԹ .

Համբերելով համբերի տեսան .

1 Համբերելով համբերեցի տէրոջը , ու նայե-  
ցաւ ինծի , ու իմ աղօթքիս լսեց :

2 Իս տառապանքի փոսէն հանեց , կաւէն ու  
տիղմէն :

3 Իմ ոտվըներս քարին վրայ հաստատեց , և իմ  
քալուածքներս ուղղեց :

4 Իմ բերանս նոր օրհնութիւն մը դրաւ , մեր  
տէր աստուծոյ օրհնութիւնը :

5 Շատերը պիտի տեսնան ու պիտի վախնան, ու տէրոջը պիտի յուսան. երանի ան մարդուն՝ որ տէրոջը անունը իրեն յոյսն է. ան ունայնութեան չի նայեցաւ, ու ոչ ալ սուտ մոլութեան:

6 Ո՛վ տէր՝ իմ աստուածս, դուն քու սքանչելիքներդ շատցուցիր. քու խորհուրդներդ մէկը չի կայ որ քեզի նման ըլլայ:

7 Պատմեցի ու խօսեցայ, ու համբանքէ էվէլ եղան. զոհերուն ու պատարագներուն չի հաճեցար, ականջներ հաստատեցիր իմ վրաս. ողջակէզները և մեղքի համար եղածները չընդունեցիր:

8 Ըն ժամանակը ըսի թէ՛ ահա ես կուգամ, գիրքերուն գլուխներուն մէջ ինծի համար գրուած է:

9 Ո՛վ իմ աստուածս, ես քու կամքդ կատարելու կամք ըրի. և քու օրէնքներդ իմ ներսիդիսնն:

10 Վու արդարութիւններդ պիտի քարոզեմ մեծ բազմութիւններու մէջ. ահա իմ շրթունքներս քենէ չի պիտի արգիլեմ:

11 Ո՛վ տէր, դուն գիտցար որ քու արդարութիւններդ սրտիս մէջը չի ծածկեցի, քու ճշմարտութիւնդ և քու փրկութիւնդ. ըսի՛ քու ողորմութիւնդ և քու ճշմարտութիւնդ շատուոր ժողովուրդէն չի ծածկեցի:

12 Սակայն դուն ո՛վ տէր, քու ողորմութիւնդ ինէ մի՛ հեռու ըներ. ինչու որ քու ողորմութիւնդ ու ճշմարտութիւնդ ամէն ատեն իս պիտի ընդունի:

13 Ըն համար չարիքներ չորս կողմս առին, իմ

անօրէնութիւններս ինծի հասան, և ես կարող չեղայ տեսնալու. գլխուս մազէն շատ եղան, և իմ սիրտըս իս թողուց:

14 Ո՛վ տէր, կամք ըրէ իս փրկելու, և ո՛վ տէր, ինծի օգնելու ջանք ըրէ:

15 Ըմբռնան ու խայտառակ ըլլան իմ անձս փնտռողները անիկայ կորսնցունելու համար. ետ դառնան ու ամբռնան ինծի համար չարութիւն ու զողները:

16 Ըն ժամանակը շուտով ամօթը հագնին ան ամէնքը՝ որ ինծի վա՛շ վա՛շ կ'ըսէին:

17 Ըմէնը քեզմով թող ցնծան ու ուրախանան՝ որ քեզ կը փնտռեն ո՛վ տէր, և քու փրկութիւնդ սիրողները ամէն ժամանակ թող ըսեն՝ աստուած մեծ է:

19 Ես աղքատ ու տնանկ եմ ո՛վ աստուած, իս մտմտայ. և ո՛վ իմ աստուածս օգնականս ու պաշտպանս մի ուշանար:

ՕՐ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՂՕԹ Ք ԵՐԵԿՈՅԻ

ՍԱՂՄՈՍ Խ.

Լըրանի որ խորհի զաղքատն.

1 Լըրանի ան մարդուն՝ որ աղքատին ու տը-

նանկին հոգ կը տանի , նեղութեան օրը տէրը անիկայ կ'ազատէ :

2 Տէրը անիկայ կը փրկէ ու կ'ապրեցունէ , երկրի վրայ անիկայ երանելի կ'ընէ , և իր թշնամիներուն ձեռքը անիկայ չի մատներ :

3 Տէրը անոր օգնական է իր ցաւերուն անխղիւնին մէջ . անոր հիւանդութենէն ամէն անոր անկողինները կը դարձունէ :

4 Այս ըսի՝ ո՛վ տէր , ինծի ողորմէ , իմ անձս բըժըշկէ , ես քեզի մեղանչեցի :

5 Թշնամիներս գէշ խօսեցան ինծի համար . երբ պիտի ըլլայ որ մեռնի , և անոր անունը կորսուի :

6 Ար մտնար պակաս բան տեսնալու , իր սրտին մէջը կ'ըսէր , իր անձին մէջ անօրէնութիւններ կը ժողվէր :

7 Ղուրս կ'ելլէր ու նոյնը կը խօսէր . թշնամիներս ինծի համար կը փսփսային :

8 Իմ վրաս չարութիւն մտմտացին , անօրէնութեան խօսք դրին իմ վրաս :

9 Սի թէ ննջողը մէջ մ'ալ չի՞ պիտի ելլէ . ինչու որ ան իմ հետիս խաղաղութեան անձը՝ որուն որ ես յուսացեր էի , ան՝ որ իմ հացս կ'ուտէր ինծի խաբէութիւն ընելը խիստ շատցուց :

10 Բայց դուն ո՛վ տէր , ողորմէ ինծի , ու խկանգնեցուր , և ես փոխարէնը տամ անոնց :

11 Ասկէ պիտի գիտնամ ինծի հաւնելդ , որ իմ թշնամիներս իմ վրաս չի խնդան :

12 Սակայն դուն իս իմ անմեղղւթիւնովս ընդունեցիր, քու արջիդ իս յաւիտեան հաստատեցիր:

13 () րհնաւ է իսրայէլի տէր աստուածը յաւիտեանս յաւիտենից, եղեցի եղեցի:

ՍԱՆՄՈՍ ԻԱ.

1 Որպէս փափաքէ եղջերու, յաղթերս ջուրցի:

1 1 Նչազէս որ եղջերուն ջուրերուն վտակներուն կը փափաքի, անանկ ալ իմ անձս քեզի կը փափաքի ո՛վ աստուած:

2 Իմ անձս ծարաւ է քեզի ո՛վ հզօր և կենդանի աստուած, ե՞րբ պիտի գամ ու իմ աստուծոյս արջին երեւամ:

3 Գիշերը ու ցորեկը աչքիս արտասուքները ինծի կերակուր եղան, ինչու որ ամէն օր ինծի կը քսէին թէ՛ ո՛ր է քու աստուածդ:

4 Արբոր աս բանը կը յիշէի, հոգիս իմ մէջս կը շարշարուէր, կը քաջալերէի աստուծոյ սքանչելի տանը ներքեւը մտնելու, խոստովանութեան ցնծալի ձայնով, ու տօնախմբութեան ձայնով:

5 Ուստի՛ ո՞վ իմ անձս, ինչո՞ւ տրտում ես, կամ թէ՛ ինչո՞ւ ի՞նչ կը խռովես, յոյսդ աստուծոյ վրայ դիր, փառք տուր անոր, ան է իմ երեսփորդդ աստուածը:

6 Իմ անձս սաստիկ խռովեցաւ, անոր համար յորդանանու երկրէն քեզ յիշեցի, հերմոնէն փոքր լեանէն:

7 Ընդունդները խորութիւններէն քեզի կան-  
չեցին, քու ջուրերուդ սահանքներուն ձայնովը:

8 Վրու ամէն մրրիկներդ ու ալիքներդ իմ վը-  
րայէս անցան:

9 Յորեկը տէրը իր ողորմութիւնը պատուիրեց,  
գիշերը նոր օրհնութիւն. և իմ աստուծոյ աղաչելս  
իմ կեանքիս համար է:

10 Եստուծոյ ըսի՝ դուն ես իս ընդունողը. իս ին-  
չո՞ւ մերժեցիր, ես ինչո՞ւ տրտում կը պտըտիմ թըշ-  
նամիսնեղելէն:

11 Ոսկորներս կոտորած ժամանակը թշնամի-  
ներս իս նախատեցին, ամէն օր ինծի ըսելով թէ՛  
ո՞ւր է քու աստուածդ:

12 Ուստի՛ ո՞վ իմ անձս, ինչո՞ւ տրտում ես,  
կամ ինչո՞ւ իս կը խռովես. յոյսդ աստուծոյ վրայ  
դիր, փառք տուր անոր, ան է իմ երեսս փրկող աս-  
տուածը:

ՄԱՂՄՈՍ ԽԲ.

Դատ արա ինձ աստուած.

1 Իս դատէ ո՞վ աստուած, և իմ դատաստանիս  
մէջ իմ իրաւունքս կատարէ:

2 Սուրբ չեղող աղգէն, մեղաւոր ու նենգաւոր  
մարդէն իս ազատէ:

3 Դուն ես ինծի զօրութիւն տուողը ո՞վ աս-  
տուած, ինչո՞ւ իս մոռցար. ինչո՞ւ ես տրտում կը քա-

լիմ թշնամիիս նեղելէն :

4 Ո՛վ տէր , քու լոյսդ ու քու ճշմարտութիւնդ  
խրկէ , որ ինծի առաջնորդ ըլլան ու իս քու սուրբ  
լեռդ ու բնակարանդ հանեն :

5 Լստուծոյ սեղանին առջին պիտի մտնամ ,  
մանկութիւնս ուրախացունող աստուծոյն , գոհու-  
թիւն պիտի տամ քեզի օրհնութիւնով ո՛վ աս-  
տուած՝ իմ աստուածս :

6 Ուստի ո՛վ իմ անձս , ինչո՞ւ տրտում ես , կամ  
ինչո՞ւ իս կը խռովես . յոյսդ աստուծոյ վրայ դիր ,  
փառք տուր անոր , ան է իմ երեսս փրկող աստուա-  
ծը :

## ՕՐ ԻՆՆԵՐՈՐԴ

### ԱՂՕԹ Ք ԱՌԱՒՕՏՈՒ

ՍԱՂԾՈՍ ԽԳ .

Լստուած՝ ականջօք մերովք լուսք .

1 Ո՛վ աստուած , մեր ականջներովը լսեցինք՝ որ  
մեր հայրերը մեզի պատմեցին , ան գործը՝ որ առջի  
ժամանակը անոնց օրերը գործեցիր :

2 Ի՛րու ձեռքդ հեթանոսները փրցուց , և անոնք  
անկեցիր . ժողովուրդները չարչարեցիր , և անոնք  
հանեցիր :

3 Չէ թէ իրենց սուրովը երկիրը ժառանգեցին, ու չէ թէ իրենց բազուկը ղերենք փրկեց, հապա քու աջ ձեռքդ ու բաշուկդ, և քու երեսիդ լոյսը, ինչու որ դուն անոնց հաճեցար:

4 Գուն ինքդ ես իմ թագաւորս ու իմ աստուածքս, որ յակորին փրկութիւններուն համար հըրաման ըրիր:

5 Վեզմով քու թշնամիներդ պիտի զարնենք, և քու անունովդ մեր վրայ ելտողները պիտի արհամարհենք:

6 Չէ թէ իմ աղեղիս վրայ իմ յոյսս դրած եմ, ու չէ թէ իմ սուրս իս կ'ապրեցունէ. հապա դուն մեզ մեր թշնամիներուն ձեռքէն ազատեցիր, և մեզ ատողները խայտառակ ըրիր:

7 Լմէն օր աստուծով պարծենանք, և անոր անուանը յաւիտեան շնորհակալութիւն մատուցանենք:

8 Սակայն հիմայ մեզ մերժեցիր ու անարգեցիր, և մեր զօրքերուն հետ չելար ու պատուած:

9 Սեզ մեր թշնամիներէն է՛վել ետ դարձուցիր, և մեզ ատողները մեզ յափշտակեցին:

10 Սեզ ոչխարի պէս մօրթուելու արտիր, և հեթանոսներուն մէջ մեզ ցրուեցիր:

11 Վու ժողովուրդներդ առանց գինի ծախեցիր, և մեր աղաղակին թիւը չի կայ:

12 Սեր դրացիներուն մեզի նախատինք ըրիր, մեր չորս կողմը եղողներուն ծաղը ու կատակ:

13 Սեղ հեթանոսներուն առակ ըրիր, ժողովուրդները իրենց գլուխը վրանիս երեքցունելու համար:

14 Ա՛յն օր իմ նախատինքս իմ առջիս է, և իմ երեսներուս ամօթը իս ծածկեց, նախատողին ուչարախօս մարգուն ձայնէն, թշնամիին ու հալածողին երեսէն:

15 Ա՛ս ամէնը մեր վրայ եկաւ, և մենք քեզ չի մոռցանք, և քու ուխտիդ սուտ չելանք, և մեր սրբտօլը կտ չի դարձանք:

16 Դուն մեր շաւիղները քու ճամբաներէդ դարձուցիր, մեզ չարչարանաց տեղը իջեցուցիր, և մահուան ստուերները մեզ ծածկեցին:

17 Թէ որ մենք մեր աստուծոյ անունը մոռցած ենք, կամ օտար աստուածներու ձեռք վերուցած ենք, աստուած անիկայ չի մի փնտուեր. ինչու որ ան մեր սրտին գաղտնիքները կը քննէ:

18 Ա՛յն օր քեզի համար կը մեռնինք. մօրթուելու ոչխարի պէս սեպուեցանք:

19 Արթնցիր՝ ինչո՞ւ կը քնանաս ի վտէր, ելիր՝ ու մեզ յաւիտեան մի մերժեր:

20 Ինչո՞ւ քու երեսդ մենէ կը դարձունես, մեր աղքատութիւնը ու նեղութիւնը կը մոռնաս:

21 Սեր անձերը մինչեւ հողը խոնարհեցան. և մէջքերնիս երկրին փական:

22 Ելիր ո՛վ տէր, օգնէ մեզի և մեզ աղատէ, քու անուանդ համար:

ՍԱՂՄՈՍ ԽԴ.

Եղևսցէ սիրտ իմ զբան բարի .

- 1 ԽԴ սիրտս քու բարի պատգամներդ բղխէ, և իմ գործքերս թագաւորին ըսեմ :
- 2 Իմ լեզուս արագագիր դպրին գրիչին պէս է, դէմքով ամէն մարդկանց որդիքներէն գեղեցիկ .
- 3 Ինչ որ պահունքներէդ շնորհք սփռեցաւ . անոր համար աստուած քեզ յաւիտեան օրհնեց :
- 4 Ո՛վ հզօր՝ թուրդ մէջքդ կապէ, քու գեղեցկութեանդ վայելուած թիւնը :
- 5 Եւրէ սուղղէ ու թագաւորէ, ճշմարտութեան հեղութեան ու արդարութեան համար, և քու աջ ձեռքդ սքանչելի կերպով քեզի առաջնորդ պիտի ըլլայ :
- 6 Ո՛վ հզօր, քու նետերդ սրուած են, թագաւորին թշնամիներուն սրտին մէջ, և թագաւորները քու տակդ պիտի իյնան :
- 7 Ո՛վ աստուած, քու աթոռդ յաւիտեանս յաւիտենից է, քու արքայութեանդ գաւազանը ուղղութեան գաւազան է :
- 8 Դուն արդարութիւնը սիրեցիր, և անօրէնութիւնը ատեցիր . անոր համար աստուած՝ քու աստուածդ ուրախութեան իւղով քու ընկերներէդ է՝ վելի քեզ օծեց :
- 9 Օ՛հուռ ստաշխն ու կասիայ կը բուրէ քու զգեստէդ, փղոսկրեսց տաճարներէն, ուստի թա-

զաւորներուն աղջիկները պատուով քեզ ուրախացուցին :

10 Թաղաւորին քու աջ կողմէ կը կայնի ոսկեհոն հանդերձներով զարդարուած ու պսակուած :

11 Ո՛վ աղջիկ, լսէ ու տես, քու ժողովուրդդ ու քու հօրդ տունը մոռցիր. ինչու որ Թագաւորը քու գեղեցկութեանդ հաւնեցաւ :

12 Եւ ինքն է քու տէրդ, ասոր երկրպագութիւն ընես, և ծուրայ աղջիկը ասոր երկրպագութիւն ընէ, ու ժողովուրդներուն մեծերը պատարագներով ասոր երկրպագութիւն ընեն :

13 Թաղաւորին աղջկանը ամէն փառքը ներսիդին է. հանդերձին ծայրերը ոսկիէ թելով զարդարուած ու պսակուած :

14 Կոյսեր ասոր հետ Թագաւորին պիտի տարուին. և իրեն ընկերները անոր պիտի տարուին :

15 Հնծութիւնով ու ուրախութիւնով թող բերեն, և Թագաւորին տաճարը տարուին. և քու հայրերուդ տեղը քու զաւկըներդ պիտի ըլլան :

16 Եւ նոնք ամէն երկրի վրայ իշխան պիտի կայնեցունես. քու անունդ ամէն ազգերու մէջ պիտի յիշուի :

17 Եւ որ համար ժողովուրդները փառք պիտի տան քեզի, յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից :

ՍԱՂԾՈՍ ԽԵ .

Լստուած մեր ապաւէն .

1 Լստուած մեր ապաւէնը ու զօրութիւնն է . մեր վրայ գտնուած մեծ նեղութիւններուն ժամանակը օգնական է :

2 Լսոր համար մենք երկրին խոոված ժամանակը չի պիտի վախնանք , լեռներուն ծովին մէջ փոխուած ժամանակը :

3 Լսնոց ջուրերը գոռացին ու պղտորեցան . լեռները անոր զօրութենէն խոովեցան :

4 Ղետերուն գնացքները աստուծոյ քաղաքը կ'ուրախացունեն . և բարձրեալը իր բնակութիւնները սուրբ ըրաւ :

5 Լստուած անոնց մէջն է , և անոնք չի պիտի սասանին , և աստուած անոնց առտուընէ առտու պիտի օգնէ :

6 Լեթանոսները խոովեցան , և թագաւորութիւնները խոնարհեցան . բարձրեալը իր ձայնը տուաւ , և երկիրը դողաց :

7 Օջորութիւններուն տէրը մեր հետն է , յաւկորայ աստուածը մեզի ապաւէն է :

8 Լսկէք ու աստուծոյ գործքերը փեսէք , որ երկրի վրայ նշաններ ու հրաշքներ ըրաւ :

9 Պատերազմը երկրին մէկ կողմէն միւս կողմը զարկաւ . աղեղները կոտորեց , զէնքերը խորտակեց , և կառքերը կրակով երեց :

10 Երատօրացէք ու ճանչցէք որ ես եմ աստուած . հեթանոսներուն մէջ բարձր պիտի ըլլամ , ու երկրին վրայ պիտի բարձրընամ :

11 Օջորութիւններուն տէրը մեր հետն է , յակորայ աստուածը մեր ապաւէնն է :

ՕՐ ԻՆՆԵՐՈՐԴ

ԱՂՕԹ Ք ԵՐԵԿՈՅԻ

ՍԱՂՄՈՍ ԽԶ .

Ղօպիս հարէք ամենայն հեթանոսք .

1 Ղուք ամէն ժողովուրդներ ծափ զարկէք , ջընծութեան ձայնով աստուծոյ աղաղակեցէք :

2 Տէրը բարձր ու ահաւորէ , ամէն երկրի վրայ մեծ թագաւոր է :

3 Ժողովուրդները մեզի հնազանդ ըրաւ . և հեթանոսները մեր ոտքին տակը :

4 Սեզ իրեն ժառանգութիւն ընտրեց , յակորբի գեղեցկութեանը համար՝ որ ան սիրեց :

5 Եստուած օրհնութիւնով համբարձաւ , և մեր տէրը փողին ձայնովը :

6 Սաղմոս երգեցէք մեր աստուծոյն , սաղմոս ըսէք մեր թագաւորին , սաղմոս ըսէք :

7 Եմէն երկրի վրայ աստուած մեծ թագաւոր է , օրհնութիւնով անոր սաղմոս երգեցէք :

8 Աստուած ազգերուն վրայ թագաւորեց : աստուած իր սրբութեան աթոռը նստաւ :

9 Ժողովուրդներուն իշխանները արբաճամուստուծոյն ժողովուեցան , ինչու որ աստուծոյ զօրութիւնը երկրէն խիստ բարձրացաւ :

ՍԱՂՄՈՍ ԽԷ .

Սեօ է տէր .

1 Տէրը մեծ է ու խիստ օրհնեալ է մեր աստուծոյ քաղաքին մէջը , անոր սուրբ լեռանը վրայ :

2 Աստատ արմատ կապած ամէն երկիր ցընծալով թող ցնծայ . սիօնի լեռները , հիւսիսի կողմերը . մեծ թագաւորին քաղաքը :

3 Աստուած իր տաճարին մէջը կը յայտնուի , ինտոր որ ան ժամանակը անոնց օգնական կ'ըլլար :

4 Ահա երկրի թագաւորները ժողովուեցան , ու մէկտեղ եկան :

5 Իրենք ասանկ տեսան ու զարմացան , զարհուրեցան սասանեցան , և դողը անոնք բռնեց :

6 Ան ցաւերը տղայ բերողին ցաւերուն պէս , սաստիկ հովով թարսիսի մէջի նաւերը պիտի խորտակէ :

7 Ինչպէս որ լսեցինք՝ անանկ ալ տեսանք , զօրութիւններուն տէրոջը քաղաքին մէջ , մեր աստուծոյ քաղաքին մէջ :

8 Աստուած՝ յաւիտեան անոր հիւր հաստա-

տեց . ո՞վ աստուած , քու ողորմութիւնդ քու ժողովուրդիդ մէջ ընդունեցինք :

9 Ինչպէս որ քու անունդ , անանկ ալ քու օրհնութիւնդ բոլոր աշխարհի վրայ է , և քու աջ ձեռքդ արդարութիւնով լեցուն է :

10 Սիօն լեռը ուրախ թող ըլլայ , յուդայի աղջիկները թող ցնծան , ո՞վ տէր քու արդարութեանդ համար :

11 Սիօնի չորս կողմը պտըտեցէք , անիկայ պաշարեցէք , և անոր աշտարակները պատեցէք :

12 Սիրտերնիդ անոր զօրութիւններուն վրայ դրէք , անոր պարիսպները բաժնեցէք , որ կարող ըլլաք ուրիշ ազգի պատմելու :

13 Եւս է աստուած՝ յաւիտեանս յաւիտենից մեր աստուածը . և աս մեզ պիտի հովուէ յաւիտեան :

ՍԱՂՄՈՍ ԽԸ .

Ի ուարձք զայս ամենայն .

1 Իսեցէք ասիկայ ո՞վ ամէն ազգեր , ականջ դրէք դուք ամէնքդ՝ որ աշխարհի մէջ կը բնակիք . երկրի ծնունդները և մարդկան որդիքները մէկտեղ , մեծամեծները ու անանկները :

2 Իմ բերանս իմաստութիւն պիտի խօսի , և իմ սրտիս խորհուրդները հանճար :

3 Իմ ականջս առակի պիտի խոնարհեցունեմ . սկիզբէն եղած առակները օրհնութիւնով պիտի բանամ :

4 Եկողութեան օրը ինչո՞ւ ես շատ կը վախնամ , վասն զի գնացքներուս անօրէնութիւնները իմ չորս կողմս պատեցին :

5 Իրենց զօրութեանը յուսացողները իրենց մեծութեան շատութիւնովը պիտի պարծենան :

6 Եղբայրը չի փրկեր , և մարդը չի փրկեր , և մէկը աստուծոյ փրկանք չի տար , և ոչ ալ իր անձին փրկութեան գինը :

7 Սիշտ նեղութիւն կրէ , և յաւիտեան կ'ապրիս , ու ապականութիւն չես տեսնար :

8 Երբօր կը տեսնաս թէ իմաստունները կը մեռնին , մէկտեղ անղգամները ու անմիտները պիտի կորսուին , և իրենց մեծութիւնները օտարներուն պիտի թողուն :

9 Գերեզմանները յաւիտեան իրենց տուն պիտի ըլնան , և անոնց բնակարանները ազգէ մինչև ազգ , և անոնց անունները իրենց հողերուն վրայ կանչուեցան :

10 Սարդը պատուոյ մէջ էր ու չիմացաւ , հաւատարեցաւ անբան անասուններուն , և անոնց նըմանեցաւ :

11 Լնոնց աս ճամբան իրենց գայթակղութիւն է , ասկէ ետև իրենց բերանովը պիտի հաճին :

12 Ոչխարներու պէս մահուան պիտի մատնուին , և մահը անոնք պիտի հովուէ , ու ուղիղ եղողները աստուան դէմ անոնց պիտի տիրեն :

13 Լնոնց օգնութիւնները գերեզմաններուն

մէջ պիտի մտնին, և իրենց փառքէն պիտի խոնան :

14 Սակայն աստուած իմ անձս գերեզմանէն պիտի փրկէ, երբոր իս ընդունեն :

15 Սի վախնար երբոր մարդը մեծնայ, և երբոր անոր տանը փառքը կը շատնան :

16 Ս ասն զի իր մեռնելու ժամանակը ամեն բանը իր հետը չի պիտի առնէ, և անոր տանը փառքը իր հետը չի պիտի խոնայ :

17 Հասպա անոր անձը իր կենդանութեանը մէջ պիտի օրհնուի, շնորհակալ պիտի ըլլայ քենէ՝ երբոր դուն անոր բարութիւն ընես :

18 Ինքը մինչեւ իր հայրերուն ազգը պիտի երթայ, մինչեւ վերջը լոյս չի պիտի տեսնայ :

19 Սարդը պատուոյ մէջ էր ու չիմացաւ, հաւասարեցաւ անբան անասուններուն, և անոնց նըմանեցաւ :

## ՕՐ ՏԵՍՆԵՐՈՐԴ

### ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏՈՒ

ՍԱՂՄՈՍ ԽԹ.

Ըստուած աստուծոց տէր խօսեցաւ .

1 Ըստուածներուն աստուածը՝ տէրը խօսեցաւ, երկիրը կանչեց արեւելքէն մինչեւ արեւմուտք :

2 Սիօնէն է անոր փրկութեանը գեղեցկութեա-

նը վայելուծիւնը :

3 Սեր աստուածը յայտնապէս պիտի գայ, և մեր աստուածը չի պիտի դադարի :

4 Ընոր առջին կրակ պիտի վառի, և անոր չորս կողմը սաստիկ փոթորիկ :

5 Երկինքները վերէն պիտի կանչէ՝ ու երկիրը անոր ժողովուրդը դատելու, իր սուրբերը իրեն ժողուելու, և անոնք որ ուխտերուն պատարագները անոր սեղանին վրայ կը դնեն :

6 Երկինքները անոր արդարութիւնը պիտի պատմեն, վասն զի աստուած դատաւոր է :

7 Աէ դուն ո՞վ իմ ժողովուրդս՝ և ես քեզի խօսիմ, և ո՞վ իսրայէլ քեզի վկայութիւն ընեմ, որ ես եմ աստուած՝ քու աստուածդ :

8 Չէ թէ քու պատարագներուդ համար քեզ կը նախատեմ. ինչու որ քու ողջակէզներդ ամէն ժամանակ իմ առջիս է :

9 Բու տունէդ զուարակներ չեմ ընդունիր, և ոչ քու երամակներէդ նոխազներ :

10 Ընտառի ամէն գազանը իմս է, լեռներուն վայրի կենդանիները ու ամէն անասունները :

11 Երկինքի ամէն թռչունները գիտեմ, վայրի գեղեցկութիւնը իմ քովս է :

12 Թէ որ անօթի ըլլամ՝ քեզի բան մը չի պիտի ըսեմ. ինչու որ աշխարհը իր լիութիւնովը իմս է :

13 Ես քու զուարակներուդ միտը չեմ ուտեր, ու ոչ քու նոխազներուդ արիւնը կը խմեմ :

14 Պօհուծեան պատարագ ըրէ աստուծոյ ,  
բարձրեալին քու ուխտդ կատարէ :

15 Վու նեղութեանդ օրը ինձի պիտի աղաղա-  
կես , ես քեզ պիտի փրկեմ , և դուն իս պիտի փա-  
ռաւորես :

16 Սակայն աստուած մեղաւորին կ'ըսէ թէ՛ դուն  
ինչո՞ւ իմ արդարութիւնս կը պատմես , կամ թէ իմ  
ուխտս քու բերանդ կ'առնես :

17 Որովհետեւ դուն իմ խրատս ատեցիր , մեր-  
ժեցիր ու ետ ձգեցիր իմ բերնիս ամէն խօսքերը :

18 Թէ որ գողերը տեսնայիր՝ անոնց հետը կ'եր-  
թայիր , և շնացողներուն հետ բաժին ունէիր :

19 Վու բերանդ չարութիւնը կը շատցունէր ,  
և քու լեզուդ նենգութիւնը կը հնարէր :

20 Կը նստէիր քու եղբօրդ դէմ չարախօսու-  
թիւն կ'ընէիր , և քու մօրդ զաւկին չ'ույ գայթակ-  
ղութիւն կը դնէիր :

21 Եւ ամէնը ըրիր , և ես քեզի լուցի . անօրէն՝  
քու մտքիդ մէջ կարծեցիր թէ ես քեզի նմանի՞մ :

22 Երդ՝ աս ամէնը քու առջիդ պիտի բերեմ ու  
դնեմ , իմացէք դուք ամէնքդ՝ որ զաստուած մոռ-  
ցած էք :

23 Պուցէ ժամանակ ըլլայ որ յափշտակուիք ,  
ու ազատող մը չ'ի գտնուի :

24 Եւ նորհակալութեան պատարագը իս պիտի  
փառաւորէ . և հոն է ճամբան՝ ուր որ աստուծոյ փրկ-  
կութիւնը անոր պիտի ցըցունեմ :

ՍԱՂՄՈՍ Ծ.

Ողորմեա՛ ինձ աստուած .

1 Ո՛վ աստուած, ողորմէ ինձի քու մեծ ողորմութեանդ չափովը . քու անբաւ գթութեանդ չափովը քաւէ իմ անօրէնութիւններս :

2 Իմ անօրէնութենէս բոլորովին իս լուա, և իմ մեղքերէս իս սրբէ :

3 Իմ անօրէնութիւններս ես ինձմէ գիտեմ . և իմ մեղքերս ամէն ժամանակ իմ առջիս են :

4 Ո՛վ տէր, քեզի միայն մեղանշեցի, և քու առջիդ չարութիւն գործեցի :

5 Որ ասանկ արդար ըլլաս քու խօսքիդ մէջ, և յաղթող՝ երբոր դատելու գաս :

6 Ընօրէնութեամբ յղացաւ, և մեղքով ծնաւ իս իմ մայրս :

7 Դուն ո՛վ տէր, ճշմարտութիւնը սիրեցիր, անյայտները ու ծածուկները քու իմաստութեամբդ ինձի յայտնեցիր :

8 Սշտիկով իմ վրաս սրթիէ, ու մաքուր ըլլամ . իս լուա՛ ու ձիւնէն աւելի ճերմակ ըլլամ :

9 Ընծութիւն ու ուրախութիւն լսել տուր ինձի, որ տառապեալ ոսկորներս ցնծան :

10 Իմ մեղքերէս քու կրեսդ գարձուր, և իմ ամէն անօրէնութիւններս ինէ քաւէ :

11 Ո՛վ աստուած, իմ անձիս մէջ մաքուր սիրտ հաստատէ . և ուղիղ հոգի իմ փորիս մէջ :

12 Իսա քու երեսէդ մի ձգեր, և քու սուրբ հոգիդ ինէ մի հաներ :

13 Տուր ինծի քու փրկութեանդ ցնծութիւնը, և քու պետութեանդ հոգիովը իս հաստատէ :

14 Ընօրէններուն քու ճամբաներդ սորվեցընենմ, և պաճարիչաները քեզի դառնան :

15 Ո՛վ աստուած, իմ փրկութեանս աստուած ծը, փրկէ ինարիւնէ : Ընզուս քու արդարութիւնովդ պիտի ցնծայ :

16 Ո՛վ տէր, թէ որ իմ շրթունքներս բանաս, իմ բերանս քու օրհնութիւնդ պիտի երգէ :

17 Թէ որ ուզելու ըլլայիր՝ պատարագներ կը մատուցանէինք : Բայց դուն ողջակէզները անգամ չընդունեցիր :

18 Ըստուծոյ զոհ՝ խոնարհ հոգին, սուրբ սիրտը և խոնարհ հոգին աստուած չարհամարհեր :

19 Ի՞նչ կտրեովդ սիօնին ղարիք ըրէ, և երուսսղէմի պարիսպները շինուին :

20 Ըն ժամանակը դուն արդարութեան պաշտարագները պիտի ընդունիս, ու խախտութեաներ կղած զուարակները քու սեղանիդ վրայ պիտի հանեն :

ՍԱՂՄՈՍ ԾԱ.

Օ, ի՞նչ պարծի՛ի չարութեան .

1 Ինչո՞ւ անօրէնութիւնը կը պարծենայ չարու-

Թիւնով զօրացածը , ամէն օր անիրաւութիւն խոր-  
հեցաւ իր լեզուովը :

2 Սուր ածելիի նման նենգութիւնը սրեց . չա-  
րութիւնը բարութենէ էվել սիրեց , անօրէնութիւ-  
նը արդարութեան խօսքէն էվել :

3 Ըն ամէն աւրելու խօսքերը , ու նենգաւոր լե-  
զունները սիրեց :

4 Ընոր համար աստուած յաւիտեան անիկայ  
պիտի կործանէ , իր բնակութենէն պիտի խլէ հա-  
նէ անիկայ , և անոր արմատները կենդանեաց երկ-  
րէն :

5 Արդարները պիտի տեսնան ու պիտի վախնան ,  
անոր վրայ պիտի խնդան ու ըսեն , աս ան մարդն է՝  
որ աստուած իրեն օգնական չըրաւ . հապա իր յոյսը  
իր շատ հարստութեանը վրայ դրաւ , և իր չարու-  
թիւնովը զօրացաւ :

6 Սակայն ես աստուծոյ տանը մէջ պողալից ձի-  
թենիին պէս եմ . յոյսս աստուծոյ ողորմութեանը  
վրայ դրի յաւիտեանս յաւիտենից :

7 Ի՛նչքի շնորհակալ պիտի ըլլամ յաւիտեան՝  
որ ըրիր . և քու անուանդ պիտի համբերեմ , ինչու  
որ քու սուրբերուդ առջին քաղցր ես :

ՕՐ ՏԵՄՆԵՐՈՐԳ

ԱՂՕԹ Ք ԵՐԵԿՈՅԻ

ՍԱՂՄՈՍ ԾԲ .

Ասաց անղգամն 'ի սրտի իւրում .

1 Անղգամը իր սրտին մէջը ըսաւ թէ՛ աստուած չի կայ . աւրուեցան ու պղծուեցան իրենց անօրէնութեանը մէջ , և մէկը չի կայ որ աղէկութիւն ընէ :

2 Աստուած երկինքէն նայեցաւ ամէն մարդկան որդիքներուն , որ տեսնայ թէ՛ իմաստուն մէկը կայ աստուած փնտռող :

3 Ամէնքը մէկտեղ մտորեցան , ու անպիտան եղան . մէկը չի կայ որ աղէկութիւն ընէ , մէկը անգամ չի կայ :

4 Արպէս թէ ամէն անօրէնութիւն գործողները չի պիտի ճանչնան , որ հացի պէս իմ ժողովուրդս կ'ուտէին , և աստուծոյ չաղաղակեցին :

5 Ըն վախով պիտի վախնան , ուր որ վախ չի կայ . ինչու որ աստուած մարդահաճոյներուն ոսկորները պիտի ցրուէ :

6 Պիտի ամբշնան ու խայտառակ ըլլան . վասն զի աստուած անոնք անարգեց :

7 Ա՛յլ պիտի տայ սիօնէն իտրայէլի փրկութիւնը . տէրը իր ժողովուրդը գերութենէ դարձուցած

Ժամանակը յակորը պիտի ցնծայ, ու խորայէլը ուրախ պիտի ըլլայ:

ՍԱՂՄՈՍ ԾԳ.

Լստուած յանուան քում.

1 Ո՛վ աստուած, քու անունովդ իս ապրեցուր, և քու զօրութիւնովդ ինձի իրաւունք ըրէ:

2 Ո՛վ աստուած, իմ աղօթքներուս լէ, իմ բերանիս խօսքերուն ականջ դիր:

3 ()տարները իմ վրաս ելան, և հզօրները իմ անձս փնտռեցին, և իրենց առջին քեզ աստուած չի սեպեցին:

4 Լ՛հա աստուած իմ օգնականս է, և իմ հոգիս ընդունող տէրն է:

5 Չարութիւնը իմ թշնամիներուս դարձուցած ժամանակդ, քու ճշմարտութիւնովդ անոնք սատկըցուր:

6 Լս իմ կամքովս քեզի պատարագ պիտի մատուցանեմ. քու անուանդ շնորհակալ պիտի ըլլամ ո՛վ տէր, ինչու որ բարի է:

7 Իմ ամէն նեղութենէս իս փրկեցիր, և թընամիներուս վրայօք իմ աչքս տեսաւ:

ՍԱՂՄՈՍ ԾԴ.

Ունկնդիր աստուած աղօթից իմոց.

1 Ո՛վ աստուած, ականջ դիր իմ աղօթքներս:

բուս , և իմ խնդրուածքներս անտես մի առներ :

2 Ինծի նայէ ու լսէ . ինչու որ ձանձրանալուս տրամեցայ ու խոռովեցայ , թշնամիին ձայնէն ու մեղաւորին նեղելէն , անիրաւութեամբ վրասս քալեցին , բարկութիւնով ինծի ռն կը պահէին :

3 Իմ սիրտս ներսիդիս դողաց , ու մահուան երկիւղը իմ վրասս ինկաւ :

4 Իմ վրասս ահ ու դող եկաւ , և խաւարը իս ծածկեց :

5 Ա՛րտէի թէ՛ մէկը ինծի աղաւնիին թուերուն նման թուերտար , որ թռչէի վեր ելլէի , հեռանալով անապատը ընակէի :

6 Աստուծոյ կը յուսայի՛ որ իս զայրացած կարճ մըտութիւնէ , մըրկալից սրտնեղութենէ կը փրկէ :

7 Ա՛վ տէր , ընկղմէ ու բաժնէ անոնց լեզուները . ինչու որ անիրաւութիւն ու հակառակութիւն տեսայ քաղաքին մէջ :

8 Վիշեր ու ցորեկ անօրէնութիւնները անոր պարիսպներուն բոլորտիքը պտըտեցան . մեղք ու չարութիւններ կան անոնց մէջը , և անոնց հրապարակներէն վաշխը ու նենգութիւնը չի պակսեցաւ :

9 Թէ՛ որ թշնամին իս նախատեր , շիտակը կը համբերէի . կամ թէ՛ ատողը իմ վրասս՝ մեծ զրուցեր , շիտակը երեսս անկէ կը պահէի :

10 Ըստպար դուն՝ իմ մարդ , իմ հաւասարս , իմ առաջնորդս և իմ ծանօթս , որ քաղցր կուգար ինծի և քեզի մէկտեղ կերակուր ուտելը , որ մէկտեղ

աստուծոյ տունը կ'երթայինք :

11 Սահը անոնց վրայ պիտի գայ, և ողջ ողջ գերեզմանը պիտի իջնան . վասն զի անոնց բնակութեանը մէջ և իրենց մէջը չարութիւն կայ :

12 Ես աստուծոյ աղաղակեցի, և տէրը ինծի լսեց իրիկուան առտուանց և կէս օրին :

13 Պատմեցի ու ըսի՝ և իմ ձայնիս պիտի լսէ . իմ մերձաւորներէս խաղաղութեամբ իմ անձս պիտի փրկէ, ինչու որ նեղութիւնով իմ վրաս հասան :

14 Եստուած պիտի լսէ, և անոնք պիտի խոնարհեցունէ, որ յառաջ քան զյաւիտեանս է :

15 Սասն զի անոնց փոխանակ չի կար, և աստուծմէ չի վախցան :

16 Իր ձեռքը երկնցուց անոնց հատուցում ընելու, և անոնք անոր օրէնքը աւրեցին :

17 Ենոր երեսին արտօտութենէն բաժնուեցան, և անոնց սիրտերուն հասան :

18 Ենոնց խօսքերը ձէթէն աւելի կակուղ էին, և իրենք սլաքներու պէս էին :

19 Բու հոգերդ տէրոջը ձգէ, և ան քեզ կը կերակրէ, և արդարին յաւիտեան սասանութիւն չի տար :

20 Դուն՝ ո՛վ աստուած, անոնք ապականութեան փոսին մէջ պիտի իջեցունես . արիւնահեղ և նենգաւոր մարդիկները իրենց օրերը կէս չի պիտի ընեն . սակայն ո՛վ տէր, ես իմ յոյսս քեզի դրած եմ :

ՕՐ ՏԵՄՆԵՒՄԻԿԵՐՈՐԳ

ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏՈՒ

ՍԱՂՄՈՍ ԾԵ .

|| Պորմեա՛ ինձ աստուած .

1 || Վ՛ստուած , ողորմէ՛ ինձի , վասն զի մարդը իս կոխեց . ամէն՝ օր պատերազմները իս նեղեցին :

2 Թշնամիներս ամէն՝ օր իս կոխեցին , շատ եղան անոնք՝ որ բարձր տեղերէն ինձի հետ կը ծեծկուէին :

3 Յորեկ ժամանակ չի պիտի վախնամ , ինչու որ տէրօջը յուսացի . աստուծմով՛ պիտի գովեմ իմ խօսքերս . աստուծոյ յուսացի՛ ու չի պիտի վախնամ . մարդը ի՞նչ կրնայ ըներ ինձի :

4 Ա՛մէն օր իմ խօսքերս անարգեցին , անոնց խորհուրդները չարութիւն էին ինձի համար :

5 Պանդուխտ ըլլան ու գողնիգողը պորտին . անոնք իմ գարշապարիս կ'սպասէին , ինչպէս որ իմ անձիս կ'սպասէին :

6 Աչինչ բանի մը պէս մերժես անոնք , բարկութիւնով՛ ժողովուրդը ինձի հնազանդեցունես :

7 Ո՛վ աստուած , իմ կեանքս քեզի պատմեմ . իմ արցունքներս քու առջիդ պիտի դնեմ , ինչպէս որ դուն ինձի խօսք տուիր :

8 Թշնամիներս ետ գաունան, որ օր որ քեզի աղաղակելու ըլլամ :

9 Ըհա՛ ճանչցայ որ դուն իմ աստուածս ես, զաստուած պիտի օրհնեմ իմ խօսքերովս, և տէրը պիտի գովեմ իմ խօսքերովս. աստուծոյ յուսացի ու չի պիտի վախնամ, մարդը ի՞նչ կրնայ ըներ ինծի :

10 Իմ ուխտերս ինէ են, որ քեզի պիտի ընծայեմ օրհնութիւնով՝ ո՛վ աստուած :

11 Իմ անձս մահուանէ ազատեցիր, աչու ըներս արցունքներէն, ոտու ըներս որոգայթէն. ընդունելի պիտի ըլլամ տէրօջը առջին կենդանեաց երկրին մէջ :

ՍԱՂՄՈՍ ԾԶ.

Ողորմեա՛ ինձ աստուած, ողորմեա՛.

1 Ողորմէ ինծի ո՛վ աստուած, ողորմէ ինծի, վասն զի իմ անձս քեզի յուսաց :

2 Կու թեւերուդ հովանաւորութեանը պիտի ապաւինիմ, մինչեւ որ անօրէնութիւնը անցնի :

3 Բարձրեալ աստուծոյ աղաղակեցի, իմ բարերար աստուծոյս :

4 Լըկինքէն խրկեց և իս ապրեցուց. իս կոխողները խցտառակ ըրաւ :

5 Եստուած իր ողորմութիւնը ու ճշմարտութիւնը խրկեց, և իմ անձս գաղաններուն մէջէն ազատեց, որ սրտի խոռվութիւնով կը քնանայի :

6 Սարդկանց որդիքներուն իրենց ակռաները

զէն ու նետեր են, և անոնց լեզուները սուր դանակի պէս է:

7 Ո՛վ աստուած՝ դուն երկինքը բարձրրցած ես, քու փառքդ բոլոր երկրի վրայ է:

8 Ի՞մ թաուըններուս որոգայթ պատրաստեցին, իմ անձս ցածցուցին. իմ առջիս փոս փորեցին, և իրենք մէջը խնկան:

9 Ի՞մ սիրտս պատրաստ է ո՛վ աստուած, իմ սիրտս պատրաստ է օրհնելու և սաղմոս ըսելու քեզի իմ փառքովս:

10 Արժնցիր ո՛վ իմ փառքս արժնցիր սաղմոսներով ու օրհնութիւնով, և ես առտուանց պիտի արժննամ:

11 Ո՛վ տէր, ժողովուրդներուն մէջ քեզի գոհութիւն պիտի մատուցանեմ, և ազգերուն մէջ սաղմոս պիտի երգեմ քեզի:

12 Սինչեւ երկինքը քու ողորմութիւնդ մեծ եղաւ. քու ճշմարտութիւնդ մինչեւ ամպերն է:

13 Ո՛վ աստուած, դուն երկինքներուն վրայ բարձրրցած ես, քու փառքդ բոլոր երկրի վրայ է:

ՍԱՂՄՈՍ ԾԵ.

Թէ արդարեւ զարդարութիւն խօսէիք.

1 Թէ որ իրաւցունէ արդարութիւն խօսէիք, և ուղիղ դատաստան տեսնայիք, ո՛վ մարդկան որդիքներ:

2 Արդ՝ հիմայ անգամ ձեր սրտին մէջ անօրէնութիւն կը գործէք երկրի վրայ . ձեռուքներնիդ անիրաւութիւն կը հնարեն :

3 Սեղաւորները մօրերնուն ծնելէն ՚ի վեր օտար եղան , արգանդէն խարուեցան ու սուտ խօսեցան :

4 Անոնց սրտմտութիւնը օձինին պէս է , իժի ու քարբի նման՝ որ իր ականջները գոցած է . որ ան ճարտար թուփշին ձայնը չի լսէ , և իմաստուն դեղատուէն դեղ չառնէ :

5 Աստուած անոնց բերանին մէջ իրենց ակօսաները պիտի փշրէ , և տէրը առիւծներուն ակօսաները խորտակեց :

6 Թափուող ջուրին պէս պիտի անարգուին անոնք , անոր աղէղը լարուած ժամանակը պիտի տրկարանան , և հալող մոմին պէս պիտի կորսուին :

7 Առ ինկաւ ու արեւը չի տեսան , դեռ իրենց փուշերը միտք չըրած . դժնիկի պէս բարկութիւնով անոնք պիտի երէ :

8 Արդարը պիտի ուրախանայ երբոր վրէժխընդրութիւնը տեսնայ , և իր ձեռքը մեղաւորին արիւնովը պիտի լուսայ :

9 Այլ մարդը պիտի ըսէ , թէ որ իրաւցունէ արդարին վարձք կայ նէ , աստուած նաև կայ՝ որ երկրի վրայ անոնք կը դատէ :

ՕՐ ՏԵՍՆԵՒՄԻԿԵՐՈՐԳ

ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԻ

ՍԱՂՄՈՍ ԾԸ.

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց .

1 Ո՛վ աստուած, իմ թշնամիներէս իս ազատէ, և իմ վրաս ելլողներէն իս ապրեցուր :

2 Լնօրէնուծիւն գործողներէն իս փրկէ, արիւնահեղ մարդոցմէն իս ապրեցուր :

3 Իմ անձս որսալ ուղեցին, և զօրաւոր մարդիկները իմ վրաս հասան :

4 Սեղք ու յանցանք չունէի, առանց մեղքի քալեցի և ուղիղ եղայ :

5 Լքթնցիր իմ առջիս ելլելու, և տես դուն ո՞վ զօրուծիւններուն տէրը՝ իսրայէլի աստուածը :

6 Մայէ ու այցելու եղիր ամէն ազգերուն. ողորմութիւն մի ըներ ամէն անօրէնուծիւն գործող ազգերուն :

7 Իրիկուան ետ պիտի դառնան, շուներու պէս պիտի անօթենան, և քաղաքին բոլորտիքը պիտի պրտրտին :

8 Լնոնք բերաննուն եկածը պիտի զրուցեն, և սուր կայ անոնց շրթունքներուն մէջ :

9 Լքդ՝ ո՞վ լսեց ասիկայ, որ դուն ո՞վ տէր, ա-

նոնց վրայ պիտի ծիծաղես, և ամէն հեթանոսները  
պիտի արհամարհես :

10 Իմ զօրութիւնս քեզի պիտի պահեմ, վասն  
զի աստուած իմ օգնականս է :

11 Իմ աստուծոյս ողորմութիւնը ինձի պիտի  
հասնի, և իմ աստուածս իմ թշնամիներուս վիճակը  
ինձի պիտի ցըցունէ :

12 Ընոնք մի սպաններ, որ քու ժողովուրդդ չի  
մոռնան. քու զօրութիւնովդ անոնք ցրուէ ու խո-  
նարհացուր անոնք. վասն զի ով տէր, դուն ես իմ  
պաշտպանս :

13 Ընոնց բերնին մեղքերուն և անոնց շըր-  
թունքին խօսքերուն համար, իրենց ամբարտաւա-  
նութիւնովը պիտի ընկղմին :

14 Ընէ՛ծքներու ու ստութեան պիտի մատնու-  
ին, բարկութիւնը վերջացած ժամանակը անոնք  
պիտի անցնին ու չի գտնուին :

15 Պիտի գիտնան թէ աստուած յակորին կը  
տիրէ, և ամէն երկրի ծայրերուն :

16 Իրիկուան ետ պիտի գառնան, շուներու պէս  
պիտի անօթենան, և քաղաքին բոլորտէքը պիտի պը-  
տըտին :

17 Ընոնք պիտի ցրուին ուտելու համար, թէ որ  
չի կշտանան՝ տրտունջ պիտի ընեն :

18 Ես տէրոջը օրհնութիւնները պիտի երգեմ,  
առտուանց քու ողորմութիւնովդ պիտի բերկրիմ :

19 Ինձի պաշտպան ու տուն ապաւինի եղար,

նեղութեան օրը ինձի օգնական ես :

20 Վեղի սաղմոսներ պիտի երգեմ , դուն իմ ապաւէնս ես ո՛վ աստուած , իմ ողորմութեանս աստուածը :

ՍԱՂՄՈՍ ԾԹ .

Ըստուած մերժեցեր .

1 Ո՛վ աստուած , մեզ մերժեցիր ու արեցիր , բարկացար ու մեզի պիտի գժաս :

2 Լքրկիրը շարժեցիր ու անիկայ դողացուցիր . անոր հարուածները բժշկէ , վասն զի սասանեցաւ :

3 Վրու ժողովուրդիդ խստութիւն ցըցուցիր , և մեզի յիմարութեան գինի խմցուցիր :

4 Վրենէ վախցողներուն նշան տուիր , որ թըշնամին երուն աղեղէն ազատին :

5 Ինչպէս որ քու սիրելիներդ փրկուեցան , աջ ձեռքովդ ապրեցուր և լսէ մեզի :

6 Ըստուած իր սուրբ տեղէն խօսեցաւ , պիտի ցնծամ . պիտի բարձրանամ , սիւքէմ բաղարը պիտի բաժնեմ , և խորաններուն ձորը պիտի չտփեմ :

7 Իմ է գաղայագը և իմ է մանասէն , եիրեմը իմ գլխուս զօրութիւնն է :

8 Հօգան իմ թագաւորս է , մովարը իմ յոսիս աւազանը :

9 Լքողմայ վրայ պիտի ուղղեմ իմ գնացքներս , և այլազգները ինձի հնազանդ եղան :

10 Ո՛վ պիտի տանի իս ամուր քաղաքը , կամ  
ն՛վ ինծի պիտի առաջնորդէ մինչեւ եղովմ :

11 Աթէ ոչ դուն ո՛վ աստուած , որ մեզ մերժե-  
ցիր , և մեր զօրքերուն հետ չելար ո՛վ աստուած :

12 Անդու՞թեան ժամանակը մեզի օգնութիւն  
տուր . վասն զի մարդուն փրկութիւնը ոչինչ է :

13 Աստուծով քաջութիւն ընենք , և ինքը մեզ  
նեղողները պիտի արհամարհէ :

ՍԱՂՄՈՍ Կ .

Առաջ աստուած աղօթից իմոց .

1 Ո՛վ աստուած , լսէ իմ աղօթքներուս , և իմ  
խնդրուածքներուս նայէ ո՛վ տէր :

2 Արկրի ծայրերէն քեզի աղաղակեցի , մինչեւ  
որ սիրտս մարեցաւ :

3 Ա՛յ էմէն բարձրըցուցիր իս , ինծի առաջնոր-  
դեցիր . թշնամիին դէմ ինծի յոյս և ամուր աշտա-  
րակ եղար :

4 Վ՛ու տաճարիդ մէջ պիտի բնակիմ յաւի-  
տեան , և քու թեւերուդ հովանաւորութեամբը պի-  
տի ծածկուիմ :

5 Ղ՛ուն ո՛վ աստուած , իմ աղօթքներուս լրսե-  
ցիր . քու անունէդ վստողներուն ժառանգութիւն  
տուիր :

6 Թ՛ագաւորին օրերուն օրեր էվելցուցիր . ա-  
նոր տարիներուն օրերը ազգէ մինչեւ ազգ :

7 Աստուծոյ առջին ողորմութիւնը ու ճշմարտութիւնը յաւիտեան կայ ու կը մնայ՝ ո՛վ որ անկէ կը խնդրէ :

8 Այսպէս սաղմոս պիտի երգեմ՝ քեզի յաւիտեանս յաւիտենից , և ամէն օր իմ աղօթքս քեզի պիտի տամ :

## ՕՐ ՏԵՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԳ

### ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏՈՒ

#### ՍԱՂՄՈՍ ԿԱ.

#### Բայց միայն աստուծոյ .

1 Բայց միայն աստուծոյ հնազանդ եղիր ո՛վ իմ անձս , վասն զի անկէ է իմ փրկութիւնս :

2 Ան է իմ աստուածս և իմ փրկիչս . իմ ապաււէնս՝ որ ալ չի սասանիմ :

3 Սինչեւ ե՞րբ մարդուն վրայ կ'ելէք ամէնքը սպաննելու . որպէս թէ ծուռ պատէն և մէկ կողմը ծռած ցանկէն :

4 Բայց միայն իմ պատիւս ինէ մերժելու խորհուրդ ըրին , և իրենց ծարաւութեանը մէջ վազելնուն պէս վազեցին :

5 Իրենց բերնովը կ'օրհնէին , և սրտովն կ'անիծէին :

6 Իսայց միայն աստուծոյ հնազանդ եղիւր ո՛վ իմ անձս . վասն զի անկէ է իմ համբերութիւնս :

7 Ըն է իմ աստուածս և փրկիչս , իմ ապաւէնս որ չի սասանիմ :

8 Ըստուծմէ է իմ զօրութիւնս և իմ փառքս . աստուած է իմ օգնականս , իմ յոյսս աստուծոյ է :

9 Ո՛վ ամէն ժողովուրդներուն ժողովները , ա նոր յուսացէք , ձեր սիրտերը անոր առջին բացէք . ինչու որ աստուած մեր օգնականն է յաւիտեան՝ ամէն ժամանակ :

10 Սակայն մարդկանց որդիքները ոչինչ են , մարդկանց որդիքները սուտ են , իրենց կշիռովը կը մեղանչեն . և ամէնքը մէկտեղ ունայնութեան մէջ են :

11 Ընիրաւութեան մի յուսաք , յաիշտակութեան մի ցանկաք . հարստութիւնը թէ որ ջուրերու վտակներուն պէս գայ՝ ձեր սիրտերը չի յօժարին :

12 Ըստուած մէկ անգամ խօսեցաւ , և երկու անգամ ասիկայ լսեցինք :

13 Ըստուծմէ է զօրութիւնը , և քուկդ է՝ ողորմութիւնը ո՛վ տէր . և դուն կը հատուցանես ամէն մէկուն իրեն գործքերուն չափովը :

ՍԵՂՄՈՍ ԿԲ .

Ըստուած աստուած իմ .

1 Ո՛վ աստուած՝ իմ աստուածս , առտուանց քու առջիդ կ'ելլեմ . իմ հոգիս քեզի ծարուեցաւ ,

մարմինս ևս առուել , անապատ և անջուր տեղի մը պէս՝ ուր որ ճամբայ չի կայ :

2 Այսպէս քու սուրբ խորանիդ մէջ քեզի պիտի երեւամ , որ քու զօրութիւնդ ու փառքդ տեսնամ :

3 Այսն զի քու ողորմութիւնդ իմ կեանքէս էլելիս աղէկ է ինծի , և իմ շրթունքներս քեզ պիտի գովեն :

4 Այսպէս քեզ պիտի օրհնեմ իմ կեանքիս մէջ , և իմ ձեռուներս քու անուանդ պիտի վերցունեմ :

5 Որպէս թէ ճարպին պարարտութենէն իմ անձս պիտի կշտանայ , ցնծութեան շրթունքներով իմ բերանս քեզ պիտի օրհնէ :

6 Թէ որ անկողինիս մէջ քեզ յիշէի , առտունց կանուխ ելելով քեզի հետ կը խօսէի :

7 Այսն զի իմ օգնականս եղար , քու թեւերուդ հովանաւորութեամբը պիտի ցնծամ :

8 Իմ անձս քու ետեւէդ եկաւ , և քու աջ ձեռքդ իս ընդունեց , և անոնք ունայն տեղը իմ անձս խնդրեցին :

9 Արկրի անդունդներուն ներքեւը պիտի մըտնան , սուրին ձեռքը պիտի մատնուին , և աղուէսներուն բաժիններ պիտի ըլլան :

10 Թագաւորը տէրոջը յուսաց , անով երդում ընողներուն ամէնքը պիտի գովուին , անոնց բերանները պիտի պապանձին՝ որոնք անիրաւութիւն կը խօսէին :

Լուր աստուած աղօթից իմոց .

1 Ո՛վ աստուած , քեզի աղաղակած ժամանակս իմ աղօթքիս լսէ , թշնամիին երկկուղէն իմ անձս ազատէ :

2 Չարերուն ժողովներէն իս ծածկես , անօրէնութիւն գործողներուն բազմութենէն :

3 Ընոնք իրենց լեզուները թուրի պէս սրեցին , իրենց աղեղները դառն բաներու համար լարեցին :

4 Որ սրտով ուղիղ եղողները գաղտնի տեղերէն ձգեն , մէկէնիմէկ անոնց մէջը պիտի նետեն ու չի պիտի վախնան :

5 Չարութեան խօսքերը իրենց մէջ շատցուցին . խորհեցան որ ինծի որոգայթ լարեն , և ըսին թէ՛ տէրը ասիկայ չի տեսնար :

6 Ընօրէնութիւն փնտռեցին , փնտռելով պատրաստուեցան քննելու :

7 Սարգը իր սրտին խորութեանը կը մօտենայ , և աստուած պիտի բարձրանայ :

8 Տղոցը նետերը անոնց վէրքեր եղան , իրենց լեզուները տկարացան . և ամէն անոնք տեսնողները պիտի խոռովին :

9 Ըմէն մարդ վախցաւ և աստուծոյ գործքերը պատմեցին , և անոր ըրածները հասկըցան :

10 Ըրդարը ուրախ պիտի ըլլայ տէրօջմով , և անոր պիտի յուսան . և ամէն սրտով ուղիղ եղողները անով պիտի պարծին :

ՕՐ ՏԵՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԱՂՕԹ Ք ԵՐԵԿՈՅԻ

ՍԱՂՄՈՍ ԿԴ .

Վեզ վայելէ օրհնութիւն .

1 Ով աստուած , քեզի կը վայելէ օրհնութիւնը սիօնի մէջ , և քեզի աղօթքներ պիտի մատուցուին երուսաղէմի մէջ :

2 Ասէ իմ աղօթքներուս , ինչու որ ամէն մարմին քեզի պիտի գայ :

3 Անօրէններուն խօսքերը իմ վրաս զօրացան , մեր անօրէնութիւնները դուն պիտի քաւես :

4 Այրանի ան մարդուն՝ որ ընտրեցիր ու ընդունեցիր , և քու սրահներուդ մէջ պիտի բնակին :

5 Սենք քու տանդ բարութենէն պիտի կըշտանանք , քու տաճարդ սուրբ է սքանչելի արդարութիւնով :

6 Ասէ մեզի ով աստուած՝ մեր փրկիչը , երկրի ամէն ծայրերուն հեռու և ծովու մէջ եղողներուն յոյսը :

7 Որ իր զօրութիւնովը լեռները կը պատրաստէ , և զօրութիւն հագած է :

8 Որ ծովուն մեծութիւնը կը խօսվեցունէ , և անոր ալիքներուն ձայնը կը հանդարտեցունէ :

9 Եթանոսները պիտի խռովին , և քու նշան-

ներէ՞ք երկրի բնակիչները պիտի վախնան :

10 Աստուանց ելեւնուն և իրիկուան պիտի ուրախանան . երկրին նայեցար՝ ջուրով կշտացուցիր անիկայ , և անոր մեծութիւնը շատցուցիր :

11 Աստուծոյ գետը ջուրով լեցուեցաւ . անոր կերակուրը պատրաստեցիր , վասն զի այսպէս է պատրաստութիւնը :

12 Անոր ակոսները ջուրով լեցուցիր , և անոր արմտիքը շատցուցիր :

13 Անոր ցողովը երկրին բոյսերը պիտի ուրախանան . դուն քու բարութիւնովդ տարին կը պրսակես :

14 Յիւս գաշտերդ պարարտութիւնով պիտի լեցուին : անապատի գեղեցկութիւնները պիտի պարարտանան :

15 Ելուրները ցնծութիւն պիտի հագնին , ոչ խարներուն խոյերը պիտի հագուին :

16 Աովիտները առատ ցորեն պիտի բերեն , պիտի աղաղակեն ու պիտի օրհնեն :

ՍԱՂՄՈՍ ԿԵ :

Աղաղակեցէք առ աստուած .

1 Աստուծոյ աղաղակեցէք ո՞վ ամէն երկիր . անոր անուանը սաղմոս երգեցէք , և անոր օրհնութեանը փառք տուէք :

2 Աստուծոյ ըսէք , ինչպէս ահաւոր են քու

գործքերդ, քու մեծ զօրութեանդ համար թշնամի-  
ներդ քեզի սուտ զրուցեցին :

3 Ը՛մէն երկիր քեզի երկրպագութիւն ընէ,  
սաղմոս երգէ քեզի, և սաղմոս երգէ քու անուանդ :

4 Լ՛կէք ու աստուծոյ գործքերը տեսէք, ինչ-  
պէս ահաւոր են խորհուրդներով՝ ամէն մարդկանց  
որդիքներուն գործքերէն էլիկ :

5 Ը՛ն ծովը ցամաքի դարձուց, գետը ոտքով  
քաշելով անցան :

6 Ը՛ն տեղը անով ուրախ պիտի ըլլանք, որ իր  
զօրութիւնովը յաւիտեան կը տիրէ :

7 Ը՛նոր աչուրները հեթանոսներուն կը նային,  
զինքը բարկացունողները իրենց անձին մէջ չի բարձ-  
րանան :

8 Ո՛վ հեթանոսներ, մեր աստուածը օրհնե-  
ցէք, անոր գովութեան ձայնը լսել տուէք :

9 Ը՛ն որ մեր անձերը կեանքի մէջ դրաւ, և մեր  
ոտուրներուն գողալ չի տուաւ :

10 Ո՛վ աստուած, մեզ փորձեցիր ու քննեցիր,  
ինչպէս որ արծաթը կը փորձուի :

11 Ս՛եղ որոգայթին մէջ իջեցուցիր, կոնակնիս  
նեղութիւն բեռցուցիր, և մարդիկը գլխունուս վը-  
րայէն անցուցիր :

12 Կրակը ու ջուրը անցանք, ու մեզ հանգիստը  
հանեցիր :

13 Պատարագներով քու տունդ պիտի մտնամ,  
իմ ուխտերս քեզի պիտի տամ՝ որ շրթունքներս

քեզի խոստացան , որ նեղութեան մէջ բերանս խօսեցաւ :

14 Պարարտ ողջակէզներ պիտի մատուցանեմ քեզի խոյերով ու խունկերով . և քեզի զուարակներ ու նոխազներ պիտի մատուցանեմ :

15 Այլէք՝ լացէք ինծի , և իմ անձիս ըրածները ձեզի ամէնուդ պատմեմ՝ որ աստուծմէ կը վախնաք :

16 Ինքնովս անոր աղաղակեցի , և լնդութս աւնիկայ պիտի բարձրըցունեմ :

17 Թէ որ սրտիս մէջ մեղք մը տեսնայի , տէրը ինծի չի պիտի լսեր :

18 Ասոր համար աստուած լսեց , և իմ խընդրուածքներուս ձայնին նայեցաւ :

19 ()ըհնեալ է աստուած , որ իմ աղօթքս ետ չի դարձուց . ու ոչ ալ ինէ իր ողորմութիւնը :

ՍԱՂՄՈՍ ԿԶ .

Աստուած ողորմեա՛ մեզ .

1 Ո՛վ աստուած , ողորմէ մեզի և օրհնէ մեզ . քու երեսդ մեզի ցըցուր , և ողորմէ մեզի :

2 Որ երկրի վրայ քու ճամբաներդ ճանչնանք , քու փրկութիւնդ ամէն ազգերուն մէջ :

3 Հնորհակալ ըլլան քեզի ժողովուրդները՝ ո՛վ աստուած , շնորհակալ ըլլան քեզի ամէն ժողովուրդները :

4 Ըմէն ազգերը ուրախ ըլլան ու ցնծան . ինչու որ դուն ժողովուրդները ուղղութիւնով կը դատես , և երկրի ազգերուն դուն կ'առաջնորդես :

5 Փառք տան քեզի ժողովուրդները ո՛վ աստուած , շնորհակալ ըլլան քենէ ամէն ժողովուրդները :

6 Արկիրը իր պտուղը տուաւ , և աստուած՝ մեր աստուածը մեզ օրհնեց :

7 Սեր աստուածը մեզ պիտի օրհնէ , և անկէ ամէն երկրի ծայրերը պիտի վախնան :

## ՕՐ ՏԵՍՆԻՐԵՒԵՐՈՐԴ

### ԱՂՕԹՔ ԱՌԱԻՕՏՈՒ

ՍԱՂԾՈՍ ԿԷ .

Յարիցէ աստուած .

1 Ըստուած պիտի ելլէ , և անոր ամէն թշնամիները պիտի ցրուին , զինքը ատողները անոր երեսէն պիտի փախչին :

2 Ընբրեւոյթ եղող մուխին պէս պիտի ցրուին . ինչպէս որ կրակին առջին մոմը կը հալի , անանկ ալ մեղաւորները աստուծոյ առջեւէն պիտի կորսուին :

3 Ըրդարները ուրախ պիտի ըլլան , և անոր առջեւը պիտի ցնծան , և իրենց ուրախութիւնովը պիտի զուարճանան :

4 () րհնեցէք մեր աստուածը և անոր անուանը սաղմոս երգեցէք . ճամբայ պատրաստեցէք անոր՝ որ արեւմուտքը կը նստի , և անոր անունը տէր է :

5 Ընոր առջեւը պիտի ցնծան , և անոր երեսէն պիտի խոսովին :

6 Ինքը որբերուն հայրն է , և այրիներուն դատաւորը , աստուած իր սուրբ բնակութեանը մէջն է :

7 Ըստուած միակրօնները տանը մէջ կը բնակեցունէ , և կատուածները իր քաջութեամբը կը հանէ . անանկ ալ գերեզմաններուն մէջ բնակող տառապեալները :

8 Ո՛վ աստուած , քու ժողովուրդիդ առջեւը ելած ժամանակդ , անապատէն անցած ժամանակդ երկիրը շարժեցաւ :

9 Այն զի երկինքները անգամ անձրեւ տուին աստուծոյ երեսէն՝ սինայէն , իսրայէլի աստուծոյն առջեւը :

10 Ո՛վ աստուած , քու ժառանգութեանդ կամաւոր անձրեւ պատրաստեցիր . թէպէտ հիւրնացաւ , բայց դուն անիկոյ հաստատեցիր . և քու գազաններդ հոն պիտի բնակին :

11 Ո՛վ աստուած , քու քաղցրութիւնովդ աղքատին պատրաստեցիր . տէրը իր պատգամը անոնց պիտի տայ՝ որ մեծ զօրութիւնով կը քարոզեն :

12 Ո՛վ զօրութիւններուն թագաւորը , քու տանըդ գեղեցկութիւնը քու սիրելիդ կողպատելով բաժնեց . թէպէտև դուք վիճակներուն մէջ տեղը

պիտի ննջէք :

13 Եղունիին թեւերուն պէս պիտի ըլլաք՝ որ արծաթով պատած է, և անոր կռնակը ոսկի գոյնով :

14 Երկինքը բնակողը անոր վրայ թագաւորներ ժողված ժամանակը, ձիւնի պէս սաղմոնի վրայ պիտի իջնան :

15 Եստուծոյ լեռը պարարտ լեռ է, կաթով պատած, և պարարտ լեռ, և դուք ի՞նչ կը կարծէք հպարտ լեռներ :

16 Ե՛ն լեռն է՝ որ աստուած հաճեցաւ հոն բռնակելու, ինչու որ տէրն ալ յաւիտեան հոն պիտի բնակի :

17 Եստուծոյ կառքը բիւրաւոր հազար կառաւարներով, և տէրը անոնց մէջն է իր սուրբ սինայ լեռնէն :

18 Բարձր տեղերը ելաւ, և գելուծիւնը գերի ըրաւ, կողոպտեց՝ պարգեւներ բաշխեց՝ ու մարդկանց որդիքներուն առաւ, վասն զի թերահաւատները անգամ հոն պիտի բնակին :

19 Օրհնեալ է տէր աստուած, ամէն ժամանակ տէրը օրհնեալ է, մեր իրկիչ աստուածը մեզի պիտի առաջնորդէ :

20 Ս՛եր աստուածը կեանք տուող աստուած է, և մահուան ազատութիւնը տէրոջմէ է :

21 Բայց աստուած մեր թշնամիներուն գլուխը պիտի փշրէ, և անոնց մազը գլուխնուն հետ՝ որոնք անօրէնութեան մէջ կը քալեն :

22 Տէրը ըսաւ , խորունկ անդունդներէն ետ պիտի դարձունեմ , և գազաններուն բերնէն դուրս պիտի հանեմ անիկայ :

23 Ար քու ոտուրներդ արիւնը պիտի թաթխուի , և քու շուներուդ լեզուները քու թշնամիներուդ արիւնը պիտի լիզեն :

24 Ա՛յլ աստուած , քու քալուածքներդ երեւցան , մեր սուրբ թագաւորին՝ աստուծոյ քալուածքները :

25 Իշխանները առաջ եկան օրհնութիւն տալու , կոյսերուն ու գովութիւն տուողներուն մէջ :

26 Երբ որ խորովուրդներուն մէջ զաստուած օրհնեցէք , և տէրը՝ ի սրայէլի աղբիւրներէն :

27 Հոն բենիամինը՝ որ տղայութեան մէջ զարմանալի էր , յուգայի իշխանները , զաբուղոնի իշխանները , և նեիթաղէմի իշխանները :

28 Ա՛յլ աստուած , քու զօրութիւնովդ հըրամայէ , զօրացուր աս բանը՝ որ մեր մէջը հաստատեցիր :

29 Երուսաղէմի մէջի տաճարիդ համար , թագաւորները քեզի պարգեւներ պիտի բերեն :

30 Եղեգի մէջի գազանին սաստէ , զուարակներուն ժողովներուն , և երինջներուն խումբերուն :

31 Անոնք պիտի արհամարհուին՝ որ արծաթով ընտրուած են . հեթանոսները , և պատերազմ ու զողները ցրուէ :

32 Եգիպտոսէն պատգամաւորներ պիտի գան . հնդիկները պինտ առաջ աստուծոյ ձեռք պիտի եր-

կընցունեն :

33 Ո՛վ երկրի թագաւորութիւններ, զաստուած օրհնեցէք, և տէրոջը սաղմոս ըսէք :

34 Ղ'ամբայ պատրաստեցէք անոր՝ որ երկինքն անբուն երկինքը կը նստի արեւելքի կողմը :

35 Լ՛հա՛ զօրութեան ձայնով իր ձայնը պիտի տայ, և տէրոջը փառք տուէք :

36 Լ՛նոր մեծ վայելութիւնը խորայէլի վրայ է, անոր զօրութիւնը մինչեւ երկինքի ամպերը :

37 Սքանչելի է աստուած իր սուրբերուն վրայ, խորայէլի աստուածը, ան իր ժողովուրդին զօրութիւն ու հաստատութիւն պիտի տայ, օրհնեալ է աստուած :

## ՕՐ ՏԵՍՆԻՐԵՒԵՐՈՐԴ

### ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԻ

ՍԱՂՄՈՍ ԿԸ.

Կեցո՛ զիս աստուած .

1 Ո՛վ աստուած, իս ապրեցուր, վասն՝ զի ջուրերը իմ անձիս հասան, խորունկ անդունդներուն մէջ ընկղմեցայ, ուր որ ինձի հանգստութիւն չի կայ :

2 Լսո՛ ծովին խորունկ տեղը եկայ, և շրջանները իս ընկղմեցին :

3 Աղաղակելէն հոգնեցայ, կոկորդոս ցամբեցաւ,  
աչուքներս սկարացան տէր աստուծոյս յուսալէն :

4 Իս ունայն տեղը պտղները գլխուս մազէն  
չառեղան : Իմ թշնամիներս և դատարկ տեղը իս  
պտղները իմ վրաս զօրացան : ան բանը որ չէի յա-  
փրջուակած՝ կը վհարէի անոնց :

5 Ա՛վ աստուած, դուն իմ անդգամութիւնս  
ճանչցար, և իմ յանցանքներս քննէ չի ծածկուե-  
ցան :

6 Վեզի համբերողները իմ պատճառաւ չա-  
մըշնան ո՛վ տէր, զօրութիւններուն տէրը : քեզ  
փնտռողները իմ պատճառաւ չի խայնին ո՛վ իս-  
րայէլի աստուածը :

7 Վեզի համար նախատինքներու համբերեցի,  
և ամօթը իմ երեսներս ծածկեց :

8 Ես իմ եղբայրներէս օտարացայ, և իմ մօրս  
զուկըներուն հիւր մը :

9 Վու տանդ նախանձը իս կերաւ . քեզ նա-  
խատողներուն նախատինքները իմ վրաս ինկան :

10 Պաքով իմ անձս խոնարհեցուցի, և ասիկայ  
իմ անձիս նախատինք եղաւ . հանդերձս քուրձէ չի-  
նեցի, և անոնց առակ եղայ :

11 Ղուռը նստողները իմ վրաս կը խորհէին,  
գինի խմողները զիս ծաղը կ'ընէին :

12 Ա՛վ տէր, ես քեզի աղօթքի կը կայնէի, ըն-  
դունելի ժամանակը :

13 Ա՛վ աստուած, քու մեծ ողորմութիւնովդ

լսէ ինծի , քու փրկութեանդ ճշմարտութիւնովը :

14 Իս շաղախէն ապրեցուր՝ որ չընկղմիմ : Իս  
ատողներէն , և շատ ջուրերուն խորութիւններէն ա-  
զատիմ :

15 Չ ռւրերուն շրջանները զիս չի կլլեն , և խոս-  
րունկ անդունդները զիս չընկղմեն : Տորը իր բերա-  
նը իմ վրաս չի գոցէ :

16 Ո՛վ տէր , լսէ ինծի , ինչու որ քու ողորմու-  
թիւնդ քաղցր է . քու մեծ գթութեանդ չափովը  
ինծի նայէ , և քու երեսդ քու ծանայէդ մի դար-  
ձուներ . վասն զի նեղութեան մէջ եմ , շուտով լսէ  
ինծի :

17 Իմ անձիս նայէ և իս ազատէ , և իմ թըշ-  
նամիներուս համար իս ապրեցուր :

18 Ս ասն զի դուն իմ նախատինքներս գիտես ,  
իմ ամօթս և իմ պատկառանքս :

19 Իմ անձս նեղողներուն ամէնքը քու առջիդ  
են . իմ սիրտս նախատանքներու ու թշուառութեան  
համբերեց :

20 Ար նայէի թէ իմ հետս ո՞վ պիտի տրտու-  
մի , և մէկը չի կար . և մի թարող մէկը չի գտնուե-  
ցաւ :

21 Աերակուրի տեղ ինծի լեզի տուին . և իմ  
ծարաւ ժամանակս ինծի քացախ խմցուցին :

22 Ընոնց սեղանները իրենց առջին որոգայթ  
հատուցում ու գայթակղութիւն պիտի ըլլան :

23 Ընոնց աչուրները պիտի խաարին՝ որ չի

տեսնան, և անոնց թիկունքը միշտ խոնարհեցուր :

24 Վրու բարկութիւնդ անոնց վրայ թափէ, քու բարկութեանդ սրտմտութիւնը անոնց հասնի :

25 Մնոնց բնակութիւնները աւերակ ըլլան, և անոնց յարկերը նստող մէկը չըլլայ :

26 Այսն զի քու զարկածդ անոնք հալածեցին, և իմ վէրքերուս ցաւերը էվելցուցին :

27 Մնոնց մեղքերուն վրայ մեղք գիր, որ քու արդարութեանդ չի մտնան :

28 Մնոնք կենդանիներուն գիրքէն սրբուին, և քու արդարներուդ հետ չի գրուին :

29 Ես աղքատ ու ցաւագար եմ, քու փրկութիւնդ ո՛վ աստուած իս պիտի ընդունի :

30 Իմ աստուծոյս անունը օրհնութիւնով պիտի օրհնեմ, և գովութիւնով անիկայ պիտի բարձրըցունեմ :

31 Մտուծոյ հաճելի պիտի ըլլայ մատաղ որթէն էվել, որ եղջիւրներ ու կճղակներ ունի :

32 Մղքատները պիտի տեսնան և ուրախ պիտի ըլլան. զաստուած փնտռեցէք, և ձեր անձերը կ'ապրին :

33 Այսն զի տէրը տնանկներուն լսեց, և իր կապուածները չարհամարհեց :

34 Երկինքները ու երկիրը անիկայ օրհնեն, ծովը և ամէն անոր մէջ շարժողները :

35 Մտուած սիօնը պիտի փրկէ, և հրէաստանի քաղաքները պիտի շինուին. թող շինեն՝ բնակին

և ժառանգեն անիկայ :

36 Վու ծառաներուդ զաւակը հոն հաստա-  
տուի, և քու անուոնդ սիրողները հոն բնակին :

ՍԱՂՄՈՍ ԿԹ .

Լստուած յօգնել ինձ նայեաց .

1 Ո՛վ աստուած, նայէ որ ինձի օգնես, և ար-  
տորա իմ օգնութեանս հասնելու :

2 Թող ամբշնան ու խպնին իմ անձս փրնա-  
րողները . ետ դառնան ու ամբշնան ինձի համար  
չարութիւն խորհողները :

3 Լ՛մբշնալով իսկոյն թող ետ դառնան անոնք՝  
որ ինձի վաչ վաչ կ'ըսէին :

4 Թող ցնծան և ուրախ ըլլան ան ամէնքը՝ որ  
քեզ կը փնտռեն :

5 Լ՛մէն ժամանակ քու փրկութիւնդ սիրողները  
թող ըսեն, աստուած մեծ է :

6 Ո՛վ աստուած, օգնէ ինձի, ես աղքատ ու  
տնանկ եմ . ո՛վ տէր, դուն իմ օգնականս ու փրկիչս  
ես, մի ուշանար :

7 Ես հարգումս օրհնումս քեզիս քան իմ թշուարս  
և իմ օրհնումս քան իմ թշուարս :

8 Երբուն բոլորեցի իմ խոսքս, որ ետ փո-  
քէր օգնէի, ապա օր բոլորեցի իմ խոսքս :

9 Երբուն խոսեցի իմ օրհնումս քեզիս քան իմ թշուարս  
և իմ օրհնումս քան իմ թշուարս :

ՕՐ ՏԵՄՆԵՂՉՈՐՄՆԵՐՈՐԳ

ԱՂՕԹ Ք ԱՌԱՒՕՏՈՒ

ՍԱՂՄՈՍ 4.

Ի քեզ տէր յուսացայ :

1 Հիշաս քեզի դրի ո՛վ տէր , յաւիտեան շա-  
մընամ . քու արդարութեամբդ փրկէ ու սպարե-  
ցուր իս :

2 Ի՛կանջդ ինծի ծուէ , և իս փրկէ :

3 Ինծի ապաւէն աստուած , և իս սպարեցունե-  
լու համար ամբողջեան տեղի եղիր . վասն զի իմ  
հաստատութիւնս և իմ ապաւէնս դուն ես :

4 Ո՛վ իմ աստուածս , իս մեղաւորին ձեռքէն  
ազատէ , անօրէնին ու անիրաւին ձեռքէն :

5 Ո՛վ տէր , իմ համբերութիւնս դուն ես , ո՛վ  
տէր իմ մանկութենէս՝ ի վեր իմ յոյսս :

6 Այս արգանդէն քեզի յանձնուեցայ , իմ մօրս  
որովայնէն դուն ես իմ ապաւէնս , և իմ օգնութիւնս  
ամէն ժամանակ քննէ է :

7 Այս շատերուն որպէս թէ նշաւակ մը եղայ ,  
և ինծի օգնական ու զօրութիւն տուողդ դուն ես :

8 Ի՛նքանս գովութիւնով լեցուի , որ քու փառ-  
քըդ օրհնեմ , ամէն օր քու մեծ վայելչութիւնդ :

9 Օ՛ւերութեան ժամանակս իս մի ձգեր ո՛վ տէր ,  
զօրութիւնս պակսած ժամանակը իս մի թողուր :

10 Թշնամիներս ինծի ըսին, և իմ անձս պաշարողները մեկտեղ խորհուրդ ըրին և ըսին, աստուած անիկայ թողուց, հալածենք և անոր հասնինք. ինչու որ անիկայ փրկող մը չի կայ :

11 Ո՛վ իմ աստուածս, ինէ մի հեռանար, և ո՛վ աստուած, ինծի օգնելու նայէ :

12 Ըմբռնան ու պակսին անոնք՝ որ իմ անձիս համար չարախօսութիւն կ'ընէին. ամօթով ու պատկառանքով ծածկուին անոնք՝ որ ինծի համար չարութիւն կ'ուզէին :

13 Ես ամէն ժամանակ պիտի յուսամ, և քու օրհնութիւններդ պիտի շատցունեմ :

14 Իմ բերանս քու արդարութիւններդ պիտի պատմէ, ամէն օր քու գովութիւններդ :

15 Ես անանկ խարդախութեան գիտութիւնը չէի գիտեր, հապա տէրոջը զօրութեանը ապաւինեցայ. և ո՛վ տէր, միայն քու արդարութիւններդ յիշեցի :

16 Ո՛վ իմ աստուածս, իմ մանկութենէս ինծի սորվեցուցիր. վասն որոյ քու արդարութիւններդ պիտի պատմեմ :

17 Սինչեւ հալուորութեան ու ծերութեան իս մի թողուր ո՛վ իմ աստուածս. մինչեւ որ քու բազուկդ ամէն գալու աղօթին պատմուի :

18 Բու ըրած մեծամեծ զօրութիւններդ ու արդարութիւնդ մինչեւ երկինքներն են. ո՛վ աստուած, քեզի նման ո՛վ կայ :

19 Որչափ շատ նեղութիւն ու շարչարանք ցը-  
ցուցիր ինձի, դարձար ու իս մխիթարեցիր, երկրին  
խորունկ անգունդներէն իս հանեցիր :

20 Ի՛նչու զօրութիւններդ էվելցուցիր, դարձար  
իս մխիթարեցիր, և երկրին խորունկ անգունդնե-  
րէն իս նորէն հանեցիր :

21 Ուրեմն ես ալ քեզի փառք պիտի տամ սաղ-  
մոսներու պատրաստութիւնով՝ ո՛վ ճշմարիտ աս-  
տուած . օրհնութիւնով սաղմոս պիտի ըսեմ քեզի  
ո՛վ իսրայէլին սուրբը :

22 Ի՛նչեզի սաղմոս ըսած ժամանակս շրթունք-  
ներս պիտի ցնծան, և իմ անձս՝ որ փրկեցիր :

23 Եւ իմ լեզուս ալ ամէն օր քու արդարու-  
թիւններդ պիտի խօսի, ան ժամանակը որ ինձի չա-  
քութիւն ուզողները ամօթով պիտի իյնան ու ա-  
մբշնան :

### ՍԱՂՄՈՍ ԷԱ.

Ըստուած զիրաւունս քո արքայի տունը .

1 Ո՛վ աստուած, քու իրաւունքներդ թագա-  
ւորին տուր, և քու արդարութիւններդ թագաւորին  
տղին :

2 Որ քու ժողովուրդներդ արդարութիւնով  
դատէ, և քու աղքատներդ իրաւունքով :

3 Եւ հռները ժողովուրդին խաղաղութիւնը առ-  
նեն, և բլուրները արդարութիւնը :

4 Սողովուրդին աղքատներուն իրաւունք պիտի ընէ, և տնանկներուն զաւկըները պիտի ազատէ, և ամբարտաւանները պիտի խոնարհեցունէ :

5 Արեգակին հետ լուսինէն առաջ կենայ ու մնայ, ազգէ մինչև ազգ :

6 Անձրեւի պէս բուրգին վրայ պիտի իջնայ, ցօղի պէս՝ որ երկիրը կը թրջէ :

7 Անոր օրերը արդարութիւնը պիտի ծագի, մեծ խաղաղութիւն՝ մինչև որ լուսինին ժամանակը լուման ըլլայ :

8 Ան ծովէ ծով պիտի տիրէ, գետերէն մինչև աշխարհի ծայրերը :

9 Առաջ հնգիկները անոր առջին պիտի իյնան, և անոր թշնամիները հող պիտի ուտեն :

10 Թարսիսին և կղզիներուն թագաւորները անոր ընծաներ պիտի մատուցանեն, արաբայ ու սաւրայ թագաւորները անոր ընծաներ պիտի բերեն :

11 Արկրի ամէն թագաւորները անոր երկրպագութիւն պիտի ընեն, և ամէն ազգերը անոր պիտի ծառայեն :

12 Այսն զի աղքատը զօրաւորէն փրկեց, աղքատը ու տնանկը՝ որուն օգնութիւն ընող չի կայ :

13 Ան աղքատին ու տնանկին պիտի ողորմի, և տնանկներուն խնձերը պիտի ազատէ, գէշ վաշխերէն անոնց անձերը պիտի ազատէ :

14 Անոր անունը պատուական է անոնց առջին, պիտի ապրի ու արաբացւոց ոսկիէն անոր պիտի

տրուի :

15 Ամէն ժամանակ անոր աղօթք պիտի ընեն ,  
և ամէն օր անիկայ պիտի օրհնեն :

16 Բոլոր երկրի վրայ առատութիւն պիտի ըլ-  
լայ , և լեռներուն գլուխներուն վրայ :

17 Անոր պտուղը լիբանանէն բարձր պիտի ըլ-  
լայ . երկրի խոտին պէս տէրոջը քաղսքին մէջ պիտի  
ծաղկի :

18 () օրհնեալ ըլլայ տէրոջը անունը յաւի-  
տեան . վասն զի անոր անունը արեւէն առաջ է :

19 Երկրի ազգերը անով պիտի օրհնուին , և  
մէն ազգերը երանի պիտի տան անոր :

20 () օրհնեալ ըլլայ իսրայէլի տէր աստուածը ,  
որ ինքն է միայն սքանչելիքներ ընողը . և անոր սուրբ  
փառքին անունը յաւիտեան օրհնեալ է . բոլոր եր-  
կիրը անոր փառքովը պիտի լեցուի . եղիցի եղիցի :

## ՕՐ ՏԵՄՆԸՉՈՐՍԵՐՈՐԴ

### ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԻ

#### ՍԱՂՄՈՍ ՀԲ .

Իբրև զի բարի է իսրայէլի աստուած .

1 Ինչպէս բարի է աստուած իսրայէլին , և ա-  
նոնց՝ որ սրտով ուղիղ են :

2 Սակայն քիչ մնաց որ ոտուրներս պիտի դող-  
դրղային, քիչ մնաց որ գնացքներս պիտի սահէին :

3 Այս անօրէններուն նախանձեցայ երբոր մե-  
ղաւորներուն խաղաղութիւնը կը տեսնայի . ինչու  
որ մահուան տրտմութիւն չի կար անոնց :

4 Անոնց տանջանքները հաստատուն էին, մար-  
դոց հետ աշխատանքի մէջ չեն, և մարդոց հետ չի  
պիտի չարչարուին :

5 Ասոր համար ամբարտաւանութիւնը անոնք  
բռնեց, ամբարշտութիւնը ու անիրաւութիւնը վը-  
րանին հագան :

6 Անոնց անիրաւութիւնը որպէս թէ ճարպէն  
պիտի ելլէ. ինչու որ անոնք իրենց սրտին խորհուրդ-  
ներուն պէս գացին :

7 Չարութիւնով խորհեցան ու խօսեցան . ա-  
նիրաւութիւն խորհեցան բարձրեալին դէմ :

8 Իրենց բերանը երկինքներուն մէջ դրին, և  
լեզունին երկրին վրայ թող տուին :

9 Անոր համար ժողովուրդս ասդին պիտի դառ-  
նայ, և իմ օրերս կատարեալ լեցուն պիտի գտնուին  
անոնց մէջ :

10 Իսին թէ՛ աստուած ի՞նչպէս գիտցաւ .  
բարձրեալին քով գիտութիւն կայ մի :

11 Ահա մեղաւորներ են, և անոնց յաջողուած  
է, կը կենան ու աշխարհի մեծութիւնը ունին :

12 Իսի՛ ուրեմն զուր տեղը սիրտս արդարացու-  
ցի. ձեռուրներս սրբութիւնով պիտի լուամ . և ա-

մէն օր տանջուեցայ, և առտուանցները նախատինք լսեցի :

13 Թէպէտե Կ'ըսէի թէ՛ ահա ասանկ պիտի պատմեմ քու զաւկըններուդ ազգին՝ որոնց որ ես ուխտեցի :

14 Ս'իտքս գրի որ աս ալ նեղութիւն մըն է իմ առջիս, մինչեւ որ աստուծոյ սրբութեան տեղը մըտնամ, և անոնց վերջը իմանամ :

15 Սակայն անոնց նենգութեանը համար անոնք մերժէ, և իրենց ամբարտաւանութիւնովը անոնք կործանէ :

16 Ըրդ՝ ինչպէս մէկէնիմէկ կործանեցան, իքենց անօրէնութեանը համար սատկեցան պակսեցան կորսուեցան, և քունէ արթնցողներուն երազներուն պէս եղան :

17 Ո՛վ տէր, քու քաղաքիդ մէջ անոնց պատկերները անարգէ. ինչու որ իմ սրտիս մէջ կրակ վառեցաւ, և իմ երիկամունքներս փոխուեցան :

18 Եւ երեսէ ինկայ ու չի գիտցայ, քու առջիդ անասունի պէս սեպուեցայ, ու ես ամէն ժամանակ քու քովդ եմ :

19 Իմ աջ ձեռքէս բռնեցիր, քու խորհուրդներովդ ինծի առաջնորդեցիր, և իս փառքով ընդունեցիր :

20 Ի՞նչ ունիմ ես երկինքը, կամ երկրի վրայ քենէ՛ ի զատ ի՞նչ պիտի փնտռեմ :

21 Իմ սիրտս ու մարմինս մաշեցան, իմ սրտիս

աստուածը, աստուած յաւիտեան իմ բաժինս է :

22 Ըհա անձերնին քենէ հեռացընողները կորսուին, ամէն քեզի ապստամբողները սատկեցուր :

23 Ինծի աստուծոյ մօտենալը բարի է, և իմ յոյսս տէրօջը դնելը . քու ամէն օրհնութիւններդ պատմելու սիօնի աղջիկանը դուռները :

ՍԵՂՄՈՍ 49 .

Ընդէ՞ր մերժեցեր աստուած .

1 Ո՛վ աստուած, ինչո՞ւ մեզ մինչեւ վերջը մերժեցիր . սրամտութիւնդ քու արօտիդ ոչխարներուն վրայ բարկացաւ :

2 Սիտքդ բեր քու ժողովուրդդ որ սկիզբէն ստացար . քու ժառանգութեանդ վիճակը փրկեցիր :

3 Ըյս սիօն լեռը՝ որ դուն անոր մէջը բնակած ես . քու ձեռքդ անոնց ամբարտաւանութեանը վրայ մինչեւ վերջը բարձրըցուր :

4 Ինչ անիրաւութիւն որ ըրաւ թշնամին քու սուրբ տեղիդ մէջ, քեզ ատողները քու բարեկենդանութեանդ մէջ պարծեցան :

5 Իրենց նշանները նշաններու տեղ դրին . և իրենք աս բաներուն վերէն ըլլալը չի հասկըցան :

6 Ընտառին մէջի ծառերուն պէս կացիններով անոր դուռները կոտորեցին . անիկոյ տապարներով ու մուրճերով մէկտեղ կործանեցին :

7 Կրակով երեցին քու սուրբ տեղդ . քու ա-

նուանդ խորանը երկրի վրայ պղծեցին :

8 Անոնց ազգերը իրենց սրտին մէջ մէկտեղ ըսին, եկէք աստուծոյ ամէն տօները երկրին վրայէն վերցունել տանք :

9 Սննք մեր նշանները չի տեսանք, և մարգարէ անգամ չի կայ, և մեզ մէկը չի պիտի ճանչնայ :

10 Ո՛վ աստուած, մինչև ե՞րբ թշնամին կը նախատէ, հակառակորդը քու սուրբ անունդ կը բարկացունէ :

11 Ինչո՞ւ քու ձեռքդ կը դարձունես, և քու աջ ձեռքդ քու ծոցէդ :

12 Աստուած՝ մեր թագաւորը սկիզբէն է՝ որ երկրի մէջ փրկութիւն ըրիր :

13 Դուն քու զօրութիւնովդ ծովը հաստատեցիր. վիշապներուն գլուխը դուն ջուրերուն վրայ խորտակեցիր :

14 Ա իշապին գլուխը դուն փշրեցիր, և անիկայ կերակուր տուիր հնդկաց զօրքերուն :

15 Աղբիւրները ու վտակները դուն բղխեցուցիր, յորդառատ գետերը դուն ցամքեցուցիր :

16 Վուկդ է ցորեկը ու քուկդ է գիշերը, լուսինը ու արեւը դուն ստեղծեցիր. և երկրի ամէն սահմանները դուն հաստատեցիր. գարունը ու ամառը դուն ստեղծեցիր :

17 Սխաբդ ըլլայ ասիկայ՝ որ թշնամին տէրը նախատեց. անզամ ժողովուրդը քու սուրբ անունդ բարկացուց :

18 Վեղ խոստովանող անձը գաղաններուն մի մատներ, և քու տնանկներուդ անձը մինչեւ վերջը մի մոռնար :

19 Վու ուխտիդ նայէ, ինչու որ երկրի վրայ ապշածներուն տուները անիրաւութիւնով լեցուեցան :

20 Տնանկը ամօթով ետ չի դառնայ, հապա աղքատը ու տնանկը քու սուրբ անունդ օրհնեն :

26 Վոհութիւն տուէք երկինքի աստուծոյն, ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

ՍԱՂՄՈՍ ԺԼԶ .

Ի գետս բարեկացոց .

1 Բարեկացոց գետերուն մօտ՝ հոն կը նըստէինք ու կուլայինք, երբոր հոն սիօնը յիշեցինք :

2 Անոնց ուռի ծառերուն մէջ մեր քնարները կախեցինք :

3 Անզ գերի ընողները հոն օրհնութեան խօսքեր կ'ուզէին մենէ . և մեզ գերի վարողները մեզի կ'ստիպէին ու կ'ըսէին :

4 Աիօնի օրհնութենէն մեզի երգեցէք . բայց օտար երկրի մէջ տէրոջը օրհնութիւնները ի՞նչպէս երգենք :

5 Ո՛վ երուսաղէմ, թէ որ քեզ մոռնամ, իմ  
աջ ձեռքս թող իս՛մոռնայ :

6 Երբուս թող քիմքերուս փակչի թէ որ քեզ  
չի յիշեմ, թէ որ ամենէն առաջ քու երգերդ չեր-  
գեմ ո՛վ երուսաղէմ, իմ ուրախութեանս սկիզբը :

7 Ո՛վ տէր, յիշէ եզովմի զաւկընները երուսա-  
ղէմի օրերուն մէջ, որ կ'ըսէին՝ փլուցէք փլուցէք,  
մինչեւ հիմը հասուցէք :

8 Ո՛վ բարեկացւոց թշուառ աղջիկը, երանիա-  
նոր՝ որ մեզի ըրածներուդ փոխարէնը քեզի հասուց :

6 Երանի անոր՝ որ քու զաւկըններդ բռնեց ու  
քարին զարկաւ :

ՍԱՂՄՈՍ ՃԼԵ .

Խոստովան եղէց քեզ տէր .

1 Ի՞նչոր իմ սրտովս քեզի գոհութիւն պիտի  
տամ ո՛վ տէր, հրեշտակներուն առջին քեզի սաղմոս  
պիտի երգեմ :

2 Ինչու որ իմ բերնիս խօսքերը լսեցիր, քու  
սուրբ տաճարիդ մէջ երկրպագութիւն պիտի ընեմ,  
ու քու սուրբ անուանդ փառք պիտի տամ քու ողոր-  
մութեանդ ու ճշմարտութեանդ համար .

3 Լ՛մէն բանի մէջ քու սուրբ անունդ մեծ ըրիր .  
որ որ որ քեզի աղաղակեմ՝ շուտով լսէ ինձի, և իմ  
անձիս զօրութիւնները շատցուր :

4 Երկրի ամէն թագաւորները փառք տան քե՛ւ .

զի ո՛վ տէր , ինչու որ քու բերնիդ խօսքերը լսեցին ,  
և քու ճամբաներդ պիտի օրհնեն :

5 Տէրօջը փառքը մեծ է , տէրը բարձր է . խո-  
նարհները կը տեսնայ , ու հպարտները հեռուէն կը  
ճանչնայ .

6 Թէ որ ես նեղութիւններու մէջ քալելու ըլ-  
լամ , թշնամիին բարկութենէն իս պիտի ապրեցու-  
նես :

7 Չեոքդ երկնցուցիր , ու աջ ձեռքդ իս փրկեց ,  
և տէրը իմ տեղս պիտի հատուցանէ :

8 Ո՛վ տէր , քու ողորմութիւնդ յաւիտեան կայ .  
քու ձեռքիդ գործքերը երեսէ մի ձգեր :

## ՕՐ ՔՍԵՆԸ ԻՆՆԵՐՈՐԳ

### ԱՂՕԹ Ք ԱՌԱԻՕՏՈՒ

#### ՍԱՂՄՈՍ ՃԼԸ .

#### Տէր փորձեցեր զիս .

1 Ո՛վ տէր , իս փորձեցիր ու ճանչցար . դուն  
իմ նստելս ու ելլելս ճանչցար :

2 Իմ խորհուրդներս հեռուանց իմնցար . իմ  
չաւիղն րս ու իմ վիճակս դուն քննեցիր . և իմ ամէն  
ճամբանն րս առաջուց տեսար , ինչու որ իմ լեզուիս  
մէջ նենգութիւն չի կայ :

3 Լ՛հա դուն ո՛վ տէր , իմ վերջինս ու առաջինս ճանչցար , դուն իս ստեղծեցիր , և քու ձեռքդ իմ վրաս դրիր :

4 Ի՛նչու գիտութիւնդ ինձի սքանչելի երեւայ , զօրացաւ ու կարող չեմ անիկայ տանելու :

5 Լ՛ս քու հոգիէդ ո՛ւր երթամ , կամ քու երեսէդ ո՛ւր փախչիմ :

6 Թէ որ երկիրքը ելլեմ՝ դուն հոն ես , թէ որ դժոխքը իջնամ՝ հոն ալ մօտ ես :

7 Թէ որ առտուանց թեւերս առնեմ , ու ծուռն եղբրքները բնակիմ :

8 Հոն անգամ քու ձեռքդ ինձի պիտի առաջնորդէ , և քու աջ ձեռքդ իս պիտի ընդունի :

9 Ըսի , ուրեմն խաւարը իս ծածկեց , կամ թէ գիշերը իմ փափկութեանս լոյսին տեղը :

10 Խաւարը քեզի խաւար չի պիտի ըլլայ , ու գիշերը ցորեկի պէս լոյս պիտի ըլլայ , և գիշերուան խաւարը ցորեկուան լոյսին պէս է :

11 Դուն իմ երիկամունքներս ստացար , և իմ մօրս փորէն իս չի թողուցիր :

12 Ո՛վ տէր , քիչ պիտի գովեմ , ինչու որ հաւոր ու սքանչելի ես . քու գործքերդ սքանչելի են , և իմ անձս շատ գիտցաւ :

13 Իմ ոսկորս քենէ չի ծածկուեցաւ՝ որ ծածուկ տեղը ըրիր , և իմ զօրութեանս կարողութիւնը՝ որ երկրի խորութիւններուն մէջ ըրիր :

14 Իս կատարեալ չըրած քու աշուրներդ տե-

սան , և ամէնքը քու գիրքիդ մէջ գրուեցան :

15 ( )ը օրի անոնք կազմուեցան , և անոնց մէջ մէկը չի կար :

16 Ո՛վ աստուած , ինչպէս պատուական եղան ինծի քու բարեկամներդ , և անոնց իշխանները որչափ զօրացան :

17 Անոնք համրեցի , ու աւազէն էլվել շատցան , արժնցայ՝ ու հիմայ քու հետդ եմ :

18 Ո՛վ աստուած , մեղաւորները չի՞ պիտի ըսպաննես . ո՞վ արիւնահեղ մարդիկ , ինէ հեռու կեցէք :

19 Հակառակութիւնով ու նախանձով զուր տեղը քու քաղաքներդ պիտի առնեն :

20 Ո՛վ տէր , չէ թէ միայն քեզ ատողները ատեցի , հապա քու թշնամիներուդ վրայ մաշեցայ :

21 Անոնք կատարեալ ատելութիւնով ատեցի , և ինծի թշնամի եղան :

22 Ո՛վ աստուած , իս փորձէ , և իմ սիրտս ճանչցիր . իս քննէ , ու իմ շաւիղներս ճանչցիր :

23 Ո՛ւ նայէ թէ իմ ճամբաներուս մէջ անօրէնութիւն կայ մի , ու իս քու յաւիտենական ճամբաներուդ մէջ առաջնորդէ :

ՍԱՂՄՈՍ ԾԼԹ .

Ապրեցո՛ զիս տէր .

1 Ո՛վ տէր , իս չար մարդէն ազատէ , անիրաւ մարդէն իս փրկէ :

2 Սրտերնուն մէջ անօրէնութիւն մտմտացին ,  
ամէն օր ծեծ կուելու պատրաստուեցան :

3 Լեզուներնին օձին լեզուին պէս սրեցին , և  
անոնց պոկունքներուն ներգելը իժերուն թոյները  
կան :

4 Ո՛վ տէր , մեղաւորին ձեռքէն իս պահէ , ու  
չար մարդէն իս փրկէ :

5 Ստմտացին որ իմ գնացքներս խնամանէն ,  
ամբարտաւանները ինծի համար որոգայթ լարեցին :

6 Ստուըներուս որոգայթի համար չուաններ  
ձգեցին , իմ շաւիղներուս բռնորտիքը գայթակղու-  
թիւն դրին :

7 Ըսի՛ դուն իմ տէր աստուածս ևս , ո՛վ տէր ,  
ականջ դիր իմ աղօթքիս ձայնին :

8 Տէր , ո՛վ տէր , իմ փրկութեանս զօրութիւնը ,  
պատերազմի օրը իմ գլխուս հովանին :

9 Ո՛վ տէր , իս մեղաւորներուն ցանկութեանը  
մի մատներ , որ ինծի համար մտմտացին . իս վար մի  
զարներ :

10 Որ չըլայ թէ բարձրնան , և անոնց խոր-  
հուրդները չի կատարուին . անոնց կատարածին  
վախճանը՝ իրենց պոկունքներուն վաստակը զիրենք  
պիտի ծածկէ :

11 Ընոնց վրայ կրակի կայծակներ թափես , և  
անոնք կործանես . տառապանքներէն կարող չըլան  
ապրելու :

12 Լեզուանի մարդուն երկրի վրայ յաջողու-



7 Ինչպէս հողին թանձրութիւնը՝ որ երկրի վրայ տարածուած է, անոնց ոսկորները գերեզմաններուն մօտ ցրուեցան :

8 Տէր, ո՛վ տէր, աչուրներս քեզի են , յոյսս քեզի դրի , հոգիս ինէ մի հանել ր :

9 Ինծի համար ծածկուած որոգայթէն , անօրէնութիւն ընողին գայթակղութենէն իս պահէ :

10 Սեղաւորները իրենց որսալու գործիքին մէջը թող իյնան . ես մինակ եմ՝ մինչեւ որ անոնք անցնին :

## ՕՐ ՔՍԵՆՔԻՆՆԵՐՈՐԳ

### ԱՂՕԹ Ք ԵՐԵԿՈՅԻ

ՍԱՂՄՈՍ ԺԽԱ .

Չայնիւ իմով .

1 Իմ ձայնովս տէրոջը կանչեցի , իմ ձայնովս տէրոջը աղաչեցի :

2 Իմ աղօթքներս տէրոջը առջին պիտի փոխմ , ու իմ նեղութիւններս անոր առջին պիտի պատմեմ :

3 Հոգիս իմ մէջս մարելու ժամանակը , դուն ո՛վ տէր , իմ շաւիղներս գիտցար . գացած ճամբուս մէջ ինծի համար որոգայթ դրուեցաւ :

4 Ա՛յ կողմէս կը նայէի՝ կը տեսնայի , և իս ճանչ-

ցող ձեկը չի կար . իմ փախչելու ինէ կորսուեցաւ , և  
իմ անձս փնտռող մը չի կար :

5 Ո՛վ տէր , քեզի կանչեցի ու ըսի , դուն իմ  
յոյսս ու բաժինս ևս կենդանեաց երկրին մէջ :

6 Ո՛վ տէր , նայէ իմ աղօթքիս , ինչու որ շատ  
տկարացայ . իս հալածողներէն ազատէ իս , ինչու որ  
ինէ էզել զօրաւոր եղան :

7 Ո՛վ տէր , իմ անձս բանտէն հանէ , քու ա-  
նուանդ փառք տամ :

8 Արդարները ինծի կ'սպասեն , մինչև որ ինծի  
հասուցում ընես :

ՍԱՂՄՈՍ ԺԽԲ .

Տէր լուր աղօթից իմոց .

1 Ո՛վ տէր , լսէ իմ աղօթքիս , քու ճշմարտու-  
թիւնովդ իմ խնդրուածքներուս ականջ դիր :

2 Կ'ու արդարութիւնովդ ինծի լսէ , և քու ծա-  
ռայիդ հետ դատաստանի մի մտնար . ինչու որ քու  
առջիդ ամենեւին կենդանի մը չարդարանար :

3 Ի՞նչամին իմ անձս հալածեց , իմ կեանքս  
երկիրը խոնարհեցուց . իս խաւարը նստեցուց շա-  
տոնցուրնէ մեռածի պէս :

4 Հոգիս ներսիդիս ձանձրացաւ , և իմ սիրտս  
իմ մէջս խռովեցաւ :

5 Առջի օրերը յիշեցի , քու ամէն գործքերդ խո-  
սեցայ . քու ձեռքիդ ըրածները մտմտացի , և իմ

ձեռքս քեզի վերուցի :

6 Իմ անձս չոր երկրի պէս քեզի կը ծարաւի .  
նիվ տէր , շուտով ինձի լսէ , ինչու որ հոգիս ինէ  
պակսեցաւ :

7 Վրու երեսդ ինէ մի դարձուներ , որ գերեզ-  
մանը իջնողներուն չի դառնամ :

8 Ատուանց քու ողորմութիւնդ ինձի լսել  
տուր . ինչու որ նիվ տէր , յոյսս քեզի դրի :

9 Այրթալու ճամբաս ինձի ցըցուր , ինչու որ նիվ  
տէր , իմ անձս քեզի վերուցի :

10 Ո՛վ տէր , իմ թշնամիներէս իս ազատէ , ին-  
չու որ քեզ ինձի ապաւէն ըրի :

11 Վրու կամքդ կատարելը ինձի սորվեցուր , ին-  
չու որ դուն իմ աստուածս ես :

12 Թող քու բարի հոգիդ իս ուղիղ երկրին ա-  
ռաջնորդէ :

13 Ո՛վ տէր , քու անուանդ համար իս ապրե-  
ցուր . քու արդարութիւնովդ իմ անձս նեղութենէն  
հանէ :

14 Վրու ողորմութիւնովդ իմ թշնամիներս սատ-  
կեցուր . իմ անձիս նեղութիւն տուողներուն ամէնքը  
կորսնցուր , ինչու որ ես քու ծառայ եմ :

ՕՐ ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԳ

ԱՂՕԹ Ք ԱՌԱՒՕՏՈՒ

ՍԱՂՄՈՍ ՃԽԳ.

(Օրհնեալ տէր աստուած իմ .

1 Օրհնեալ ըլլայ իմ տէր աստուածս , որ իմ ձեռուըներս պատերազմի սորվեցուց , և իմ մատուըներս կռիւի :

2 Իմ ողորմութիւնս և իմ ապաւէնս , իմ օգնականս և իմ փրկիչս , ու ես անոր կը յուսամ , որ իմ ժողովուրդս ինձի կը հնազանդեցունէ :

3 Ո՛վ տէր , մարդը ո՞վ է՝ որ դուն անոր յայտնուեցար , կամ մարդուն զաւակը՝ որ անիկայ բանի մը տեղ կը դնես :

4 Մարդը ունայնութեան նմանեցաւ , և անոր օրերը շուքին պէս անցան :

5 Ո՛վ տէր , երկինքները խոնարհեցուր ու իջիր . լեռներուն մօտեցիր ու մխան :

6 Վու կայծակներդ զարնել տուր , և անոնք զարհուրեցուր , քու նետերդ խրկէ , ու անոնք ցրուէ :

7 Վու ձեռքդ բարձրութիւններէն խրկէ , ու իս շատ ջուրերէն ու օտար զաւկըներուն ձեռքէն ազատէ :

8 Որ անոնց բերանները ունայնութիւն խօսեցան , և անոնց աջ ձեռքը մեղքի ձեռք է :

9 Ո՛վ աստուած , նոր օրհնութիւնով քեզ պիտի օրհնեմ , տասը թեկէ սաղմոսարանով քեզի սաղմոս պիտի ըսեմ :

10 Ըն մեր թագաւորներուն փրկութիւն պիտի տայ , և իր դաւիթ ծառան չար սուրէն պիտի ազատէ :

11 ( )տար զաւկըներուն ձեռքէն իս ազատէ ու ապրեցուր :

12 Որ անոնց բերանը ունայնութիւն խօսեցան , և անոնց անջ ձեռքը մեղքի ձեռք է :

13 Սեր զաւկըները նոր տունկի պէս իսննց մանկութենէն հաստատ ըլլան , և մեր անջիկները տաճարի պէս զարգարուած ու շտկուած :

14 Սեր ախարները լեցուն ըլլան , ու մեկըզմեկու բղխեն , մեր ոչխարները բազմածնունդ ըլլան , և իրենց երթալուք աճին , և մեր եղերը պարարտ ըլլան :

15 Սեր ցանկերը աւրուած տեղ չունին , և ոչ ալ աղաղակ կայ մեր հրապարակներուն մէջ :

16 Ըրդ՝ երանի կուտամ՝ ան ժողովուրդին՝ որոնց մէջ ասոնք ասանկ են , մանաւանդ՝ երանի ան ժողովուրդին՝ որոնց տէրը աստուած է :

ՍԱՂՄՈՍ ԶԽԴ .

Բարձր առնեմ զքեզ .

1 Ար բարձրացունեմ՝ քեզ ո՞վ իմ աստուածս և իմ թագաւորս , և քու անունդ յաւիտեանս յաւի-

տենից կ'օրհնեմ :

2 Ամէն օր քեզ պիտի օրհնեմ , և քու անունդ յաւիտեանս յաւիտենից պիտի գովեմ :

3 Տէրը մեծ է ու շատ օրհնեալ է , և անոր մեծութեանը չտի չի կայ :

4 Ազգերը ու ազգերը քու գործքերդ պիտի գովեն , և քու զօրութիւնդ պիտի պատմեն :

5 Վրու սրբութեանդ փառաւոր մեծվայելչութիւնը պիտի խօսին , և քու սքանչելիքներդ պիտի պատմեն :

6 Վրու ահաւոր զօրութիւնդ պիտի ըսեն , և քու մեծութիւնդ պիտի պատմեն :

7 Վրու մեծ բարեր սրբութեանդ յիշատակը պիտի զրուցեն , և քու արդարութիւնովդ պիտի ցնծան :

8 Տէրը գթած ու ողորմած է , երկայնամիտ ու բազումողորմ :

9 Տէրը ամէնուն քաղցր է , և անոր գթութիւնը իր ամէն արարածներուն վրայ է :

10 Ով տէր , քու ամէն գործքերդ քեզի փառք տան , և քու սուրբերդ քեզ օրհնեն :

11 Վրու արքայութեանդ փառքը զրուցեն , ու քու զօրութիւններդ պատմեն :

12 Որ քու զօրութիւնդ ու քու փառքդ , և քու արքայութեանդ մեծվայելչութիւնը մարդկանց որդիքներուն ցուցուի :

13 Վրու արքայութիւնդ յաւիտենական արքայութիւն է . ու քու տէրութիւնդ ազգէ մինչեւ ազգ :

14 Տէրը իր ամէն խօսքերուն մէջ հաւատարիմ է, և իր ամէն գործքերուն մէջ արդար է :

15 Տէրը ամէն գլտորածները կը հաստատէ, ու ամէն ինկածները կը կանգնեցունէ :

16 Ո՛վ տէր, ամէնուն աչքը քեզի կը յուսան, և դուն ժամանակին անոնց կերակուր կուտաս :

17 Քու ձեռքը կը բանաս, և քու կամքիդ քաղցրութիւնովը ամէնքը կը լեցունես :

18 Տէրը իր ամէն ճախարաններուն մէջ արդար է, և իր ամէն գործքերուն մէջ սուրբ է :

19 Տէրը ան ամէնուն մօտ է՝ որ իրեն կը կանչեն, ան ամէնուն՝ որ ճշմարտութիւնով իրեն կը կանչեն :

20 Տէրը իր ամէն վախցողներուն կամքը կ'ընէ. անոնց աղօթքին կը լսէ, և անոնք կ'ապրեցունէ :

21 Տէրը ամէն զինքը սիրողները կը պահէ, և ամէն մեղաւորները տէրը կը սատկեցունէ :

22 Իմ բերանս տէրոջը օրհնութիւնները պիտի խօսի. ամէն կենդանի անոր սուրբ անունը յաւիտեան՝ ու յաւիտեանս յաւիտենից օրհնէ :

ՍԱՂՄՈՍ ԶԽԵ .

( ) օրհնեալ անձն իմ զտէր .

1 Ո՛վ իմ անձս տէրը օրհնէ . իմ կեանքիս մէջ տէրը պիտի օրհնեմ, իմ աստուծոյս սաղմոս պիտի բսեմ քանի որ կամ :

2 Հոյսերնիդ իշխաններուն մարդկանց զաւկը-  
ներուն վրայ մի դնէք, ինչու որ անոնց ձեռքը փր-  
կութիւն չի կայ :

3 Անոնցմէ հոգին պիտի ելլէ, ու նորէն հողը  
պիտի դառնան, և նոյն օրը անոնց ամէն խորհուրդ-  
ները պիտի կորսուին :

4 Արանի անոր՝ որ յակորայ տէր աստուածը ի-  
րեն օգնական է, և իր յոյսը տէր աստուծոյ վրայ է :

5 Որ երկինքը ու երկիրը, ծովը ու ամէն անոնց  
մէջ եղածները ստեղծեց :

6 Որ ճշմարտութիւնը յաւիտեան կը պահէ, ու  
զրկուածներուն իրաւունք կ'ընէ :

7 Աստիներուն հաց կուտայ, ու տէրը կա-  
պուածները կ'արձըկէ :

8 Տէրը կտրերուն աչուրները կը բանայ, ու տէ-  
րը ինկածները կը կայնեցունէ :

9 Տէրը արդարները կը սիրէ, տէրը պան-  
դուխաները կը պահէ. տէրը որբերը ու այրիները  
կ'ընդունի, ու ամբարիշտներուն ճամբաները կը կոր-  
սընցունէ :

10 Տէրը յաւիտեան պիտի թագաւորէ, քու  
աստուածդ՝ ով սիրոն ազգէ մինչև ազգ :

ՕՐ ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԳ

ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԻ

ՍԱՂՄՈՍ ճԽ Զ.

(Օրհնեցէք զտէր, զի բարի է.

1 (Օրհնեցէք տէրը, ինչու որ բարի է մեր առտուծոյն սաղմոս ըսելը, քաղցր ու հաճելի է շնորհակալ ըլլալը :

2 Տէրը երուսաղէմը կը շինէ, ու իսրայէլին ցրուածները կը ժողուէ :

3 Առարած սիրտերը կը բժշկէ, և անոնց ամէն խոյները կը կապէ :

4 Աստղերուն բազմութիւնը կը համբէ, և անոնց ամէնը անունովն կը կանչէ :

5 Սեր տէրը մեծ է, և անոր զօրութիւնը մեծ է, անոր իմաստութեանը չափ չի կայ :

6 Տէրը հեզերը վեր կը վերցունէ, և ամբարտաւանները մինչև գետինը կը խոնարհեցունէ :

7 Շնորհակալութիւնով տէրը օրհնեցէք, օրհնութիւնով անոր սաղմոս ըսէք :

8 Արկինքը ամպերով հագուեցուց, իր անձրևը երկրին պատրաստեց :

9 Լեռներուն վրայ խոտ բուսցուց, կանանչեղէնը մարդուն ծառայութեանը համար :

10 Ան անասուններուն կերակուր կուտայ, ագ-

աւաներուն ձագերուն՝ որ իրեն կ'աղաղակեն :

11 Տէրը ձիուն զօրութիւնները չուզեց, և ոչ ալ հսկայ մարդուն մարմինին հաւնեցաւ :

12 Զապա տէրը իրմէն վախցողներուն հաւնեցաւ, և անոնց՝ որ յոյսերնին իր ողորմութեանը վրայ կը դնեն :

ՍԱՂՄՈՍ ԺԽԷ .

Վովեա՛ երուսաղէմ՝ զտէր .

1 Ո՛վ երուսաղէմ, տէրը գովէ . և ո՛վ սիօն, քու աստուածդ օրհնէ :

2 Ինչու որ քու դուռներուդ նիգերը զօրացուց, ու քու զաւկըններդ քու մէջդ օրհնեց :

3 Ըն քու սահմաններուդ խաղաղութիւն դրբաւ, ցորենի պարարտութիւնով քեզ լեցուց :

4 Իր խօսքը երկրին կը խրկէ, անոր պատգամները շուտով կ'երթան :

5 Չիւնի նման բուրդը կը դնէ, և մէգը փոշիի պէս ցանեց :

6 Սառը պատաններու պէս կը նետէ, անոր ցուրտին դէմ ո՛վ կրնայ կայնիլ :

7 Իր խօսքը կը խրկէ ու անոնք կը հալեցունէ, հովերը կը փչեն ու ջուրերը կ'երթան :

8 Իր խօսքը յակորին կը պատմէ, արդարութիւնը ու իրաւունքը խրայելին :

9 Տէրը ամէն ազգերուն ասանկ չըրաւ, և իր դատատանները անոնց չի յայտնեց :

ՍԱՂՄՈՍ ՃԻՐ.

( ) ԲՏՆԵԳԷՔ ՂՄԵՐ .

1 ( ) ԲՏՆԵԳԷՔ տէրը երկինքէն , օրՏՆԵԳԷՔ անիկայ բարձրութիւններէն :

2 ( ) ԲՏՆԵԳԷՔ անիկայ ո՛վ անոր ամէն հրեշտակները , օրՏՆԵԳԷՔ անիկայ ո՛վ անոր ամէն զօրութիւնները :

3 ( ) ԲՏՆԵԳԷՔ անիկայ ո՛վ արեգակ ու լուսին , օրՏՆԵԳԷՔ անիկայ ո՛վ ամէն աստղեր ու լոյս :

4 ( ) ԲՏՆԵԳԷՔ անիկայ ո՛վ երկինքներուն երկինքը . օրՏՆԵԳԷՔ տէրոջը անունը ո՛վ երկինքներէն վեր եղող ջուրեր :

5 Ինչու որ ան ըսաւ՝ ու եղաւ , հրաման ըրաւ՝ և հաստատուեցան :

6 Ընոնք յաւիտեանս յաւիտենից կարգի դըրաւ . սահման դրաւ ու չի պիտի անցնին :

7 ( ) ԲՏՆԵԳԷՔ տէրը երկրէն ո՛վ վիշապներ ու բոլոր անդունդներ :

8 Կրակ ու կարկուտ , ձիւն ու սառն , հով ու փոթորիկ որ անոր խօսքը կը կատարէք :

9 Ի եռներ ու ամէն բլուրներ , պտղաբեր ծառեր ու բոլոր մայրի ծառեր :

10 Վազաններ և ամէն անասուններ , սողուններ ու ամէն թեւաւոր թռչուններ :

11 Երկրի թագաւորներ և անոնց զօրքերը , իշխաններ ու երկրի բոլոր գատաւորներ :

12 Արիտասարգներ ու կոյսեր , ծերեր ու աղ-  
 զաքներ տէրոջը անունը օրհնեցէք :

13 Սիայն անոր անունը բարձրացաւ . անոր  
 փառքը երկինքը ու երկրին վրայ է :

14 Տէրը իր ժողովուրդին եղջիւրը կը բարձրա-  
 ցունէ , անոր ամէն սուրբերէն իրեն օրհնութիւն  
 կայ , խորայէլի որդիքներէն տէրոջը մօտեցող ժողո-  
 վուրդէն :

### ՍԱՂՄՈՍ ՃԻԹ .

( ) օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր .

1 Աոր օրհնութիւնով տէրը օրհնեցէք , անոր  
 օրհնութիւնը սուրբերուն ժողովքներուն մէջն է :

2 Խորայէլը ուրախ եղաւ իր արարիչէն . սիօնի  
 որդիքները իրենց թագաւորէն թող ցնծան :

3 Թող անոր անունը օրհնութիւնով օրհնեն ,  
 սաղմոսներով ու օրհնութիւնով թող սաղմոս ըսեն  
 անոր :

4 Տէրը իր ժողովուրդին կը հաւնի , ու հեզերը  
 փրկութիւնով կը բարձրըցունէ :

5 Սուրբերը փառքով թող պարծին , և իրենց  
 հանգստութեանը մէջ թող ցնծան , ու իրենց բեր-  
 նովը զաստուած թող բարձրըցունեն :

6 Արկու բերնով սուրեր կան անոնց ձեռքին  
 մէջ , որ հեթանոսներէն հատուցում առնեն , բոլոր  
 ժողովուրդներուն յանդիմանութեան համար :

7 Սր անոնց թագաւորները կապերով կապեն ,  
ու անոնց զօրաւորները ձեռնակապերով :

8 Սր անոնց մէջ գրուած դատաստանը ընեն .  
աս է անոր ամէն սուրբերուն փառքը :

ՍԱՂՄՈՍ ԾԾ .

(Օրհնեցէք զաստուած 'ի սրբութեան նորա .

1 (Օրհնեցէք զաստուած իր սրբութեանը մէջ ,  
օրհնեցէք անիկայ իր զօրութեանը հաստատութեանը  
մէջ :


2 (Օրհնեցէք անիկայ իր զօրութեանը մէջ , օրհ-  
նեցէք անիկայ իր անբաւ մեծութեանը համար :

3 (Օրհնեցէք անիկայ օրհնութեան ձայնով ,  
օրհնեցէք անիկայ սաղմոսներով ու օրհնութիւնով :

4 (Օրհնեցէք անիկայ ցնծութիւնով , գովեցէք  
անիկայ ուրախութիւնով :

5 (Օրհնեցէք անիկայ քաղցր խօսքերով , օրհ-  
նեցէք անիկայ բարձր ձայնով :

6 (Օրհնեցէք անիկայ գոհութեան ձայնով , ո՛վ  
ամէն հոգիներ օրհնեցէք տէրը :



# ԱՊՐԻԼ

## ՆՈՎՈՒՆ ՎՐԵՅ

ԳՈՐԾԱԾՈՒԵԼՈՒ ԱՂՕԹՔՆԵՐՈՒՆ

Տովագնացութեան ժամանակ Առտու և Իրիկուն գործածուելու Աղօթքները այս գրքիս մէջ գրուած են .

Հետեւեալ երկու Աղօթքներն ալ ամէն օր կ'ըսուին Տէրութեան նաւերուն մէջ .

Ո՛վ Տէր Աստուած յաւիտենական, որ դուն միայն երկինքները կը տարածես, և ծովուն կատաղութեանը կը տիրես, որ դուն ջուրերուն բոլորտիքը սահման դրիր, որն որ պիտի տեսէ մինչեւ լոյսին ու խաւարին վերջը . (Նդունէ կ'աղաչենք քու ամենազօր և խնամակալ պաշտպանութեանդ մեզ քու ծառաներդ, և մեր Նաւաստամբը ուր որ կը ծառայենք : Պահպանէ մեզ ծովուն վտանգներէն, և թշնամիին բռնութենէն, որ մեր բարեխնամ (Մ.) Աբբային և իր բոլոր Տէրութեանը պաշտպանողն ըլլանք . և ապահովութիւն անոնց՝ որոնք օրինաւոր պատճառներով ծովուն վրայ կը պտըտին . որպէս զի մեր Արդշին բնակիչները կարող ըլլան խաղաղութեամբ և հանդարտութեամբ քեզի մեր Աստուծոյն ծառայելու, և որ մենք ալ անվտանգ դառնանք ան երկրին բարիքը վայելելու, մեր աշխատանացը արդիւնքներու

վը . և քու բարեգթութեանցդ երախտագէտ յիշատակութեամբը քու ամենասուրբ Անունդ գովաբանելու և փառաւորելու , մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Կանխելը կ'աղաչենք ո՛վ Տէր՝ բոլոր մեր գործքերուն քու գթութեանդ պարգեւովը . և քու շարունակ օգնականութեամբդ յառաջացուր մեզ , որ մեր ամէն գործքերը քեզմով սկսած , շարունակած ու կատարած , կարող ըլլանք քու սուրբ Անունդ , և վերջը քու ողորմութեամբդ յաւիտենական կեանքը վայելել , մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովը . Ամէն :

Ալեկոծութեան Ժամանակ ծովուն վրայ գործածուելու Աղօթքներ .

Ո՛վ ամենազօր և փառաւորեալ Տէր Աստուած , որ քու հրամանաւդ հովերը կը փչեն ու ծովուն ալիքները կը կատղեցընեն . և որ դուն անոնց կատաղութիւնը կը հանգարտեցընես . մե՛նք քու ստեղծուածներդ՝ բայց ողորմելի մեղաւորներս կ'աղաղակենք այս մեր մեծ վտանգներուն մէջ օգնութեան համար . Աղաօթէ մեզ ո՛վ աէր , որ չի կորսուինք : Ար խոստովանինք որ քեզ մեր Տէր Աստուածը մոռցանք , քու Այօսքիդ հանգարտ ձայնին չի լսեցինք , և պատուիրանքներուդ չի հնազանգեցանք , երբ որ ամէն

բան ապահով և հանդարտ կ'երևար մեր բոլորա-  
 քրքր . բայց հիմայ կը տեսնանք թէ՛ որչափ ահաւոր  
 ես բոլոր քու սքանչելի գործքերուդ մէջ . ամէն բանէ  
 էլիել ան ամենամեծ Մատուճմէն վախնալու է . Ուս-  
 տի՛ կ'երկրպագելիք քու Մատուածային Սեփայել-  
 չութեանդ , քու զօրութիւնդ խոստովանելով , և  
 բարեգթութիւնդ խնդրելով : ( ) Գնէ մեզի ո՛վ տէր ,  
 և փրկէ մեզ , քու Որդւոյդ մեր Տէր և Փրկիչ Յի-  
 սուս Վրիստոսի վրայ ունեցած ողորմութեանդ հա-  
 մար . Ամէն :

Կամ այս .

Ո՛վ փառաւորեալ և ամենողորմ Տէր Մատուած ,  
 որ երկրի՛քը կը բնակիս , ու երկրիս վրայի ամէն բա-  
 ները կը տեսնաս . Այլ ու լսէ մեզի որ կ'ազազա-  
 կենք թշուառութեան խորութենէն և այս մահուան  
 ճանկերուն մէջէն , որն որ հիմայ պատրաստ է մեզ  
 կլլելու . Փրկէ մեզ ո՛վ տէր , որ չի կորսուի՛ք : Ան-  
 դանիները , այ՛՛ կենդանիները քեզ պիտի օրհնա-  
 բանեն : Ո՛վ տէր խրկէ քու հրամայող խօսքդ ան  
 սաստիկ հովերուն ու գոռաշող ծովուն սաստելու .  
 որ մենք այս վատնգէս ազատած բոլոր մեր կեանքին  
 օրերուն մէջ քեզի ծառայելու , և քու ամենասուրբ  
 Անունդ փառաւորելու համար ապրի՛նք . Այլ մեզի  
 ո՛վ Տէր , և փրկէ մեզ քու Որդւոյդ մեր ամենօրհ-  
 նեալ Տէր և Փրկիչ Յիսուս Վրիստոսի ամենաբա-  
 ւական արժանաւորութեամբը . Ամէն :

Ծովուն վրայ թշնամիին հետ պատերազմէն առաջ  
զուրցուելու Ազօթքը .

Ո՛վ ամենաղօր և փառաւորեալ Տէր Մատուած,  
Տէր զօրութեանց, որ ամէն բաները կարգի կը դնես  
ու կը հրամայես . Ղուն արգար դատաստանի ա-  
թոռին վրայ կը նստիս . վասն որոյ այս մեր կարօտու-  
թեան վիճակին մէջ քու Մատուածային Սեծվայել-  
չութեանդ կը դիմենք, որ դուն իրաւունքը ձեռքդ  
առնես, և մեր ու մեր թշնամիներուն դատաստանը  
կտրես : Այլեր ո՛վ Տէր քու յաղթական զօրութեամբ  
բրդ, և մեր օգնութեանը հասիր . ինչու որ դուն ա-  
մէն ժամանակ յաղթանակը հզօրին չես տար, հա-  
պա կարող ես շատով կամ քիչով ազատելու : Այս-  
դաչենք մեր մեղքերը հիմայ մեզի դէմ՝ վրէժխնդ-  
րութեան չի բողոքեն . հապա լա՛է մեզի քու ողորմելի  
ծառաներուդ, որ ողորմութիւն կը խնդրեն, և օգ-  
նութիւն կը փնտռեն, և որ դուն մեզի պաշտպան մը  
ըլլաս թշնամիին դէմ : Զըցուր ինքըզինքդ՝ որ մեր  
Փրկիչը ու հզօր ազատիչն ես, մեր Տէր Հիսուս Վը-  
րիստոսի շնորհքովը . Մե՛ն :

Համառօտ Ազօթքներ, որ պատերազմի և ալեկոծու-  
թեան պատճառաւ ուրիշներու հետ Ազօթքի ներկայ չի  
գտնուողները կ'ըսեն .

Ընդհանուր Ազօթքներ .

Ո՛վ Տէր, ողորմէ մեզի մեղաւորներուս, և ա-  
զատէ մեզ քու ողորմութեանդ համար :

Դուն ան մեծ Աստուածն ես՝ որ ամէն բաները ստեղծեցիր , և կը կառավարես աշխտէ մեզ քու Անուանդ համար :

Դուն ան մեծ Աստուածն ես՝ որ ամէն բանէ է վե՛լ քե՛ն : վախնալու է . ազատէ մե՛զ , որ կարող ըլլանք քեզ գովելու :

Մանաւոր Աղօթքներ թշնամիին վերաբերեալ .

Դուն ո՛վ տէ՛ր , արգար և հղօր ես . պաշտպանէ կ'աղաչենք մեր իրաւունքը թշնամիին դէմ :

Ո՛վ Աստուած , դուն ապաստանութեան սամուր աշտարակ մըն ես ան ամէնուն , որ քեզի կ'ապաւինին . ազատէ մեզ թշնամիին բռնութենէն :

Ո՛վ Տէր զօրութեանց , պատերազմէ մեր տեղը , որ կարող ըլլանք քեզ փառաւորելու :

Թող մի տար որ մեր մեղքին ծանրութենէն , և մեր թշնամիներուն բռնութենէն ընկղմինք :

Այլի՛ր ո՛վ Տէր , օգնէ մեզի , և փրկէ մեզ քու Անուանդ համար :

Համառօտ Աղօթքներ փոթորիկի ժամանակ .

Դուն ո՛վ Տէր , որ ծովուն կատաղութիւնը կ'ըջեցունես , լսէ մեզի , ընդունէ մեր աղաչանքը , և փրկէ մեզ , որ չի կորսուինք :

Ո՛վ ամենօրհնեալ Փրկիչ , որ քու աշակերտներդ արէկոծութեան մը մէջ կորսուելու ժամանակնին ազատեցիր , լսէ մեզի , և փրկէ մեզ կ'աղաչենք :

Տէր, ողորմէ մեզի .

Վրիստոս, ողորմէ մեզի .

Տէր, ողորմէ մեզի .

Տէր, լսէ մեզի .

Վրիստոս, լսէ մեզի .

Հայր Աստուած, Որդին Աստուած, Հոգին  
Սուրբ Աստուած, ողորմէ մեզի, և փրկէ մեզ, հիմայ  
ու յաւիտեան, Ամէն :

Ո՛վ մեր Հայրը՝ որ երկինքն ես, քու անունդ  
սուրբ ըլլայ . Վու թագաւորութիւնդ գայ . Վու  
կամքդ ըլլայ, ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկ-  
րիս վրայ . Սեր ամէն աւուր Հացը այսօր տուր մեզի .  
Աւ ներէ մեզի մեր պարտքերը, ինչպէս որ մենք ալ  
կը ներենք մեր պարտականներուն . Աւ մեզ փորձու-  
թեան մի տանիր, Հապա չարէն ազատէ մեզ . Ինչու  
որ քուկդ է արքայութիւնը, ու զօրութիւնը, ու  
փառքը, յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Երբ որ մէկ մեծ վտանգ մը բլալու ըլլայ, պէտք է որ  
Նաւուն պաշտօնին զբաղեալ չըլլողները մէկտեղ ժողովին,  
և Աստուծոյ աւջին իրենց մեղաց խոստովանութիւնը ընեն .  
Որուն մէջ պէտք է որ ամէն մարդ ունկնդրութեամբ լա-  
մը խորհի ան մասնաւոր մեղքերուն վրայ, որոնց համար որ  
իր խղճմանքը իրեն ամբաստանութիւն կ'ընէ, այս հե-  
տեւեալը ըսէ ըով .

Խոստովանութիւն .

Ամենակարող Աստուած, մեր Տէր Հիսուս Վր-  
րիստոսի Հայրը, ամէն բաները Ստեղծողը, և ա-  
մէնուն Վատաւորը . մենք կը խոստովանինք և կ'ող-  
բանք մեր շատ տեսակ մեղքերուն և չարութիւննե-

քուն պատճառաւր , որ ժամանակ ժամանակ խոր-  
հրդով , բանիւ և գործքով .քու Աստուածային Սե-  
վայելութեանդ դէմ գործեցինք , քու բարկու-  
թիւնդ ու սրտմտութիւնդ մեր վրայ արդարապէս  
գրգռելով : Տերմեռանդաբար կը զղջանք , և բոլոր  
սրտով կը ցաւինք այս մեր մեղքերուն համար . Ա-  
նոնց յիշատակութիւնը մեզի մեծ ցաւ է . Անոնց  
ծանրութիւնը անտանելի : Ողորմէ մեզի , ողորմէ մե-  
զի ո՛վ Հայր ամենողորմ . Վու Որդւոյդ մեր Տէր  
Յիսուս Վրիստոսի սիրոյն համար անցածներուն  
թողութիւն տուր . և շնորհէ որ ասկէ ետեւ վարքի  
նորոգութեամբ կարող ըլլանք միշտ քեզի ծառայե-  
լու և հաճոյ ըլլալու , քու Անուանդ պատուոյն և  
փառքին համար , մեր Տէր Յիսուս Վրիստոսի շը-  
նորհքովք . Ամէն :

Յետոյ թէ որ նաւուն մէջ քահանայ մը գտնուի ,  
այս Արձակումը կ'ըսէ .

Ամենակարողն Աստուած , մեր երկնաւոր Հայ-  
րը , որ իր ամենամեծ ողորմութեամբը մեզաց թո-  
ղութիւն խոստացաւ անոնց , որոնք անկեղծ զղջումք  
և ուղիղ հաւատով իրեն կը դառնան . Ողորմի ձե-  
զի . թողութիւն տայ ձեզի , և բոլոր ձեր մեղքերէն  
արձրկէ ձեզ . հաստատէ ու զօրացունէ ձեզ ամենայն  
բարութեամբ , և ձեզ յաւիտենական կենաց առաջ-  
նորդէ , մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովք .  
Ամէն :

Պ Ա Հ Ո Ւ Թ Ի Ի Կ

Յ Ե Տ Ա Լ Ե Ն Ո Տ Ո Ւ Թ Ե Ա Ն

Աղաղակեցէք առ աստուած . ( Սաղ . կե : )

Աստուծոյ աղաղակեցէք ո՛վ ամէն երկիր . անոր անուանը սաղմոս երգեցէք , և անոր օրհնութեանը փառք թուէք :

Աստուծոյ ըսէք , ինչպէս ահա որ են քու գործքերդ . քու մեծ զօրութեանդ համար թշնամիներդ քեզի սուտ զրուցեցին :

Ամէն երկիր քեզի երկրպագութիւն ընէ , սաղմոս երգէ քեզի , և սաղմոս երգէ քու անուանդ :

Այլէք ու աստուծոյ գործքերը տեսէք . ինչպէս ահա որ են խորհուրդներով՝ ամէն մարդկանց օրդիքներուն գործքերէն էվել :

Ան ծովը ցամաքի դարձուց , գետը ոտքով քալելով անցան :

Ան տեղը անով ուրախ պիտի ըլլանք , որ իր զօրութիւնովը յաւիտեան կը տիրէ :

Անոր աշուրները հեթանոսներուն կը նային . զինքը բարկացունողները իրենց անձին մէջ չի բարձրանան :

Ո՛վ հեթանոսներ , մեր աստուածը օրհնեցէք , անոր գովութեան ձայնը լսել տուէք :

Ան որ մեր անձերը կեանքի մէջ գրաւ , և մեր աստուրներուն դողալ չի տուաւ :

Ո՛վ աստուած , մեզ փորձեցիր ու քննեցիր , ինչպէս որ արժաթը կը փորձուի :

Սեզ որոգայթին մէջ իջեցուցի՛ր , կանախիս ննդութիւն բեռցուցի՛ր , և մարդի՛ր գլխունուս վրայէն անցուցիր :

Արակը ու ջուրը անցանք , ու մեզ հանդիստը հանեցիր :

Պատարագներով քու տունդ պիտի մտնամ , իմ ուխտերս քեզի պիտի տամ՝ որ շրթունքներս քեզի խոստացան , որ նեղութեան մէջ բերանս խօսեցաւ :

Պարարտ ողջակէզներ պիտի մատուցանեմ քեզի խոյրով ու խունկերով , և քեզի զուարակներ ու նոխազն՛ը պիտի մատուցանեմ :

Ե՛կէք՝ լսեցէք ինձի , և իմ անձխ բբածները ձեզի ամենուդ պատմեմ՝ որ աստուծմէ կը վախնաք :

Ի՛նքնովս անոր աղաղակեցի , և լեզուովս անիկայ պիտի ըարձրըցունեմ :

Թէ՛ որ սրտիս մէջ մեղք մը տեսնայի , աէրը ինձի չի պիտի լսեր :

Ըսոր համար առտուած լսեց , և իմ խնդրուածքներու ձայնին նայեցաւ :

( ) րհնեալ է աստուած , որ իմ աղօթքս ետ չի գարձուց , ու ոչ ալ ինչ իր ողորմութիւնը :

Փառք Հօր , և Արդւոյ , և Հօգւոյն Արքայ .

Որպէս էր ՚ի սկզբանէ , այժմ , և միշտ , և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Խոստովան եղերուք տեսուն . ( Սաղ . ՃԳ : )

Գոհութիւն մատուցէք տէրոջը՝ ինչու որ քաղցր է , ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

Տէրոջը փրկածները թող ըսեն , որ թշնամիին ձեռքէն անոնք ազատեց :

Անոնք ամէն երկիրներէն ժողուեց , արեւելքէն ու արեւմուտքէն , հիւսիսէն ու ծովէն :

Անոնք անապատին անջուր տեղին մէջ մոլորեցան , ու բնակելու քաղաք չի գտան :

Անթեցան ու ծարուեցան , և անոնց հոգիները անոնց մէջ մաշեցան :

Իրենց նեղութեանը մէջ տէրոջը աղաղակեցին , և անոնք իրենց վիշտերէն ազատեց :

Անոնք ուղիղ ճամբուն առաջնորդեց , որ իրենց բնակելու քաղաքը երթան :

Սարդկանց որդիքները փառք տան տէրոջը անոր ողորմութիւններուն ու սքանչելիքներուն համար :

Ինչու որ անթեցող անձերը կշտացուց , ու կարօտեալ անձերը բարութիւնով լեցուց :

Անոնք որ մութը ու մահուան շուքը նստած էին , աղքատութիւնով կապուած էին , որպէս թէ երկամներով :

Այսն զի աստուծոյ խօսքը սրդողցուցին , և բարձրեալին խորհուրդները բարկացուցին :

Անոնց սիրտերը ցաւերէն գէշ եղան , տրկաբացան , և մէկը չի կար որ անոնց օգնէր :

Իրենց նեղութեանը մէջ տէրոջը աղաղակեցին ,

և անոնք իրենց վիշտերէն հանեց :

Անոնք խաւարէն ու մահուան շուքերէն աղատեց , և անոնց կապերը կոտորեց :

Մարդկանց որդիքները փառք տան տէրոջը , անոր ողորմութիւններուն ու սքանչելիքներուն համար :

Ինչու որ պղնձէ դուռները փշուց , ու երկաթէ նիզակը կոտորեց :

Իրենց անօրէնութեան ճամբուն մէջ անոնց օգնեց , ինչու որ իրենց մեղքին պատճառաւ շատ խոնարհ եղան :

Անոնց սիրտը ամէն կերակուրներէն կը զզուէր • մինչեւ մահուան դուռները մօտեցան :

Իրենց նեղութեանը մէջ տէրոջը աղաղակեցին , ու անոնք իրենց նեղութիւններէն աղատեց :

Իր խօսքը խրկեց , և անոնք բժշկեց • ու անոնք իրենց ապականութենէն խալըսեց :

Մարդկանց որդիքները փառք տան տէրոջը , անոր ողորմութիւններուն ու սքանչելիքներուն համար :

Օրհնութեան պտտարագ մատուցանեն անոր , ու ցնծութիւնով անոր գործքերը պատմեն :

Անոնք որ նաւերով ծովը կ'իջնային , և շատ ջուրերուն վրայ գործ կը տեսնային :

Անոնք տէրոջը գործքերը տեսան , և անոր սքանչելիքները՝ անդունդներուն մէջ :

Իսաւ՝ ու հովը ու փոթորիկը ելան , և անոր ա-

լիքները բաւ ձրըցան :

Երկինքը կ'երլին ու անդունդները կ'իջնային ,  
և անոնց հոգիները իրենց անձն մէջ կը մնշէր :

Պիտոյներուն պէս խռովեցան ու սարսրփեցան ,  
և անոնց ամէն իմաստութիւնը ընկղ Լեցաւ :

Իրենց նեղութեանը մէջ տէրօքը ազադակեցին ,  
և անոք իրենց ցաւերէն աշատեց :

Սըրիլը հանգարտ օգի դարձուց , և անոր ալիք-  
ները գագընցան . ու բախ եղան որ դադրեցան , և ի-  
րենց սեզած նաւահանգիստը առաջնորդեց անոք :

Սարգկանց որդիքները փառք տան տէրօքը , ու  
նոր ողորմութիւններուն ու սքանչելիքներուն հա-  
մար :

Ետղութուրդներուն ժողովին մէջ անիկայ բարձ-  
րը ցունեն , ու ծերերուն ամուսններուն վրայ անիկայ  
օրհնեն :

Ինչու որ գետը ցամայի դարձուց , ու ջուրերուն  
գնացքը չոր երկրին :

Պտղաբեր երկիրը չորաց , անոր բնակիչներուն  
չաշուժեանը համար :

Ենապատը ջուրերու լիճեր ըրաւ , ու չոր երկիրը  
ջուրերու ճամբաներ :

Ենօթիները հոն նստեցուց , և իրենց բնակելու-  
քաղաք շինեցին :

Երտեր վարեցին ու այգիներ տնկեցին , և իրենց  
արմտիքներուն պտուղները առին :

Օրհնեց անոք ու խիստ շատցան , և անոնց ա-

նատունները չի պակսեցան :

Անոնք պակսեցան , ու չարերուն ներշնչութենէն ու  
ցաւերէն չարչարուեցան :

Անարգութիւն եկաւ անոնց իշխաններուն վրայ ,  
անապատին մէջ մոլորեցուց , ու չէ թէ ճամբուն մէջ :

Տնանկին օգնեց իր աղքատութեանը մէջ , ոչ-  
խարներու հօտին պէս անոնց ազգին առաջնորդեց :

Ուղիղները տեսնան և ուրախ ըլլան , ու ամէն  
անօրէն իր բերանը գոցէ :

Ո՞վ է իմաստուն , որ աս բանը պահէ . և տէրու  
ջր որորմութիւնները իմանայ :

Փառք Հօր , և Որդւոյ , և Հոգւոյն Սրբոյ .

Որպէս էր ՚ի սկզբանէ , այժմ , և միշտ , և յաւի-  
տեանս յաւիտենից . Ամէն :

Մաղթանք Գոհութեան .

Ո՞վ ամենօրհնեալ և փառաւորեալ Տէր Աս-  
տուած , որ քու բարութիւնդ անչափ է , ու գթու-  
թիւնդ անբաւ . Անք քու որորմելի ստեղծուած-  
ներդ՝ որ դուն ստեղծեցիր ու պահպանեցիր , հոգի-  
նիս կենդանութեան մէջ պահելով , և հիմայ մեզ  
մահուան ճանկերէն ազատելով . խոնարհութեամբ  
կրկին մենք մեզ քու Աստուածային Անծմպելութեան  
թեանդ կը մատուցանենք , գովութեան և շնորհա-  
կալութեան պատարագ մը մատուցանելու , որ նե-  
ղութեան մէջ քեզի դիմած ժամանակնիս մեզի լը-  
սեցիր , և մեր աղօթքները չի մերժեցիր , որ մեր խիստ

խորովութեան վիճակին մէջ քեզի ըրինք, Մն ժա-  
մանակը անգամ որ ամէն բան կորսուած կը սեպուեր  
թէ նաւերնիս, թէ ունեցածնիս և թէ կեանքերնիս,  
ան ատենը ողորմութեամբ նայեցար մեր վրայ, և  
հրամայեցիր որ սքանչելի կերպով մը ազատինք, ու  
բուն համար մենք՝ հիմայ ազատած ըլլալով, քու  
սուրբ Մնուանդ կը մատուցանենք բոլոր գովութիւ-  
նը ու փառաբանութիւնը, մեր Տէր Յիսուս Վրիս-  
տոսի շնորհքովը. Մէն :

Կամ այս .

Մենակարող և ամենագթած մարդասէր Մս-  
տուած, որ քու ողորմութիւնդ ամէն քու գործքե-  
րուդ վրայ է, և մասնաւոր կերպով մը մեր վրայ տա-  
րածեցիր, մեզ ասանկ զօրութիւնով ու հրաշալի  
կերպով պաշտպանելով : Գուն անդունդներուն  
մէջ ահարկու և զարմանալի բաներ ցըցուցիր մեզի,  
որ քու ինչպէս հզօր և բարեգութ Մտուած մը ըլ-  
լալդ տեսնանք, և ինչպէս կարող ու պատրաստ ա-  
նոնց օգնելու, որոնք քեզի կ'ապաւինին : Գուն մեզի  
ցըցուցիր թէ՛ ինչպէս հովերը ու ծովերը քու հը-  
րամանիդ կը հնազանդին, որ մենք անոնցմէ անգամ  
սորութիւնք ասկէ ետեւ քու ձայնիդ հնազանդ ըլլա-  
լու, և քու կամքդ կատարելու : Աւտի մենք կ'օրհ-  
նաբանենք ու կը փառաւորենք քու սուրբ Մնուանդ,  
այս մեզ փրկելու ողորմութեանդ համար, որ ժա-  
մանակ որ պիտի կորսուէինք : Այլ կ'աղաչենք քեզի

որ հիմայ քու ողորմութիւնդ մեզի զգալի ընել տաս ,  
 ինչպէս որ ան ժամանակը նոյն մեր վտանգը իմա-  
 ցանք : Այս պարգևէ մեզի միշտ պատրաստ սիրտեր  
 մեր երախտագիտութիւնը յայտնելու , չէ թէ միայն  
 խօսքով , հապա վարքով , քու սուրբ պատուի-  
 րանքներուդ սուաւել հնազանդ ըլլալով : Այս-  
 րաչենք այս քու բարութիւնդ մեր վրայ անպակաս  
 ըլլայ . որ մենք քու ազատածներդ քեզի ծառայենք  
 սրբութիւնով ու արգարութիւնով բոլոր մեր կեան-  
 քին օրերուն մէջ , մեր Տէր և Վրկիչ Հիսուս : Բը-  
 րիստոսի շնորհքովը . Ամէն :

Երգ Օրհնութեան և Գոհաբանութեան վտանգաւոր  
 արեւածութենէ Էտեւ .

Այլէք գոհութիւն մատուցանենք տէր աստու-  
 ծոյ , ինչու որ բարի է . և անոր ողորմութիւնը յա-  
 լիտեան է :

Սե՛ծ է տէրը , ու խիստ օրհնութեան արժանի .  
 թող տէրոջը փրկածները ասանկ ըսեն . որոնք ինքը  
 ծովուն սպառնացեալ սաստկութենէն խալըսեց :

Ողորմած և գթած է տէրը . երկայնամիտ և բա-  
 ցումնողորմ :

Ան մեր մեղքին փոխարէնը չի հատուց մեզի . և  
 մեր անօրէնութեանը փոխարէն չըրաւ մեզի :

Հապա ինչպէս որ երկինքը բարձր է երկրէն .  
 անանկ մեծ եղաւ իր բարեգթութիւնը մեր վրայ :

Նեղութիւն ու անձկութիւն գտանք . և գրեթէ

մահուան դրանք մօտեցանք :

Սուրբուն ջուրերը գրեթէ մեզ պիտի ծածկէր . և բարձրըցած ջուրերը գրեթէ մեր վրայէն կ'անցնէր :

Սուրբ գոռաց . և մրրկալիւր հովը անոր ալիքները բարձրըցուց :

Գրեթէ երկինքը կ'ելէինք , ու ետքը անդունդը կ'իջնայինք . անձերնիս չարաչար նեղութեամբ մաշեցան :

Ըն ժամանակը քեզի աղաղակեցինք ո՛վ տէր . և մեզ մեր թշուառութենէն ազատեցիր :

( ) րհնեալ ըլլայ քու սուրբ անունդ , որ քու ծառաներուդ աղաչանքները չի մերժեցիր . հապա մեր աղաղակը լսելով մեզ ազատեցիր :

Գուն ո՛վ տէր , քու հրամանդ խրկեցիր . ալեկոծութիւնը դադարեցաւ , ու հանդարտութիւն եղաւ :

Ուրեմն օրհնարաններ տէրը իր բարեգթութեանը համար . և անոր սքանչելի գործքերը հրատարակենք , որ մարդկանց որդիքներուն ըրաւ , և ամէն ժամանակ կ'ընէ :

( ) րհնեալ ըլլայ տէրը օր ըստ օրէ . տէրը մեր օգնականն է , և իր բարիքները մեր վրայ կը թափէ :

Ըն է մեր աստուածը , ան աստուածը՝ ուրկէ որ փրկութիւն կուգայ . տէրը աստուած է՝ որով մենք մեռնելէն ազատեցանք :

Գուն ո՛վ տէր , քու ձեռքիդ գործքերովը մեզ ուրախացուցիր . և մենք քու գովութեամբդ պիտի

ցնծանք :

( ) րհնեալ ըլլայ տէր աստուածը , տէր աստուածը , որ միայն սքանչելի բաներ կը գործէ :

Եւ միշտ օրհնեալ ըլլայ իր մեծ վայելութեան Մնունը . և մենք ամէն մէկերնիս ըսենք . եղիցի , եւ Ղ'ցի :

Փառք շօր , և Որդւոյ , և շոգւոյն Սրբոյ .

Որպէս էր 'ի սկզբանէ , այժմ , և միշտ , և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Ս'եր տէր Հիսուս Քրիստոսի շնորհքը՝ և Աստուծոյ սէրը՝ և Սուրբ շոգւոյն հաղորդութիւնը յաւիտեան մեր ամենուս հետն ըլլայ . Ամէն : ( Ս . Կրն . Ժգ . 15 : )

ՅԼՂԹԵՆԵԿԻ :

ԿԱՄ ԹՇՆԱՄԻՒՆ ՁԵՌՔԵՆ ԱԶԱՏԵԼԵՆ ԵՏԵՒ

Սաղմս . կամ Երգ գովարանութեան և շնորհակալութեան յաղթութենէ ետեւ .

Իմէ որ տէրը մեր հետը չըլլար՝ կ'ըսէ իսրայէլ , թէ որ տէրը մեր հետը չըլլար , մարդիկ մեր վրայ եւ լած ժամանակնին մեզ ողջ ողջ պիտի ուզէին կըլլել :

Մնոնց սրտմտութիւնով մեր վրայ բարկացած ժամանակնին . ետքը ջուրերը անգամ մեզ կ'ընկրղւնայունէին :

Սեր անձերը հեղեղներէն անցան . մեր անձերը անդադար հեղեղներէն անցան :

( ) Բհնեալ է տէրը՝ որ մեզ անոնց ախաններուն որակի տուաւ :

Տէրը մեծազօր փրկու թիւն մը ըրաւ . մեր պատշ ճառաւ :

Ըէ թէ ասիկայ մեր սուրովը վաստըկեցանք , և չէ թէ մեր բազուկը մեզ փրկեց . հապա քու աջ ձեռքըդ , և քու բազուկդ , և քու երեսիդ լոյսը . ինչու որ դուն մեր վրայ հաճու թիւն ունեցար :

Տէրը մեզի համար երեւցաւ . տէրը մեր գլուխը ծածկեց , և կանգնեցուց մեզ պատերազմի օրը :

Տէրը մեզի համար երեւցաւ . տէրը կործանեց մեր թշնամիները , և խորտակեց մեզի դէմ ելողները :

Ս ասն որոյ չէ թէ մեզի , ով տէր , չէ թէ մեզի . հապա քու անուանդ փառք տրուի :

Տէրը մեծ բաներ ըրաւ մեզի համար . տէրը մեծ բաներ ըրաւ մեզի համար , վասն որոյ կ'ուրախանանք :

Սեր օգնութիւնը տէրոջը անուամբն է . որ երկինքը ու երկիրը ստեղծեց :

( ) Բհնեալ ըլլայ տէրոջը անունը . ասկէ ետեւ մինչեւ յաւիտեան :

Փառք Զօր , և Արդօղ , և Զօգօղն Սրբոյ . Արպէս էր ի սկզբանէ , այժմ , և միշտ , և յաւիտեանս յաւիտեանից . Ամէն :



Ո՛ր տէր էջիսուս Վրիստոսի շնորհքը՝ և Լուսուծոյ սէրը՝ և Ուրբ Հոգւոյն հաղորդութիւնը յաւիտեան մեր ամենուս հետն ըլլայ . Լ՛մէն, (Բ. Կորն. Ժգ. 15):

## ՆՈՎՈՒՆ ՎՐԷՑ

### ԵՂԱԾ ՆՆՋԵՑԵԼՈՑ ԹԱՂՈՒՄԸ

Նոյն թաղման կանոնը կը կատարուի . ինչպէս որ այս Ազօթամատոյց Գրքիս մէջ կարգեալ է . միայն թէ (Ուստի՛ իր մարմինը հողին կը յաճնենք . հողը հողին . . .) ըսելուն տեղը, պիտի ըսուի .

Ուստի՛ իր մարմինը անդունդներուն կը յանձնենք, ապականութեան դառնալու, սպասելով մարմինին յարութեանը, (որ ժամանակ որ ծովը պիտի հատուցանէ իր մեռելները) և հանդերձեալ կեանքին, մեր Տէր էջիսուս Վրիստոսի շնորհքովը . որ գալու ժամանակը պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը, իր փառաւոր մարմինին կերպարանակից ըլլալու, ան զօրութիւնովը՝ որով ամէն բան իրեն հնազանդեցունելու կարող է :

ՊԱՆՈՒՅՆ

ԵՒ ԿԵՐՊ

ԵՊՍԿՈՊՈՍ ՔԱՀԱՆԱՅ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳ ՕՐՀՆԵԼՈՒ  
ՁԵՌՆԱԳՐԵԼՈՒ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾԵԼՈՒ  
ԱՆԳՂՒՅՑ ԵՒ ԻՌԼԱՆՏԻՅՑ ՄԻԱՑԵԱԼ

ԵԿԵՂԵՏՈՅՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՄԲԸ


Յառաջաբան

Մտտուածաշունչը և Հին Լակեղեցական Հեղինակները ուշադրութեամբ կարդացողներուն բոլորին յայտնի է, որ Մաքելոց ժամանակէն Վրիստոսի Լակեղեցիին մէջ այս Պաշտօնեաները կային, այսինքն Լպիսկոպոսներ, Վահանաներ և Սարկաւագներ: Մյս պաշտօնները ամէն ժամանակ այնչափ պատուաւոր և յարգի էին, որ մէկը երբէք չէր համարձակէր նոյն պաշտօններուն ձեռնամուխ ըլլալու, մինչեւ որ առաջուց կանչուած, փորձուած, քննուած և անանկ հանգամանքներով ճանչցուած չըլլար, որ յարմար գար անոնց. ու նաև օրինաւոր իշխանութիւն ունեցողներէն հաստատուած և նոյն պաշտօններուն ընդունուած չըլլար, հրապարակական Մշոթքով ու ձեռնադրութեամբ: Ուստի Մեզիոյ և Խուլանտիոյ միացեալ Լակեղեցւոյն մէջ այս կարգերը շարունակուելու և յարգութեամբ ՚ի գործ դրուելու

և անոնց յարգը ճանչնալու համար, մէկը օրինաւոր  
 Ապիսկոպոս, Վրահանայ կամ Սարկաւագ չի պի-  
 տի սեպուի և ընդունուի Ընդդիոյ և Խալանտիոյ միա-  
 ցեալ Ազեղեցւոյն մէջ, կամ թող տրուի ան պաշ-  
 տօններուն մէկը կատարելու, մինչեւ որ չի կան-  
 չուի, չի փորձուի, չի քննուի և անոնց մէջ չընդու-  
 նուի հետեւեալ Աննոնովը, կամ թէ առաջուց Ա-  
 պիսկոպոսական ձեռնագրութիւն առած չըլլայ:

Սէկը Սարկաւագութեան աստիճանը չընդու-  
 նիր, մինչեւ որ քսանուիրեք տարեկան չըլլայ, կամ  
 թէ թոյլտուութիւն մը ընդունած չըլլայ: Աւ ո՛վ որ  
 Վրահանայութեան աստիճանը պիտի ընդունի, քը-  
 սանըչորս տարին լումնցուցած պիտի ըլլայ: Աւ ո՛վ  
 որ Ապիսկոպոս պիտի ձեռնագրուի, կատարեալ երե-  
 սուն տարեկան պիտի ըլլայ:

Աւ Ապիսկոպոսը կամ անձամբ և կամ հաւա-  
 քարիմ վկայութեամբ անմեղ և առաքինի վարք ու-  
 նեցող անձը ճանչնալով, և Աստիճանին լեզուին  
 հմտութիւնը և Սուրբ Արոց բաւական տեղեկու-  
 թիւն ունենալը քննելէն և փորձելէն ետեւ, կրնայ  
 Աննոնով սահմանուած ժամանակները, կամ թէ  
 հարկաւորագոյն պատճառաւ ուրիշ Արակի կամ  
 Տօնամբոթութեան ( )ը մը Ազեղեցւոյ առջին ընդու-  
 նել նոյն անձը Սարկաւագութեան, հետեւեալ կեր-  
 պովը:



# ԿԱՆՈՒՆ

## ԵՒ ԿԵՐՊ

### ՍԱՐԿԱՒԱԳ ՕՐՀՆԵԼՈՒ

Եպիսկոպոսին սահմանած օրը Աւուուան Աղօթքը Ե ժըննարէն ետեւ Քարող մը կամ Ճ ու մը կ'ըսուի : որով Սարկաւագութեան ընդունուելու անձանց պարտաւորութիւնները ու պաշտօնները կը ծանուցուի . Քրիստոսի Եկեղեցոյն մէջ այս կարգիս որչափ հարկաւոր ըլլալը . ու նոյն ժողովուրդները որչափ յարգելու են անոնք իրենց պաշտօնին մէջ :

Նախ և առաջ Աւագ Սարկաւագը կամ անոր Փոխանորդը կը ներկայացունէ Եպիսկոպոսին (որ սուրբ Սեղանին քով իր աթոռը նստած է) անոնք՝ որ Սարկաւագութեան կը փափաքին . (որոնց ամէն մէկը վստելուչ կերպով հազուաճառ պիտի ըլլան) ասանկ ըսելով .

Պատուական Հայր Տերամբ , ձեզի կը ներկայացունեմ այս անձինքները Սարկաւագութեան ընդունուելու :

Եպիսկոպոսը .

Ըմենայն զգուշութեամբ գիտնաս որ ան ձեզի ներկայացուցած անձինքներդ ընդունակ և յարմար ըլլան իրենց ուսմանը և սուրբ վարուց կողմանէ , պատշաճաւոր կերպով իրենց պաշտօնը կատարե-

լու, Լստուծոյ փառքին և իւր Ակեղեցիին շինու-  
թեանը համար :

Աւագ Սարկաւագը կը պատասխանէ .

Ես անոնցմէ հարց ու փորձ ըրի, անոնք քննեցի  
ալ, և կը խորհիմ թէ անանկ են :

Յետոյ Եպիսկոպոսը ժողովուրդին կ'ըսէ .

Եղբայրներ՝ ձենէ ով որ այս Սարկաւագու-  
թեան ներկայացեալ անձինքներուն մէկին արգել-  
ման պատճառը, կամ երեւելի յանցանքը գիտէ,  
որով կարող չըլլայ այս Պաշտօնին մէջ մտնալու, ա-  
ռաջ թող գայ Լստուծոյ անուամբը, ու յայտնէ  
ան յանցանքին կամ արգելման ինչ ըլլալը :

Եւ թէ որ մեծ յանցանք մը կամ արգելք մը իմացուի,  
Եպիսկոպոսը մերջ պիտի ընէ այն անձին ձեռնադրուիլը,  
մինչեւ որ ամբաստանուած կողմի անձին նոյն յանցանքէն  
անսարստ ըլլալը հաստատուի :

Յետոյ Եպիսկոպոսը (ձեռնադրութեան ընդունակ հա-  
մարուած անձինքները ժողովուրդին ազօթքին յանձնելով )  
կ'երգէ կամ կ'ըսէ հոն ներկայ գտնուող Եկեղեցականներուն  
ու ժողովուրդին հետ Լիթանի Մաղթանքը հետեւեալ  
Ազօթքներովը :

Լիթանի Մաղթանք և Աղերսարկութիւնք .

Ո՛վ Հայր երկնաւոր Լստուած, ողորմէ՛ մեզի՝ ու  
ղորմելի մեղաւորներուս :

Ո՛վ Հայր երկնաւոր Լստուած, ողորմէ՛ մեզի՝ ու

ողորմելի մեղաւորներուս :

Որդին Աստուած, փրկիչ աշխարհի, ողորմէ մեզին՝ ողորմելի մեղաւորներուս :

Որդին Աստուած, փրկիչ աշխարհի, ողորմէ մեզին՝ ողորմելի մեղաւորներուս :

Հոգին Սուրբ Աստուած, որ 'ի Հօրէ և յՈրդուց կը բղխիս, ողորմէ մեզին՝ ողորմելի մեղաւորներուս :

Հոգին Սուրբ Աստուած, որ 'ի Հօրէ և յՈրդուց կը բղխիս, ողորմէ մեզին՝ ողորմելի մեղաւորներուս :

( ) րհնեալ և փառաւորեալ ամենասուրբ Արքայութիւն, երեք Անձինք, և մէկ Աստուած, ողորմէ մեզին՝ ողորմելի մեղաւորներուս :

( ) րհնեալ և փառաւորեալ ամենասուրբ Արքայութիւն, երեք Անձինք և մէկ Աստուած, ողորմէ մեզին՝ ողորմելի մեղաւորներուս :

Անք մեղքերը ո՛վ Տէր, մի յիշեր, ո՛չ ալ մեր հայրերուն մեղքերը, մեր մեղքերուն վրէժխնդիր մի ըլլար, ներէ մեզի Տէր բարերար, ներէ քու ժողովուրդիդ, որ դուն քու արխնովդ փրկեցիր, և մի բարկանար մեզի յաւիտեան :

Ներէ մեզի Տէր բարերար :

Ամեն գէշութենէ ու վնասէ, մեղքէ, սատանանային խաբէութիւններէն ու բռնութենէն, քու բարկութենէդ, և յաւիտենական դատապարտութենէն,

Աղատէ մեզ Տէր բարերար :

Ռողոր սրտի կուրութենէ, հպարտութենէ, սը-

Նապարծութենէ ու կեղծաւորութենէ . նախանձու-  
թենէ , ատելութենէ , չարութենէ և սիրոյ դէմ պա-  
կասութիւններէ ,

Ազատէ մեզ Տէր բարերար :

Եւ յութենէ , և ուրիշ ամէն մահացու մեղքերէ .  
աշխարհի , մարմնոյ ու սատանային խաբէութիւն-  
ներէն ,

Ազատէ մեզ Տէր բարերար :

Այոջակէ ու ալէկոծութենէ . ժանտախտէ , ա-  
մէն տարախիտիկ հիւանդութիւններէ ու սովէ .  
պատերազմէ , մարդասպանութենէ և յանկարծակի  
մահէ ,

Ազատէ մեզ Տէր բարերար :

Եւ մէն տեսակ դաւաճանութենէ , գաղտնի միա-  
բանութենէ ու սպստանքութենէ . մոլոր վարդա-  
պետութենէ , հերետիկոսութենէ ու հերձուածո-  
ղութենէ . սրտի յամառութենէ , և քու Խոյքբրուդ  
ու Պատուիրանքներուդ արհամարհութենէն ,

Ազատէ մեզ Տէր բարերար :

Վրու ամենասուրբ Սարգեղութեանդ խորհուր-  
դին . սուրբ Ծննդեանդ ու թաղիատութեանդ .  
Սկրտութեանդ , Պահեցողութեանդ ու Փորձու-  
թեանդ համար ,

Ազատէ մեզ Տէր բարերար :

Վրու մահուանդ տազնապին ու արիւնշաղախ  
Վրտանցդ . Խաչիդ ու Չարչարանացդ . պատուա-  
կան Սահուանդ ու թաղմանդ . փառաւոր Յա-

բութեանդ ու Համբարձմանդ, և Սուրբ Հոգւոյն  
գալստեանը համար,

Աղատէ մեզ Տէր բարերար:

Ամէն նեղութեան, յաջողութեան ու մահուան  
ժամանակնիս, և դատաստանի օրը,

Աղատէ մեզ Տէր բարերար:

Մենք մեղաւորներս կը խնդրենք, լսէ մեզի ո՛վ  
Տէր Աստուած, և քու ընդհանրական սուրբ Ազկե-  
ղեցիդ շիտակ ճամբուն մէջ ուղղէ ու առաջնորդէ,

Ա՛ղաչենք լսէ մեզի Տէր բարերար:

Շնորհէ որ քու ծառայ մեր Մարեշնորհ Աբ-  
քան և Խնամակալը ճշմարիտ աստուածապաշտու-  
թեամբ, արդարութեան ու սրբութեան կեանքով  
պահպանես ու զօրացունես,

Ա՛ղաչենք լսէ մեզի Տէր բարերար:

Շնորհէ որ անոր սիրտը քու հաւատքովդ, եր-  
կիւզովդ ու սիրովդ կառավարուի, որ միշտ քեզի ա-  
պաւինի, և քու փառքդ ու պատիւդ խնդրէ,

Ա՛ղաչենք լսէ մեզի Տէր բարերար:

Շնորհէ որ անոր պաշտպան ու պահպան ըլ-  
լաս, և անոր առջին բոլոր իր թշնամիները հնազան-  
դեցունես,

Ա՛ղաչենք լսէ մեզի Տէր բարերար:

Շնորհէ որ օրհնես ու պահպանես Աբքայուհ-  
այն Սայրը և բոլոր Աբքայազուն Գնտանիքը,

Ա՛ղաչենք լսէ մեզի Տէր բարերար:

Շնորհէ բոլոր Ապիսկոպոսները, Վահանանե-

ըր և Սարկաւագները լուսաւորելու, որ ճշմարտապէս քու Պատգամներդ ճանչնան ու իմանան, ու նաև քարոզութիւնով ու վարքով կարող ըլլան անոնք յայտնելու և աւետարանելու,

Աղաչենք լսէ մեզի Տէր բարերար:

Ե նորհէ օրհնել այս քու ծառաներդ, որ հիմայ Սարկաւագութեան (կամ Վահանայութեան) կարող պիտի առնեն, և թափէ քու շնորհքդ անոնց վրայ, որ կարող ըլլան ըստ պատշաճի իրենց պաշտօնը կատարելու, քու Արկեղեցիիդ շինութեանը, և քու սուրբ Անուանդ փառքին համար,

Աղաչենք լսէ մեզի Տէր բարերար:

Ե նորհէ որ ժողովի մէջ գտնուող Աշխատանքը և բոլոր Ազնուականները շնորհքով, իմաստութիւնով ու հանճարով զարդարես,

Աղաչենք լսէ մեզի Տէր բարերար:

Ե նորհէ օրհնել և պահպանել բոլոր Ատենակալները, շնորհք տալով անոնց որ միշտ արդարութիւն ընեն, ու ճշմարտութիւնը պահեն,

Աղաչենք լսէ մեզի Տէր բարերար:

Ե նորհէ օրհնել ու պահպանել բոլոր քու ժողովուրդդ,

Աղաչենք լսէ մեզի Տէր բարերար:

Ե նորհէ որ ամէն ազգայ միաբանութիւն, խաղաղութիւն ու համահամութիւն տաս,

Աղաչենք լսէ մեզի Տէր բարերար:

Ե նորհէ որ մեզի սուրբ սիրտ տաս, որ քեզ սի-

րենք, ու քենէ վախնանք, և քու պատուիրանքնե-  
բուդ փութաջան պահպանութիւնովը ապրինք,

Վաղաչենք լսէ մեզի Տէր բարերար :

Շ նորհէ որ բոլոր քու ժողովուրդիդ շնորհքի  
աճում մը տաս, որ խոնարհութեամբ քու Խօսքե-  
բուդ լսեն, և յօժար կամքով ընդունին անոնք, և  
Սուրբ Հոգւոյն պողաբերութեամբը ծաղկին,

Վաղաչենք լսէ մեզի Տէր բարերար :

Շ նորհէ ուղիղ ճամբուն մէջ բերել ան ամէնքը՝  
որ սխալած ու խաբուած են,

Վաղաչենք լսէ մեզի Տէր բարերար :

Շ նորհէ որ հաստատուն եղողները զօրացու-  
նես, սրտաբեկ եղողներուն օգնութիւն ու քաջալե-  
բութիւն տաս, ինկածները կանգնեցունես, և վեր-  
ջապէս սատանան մեր ոտքին ներքեւը կործանես,

Վաղաչենք լսէ մեզի Տէր բարերար :

Շ նորհէ ձեռնտու ըլլալ, օգնել ու զօրացունել  
ան ամէնքը՝ որ վտանգի, կարօտութեան ու նեղու-  
թեան մէջ են,

Վաղաչենք լսէ մեզի Տէր բարերար :

Շ նորհէ պահել ու խնամել ան ամէնքը՝ որ ծո-  
վուն վրայ ու ցամաքը ճամբորդութիւն կ'ընեն, որ-  
դեծնութեան ցաւ ունեցողները, ամէն հիւանդնե-  
րը, (մասնաւորապէս մեր աղօթքին յանձնուածնե-  
րը), (ասիկայ կ'ըսուի, երբ որ միաբանութեան Աղօթքը  
խնդրուի) նաև ողորմիլ տղոցը, բանտարգեալներուն  
ու գերիներուն :

Կ'աղաչենք լսէ մեզի Տէր բարերար :

Շ նորհէ խնամել ու հոգ տանիլ որբերուն , այրիներուն և ան ամէնուն՝ որ նեղեալ ու տառապեալ են ,

Կ'աղաչենք լսէ մեզի Տէր բարերար :

Շ նորհէ ողորմիլ բոլոր մարդկային ազգին ,

Կ'աղաչենք լսէ մեզի Տէր բարերար :

Շ նորհէ որ մեր թշնամիներուն , մեզ հալածողներուն և մեզ բամբասողներուն թողութիւն տաս , և անոնց սիրտերը դարձունես ,

Կ'աղաչենք լսէ մեզի Տէր բարերար :

Շ նորհէ որ մեր պիտոյքին համար երկրին բընաւորեալ բերքերը պարգեւես ու պահես մեզի , որ ժամանակին վայելենք անոնք ,

Կ'աղաչենք լսէ մեզի Տէր բարերար :

Շ նորհէ որ մեզի ճշմարիտ զղջում պարգեւես , և ամէն մեր մեղքերուն , զանցառութիւններուն ու տգիտութիւններուն ալ թողութիւն շնորհես , և քու Սուրբ Հոգւոյդ շնորհքովը մեզ զարգարես , որ քու սուրբ պատուիրանքներուդ նայելով մեր վարքերը նորոգենք ,

Կ'աղաչենք լսէ մեզի Տէր բարերար :

Արդի Աստուծոյ , կ'աղաչենք լսէ մեզի :

Արդի Աստուծոյ , կ'աղաչենք լսէ մեզի :

Գանն Աստուծոյ , որ աշխարհի մեղքերը մեկ դիկը վերցունես ,

Շ նորհէ մեզի քու խաղաղութիւնդ :

Պանն Լստուծոյ , որ աշխարհի մեղքերը մէկ  
գի կը վերցունես ,

Ողորմէ մեզի :

Վրիստոս , լսէ մեզի .

Վրիստոս , լսէ մեզի :

Տէր , ողորմէ մեզի .

Տէր , ողորմէ մեզի :

Վրիստոս , ողորմէ մեզի .

Վրիստոս , ողորմէ մեզի :

Տէր , ողորմէ մեզի .

Տէր , ողորմէ մեզի :

Յետոյ Քահանային հետ մեկտեղ յողովութիւն ալ Տէ-  
րունական Աղօթքը կ'ըսեն .

Ո՛վ մեր հայրը՝ որ երկինքն ես , քու անունդ  
սուրբ ըլլայ . Վրու թագաւորութիւնդ գայ . Վրու  
կամբդ ըլլայ , ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկ-  
րիս վրայ . Մեր ամէն աւուր հացը այսօր տուր մեզի .

Աւ ներէ մեզի մեր պարտքերը , ինչպէս որ մենք ալ  
կը ներենք մեր պարտականներուն . Աւ մեզ փորձու-  
թեան մի տանիր , հապա չարէն ազատէ մեզ . Լսէն :

Վրակահան . Տէր , մեր մեղքերուն նայելով մեզի  
հետ մի վարուիր .

Պապասխանի . Ու ոչ ալ մեր անօրէնութիւննե-  
րուն նայելով մեզի հատուցում ըրէ :

Աղօթենք .

Ո՛վ Տէր Աստուած՝ բարեգութ Հայր , որ զըզ-  
 ջացեալ սրտին հառաչանքը չես անարգեր , ու ոչ  
 ալ վշտացեալին փափաքը . Օգնէ մարդասիրաբար  
 մեր աղաչանքներուն , որ քու ներկայութեանդ կը  
 մատուցանենք բոլոր մեր նեղութիւններուն ու ճա-  
 խորդութիւններուն մէջ , երբ որ անոնք մեզ կը կո-  
 խեն . և գթաբար լսէ մեզի որ սատանային կամ չար  
 մարդոց նենգութեամբը ու խորամանկութեամբը  
 մեզի դէմ գործուած չարիքները ոչնչանան , և քու  
 բարեգթութեանդ նախախնամութեամբը ցրտին .  
 որ մենք քու ծառաներդ հալածումներով չի վնա-  
 սած , կարող ըլլանք միշտ քու սուրբ Ակեղեցիիդ  
 մէջ քեզի գոհութիւն մատուցանելու , մեր Տէր Հի-  
 սուս Քրիստոսի շնորհքովը . Ամէն :

Ալիւր ո՛վ Տէր , օգնէ մեզի , և փրկէ մեզ քու Ա-  
 նուանդ համար :

Ո՛վ Տէր Աստուած , մենք մեր ականջներովը լը-  
 սեցինք , և մեր հայրերը մեզի պատմեցին քու մեծա-  
 մեծ գործքերդ , որ դուն իրենց օրերը և իրենցմէ ա-  
 ռաջ հին ժամանակը ըրիր :

Ալիւր ո՛վ Տէր , օգնէ մեզի , և փրկէ մեզ քու պա-  
 տուոյդ համար :

Փառք Հօր , և Որդւոյ , և Հոգւոյն Արբոյ .

Որպէս էր 'ի սկզբանէ , այժմ , և միշտ , և յաւի-  
 տեանս յաւիտենից . Ամէն :

Քրիստոս Աստուած , պաշտպանէ մեզ մեր թըշ-

նամիններէն ,

Սարգասիրաբար նայէ մեր նեղութեանցը .

Գթութեամբ տես մեր սրտին նեղութիւնները .

Ողորմութեամբ ներէ քու ժողովուրդիդ մեղքերը .

Սիրով ու քաղցրութեամբ ընդունէ մեր աղաչանքները .

Որդի Դաւթի , ողորմէ մեզի .

Վրիստոս Աստուած , հիմայ ու միշտ ընդունէ մեր աղաչանքները հաճութեամբ .

Բարեգթութեամբ լսէ մեզի Վրիստոս Աստուած .

Բարեգթութեամբ լսէ մեզի ո՛վ Տէր Վրիստոս .

Վահանան . Ո՛վ Տէր , ցըցուր մեզի քու ողորմութիւնդ :

Պապասխանի . Ինչու որ մենք ամէնքս քեզի կը յուսանք :

Ազօթենք .

Խոնարհեալ կ'աղաչենք քեզի ո՛վ Հայր , ողորմութեամբ նայէ մեր տկարութիւններուն , և քու Անուանդ փառքին համար հեռացուր մենէ ան ամէն չարիքները , որոնց որ արդարապէս արժանի եղած ենք . Եւ շնորհէ որ մեր ամէն կերպ նեղութիւններուն մէջ յոյսերնիս ու ապաւինութիւններնիս քու ողորմութեանդ վրայ դնենք , և միշտ քեզի ծառայենք սրբութեամբ ու մաքրութեամբ ապրելով

քու փառքիդ ու պատուոյդ համար, մի միայն Սիջ-  
նորդ և Պաշտպան մեր Տէր Յիսուս Վրիստոսի շը-  
նորհարովը. Ամէն :

Յետոյ կ'երգեցուի կամ կ'ըսուի Հաղորդութեան հա-  
մար եղած Պաշտօնը, միանգամայն հետեւեալ Մաղթանք-  
ովը, թուղթովը և Աւետարանովը .

Մ Ա Ղ Թ Յ Ա Ն Ք .

Ո՛վ ամենակարող Աստուած, որ քու Աստուա-  
ծային Վախախնամութեամբդ քու Ակեղեցիիդ մէջ  
զանազան կարգեր հաստատեցիր Պաշտօնեաներու .  
և ազգեցիր՝ քու առաքեալներուդ որ Վախավկայ  
սուրբ Ատեփաննոսը միւսներուն հետ Սարկաւագու-  
թեան Աստիճանին ընտրեն, Տես քու բարեգթու-  
թեամբդ հիմայ նոյն Պաշտօնին ու Ա իճակին կան-  
չուած այս քու ծառաներդ . անանկ լեցուր անոնք  
քու Արդապետութեանդ ճշմարտութիւնովը, և  
անանկ զարդարէ անոնք վարքի անմեղութիւնով, որ  
կարող ըլլան թէխօսքով և թէ բարի օրինակով հա-  
ւատարմաբար այս Պաշտօնին մէջ քեզի ծառայելու,  
քու Անուանդ փառքին և Ակեղեցւոյդ շինութեանը  
համար, մեր Փրկիչ Յիսուս Վրիստոսի արժանա-  
ւորութեամբը, որ կենդանի է և կը թագաւորէ  
միանգամայն քեզի՝ և Սուրբ Հոգւոյն հետ, հիմայ  
ու յաւիտեան . Ամէն :

Թուղթ Պողոսի Առաքելոյ . Ա . ՏԻԲ . Գ . 8 :

Մանկ ալ սարկաւագները պարկեշտ ըլլան . ոչ  
երկզրոյց , ոչ գինեակ , ոչ բան քաշող . հապա հա-  
ւատքի խորհուրդները մաքուր մտքով ունենան : Մ-  
ուսջ իրենք թող փորձուին , ու ետքը ան պաշտօնին  
մտնան , որ անարատ ըլլան : Մանկ ալ անոնց կը-  
նիկները պարկեշտ . ոչ գէշ խօսող . հեղահոգի , ա-  
մէն բանի մէջ հաւատարիմ : Սարկաւագները մէկ  
կնկան մը էրիկ ըլլան , որ իրենց զաւկըներուն աղէկ  
վերակացու եղած ըլլան , և իրենց տանը : Ս ասն զի  
աղէկ պաշտօն կատարողները իրենց անձին բարի  
աստիճան կը շահին , ու աւելի համարձակութիւն՝  
քրիստոսի յիսուսի հաւատքին մէջ :

Կամ այս .

Գործք Առաքելոց . Գ . 2 :

Տասներկուքները աշակերտաց բազմութիւնը  
կանչեցին , և ըսին . աղէկ չէ որ մենք աստուծոյ խօսքը  
թողունք ու սեղանին ծառայենք : Այլբայրենք՝ ձեր  
մէջէն եօթը հոգի ընտրեցէք աղէկ վկայուած՝ հոգ-  
ւով սրբով ու իմաստութեամբ լեցուած , որ անոնք  
այս գործքերուս վրայ դնենք : Աւ մենք աղօթքի ու  
պաշտամունքի ու բանին հետն ըլլանք : Աւ ան խօսքը  
բողոք բազմութեանը հաճոյ թուեցաւ . և ընտրեցին  
ստեփաննոսը՝ հաւատքով ու սուրբ հոգւով լեցուն  
մարդ մը , ու փիլիպպոսը , ու պրոքորոնը , ու նիկանո-

բան , ու փիմոնան , ու պարմենան , ու նիկողայոսը՝  
 դարձի եկող անտիոքացին : Ասոնք առաքեալներուն  
 առջին կայնեցուցին , և աղօթք ընելով ձեռունին  
 անոնց վրայ դրին : Աստուծոյ խօսքը կ'աճէր , ու  
 երուսաղէմի մէջ աշակերտներուն թիւը էվելօք կը  
 շատնար , ու քահանաներէն պինտ շատերը հաւատքի  
 կը հնազանդէին :

Եւ Աւետարանէն առաջ Եղիսկոպոսը իր աթոռը  
 նստած , ձեռնադրուելուներուն ամէն մէկին առանձին Երդ-  
 մամբ հաստատութիւն կ'ընդունի , Անդղիեացոց Թագաւորին  
 Գլխաւորութեանը , ու բոլոր օտար իշխաններուն զօրու-  
 թեանը ու իշխանութեանը դէմ :

Երդմամբ հաստատութիւն Թագաւորին Գլխաւորութեանը .

Աս Ա— Ս— երդմամբ կը հաստատեմ , որ սրտի  
 մտօք կ'ատեմ , կը զգուիմ և կ'ուրանամ իբր անօրէն  
 և հերետիկոսական այն Արդապետութիւնը ու  
 Պրութիւնը , որ Բարէն կամ Հոռվմայի Աթոռին  
 մէկ իշխանութենէն բանադրուած կամ կապուած  
 Իշխանները , իրենց հպատակներէն կամ ո՛ր և իցէ  
 ուրիշներէն վար առնուին , կամ սպանուին : Աս ես  
 յայտնի կը զըուցեմ որ բնաւ մէկ օտար Իշխան մը ,  
 Անձ մը , եկեղեցական դերագոյն պատուոյ Տէր մէ-  
 կը , Առաւվարութիւն մը , կամ իշխանաւոր մէկը ,  
 որ և իցէ զօրութիւն մը , կարողութիւն մը , գլխաւոր-  
 ութիւն մը , նախագահութիւն մը , կամ Ակեղեց-  
 ական կամ Հոգեւոր իշխանութիւն մը չունի , և

ոչ ալ կրնայ ունենալ այս Տէրութեանս սահմանին մէջ : ( ) գնէ ինծի ուլ Մատուած :

Յետոյ Եպիսկոպոսը կը քննէ ձեռնադրուելու անձերուն ամէն մէկը ժողովուրդին առջին հետեւեալ կերպով .

Ստահ ես դուն որ Հոգւոյն Սրբոյ ներքին շարժմամբը շնչուած ես , այս Պաշտօնը ու Սպասաւորութիւնը քու վրագ առնելու , Մատուծոյ ծառայելու , իր փառքին առաւելութեանը և իր ժողովուրդին շինութեանը համար .

Պատասխանի . Մտալէս վստահ եմ :

Եպիսկոպոսը . կը կարծես որ դուն Եկեղեցւոյ Սպասաւորութեանը ճշմարտապէս կանչուած ես , մեր Տէր ճիտուս Վրիտոսի կամքովը , և այս Տէրութեանս արդար կարգաւորութեամբը .

Պատ . Ես այսպէս կը կարծեմ :

Եպիս . կը հաւատամ որ դուն անկեղծ հաւատքով Հին և Նոր կտակարանի բոլոր կանոնական գիրքերուն .

Պատ . Ես կը հաւատամ անոնց :

Եպիս . Պիտի կարգան դուն ամենայն զգուշութեամբ նոյն գիրքերը Եկեղեցւոյ մէջ հաւքուած ժողովուրդին , ուր որ Պաշտօնեայ պիտի կարգուիս .

Պատ . Պիտի կարգամ անոնք :

Եպիս . Սարկաւագի մը Պաշտօնին կը վերաբերի ան Եկեղեցիին մէջ ուր որ ինքը պաշտօն վարելու կարգեալ է , Մատուածային Պաշտամունքի ժամա-

Նակ Վրաստանային սպասաւորել, և մասնաւորապէս  
 Հաղորդութեան Խորհուրդը մատակարարելու ժա-  
 մանակը, և անոր օգնելու նոյն Խորհուրդը բաշխե-  
 լու ժամանակը. ու Եկեղեցւոյ մէջ Սուրբ Վիրքեր և  
 Եւետարանական ճառեր կարդալ. ու տղաքները  
 Վրիստոնէական Արդապետութեանը մէջ կըր-  
 թել. և Վրաստանային չի գտնուած ժամանակը տը-  
 ղաքները մկրտել, ու քարոզել՝ թէ որ Եպիսկո-  
 պոսը հաւանութիւն ունենայ: Եւսե սարկաւագի մը  
 պաշտօնն է թէ որ կարգադրութիւն մը եղած ըլլայ,  
 որ ժողովրդապետութեան հիւանդները, աղքատ-  
 ները ու տնանկները փնտրուէ, ու ժողովրդապետին  
 իմացունէ անոնց վիճակը, անունը ու բնակութիւնը.  
 որ անոր յորդորելովը ժողովրդապետութեան, կամ  
 ուրիշ անձանց ողորմութիւնովը անոնք ապրուին:  
 Երգեօք աս ամէնը հաճութեամբ ու կամաւ պիտի  
 ընեն:

Պատ. Ե՛տ, պիտի ընեմ, Եստուծոյ օգնակա-  
 նութեամբը:

Եպիս. Եմենայն զգուշութեամբ պիտի ջանան  
 Վրիստոսի Արդապետութեամբը կանոնաւորել  
 ու յարմարցունել քու և քու ընտանիքիդ վարքերը.  
 և որչափ որ կարող ես դուն քեզ և անոնք Վրիս-  
 տոսի հօտին հոգեշահ օրինակներ ընել:

Պատ. Ե՛տ, այսպէս կ'ուզեմ ընել, Եստուծոյ  
 օգնականութեամբը:

Եպիս. Կը հնազանդի՞ս դուն յարգութեամբ

քու թանձանկան Ապիսկոպոսիդ, ու Ակեղեցւոյ ուրիշ գլխաւոր Պաշտօնեաներուն, որոնց յանձնուած է ձեր հոգը ու կառավարութիւնը, մտադիւր և բարի կամքով անոնց երկիւղած ուղղութեանցը հետեւելով :

Պատ. Այս ինքս պիտի ջանամ, Աստուծոյ օգնականութեամբը :

Յետոյ Եպիսկոպոսը իր ձեռքը զատ զատ ամէն մէկուն գլխուն վրայ դնելով որ իր առջեւը խոնարհութեամբ ծընրագրուած են կ'ըսէ :

Այս քեզի իշխանութիւն, քեզի յանձնուած Ակեղեցիին մէջ Սարկաւագի մը Պաշտօնը կատարելու. Հօր, և Որդւոյ, և Սուրբ Հոգւոյն Անուամբը, Ամէն :

Անկէ ետեւ Եպիսկոպոսը անոնց ամէն մէկուն հօր կտակարանը կուտայ ըսելով .

Այս քեզի իշխանութիւն, Աստուծոյ Ակեղեցիին մէջ Աւետարանը կարդալու, և անիկայ քարոզելու, թէ որ Ապիսկոպոսը հրաման տայ :

Յետոյ Եպիսկոպոսը անոնցմէ մէկը կ'ընտրէ : որ այս Աւետարանը կարդայ :

Ս. Աւետարան. ՂԳ. Ժբ. 55.

Չեր գօտիները մէջքերնիդ ամուր կապուած ըլլայ, ու ճրագներնիդ վառած : Այս դուք ան մար-

գոցը նման , որ իրենց տէրոջը կ'սպասեն՝ որ երբ հարսնիքէն պիտի դառնայ . որ երբ որ գայ ու չալէ՝ շուտ մը բանան անոր : Արնէկ ան ծառաներուն , որ տէրը երբ որ գայ՝ անոնք արթուն պիտի գտնայ . ճըշմարիտ կ'ըսեմ ձեզի , որ ինքը գօտին մէջքը պիտի կապէ , ու սեղան նստեցունէ անոնք , ու ելլէ ծառայութիւն ընէ անոնց : Այլ թէ որ երկրորդ կամ երրորդ գիշերապահին գայ՝ ու անոնք անանկ գտնայ , երանելի են ան ծառաները :

Վերջը Եպիսկոպոսը ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդին կը մատչի , և բոլոր ձեռնադրուածները հոն կը մնան ու կը հաղորդուին նոյն օրը Եպիսկոպոսին հետ :

Հաղորդութեան խորհուրդը լըմբննալուն , և վերջին Մաղթանքէն ետեւ անմիջապէս Օրհնութենէն առաջ , հետեւեալ Մաղթանքները պիտի ըսուին .

Ամենակարող Աստուած՝ Պարգեւատու ամենայն բարութեան , որ քու մեծազօր մարդասիրութեամբդ հաճեցար ընդունելու քու Ակեղեցւոյդ մէջ այս քու ծառաներդ Սարկաւագութեան Աստիճանին . Ո՛վ Տէր , կ'աղաչենք քեզի որ անոնք պարկեշտ , խոնարհ ու ժիր ըլլան իրենց Պաշտօնին մէջ , և յօժար կամք մը ունենան բոլոր հոգեւոր կրթութիւնները պահելու . որ միշտ բարի խղճմտանքի մը վկայութեամբը Վրիստոսի Վու Որդւոյդ պարգեւներովը հաստատ և անշարժ մնալով , կարող ըլլան այս ստորին Աստիճանին մէջ ինքքզինքնին այն կերպով վարելու , որ արժանի ըլլան քու Ակեղեցւոյդ մէջ առաւել

բարձր Պաշտօններու կանչուելու . մեր վրկիչ Հիսուս Վրիստոս քու Որդւոյդ շնորհքովը, որուն կը վայելէ փառքը ու պատիւը յաւիտեան . Մէն :

Կանխելու կ'աղաչենք ո՛վ Տէր, բոլոր մեր գործառնութեանցը մէջ քու քաղցր գթութեամբդ . և քու մշտնջենաւոր օգնութիւնովդ յառաջացուր մեզ , որ մեր ամէն գործքերը քու շնորհքովդ քեզմով սկսելով , շարունակելով ու վերջացունելով , կարող ըլլանք քու սուրբ Անունդ փառաւորել , և հուսկ յետոյ քու ողորմութեամբդ յաւիտեանական կեանքը վայելել , մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Մէն :

Աստուծոյ խաղաղութիւնը՝ որ ամէն միտքերէ վեր է , պահպանէ ձեր սիրտերը ու միտքերը Աստուծոյ և Հիսուս Վրիստոս իր Որդւոյն գիտութիւնովը ու սիրովը . և Ամենակարող Հօր Աստուծոյ, Որդւոյ , և Սուրբ Հոգւոյն ( )ըհնութիւնը իջնայ ձեր վրայ , և միշտ ձեր ամէնուր վրայ ըլլայ . Մէն :

Հոս պէտք է ծանուցանել Սարկաւագին որ կատարեալ տարի մը Սարկաւագութեան Պաշտօնին մէջ պարտի մնալ ( բաց ՚ի երբոր օրինաւոր պատճառներով Եպիսկոպոսին պատշաճ երեւայ ) , որպէս զի կատարեալ և հմուտ ըլլայ Եկեղեցական Պաշտօններուն վերաբերեալ ամէն բաներուն մէջ . որոնց գործադրութեանը մէջ թէ որ հաւատարիմ և ժիր գտնուելու ըլլայ , թեմակալ Եպիսկոպոսէն կրնայ ընդունել Քահանայութեան կարգը կանոնով սահմանուած ժամանակը . կամ ( թէ որ հարկը պահանջէ ) ուրիշ Երակի կամ Տօն օր մը Եկեղեցիին առջին . հետեւեալ Ձեւովը ու կերպովը :

# ԱՅԼՆԻՆԻ

## ԵՒ ԿԵՐՊ

### ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԳՐԵԼՈՒ

Եպիսկոպոսին սահմանած օրը Առտուան Աղօթչին վերջը Քարոզ մը կամ Ճառ մը կ'ըսուի, Քահանայացու անձանց պարտաւորութիւնները ու պաշտօնները ծանուցանելու, թէ Քրիստոսի Եկեղեցւոյն մէջ այս կարգս սրչափ հարկաւոր է. և ժողովուրդն ալ սրչափ պարտի յարգութեամբ քանել անոնք իրենց Պաշտօնին մէջ :

Նոյն և առաջ Աւագ Սարկուազը, կամ անոր չեղած ժամանակը ուրիշ անձ մը՝ որ անոր տեղը փոխանորդ կարգուած է, կը ներկայացունէ Եպիսկոպոսին՝ որ Սուրբ Սեղանին քով իր աթոռը նստած է, ան ամէնքը՝ որ նոյն օրը Քահանայութեան կարգը պիտի ընդունին (որոնց ամէն մէկը վայելուչ կերպով հագուած ըլլայ), և ասանկ կ'ըսէ.

Պատուական Հայր Տերամբ, ես կը ներկայացունեմ քեզի այս առաջիկայ անձերը, որ Քահանայութեան կարգը ընդունին :

Եպիսկոպոսը .

Ըմենայն զգուշութեամբ գիտնաս որան մեզիններկայացուցած անձերդ պատշաճ և ընդունակ ըլլան իրենց ուսմանը և սրբակրօն վարմունքներուն մէջ, վայելուչ կերպով իրենց Պաշտօնը կատարելու. Ըս-

տուժոյ փառքին և իւր Ակեղեցւոյն շինութեանը հա-  
մար :

Աւագ Սարկաւադը կը պատասխանէ .

Եւ հարցուփորձ ըրի և քննեցի ալ անոնք, և կը  
յուսամ որ անանկ են :

Յետոյ Եպիսկոպոսը ժողովուրդին կ'ըսէ .

Իարի ժողովուրդ, ասոնք ան մարդիկներն են  
որ կ'որոշենք այս օր Ըստուծոյ կամքովը Վահանա-  
յութեան սուրբ Կարգին ընդունելու . որովհետեւ  
պարտուպատշաճ քննութենէ ետեւ արգելման բան  
մը չենք գտնար, հապա որ օրինաւորապէս իրենց  
Պաշտօնին և Սպասաւորութեանը կանչուած են, և  
որ նոյն գործին արժանաւոր անձինքներ են : Իայց  
այսու ամենայնիւ թէ որ ձենէ մէկը այս անձինքնե-  
րուն արգելմանը մէկ պատճառը, կամ երեւելի մէկ  
յանցանքը գիտէ, որուն համար որ անընդունակ  
կ'ըլլայ այս սուրբ Պաշտօնին մէջ ընդունուելու, ա-  
ռաջ թող գայ Ըստուծոյ Ընուամբը, և յայտնէ ան  
յանցանքին կամ արգելքին ինչ ըլլալը :

Եւ թէ որ մեծ յանցանք մը կամ արգելք մը իմացուի,  
Եպիսկոպոսը թողու նոյն անձին ձեռնադրելը, մինչեւ որ  
այն ամբաստանուած կողմին նոյն յանցանքին սուս ամբաս-  
տանութենէն անպարտ ըլլալը հաստատուի :

Յետոյ Եպիսկոպոսը (ձեռնադրութեան ընդունակ սե-  
պուած անձինքները ժողովուրդին Ազօթքին յանձնելով)

կերգէ կամ կ'ըսէ հան ներկայ գտնուող Եկեղեցականաց և ժողովուրդին հետ մէկտեղ Լիթանի Մաղթանքը և Աղօթքները . ինչպէս որ Սարկաւագի Չեւնադութեանը կանոնին մէջ գրուած է . միայն թէ ( Սարկաւագութեան կարգի ) ըսեալու տեղը ( Գահանայութեան կարգի ) պիտի ըսուի :

Վերջը պիտի երգուի կամ ըսուի Հաղորդութեան համար եղած Պաշտօնը , միանգամայն հետեւեալ Մաղթանքը , թուղթը և Աւետարանը :

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Ըստուած ամենակարող , Պարգեւատու ամենայն բարութեան , որ քու Սուրբ Հոգւովդ Պաշտօնեաներու այլևայլ կարգերը հաստատեցիր Եկեղեցւոյ մէջ . կայէ քու բարեգթութեամբդ հիմայ Վահանայութեան Պաշտօնին կանչուած այս քու ծառաներուդ վրայ . անանկ լեցուր անոնք քու Սարգսպետութեանդ ճշարտութիւնովը , և անանկ զարգարէ անոնք վարքի անմեղութիւնով , որ թէ խօսքով և թէ բարի օրինակով կարող ըլլան հաւատարմաբար այս պաշտօնին մէջ քեզի ծառայելու , քու Ընուանդ փառքին , և քու Եկեղեցւոյդ շինութեանը համար . մեր վրկիչ Հիսուս Վրիստոսի արժանաւորութեամբը , որ կենդանի է և կը թագաւորէ միանգամայն քեզի՝ ու Սուրբ Հոգւոյն հետ հիմայ ու յաւիտեան . Ընէ :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Երեւ . դ . 7 .

Սեր ամէն մէկուս շնորհք տրուած են , քրիստոսի պարգեւներուն չափովը : Ընոր համար սլ կ'ը-

տէ . վեր բարձրը ելաւ , գերութիւնը գերի ըննեց ,  
 ու մարդոց պարգեւներ տուաւ : Ան ի՞նչ է որ ելաւ .  
 թէ չէ՞ որ առաջ երկրիս վարի կողմը իջաւ : Ան որ  
 իջաւ՝ նոյնն է , որ բոլոր երկինքներէն վեր ելաւ , որ  
 ամէն բան լիցունէ : Այլ ինքը մէկ քանին տուաւ ա-  
 ռաքեալներ , ոմանք՝ մարդարէներ , ոմանք՝ աւետա-  
 րանիչներ , ոմանք՝ հովիւներ ու վարդապետներ .  
 սուրբերուն հաստատութեանը համար , պաշտա-  
 մունքին գործքին համար , քրիստոսի մարմինին շի-  
 նութեանը համար . մինչեւ որ ամէնքս ալ հասնինք  
 հաւատքին միաբանութեանը , ու աստուծոյ որդւոյն  
 գիտութեանը . կատարեալ մարդ եղած , քրիստոսի  
 կատարելութեան հասակին չափովը :

Աւրկէ ետեւ պիտի կարդացուի Աւետարանին տեղը  
 Սուրբ Մատթէոսի իններորդ Գլխուն մէկ մասը , ինչպէս որ  
 կը հետեւի .

Ս . Աւետարան . Մարթ . Թ .

Այլ յիսուս ժողովուրդները տեսնալով՝ մեղքը-  
 ցաւ անոնք , ինչու որ հոգնած ու ցիրուցան եղած  
 էին՝ հովիւ չունեցող ոչխարներու պէս : Ան ժամա-  
 նակը իր աշակերտներուն ըսաւ . հունձքերը առատ  
 են , բայց մշակները քիչ : Աւստի՝ աղաչեցէք հուն-  
 ձերուն տիրոջը , որ մշակներ հանէ իր հունձերուն :

Կամ թե այս հետեւեալը . Ս . Յովհաննու տասներորդ

Գլուխէն .

Ս. Աւետարան. Յ. Է. Ժ. 1.

Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ան որ դուռնէն չի մտնար ոչխարներուն բակը, հապա ուրիշ տեղէն կ'ելլէ, ան գող է և աւազակ: Բայց ան որ դուռնէն կը մտնայ, ան ոչխարներուն հովիւն է: Անոր՝ դռնապանը կը բանայ, և ոչխարները անոր ձայնին կը լսեն, և իր ոչխարները անունովը կը կանչէ, և անոնք կը հանէ: Այս երբ որ ամէն իրենները կը հանէ՝ անոնց առջեւէն կ'երթայ, ու ոչխարները իր ետեւէն կ'երթան, ինչու որ անոր ձայնը կը ճանչնան: ( )տարին ետեւէն չին երթար, հապա անկէց կը փախչին. ինչու որ օտարներուն ձայնը չին ճանչնար: Երեսուս աս առակը անոնց ըսաւ, և անոնք չէին իմանար. թէ ինչ էր որ իրենց հետ կը խօսէր: Աորէն յիսուս ըսաւ անոնց, ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ես եմ ոչխարներուն դուռը: Ան ամէնը՝ որ ինէ առաջ եկան, գող ու աւազակ էին. բայց ոչխարները անոնց չի լսեցին: Այս եմ դուռը. ինէ թէ որ մէկը ներս մտնալու ըլլայ՝ կ'ապրի, կը մտնայ, ու կ'ելլէ, և արծեւիք կը գտնայ: Աողը չի գար, թէ չէ՝ որ գողնայ ու սպաննէ ու կորսնցունէ. ես եկայ որ կեանք ունենան, ու ալ էվելըք ունենան: Այս եմ քաջ հովիւը. քաջ հովիւը իր կեանքը ոչխարներուն համար կը դնէ: Բայց վարձկանը որ հովիւ չէ, որ ոչխարները իրենը չեն, երբոր կը տեսնայ գայլը՝ որ կուգայ, կը թողու ոչխարները ու կը փախչի, ու գայլը կը յափշտակէ անոնք՝ ու կը ցրուէ: Ինչու որ

ինքը վարձկան է , և ոչխարներուն համար իր հոգը  
 չէ : Այս եմ քաջ հովիւը , ու կը ճանչնամ իմիններս ,  
 ու կը ճանչցուիմ իմիններէս : Ինչպէս որ հայրը  
 գիտէ իս , ես ալ հայրը գիտեմ . և իմ անձս ոչխար-  
 ներուն վրայ կը դնեմ : Այլ դեռ՝ ուրիշ ոչխարներ  
 ալ ունիմ , որ այս բակէն չեն . անոնք ալ պէտք է  
 ինձի որ հոս բերեմ . ու իմ ձայնիս պիտի լսեն , ու  
 մէկ հօտ , և մէկ հովիւ ըլլան :

Վերջը Եպիսկոպոսը իր աթոռը նստած , ձեռնադրուե-  
 լուներուն ամէն մէկուն առանձին երգմամբ հաստատութիւնը  
 պիտի ընդունի , Անգղիացւոց Թագաւորին Գլխաւորութեանը  
 համար . ինչպէս որ Սարկաւագի Ձեռնադրութեանը Կանո-  
 նին մէջ գրուած է :

Եւ այս լամբնալէն ետեւ Եպիսկոպոսը անոնց կ'ըսէ ,  
 ինչպէս որ կը հետեւի .

Այդբայրներ՝ դուք լսեցիք թէ՛ ձեր առանձին քրն-  
 նութեան ժամանակը , և թէ՛ հիմայ ձեզի եղած յոր-  
 դորանքէն , սուրբ Աւետարանի ընթերցուածքներէն  
 և Առաքելոց գրութիւններէն այս ձեր կանչուած  
 Պաշտօնին արժանաւորութիւնը և մեծութիւնը : Այլ  
 հիմայ դարձեալ մենք կը յորդորենք ձեզ մեր Տէր  
 Զիսուս Վրիստոսի անուամբը մտածելու թէ ինչ  
 բարձր Պատուոյ մը և ծանր Պաշտօնի ու հոգի մը  
 կանչուեցաք , որն որ Աստուծոյ Առաքեալ , Գլխ , և  
 Մատակարար ըլլալ է . Աստուծոյ ընտանիքին սոր-  
 վեցընել , անիկայ խրատել , անոր հովիւ և վերա-  
 կացու ըլլալ , Վրիստոսի ցրուեալ ոչխարները փըն-

ծըռնել , և իւր որդիքները՝ որ այս չար աշխարհիս մէջ են : որպէս զի Հիսուս Վրիստոսի շնորհքովք փրկուին :

Անտի՛ հաստատ ապաւորութեամբ մտքի պէտք է յիշել , թէ ինչ մեծ գանձ մը յանձնուած է ձեր հոգաբարձութեանը : Ասն զի անոնք Վրիստոսի ոչխարներն են , որ իր մահուամբը ծախու առաւ , և անոնց համար իր արիւնքը թափեց : Այլեղեցին և Սիաբանութիւնը՝ որոնց որ դուք պիտի ծառայէք , իր շարսը ու իր Սարմինն է : Այլ թէ որ նոյն Այլեղեցին կամ անոր մէկ անդամը վնասի կամ գայթակղի ձեր անհոգութեամբը , դուք ձենէ կը ճանչնաք ան յանցանքին մեծութիւնը , ու նաև ան գալու զարհուրելի պատիժը : Այա ուրեմն դուք ձենէ մտմըտացէք Մտուծոյ որդիքներուն և Վրիստոսի շարսին ու Սարմինին վերաբերեալ Պաշտօններնուդ վախճանը , և նայեցէք որ անդադար աշխատիք , հոգ տանիք ու փնամէք , մինչև որ ձեր կարողութեանը մէջ եղածը կատարէք ձեր պարտաւորութեանը համեմատ , բոլոր ան ձեզի յանձնուածները կամ յանձնուելուները հաւատքի միութեանը ու Մտուծոյ գիտութեանը , և Վրիստոսով կեանքին անխոհականութեանը ու կատարելութեանը մէջ բերելու , որ ձեր մէջ կամ կրօնքի սխալման և կամ բարքի սպականութեան տեղի չի մնայ :

Աւրեմն՝ թէ որ ձեր Պաշտօնը այսչափ գերազանց և դժուարին է , նայեցէք թէ որչափ հոգ տա-

նելու ու ջանք ընելու էք, և ինքըզինքնիդ հնազանդ  
 ու երախտագէտ ցրցունելու էք Մատուծոյ, որ ձեզ  
 ասանկ գերագոյն Պատուոյ մը վիճակեց, ու նաև  
 զգուշանալու էք որ ոչ դուք ձեզ գայթակղեցունէք,  
 և ոչ ալ պատճառ ըլլաք ուրիշը գայթակղեցունե-  
 լու: Արովհետև դուք ինքնին կարողութիւն չունիք  
 ասիկայ կատարելու միտքը և կամքը ունենալ, նոյն  
 կամքը ու կարողութիւնը միայն Մատուծմէ տրուելուն  
 համար. վասն որոյ դուք կարօտութիւն ունիք, և  
 ձեզի պէտք է որ ջերմեռանդութեամբ խնդրէք իր  
 Սուրբ Հոգին: Այլ գիտնալով որ դուք ուրիշ ճամ-  
 բով մը կարող չէք այսչափ ծանր մէկ գործ մը կա-  
 տարել որ մարդկան փրկութեանը կը վերաբերի,  
 բայց միայն Սուրբ Վիրքերէն քաղուած վարգապե-  
 տութեամբը ու յորդորանքովը, և սնունց համեմատ  
 վարքով մը. անոր համար մտածեցէք թէ իրչափ  
 արժուն ըլլալ պէտք է ձեզի Սուրբ Վիրքերը կար-  
 դալու և սորուելու, և բոտ պատշաճի համեմատելու  
 ձեր՝ և մասնաւորապէս ձեզի վերաբերեալ անձանց  
 վարքերը նոյն գրքերուն կանոնովը, և որչափ ջանք  
 պիտի ընէք որ նոյն գործքին համար (որչափ որ կա-  
 րելի է ձեզի) ամէն աշխարհային հոգերը ու խոր-  
 հուրդները բոլորովին մէկ դի ձգէք ու մոռնաք:

Այլ յուսանք թէ ասկէ առաջ դուք ձենէ լաւ  
 քննած ու վճռած էք այս բաները, և Մատուծոյ ը-  
 նորհրդովը հաստատ որոշած էք դուք ձեզ բոլորովին  
 այս Պաշտօնիս նուիրելու, որուն որ Մատուած հա-

ձեցաւ ձեզ կանչելու . որպէս զի որչափ որ կարող էք գլխովին այս բանիս միայն պարապիք , և բոլորովին ձեր հոգը ու ջանքը այս վախճանիս նայի . և որ դուք շարունակ շօր Լստուծոյ աղաչէք , որ մի միայն մեր փրկիչ Հիսուս Վրիստոսի միջնորդութեամբը Սուրբ շոգւոյն երկնային օգնութիւնը ձեզի շնորհէ , որ օր օրի Սուրբ Գիւրքերը կարդալով և անոնց վրայ մտածելով ձեր Պաշտօնին մէջ առաւել կատարեալ ըլլաք ու զարգանաք . և օր ըստ օրէ անանկ ջանք ընէք ձեր և ձեր ընտանեացը վարքերը սրբելու , և անոնք Հիսուս Վրիստոսի Անոնին և Աւարդապետութեանը նմանցունելու , որ ընտիր ու երկիւղած օրինակներ ըլլաք ժողովուրդին՝ ձեզի նմանելու :

Աւտի՛ հիմայ հոս հաւաքուած Վրիստոսի այս ժողովուրդը այս բաներուն մէջ ձեր միտքը ու կամքը իմանալու համար , և որ այս ձեր խոստմունքը ելելօք ձեզ քաջալերելու համար ձեր պարտաւորութիւնները ՚ի գործ դնելու , որոշակի պիտի պատասխանէք այս հարցմունքներուն , որ Լստուծոյ և իւր Ալկեղեցւոյն անուամբը հիմայ ձեզի կ'առաջարկենք նոյն բաներուն նայելով .

Ար խորհի՞ք սրտերնուդ մէջ որ դուք արդարապէս կանչուած էք Վահանայութեան Աարդին և Պաշտօնին , մեր Տէր Հիսուս Վրիստոսի կամքովը , և Լնդղիոյ ու Իռլանտիոյ Սիացեալ Ալկեղեցւոյն սահմանադրութիւններովը :

Պապասխանի՛ . Լնանկ կը խորհիմ՛ :

Եւպիսկոպոսը՝ Լորդեօք հաւանեալ էք դուք, որ Սուրբ Գիրքերը բաւականապէս կը պարունակեն բոլոր ան Սարգապետութիւնները, որ Հիսուս Վրբիստոսի հաւատքովը յաւիտենական փրկութեան համար հարկաւ կը պահանջուի. և միտուընիդ դրած էք նոյն Սուրբ Գիրքերովը ձեր հոգաբարձութեանը յանձնուած ժողովուրդը կրթելու, և յաւիտենական փրկութեան համար պահանջուած ուրիշ բան մը չի սորվեցընելու. հապա միայն անիկայ՝ որ դուք հաւանեալ էք Սուրբ Գիրքերէն վկայուած ու հաստատուած ըլլալ:

Պատ. Ես այսպէս հաւանեալ եմ, և ասանկ միտքս դրած եմ Լստուծոյ շնորհքովը:

Եւպիս. Եպա ուրեմն հաւատարմութեամբ դուք միշտ կը ջանաք Վրբիստոսի Սարգապետութիւնը, կանոնները և Խորհուրդները մատակարարել, ինչպէս որ Տէր Լստուծմէ պատուիրուած է, և ինչպէս որ այս Եկեղեցիս ու Տէրութիւնը ընդունած է Լստուծոյ պատուիրանքներուն համեմատ. որպէս զի ձեր հոգաբարձութեանը և պարտականութեանը յանձնուած ժողովուրդը վարժէք ամենայն զգուշութեամբ նոյն պատուիրանքները պահելու ու բռնելու:

Պատ. Եսպէս կ'ուզեմ ընել Լստուծոյ օգնականութեամբ:

Եւպիս. Լորդեօք պատրաստ պիտի ըլլաք անկեղծ ջանքով հերքել ու մերժել Լստուծոյ Խօսքին դէմ եղած ամէն մտաբար և օտար վարդապետութիւնները:

և թէ հրապարակաւ և թէ առանձին խրատել ու յոր-  
դորել ձեր սահմաններուն մէջ եղած հիւանդները  
ու առողջները, ինչպէս որ հարկը կը պահանջէ և  
պատահութիւնը ձեռք կը ձգուի:

Պատ. Ե՛րբնայէս պիտի ընեմ Տէրօջը օգնակա-  
նութեամբը:

Երբնայէս. Ե՛րբեօք ամէն ժամանակ Ե՛րթի և Սուրբ  
Վիրքերը կարդալու ջանք պիտի ընէ՞ք. և անանկ  
ուսմանքներու պարապիք որ Սուրբ Վրոց գիտու-  
թեանը օգնեն, աշխարհի և մարմնոյ խորհուրդները  
մէկ դի ձգելով:

Պատ. Պիտի ջանամ այնպէս ընելու Տէրօջը օգ-  
նականութեամբը:

Երբնայէս. Ե՛րբեօք ջանք պիտի ընէ՞ք դուք ձեզ և  
ձեր ընտանիքները կանոնաւորել ու կարգի դնել  
Վրիսատսի Արքայատութեանը համեմատ. և աշ-  
խատիք թէ ձեզ և թէ անոնք որչափ որ կարող էք  
ընտիր օրինակներ ընելու Վրիսատսի Զօտին:

Պատ. Ե՛րբնայէս պիտի ջանամ, Տէրօջը օգնա-  
կանութեամբը:

Երբնայէս. Ե՛րբեօք պիտի ջանա՞ք ձեր կարողութեա-  
նը չափ հանդարտութիւն, խաղաղութիւն ու սէր  
պահելու և հաստատելու ամէն քրիստոնեայ ժողո-  
վրդոց մէջ. և մասնաւորապէս անոնց մէջ՝ որոնք  
ձեզի յանձնուած են, կամ պիտի յանձնուին:

Պատ. Ե՛րբնայէս պիտի ընեմ, Տէրօջը օգնակա-  
նութեամբը:

Եւստի • Եւրօբ պիտի հնազանդի՞ք դուք աւե-  
նայն յարգութեամբ ձեր թեմական Եւստիպոսին ,  
և ուրիշ գլխաւոր Պաշտօնաւորներուն , որոնց  
յանձնուած է ձեզ հոգալը և կատարելը . ուրսի  
մտքով . ու կամքով անոնց բարեպաշտ խրատներուն  
հետեւելով , և անոնց արդար գատողութեանը հը-  
նազանդ ըլլալով .

Պատ . Եւստիպոս պիտի ընեմ , Տէրօջը օգնակա-  
նութեամբ :

Յետոյ Եւստիպոսը օտրի վրայ կանգնած՝ կ'ըսէ .

Եւստիպոս պիտի ընեմ , Տէրօջը օգնակա-  
նութեամբ : Եւստիպոսը ընեմ , Տէրօջը օգնակա-  
նութեամբ :

Ասկէ ետեւ յորդորանօք պիտի ծանուցուի ժողովուր-  
դին որ առանձին իրենց մտածական Աղօթքներուն մէջ ա-  
մէն այս բաներուն համար շնորհք խնդրեն Աստուծմէ . սրուն  
համար քիչ մը ժամանակ լռութիւն կ'ըլլայ :

Յետոյ (բոլոր ձեռնադրուելուները ծնրադրած ) Եւստի-  
պոսը պիտի երգէ կամ ըսէ , Եկ Սուրբ Հոգին . Եւստիպո-  
սը սկսելով , և Քահանաները ու միւս հոն գտնուողները  
փոփոխակի պատասխանելով , ինչպէս որ կը հետեւի .

Եկ Սուրբ Հոգի Կենդանարար ,  
Կալուստդ հոգւոյս շունչ ազդարար ,  
Երկնային հրով մեզ հրազինեա ,

Ըզգամամբ լուսոյդ միտս պատուաստեա .  
Ըմենասուրբ շողիդ ( ) ծման ,  
Վերապատուեալ Վահանայութեան ,  
Լօթնասիւնեակ տաճարդ հաստեա ,  
Լօթնեակ շնորհօք մեզ զարդարեա .  
( ) րհնեալ ( ) ծմամբ Երկնէ Բղխեալ ,  
Կեանք , շուր Սիրոյ , Գիւր շնորհեալ .  
Յաւերժական Լոյսըդ ծագեա ,  
Ինածին խաւարս փարատ ցայտեա .  
Ըրարչակից կենդանացո ,  
Սահացեալքըս Փչմամբդ կեցո ,  
Ըռատարուղիս շնորհս պարգեւեա ,  
Գեղեցկադէմ յարկ յարդարեա .  
Սպասելոց մխիթարութիւն ,  
Կեանք և կենաց խաղաղութիւն .  
Յրուեալ հօտըն մի ժողովեա ,  
Ընհաշտ ոգւոյ տէրըն ցրուեա .  
Ուր շողիդ Տեառն առաջնորդեաց ,  
Ընդդիմութեան ոգիս ջնջեաց .  
Նոյն բաժանեալ լեզուս ազգաց ,  
Սքանչելեօք միաբանեաց .  
Նոյն և նման շօր և Որդւոյ ,  
Շողիդ Ընեղ և շամագոյ .  
Շողիդ Ըստուած , շայր և Որդին ,  
Որպէս միշտ էր , և եղիցին .  
Սինըդ Երից , Նոցանէ ես ,  
Երեակ Սիութիւնդ , Վեզ ուստ մեզ .

Ո՛չ սկսեալ , ո՛չ դադարեալ ,  
Կարգեալ , թուեալ , և միշտ օրհնեալ .  
Բաշխողդ շնորհաց ցանգ օրհնեսցուք ,  
Լորրորդութիւնդ միշտ գովեսցուք .  
Հօր , Արդւոյ , Վեզ միանգամայն ,  
Փառք և պատիւ , համանգամայն :

Կամ այս .

Եւջ Սուրբ Հոգիդ յաւերժական ,  
( ) օրհնեալ Բաշխումդ Սուրբ Արեւական .  
Հօրէ , Արդուէ նոյն Սիութեան ,  
Ըստուած սիրոյ և հաշտութեան .  
Եւցելու լեր սրտից , մտաց ,  
Հայցմամբ խնդրելիք Ըզումդ շնորհաց .  
Որով արդար և երկիւղած ,  
Լեալ հասանել փափաքանաց .  
ՂՅմարտապէս Սիութարիչ ,  
Տամենայնի Օօրացուցիչ .  
Արեւն տուրքըն միշտ խնդրելի ,  
Ընքննելի , անպատմելի .  
Ըզբիւր , Բաշխումն կենդանութեան ,  
Լըկնաժառանգ ուրախութեան .  
Հուր լուսափայլ , Աէր քաղցրութեան ,  
( ) ծումն օծելոյ հոգեսիրութեան .  
Ըռատաբաշխ ձիրդ բազմարդիւն ,  
Լկեղեցւոյ հաստատութիւն .  
Սատն Ըստուծոյ օրէնս գրես ,

Հաւատացեալ սրտի տպեա .  
Ըստ խոստման ըդ , Տէր մեր Ըստուած ,  
Պարգեւելիչ ես իօսուեն շնորհաց ,  
Օ, ի ուր ուրիք քո օգնութեամբ ,  
Օրհնել Ըստուած միշտ գովութեամբ .  
Ո՛վ Սուրբ Հոգի , լոյսդ առաքեա ,  
Խաւար միտքս լուսաղարդեա ,  
Սրտեռանդըն կեալ սրբութեամբ ,  
Յայդ և ցերեկ ծառայութեամբ ,  
Տկարութեանս լեր զօրութիւն ,  
Գլորելոցս հաստատութիւն ,  
Ըշխարհ , դերն , զինեալն մարմին ,  
Չըյաղթեն մեզ ամենեւին ,  
Հեռի արա թշնամիս մեր ,  
Շահ մեծ օգտիս պարգեւելիչ լեր ,  
Ըստուածային և մարդկային ,  
Հաշտութիւնըդ տուր մեր սրտին .  
Ըռաջնորդ սուրբ Ըւետարանին ,  
Ճարտարապետ հոգւոյս խորանին ,  
Խնդրեմք մաքրեա մեզքս մեղաց ,  
Եւ ըղգեցո լոյսըն փառաց .  
Հողանիւթեայս սրբեալ Նորոգող ,  
Մարմին եղիլոց հոգի Շնորհող .  
Գգուես սիրով աղաւնակերպ ,  
Մարդիկ ծնանիս աստուածակերպ ,  
Կապ թշնամոյն խղեալ ընկեա ,  
Լուծեալ անդամս , Տէր , Քեւ յօղեա .

Նոյն և վերջին օրն ահագին ,

Գու Սիսիթար մարդկան աղբին .

Ի յժ երկպառակ չարին հնարս ,

Հաստեա գործուն սուրբ հաւատս .

Խաղաղութիւն միարանութեան ,

Շ շորհեա բոլոր Վրիստոնէութեան .

Հիշց մեզ , որ Վեւ Հայր Ճանաչի ,

Նոյն և Որդին փառաւորի .

Հօրէ Որդուէ Բղխումի յայտնեա ,

Սի միայն Մատուած , Երեքանձնեայ .

Երգեսցուք միշտ երգ օրհնութեան ,

Համագոյակ Սուրբ Սիութեան .

Հօր Մատուծոյ ( ) օրհնեալ Որդւոյն ,

Սիանգամայն շնորհաց Հոգւոյն .

Երգ աղաչեմք Տէր մեր Փրկչին ,

Որ առաքէ իւր Սուրբ Հոգին .

Գաւանդողացս նորա Մեռան ,

ՄժԺԸԸ , և միշտ , և յաւիտեան . ՄԷՆ :

Ասիկայ լամբնալէն ետեւ Եսիսկսպոսը այս կերպով  
կ'աղօթէ և կ'ըսէ .

Աղօթեմք .

Ո՛վ Մեծնակարող Մատուած՝ և երկնաւոր Հայր ,  
որ մեր վրայ ունեցած քու անբաւ սիրովդ ու բարու-  
թեամբդ միածին Հիսուս Վրիստոս քու ամենասի-  
ւեղի Որդիդ մեզի շնորհեցիք , մեր Փրկչիք և յաւի-

տենական կենաց Մաջնորդը ըլլալու . ան՝ որ իր մահուամբը մեր փրկութիւնը կատարելով երկինքը հաճառնալէն ետեւ աշխարհ խրկեց իր Մաքեալները, Սարգարէները, Աւետարանիչները, Ազգապետները և Հովիւները, որոնց աշխատանքը և պաշտօնատարութեամբը աշխարհի ամէն կողմերէն մէկ մեծ հօտ մը հաւաքեց, քու սուրբ Մնուանդ մըշտընչնաւոր փառաբանութիւնը յայտնելու . Մյսքու յաւիտենական բարութեանդ ան մեծամեծ շնորհքներուն և մարդկային աղբիւն փրկութեանը համար կարգուած Պաշտօնին և Սպասաւորութեանը կանչելուդ համար այս քու ծառաներդ, եռանդոտ սրտով կը գոհանանք քեներ, կ'օրհնաբանենք քեզ և երկրպագութիւն կը մատուցանենք քեզի . և խոնարհեալ կ'աղաչենք նոյն ( ) օրհնեալ Արդւոյդ Մնուամբը, պարգեւէ ան ամենուն որ հոս կամ ուր ուրեք որ քու սուրբ Մնուանդ կ'աղաղակեն, որ անդադար գոհութիւն մատուցանենք և փառաւորենք քեզ այս և ուրիշ ամէն բարերարութեանցդ համար . և որ օր ըստ օրէ աճինք ու զարգանանք քու Սուրբ Հոգւոյդ շնորհքովը, Վրու և քու Արդւոյդ գիտութեամբը ու հաւատքովը : Աբպէս զի թէ այս քու Պաշտօնեաներովդ, և թէ անոնցմով՝ որոնց վըայ ասոնք քու Պաշտօնեաներդ պիտի կարգուին, քու սուրբ Մնուանդ միշտ փառաւորուի, և օրհնեալ թագաւորութիւնդ ծաւալի, մեր Տէր Հիսուս Վրիստոս քու Արդւոյդ շնորհքովը . որ կենդանի է և կը

Թագաւորէ քեզի հետ շողոյն Սրբոյ միութեամբը,  
յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Այս Աղօթքէն ետեւ ձեռնադրուելու անձինքները  
խոնարհութեամբ ծնրագրած , Եպիսկոպոսը ներկայ գտնուող  
Քահանաներուն հետ մէկտեղ ձեռուընին զատ զատ Քա-  
հանայութեան կարգը բնդունողներուն ամէն մէկուն զլսուն  
վրայ պիտի դնեն . և Եպիսկոպոսը պիտի ըսէ .

Ընդունէ Սուրբ շողին՝ Վահանայութեան  
Պաշտօնը և Սատակարարութիւնը կատարելու Աս-  
տուծոյ Լսկեղեցիին մէջ , որ հիմայ մեր ձեռնադրու-  
թեամբը քեզի կը յանձնուի : Որուն մեղքը որ ար-  
ձըկես՝ արձըկուած ըլլայ . և որուն մեղքը որ կապես՝  
կապուած ըլլայ : Լու հաւատարիմ անտես եղիր Աս-  
տուծոյ պատգամներուն և իւր սուրբ խորհուրդնե-  
րուն . շօր , և Որդւոյ , և Սուրբ շողոյն Անուամ-  
բը . Ամէն :

Յետոյ անոնց ամէն մէկը ծնրագրած մնալով՝ Եպիսկո-  
պոսը անոնց ամէն մէկին ձեռքը կ'աւանդէ Աստուածաշունչ  
Գիրքը՝ ըսելով .

Ան քեզի իշխանութիւն Աստուծոյ խօսքը քա-  
րողելու , և սուրբ խորհուրդները մատակարարելու  
Ժողովուրդին , ուր որ օրինաւոր Պաշտօնեայ պիտի  
կարգուիս նոյն բաներուն համար :

Ասկէ ետեւ պիտի երգեցուի կամ ըսուի նիկիոյ Հան-  
գանակը . ու յետոյ Եպիսկոպոսը Հաղորդութեան խորհուր-  
դին կը մատչի , որ ամէն ձեռնադրուածները մէկտեղ կը

հաղորդուին . ամենքն ալ նոյն ձևնադրուած տեղերնին մնալով : մինչև որ ամենքը հաղորդուին :

Հաղորդութեան խորհուրդը աւարտելուն , վերջին Մաղթանքէն ետեւ և անմիջապէս Օրհնութենէն առաջ , այս Մաղթանքները պիտի ըսուին .


Ո՛վ ամենագութ Հայր , կ'աղաչենք քեզն քու երկնային օրհնութիւնդ այս քու ծառաներուդ վրայ խրկելու , որ արդարութեամբ զգեստաւորին . և որ անոնց բերնովը քարոզուած քու Խօսքդ անանկ յաջողուի , որ բնաւ դատարկ տեղը չի քարոզուի : Պարգեւէ նաև մեզի որ շնորհք ունենանք քու սուրբ Պատգամներէդ , կամ անոնց համեմատ ինչ որ անոնք մեզի քարոզեն իբր մեր փրկութեան միջոցները լսելու և ընդունելու . որ ամէն մեր խօսքերուն և գործքերուն մէջ քու փառքդ խնդրենք , և քու թաղաւորութեանդ ծաւալումը , մեր Տէր Հիսուս Վրբիստոսի շնորհքովը . Ամէն :

Կանխելու կ'աղաչենք ո՛վ Տէր բոլոր մեր գործքերուն մէջ քու գթութեանդ պարգեւովը . և զարգացուր մեզ քու անդադար օգնութեամբդ , որ մեր ամէն գործքերը քու շնորհքովդ սկսելով , շարունակելով և կատարելով , կարող ըլլանք քու սուրբ Անունդ փառաւորելու , և հուսկ յետոյ քու բարեգթութեամբդ յաւիտենական կեանքը վայելելու , մեր Տէր Հիսուս Վրբիստոսի շնորհքովը . Ամէն :

Ըստուծոյ խաղաղութիւնը՝ որ ամէն միտքերէ վեր է , Ըստուծոյ և մեր Տէր Հիսուս Վրբիստոս իր

Որդւոյն գիտութեամբը ու սիրովը պահպանէ ձեր սիրտերը և միտքերը, և ամենակարող Հօր Աստուծոյ, և Որդւոյ, և Սուրբ Հոգւոյն օրհնութիւնը իջնայ ձեր վրայ, և միշտ ձեր ամենուրեք վրայ ըլլայ Ամէն:

Թէ որ մի և նոյն օրը Սարկաւագներուն և Քահանաներուն մէկտեղ ձեռնադրութիւն ըլլայ, առաջ Սարկաւագները պէտք է որ տարուին, ու ետքը Քահանաները. և Լիթանի Մաղթանքին անգամ մը ըսուիլը բաւական է: Մաղթանքներուն երկուքն ալ պիտի ըսուին, առաջ Սարկաւագութեան Մաղթանքը, ու ետքը Քահանայութեան: Առաքելոց Թուղթը պիտի ըլլայ Եփեսոս. դ. 7. մինչեւ - 15. Ինչպէս որ վերը այս Գործքիս կարգը նշանակուած է: Անմիջապէս նոյն Ընթերցուածքէն ետեւ Սարկաւագ ձեռնադրուելները Աբբային Գլխաւորութիւնը երգմամբ պիտի հաստատեն, քննուին ու ձեռնադրուին, ինչպէս որ վերը նշանակուած է: Յետոյ երբ որ անոնցմէ մէկը Աւետարանը կը կարդայ (որ է կամ Ս. Մարկոս. Թ. 56 էն մինչեւ - 58 համարը, ինչպէս որ վերը այս պաշտաման կարգին մէջ գրուած է. կամ Ս. Ղապ. Ժբ. 55 էն մինչեւ - 58 համարը, ինչպէս որ Սարկաւագի ձեռնադրութեան կանոնին մէջ կը գտնուի). անոնք որ Քահանայ պիտի ձեռնադրուին, նմանապէս Աբբային Գլխաւորութիւնը երգմամբ պիտի հաստատեն, քննուին ու ձեռնադրուին, ինչպէս որ այս կանոնիս մէջ սահմանադրուած է:



Ե Ի Կ Ե Ր Պ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
 ՉԵՌՆԱԴՐԵԼՈՒ ԿԱՄ ՕՐՀՆԵԼՈՒ  
 ՈՐ ՄԻՇՏ ՊԱՐՏԻ ԿԻՐԱԿԻ ԿԱՄ ՈՒՐԻՇ  
 ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՕՐ ՄԸ ԿԱՏԱՐՈՒԻԼ

Երբոր ամէն բան Եկեղեցւոյ մէջ ըստ պատշաճի պատ-  
 րաստ է, Առաւօտեան Աղօթքը լումննալուն պէս Արքե-  
 պիսկոպոսը (կամ այս գործոյս համար ընտրուած Եպիսկոպոս  
 մը) կ'սկսի Հաղորդութեան Խորհուրդը, որուն Մաղթանքը  
 այս պիտի ըլլայ.

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք .

Լճենակարող Լստուած, որ Հիսուս Վրքիստոս  
 քու Որդւոյդ ձեռքովը շատ գերազանց պարգեւներ  
 շնորհեցիր քու սուրբ Լուսեւոյցդ և անոնց հրամայե-  
 ցիր քու հօտդ արածել. Շնորհէ քու պարգեւդ բո-  
 լոր Եպիսկոպոսներուն՝ Եկեղեցիիդ Հովիւներուն,  
 որ մեծ ջանքով քարոզեն քու Բանդ, և պատշաճա-  
 ւոր կերպով մատակարարեն Եկեղեցւոյ Լստուա-  
 ծային Վարդը և կանոնը. պարգեւէ նաև ժողովուր-  
 դին անանկ հնազանդ ըլլալ անոնց, որ ամէնքը յա-  
 ւիտենական փառաց պսակը ընդունին, մեր Տէր  
 Հիսուս Վրքիստոսի շնորհքովը. Լճէն :

Եւ ուրիշ Եպիսկոպոս մ'ալ այս Թուղթերուն  
մէկը կը կորդայ :

Թուղթ Պօղոսի Առաքելոյ . Ա . ՏԷԺ . Գ . 1 .

Եյս բանս հաւատարիմ է , թէ որ մէկը եպիս-  
կոպոսութեան կը ցանկայ , աղէկ գործի մը կը ցան-  
կայ : Եպիսկոպոսին պէտք է անարատ ըլլալ , մէկ  
կնկան մը էրիկ , հեղահոգի , խոնարհ , պարկեշտ ,  
օտարասէր , սորվեցընող : Ոչ գեշզրուց , ոչ զար-  
նող , հապա հանդարտ , ոչ կռուող , ոչ արծաթա-  
սէր : Որ իր տանը աղէկ վերակացու եղած ըլլայ .  
զաւկըներ ունեցած ըլլայ հնազանդութեան մէջ կե-  
ցած՝ ամենայն հնազանդութեամբ : Հապա թէ որ  
մէկը իր տանը վերակացու ըլլալ չի գիտնայ , ի՞նչ  
պէս աստուծոյ եկեղեցիին հոգաբարձու պիտի ըլլայ :  
Վորահաւատ չըլլայ , որ չըլլայ թէ գոռոզնալով սա-  
տանային դատապարտութեանը մէջ իյնայ : Հապա  
պէտք է որ ան դուրսէն աղէկ վիայութիւն ունենայ .  
որ չըլլայ թէ նախատինքի ու սատանային որոգայ-  
թին մէջ իյնայ :

Կամ այս .

Ընթերցուած . Գործք Առաքելոյ . Ի . 17 .

Պօղոս մեղիտոսէն ելիեսոս խրկեց՝ ան եկեղեցիին  
երէցները կանչեց : Եւ երբ որ իրեն եկան՝ ըսաւ ա-  
նոնց . դուք ձենէ գիտէք՝ որ ան առջի օրէն ՚ի վեր որ  
ես ասիայ եկայ , ձեր հետը ինչպէս վարուեցայ բոլոր  
ժամանակ . ամենայն խոնարհութեամբ տէրօջը ծա-

ուայելով, ու շատ արցունքով ու փորձութիւններով,  
 որ հրէաներուն հնարքներէն ինծի պատահեցան :  
 Ինչպէս որ վախով ետ չի կեցայ օգտակար բաները  
 ձեզի պատմելէն, և ձեզի սորվեցընելէն հրապարա-  
 կաւ ու տանը մէջ : Հրէաներուն ու հեթանոսնե-  
 րուն վկայութիւն տալով սու աստուած ապաշխարու-  
 թեան ու մեր տէր յիսուս քրիստոսի հաւատալու  
 համար : Այլ արդ՝ ահա ես հոգևով կապուած երու-  
 սաղէմ կ'երթամ, և հոն իմ վրայէս ինչ որ պիտի  
 անցնի՝ չեմ գիտեր : Սիայն թէ հոգին սուրբ քա-  
 ղաքէ քաղաք ինծի կը վկայէ ու կ'ըսէ թէ՛ կապեր և  
 նեղութիւններ քեզի կ'սպասեն : Բայց ես իմ անձս  
 մէկ բանով մը պատուական չեմ սեպեր, միայն թէ  
 իմ ընթացքս ուրախութեամբ կատարեմ, և ան  
 պաշտօնը՝ որ տէր յիսուս քրիստոսէն առի՛ աստու-  
 ծոյ շնորհացը աւետարանին վկայ ըլլալու : Այլ հի-  
 մայ՝ ահա ես գիտեմ, որ մէյ մ'ալ իմ երեսս չի պի-  
 տի տեսնաք գուք ամէնքդ՝ որ մէջերնիդ պտրտեցայ  
 աստուծոյ թագաւորութիւնը քարոզելու : Աստի աս  
 օրս ձեզի կը վկայեմ, որ ես անպարտ եմ ամէնուն  
 արիւնէն : Ինչու որ ետ չի կեցայ աստուծոյ ամէն  
 կամքը ձեզի պատմելէն : Օգոյ՛ջ եղիք անձերնուդ և  
 բոլոր հօտին, որ հոգին սուրբ ձեզ անոնց վրայ տե-  
 սուչ գրաւ, տէրօջը ժողովուրդը հովուելու, որ իր  
 արիւնովը խալըսեց : Պատճառն որ ես գիտեմ՝ որ  
 իմ զատուելէս ետեւ յաիշտակող գայլեր պիտի գան  
 ձեր մէջը՝ որ չի պիտի խնայեն հօտին : Այլ ձենէ ալ

մարդիկ պիտի ելլեն՝ որ ծուռումուռ բաներ պիտի  
 խօսին, աշակերտներ իրենց ետեւէն քաշելու: Աւս-  
 տի՛ արթուն կեցէք, ու յիշեցէք որ երկու տարի գի-  
 շեր ու ցորեկ չի դադարեցայ ամէն մէկը արցունքով  
 խրատելու: Այլ հիմայ ձեզ աստուծոյ կը յանձնեմ՝  
 և անոր շնորհաց բանին, որ ինքը կարող է շինել, և  
 ամէն սուրբերուն հետ ձեզի ժառանգութիւն տալ:  
 Չեր մէկուն արծաթին՝ կամ ոսկիին՝ կամ լաթերուն  
 աչք չի զարկի: Առիք ձենէ գիտէք՝ որ ինծի պէտք  
 եղածը և անոնց որ իմ հետս էին՝ աս ձեռքերս դա-  
 տեցան: Այլ ամէն բան ձեզի ցըցուցի. որ ասանկ  
 պէտք է աշխատիլ, և հիւանդներուն պէտ ընել, և  
 տէր յիսուսի խօսքը յիշել, որ ինքը ըսաւ. էվելօք  
 երանելի է տալը՝ քան թէ առնելը:

Յետոյ ուրիշ Եպիսկոպոս մ'ալ աս Աւետարաններուն  
 մէկը կը կարգայ.

Ս. Աւետարան. Յո՛ւ. Իա. 15.

Հիսուս սիմոն պետրոսին ըսաւ. սիմոն յովնանու  
 (որդին), իս ատոնցմէ էվլել կը սիրեմ. ըսաւ իրեն.  
 այ՛ո տէր, դուն ալ գիտես որ քեզ կը սիրեմ. ըսաւ  
 անոր. արածէ իմ գառնուկներս: Աորէն ըսաւ  
 անոր. սիմոն յովնանու (որդին), իս կը սիրեմ.  
 այ՛ո տէր. դուն ալ գիտես որ քեզ կը սիրեմ. ըսաւ  
 անոր. արածէ իմ ոչխարներս: Արբորդ անգամ ը-  
 սաւ անոր. սիմոն յովնանու (որդին), իս կը սիրեմ.  
 պետրոս տրամեցաւ որ իրեք անգամ իրեն ըսաւ թէ՛

իս կը սիրե՞ս, և ըստև անոր, տէր՝ դուն ամէն բան  
գիտես և ամէն բան կը ճանչնաս, և որ ես քեզ կը  
սիրեմ. յիսուս ըսաւ անոր, արածէ իմ ոչխարներս:

Կամ այս.

Ս. Աւետարան. Եւ. 19.

Աւ մէկշարժի օրը իրիկուն էր, ու դուռներն ալ  
գոց, ուր որ աշակերտները ժողվուած էին հրէանե-  
րուն վախէն, յիսուս եկաւ՝ ու անոնց մէջ կայնե-  
ցաւ, և ըսաւ անոնց. ողջոյն ձեզի: Աս որ ըսաւ, իր  
ձեռուրները ու կուշտը ցըցուց անոնց. աշակերտ-  
ներն ալ ուրախացան երբոր տէրը տեսան: Աորէն  
ըսաւ անոնց. ողջոյն ձեզի. ինչպէս որ իմ հայրս իս  
խրկեց, իս ալ ձեզ կը խրկեմ: Աս այս որ ըսաւ՝  
փչեց անոնց, և ըսաւ. առէք հոգին սուրբը. թէ  
որ մէկուն մեղքը թողուք՝ թողուած ըլլայ անոնց.  
Թէ որ մէկունը բռնէք՝ բռնուած ըլլայ:

Կամ այս.

Ս. Աւետարան. Մար. 18.

Յիսուս եկաւ անոնց հետը խօսեցաւ՝ և ըսաւ.  
ամէն իշխանութիւն ինծի տրուեցաւ երկինքի ու երկ-  
րի մէջ. ինչպէս որ հայրը իս խրկեց, ես ալ ձեզ կը  
խրկեմ: Վացէք ասկէ ետեւ՝ աշակերտեցէք բոլոր  
հեթանոսները, մկրտեցէք անոնք հօր՝ և որդւոյ՝ և  
սուրբ հոգւոյն անունովը: Աորվեցուցէք անոնց պա-

Տե՛լ ամէն բաները՝ ինչ որ պատուիրեցի ձեզի , և  
ասա ես ամէն օր ձեր հետն եմ մինչեւ աշխարհիս  
վերջը :

Աւետարանը և Նիկիոյ Հանգանակը և Քարոզը աւետարանն , ընտրեալ Եպիսկոպոսը ( նախորաը հազած ) երկու Եպիսկոպոսներով կը ներկայացուի Գաւառապետ Աբբեպիսկոպոսին , ( կամ օրինաւորապէս այս գործիս համար կարգուած Եպիսկոպոսին ) որ սուրբ Սեղանին քով իր աթուռը նստած է , և զանկիպ ներկայացունող Եպիսկոպոսները կ'ըսեն :

Վերջարգոյ Հայր Տերամբ , քեզի կը ներկայացունենք այս բարեպաշտ և քաջակիրթ անձը , Լպիսկոպոս ձեռնադրուելու :

Հոս Աբբեպիսկոպոսը ձեռնադրութեան համար Աբբայական Հրամանագիրը կը պահանջէ , և կարգացունել կուտայ : Ետքը ընտրուած անձը Աբբային Գլխաւորութիւնը երգմամբ կը հաստատէ , ինչպէս որ անդին Սարկաւազի ձեռնադրութեանը համար հաստատուած է : Յետոյ նաեւ պարտի երգմամբ հաստատել Աբբեպիսկոպոսի պարտաւորեալ հնազանդութիւնը այսպէս .

Երգմամբ Հաստատութիւն Աբբեպիսկոպոսի վերաբերեալ հնազանդութեան .

Լստուծոյ Լ'նուամբը . Լ'Տէն : Լս Լ. — Լպիսկոպոս ընտրեալ Լ. — Եկեղեցւոյն և թանգարանին , կը խոստովանիմ և կը խոստանամ պարտուապատշաճ յարգութեամբ հնազանդիլ Աբբեպիսկոպոսին , և Սնտրապոլտական Լ. — Եկեղեցւոյն և անոնց Հաջորդ-

ներուն. Այսպէս օգնէ ինծի ո՞վ Աստուած, Յիսուս  
Վրիստոսի շնորհքովը:

Այս երգմամբ հաստատութիւնը շրջար Աբբեպիսկոպոս օրհնուած ժամանակը:

Յետոյ Աբբեպիսկոպոսը ներկայ գանուող հաւատացեալները Աղօթքի կը յարգորէ՝ այսպէս ըսելով.

Աղբայրներ՝ Ս. Պուկասու Աւետարանին մէջ գրուած է, որ մեր Փրկիչը Վրիստոս բոլոր գիշերաղօթեց, իր տասներկու Առաքեալները ընտրելէն ու խրկելէն առաջ: Առաքելոց գործքերուն մէջ նաև կը կարդանք որ Անտիոք եղած Առաքեալները Պողոսը ու Նառնաբասը ձեռնադրելու ու արձրկելու ժամանակնին պահք ու ծոմ բռնեցին: Աւստի մեր Փրկիչ Վրիստոսի և իր Առաքեալներուն օրինակին հետեւելով աղօթք ընենք, այս մեզի ներկայացած անձը ընդունելէն ու խրկելէն առաջ այն գործին՝ որ կը յուսանք թէ Սուրբ Հոգիէն կանչուած է:

Յետոյ կ'ըսուի Աիթանի Մաղթանքը. ինչպէս որ անդին Սարկաւազի ձեռնադրութեանը կարգին մէջ կայ. միայն թէ այս խօսքերէն ետեւ (շնորհէ լուսաւորել բոլոր Եպիսկոպոսները) նոյն տեղի հետեւեալ խնդրուածքը կը ձգուի, ու անոր տեղը ասիկայ կ'ըսուի.

Շնորհէ օրհնել այս մեր ընտրեալ Աղբայրը. և իր վրայ քու շնորհքդ խրկէ, որ կարող ըլլայ վայելուչ կերպով իր կոչման Պաշտօնը կատարել, Արկեղեցիիդ շինութեանը, և քու անուանդ փառքին,

պատուոյն և գովութեանը համար .

Պատասխանի . Կ'աղաչենք լսէ մեզի , Տէր բարե-  
բար :

Յետոյ այս Առօթքը կ'ըսուի .

Ըմենակարող Ըստուած՝ պարգեւատու ամենայն  
բարութեան , որ քու Սուրբ Առաջնորդ շնորհքովը  
Լիկեղեցիիդ մէջ Պաշտօնեաներու զանազան Կար-  
գեր հաստատեցիր , 'Այլէ քու բարեգթութեամբդ  
այս ծառայիդ՝ որ հիմայ Լիպսկոպոսութեան Ղոր-  
ծին ու Սպասաւորութեանը կանչուած է . անանկ  
լեցուր անիկայ քու վարդապետութեանդ ճշմարտու-  
թիւնովը , և անանկ զարդարէ անիկայ վարքի անմե-  
ղութիւնով , որ թէ խօսքով և թէ գործքով կարող  
ըլլայ հաւատարմաբար այս պաշտօնիս մէջ քեզի  
ծառայելու , քու Ընուանդ փառքին և քու Լիկեղեց-  
ւոյդ շինութեանը ու բարի կառավարութեանը հա-  
մար , մեր Վրկիչ Տիսուս Վրիստոսի արժանաւո-  
րութեամբը , որ կենդանի է և կը թագաւորէ միան-  
գամայն քեզի՝ և Սուրբ Առաջնորդ հետ , յաւիտեանս  
յաւիտենից . Ըմեն :

Վերջը Արքեպիսկոպոսը իր աթուղ նստած օրհնուելու  
անձին կ'ըսէ .

Լիջբայր՝ որովհետեւ Սուրբ Վիրքերը և շին  
Կանոնները կը հրամայեն որ անմտաբար չընդունուի  
ու չի ձեռնագրուի մէկը Վրիստոսի Լիկեղեցւոյն Առ-

գարարձութեանը մէջ, որ ինքը ծախու անաւ, չէ  
 թէ ուրիշ գիտով մը, հապա իւր արեանը հեղմամ-  
 բը. ուստի քեզ այս Պաշտօնին ընդունելէս առաջ,  
 պիտի քննեմ քեզ քանի մը խնդիրներու մէջ. որ-  
 պէս զի հոս ներկայ գտնուող միաբանութիւնը փոր-  
 ձառու վկայ ըլլայ Աստուծոյ Արկեղեցիին մէջ ինչպէս  
 վարուելու միտք ունենալուդ :

**Արդեօք հաւանեալ ես որ այս Պաշտօնիս ար-  
 գարապէս կանչուած ես մեր Տէր Հիսուս Քրիստոսի  
 կամքովը, և այս Տէրութեանս սահմանադրութիւն-  
 ներովը .**

**Պատասխանի. Այնպէս հաւանեալ եմ :**

**Արդեօք հաւանեալ ես որ Սուրբ Վիրքերը բաւականապէս կը պարունակեն  
 բոլոր ան վարդապետութիւնները, որ Հիսուս Քր-  
 իստոսի հաւատքովը յաւիտենական փրկութեան  
 համար հարկաւ կը պահանջուի : Այլ միտքդ գրած ես  
 նոյն Սուրբ Վիրքերովը քեզի յանձնուած ժող-  
 վուրդը կրթելու, և յաւիտենական փրկութեան հա-  
 մար պահանջուած ուրիշ բան մը չի սորվեցընելու .  
 հապա միայն անիկայ՝ որ կ'ընդունիս Սուրբ Վիր-  
 քերէն վկայուած ու հաստատուած ըլլալ :**

**Պատ. Այս այսպէս հաւանեալ եմ, և ասանկ  
 միտքս գրած եմ Աստուծոյ շնորհքովը .**

**Արդեօք. Ուստի՞ հաւատարմութեամբ պիտի  
 պարապիմ նոյն Սուրբ Վիրքերուն, և աղօթքով Աս-  
 տուծոյ օգնութիւնը խնդրես անոնք ուղիղ իմանա-**

լու . որոնցմով կարող ըլլաս ողջամիտ Արքայե-  
տութեամբ սորվեցընել ու յորդորել . և հակառա-  
կորդները յաղթահարել ու համոզել .

Պատ . Ենչպէս կ'ուզեմ ընել , Եստուծոյ օգնա-  
կանութեամբը :

Երեւիս . Երգեօք պատրաստ պիտի ըլլան ան-  
կեղծ ջանքով հերքել ու մերժել Եստուծոյ Խօսքին  
դէմ եղած ամէն մոլար և օտար վարդապետութիւն-  
ները . և թէ հրապարակաւ և թէ առանձին հրաւի-  
րել ու քաջալերել ուրիշները նոյնպէս ընելու .

Պատ . Պատրաստ եմ այնպէս ընելու Տէրոջը օգ-  
նականութեամբը :

Երեւիս . Երգեօք պիտի ուրանան բոլոր ամբա-  
րըշտութիւնը ու աշխարհական ցանկութիւնները ,  
և զգաստութեամբ , արդարութեամբ ու աստուած-  
պաշտութեամբ ապրիս այս աշխարհիս մէջ , որ բա-  
րեգործութեան օրինակ ըլլաս ուրիշներուն . որ հա-  
կառակորդները ամբշնան քեզի դէմ ըսելու բան մը  
չունենալով .

Պատ . Ենչպէս պիտի ընեմ Տէրոջը օգնակա-  
նութեամբը :

Երեւիս . Երգեօք որչափ որ կրնաս պիտի ջա-  
նանք բոլոր մարդկանց մէջ հեզութիւն , սէր և խա-  
ղաղութիւն պահելու ու ցըցունելու . և պիտի խը-  
րատես ու պատժես ան ամէնքը՝ որ խռովարար , ան-  
հնազանդ ու պատժապարտ են քու Ապիսկոպոսական  
Թեմիդ մէջ , Եստուծոյ Խօսքովը ունեցած իշխա-

նութեամբդ, և այս Տէրութեանս օրէնքովը՝ որ քեզի պիտի տրուի:

Պատ. Այնպէս պիտի ընեմ, Աստուծոյ օգնականութեամբը:

Արդեւիս. Արդեօք հաւատարիմ պիտի ըլլամ ուրիշներուն կարգ տուած, անոնք խրկած կամ ձեռնադրած ժամանակդ:

Պատ. Հաւատարիմ պիտի ըլլամ, Աստուծոյ օգնականութեամբը:

Արդեւիս. Արդեօք ինքզինքդ հեղ պիտի ցըցունես, և ողորմած պիտի ըլլամ Քրիստոսի սիրուն համար աղքատներուն, կարօտներուն և անօգնական օտարականներուն:

Պատ. Այնպէս կ'ուզեմ ցըցունել ինքզինքս, Աստուծոյ օգնականութեամբը:

Յետոյ Արքեպիսկոպոսը ոտքի վրայ կանգնած՝ կ'ըսէ.

Ամենակարողն Աստուած՝ մեր երկնաւոր Հայրը, որ շնորհեց քեզի այս ամէնքը կատարելու կամքը. Շնորհէ ևս քեզի անոնք՝ ի գործ դնելու զօրութիւնը ու կարողութիւնը, որ քեզմով սկսած գործը կատարելով, վերջին օրը անպարսաւ ու կատարեալ հանդիսանաս, մեր Տէր Հիսուս Քրիստոսի շնորհքովը. Ամէն:

Յետոյ ընտրեալ Եպիսկոպոսը ուրիշ Եպիսկոպոսական զգեստները կը հագնի, և ծունր դրած՝ անոր վրայ կ'երգէ.

ցուի կամ կ'ըսուի « Եկ Սուրբ Հոգին » Արքեպիսկոպոսը սկսելով՝ և Եպիսկոպոսները մուս ներկայ դանուողներուն հետ մեկտեղ փոփոխակի կը պատասխանեն .

Եկ Սուրբ Հոգի կենդանարար ,  
 Գալուսող հոգւոյս շունչ ազգարար ,  
 Երկնային հրով մեզ հրազինեա ,  
 Եզդմամբ լուսոյդ միտս պատուաստեա .  
 Էմենասուրբ Հոգիդ ( ) ծման ,  
 Սերպատուեալ Վահանայութեան ,  
 Եօթնասիւնեակ տաճարդ հաստեա ,  
 Եօթնեակ շնորհօք մեզ զարդարեա .  
 ( ) րհնեալ ( ) ծմամբ Երկնէ Բնութեալ ,  
 Կեանք , Հուր Սիրոյ Գիւր շնորհեալ .  
 Յաւերժական լոյսըդ ծագեա ,  
 Բնածին խաւարս փարատ ցայտեա .  
 Երարչակից կենդանացո ,  
 Սահացեալքըս Փշմամբդ կեցո .  
 Եռատարուղիս շնորհս պարգեւեա ,  
 Գեղեցկադէմ յարկ յարդարեա .  
 Սպասելոց միսիթարութիւն ,  
 Կեանք և կենաց խաղաղութիւն .  
 Յրուեալ հօտըն մի ժողովեա ,  
 Էնհաշտ ոգւոյ տէրըն ցրուեա .  
 Ուր Հոգիդ Տեառն առաջնորդեաց ,  
 Ընդդիմութեան ոգիս ջնջեաց .  
 Եղն բաժանեալ լեզուս աղգաց ,  
 Աքանջելեօք միաբանեաց .

Կոյն և նման շօր և Որդւոյ,  
 շողիդ Լ'նեղ և շամագոյ,  
 շողիդ Լ'ստուած, շայր և Որդին,  
 Որպէս միշտ էր, և եղիցին.  
 Սինըդ Երից, Կոցանէ ես,  
 Երեսակ Սիու թիւնդ, Վեղ ուսո մեզ,  
 Ոչ սկսեալ, ոչ դադարեալ,  
 Կարգեալ, թուեալ, և միշտ օրհնեալ.  
 Բաշխողդ շնորհաց ցանգ օրհնեսցուք,  
 Երրորդու թիւնդ միշտ գովեսցուք.  
 շօր, Որդւոյ, Վեղ միանգամայն,  
 Փառք և պատիւ, համանգամայն  
 Կամ այս.

Եւ Սուրբ շողիդ յաւերժական,  
 Օրհնեալ Բաշխումդ Սուրբ Արեւական.  
 շօրէ, Որդուէ նոյն Սիու թեան,  
 Լ'ստուած սիրոյ և հաշտութեան.  
 Եւ յեղու լեր սրտից, մասց,  
 շայցմամբ խնդրեմք Եղբումդ շնորհաց.  
 Որով արդար և երկիւղած,  
 Լեալ հասանել փափաքանաց,  
 ՂՂմարտապէս Սիւ թարիւ,  
 Յամենայնի Օրացուցիւ.  
 Ա երին տուրքն միշտ խնդրելի,  
 Լ'նքննելի անպատմելի.  
 Եղբուր, Բաշխումն կենդանութեան,

Արկնաժառանգ ուրախութեան,  
Հուր լուսափայլ, Աէր քաղցրութեան,

( ) ծումն օծելոյ հոգեսիրութեան,  
Լուստարաշն ձիրդ բաղմարդին,

Ակեղեցւոյ հաստատութիւն,  
Սնան Լստուծոյ օրէնս գրես,

Հաւատացեալ սրտի տպես,  
Ըստ խոստմանքդ, Տէր մեր Լստուած,

Պարգևիչ ես խօսուն շնորհաց,  
Օխ ուր ուրեք քո օգնութեամբ,

( ) Ըր հնել Լստուած միշտ գովութեամբ,  
Ով Սուրբ Հոգի, լոյսդ առաքես,

Խաւար միտրս լուսաղարդես,  
Սրտեռանդըն կեալ սրբութեամբ,

Յայգ և ցերեկ ծառայութեամբ,  
Տկարութեանս լեր զօրութիւն,

Գլորելոցս հաստատութիւն,  
Լշխարհ, դեւըն, զինեալն մարմին,

Չը յաղթեն մեզ ամենեւին,  
Հեռի արա թշնամիս մեր,

Հաճ մեծ օգտիս պարգևիչ լեր,  
Լստուածային և մարդկային,

Հաշտութիւնքդ տուր մեր սրտին,  
Լուսշնորդ սուրբ Լեւտարանին,

Ճարտարապետ հոգւոյս խորանին,  
Խնդրեմք մաքրեա մէզըս մեղաց,

Եւ ըզգեցո լոյսըն փառաց,

Հողանիւթեայ սրբեալ Վրորդող,  
 Սարմին եղելոց հոգի Շնորհող,  
 Վագուես սիրով աղանակերպ,  
 Սարդիկ ծնանիս աստուածակերպ,  
 Կապ թշնամոյն խղեալ ընկեա,  
 Լուծեալ անգամս, Տէր, Վրեւ յօղեա,  
 Վոյն և վերջին օրն ահագին,  
 Գու Սիւթար մարդկան ազգին,  
 Լոյծ երկպառակ չարին հնարս,  
 Հաստեա գործուն սուրբ հաւատս,  
 Խաղաղութիւն միաբանութեան,  
 Շնորհեա բոլոր Վրիստոնէութեան,  
 Ենց մեզ, որ Վրեւ Հայր ճանաչի,  
 Վոյն և Որդին փառաւորի,  
 Հօրէ Որդուէ Բղխումիդ յայտնեա,  
 Սի միայն Ըստուած, Լորեքանձնեայ,  
 Լորդեսցուք միշտ երգ օրհնութեան,  
 Համագոյակ Սուրբ Սիութեան,  
 Հօր Ըստուծոյ Օրհնեալ Որդւոյն,  
 Սիանգամայն շնորհաց Հոգւոյն,  
 Ըրդ աղաչեմք Տէր մեր փրկչին,  
 Որ առաքէ իւր Սուրբ Հոգին,  
 Գաւանողացս նորա Ընուան,  
 Ըժժըմ, և միշտ, և յաւիտեան. Ընէն:  
 Ասիկոյ լմննալն ետեւ Լորեպիտկոսոսը կ'ընէ:  
 Ո՛վ Տէր, Ընէ մեր աղօթքին.

Պատասխանի . Եւ մեր աղաղակը քեզի հասնի .

Եղթեմք .

Ո՛վ Ամենակարող Աստուած՝ և ամենողորմ  
 և այր, որ քու անհուն բարութեամբդ քու միածին  
 Հիսուս Քրիստոս ամենասիրելի Որդիդ շնորհեցիր  
 մեր Փրկիչը և յաւիտենական կենաց Առաջնորդը  
 ըլլալու, և որ ան իր մահուամբ մեր փրկութիւնը  
 կատարելէն ու երկինքը համբառնալէն ետեւ, իր  
 առատաբաշխ պարգեւները մարդկային ազգին վրայ  
 լիութեամբ իջեցուց, ոմանք Առաքեալ, ոմանք Սար-  
 գարէ, ոմանք Աւետարանիչ, ոմանք և ու-  
 մանք Վարդապետ ընելով իր Այկեղեցիին շինու-  
 թեանը և կատարելութեանը համար . Ա՛ղաչենք  
 քեզի անանկ շնորհք պարգեւէ այս քու ծառայիդ,  
 որ միշտ պատրաստ ըլլայ քու սուրբ Աւետարանդ տա-  
 րածելու՝ քեզի հետ հաշտութեան բերկրալի լուրե-  
 րը, և իրեն տրուած իշխանութիւնը չէ թէ քակելու,  
 հապա փրկելու համար գործածելու, չէ թէ վնասե-  
 լու, հապա օգնելու . որպէս զի հաւատարիմ և ի-  
 մաստուն ծառայի մը պէս ժամանակին քու ընտա-  
 նիքիդ իրենց բաժինը տալով, վերջը յաւիտենական  
 ուրախութեան մէջ ընդունուի, մեր Տէր Հիսուս  
 Քրիստոսի շնորհքովը, որ Վեզի՝ և Սուրբ և ոգ-  
 ւոյն հետ կենդանի է և կը թագաւորէ մէկ Աստուած  
 մը, յաւիտեանս յաւիտենից . Ամէն .

Յեառայ Արքեպիսկոպոսը և միւս ներկայ գտնուող Եպիս-  
կոպոսները իրենց ձեռուըները ան ընտրեալ Եպիսկոպոսին  
գլխուն վրայ կը դնեն , անիկայ անոնց առջին ծնրագրած  
ըլտով , և Արքեպիսկոպոսը կ'ըսէ .

Ընդունէ Սուրբ Հոգին , Ըստուծոյ Ազնկեցիին  
մէջ Ապիսկոպոսի մը Պաշտօնին և Սատակարարու-  
թեանը համար , որ մեր ձեռնադրութեամբը հիմայ  
քեզի կը յանձնուի , Հօր , և Որդւոյ , և Սուրբ Հոգ-  
ւոյն Ընուամբը : Այլ յիշէ որ Ըստուծոյ շնորհքը կեն-  
դանացունես որ քեզի տրուեցաւ մեր այս ձեռնա-  
դրութեամբը . ինչու որ Ըստուած մեզի երկչտու-  
թեան հոգին չէ տուած , հապա զօրութեան , սիրոյ  
և զգաստութեան :

Յեառայ Եպիսկոպոսը Աստուածաշունչը անոր կը յանձնէ  
ըսելով .

Ունկնդիր եղեր ընթերցման , յորդորման և  
վարդապետութեան : Ստածէ այս Վրքին մէջ գրա-  
նուած բաներուն վրայ , Ըրթուն եղիր անոնց մէջ ,  
որ անկէ առաջ եկած յառաջագիմութիւնը ամենուն  
յայտնի ըլլայ : Օգոյշ եղիր քու անձիդ և վարդա-  
պետութեանդ , և թիրեղիր անոնք կատարելուն մէջ ,  
ինչու որ ասանկ ընելով քու անձդ կ'ապրեցունես ,  
ունակ անոնք՝ որ քեզի կը լսեն : Վրխտոսի ոչխար-  
ներուն հովիւ եղիր , չէ թէ գայլ . սնունդ տուր ա-  
նոնց , ու չէ թէ յափշտակէ : Տկարներուն թիկունք  
եղիր , հիւանդները բժշկէ , կոտրտածները կապէ ,  
մոլորածները գարձուր , ու կորսուածները փնտրուէ :

Անանկ գթութիւն ունեցիր, որ չափադանց անհոգ չըլլաս. անանկ պատիժ տուր, որ ողորմութիւնը չի մոռնաս. որ Հովուապետին երեւնալու ժամանակը կարող ըլլաս ան անթառամ միտաց պսակը ընդունելու, մեր Տէր Հիսուս Վարիստոսի շնորհքովը. Ա՛ճն:

Վերջը Արքեպիսկոպոսը Հաղորդութեան Խորհուրդին կ'սկսի. որուն հետ ան նոր ձեռնադրուած Եպիսկոպոսը (ուրիշներուն հետ մեկտեղ) կը հազարդուի:


Եւ վերջին Մաղթանքին տեղը, անմիջապէս Օրհնութեան ան առաջ այս Աղօթքները պիտի ըսուին:

Ո՛վ ամենադուր շայր, կ'աղաչենք քեզի քու երկնային օրհնութիւնդ այս քու ծառայիդ վրայ խորհելու, և անանկ զարդարելու անիկայ քու Սուրբ Հոգւովդ, որ քու Խօսքդ քարոզելով չէ թէ միայն նախանձաւոր ըլլայ ամենայն երկայնմտութեամբ և վարդապետութեամբ յանդիմանելու, աղաչելու և սաստելու. հապա միանգամայն խօսքով, վարքով, սիրով, հաւատքով, ողջախոհութեամբ և մայքրութեամբ ընտիր օրինակ մը ըլլայ հաւատացեալներուն. որպէս զի հաւատարմութեամբ իր ընթացքը կատարելով, վերջին օրը ան արդար Վաստաւոր Տիրոջը պահած պսակը ընդունի, որ կենդանի է և կը թագաւորէ միշտ մէկ Աստուած մը, շօր և Սուրբ Հոգւոյն հետ, յաւիտեանս յաւիտենից. Ա՛ճն:

Այնխելք կ'աղաչենք ո՛վ Տէր բոլոր մեր գործքե-

բուն մէջ քու գթութեանդ պարգևովը . և զարգացու  
 ցուր մեզ քու անդադար օգնութեամբդ , որ մեր ամեն  
 գործքերը քու շնորհքովդ սկսելով , շարունակելով և  
 կատարելով , կարող ըլլանք քու սուրբ  
 Լսունդ փառաբերելու . և հուսկ յետոյ քու բարե-  
 գթութեամբդ յաւիտենական կեանքը վայելելու ,  
 մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Լ՛Քն :

Լստուծոյ խաղաղութիւնը՝ որ ամեն միտքերէ  
 վեր է , Լստուծոյ և մեր Տէր Հիսուս Վրիստոս իր  
 Որդւոյն գիտութեամբը ու սիրովը պահպանէ ձեր  
 սիրտերը և միտքերը . և ամենակարող շօր Լստուծոյ ,  
 և Որդւոյ և Սուրբ շոգւոյն օրհնութիւնը իջնայ ձեր  
 վրայ , և միշտ ձեր ամենուրեք վրայ ըլլայ . Լ՛Քն :



# ՊԼԱՆԵՒ

## Ե Ղ ( ) Թ Ի Ը

ՀՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՀԱՆԴԵՐԶ  
ՈՐ ԱՅՍ ՏԵՐՈՒԹԵԱՆԸ ԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ  
ԵՒ ՄԱՏՈՒԹՆԵՐՈՒՆ ՄԵՋ ԿԸ ՄԱՏՈՒՑՈՒԻ  
ԱՄԷՆ ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍԻ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՕՐԸ  
ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆԸ ԵՐՋԱՆԿԱԲԱՐ  
ԱԹՈՒԸ ԵԼԼԵԼՈՒՆ ՀԱՄԱՐ

Այս Պաշտամունքը Տօնախմբութեան Օրերը գործա-  
ծուած Պաշտամանք բողոքովին նոյնն է . բայց 'ի ան տեղուանք-  
ներէն՝ որոնք որ հոս նշանակուած են :

Թէ որ այս օրս Վերակի Աւուր պատահի , աւամբողջ  
Պաշտամունքը բողոքովին պիտի կատարուի . ինչպէս որ կը  
հետեւի . սակայն թէ որ ուրիշ աւուր պատահի , նախնթաց  
Վերակին Եկեղեցւոյ մէջ հրապարակաւ պարտի ծանուցուիլ :

Առաւօտեան Ազօթքը այս տուներովը կ'սկսի .

Ուստի կ'աղաչեմ՝ որ ամէն բանէ առաջ աղօթք  
ըլլուի , խնդրուածք , պաղատանք , գոհութիւններ՝  
ամէն մարդու համար : Մանաւանդ թաղաւորներուն  
և բողոք իշխաններուն համար , որ խաղաղութեամբ  
ու հանդարտութեամբ մեր կեանքը անցունենք , ա-  
մէն աստուածապաշտութիւնով ու սրբութիւնով : Ին-

չու որ ան է բարին և ընդունելին մեր փրկիչ աստու-  
ծոյն առջեւը . ( Ա . Տիմ . բ . 1 , 2 , 3 : )

Թէ որ ըսենք թէ մենք մեղք մը չունինք , ան-  
ձերնիս կը խաբենք , ու մեր մէջը ճշմարտութիւն չի  
կայ : Զապա թէ որ մեր մեղքերը խոստովանինք , հա-  
ւատարիմ է ան ու արդար մեր մեղքերը թողելու , և  
բոլոր անիրաւութենէ մեզ սրբելու . ( Ա . Հիմ . ա .  
8 , 9 : )

Եկայք ցնծացուք Սաղմոսին տեղը պիտի ըսուի կամ  
երգեցուի այս Հետեւեալ Երգք . որուն մէկ տունը Քահա-  
նան և միւս տունը Դպիրները ու Ժողովուրդը պիտի ըսեն .

Ո՛վ տէր՝ մեր տէրը , ինչպէս սքանչելի է քու  
անունդ բոլոր երկրի վրայ . ( Սաղ . ը . 1 : )

Ո՛վ տէր , մարդը ո՞վ է՝ որ դուն անոր յայտնուե-  
ցար . կամ մարդուն զաւակը՝ որ անիկայ բանի մը  
տեղ կը դնես . ( Սաղ . ճիսգ . 3 : )

Ճիշատակ ըբաւ իր սքանչելիքներուն համար .  
տէրը ողորմած ու գթած է . ( Սաղ . ճԺ . 3 : )

Սարգկանց որդիքները փառք տան տէրոջը , ա-  
նոր ողորմութիւններուն ու սքանչելիքներուն հա-  
մար . ( Սաղ . ճզ . 21 : )

Դուն մեզ ընդունող ես ո՛վ աստուած , և քու  
օծեալիդ երեսը նայէ . ( Սաղ . ճգ . 8 : )

Իմ շաւիղներս քու ճամբուդ մէջ հաստատէ , որ  
իմ գնացքներս չի սահին . ( Սաղ . Ժզ . 5 : )

Իմագաւորին օրերուն օրեր էվելցուր . անոր վը-

բայ փառք ու մեծ վայելութիւն պիտի դնես . ( Սաղ .  
Կ . 6 : Ի . 5 : )

Լստուծոյ առջին ողորմութիւնը ու ճշմարտու-  
թիւնը յաւիտեան կայ ու կը մնայ՝ ո՛վ որ անկէ կը  
խնդրէ . ( Սաղ . Կ . 7 : )

Լնոր օրերը արդարութիւնը պիտի ծագի . ան  
քու սահմաններուդ խաղաղութիւն գրաւ . ( Սաղ .  
Հա . 7 : Ճ/սէ . 5 : )

Լնոր թշնամիներուն ամօթ պիտի հագցունեմ .  
սակայն անոր վրայ իմ սրբութիւնս պիտի ծաղկի .  
( Սաղ . Ճլա . 16 : )

( ) րհնեալ ըլլայ իսրայէլի տէր աստուածը , որ  
ինքն է միայն սքանչելիքներ ընողը . ( Սաղ . Հա . 20 : )

Լս անոր սուրբ փառքին անունը յաւիտեան  
օրհնեալ է . բոլոր երկիրը անոր փառքովը պիտի լը-  
ցուի . եղիցի եղիցի . ( Սաղ . Հա . 20 : )

Փառք շօր , և Որդւոյ , և շոգւոյն Սրբոյ .

Որպէս էր՝ի սկզբանէ , այժմ , և միշտ , և յաւի-  
տեանս յաւիտենից . Լ՛մէն :

Լուր պատշաճի Սաղմոսները . ԺԹ . Ի . 8 .

Լուր պատշաճի Լնթերցուածները .

Լուսին Լնթերցուած Հետուոյ . Լ . մինչև  
10 համարը .

Օքեզ Լստուած ( ) րհնարանեմք .

Երկրորդ Լնթերցուած . շոգ . Ժգ .

Եղադակեցէք առ Տէր .

Աստիճակայ շանգանակէն ետեւ մտտայուելու Ազա-  
շանքները ասոնք պիտի ըլնան .

Վրահանան . Ո՛վ Տէր , յայտնէ մեզի քու ողոր-  
մութիւնդ .

Պատասխանի . Եւ շնորհէ մեզի քու փրկութիւնդ .

Վրահ . Ո՛վ Տէր , Կեցցէ Թաղուհին .

Պատ . Որ քեզի կ'ապաւինի .

Վրահ . Օգնութիւն խրկէ անոր քու սրբու-  
թեանդ տեղէն .

Պատ . Եւ միշտ պաշտպանէ անկկայ քու զօրու-  
թիւնովդ :

Վրահ . Սի՛ր թողուր որ իր թշնամիները իրեն  
վրայ առաւելութիւն մը ունենան .

Պատ . Սի՛ր թողուր որ ամբարիշտները զինքը վը-  
նասելու մտենան :

Վրահ . Օգեստաւորէ քու Պաշտօնեաներդ ար-  
դարութիւնով .

Պատ . Եւ ուրախացուր քու սուրբերդ :

Վրահ . Ո՛վ Տէր , փրկէ քու ժողովուրդդ .

Պատ . Եւ օրհնէ քու ժառանգութիւնդ :

Վրահ . Ո՛վ Տէր , Խաղաղութիւն շնորհէ այս  
մեր ժամանակը .

Պատ . Որովհետեւ քենէ 'ի զատ մէկը չի կայ որ  
մեզի համար պատերազմի , բայց դուն միայն ո՛վ Աս-  
տուած :

Վրահ . Ո՛վ Տէր , զօրութեան աշտարակ մը եզիր  
մեզի .

Պատ. Սեր թշնամիին դիմացը :

Վահ. Սվ Տէր , լսէ մեր աղօթքին .

Պատ. Լս մեր աղաղակը քեզի հասնի :

Առտուան Աղօթքին առաջին Մաղթանքին տեղը , հե-  
տեւեալ շնորհակարութեան Մաղթանքը պիտի ըսուի , թա-  
գուհւոյն վեհափառութեանը աթոռը ելլելուն համար :

Լ՛մենակարող Լ՛ստուած , որ բոլոր աշխարհի  
թագաւորութիւնները կը կառավարես , և քու բա-  
րեհաճութեամբդ կարգի կը դնես անոնք . Լ՛նկեղծ  
մտօք շնորհակալութիւններ կը մատուցանենք քեզի ,  
որ այս օրս քու Լ՛ղախինդ՝ մեր Լ՛շխանուհի Ս իբքո-  
րիայ Թագուհին քու հաճութեամբդ այս Թագա-  
ւորութեանս աթոռը հանեցիր : Թող քու իմաստու-  
թիւնդ իրեն առաջնորդ ըլլայ , և քու բազուկդ զօ-  
րացունէ անիկայ : Թող արդարութիւնը , ճշմար-  
տութիւնը , սրբութիւնը , խաղաղութիւնը , սէրը և  
ամէն առաքինութիւնները՝ որ Վրիստոնէական  
Վաւանութիւնը կը զարդարեն , իր օրերը ծաղկին .  
ուղղէ իր ամէն խորհուրդները ու ջանքերը քու  
փառքիդ և իր ժողովուրդին երջանկութեանը հա-  
մար , և շնորհք տուր մեզի որ խղճմտանքի պատճա-  
ռաւ զուարթութեամբ ու կամաւ իրեն հնազանդինք ,  
որ ոչ մեր մեղանշական կիրքերը ոչ ալ մասնաւորա-  
պէս մեր առանձին շահասիրութիւնները անոր հա-  
սարակութեան օգտին համար ունեցած հոգերը ու-  
նայնացունեն , թող ինքը միշտ իր ժողովուրդին սիր-

տեղը շահի՝ որ ամենեւին պահասութիւն մը չընեն ,  
 թէ անոր Լնձին պարտաւորեալ յարգութեանը մա-  
 սին , և թէ իւր իշխանութեանը յարգանքը հպատա-  
 կութեանը մասին . թող անոր թագաւորութիւնը մըջ-  
 տատեւ ու ծաղկեալ մնայ . և պսակէ անիկայ հան-  
 դերձեալ կեանքին մէջ անմահութեամբ , մեր Տէր  
 ( ) իսուս Վրիստոսի շնորհքովը . ԼՄԷ :

Լիթանի Մաղթանքին աւարտմանը ( որ միշտ այս օրս  
 ծառուցանելու է ) - խոնարհեալ կ'աղաչենք Հայր-Մաղ-  
 թանքին վերջը , թագուհին և Աբբայազուն Ընտանիքին  
 համար այս հետեւեալ Աղօթքը կ'ըսուի :

Ո՛վ Տէր՝ մեր Լստուածը , որ երկինքի ու երկրի  
 ամէն բաներուն կ'իշխես ու անոնք կը պահպանես .  
 Ընդունէ մեր աղաչանքները մեր անկեղծ շնորհակա-  
 լութեամբը մեր Իշխանուհի Տիկին Ալիքորիային  
 համար , որ այս օրս քու շնորհքովդ ու նախախնա-  
 մութեամբդ մեր վրայ թագուհի կարգեցիր . և օրհ-  
 նէ՛ միանգամայն անոր հետ Լստելիդ ԼՍրի թագ-  
 ուհին , Լլպերտ Ուէյլի Իշխանը , և բոլոր Լը-  
 քայազուն Ընտանիքը . որ անոնց ամէնքը միշտ քու  
 բարութեանդ ապաւինելով , և քու կարողութեամբդ  
 պաշտպանուելով , և քու բարեշնորհ ու անվախճան  
 մարդասիրութեամբդ պսակուելով , քու սովիդ եր-  
 կար ու երջանիկ կեանք վարեն առողջութեամբ , խա-  
 ղաղութեամբ , ու բախտութեամբ ու փառքով այս աշ-  
 խարհիս վրայ . և մեռնելէն ետեւ երկնից թագաւո-

ըութեանը մէջ յաւիտենական կեանքը ու փառքը  
 ընդունին, մեր Վրկիչ Հիսուս Քրիստոսի արդեամբ  
 բոլոր միջնորդութեամբը. որ միանգամայն Հօրը և  
 Սուրբ Հոգւոյն հետ կենդանի է և կը թագաւորէ  
 միշտ մէկ Աստուած մը, յաւիտեանս յաւիտենից.  
 Ա՛ն :

Յետոյ այս Մաղթանքը կը հետեւի թագուհին հա  
 մար. իր ամէն թշնամիներուն գէժ Աստուծմէ պաշտպանու  
 թիւն ինդրելու համար :

Ս՛վ ամենողորմ Աստուած, որ քու աղախինդ մեր  
 Ալիքիորիա Իսաբուհին իր նախնեացը աթոռին վը  
 րայ կարգեցիր. Խոնարհեալ կ'աղաչենք պաշտպա  
 նէ անիկայ նոյն աթոռին վրայ ամէն վտանգներէն՝  
 որոնց մէջ կրնայ իյնալ. հովանաւորէ զանիկայ ա  
 նօրէններուն ըզմութենէն և շարագործներուն ա  
 պստամբութենէն. տկարացոր անոր թշնամիներուն  
 ձեռքը, փարատէ անոնց չար խորհուրդները, և ու  
 նայնացոր անիրաւ գործառնութիւնները. որ ոչ  
 ապստամբներուն ու իցէ գաղտնի միաբանութիւնը,  
 և ոչ ալ յայտնի բռնադատութիւն մը իւր Տէրու  
 թեանը խռովութիւն մը պատճառէ. հապա որ քու  
 թեւերուդ հովանաւորութեամբը պահպանուած, և  
 քու զօրութեամբդ պաշտպանուած ամէն հակառա  
 կութիւններուն յաղթէ. որպէս զի աշխարհս ճանչ  
 նայ քեզ որ դուն ես անոր պաշտպանը և ամենազօր  
 ազատիչը ամէն գժուարութիւններուն և հակառա

կութիւններուն մէջ , մեր Տէր Հիսուս Վրիստոսի  
չնորհքովը . Մէն :

Յետոյ Բառլամէնդի բարձր Ատեանին Աղօթքը կը  
հետեւի , թէ որ նոյն ժամանակը ժողովուած ըլլան :

Հաղորդութեան Պաշտամանը մէջ՝ անմիջապէս Առա-  
քելոց Թուղթը չի կարդացուած . Թագուհին համար եղած  
Մաղթանքին և նոյն Աւուր պատշաճին տեղը պիտի ըսուի  
այս հետեւեալ Աղօթքը Թագուհին համար , իբր այս Եկե-  
ղեցւոյս Գլխաւոր կառավարը .

Մի վ ամենօրհնեալ Տէր , որ Վրիստոնեայ իշ-  
խաններ կանչեցիր քու Հաւատքիդ պաշտպանու-  
թեանը համար , և անոնց պարտքը ընել տուիր հո-  
գեւոր երջանկութիւնը յառաջացունելը , միանգա-  
մայն իրենց ժողովուրդին օգուտը , Խոնարհ և ե-  
րախտագէտ սրտիւ կը խոստովանինք մեր վրայ ունե-  
ցած քու ամենամեծ բարութիւնդ , քու Մղխինդ՝  
մեր ամենաբարեգուծ Թագուհին այս Եկեղեցւոյս  
և Մզգիս վրայ կանգնեցունելուդ համար . Տուր անոր  
կ'աղաչենք ան ամէն երկնային պարգեւները , որ ա-  
սանկ գերագոյն յանձնարարութեան մը հարկաւոր  
են . Շնորհէ որ անոր յանձնուած քու՝ իւր Մտու-  
ծոյն գործքը բարեյաջողութեամբ կատարուի . Շը-  
նորհէ որ մեր մէջը հաստատուած քու Ճշմարիտ կը-  
րօնքիդ ծառայութեանը համար ունեցած իր խոր-  
հուրդները յաջողուած տեսնայ . Այս շնորհէ որ քու  
Ճշմարտութեանդ պաշտպանութեանը և յառաջա-  
դիմութեանը օրհնեալ մէկ միջոց մը ըլլայ , որ տեղ

որ նոյն ճշմարտութիւնը հալածուի ու հարստահարուի . Տ շնորհէ որ կեղծաւորութիւնը ու Պղծութիւնը , Աւելորդապաշտութիւնը ու կռակապաշտութիւնը իր առջեւէն հեռու ըլլան . Սի թողուր որ Հերետիկոսութիւնները և մոլոր Ս շարդապետութիւնները Արկեղ'ցւոյ խաղաղութիւնը խանգարեն . ոչ ալ սնտոսի պատճառներէ առաջ եկած Հերձուածողութիւնները և Արկպառակութիւնները տրկարացունեն անկէպ . Հապա շնորհէ մեզի որ մէկ սիրտ ու մէկ հոգի ըլլանք քեզի՝ մեր Աստուծոյն ծառայելու , և քու կամքիդ պէս անոր հնազանդելու . Այս որ այս օրհնութիւնները դարերէ դարեր յարատեւելու համար , շնորհէ որ իւր գերդաստանին մէջ միշտ մէկը անպակաս գտնուի այս Սիացեալ Տէրութեան կառավարութեանը մէջ իրեն յաջորդելու . որ մեր որդիքները անոր զաւկըներուն զաւկըները տեսնան , և խորայէլի վրայի խաղաղութիւնը : Անանկ որ մենք՝ որ քու թողովուրդդ ենք և քու արօտիդ ոչ խարները , քեզի շնորհակալութիւն մատուցանենք յաւիտեան , և քու գովութիւնդ պատմենք որդւոց որդի ամէն ժամանակ . Ա՛ն :

Թուղթ Պետրոսի Առաքելոյ . Ա . Թուղթ . Բ . 11 .

Սիրելիներ կ'ազաշեմ՝ օտարականներու ու պանդուխտներու պէս ետ քաշուիք մարմնաւոր ցանկութիւններէն , որ հոգիներուն դէմ կը պատերազմին : Այլ քերնիդ հեթանոսներուն մէջ պարկեշտ ցըցու-

նելով . որ ինչ բանով ձեզ չարագործներու պէս  
բամբասեցին նէ , ձեր բարի գործքերը տեսնալով  
փառաւորեն զատուած այցելութեան օրը : Ընա-  
զանգ եղիք ամէն մարդկային ստեղծուածներու՝ տէ-  
րօջը համար . թէ որ թագաւորին՝ գերագոյն մեկու  
մը պէս . թէ որ դատաւորներու՝ որպէս թէ անկէ  
խրկուած՝ չարագործները պատժելու , ու բարեգործ-  
ները գովելու : Ինչու որ աստուծոյ կամքը ասանկ է ,  
որ բարեգործները պապանձեցունեն անմիտ մարդոց  
տղիտութիւնը : Ազատի պէս ըլլալով , ու չէ թէ  
ազատութիւնը չարութեան ծածկոցի մը պէս ունե-  
նալով . հապա աստուծոյ ծառաներուն պէս : Ա-  
մէնքը պատուեցէք . եղբայրսիրութիւնը սիրեցէք .  
աստուծակ վախցէք . թագաւորները պատուեցէք :

Ս. Աւետարան . Մատթ . Իր . 16 .

Այս իրենց աշակերտները հերովդէսեաններուն  
հետ մեկտեղ անոր խրկեցին՝ և ըսին . վարդապետ՝  
գիտենք որ ճշմարիտ ես , ու աստուծոյ ճամբան ճշ-  
մարտութիւնով կը սորվեցընես , ու մէկը հոգդ չէ ,  
ու մարդու երեսպաշտութիւն չես ըներ : Աւատի ըսէ  
մեզի , ի՞նչպէս կը թուի քեզի . կայսրին տուրք տալ  
պէ՞տք է՝ թէ չէ : Էջիտուս գիտցաւ անոնց խորաման-  
կութիւնը՝ ու ըսաւ . իս ինչո՞ւ կը փորձէք կեղծա-  
ւորներ : Էջցուցէք ինձի ան տուրքին ստակը . ա-  
նոնք ալ դահեկան մը տուին իրեն : Այս ըսաւ անոնց .  
որո՞ւնն է այս պատկերը կամ գիրը : Ա՞յն՝ կայսե-

բինը, ան տտենը ըսաւ իրենց, գացէք՝ կայսերինը՝  
կայսերին տուէք, ու աստուծոյն՝ աստուծոյ : Այրբոյ  
լսեցին՝ զարմացան, և թողուցին անիկայ ու գացին :

Նիկիոյ Հանգանակէն ետեւ Քարողը կուգայ .

Ընծայութեան Աղօթքին ժամանակը այս Ացորդը պիտի  
կարդացուի .

Անանկ թող լուսաւորէ ձեր լոյսը մարդկանց  
սուջին, որ տեսնան ձեր բարի գործքերը, ու փառա-  
ւորեն ձեր հայրը՝ որ երկինքն է . (Սաղմ . և . 16 :

(Քրիստոսի Եկեղեցւոյն բոլոր վեճակին համար) ըսուած  
Աղօթքէն ետքը հետեւեալ Մաղթանքները պիտի ըսուին .

Աղօթք Միութեան .

Ո՛վ Աստուած՝ Խաղաղութեան Իշխան մեր մի  
միայն Փրկիչ և Տէր Հիսուս Քրիստոսի Հայրը .  
պարգեւէ մեզի քու շնորհքդ որ սրտի մտօք մտքեր-  
նիս բերենք ան ամենամեծ վտանգները՝ որոնց մէջ  
կ'իյնանք մեր թշուառ երկպառակութիւններովը :  
Տ շնջէ ան ամէն տեսակ ատելութիւնը ու նախապա-  
շարմունքը, և ամէն բարի Միութեան ու համակա-  
մութեան արգելք տուող բաները, որ՝ ինչպէս որ  
միայն մէկ Սարմին մը կայ, մէկ Հոգի մը, և մէկ  
Յոյս մը մեր կոչմանը . մէկ Տէր, մէկ Հաւատք, մէկ  
Սկրտութիւն, մէկ Աստուած և մէկ Հայր մեր ա-  
մէնուս . անանկ ալ ասկէ ետեւ մենք ամէնքնիս  
մէկ սիրտ և մէկ հոգի ըլլանք, ՂՀմարտութեան

և Խաղաղութեան, աւատոյ և Սիրոյ սուրբ կապով  
 վը կապուած, և կարող ըլլանք մէկ միտքով և մէկ  
 բերնով քեզ փառաւորել, մեր Տէր Հիսուս Վր-  
 ըրիստոսի շնորհքովը . Ա՛ճն :

Պարգեւէ ո՛վ Տէր կ'աղաչենք, որ այս աշխար-  
 հիս ընթացքը խաղաղարար քու կառավարութեամ-  
 րըդ անանկ շըտկուի, որ քու սուրբ Ակեղեցիդ կա-  
 րող ըլլայ ցնծութեամբ և երկիւղածութեամբ քեզի  
 ծառայելու ամենայն բարեպաշտ խաղաղութեամբ,  
 մեր Տէր Հիսուս Վրիստոսի շնորհքովը . Ա՛ճն :

Պարգեւէ կ'աղաչենք ո՛վ ամենակարող Տէր, որ  
 մեր արտաքին ահանջովը այսօրուան լսած քու սուրբ  
 Խօսքերդ անանկ տպաւորին մեր սրտերուն մէջ քու  
 շնորհքովդ, որ ներսըդինուս առաքինի վարքի մը  
 պտուղները առաջ բերեն քու Անուանդ փառքին և  
 պատուոյն համար, մեր Տէր Հիսուս Վրիստոսի շը-  
 նորհքովը . Ա՛ճն :

Ամենակարող Աստուած՝ աղբիւր ամենայն ի-  
 մաստութեան, դուն որ մեր խնդրելէն առաջ մեր  
 կարօտութիւնը գիտես, և խնդրելու ժամանակնիս  
 մեր ագիտութիւնը կը ճանչնաս . Կ'աղաչենք ողոր-  
 մէ մեր տկարութեանցը, և ան բաները՝ որ մեր անար-  
 ժանութեամբը չենք համարձակիր և մեր կուրու-  
 թեանը համար չենք կրնար խնդրել, շնորհէ պար-  
 գեւել մեզի, մեր Տէր Հիսուս Վրիստոսի քու Արդ-  
 արդ արժանաւորութեամբը . Ա՛ճն :

Մատուցոյ խաղաղութիւնը՝ որ ամեն միտքերէ վեր  
է, Մատուցոյ և մեր Տէր Հիսուս Քրիստոս իր Որդ-  
ւոյն գիտութեամբը ու սիրովը պահպանէ ձեր սիր-  
տերը և միտքերը . և ամենակարող շօր Մատուցոյ,  
և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն օրհնութիւնը իջնայ ձեր  
վրայ, և միշտ ձեր ամենուրեքս ըլլայ . Ամէն :



ՔՐԻՍՏՈՍ

ՄԵՍԵՆՅ ԷԼԻՍՏՈՅ

ԵՐԿՈՒ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒՆ

ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒՆ ԵՒ ԱՄԷՆ ԵԿԵՂԵ

ՑԱԿԱՆԱՑ ԷԱՒԱՆՈՒԹԵԱՄԲԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԱԾ

1562 ին Լոնդոն քաղաքը եղած Եկեղեցականաց ժողովքին մէջ, այլևայլ կարծիքներուն երկպառակութիւնները խափանելու, և ճշմարիտ կրօնքին մի միայն հաւանութիւնը հաստատելու համար:

Ե

Ամենասուրբ Երրորդութեան Հաւատքին վերաբերեալ.

Սիսիւսն մէկ կենդանի և ճշմարիտ Մատուած մը կայ, յաւիտենական, անմարմին, անբաժանելի և անչարչարելի. անհուն կարողութեամբ, իմաստութեամբ ու բարութեամբ. ամէն երեւելի և աներեւոյթ բաներուն Ստեղծողը և Պահպանողը: Իւ սոս Մատուածութեան միութեանը մէջ երեք Մնձն կայ մէկ գոյութեամբ, կարողութեամբ ու յաւիտենականութեամբ. Հայր, Արդի և Սուրբ Հոգի:

Բ

Քանին կամ Աստուծոյ Որդւոյն Ճշմարտապէս Մարգ քրիստոն վերաբերեալ .

Որդին՝ որ է Մանն շօր, ՚ի յաւիտենից ծնեալ ՚ի շօրէ, ճշմարիտ և յաւիտենական Աստուած, և համադոյակից շօր, Սարդկային բնութիւնը առաւամենօրհնեալ կուսին որովայնին մէջ, անոր գոյացութենէն . անանկ որ երկու ամբողջ և կատարեալ բնութիւնները, այսինքն Աստուածային և Սարդկային, մէկ Անձով մը միացան, ամենեւին անբաժանելի . որոնցմէ է մէկ Վրիստոս մը, ճշմարիտ Աստուած, և ճշմարիտ Սարգ . ան որ ճշմարտապէս չարչարուեցաւ, խաչուեցաւ, մեռաւ ու թաղուեցաւ իւր շայրը մեղի հետ հաշտեցունելու համար . ու մէկ պատարագ մը ըլլալու, չէ թէ միայն սկզբնական մեղքին համար, հապա նաև մարդկանց ներգործական մեղքերուն համար :

Գ

Վրիստոսի Վժռիքը իջնալուն վերաբերեալ .

Որովհետեւ Վրիստոս մեր պատճառաւը մեռաւ ու թաղուեցաւ . անանկ ալ պէտք է հաւատալ որ Վժռիքը իջաւ :

Դ

Վրիստոսի Յարութեանը վերաբերեալ .  
Վրիստոս ճշմարտապէս նորէն յարութիւն աւ

աւա մեռելներէն, և դարձեալ իւր մարմինը առաւ, միտովը, ոսկորներովը և ամէն բաներովը, որ Սարգկային բնութեան կատարելութեանը կը վերաբերին. որոնցմով Արկինքը համբարձաւ, ու հոն կը նստի, մինչեւ որ դառնայ վերջին օրը բոլոր մարդիկը դատելու :

Ե

Հոգւոյն Սրբոյ վերաբերեալ :

Սուրբ Հոգին, որ ՚ի Հօրէ և յԱրդւոյ կը բղխի, մի և նոյն գոյացութենէ, մեծ վայելչութենէ և փառաւորութենէ է, միանգամայն Հօր և Արդւոյ հետը, ճշմարիտ և յաւիտենական Լստուած :

Զ

Սուրբ Գրոց Փրկութեան բաւական ըլլալուն վերաբերեալ :

Սուրբ Գիրքը փրկութեան հարկաւոր եղած բոլոր բաները կը պարունակէ. անանկ որ ամէն ինչ բան որ անոր մէջ չի կարգացուիր, և անոր վկայութեամբը չի հաստատուիր, մէկէ մը չի պահանջուիր իրր Հաւատոյ մասն հաւատալ, ոչ ալ փրկութեան հարկաւոր կամ կարեւոր սեպել : Սուրբ Գիրք անունէն կ'իմանանք մերք Հին և Նոր կտակարանի այն կանոնական Գիրքերը, որոնց Հեղինակութեանը վրայ ամենեւին երկրայութիւն մը չեղաւ Ակեղեցւոյ մէջ :

Կաննական Գրքերուն Անուանցը և թիւերուն վերաբերեալ .

Գիրք Օննդոյ .

Լըից .

Գիւտացւոց .

Թուոց .

Լըկրորդ ( ) րինաց .

Յետուայ .

Գատաւորաց .

Հոութայ .

Լճաջին Գիրք Սամուէլի .

Լըկրորդ Գիրք Սամուէլի .

Լճաջին Գիրք Թագաւորաց .

Լըկրորդ Գիրք Թագաւորաց .

Լճաջին Գիրք Սնացորդաց .

Լըկրորդ Գիրք Սնացորդաց .

Լճաջին Գիրք Լըրասայ .

Լըկրորդ Գիրք Լըրասայ .

Լսթերայ .

Յօբայ .

Սաղ Մոսաց .

Լճակաց .

Ժողովողին .

Լըրդ Լըրոց Սողոմոնի .

Չորս Սեծ Սարգարէներուն .

Տասներկու Փոքր Սարգարէներուն :

Միւս մնացած Գրքերը (ինչպէս որ Հերոնիմոս կ'ըսե )





չի կայանար, (ինչպէս որ Պեղադիսեանները վայրապար կ'ըսեն,) հապա ամէն մարդուն բնութեանը պակասութիւնը ու ապականութիւնն է, որ Միամայ սերունդներէն բնականապէս ծնած է. որ նոյն ապականութեան պատճառաւ մարդը խիստ հեռաւորութեամբ օտարացաւ սկզբնական արդարութենէն, և իւր սեպհական բնութեամբը չարութեան հակամիտեալ է, անանկ որ մարմինը միշտ հոգիին հակառակ ցանկութիւններ ունի. և այս պատճառաւ ամէն մարդ որ այս աշխարհիս մէջ կը ծնանի, անիկայ Մատուծոյ բարկութեանը ու դատապարտութեանը արժանի է: Այս պէս բնութեան ապականութիւնը վերստին ծնածներուն վրայ անգամ կը մնայ. ուստի մարմնոյ ցանկութիւնը որ Յունարէն (Պրօնէմա սարգոս) կ'ըսուի, որ ոմանք իմաստութիւն կը թարգմանեն, ուրիշները զգայականութիւն, ուրիշները յօժարութիւն, և ոմանք ալ մարմնոյ ցանկութիւն. Մատուծոյ ( )րինացը չի հնազանդիր: Այս թէպէտ դատապարտութիւն չի կայ անոնց՝ որ կը հաւատան ու մկրտուած են, այսու ամենայնիւ Առաքեալը կը խոստովանի որ՝ տուփանքը ու մարմնական ցանկութիւնը ինքնին մեղաց բնութիւնը ունի:

ժ

Անձնիշխանութեան վերաբերեալ.

Մարդոյս վիճակը Միամայ իյնալէն ետեւ ա-

Նստնկէ, որ ինքը իր բնական զօրութեամբը ու բարեգործութեամբը կարող չէ գտննալ ու իր անձը պատրաստել հաւատոյ և Մատուծոյ կոչմանը. վասն որոյ մենք ամենեւին կարողութիւն մը չունինք Մատուծոյ հաճելի և ընդունելի բարեգործութիւն մը ընելու, առանց Մատուծոյ շնորհացը Հիսուս Վրիստոսի ձեռքովը, որ առաջուց կուգայ մեզի, որ մենք բարի կամք ունենանք. և ձեռնտու կ'ըլլայ մեզի՝ երբոր մենք ան բարի կամքը ունենանք:

ԺԸ

Մարդոց Արդարանալու վերաբերեալ .

Սենք Մատուծոյ առջին արդար կը սեպուինք միայն մեր Տէր և Փրկիչ Հիսուս Վրիստոսի արժանաւորութեամբը նաւարդութեամբը, ու չէ թէ բուն մեր գործքովը կամ արժանաւորութեամբը. Արեմն մեր միայն նաւատոյ զօրութեամբ արդարանալը խիստ տղամիտ վարդապետութիւն մըն է, և ամենայն մը խիթարութեամբ լեցուն. ինչպէս որ ընդարձակապէս բացատրուած է մարդոց արդարանալու Նառին մէջ:

ԺԹ

Բարի Գործքերու վերաբերեալ .

Թէպէտև ինքի Գործքերը որ նաւատոյ պըտուզներն են, և մարդոց արդարանալէն առաջ կու-

գան, կարող չեն մեր մեղքերը ջնջելու, և Աստուծոյ Պատաստանին խստութիւնը զիջուցանելու. սակայն այսու ամենայնիւ հաճելի և ընդունելի են Աստուծոյ Հիսուս Վրիստոսով, և հարկաւորապէս մէկ ճշմարիտ և կենդանի հաւատքէ մը առաջ կուգան. առանկոր անոնցմով մէկ կենդանի աւատք մը յայտնապէս կը ճանչցուի, ինչպէս որ մէկ ծառ մը իր պտուղէն:

## Ժ Գ.

Արդարութենէ առաջ եղած Գործքերուն վերաբերեալ.

Հիսուս Վրիստոսի շնորհքէն և իւր նոգւոյն ազդեցութենէն առաջ եղած Գործքերը, Աստուծոյ հաճելի չեն, Հիսուս Վրիստոսի աւատքէն առաջ չի գալնուն համար, ոչ ալ մարդս բաւական կ'ընեն շնորհք ընդունելու. կամ (ինչպէս որ Վպրոցական ներկաները կ'ըսեն) չեն արժանացուներ յարմարութեան կամ պատշաճութեան շնորհքը ընդունելու. բայց որովհետեւ այնպէս գործագրուած չեն ինչպէս որ Աստուած կամեցաւ և հրամայեց ըլլալու, չենք երկրայիր որ անոնք մեղքին բնութիւնը ունին:

## Ժ Գ.

Բարի Գործքերուն չափազանցութեանը վերաբերեալ.

Աստուծոյ Պատուիրանքներէն վեր և աւելի կա-

մաւոր գործքերը սորվեցընելը, որ Ռարի Վործքե-  
րուն չափազացուծիւնը կ'ըսեն, խիստ յանդուգն է  
անօրէն բան է. որովհետեւ այս կերպով մարդիկ  
յայտնապէս կը ծանուցանեն որ իրենք չէ թէ միայն  
Մատուծոյ ունեցած պարտքերնին կը մատուցանեն,  
հապա անոր համար իրենցմէ պահանջուածէն էվել  
կը կատարեն, որ ընդ հակառակը Վրիստոս մեր Տէ-  
րը յայտնապէս կ'ըսէ թէ՛ երբոր ձեզի հրամայուած  
բաներուն ամէնը կատարելու ըլլաք, ըսէք թէ՛ մենք  
անպիտան ծառաներ ենք :

ԺԵ

Վրիստոսի մի միայն աւանց Մեղքի ըլլալուն վերաբերեալ.

Վրիստոս նոյն մեր բնութեանը իսկութեամբը  
մեզի նման մարդ եղաւ ամէն բանով, բաց 'ի մեղքէն,  
ուրկէ բոլորովին ազատ էր, թէ մարմնով և թէ հոգ-  
ւով : Ինքը եկաւ ան անարատ Վատը ըլլալու, որ իր  
անձին պատարագաւոր որ անգամ մը եղաւ, աշխարհի  
մեղքը մէկ գի պիտի վերցուներ, և ինչպէս Ս. Հով-  
հաննէս Մուսքեալ կ'ըսէ, անոր վրայ մեղք չի կար :  
Բայց մենք ամէնքս որ թէպէտ մկրտուած ու վերստին  
ծնած ենք Վրիստոսով, սակայն այսու ամենայնիւ  
չստ բաներու մէջ կը մեղանչենք, և թէ որ ըսենք՝  
թէ մեղք չունինք, անձերնիս կը խարենք, և մեր մէջը  
ճշմարտութիւն չի կայ :

Ժ. Գ.

Մկրտութենէ ետեւ գործուած Մեղքին վերաբերեալ .

Մկրտութենէ ետեւ կամաւորապէս գործուած ամէն մահացու մեղքը չ'ողոյն Սրբոյ դէմ մեղք չէ, և ոչ ալ աննեբելի : Ուստի զղջման պարգեւը ուրա նալու չեն անոնք, որոնք մկրտութենէն ետեւ մեղքի մէջ կ'իյնան : Սննք Սուրբ չ'ողին ընդունելէն ետեւ կրնանք ան տրուած շնորհքէն զատուիլ և մեղքի մէջ իյնալ . և Մատուծոյ շնորհքովը կրնանք նորէն ելլել և մեր վարքերը շիտկել : Այս պատճառաւ դատապարտելի են անոնք որ կ'ըսեն թէ՛ ալ անոնք չեն կրնար մեղանչել, քանի որ այս աշխարհիս մէջ ապրին . կամ կ'ուրանան թողութեան տեղի գտնալը անոնց, որոնք ճշմարիտ զղջմամբ կ'ապաշխարեն :

Ժ. Լ:

Նախասահմանութեան և Ընտրութեան վերաբերեալ .

Աննաց Վախասահմանութիւնը Մատուծոյ յաւիտենական խորհուրդն է, որով ( աշխարհիս հիմնարկութենէն առաջ ) Մատուած ինքը իր սեպհական խորհուրդովը՝ որ մենէ ծածկեալ է, հաստատութեամբ կարգադրեց անէծքէն ու դատապարտութենէն ազատելու անոնք, որ ինքը Վրիստոսով ընտրեց մարդկային ազգէն, և Վրիստոսի ձեռքովը անոնք յաւիտենական փրկութեան առաջնորդելու, պատուոյ անօթներ եղած : Ուստի անոնք որ Մատու-

ծոյ ասանկ մէկ գերագոյն բարութեամբը պսակուած են , Մտուծոյ բացորոշութեամբը կը կանչուին , իւր շողոյն զօրութեամբը յարմար ժամանակին ներգործած . անոնք շնորհքին միջնորդութեամբը նոյն կոչմանը կը հնազանդին . անոնք ձրիապէս շնորհքով կ'արդարանան . որդեգրութեամբ Մտուծոյ որդիք կ'ըլլան . Ճիտուս Վրիստոս իր միածին Որդւոյն նմանութեանը կերպարանակից կ'ըլլան . երկիւղածութեամբ բարի գործքերու մէջ կը քալին . և վերջապէս Մտուծոյ ողորմութեամբը յաւիտենական երջանկութեան կը ժամանեն :

Որովհետեւ ինչպէս որ Մախասահմանութեան և Վրիստոսով մեր Մնտրութեանը բարեպաշտ մըտածութիւնը քաղցր , հաճելի և անպատմելի դիւրութեամբ լեցուած է բարեպաշտ անձանց , և անոնց՝ որ իրենց անձին մէջ Վրիստոսի շողոյն գործողութիւնը կ'ըզան , մարմինին գործքերը մեռցունելով և իրենց մարմնաւոր անդամները , և իրենց հոգին գերագոյն և երկնային բաննրու բարձրացունելով Վրիստոսի միջնորդութեամբը ընդունելու յաւիտենական Վրկութեան վերաբերեալ իրենց հաւատքը մեծապէս հիմնելու և հաստատելու համար , և իրենց առ Մտուած ունեցած սէրը սաստիկ արծարծելու համար . Մնանկ ալ Վրիստոսի շողին կարօտ , հետաքրքիր և մարմնասէր անձանց միշտ Մտուծոյ Մախախնամութեան վճիռը իրենց աչքին առջին ունենալը խիստ վտանգաւոր կործանում մըն

է, որով սատանան անոնք կամ յուսահատութեան կը ձգէ, և կամ անտակութեան կը վարէ, որն որ յուսահատութենէ պակաս վտանգաւոր բան չէ :

Սենք ևս պարտինք Մտուծոյ խոստմունքները այն կերպով ընդունինք, ինչպէս որ ընդհանրաբար Սուրբ Վրոց մէջ առաջարկուած են մեզի, և մեր գործքերուն մէջ պարտինք Մտուծոյ ան կամքին հետեւիլ, որ յայտնապէս ծանուցած է մեզի Մտուածաշունչին մէջ :

ԺԲ

Միայն Յիսուս Քրիստոսի Անուամբը յաւիտենական Փրկութիւն գանուելուն վերաբերեալ .

Վզովքի արժանի են անոնք՝ որ կը համարձակին ըսել, թէ ամէն մարդ իր դաւանած ( ) ըէնքովը կամ Մշանդովը կը փրկուի. անանկ որ ինքը կը ջանայ իր վարքը նոյն ( ) ըէնքին և Մնական լոյսին յարմարելու : Իսոյց Սուրբ Վիրքը միայն Յիսուս Վրիստոսի Մնունը մեզի կը ցըցունէ, որով մարդիկ պիտի փրկուին :

ԺԺ

Եկեղեցւոյ վերաբերեալ .

Վրիստոսի տեսանելի Վկեղեցին հաւատացելոց միութիւնն է . որ նոյն միութեանը մէջ Մտուծոյ անարատ Պատգամը կը քարոզուի, և Խորհուրդ-

ները ըստ արժանւոյն կը մատակարարուի Վրիստոսի հաստատած կերպովը ան ամէն բաներուն մէջ, որ հարկաւ անոնց համար կը պահանջուին :

Ինչպէս որ Արոսաղէթի, Աղէքսանդրիայի և Անտիոքի Ազնեղեցիները սխալեցան, անանկ ալ Հռոմէացի Ազնեղեցին սխալեցաւ. չէ թէ միայն իրենց միտքերովը և ծէսերովը, հապա Հաւատոյ մասին վերաբերեալ մասերուն մէջ ալ :

Ի

Եկեղեցւոյ Իշխանութեանը վերաբերեալ .

Ազնեղեցին կարողութիւն ունի Արարողութիւնները ու՛՛՛տէսերը վճռաւ հաստատելու, և Իշխանութիւն ունի Հաւատոյ վիճաբանութեանը վերաբերեալ բաներուն մէջ. սակայն օրինաւոր չէ Ազնեղեցւոյն և իցէ բան մը կանոնադրելու, որ հակառակ ըլլայ Աստուծոյ գրուած Լուսքին, ոչ ալ պարտի Սուրբ Վրքին մէկ տեղը այն կերպով բացատրելու, որ միւսին հետ հակասութիւն մը ունենայ : Ուստի՛ թէպէտև Ազնեղեցին Սուրբ Վրոց վկան ու պահապանն է, սակայն ինչպէս որ անոնց դէմ պէտք չէ որ բան մը սահմանէ, անանկ ալ անոնցմէ զատ ուրիշ բան մը պէտք չէ ստիպել, որ փրկութեան հարկաւոր սեպուի :

ԻԸ.

Ընդհանրական ժողովքներուն Իշխանութեանը վերաբերեալ .

Ընդհանրական ժողովքները կարող չեն ժող-  
վուիլ առանց Իշխաններուն հրամանին և կամացը :  
Եւ երբոր մէկտեղ ժողվուին ( քանի որ անոնք մարդ-  
կանց հաւաքում մըն է , որոնց ամենքը Հոգիով ու  
Ըստուծոյ Խօսքովը չեն վարուած ) կրնան սխալիլ ,  
և երբեմն սխալեցան , և ան բաներուն մէջ անգամ ,  
որ Ըստուծոյ կը վերաբերին : Ասան որոյ անոնցմով  
սահմանադրուած փրկութեան հարկաւոր բաները  
զօրութիւն մը և իշխանութիւն մը չունին , մինչեւ որ  
անոնց Սուրբ Գիրքէն առնուած ըլլալը չի ցուցուի :

ԻԹ.

Քաւարանի վերաբերեալ .

Հոգովէական այն վարդապետութիւնը՝ Քաւա-  
րանի , Աերողութիւններու , Պատկերներու և Սրբոց  
նշխարներուն երկրպագութեանը և յարգութեանը  
համար , ու նաև Սրբոց աղաչելու համար , վայրա-  
պար հնարուած յիմարական բան մըն է , և Սուրբ  
Գիրքին մէկ վկայութեանը վրայ հաստատուած չէ .  
հապա էվելըք հակառակ է Ըստուծոյ Խօսքին :

ԻԿ.

Ժողովուրդին մէջ Պաշտօն վարելու վերաբերեալ .

( ) Երինաւոր չէ որ մարդ մը ձեռնամուխ ըլլայ

հրապարակաւ քարոզութեան պաշտօնին, կամ ժողովուրդին մէջ խորհուրդներուն մատակարարութեանը, մինչեւ որ օրինաւորապէս կանչուած և անոնք 'ի գործ դնելու համար խրկուած չըլլայ: Այլմէնք պարտինք ըստ օրինի կանչուած ու խրկուած սեպել անոնք, որոնք որ այս գործիս համար ընտրուած ու կանչուած են անանկ անձինքներէ, որոնք հասարակաց իշխանութիւնը ունին Արկեղեցւոյ մէջ իրենց տրուած, Պաշտօնեաներ կանչելու ու խրկելու Տէրօրը այդիին մէջ:

Ի Դ

Ժողովուրդին Հասկընալու Ազգւի գործածութեանը վերաբերեալ.

Յայտնապէս հակառակ բան մըն է Մատուցոյ Խօսքին և հին Արկեղեցւոյ սովորութեանը, հրապարակական Մշօթք մատուցանել Արկեղեցւոյ մէջ, կամ խորհուրդները մատակարարել ժողովուրդին չի հասկըցած լեզուովը:

Ի Ե

Խորհուրդներուն վերաբերեալ.

Վրիստոսի սահմանադրած խորհուրդները չէ թէ միայն նշաններ են կամ ապացոյցներ քրիստոնէի մը Ղաւանութեանը, հապա էվելօք հաստատուն վկայութիւններ են, նաև շնորհքին և Մատու-

ծոյ մեր վրայ ունեցած բարի կամացը աղաւ նշան-  
ներն են, որոնց միջնորդութեամբը ինքը մեր մէջը  
աներեւութաբար կը ներգործէ. ու չէ՛ թէ միայն կը  
կենդանացունէ, հասցա մեր իր վրայ ունեցած հա-  
ւատքը նաև կը զօրացունէ ու կը հաստատէ :

Մեր Տէր Հիսուս Վրիստոսի սահմանադրած  
Խորհուրդները երկուք են՝ Լեւտարանին մէջ, այս-  
ինքն Սկրտութիւն և Տէրունական Ընթրիք, կամ  
Հաղորդութիւն :

Սիւս հինգը՝ որ հասարակաբար Խորհուրդ կ'ը-  
սուին, այսինքն՝ Վրոշմ, Լպաշխարութիւն, կարգ,  
Պսակ ու Սերջին ( ) ծում, պէտք չէ որ Լեւտարանի  
Խորհուրդներուն պէս սեպուին. վասն զի անոնք  
ըստ մասին Լուսբելոց ծուռ հետեւելէն ծագեցան,  
և ըստ մասին Սուրբ Վրքերէն ընդունուած կենաց  
վիճակներն են. բայց այսու ամենայնիւ անոնք Խոր-  
հուրդական բնութիւնը չունին Սկրտութեան և Տէ-  
րոջը Ընթրիքին նման. ինչու որ անոնք Լստուծմէ  
կարգադրուած երեւելի նշան մը կամ արարողու-  
թիւն մը չունին :

Եւ յն Խորհուրդները Վրիստոս չի հաստատեց  
տեսարան մը ըլլալու, կամ առ զին ան զին պտըտ-  
ցունելու. հասցա պատշաճաւոր կերպով գործածե-  
լու : Եւ անոնք միայն արժանաւորապէս ընդունող-  
ներուն մէջ ան փրկական ազդեցութիւնը կամ ներ-  
գործութիւնը ունին. սակայն անարժանապէս ըն-  
դունողները ինքնին իրենց դատապարտութիւնը ծա-

խու կ'առնեն, ինչպէս որ Պօղոս Մուսքեալ կ'ըսէ :

Ի.Օ.

Պաշտօնեաներուն Անարժանութեանը վերաբերեալ : որ  
Խորհուրդներուն ներգործութիւնը չի կրնար արգիլել :

Վրիստոսի տեսանելի Այկեղեցիին մէջ չարագործները միշտ բարեգործներուն հետ խառնուած են . և երբեմն չարագործները Մտուծոյ Խօսքին և Խորհուրդներուն մատակարարութեանը գլխաւոր իշխանութիւնը կ'ունենան . բայց այսու ամենայնիւ անիկայ իրենց անուամբը չի կատարելնուն պատճառաւ, հասցա չ'իսուս Վրիստոսի անուամբը, և անոր յանձնարարութեամբը ու իշխանութեամբը անոնք մատակարարելնուն համար, անոնց սպասաւորութիւնը կրնանք ունենալ, թէ Մտուծոյ Խօսքը լրսելու և թէ Խորհուրդները ընդունելու : Ոչ ալ անոնց ապերախտութեանը պատճառաւ Վրիստոսի հաստատած Խորհուրդին ներգործութեանը պակասութիւն մը կ'ըլլայ, և ոչ Մտուծոյ պարգեւներուն շնորհքը կը թեթեւնայ անանկներուն, որոնք հաւատքով ու արժանաւորութեամբ կ'ընդունին իրենց մատակարարուած Խորհուրդները, որոնք թէ և չար մարդոց ձեռքովը կը մատակարարուին, բայց Վրիստոսի սահմանադրութիւնը ու խոստումը ըլլալուն համար, ներգործութեան զօրութիւնը ունին : Եւ այսու ամենայնիւ Այկեղեցւոյ օրինադրութեանը

կը վերաբերի չարագործ Պաշտօնեաներուն քըննու-  
թիւնը ընել . և անանկ մարդիկներ անոնց ամբաս-  
տանութիւն ընեն, որոնք ան անձինքներուն յան-  
ցանքները գիտեն . և վերջապէս մեղապարտը ըլլալուն  
պէս, արդար դատաստանաւ պաշտօնէ հանուին :

Ի Լ :

Մկրտութեան վերաբերեալ .

Մկրտութիւնը չէ թէ միայն դաւանութեան նը-  
շանակ մըն է և տարբերութեան նշան մը, որով քը-  
րիստոնեաները չի մկրտուածներէն կ'որոշուին . հա-  
պա վերածնութեան կամ ծննդեան նշան մըն է . ու  
րով իբր մէկ միջոցով մը արժանաւորապէս Մկրտու-  
թեան Խորհուրդը ընդունողները Այկեղեցոյ մէջ  
կը խառնուին . մեղքին թողութեան խոստմունքները  
և մեր որդեգրութիւնը Հոգւոյն Արքայ միջնորդու-  
թեամբը Աստուծոյ զաւակները ըլլալու՝ երեւելի  
կերպով կը նշանակուին և կը կնքուին : Աստուծոյ  
աղօթելու զօրութեամբը հաւատքը կը հաստատուի  
և շնորհքը կ'աճի : Տղայոց Մկրտութիւնը ամէն մէկ  
կերպով Այկեղեցոյ մէջ պահուելու է, որ խիստ  
պատշաճ է Վրիստոսի սահմանադրութեանը :

Ի Բ :

Տէրոջը Ընթրիքին վերաբերեալ .

Տէրոջը Ընթրիքը չէ թէ միայն սիրոյ նշան մըն

է, որ քրիստոնեաները պարտին իրենց մէջ մէկըլ-  
 մէկու ունենալ, հապա էվելոք մեր փրկութեանը  
 խորհուրդն է Վրիստոսի մահուանը միջնորդու-  
 թեամբը, անանկ որ անանկներուն՝ որ անիկայ ար-  
 դարապէս, արժանաւորութեամբ ու հաւատքով  
 կ'ընդունին, շացը՝ որ մենք կը կտրենք, Վրիստոսի  
 Սարմինին հաղորդակից ըլլալ է. և նմանապէս  
 ( )ըհնութեան Վաժակը՝ Վրիստոսի Մրեանը հետ  
 հաղորդ ըլլալ է :

Տէրոջը Րնթրիքին մէջի գոյափոխութիւնը (կամ  
 շացին ու Վինիին գոյութեանը փոխուիլը) Սուրբ  
 Վիրքէն չի կրնար ցուցուիլ. հապա Սուրբ Վրոց  
 յայտնի ըսածին հակառակ է, խորհուրդի մը յատ-  
 կութիւնը կը ջնջէ, և շատ աւելորդապաշտութեանց  
 պատճառ եղած է :

Վրիստոսի Սարմինը Րնթրիքին մէջ կը տը-  
 րուի, կ'ընդունուի և կը ճաշակուի միայն երկնային  
 և հոգևոր կերպով : Այս ան միջոցը՝ որով Վրիստոսի  
 Սարմինը կ'ընդունուի և կը ճաշակուի, շաւտքն է :

Տէրոջը Րնթրիքին խորհուրդը Վրիստոսի սահ-  
 մանադրութեանը նայելով չէր պահուեր, աս դին  
 ան դին տարուէր, վեր առնուէր կամ պաշտուէր :

ԻԹ

Մեղադրանքներուն վերաբերեալ, որոնք հաղորդութիւն առած  
 ժամանակնին Քրիստոսի Սարմինը չեն ճաշակեր :

Սեղաւորները և անոնք որ կենդանի հաւատքէ

զրկուած են, թէպէտև մարմնապէս և ակներև ի-  
րենց ակռաներուն մէջը կ'առնեն (ինչպէս որ Ս. ( )-  
Քոսսիէնոս կ'ըսէ) Վրիստոսի Սարմնոյն և Վրեանը  
Խորհուրդը, բայց բնաւ Վրիստոսի հաղորդակից  
չեն ըլլար. հապա էվելօք իրենց դատապարտու-  
թեանը համար ստանկ մէկ մեծ բանի մը նշանը կամ  
Խորհուրդը կուտեն ու կը խմեն :

## I.

Հաղորդութեան երկու Տեսակին վերաբերեալ .

Տէրոջը Ռաժակը աշխարհականներուն ալ պար-  
տի տրուիլ . վասն զի Տէրոջը Խորհուրդին երկու տե-  
սակ մասերն ալ Վրիստոսի սահմանադրութեամբը  
և հրամանաւը հաւասարապէս ամէն քրիստոնէից  
մատակարարուելու են :

## I, C

Խաչին վրայ կատարուած Վրիստոսի անգամ մը Պատարագ  
ըլլալուն վերաբերեալ .

Վրիստոսի անգամ մը Պատարագ ըլլալը այն  
կատարեալ փրկութիւնը, քառութիւնը ու հատու-  
ցումն է ընդհանուր աշխարհիս բոլոր մեղքի ընդհան-  
մար, թէ սկզբնական և թէ ներդործական . և անկէ  
'ի զատ մեղքի համար ամենեւին ուրիշ հատուցում  
մը չի կայ : Ուստի Պատարագներուն զոհերը, որոնց  
մէջ հասարակօրէն կ'ըսուէր թէ՛ Վրահանան Վր-

ըխտոսը կը մատուցանէր Կենդանիներուն և մեռեալներուն համար, որ պատժոյ կամ յանցանքի թողութիւնը ընդունին, հայհոյական կեղծաւորութիւններ և փնասակար խարէութիւններ էին :

## Լ, Բ

Քահանայից Ամուսնութեանը վերաբերեալ .

Ըստուծոյ (Օրէնքը չի հրամայեր Ապիսկոպոսներուն, Բահանաներուն և Սարկաւագներուն միայնակեցութեան վիճակին ուխտագիր ըլլալու, կամ ամուսնութենէ հրաժարելու. վասն որոյ օրինաւորապէս հրաման տրուած է անոնց, ինչպէս որ ուրիշ ամէն քրիստոնէից ամուսնանալու իրենց ընտրողութեամբը, որն որ առաւել սուրբ վարք ունենալու համար յարմար կը դատեն :

## Լ, Գ

Բանադրուած Անձանց վերաբերեալ, որոնցմէ ինչպէս պէտք է հեռու կենալ .

Ըն անձը՝ որ Ակեղեցւոյ հրապարակական դատապարտութեամբը արժանաւորապէս նոյն Ակեղեցիին միութենէն կտրուած ու բանադրուած է, պէտք է որ բոլոր հաւատացեալներուն բաղմութիւնը շեթանոսի ու Սաքսաւորի մը պէս սեպէ անիկայ, մինչեւ որ ապաշխարանքով հրապարակաւ հաշտուի, ու

Աղեղեցւոյ մէջ ընդունուի ան Պատարեւն՝ որ անկայ ընկու իշխանութիւնը ունի :

Լ. Գ.

Եկեղեցւոյ Աւանդութեանցը վերաբերեալ .

Հարկաւոր չէ որ Աւանդութիւնները ու Արարողութիւնները ամէն տեղ մի և նոյն ըլլան, և բոլորովին իրարու նման, վասն զի ամէն ժամանակ անոնք տարբեր եղան, և կրնան փոխուիլ զանազան երկիրներու, ժամանակներու և մարդկանց սովորութեանցը նայելով . միայն թէ Աստուծոյ Պատգամին դէմ բան մը չի սահմանադրուի : Այլ որ ինքնին իր մասնաւոր դատողութեամբը կամու ու խորհրդով Աղեղեցւոյ աւանդութիւնները ու արարողութիւնները բացարձակ չի պահեր, որոնք Աստուծոյ Կրօնքին դէմ չեն, և հասարակ իշխանութենէ հաստատուած ու ընդունուած են, պարտի հրապարակականդիմանուիլ, ( որպէս զի ուրիշները նոյն բանը ընկու երկիւղ ունենան ) ան անձին նման որ Աղեղեցւոյ հասարակ կարգին դէմ կը մեղանչէ, և Ատնակալներուն իշխանութիւնը կ'արհամարհէ, ու տրկար եղբայրներուն խիղճերը կը վիրաւորէ :

Ամէն մէկ մասնաւոր կամ ազգային Աղեղեցի իշխանութիւն ունի Աղեղեցւոյ մասնաւոր արարողութիւնները կամ ծէսերը սահմանադրելու, փոխելու և վերցունելու, որոնք միայն մարդկային իշխանու-

Թեամբ սահմանուած են, որ ամէն բան շինութեան  
համար եղած ըլլայ :

Ե

Հոգեւոր ճառերուն վերաբերեալ .

Հոգեւոր ճառերուն երկրորդ Գլխքը, որոնց  
զանազան անունները հոս այս Արօնքի հաւատալու  
Սասիններքեւը դրինք, բարի և ողջամիտ Արդա-  
պետութիւն մը կը պարունակէ, և այս ժամանակնե-  
րուս համար խիստ հարկաւոր է . ինչպէս որ հոգե-  
ւոր ճառերուն առաջին Գլխքն ալ Ալեցերորդ Լ-  
գուարդի ժամանակը հրատարակուեցաւ . ուստի  
պատշաճ կը դատենք որ Լկեղեցիներուն մէջ Պաշ-  
տօնեաները զգուշութեամբ և որոշակի կարգան ա-  
նոնք, որ ժողովուրդը կարող ըլլայ հասկընալու :

Հոգեւոր ճառերուն Անուանքը վերաբերեալ .

- 1 Լկեղեցւոյ իրաւամբ գործածութեանը վե-  
րաբերեալ .
- 2 Առապաշտութեան վտանգին դէմ .
- 3 Լկեղեցիներուն նորոգութեանը և մաքուր  
պահուելուն վերաբերեալ .
- 4 Բարի գործքերուն վերաբերեալ . առաջին  
պահեցողութեան համար .
- 5 Արկրամուրութեան և Արբեցութեան դէմ .
- 6 Հագուստի չափազանց շքեղութեանը վերա-  
բերեալ .

- 7 Ըշօթքի վերաբերեալ .
- 8 Ըշօթքի Տեղին և յամանակին վերաբերեալ .
- 9 Հասարակաց Ըշօթքները և Խորհուրդները  
իմանալի լեզուով զուրցուելուն վերաբերեալ .
- 10 Ըստուծոյ Խօսքին յարգութեամբ պահուելուն վերաբերեալ .
- 11 Ողորմութեան վերաբերեալ .
- 12 Վրիստոսի Օննդեանը վերաբերեալ .
- 13 Վրիստոսի Չարչարանացը վերաբերեալ .
- 14 Վրիստոսի Հարութեանը վերաբերեալ .
- 15 Վրիստոսի Սարմեոյ և Ըրեան Խորհուրդը  
արժանապէս ընդունուելուն վերաբերեալ .
- 16 Հոգւոյն Սրբոյ Պարգեւներուն վերաբերեալ .
- 17 Սաղթանաց\* ըսուած ()րերուն վերաբերեալ .
- 18 Ըմուսնութեան վիճակին վերաբերեալ .
- 19 Ըպաշխարութեան վերաբերեալ .
- 20 Օուլութեան դէմ .
- 21 Ըպստամբութեան դէմ .

Լ Օ

Եպիսկոպոսներու , Քահանաներու և Սարկաւազներու Ձեռնադրութեանը և Քահանայագործութեանը վերաբերեալ .

Ըրքեպիսկոպոսներու և Սպիսկոպոսներու , Վա-

\* Արեւմտեան Եկեղեցին Վրիստոսի Համբարձմանը նախորդ երեք Օրերը Սաղթանաց կ'անուանէ :

Հանաներու և Սարկուագներու ձեռնադրութեան և քահանայագործութեան Վիրքը, որ Սեցերորդ Ադուարդի ժամանակը հրատարակուեցաւ, և նոյն ժամանակը Ռատլամէնդի հրամանաւը հաստատուեցաւ, նոյն քահանայագործութեան և ձեռնադրութեան հարկաւոր եղած ամէն բաները կը պարունակէ. և բան մ'ալ չի գտնուիր որ աւելորդապաշտական և գէշ ըլլայ: Սասն որոյ ո՛վ որ այն Վերքին Մարողութեանցը կարգաւը Վահանայագործուած կամ Ձեռնադրուած է, վերոյիշեալ Ադուարդ թագաւորին երկրորդ տարուէն մինչեւ հիմայ, կամ ասկէ ետեւ Սոյն Մարողութիւններուն կարգովը պիտի Վահանայագործուի կամ Ձեռնադրուի. մենք անանկները արդարապէս, ըստ կարգի և օրինաւորապէս Վահանայագործուած և Ձեռնադրուած կ'ընդունինք:

ԼԵ

Քաղաքական Ատենակալներուն վերաբերեալ.

Թագուհւոյն Սեհափառութիւնը այս Մեգրիոյ թագաւորութեանը, և բոլոր իւր Տէրութեանը սահմաններուն մէջ գերագոյն իշխանութիւնը ունի. և անոր կը վերաբերի ամէն բանի մէջ այս Տէրութեան բոլոր գլխաւոր կառավարութիւնը, թէ Այկեղեցական և թէ Վաղաքական. և ոչ օտար իշխանութեան մը ներքեւ է, և ոչ ալ պարտի իյնալ:

Լըրբոր բոլոր գլխաւոր կառավարութիւնը (Սա-  
 գուհուհի) Անհատութեանը կը սեպհականենք,  
 կ'իմանանք որ նոյն պատուոյ Անուններէն չարա-  
 խօս անձի՛քներէն թմանք կը գայթակղին, մենք ոչ  
 Աստուծոյ Խօսքին մատակարարութիւնը մեր իշխան-  
 ներուն կը յանձնենք, և սչ ալ Խորհուրդներունը,  
 ինչպէս որ մեր Աղիսարէթ (Սագուհուհի) մօտերս հը-  
 րատարակած Սահմանագրութիւններն ալ յայտ-  
 նապէս կը վկայեն. հապա միայն ան արտօնութիւնը՝  
 որ Աստուած ինքը Սուրբ Վրոց մէջ ամէն բարե-  
 պաշտ Իշխաններուն տուած է. այսինքն, որ Աս-  
 տուծոյ իրենց հոգաբարձութեանը յանձնած ամէն  
 վիճակները ու կարգերը թէ՛ Ազնիւեցական և թէ՛ Աշ-  
 խարհական կառավարեն, և չարագործները ու ա-  
 պրստամբները քաղաքական սուրով զսպեն:

Հոովմայի Ապիսկոպոսը այս Անգղոյ Տէրու-  
 թեանը մէջ ամենեւին իշխանութիւն մը չունի:

Տէրութեան ( )րէնքները ծանր և սաստիկ յան-  
 ցանքներու համար կրնայ քրիստոնեաները մահու-  
 ամը պատժել:

( )րինաւոր է քրիստոնէից որ Ատնակալներուն  
 հրամանաւը զէնք կրեն ու պատերազմի ծառայեն:

## ԱՐ

Քրիստոնէից Ստացումքներուն հասարակաց շրջալուն  
 վերաբերեալ,

Վրիստոնէից հարստութիւնները և ինչքերը

հասարակութեանը չեն, անոնց իրաւունքին, պահանջանքները ու ժառանգութեանը նայելով, ինչպէս որ Արկնակնունք աղանդաւորներէն ոմանք ստուծեամբ կը պարծենան: Բայց սյսու ամենայնիւ ամէն մարդ պարտի իր ունեցածէն առատապէս ողորմութիւն պարգեւել ազքատաց:

ԼԹ.

Քրիստոնէի մը Երդմանը վերաբերեալ.

Ինչպէս որ կը խոստովանինք թէ՛ սուտ և անխոհեմ տեղը երդում ընելը արգիլուած է քրիստոնէից մեր Տէր Հիսուս Քրիստոսէն, և իւր Ա. Հակոբոս Առաքեալէն. անանկ ալ կը դատենք որ Քրիստոնէական Արօնքը չարգիլեր մէկը երդում ընելէն, երբոր Ատենակալը կը պահանջէ անիկայ հաւատոյ ու սիրոյ գործքի մը համար. միայն թէ Արդարէին սորվեցուցածին պէս կատարուի, իրաւունքով, դատողութիւնով ու ճշմարտութիւնով:

Հ Ա Ս Ս Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Այս նախայիշիալ Արօնքի հաւատալու Սասերուն Վիրքը կրկին հաստատուեցաւ ու յանձնուեցաւ, որ սյս Տէրութեանս մէջ պահուի և 'ի գործ դրուի, մեր Ինքնիշխան ԵՂԻՍԱԲԵԹ՝ Աստուծոյ շնորհքովը Անգղիոյ, Վաղղիոյ և Իռլանտիոյ թա-



## ՅԵՆԿ

### ՄԱՍԱՆՑ ԿԱՒԱՏՈՅ

1 Լճենասուրբ Երրորդութեան Հաւատքին վերաբերեալ .

2 Բանին կամ Լստուծոյ Որդւոյն ճշմարտապէս Սարգ ըլլալուն վերաբերեալ .

3 Վրիստոսի Վժռիքը իջնալուն վերաբերեալ .

4 Վրիստոսի Հարութեանը վերաբերեալ .

5 Հոգւոյն Սրբոյ վերաբերեալ .

6 Սուրբ Վրոց փրկութեան բաւական ըլլալուն վերաբերեալ .

7 Հին կտակարանին վերաբերեալ .

8 Երեք Հանգանակներուն վերաբերեալ .

9 Սկզբնական Սեղիին վերաբերեալ .

10 Ընծնիչխանութեան վերաբերեալ .

11 Սարգոյս արդարանալուն վերաբերեալ .

12 Բարի Վորձքերու վերաբերեալ .

13 Ըրդարութենէ առաջ եղած Վորձքերուն վերաբերեալ .

14 Բարի Վորձքերուն չափազանցութեանը վերաբերեալ .

15 Վրիստոսի մի միայն առանց Սեղի ըլլալուն վերաբերեալ .

16 Սկրտութենէ ետեւ գործուած Սեղբին վերաբերեալ .

17 Ասխատահամեութեան և Բնտրութեան վերաբերեալ .

18 Սիայն Հիսուս Քրիստոսի Բնուամբը յաւիտենական Վրդութիւնը ստանալուն վերաբերեալ .

19 Ակեղեցիին վերաբերեալ .

20 Ակեղեցոյ Իշխանութեանը վերաբերեալ .

21 Բնդհանրական Եղովներուն Իշխանութեանը վերաբերեալ .

22 Քաւարանի վերաբերեալ .

23 Եղովորդին մէջ Պաշտօն Վարելուն վերաբերեալ .

24 Եղովորդին հասկընալու Ազգութիւն գործածութեանը վերաբերեալ .

25 Խորհուրդներուն վերաբերեալ .

26 Պաշտօնեաներուն Բնարժանութեանը վերաբերեալ , որ Խորհուրդներուն ներգործութիւնը չի կրնար արգիլել .

27 Սկրտութեան վերաբերեալ .

28 Տէրօջը Բնթրիքին վերաբերեալ .

29 Սեղաւորներուն վերաբերեալ , որոնք Հաղորդութիւն առած ժամանակնին Քրիստոսի Սարմինը չեն ճաշակեր .

30 Հաղորդութեան երկու Տեսակին վերաբերեալ .

31 Խաչին վրայ կատարուած Քրիստոսի ան-

գամ մը Պատարագ ըլլալուն վերաբերեալ .

32 Վահանայից Բժուսնութեանը վերաբերեալ .

33 Բանադրեալ Լ'նձանց վերաբերեալ , որոնցմէ ինչպէս պէտք է հեռու կենալ .

34 Եկեղեցւոյ Բժանդութեանցը վերաբերեալ .

35 Հոգեւոր Ճ'առերուն վերաբերեալ .

36 Եպիսկոպոսներու , Վահանաներու և Սարկաւագներու Չեւնադրութեանը և Վահանայագործութեանը վերաբերեալ .

37 Վաղարական Բտենակալներուն վերաբերեալ .

38 Վրիստոնէից Ստացուածքներուն հասարակաց չըլլալուն վերաբերեալ .

39 Վրիստոնէի մը Երգմանը վերաբերեալ .

Հաստատութիւն :



21. Die ...
22. Die ...
23. Die ...
24. Die ...
25. Die ...
26. Die ...
27. Die ...
28. Die ...
29. Die ...
30. Die ...
31. Die ...
32. Die ...
33. Die ...
34. Die ...
35. Die ...
36. Die ...
37. Die ...
38. Die ...
39. Die ...
40. Die ...
41. Die ...
42. Die ...
43. Die ...
44. Die ...
45. Die ...
46. Die ...
47. Die ...
48. Die ...
49. Die ...
50. Die ...
51. Die ...
52. Die ...
53. Die ...
54. Die ...
55. Die ...
56. Die ...
57. Die ...
58. Die ...
59. Die ...
60. Die ...
61. Die ...
62. Die ...
63. Die ...
64. Die ...
65. Die ...
66. Die ...
67. Die ...
68. Die ...
69. Die ...
70. Die ...
71. Die ...
72. Die ...
73. Die ...
74. Die ...
75. Die ...
76. Die ...
77. Die ...
78. Die ...
79. Die ...
80. Die ...
81. Die ...
82. Die ...
83. Die ...
84. Die ...
85. Die ...
86. Die ...
87. Die ...
88. Die ...
89. Die ...
90. Die ...
91. Die ...
92. Die ...
93. Die ...
94. Die ...
95. Die ...
96. Die ...
97. Die ...
98. Die ...
99. Die ...
100. Die ...

### ՅԵՆԿ

## ԱՐԵՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԽՆԵՄՈՒԿԱՆ

ՈՐՈՎ ՈՎ ՈՐ ԱԶԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ

ԱՐԳԻԼՈՒԱԾ ԵՍՈՒՐԲ ԳԻՐՔԵՐԵՆ

ԵՒ ՄԵՐ ՕՐԵՆՔՆԵՐՈՎԸ ԻՐԱՐՈՒ

ՀԵՏ ԱՄՈՒՍՆԱՆԱԼՈՒ

Երկրի մարդ մը կարող չէ  
իրեն ամուսին առնել իր

- 1 Սեծ Սայրը ,
- 2 Սեծ չօրը Լճուսինը ,
- 3 Լճուսնոյն մեծ Սայ-  
րը .

- 4 չօրաքոյրը ,
- 5 Սօրաքոյրը ,
- 6 չօրեղբօր Լճուսինը .

- 7 Սօրեղբօր Լճուսինը ,
- 8 Լճուսնոյն չօրաքոյ-  
րը ,
- 9 Լճուսնոյն Սօրաքոյ-  
րը .

- 10 Սայրը ,
- 11 Սօրու՛ն ,
- 12 Լճուսնոյն Սայրը .

Կնիկ մարդ մը կարող չէ  
իրեն ամուսին առնել իր

- 1 Սեծ չայրը ,
- 2 Սեծ Սօրը Լճուսինը ,
- 3 Լճուսնոյն մեծ չայ-  
րը .

- 4 չօրեղբայրը ,
- 5 Սօրեղբայրը ,
- 6 չօրաքեռ Լճուսինը .

- 7 Սօրաքեռ Լճուսինը ,
- 8 Լճուսնոյն չօրեղբայ-  
րը ,
- 9 Լճուսնոյն Սօրեղ-  
բայրը .

- 10 չայրը ,
- 11 չօրու՛ն ,
- 12 Լճուսնոյն չայրը .



Յ Ե Կ Գ Ը Ո Յ Ս

- Ա. Ըղբ. 7
- Բ. Յառաջարան. 6
- Գ. Եկեղեցւոյ Պաշտամանը վերաբերեալ. 44
- Դ. Սասնաւոր Ընթերցուածներ բոլոր տարւոյն  
 Կիրակի և Տօն օրերը առտու և իրի-  
 կուն կարգացուելու. 117
- Ե. Պարզատօմար ընթերցուածներուն աղիւսա-  
 կովը. 12
- Զ. Բոլոր տարւոյն շարժական և անշարժ տօ-  
 ներուն աղիւսակները և կանոնները պահ-  
 ու ծով օրերովը մէկ տեղ. 8
- Է. Կարգ Ըսուտեան Ըղծից. 1
- Ը. Կարգ Երեկոյեան Ըղծից. 20
- Թ. Հանդանակ հաւատոյ Ս. Ըթանասի. 53
- Ժ. Ըթանի Սաղթանքներ կամ ընդհանուր  
 Ըղերսարկուծիւններ. 57
- ԺԱ. Ըղծք և Գոհուծիւն այլ և այլ պատե-  
 ճուծիւններու համար. 47
- ԺԲ. Բոլոր տարին կարգացուելու Սաղթանք-  
 ները, Ըստքելոց թուղթերը և Ըւետա-  
 րանները. 59
- ԺԳ. Կանոն Տէրունական Ընթերիքին կամ Ը-  
 մեասուրջ Հաղորդութեան խորհուրդը  
 մասակարարելու. 239
- ԺԴ. Կանոն տղայոց հանդիսական Սկզբու-  
 թեան մատակարարութեանը. 327
- ԺԵ. Կանոն տղայոց սուսնձին Սկզբութեան

	մատակարարութեանը .	510
ԺԶ.	Կանոն չափահասներուն Սկրտութեան մատակարարութեանը .	550
ԺԷ.	Սարգսպետութիւն հաւատոյ .	565
ԺԸ.	Կանոն Գորոշմի .	575
ԺԹ.	Կանոն Լճուսնութեան հանդէսը կատարելու .	578
Ի.	Կանոն այդելութեան հիւանդի .	595
ԻԱ.	Կանոն Լճնասուրբ Հաղորդութեան խորհուրդը հիւանդի մատակարարելու .	408
ԻԲ.	Կանոն լծաշ ան .	411
ԻԳ.	Գոհութիւն յետ որդեծնութեան կանանց .	422
ԻԴ.	Լստուծոյ բարկութիւնը և դատաստանին սպառնալիքները կամ ազդարարութիւնը մեղաւորաց դէմ .	426
ԻԵ.	Սաղմս Գաւթի .	439
ԻԶ.	Կանոն ծովուն վրայ գործածուելու աղօթքներուն .	695
ԻԷ.	Կանոն և կերպ Լքիսկոպոս, Վահանայ և Սարկաւագ օրհնելու, ձեռնադրելու և քահանայագործելու .	715
ԻԸ.	Կանոն աղօթից շնորհակալութեամբ հանդերձ, որ այս տէրութեանը ամէն Լիկեղեցիներուն և մատուռներուն մէջ կը կարգացուի ամէն տարի Հունիսի քսաներորդ օրը Վորին Սէհափաութեանը երջանկաբար աթոռը ելլելուն համար .	775
ԻԹ.	Կանոն մասանց հաւատոյ .	786
Լ.	Հանկ մասանց հաւատոյ ,	815
ԼԱ.	Հանկ արեւակցութեան և խնամութեան .	819